ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ (885-908 ԹԹ.)

(ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2011

ՀՏԴ 941 (479.25) : 913.1 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) + 63.2 (2Հ)
Ե 381

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Հրատարակվում է ԵՊՀ
Հայոց պատմության
ամբիոնի երաշխավորությամբ

Եղիազարյան Արման
Ե 381 Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.): Պատմաաշխարհագրական ուսումնասիրություն / Արման Եղիազարյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2011.- 394 էջ + 6 քարտեզ:

Աշխատությունը նվիրված է Հայաստանի և այսրկովկասյան երկրների պատմության մի կարևոր շրջանի՝ Հայ Բագրատունիների տերության (885-908 թթ.) պատմաաշխարհագրական հարցերին: Քննության են առնվել Հայ Բագրատունիների տերության կազմավորման գործընթացը, սահմանները և տարածքը, Հայ Բագրատունիների տոհմական ու արքունի տիրույթները, տերության կազմի մեջ մտնող հայկական և այսրկովկասյան թագավորություններն ու իշխանությունները, ինչպես նաև արաբական ամիրայությունները: Ուսումնասիրվել են նաև Հայ Բագրատունիների տերության քաղաքներն ու քաղաքագյուղերը, բերդերը, վանքերը, եկեղեցիները և առևտրական ճանապարհները:

Կարող է օգտակար լինել հայագետների, կովկասագետների, արևելագետների, ինչպես նաև Հայաստանի և հարևան երկրների՝ միջին դարերի պատմությամբ ու պատմական աշխարհագրությամբ հետաքրքրվող ընթերցողների համար:

ՀՏԴ 941 (479.25) : 913.1 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) + 63.2 (2Հ)

ISBN 978-5-8084-1478-5

© ԵՊՀ հրատարակչություն, 2011
© Ա. Ս. Եղիազարյան, 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԸ 25
1.1. Հայաստանի և այսրկովկասյան երկրների վարչաքաղաքական իրավիճակն արաբական տիրապետության ժամանակաշրջանում 25
1.2. Հայ Բագրատունիների տերության կազմավորումը 28
1.3. Հայոց տերությունն Աշոտ Ա-ի գահակալության շրջանում 41
1.4. Հայոց տերությունը Սմբատ Ա-ի գահակալության շրջանում 47
1.5. Աղվանից և Կղարջքի (Վրաց) թագավորությունների ստեղծումը .. 61
1.6. Հայ Բագրատունիների «տերություն»-ը 71

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՀՄԱԿԱՆ ԵՎ ԱՐՔՈՒՆԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ 81
2.1. Այրարատ 81
2.2. Տարոնի իշխանություն 92
2.3. Հայ Բագրատունիների արքունի տիրույթները Տուրուբերանում 107
2.4. Տայք 111
2.5. Հայ Բագրատունիների արքունի տիրույթները Գուգարքում 122
2.6. Հայ Բագրատունիների արքունի տիրույթները Վասպուրականում 124
2.7. Հայ Բագրատունիների արքունի տիրույթները Սյունիքում 126
2.8. Հայ Բագրատունիների արքունի տիրույթները Ուտիքում 126
2.9. Մոկաց իշխանություն 128

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 131
3.1. Վասպուրականի իշխանություն 131
3.2. Անձևացյաց իշխանություն 142
3.3. Սյունյաց իշխանություններ 143
3.4. Հայոց Արևելից կողմերի իշխանություններ 149
3.5. Համշենի (Համամաշեն) իշխանություն 165

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ. ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 176
4.1. Արևելից մեծ իշխանություն (Աղվանից թագավորություն) 176
4.2. Ճիղբք (Ճողբաց իշխանություն) 197
4.3. Ծանարաց (Կախեթի) քորեպիսկոպոսություն 197
4.4. Կղարջքի կուրապաղատություն 210
4.5. Վիրք 218
4.6. Սամցխեի իշխանություններ 223
4.7. Լիպարիտ Բաղվաշի իշխանություն 227
4.8. Աբխազաց թագավորություն 228

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ. ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230
5.1. Դվինի ամիրայություն 230
5.2. Պարտավի ամիրայություն 236
5.3. Կայսիկների ամիրայություն 238
5.4. Ութմանիկների ամիրայություն 243
5.5. Կարինի ամիրայություն 246
5.6. Նախճավանի ամիրայություն 248
5.7. Հերի ամիրայություն 250
5.8. Ծաղկոտնի ամիրայություն 252
5.9. Տփղիսի ամիրայություն 252
5.10. Գանձակի ամիրայություն 255

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ. ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ, ՔԱՂԱՔԱԳՅՈՒՂԵՐԸ, ԲԵՐԴԵՐԸ, ՎԱՆՔԵՐԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ 257
6.1. Հայ Բագրատունիների տերության քաղաքները և քաղաքագյուղերը 257
6.2. Հայ Բագրատունիների տերության բերդերը և ամրությունները . 277
6.3. Հայ Բագրատունիների տերության վանքերն ու եկեղեցիները ... 292

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ. ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ 320
7.1.Դվին-Պարտավ ճանապարհը 321
7.2. Դվին-Կոստանդնուպոլիս ճանապարհը 326
7.3. Դվին-Սեբաստուպոլիս (Սուխում) ճանապարհը 329
7.4. Դվին-Տփղիս-Հյուսիսային Կովկաս ճանապարհը 329
7.5. Դվին-Բաղեշ-Միջագետք-Ասորիք ճանապարհը 331
7.6. Դվին-Մարանդ ճանապարհը 332

7.7. Վարդանակերտ (Վարսան)-Պարտավ ճանապարհը 333
7.8. Պարտավ-Տփղիս ճանապարհը 337
7.9. Պարտավ-Դարբանդ ճանապարհը 339
7.10. Հեր-Դարբանդ ճանապարհը 345
7.11. Հարավային մայրուղին 350
7.12. Հայ Բագրատունիների տերության առևտրական կապերի հիմնական ուղղությունները 351

ՎԵՐՋԱԲԱՆ 353
Резюме 358
Summary 361
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ 364

ԱՌԱՋԱԲԱՆ

IX դարը Հայոց պատմության մեջ նշանավորվեց հարյուրամյակներ առաջ կորցրած պետականության վերականգնումով: Այդ իրադարձությունը տեղի ունեցավ 885 թ.: Հայաստանի քաղաքական անկախության դրոշակակիրները Բագրատունիներն էին, որոնք VIII-IX դդ. մեծապես հզորացել էին և իրենց տիրապետության տակ առել մարդկային, տնտեսական ու տարածքային խոշոր ռեսուրսներ:

Հայ Բագրատունիները, վերածվելով տարածաշրջանի առաջատար քաղաքական ուժի, ինչպես նաև օգտվելով Արաբական խալիֆայության աստիճանական թուլացումից, ստանձնեցին Հայաստանի և այսրկովկասյան երկրների առաջնորդման ղեկը, այդ երկրներն ուղղորդեցին զարգացման հունով՝ անգնահատելի դեր խաղալով հայ և հարևան ժողովուրդների քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության մեջ: Արաբական խալիֆայության փլուզման պայմաններում նրանք կարողացան Հայաստանն ու այսրկովկասյան երկրները հեռու պահել լուրջ ցնցումներից, իսկ այնուհետև դրանք միավորել մեկ տերության մեջ: Վերջինս, սկզբում ասպարեզ գալով որպես կենտրոնաձիգ տերություն, X դ. սկզբին, պահպանելով և նույնիսկ ընդարձակելով իր սահմանները, միևնույն ժամանակ, իր վրա կրեց ավատատիրական մասնատվածության հետևանքները[1]:

IX դ. և X դ. սկզբին փոփոխությունների ենթարկվեց Հայաստանում և այսրկովկասյան երկրներում տիրող վարչական և քաղաքական իրավիճակը, որը պատմական աշխարհագրության կարևոր և համակողմանի ուսումնասիրության կարոտ բնագավառ է:

---

[1] 908 թ. ստեղծվեց Վասպուրականի թագավորությունը, որով ավարտվեց Հայ Բագրատունիների միասնական թագավորության շրջանը: Այդ իրողությունից ելնելով՝ Հայ Բագրատունիների թագավորության պատմությունը (885-1045) բաժանվում է երկու ժամանակաշրջանի՝ միասնական թագավորության կամ տերության (885-908) և ավատատիրական մասնատվածության (908-1045): Առաջինն Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի թագավորության շրջանն է, իսկ երկրորդը՝ դրանից հետո եկող ժամանակաշրջանը, երբ Հայոց թագավորության կազմում աստիճանաբար ստեղծվում են մի քանի մանր թագավորություններ:

Հայ Բագրատունիների տերության պատմական աշխարհագրության ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում ինչպես հայագիտության, այնպես էլ՝ կովկասագիտության և արևելագիտության համար: Այն նաև արժեքավոր է հայ, վրացի և այլ ժողովուրդների քաղաքական պատմության ուսումնասիրության տեսանկյունից:

Հայ Բագրատունիների տերության պատմական աշխարհագրության ուսումնասիրությունն ունի ոչ միայն զուտ գիտական, այլև՝ կարևոր քաղաքական նշանակություն: Թուրք, ադրբեջանցի, ինչպես նաև որոշ վրացի պատմաբաններ, հետապնդելով հեռուն գնացող քաղաքական նպատակներ, փորձում են նենգափոխել Հայ Բագրատունիների տերության պատմությանը վերաբերող պատմական և պատմաաշխարհագրական մի շարք իրողություններ: Հետևաբար, Հայաստանի և այսրկովկասյան երկրների պատմական աշխարհագրությանը և վարչական բաժանումներին նվիրված ամեն մի անաչառ ուսումնասիրություն կարևոր ներդրում է մեր հարևան երկրների պատմաբանների կողմից իրականացվող նենգափոխումների և քաղաքական նկրտումների բացահայտման գործում:

Հայ Բագրատունիների տերության պատմաաշխարհագրական խնդիրները մեզանում դեռևս առանձին և համապարփակ ուսումնասիրության առարկա չեն դարձել: Թեև IX-X դդ. Հայաստանի և այսրկովկասյան երկրների պատմական աշխարհագրության որոշ հիմնահարցեր քննության են առնվել հայ և օտարազգի ուսումնասիրողների կողմից, բայց այդ տերության ստեղծման, կազմի, սահմանների, վարչաքաղաքական բաժանման համակարգի, քաղաքների, բերդերի, վանքերի, եկեղեցիների և առևտրական ճանապարհների վերաբերյալ ամբողջական պատմաաշխարհագրական ուսումնասիրություն ցայսօր հրապարակի վրա չկա: Կատարված համապատասխան ուսումնասիրություններում Հայ Բագրատունիների տերության կազմի մեջ մտնող երկրների պատմաաշխարհագրական քննությունն իրականացվել է խնդրո առարկա ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակից որոշ չափով կտրված և առանձին՝ այդ երկրները ի սկզբանե չդիտարկելով որպես Հայ Բագրատունիների տերության վարչաքաղաքական համակարգի մաս: Մինչդեռ այդ երկրներում տիրող իրադրությունը և քաղաքական կյանքի զարգացումն անհրաժեշտ էր դիտարկել Հայոց տերության ընդհանուր վարչաքաղաքական իրավիճակի լույսի ներքո, որը հնարավորություն կտար կատարել կարևոր եզրակացություններ:

Սույն ուսումնասիրությունը Հայ Բագրատունիների տերության ստեղծման, կազմի, սահմանների, վարչաքաղաքական բաժանման հա-

մակարգի, քաղաքների, բերդերի, վանքերի, եկեղեցիների և առևտրական ճանապարհների համակողմանի ուսումնասիրության փորձ է:

Շուրջ մեկ հարյուրամյակի առումով իրականացվող հետազոտության մեջ Հայ Բագրատունիների տերությունը՝ նրա կազմի մեջ մտնող երկրներով ու իշխանություններով (Հայաստան, Վիրք, Աղվանք, Կղարջքի կուրապաղատություն, Ծանարաց քորեպիսկոպոսություն), դիտարկվում է որպես զարգացող և փոփոխվող օրգանիզմ, որի ուսումնասիրությունն անհրաժեշտ է իրականացնել ժամանակի և տարածության մեջ քաղաքական պատմության և հասարակական զարգացման հիմքի վրա՝ վեր հանելով վարչաքաղաքական այն իրողություններն ու տեղաշարժերը, որոնք տեղի ունեցան Հայաստանում և Այսրկովկասում Հայոց տերության ձևավորման և գոյության ընթացքում:

Այդ նպատակի իրականացման համար խնդիր ենք դրել.

ա. անդրադառնալ Հայաստանում և այսրկովկասյան երկրներում արաբական տիրապետության վերջին շրջանի պատմությանը և վարչաքաղաքական իրադրությանը՝ դրանով իսկ հստակեցնելով այն պատճառները, որոնք ազդեցություն էին թողել Հայ Բագրատունիների տերության և նրա վարչաքաղաքական բաժանման համակարգի ձևավորման գործընթացի վրա,

բ. քննության առնել Հայ Բագրատունիների տերության ձևավորման և կայացման պատմությունը,

գ. ուսումնասիրել Հայ Բագրատունիների տերության վարչաքաղաքական բաժանման համակարգը,

դ. կատարել Հայ Բագրատունիների տերության մեջ մտնող երկրների, իշխանությունների և արաբական ամիրայությունների պատմաաշխարհագրական քննությունը՝ հստակեցնելով դրանցից յուրաքանչյուրի սահմանները, տարածքն ու վարչական բաժանումը,

ե. հետազոտել ու ներկայացնել Հայ Բագրատունիների տերության քաղաքները, նշանակալից բնակավայրերը, բերդերը, վանքերն ու եկեղեցիները,

զ. հստակեցնել Հայ Բագրատունիների տերության առևտրական կապերի հիմնական ուղղությունները, քննության առնել Հայ Բագրատունիների տերություն մտնող և տերությունն արտաքին աշխարհին կապող առևտրական ճանապարհները:

Հայ Բագրատունիների տերության պատմաաշխարհագրական հիմնահարցերի ուսումնասիրության համար առաջնակարգ նշանակություն ունեն հայկական սկզբնաղբյուրները:

Հայոց տերության մասին մանրամասն և արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ[1]: Պատմիչի տեղեկությունները հավաստի են, քանի որ նա Հայ Բագրատունիների տերության ժամանակակիցն է և շատ իրադարձությունների անմիջական վկան: Նրա տեղեկություններն անգնահատելի արժեք ունեն Հայ Բագրատունիների տերության կազմավորման, սահմանների, ընդգրկած տարածքների, վարչաքաղաքական բաժանման համակարգի և շատ ու շատ այլ կարևոր հարցերի լուսաբանման համար:

Հայ Բագրատունիների տերության պատմության և պատմաաշխարհագրական հիմնահարցերի պարզաբանման համար կարևոր սկզբնաղբյուր է Անանուն Զրուցագրի (կարծեցյալ Շապուհ Բագրատունի) «Պատմութիւն»-ը[2]: Պատմիչը պահպանել է բազմաթիվ կարևոր տեղեկություններ, որոնք այլ պատմիչների մոտ չեն հանդիպում: Նրա հաղորդած տեղեկություններից մենք հստակ պատկերացում ենք կազմում Հայ Բագրատունիների տերության ընդգրկած տարածքների, Սմբատ Ա թագավորի նվաճումների և վերջապես՝ Հայոց տերության սահմանների մասին X դ. սկզբին:

Թովմա Արծրունին, հիմնական նպատակակետ ունենալով Վասպուրականի Արծրունյաց իշխանության պատմության շարադրանքը, իր «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկում[3] հաճախ անդրադառնում է նաև Հայոց տերության մյուս շրջանների պատմության կարևոր հիմնահարցերի: Կարևոր են Արծրունյաց պատմիչի տեղեկությունները Հայոց տերության վարչաքաղաքական բաժանման համակարգի ուսումնասիրության և Արծրունիների իշխանության վարչական բաժանումների ու սահմանների ճշգրտման առումով: Նրա տեղեկություններից պատկերացում ենք կազմում նաև Վասպուրականում հաստատված արաբա-

---

[1] Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ **Հովհաննես Դրասխանակերտցի**), բնագիրը Մ. Էմինի, Եր., 1996:

[2] Անանուն Զրուցագիրը գրականության մեջ երբեմն սխալմամբ կոչվել է Շապուհ Բագրատունի, որի պատճառով նրա աշխատությունն առաջին անգամ հրատարակվել է Շապուհ Բագրատունու անունով (տե՛ս «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ», ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան եւ Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921): Պատմության տեքստն այնուհետև վերահրատարակվել է որպես «Անանուն Զրուցագրի պատմություն» (տե՛ս «Պատմութիւն Անանուն Զրուցագրի» (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի ("История Анонимного Повествователя (Псевдо-Шапух Багратуни))" (այսուհետև՝ **Անանուն Զրուցագիր**), Եր., 1971:

[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** Պատմութիւն տանն Արծրունեաց (այսուհետև՝ **Թովմա Արծրունի և Անանուն**), բնագիրը Վ. Վարդանյանի, Եր., 1985:

կան ցեղերի գրված տարածքների մասին: Թովմա Արծրունու տեղեկությունները լրացնում և շարունակում է Անանուն պատմիչը[1]:

Հայաստանի և այսրկովկասյան երկրների խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմաաշխարհագրական հիմնախնդիրների պարզաբանման համար մեծ արժեք է ներկայացնում Մովսես Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը[2]: Այդ աշխատությունը հիմնականում վերաբերում է Հայոց Արևելից կողմերի երկու աշխարհների՝ Արցախի և Ուտիքի պատմությանը, սակայն, կարևոր տեղեկություններ է պահպանել նաև Հայաստանի մյուս շրջանների և այսրկովկասյան երկրների մասին:

Ուշադրության արժանի աղբյուր է նաև Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի «Պատմութիւն տիեզերական» աշխատությունը[3]: Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանի մասին այնտեղ պահպանվել են արժեքավոր տեղեկություններ:

Կարևորում ենք նաև Վարդան վարդապետի «Հաւաքումն պատմութեան» աշխատությունը[4]: Հեղինակի տեղեկությունները լույս են սփռում Վիրքում Հայ Բագրատունիների ճյուղի հաստատման, Հայաստանում արաբական ցեղերի վերաբնակեցման ու տարածման և այլ կնճռոտ հարցերի վրա:

Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը[5] արժեքավոր տեղեկություններ է պահպանել Հայ Բագրատունիների տերության մասին: Ստեփաննոս Օրբելյանի տեղեկություններից հստակ պատկերացում ենք կազմում Սյունյաց իշխանությունների և դրանց ընդգրկած գավառների, Բագրատունիների հետ Սյունյաց իշխանների հարաբերությունների և այլ կարևոր իրողությունների մասին:

Մեծ Հայքի և հարևան երկրների վարչական բաժանման համակարգի, գավառների տեղադրության և պատմաաշխարհագրական այլ հարցերի վերաբերյալ ստույգ և արժեքավոր նյութեր են պարունակում

---

[1] Անդ, էջ 406-504:

[2] Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ **Մովսես Կաղանկատվացի**), քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Եր., 1983: Մովսես Դասխուրանցու երկն ավանդաբար հրատարակվել է Մովսես Կաղանկատվացու անունով:

[3] Տե՛ս «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական» (այսուհետև՝ **Ասողիկ**), հրատ. Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885:

[4] Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի» (այսուհետև՝ **Վարդան վարդապետ**), Վենետիկ, 1862:

[5] Տե՛ս «Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց Պատմութիւն նահանգին Սիսական» (այսուհետև՝ **Ստեփաննոս Օրբելյան**), Թիֆլիս, 1910:

Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի, Ղևոնդ վարդապետի, Ուխտանեսի, Արիստակես Լաստիվերցու, Սամվել Անեցու, Մխիթար Այրիվանեցու, Մատթեոս Ուռհայեցու, Կիրակոս Գանձակեցու երկերը[1]: Այդ հարցերում մեծ կարևորություն ունի «Աշխարհացոյց»-ը[2]: Արժեքավոր սկզբնաղբյուր է նաև Վարդան վարդապետի «Աշխարհացոյց»-ը[3]:

Ուսումնասիրության համար կարևոր են նաև վրացական աղբյուրները: Դրանցից խնդրո առարկա շրջանի վերաբերյալ իր հաղորդումների առատությամբ աչքի է ընկնում հատկապես «Քարթլիի մատյան»-ը[4], որտեղ կարևոր տեղեկություններ են պահպանվել ինչպես Վիրքի, այնպես էլ Հայաստանի, Աղվանքի և այլ երկրների մասին:

---

[1] Տե՛ս «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ), բնագիրը Ք. Պատկանյանի, Եր., 1987: «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ **Մովսես Խորենացի**), քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Եր., 1981: **Եղիշէ,** Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (այսուհետև՝ Եղիշե), Եր., 1989: «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, թուղթ առ Վահան Մամիկոնեան» (այսուհետև՝ **Ղազար Փարպեցի**), քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի, Եր., 1982: «Պատմութիւն Սեբէոսի» (այսուհետև՝ **Սեբեոս**), աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Եր., 1979: **Յովհան Մամիկոնեան**, Պատմութիւն Տարօնոյ (այսուհետև՝ Հովհան Մամիկոնյան), աշխատությամբ Ա. Աբրահամյանի, Եր., 1941: «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց» (այսուհետև՝ **Ղևոնդ**), Ս. Պետերբուրգ, 1887: **Ուխտանէս եպիսկոպոս,** Պատմութիւն Հայոց և Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց (այսուհետև՝ **Ուխտանես**), Վաղարշապատ, 1871: «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ» (այսուհետև՝ Արիստակես Լաստիվերցի), աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Եր., 1963: «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» (այսուհետև՝ Սամվել Անեցի), յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893: «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ Մխիթար Այրիվանեցի), ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860: **Մխիթար Անեցի**, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց (այսուհետև՝ Մխիթար Անեցի), աշխատասիրութեամբ Հ. Մարգարեանի, Եր., 1983: «Մատթէոսի Ուռհայեցւոյ Ժամանակագրութիւն» (այսուհետև՝ Մատթեոս Ուռհայեցի), գրաբար բնագիրը Մ. Մելիք-Ադամյանի և Ն. Տեր-Միքայելյանի, Եր., 1991: **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի), աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյան, Եր., 1961:

[2] Տե՛ս **Ա. Աբրահամյան,** Անանիա Շիրակացու մատենագրությունը (ուսումնասիրություն), Եր., 1944: **Патканов К.,** Армянская география VII века по П. Х. (приписывавшаяся Моисею Хоренскому), Санктпетербург, 1877. «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881:

[3] «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», քննական հրատ. Հ. Պէրպէրեանի՝ համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Բարիզ, 1960:

[4] Տե՛ս "Матиане Картлиса", перевод, введение и примечания **М. Лордкипанидзе**, Тб., 1976.

X դ. սկզբին Հայոց թագավորության ընդգրկած տարածքների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Ստեփան Տբեթցու «Գոբրոնի վկայաբանություն» աշխատության[1] մեջ:

VIII դ. վերջին և IX դ. սկզբին Կղարջքի կուրապաղատության և նրա ընդգրկած տարածքների, ինչպես նաև Վրաց Բագրատունիների վերաբերյալ կարևոր տեղեկություններ է հաղորդում Դավթի որդի Սմբատն իր «Պատմություն» երկում[2]:

Հայաստանի, Վիրքի, Աղվանքի և այլ երկրների պատմաաշխարհագրական հիմնահարցերի վերլուծության համար կարևոր աղբյուրներ են Լեոնտի Մրովելու «Վրաց թագավորների պատմություն»-ը, Զվանշեր Զվանշերյանի «Վախթանգ Գորգասալի կյանքը» և Վախուշտ Բագրատիոնի «Վրաց թագավորության պատմություն»-ը[3]:

Վրաց սրբերի «Վարք»-երից ուսումնասիրության համար հատկապես արժեքավոր են Գեորգի Մերչուլի «Գրիգոր Խանձթեցու վարքը», Վասիլ Զարզմեցու «Սերապիոն Զարզմեցու վարքը» և անանուն հեղինակի «Իլարիոն Վրացու վարքը»[4]:

Կարևոր են նաև բյուզանդական աղբյուրները, որոնցից մեր աշխատության համար հատկապես արժեքավոր է Կոստանդին Ծիրանածնի երկը[5]: Վերջինում մանրամասն տեղեկություններ են պահպանվել արաբական տիրապետության շրջանում Հայաստանի և այսրկովկասյան

---

[1] Տե՛ս **Ստեփան Տբեթցի**, Գոբրոնի վկայաբանությունը,-**L. Մելիքսեթ-Բեկ,** «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. Ա, Եր., 1934, էջ 89-94:

[2] Տե՛ս **Сумбат Давитис-дзе,** История и повествование о Багратионах (այսուհետև՝ **Сумбат Давитис-дзе**), пер. Лордкипанидзе М., Тб., 1979.

[3] Տե՛ս **Լեոնտիոս Ռուիսեցի (Լեոնտի Մրովելի),-L. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 140-183: Տե՛ս նաև **Леонти Мровели,** Жизнь картлийских царей (այսուհետև՝ Леонти Мровели), извлечение сведений об абхазах, народах Северного Кавказа и Дагестана, перевод с древнегрузинского, предисловие и комментарии Г. Цулая, М., 1979, **Джуаншер Джуаншериани,** Жизнь Вахтанга Горгасала (այսուհետև՝ **Джуаншер Джуаншериани**), перевод, введение и примечания Г. Цулая, Тб., 1986, **Âàõóøòè Áàãðàòèîíè,** Èñòîðèÿ öàðñâà Ãðóçèíñêîãî (այսուհետև՝ **Âàõóøòè Áàãðàòèîíè**), ïåðåâîä Í. Íàêàøèäçå, Òá., 1976.

[4] Տե՛ս **Георгий Мерчуле, Житие Св.** Григория Хандзтийского (այսուհետև՝ Георгий Мерчуле), грузинский текст, введение, издание, перевод Н. Марра,-"Тексты и разыскания по армяно-грузинской филологии", т. VII, СПб., 1911, էջ 83-151, **Василий Зарзмели,** Житие Серапиона Зарзмели (այսուհետև՝ Василий Зарзмели),-"Памятники древнегрузинской агиографической литературы", пер. К. Кекелидзе. Тб., 1956, "Древнегрузинская литература (V-XVIII вв.)", тексты, сост. Л. Менабде, пер. с груз., Тб., 1987, "Житие и деяния Илариона Грузина" (այսուհետև՝ Иларион Грузин), перевод с древнегрузинского, введение, примечания Г. Цулая, М., 1998.

[5] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Բ, **Կոստանդին Ծիրանածին** (այսուհետև՝ **Կոստանդին Ծիրանածին**), թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., 1970:

երկրների, ինչպես նաև Հայ Բագրատունիների տերության կազմավորման, քաղաքական կարգավիճակի, վարչաքաղաքական բաժանման համակարգի, սահմանների և արաբական ամիրայությունների մասին:

Բյուզանդական աղբյուրներից օգտագործել ենք նաև Թեոփանես Խոստովանողի[1], Հովսեփ Գենեսիոսի[2], Լևոն Սարկավագի[3], Թեոփանեսի Շարունակողի[4] և Հովհաննես Սկիլիցեսի[5] աշխատությունները:

Մեր ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեն, անշուշտ, նաև արաբական աղբյուրները[6]: Վերջիններիս մեջ իր տեղեկությունների հարստությամբ աչքի է ընկնում X դ. պատմիչ ալ-Իսթախրիի «Գիրք թագավորությունների ճանապարհների [մասին]» աշխատությունը[7]: Մեծ է Հայոց թագավորության, վերջինիս մեջ մտնող երկրների, իշխանությունների, ինչպես նաև առևտրական ճանապարհների մասին ալ-Իսթախրիի պահպանած տեղեկությունների արժեքը: Ալ-Իսթախրին նկարագրում է նաև Սմբատ Ա-ի տերության սահմանները:

Իբն Հաուկալն իր «Երկրի համայնապատկեր» երկի[8] որոշ հատվածներ շարադրելիս օգտվել է ալ-Իսթախրիի տեղեկություններից: X դ. հեղինակի հաղորդումներն արժեքավոր են Հայաստանի և այսրկովկաս-

---

[1] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Դ, Թեոփանես Խոստովանող (այսուհետև՝ Թեոփանես Խոստովանող), թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., 1983:

[2] Տե՛ս **Ioseph Genesios,** On the reigns of the emperors (այսուհետև՝ Ioseph Genesios),-Australian Association for Byzantine Studies, vol. 11, 1998.

[3] Տե՛ս **Лев Диакон,** История (այսուհետև՝ Лев Диакон), М., 1988.

[4] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին», Բյուզանդական աղբյուրներ, Ե, Թեոփանեսի Շարունակող (այսուհետև՝ Թեոփանեսի Շարունակող), թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., 1990:

[5] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին», Բյուզանդական աղբյուրներ, Գ, Հովհաննես Սկիլիցես, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., 1979:

[6] 2005 թ. լույս տեսավ IX-X դդ. արաբ 18 մատենագիրների (Աբու Յուսուֆ, Վահբ իբն Մունաբբիհ/Իբն Հիշամ, Վակիդի, Խալիֆա իբն Խայյաթ, Իբն Կուտայբա, Դինավարի, Բալազուրի, Յակուբի, Խորեզմի, Ջահիզ, Իբն Խորդադբեհ, Իբն ալ-Ֆակիհ, Իբն Ռուստեհ, Ֆարղանի, Կուդամա իբն Ջաաֆար, ալ-Իսթախրի, Իբն Հաուկալ, ալ-Մուկադդասի) աշխատությունների՝ Հայաստանին, ինչպես նաև հարևան և հեռավոր շատ երկրների վերաբերող հատվածների Ա. Տեր-Ղևոնդյանի թարգմանությունը (տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, «Արաբական աղբյուրներ», Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 2005), որը մեծարժեք ներդրում է հայագիտության և արաբագիտության մեջ:

[7] Տե՛ս **al-Istakhri**, Kitáb masâlik al-mamâlik (այսուհետև՝ **al-Istakhri**).-Bibliotheca geographorum arabicorum (այսուհետև՝ BGA), editio III, p. I, Lugd. Bat., 1967.

[8] Տե՛ս **Abū 'L-Kāsim Ibn Haukal al-Nasībī,** Kitáb surât al-ard (այսուհետև՝ **Ibn Haukal**).-BGA, editio III, p. II, Lugd. Bat., 1967.

յան երկրների պատմաաշխարհագրական խնդիրների, առևտրական ճանապարհների կայարանների տեղադրության և այդ ճանապարհների ուղղությունների ճշգրտման համար: Իբն Հաուկալը կարևոր տեղեկություններ է հաղորդում Հայոց թագավորության և նրա քաղաքների մասին, ինչպես նաև ներկայացնում Սմբատ Ա-ի տերության սահմանները:

X դ. հեղինակ ալ-Մուկադդասին իր «Կլիմաների[1] ճանաչման համար լավագույն բաժանման գիրք» երկում[2] արժեքավոր տեղեկություններ է պահպանել Հայաստանի և այսրկովկասյան երկրների քաղաքների և առևտրական ճանապարհների մասին:

X դ. առաջին քառորդում Հայաստանի և այսրկովկասյան երկրների մասին տեղեկություններ է պահպանել նաև արաբ աշխարհագետ Մասուդին իր «Ոսկու մարգագետիններ և գոհարների հանքեր» և «Հաղորդումների և իմացությունների գիրք» աշխատությունների մեջ[3]:

Հայ Բագրատունիների տերության պատմաաշխարհագրական և այլ կարևոր խնդիրների քննության համար կարևոր են Բալազուրիի, Յակուբիի, Իբն Խորդադբեհի, Իբն ալ-Ֆակիհի, Կուդամայի, Իբն Ռուստեհի, Թաբարիի, ալ-Քուֆիի, Իբն ալ-Ասիրի և Յակուտ ալ-Համավիի աշխատությունները[4]:

Մեր ուսումնասիրության համար կարևորություն ունեն նաև հույն աշխարհագրագետ Ստրաբոնի[5], պարսիկ անանուն աշխարհագետի[1] և

---

[1] Արաբ աշխարհագետները բնակելի աշխարհը բաժանում էին 7 կլիմաների կամ երկրների խմբերի (տե՛ս "Kitáb al-a'lâk an-nafîsa auctore Abû-Ali Ahmad-ibn-Omar ibn Rosteh".-BGA, editio II, p. VII, Lugd. Bat., 1967 էջ 97-98):

[2] Տե՛ս **al-Moqaddasi,** Kitáb ahsán at-tákasim fi ma'rifat al-akálim (այսուհետև՝ **al-Moqaddasi**).-BGA, editio III, p. III, Lugd. Bat., 1967.

[3] Տե՛ս مسعودي، مروج الذهب و معادن الجوهر، ١-٢، القاهرة، ١٩٤٨ (այսուհետև՝ مسعودي): Տե՛ս նաև "Kitáb at-tanbîh wa'l ischrâf auctore al-Masûdî".-BGA, editio II, p. VIII, Lugd. Bat., 1967.

[4] Տե՛ս بلاذري، كتاب فتوح البلدان، ١-٣، القاهرة، ١٩٥٦-١٩٥٨ (այսուհետև՝ بلاذري):١٩٧٠، بيروت، ٢، يعقوبي، تاريخ اليعقوبي (այսուհետև՝ يعقوبي), նույնի՝ "Kitâb al-Boldân auctore Ahmed ibn Abî Jakûb ibn Wâdhih al-Kâtib Al-Jakûbî" (այսուհետև՝ Jakubi).-BGA, editio II, p. VII, Lugd. Bat., 1967: Ibn Khordâdbeh, Kitáb al-masâlik wa'l-mamâlik (այսուհետև՝ **Ibn Khordadbeh**).-BGA, editio II, p. VI, Lugd. Bat., 1967. **Ibn al-Fakih** al-Hamadhani, Kitáb al-boldân (այսուհետև՝ **Ibn al-Fakih**).-BGA, editio II, p. V, Lugd. Bat., 1967. "Excerpta e Kitáb al Kharadj auctore **Kudama**-ibn Dja'far" (այսուհետև՝ **Kudama**).-BGA, editio II, p. VI, Lugd. Bat., 1967. "Kitáb al-a'lâk an-nafîsa auctore Abû-Ali Ahmad-ibn-Omar ibn Rosteh" (այսուհետև՝ Ibn Rosteh).-BGA, editio II, p. VII, Lugd. Bat., 1967. طبري، تاريخ الطبري، ١-٩، بيروت (այսուհետև՝ طبري): Al-Kufi, Kitāb'l-futūh (այսուհետև՝ al-Kufi), I-VIII, Hyderabad, 1968-1975. ابن الاثير، الكامل في التاريخ، ١-٩، بيروت، ١٩٦٧ (այսուհետև՝ ابن الاثير): Jacut's Geographisches Wörterbuch aus den Handschriften zu Berlin, St. Petersbourg und Paris herausgegeben von Ferdinand Wüstenfeld (այսուհետև՝ **Jacut**), Leipzig, 1924 (in sechs Bänden).

[5] Տե՛ս **Ñòðàáî í,** Ãåîãðàôèÿ (այսուհետև՝ Ñòðàáî í), â 17 êíèãàõ, ïåðåâî ä, ñòàòüÿ è êî ì ìåí òàðèè Ã. Ñòðàòàí îâñêîãî, Ì ., 1964.

Միքայել Ասորու աշխատությունները[2]:

Անհրաժեշտաբար օգտագործել ենք նաև տարբեր պատմական, պատմաաշխարհագրական, ազգագրական ուսումնասիրություններ, ուղեգրություններ[3]:

---

[1] Տե՛ս **Hudūd al-'Ālam,** "The regions of the world", A Persian geography 372 A.H-982 A.D. (այսուհետև՝ Hudūd al-'Ālam), translated and explained by **V. Minorsky**, London, 1937.

[2] Տե՛ս **Միքայէլ Ասորի,** Ժամանակագրութիւն (այսուհետև՝ Միքայել Ասորի), Երուսաղեմ, 1879:

[3] Տե՛ս **Ս. Ջալալեանց,** Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858: **Ղ. Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, նույնի՝ Սիսական, Վենետիկ, 1893: **Մ. Բարխուտարեանց,** Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, նույնի՝ Արցախ, Բաքու, 1895: **Հ. Հյուբշման**, Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմ. Հ. Պիլէզիկճեան, Վիեննա, 1907: **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, թարգմ. ռուսերենից Ա. և Է. Խոնդկարյանների, Եր., 1987: **Թ. Թորամանյան,** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. 1, Եր., 1942: **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, նույնի՝ Լիպարիտ զորավարը և նրա նախորդները,-«Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ», Եր., 1947, թիվ 2, էջ 103-149, նույնի՝ «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ,-«Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1973, թիվ 2: Ս. Շլեպչյան, Արաբական խալիֆաթի վարչական քաղաքականությունը Հայաստանում /7-9 դդ./, պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստճանի հայցման ատենախոսություն, Եր., 1954: **Ա. Ալպոյաճյան,** Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրե, 1955: **Ա. Մնացականյան**, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Եր., 1966: **Թ. Հակոբյան,** Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1984, նույնի՝ Սյունիքի թագավորությունը (պատմա-աշխարհագրական առումով), Եր., 1966: **Թ. Հակոբյան և ուրիշներ,** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ ՀՀՇՏԲ), հ. 1, Եր., 1986, հ. 3, Եր., 1991: **Տ. Մարության,** Հայ դասական ճարտարապետության ակունքներում (Հայաստանի և Վրաստանի վաղ միջնադարյան հուշարձաններ), Եր., 2003, նույնի՝ Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք, Եր., 1978: **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ), 2001: **Պ. Մուրադեան**, Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը, պրակ Ա, Եր., 2008: **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009: **Ա. Եղիազարյան,** Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Եր., 2010: **И. Шопен**, Новые заметки на древние истории Кавказа и его обитателей, Спб., 1866. **Д. Пагирев,** Алфавитный указатель к пятиверстной карте Кавказского края, Нальчик, 2007. **Ї. Їàðð,** Êàâêàçñêèå ïëåìåííûå íàçâàíèÿ è ìåñòíûå ïàðàëëåëè.-«Òðóäû êîìèññèè ïî èçó÷åíèþ ïëåìåííîãî ñîñòàâà íàñåëåíèÿ Ðîññèè», N 5, Ïåòðîãðàä, 1922, նույնի՝ Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах халкедонитах.- "Византийский временник", т. XII, 1906, вып. 1-4, նույնի՝ Кавказский Культурный мир и Армения, «Հայագիտական մատենադարան», Եր., 1995: **Н. Токарский,** Архитектура Армении IV-XIV веков, Ер., 1961. **Ш. Амиранашвили,** История грузинского искусства, т. 1, М., 1950. З. Анчабадзе, Из истории средневековой Абхазии (VI-XVII вв.), Сухуми, 1959. «Èñòîðèÿ, ãåîãðàôèÿ è ýòíîãðàôèÿ Äàãåñòàíà 18-19 ââ.», àðõèâíûå ìàòåðèàëû, Ì., 1958. Â. Ìèíîðñêèé, Èñòîðèÿ Äåðáåíäà è Øèðâàíà IX-XI ââ., Ì., 1963. **А. Акопян**, Албания-Алуанк в греко-латинских древнеармянских источниках, Е., 1987. "История Византии в трех томах", т. II, М., "Наука", 1967. **Ф. Успенский**, История Византийской империи, т. 1, М., "Мысль", 1996. **M. Ghazarian,** Armenien unter der arabishchen

Մեր ուսումնասիրության ընթացքում, ինչպես նաև վերջինիս արդյունք հանդիսացող քարտեզները կազմելիս՝ Մեծ Հայքի սահմանների, վարչաքաղաքական բաժանման համակարգի, առևտրական ճանապարհների ու դրանց ուղղությունների, բնակավայրերի տեղադրության և պատմաաշխարհագրական այլ հիմնահարցերի առումով մեծապես հիմնվել ենք Ս. Երեմյանի, Բ. Հարությունյանի և այլոց հետազոտությունների արդյունքների վրա, որոնք հեղինակների կողմից ամբողջացվել և ներկայացվել են առանձին քարտեզների տեսքով[1]:

Ծավալուն է Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանի Հայաստանի և այսրկովկասյան երկրների քաղաքական պատմության ուսումնասիրությունը: Հետազոտողներն իրենց աշխատանքներում որոշ տեսակետեր են հայտնել նաև հիշյալ երկրների պատմական աշխարհագրությանը վերաբերող հարցերի մասին:

Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանին վերաբերող ուսումնասիրությունները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբում դասում ենք այն աշխատությունները, որտեղ Հայ Բագրատունիների տերությունը քննության է առնված ընդհանրության մեջ, իսկ երկրորդ խմբում՝ այն ուսումնասիրությունները, որոնք նվիրված են Հայ Բագրատունիների տերության կազմի մեջ մտնող տարբեր իշխանությունների պատմության ուսումնասիրությանը:

Առաջին խմբի մեջ պետք է դասել XVIII դ. հետազոտող Մ. Չամչյանցին, որն իր եռահատոր «Պատմութիւն Հայոց»-ում անդրադարձել է Հայ Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանին[2]: Հեղինակն օգտագործել է հայկական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները՝ որոշ լրացումներ կատարելով բյուզանդական աղբյուրներից:

Արաբների կողմից Հայաստանի նվաճմանը, արաբ վերաբնակիչնե-

---

herrschaft bis zur Enstehung des Bagratidenreiches, Marburg, 1903. The Cambridge history of the Byzantine Empire c. 500-1492, Cambridge University Press, 2008 և այլն:

[1] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, Եր., 1963 (համանուն աշխատությանը կից), նույնի՝ Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ, Եր., 1976 (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Եր., 1976), նույնի՝ Բագրատունիների թագավորությունը 9-11 դարերում, քարտեզ, Եր., 1987, նույնի՝ Հայաստանը IX-XI դարերում, քարտեզ, Եր., 1987 և այլն, **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն (Եր., 1984) և վերջինիս կից քարտեզներ, **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, Եր., 2001: Հեղինակի՝ խնդրո առարկա շրջանի մյուս քարտեզները տե՛ս Հայաստանի պատմության ատլասի Ա մասում (Եր., 2005): Տե՛ս նաև **R. Hewsen,** Armenia: A Historical Atlas, Chicago, University of Chicago Press, 2001 և այլն: Օգտվել ենք բազմաթիվ այլ քարտեզներից, որոնց կանդրադառնանք հետազոտության ընթացքում:

[2] Տե՛ս **Մ. Չամչեանց**, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Եր., 1984:

րի հաստատմանը, արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի ապստամբություններին, ինչպես նաև Բագրատունիների տերության որոշ հիմնահարցերի անդրադարձել է Ղ. Ինճիճյանն իր «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» և «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» աշխատությունների մեջ[1]:

Հետաքրքրություն է ներկայացնում Ա. Գրենի «Բագրատունիների հարստությունը Հայաստանում» ուսումնասիրությունը[2]: Հեղինակը քննության է առել Հայ Բագրատունիների տերության ստեղծման, ինչպես նաև արդեն տերության շրջանի մի շարք հարցեր և հանգել էական եզրակացությունների, որոնք կարևոր նշանակություն ունեն Հայ Բագրատունիների տերության պատմության ուսումնասիրության համար:

Ժ. Լորանը հատուկ ուշադրություն է դարձրել Հայ Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանի պատմությանը՝ հանգելով մի շարք կարևոր եզրակացությունների[3]:

Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանի պատմությանն անդրադարձել է նաև Լեոն[4]: Հեղինակը մանրամասնորեն քննության է առել այդ ժամանակաշրջանի քաղաքական պատմությունը:

Հ. Մարկվարտը մանրամասնորեն անդրադարձել է Հայաստանի և Վրաստանի Բագրատունիների ծյուղագրությանը՝ կատարելով կարևոր ճշգրտումներ[5]:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմաաշխարհագրական որոշ հիմնահարցերի վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ է կատարել Հ. Մանանդյանը: Մեծ արժեք են ներկայացնում նրա կողմից Հայաստանն արտաքին աշխարհին կապող առևտրական ճանապարհների ուղղությունների պարզաբանումն ու կայարանների տեղադրությունը[6]:

Բ. Առաքելյանը առանձին ուսումնասիրություն է նվիրել IX-XIII դդ.

---

[1] Տե՛ս **Ղ. Ինճիճեան,** Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, հ. Ա-Գ, նույնի՝ Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822:

[2] Տե՛ս **А. Грен,** Династия Багратидов в Армении,-"Журнал министерства народного просвещения", часть ССХС, С.-Петербург, 1893, ноябрь, էջ 52-139:

[3] Տե՛ս **J. Laurent,** L'Armenie entre Byzance et l'Islam depuis la conquete arabe jusqu'en (Nouvell édition revue et mise à jour par M. Canard), Lisbonne, 1980.

[4] Տե՛ս **Լեո,** Հայոց պատմություն, միջին դարեր,-Երկերի ժողովածու, հ. Բ, Եր., 1967:

[5] Տե՛ս **Յ. Մարկուարտ**, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, ծանօթութիւններով, գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներէնէ թարգմանեց Հ.Մ. Հապոզեան, Վիեննա, 1913:

[6] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պլտինգերյան քարտեզի, Եր., 1936, նույնի՝ О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры-XV в. н. эры), Ер., 1954 և այլն:

Հայաստանի քաղաքներին և արհեստներին[1]:

Հ. Հարությունյանի «Հայաստանը IX-XI դարերում» աշխատությունը[2] մի կարևոր փորձ էր Բագրատունիների թագավորության քաղաքական պատմության ուսումնասիրության ասպարեզում: Հեղինակը որոշ անդրադարձ է կատարել նաև Հայոց թագավորության վարչաքաղաքական բաժանման համակարգին:

Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանի ուսումնասիրության համար մեծ կարևորություն ունեն Հ. Բարթիկյանի «Հայ-բյուզանդական հետազոտությունները»[3]: Ուսումնասիրողը մանրամասնորեն անդրադարձել է բյուզանդական արքունիքում և քաղաքականության մեջ հայերի խաղացած դերին, Բյուզանդիայում գործող հայկական նախարարական տների ներկայացուցիչներին, ինչպես նաև խնդրո առարկա շրջանում հայ-բյուզանդական հարաբերություններին և դրանց բնույթին, ինչպես նաև այլ կարևոր հիմնահարցերի:

Մեր ուսումնասիրության համար հետաքրքրություն են ներկայացնում Կ. Թումանովի աշխատությունները[4]: Մեծ է դրանց արժեքը հատկապես Հայ Բագրատունիների տերության քաղաքական պատմության ուսումնասիրության համար:

Ա. Տեր-Ղևոնդյանն իր «Հայաստանը և Արաբական խալիֆայությունը» աշխատության մեջ[5] մանրամասնորեն անդրադարձել է Հայ Բագրատունիների տերության կազմավորմանը և Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների գահակալության ժամանակաշրջանների պատմությանը՝ լայնորեն օգտագործելով հայկական, արաբական և բյուզանդական սկզբնաղբյուրները: Բացի այդ, հեղինակը մանրամասնորեն անդրադարձել է Հայ Բագրատունիների տերության մեջ մտնող արաբական ամիրայությունների պատմությանը[6]: Խնդրո առարկա ժամանակա-

---

[1] Տե՛ս **Բ. Առաքելյան**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ 1, Եր., 1958:

[2] Տե՛ս **Հ. Հարությունյան**, Հայաստանը IX-XI դարերում, Եր., 1959:

[3] Տե՛ս **Հ. Բարթիկյան,** Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, հայերեն հոդվածներ, Եր., 2002; հ. Բ, հոդվածներ օտար լեզուներով, Եր., 2002:

[4] Տե՛ս **C. Toumanoff**, Studies in Christian Caucasian history, Georgetown University Press, 1963, նույնի՝ Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasie chrétienne (Arménie-Géorgie-Albanie), Rome, 1976, նույնի՝ Armenia and Georgia.-The Cambridge Medieval History, IV, The Byzantine Empire, I, chapter XIV, Cambridge, 1966, էջ 593-637, նույնի՝ The Bagratids of Iberia from the eight to the eleventh Century.-"Le Museon", LXXIV, Idem. Studies, Louvain, 1961, էջ 435-499 և այլն:

[5] Տե՛ս **A. Тер-Гевондян,** Àðìåíèÿ è Àðàáñêèé õàëèôàò, Åð., 1977 և այլն:

[6] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Եր., 1965:

շրջանի մասին նա գրել է նաև բազմաթիվ այլ ուսումնասիրություններ[1]:

Հայ Բագրատունիների տերության քաղաքական կարգավիճակին, այդ տերության մեջ մտնող իշխանություններին և թագավորություններին, ինչպես նաև Հայոց տերության և Բյուզանդիայի միջև հարաբերություններին մանրամասնորեն անդրադարձել է Կ. Յուզբաշյանը «Բագրատունյաց դարաշրջանի հայկական պետությունները և Բյուզանդիան IX-XI դդ.» աշխատության մեջ[2]:

Հայ Բագրատունիների տերության պատմության ուսումնասիրության համար արժեքավոր է Ռ. Մաթևոսյանի «Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը» աշխատությունը[3]: Հեղինակը քննության է առել Հայոց թագավորության պետական կառուցվածքը, հողատիրության ձևերը և բնութագրել զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի վասալիտետը: Առավել հետաքրքրական է աշխատության այն հատվածը, որտեղ հեղինակն անդրադարձել է IX դ. վերջին և X դ. սկզբին Հայոց թագավորության պետական կառուցվածքին և կառավարմանը, ինչպես նաև «տերության» բնութագրմանը:

Երկրորդ խմբի ուսումնասիրություններից Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանի ուսումնասիրության համար մեծ արժեք է ներկայացնում Ն. Ադոնցի «Բագրատունյաց փառքը» աշխատությունը[4]: Հեղինակն անդրադարձել է Հայ Բագրատունիների թագավորությանը, վեր հանել և քննության առել բազմաթիվ հիմնախնդիրներ, ինչպիսիք են Բագրատունյաց թագավորության սահմանների, նրա կազմի մեջ մտնող թագավորությունների և իշխանությունների կարգավիճակի հարցերը: Կարևոր են նաև նշյալ ուսումնասիրության մեջ հեղինակի կողմից «Վրաց» Բագրատունիների և Ծանարաց քորեպիսկոպոսության վերաբերյալ կատարած ծավալուն ուսումնասիրությունները:

Վ. Վարդանյանն իր «Վասպուրականի Արծրունյաց թագավորությու-

---

[1] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր),-«ՊԲՀ», 1981, թիվ 2, էջ 134-149, նույնի՝ Դվին քաղաքի ժամանակագրությունը 9-11-րդ դարերում,-ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1957, թիվ 10, էջ 85-98, նույնի՝ Հայաստանի վարչական բաժանումները ըստ արաբ աշխարհագիրների,-ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1961, թիվ 5, էջ 63-72, նույնի՝ «Հայոց իշխան»-ը արաբական տիրապետության ժամանակաշրջանում,-«ՊԲՀ», 1964, թիվ 2, էջ 121-134, նույնի՝ Սասունի 749-752 թվականների անհայտ ապստամբությունը խալիֆայության դեմ,-«ՊԲՀ», 1971, թիվ 3, էջ 196-202 և այլն:

[2] Տե՛ս **К. Юзбашян,** Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988.

[3] Տե՛ս **Ռ. Մաթևոսյան,** Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Եր., 1990:

[4] Տե՛ս **Ն. Ադոնց,** Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, նույնի՝ Երկեր, հ. Ա, Եր., 2006:

նը 908-1021 թթ.» աշխատության մեջ[1] մեկ ծավալուն գլուխ է նվիրել Վասպուրականի իշխանության պատմությանը Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանում: Նա քննության է առել Վասպուրականի իշխանության ներսում տիրող վարչաքաղաքական իրավիճակը, Արծրունի իշխանների հարաբերություններն ինչպես Բագրատունիների, այնպես էլ Տարոնի և Սյունյաց իշխանությունների հետ:

Սյունիքի իշխանության պատմության ուսումնասիրությամբ զբաղվել է Հ. Ութմազյանը: Նրա «Սյունիքը IX-X դարերում» աշխատությունը[2] Սյունիքի խնդրո առարկա շրջանի պատմության ուսումնասիրության ամենահաջողված փորձերից է, որտեղ հեղինակը քննության է առել Սյունիքի քաղաքական պատմությունը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները և վերլուծության ենթարկել Սյունյաց իշխանական տներն ու դրանց կառուցվածքը:

Հայ Բագրատունիների տերության շրջանում Հայոց Արևելից կողմերի և Աղվանքի վերաբերյալ կարևոր ուսումնասիրություններ է կատարել Ս. Բարխուդարյանը: Հեղինակն անդրադարձել է այդ շրջանի իշխանություններին, դրանց տոհմաբանությանը և որոշ ազգագրական խնդիրների[3]:

Տարոնի Բագրատունիների և ընդհանրապես Բագրատունիների թագավորության պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի Գ. Գրիգորյանի «Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում» աշխատությունը[4]: Հեղինակը մանրամասն անդրադարձել է Տարոնի Բագրատունիների պատմությանը, Տարոնի իշխանության սահմաններին, Բագրատունիների ծյուղագրությանը և ավագ ծյուղի հետ նրանց ունեցած հարաբերություններին:

Բ. Ուլուբաբյանը քննության է առել Հայոց Արևելից կողմերի հին և միջին դարերի պատմության հիմնահարցերը, ուսումնասիրել Խաչենի իշխանության X-XIV դդ. պատմության և պատմական աշխարհագրու-

---

[1] Տե՛ս **Վ. Վարդանյան,** Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., Եր., 1969:

[2] Տե՛ս **Հ. Ութմազյան,** Սյունիքը IX-X դարերում, Եր., 1958:

[3] Տե՛ս **С. Бархударян,** Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений, Ер., 2011: Աշխատությունը հանդիսանում է Հայոց Արևելից կողմերի իշխանությունների և Աղվանքի վերաբերյալ հեղինակի աշխատությունների հանրագումարը:

[4] Տե՛ս **Գ. Գրիգորյան,** Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Եր., 1983:

թյան մի շարք կարևոր խնդիրներ[1]:

Աղվանից աշխարհի պատմության հնագույն շրջանից մինչև IX դ. ընկած շրջանի պատմությանն է նվիրված Հ. Սվազյանի «Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ)» աշխատությունը[2]: Հեղինակը քննության է ենթարկել «Ալբանիա», «Աղուանք» և «Առան» տեղանունները, անդրադարձել Աղվանից աշխարհի սահմաններին, էթնիկ կազմին և ուսումնասիրել Աղվանից աշխարհի պատմությունը մինչև IX դ.՝ վեր հանելով և քննարկելով բազմաթիվ խնդրահարույց հիմնահարցեր:

Կախեթի իշխանության պատմությանը, պատմաաշխարհագրական խնդիրներին և Հայաստանի հետ Կախեթի իշխանների ունեցած հարաբերություններին է նվիրված Հ. Մկրտումյանի «Կախեթի վրացական ֆեոդալական իշխանությունը VIII-XI դդ. և նրա կապերը Հայաստանի հետ» աշխատությունը[3]: Հեղինակը քննության է առել նաև Կախեթի իշխանության և Հայ Բագրատունիների տերության հարաբերությունները:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի վերաբերյալ աշխատություններ են հրատարակվել նաև Ադրբեջանում: Զ. Բունիաթովը, չնայած, որ օգտագործել է արաբական և հայկական սկզբնաղբյուրները, դիմել է կեղծարարության ու պատմության նենգափոխման[4]: Բունիաթովական դպրոցի հայտնի ներկայացուցիչ է Ֆ. Մամեդովան[5]: Ներկայումս ադրբեջանական պատմագրությունը սկսել է զարգացնել հակագիտական մի «տեսություն», ըստ որի՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքն Արևմտյան Ադրբեջանն է, իսկ հայերն Այսրկովկասում հայտնվել են XIX դ. սկզբին[6]:

Վրաստանում հրատարակված աշխատություններից խնդրո առարկա շրջանի պատմության և պատմական աշխարհագրության ուսումնասիրության համար հետաքրքրություն են ներկայացնում Մ. Լորդկիպա-

---

[1] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան,** Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության, Եր., 1981, նույնի՝ Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975 և այլն:

[2] Տե՛ս **Հ. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ), Ե., 2006: Տե՛ս նաև Г. Свазян, История страны Алуанк (с древнейших времен по VIII век), Ер., 2009.

[3] Տե՛ս **Ã. Ì êðòóìÿí**, Ãðóçèíñêîå ôåîäàëüíîå ôèçåñòâî Êàõåòè â VIII-XIââ. è åãî âçàèìîòíîùåíèÿ ñ Àðìåíèåé, Åð., 1983.

[4] Տե՛ս **Ç. Áóíèÿòîâ**, Àçåðáàéäæàí â VII-IX ââ., Áàêó, 1965.

[5] Տե՛ս **Ф. Мамедова**, Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э.-VIII в. н.э.), Баку, 1986.

[6] Տե՛ս **М. Исмаил**, История Азербайджана (краткий обзор с древнейших времен до 1920г.), Баку, 1995. “Историческая география Западного Азербайджана”, составитель С. Асадов, Баку, 1998. **С. Асадов**, Миф о “Великой Армении”, Баку, 1999. “Исторические факты о Карабахе”, Баку, 2009 և այլն:

նիձեի, Ա. Բոգվերաձեի և Դ. Մուսխելիշվիլիի հետազոտությունները[1]: Սակայն Հայաստանի, Աբխազաց և Աղվանից թագավորությունների և Կղարջքի կուրապաղատության պատմության ու պատմական աշխարհագրության խնդիրների հետ կապված՝ վրացական հեղինակներից ոմանք դիմել են պատմական փաստերի նենգափոխման[2]:

Վիրքի՝ խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ են կատարել Մ. Բրոսսեն[3] և Ն. Մառը[4]:

---

[1] Տե՛ս **Ì. Ëîðäêèïàíèäçå**, Âîçíèêíîâåíèå íîâûõ ôåîäàëüíûõ ãîñóäàðñòâ, **À. Áîãäàðàäçå**, Ðàííåôåîäàëüíûå Ãðóçèíñêèå ãîñóäàðñòâà â VI-VIII ââ., **Ä. Ìóñõåëèøâèëè**, Èñòîðè÷åñêàÿ ãåîãðàôèÿ Ãðóçèè IV-X ââ., և այլն,-"Î ÷åðêè èñòîðèè Ãðóçèè", ò. II, Тб., 1988.

[2] Տե՛ս **И. Чавчавадзе,** Армянские ученые и вопиющие камни, Тифлис, 1902. **С. Джанашиа**, Об одном примере искажения исторической правды. По поводу книги Н. Токарского "Архитектура древней Армении", Тб., 1947. **Е. Такайшвили,** Археологическая экспедиция 1917-го года в южные провинции Грузии, Тб., 1952. В. Беридзе, Место памятников Тао-Кларджети в истории грузинской архитектуры, Тб., 1981, "Очерки из истории Грузии, Абхазия (с древнейших времен до наших дней)", Тб., 2009, "Некоторые вопросы истории Грузии в армянской историографии", сборник статей, Тб., 2009, **V. Silogava, R. Shengelia, Tao-Klardjeti, Tb., 2006** և այլն:

[3] Տե՛ս **M. Brosset,** Histoire de la Georgie, I, St.-Petersbourg, 1849, նույնի՝ Revue des antiquités georgiennes, Bullet. Scientif. N3 (V, p. 3, St.-Petersbourg, 1839) և այլն:

[4] Տե՛ս **Н. Марр,** История Грузии (Культурно-исторический набросок), по поводу слова прот. И. Восторгова о грузинском народе,-"К грузинскому вопросу", N 1, Спб., 1906.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԸ

1.1. Հայաստանի և այսրկովկասյան երկրների վարչաքաղաքական իրավիճակն արաբական տիրապետության ժամանակաշրջանում: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանում և այսրկովկասյան երկրներում տիրող վարչաքաղաքական իրավիճակը զգալի ազդեցություն էր թողել Հայ Բագրատունիների տերության վարչաքաղաքական բաժանման համակարգի ձևավորման վրա:

700 թ. նվաճելով Հայաստանի մեծ մասն ու այսրկովկասյան երկրները՝ արաբները կազմավորեցին Արմինիա անունը կրող վարչական միավորը[1]: Վերջինս ընդգրկում էր Մեծ Հայքի մեծ մասն ու այսրկովկասյան երկրները և բաղկացած էր չորս մասից, որոնք կոչվում էին Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Արմինիաներ[2]:

Առաջին Արմինիայի մեջ էին մտնում Սյունիքը[3], Հայոց Արևելից կողմերի երկու աշխարհները՝ Արցախը և Ուտիքը (արաբական աղբյուրներում՝ Առան)[4]՝ Պարտավ և Բայլական[5] քաղաքներով, Աղվանքը և Կուր

---

[1] Տե՛ս **Ա. Тер-Гевондян,** Армения и Арабский Халифат, Ер., 1977, էջ 73-74: Արաբների կողմից Հայաստանի նվաճման թվականի մասին տե՛ս **Ա. Եղիազարյան,** Արաբների կողմից Հայաստանի նվաճման թվականի շուրջ,-«Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ «ԲԵՀ»), 2008, թիվ 1, էջ 157-164:

[2] Տե՛ս **Ibn Khordadbeh,** էջ 122, **Ibn al-Fakih**, էջ 290-291, بلاذري, I, էջ 231, **Jacut**, I, էջ 219-220:

[3] Սյունիքը նախքան 571 թ. ապստամբությունն առանձնացվել էր Հայոց մարզպանությունից ու միացվել Ատրպատականի աշխարհագրին (տե՛ս **Սեբեոս,** էջ 67-68): Սակայն, Հայոց իշխան Համազասպ Մամիկոնյանը (655-662) կարողացավ այն կրկին միացնել Հայոց իշխանությանը (անդ, էջ 175): Արաբները VIII դ. սկզբին Սյունիքը մտցրեցին Առաջին Արմինիայի մեջ, ամենայն հավանականությամբ, հետապնդելով այն նույն նպատակը, ինչ Սասանյանները: Նրանք ցանկանում էին թուլացնել Հայաստանը՝ նրա տարբեր հատվածների միջև առաջացնելով արհեստական անջրպետներ:

[4] Առան տեղանունը վերաբերում էր Սասանյանների տիրապետության շրջանում Աղվանից մարզպանության մեջ մտցված Մեծ Հայքի երկու աշխարհներին՝ Արցախին և Ուտիքին (տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 121, **Jacut**, I, էջ 183-184):

[5] Բայլականը գտնվում էր Պարտավից հարավ և համապատասխանում այժմ Օրենկալա կոչվող ավերակներին (տե՛ս **Ê. Òðåâåð,** Î÷åðêè ïî èñòîðèè è êóëüòóðå Êàâêàçñêîé Àëáàíèè (IVâ. äî í. ý.-VIIâ. í. ý.), Ì.-Ë., 1959, էջ 265-266):

գետի ստորին հոսանքի ու Դարբանդի միջև տարածվող մերձկասպյան երկրամասերը (Բազկան, Խայզան, Շիրվան, Մազքութք, Դարբանդ և այլն)[1]: Առաջին Արմինիայի մեջ էին մտնում նաև Սարիր (Անդյան և Ավարյան Կոյսու գետերի ավազաններում)[2] ու Աբխազ (ներկայիս Ադրբեջանի Հանրապետության Դիվիչիի շրջանում)[3] կոչվող թագավորությունները, ինչպես նաև Լփինքը (Լիբան, Լիրան), Թավասպարքը (Թաբասարան), Լեկքը և այլ երկրամասեր[4]: Երկրորդ Արմինիան ընդգրկում էր Գուգարքը, Վիրքը, Կախեթը, Ծանարքը և Դիդոյքը[5], Երրորդ Արմինիան՝ Այրարատը, Վասպուրականը և Տայքը, իսկ Չորրորդ Արմինիան՝ Ծոփքի և Բարձր Հայքի արևելյան գավառները, Սասունն[6] ու Աղձնիքի որոշ հյուսիսային գավառներ և Տուրուբերանը[7]:

Արմինիայի սահմանը հյուսիսում կազմում էր խազարների հետ պատերազմներում ձևավորված հյուսիսային սահմանային ամրությունների գոտին՝ Դարբանդից մինչև Դարիալի կիրճ, իսկ արևելքում՝ Կասպից ծովի արևմտյան ափագիծը: Հարավում Արմինիայի սահմանագիծն Ատրպատականի ոստիկանության հետ անցնում էր Երասխ գետով, իսկ ավելի արևմուտք՝ Արմինիայի կազմում ներառնված էին Վասպուրականի արևելյան գավառները, Մոկքը, և Պարսկահայքի, Կորճայքի և Աղձնիքի հյուսիսային գավառները: Արմինիայի արևմտյան սահմանը կազմում էր արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտին,

---

[1] Տե՛ս **Ibn Khordadbeh,** էջ 122, **Ibn al-Fakih**, էջ 290-291, بلاذري, I, էջ 231, **Jacut**, I, էջ 219-220:

[2] Տե՛ս **Ա. Եղիազարյան,** Արաբական աղբյուրների Սարիրի թագավորությունը,- «Գիտության գլոբուս», 2004, h. 4, էջ 99-106:

[3] Տե՛ս **Ա. Եղիազարյան,** Արաբական աղբյուրների Աբխազ թագավորությունը,- «Լրաբեր (հաս. գիտ.)», 2005, թիվ 2, էջ 218-226:

[4] Տե՛ս **Ա. Եղիազարյան,** Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Եր., 2010, էջ 34-55:

[5] Անդ, էջ 55-63: Դիդոյները բնակվում են Անդյան Կոյսու գետի ակունքների շրջանում (տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 49):

[6] Չորրորդ Արմինիան սահմանակցում էր Զազիրա ոստիկանության Դիար Բաքր երկրամասին, որի կազմում ընդգրկված էր Մեծ Հայքի Աղձնիք աշխարհի մեծ մասը: Սասունի 749-752 թթ. ապստամբությունն այն նշանակությունն ունեցավ, որ Սասունն աստիճանաբար առանձնացավ Զազիրայից ու միացավ Արմինիա ոստիկանությանը (տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Սասունի 749-752 թվականների անհայտ ապստամբությունը խալիֆայության դեմ,-«ՊԲՀ», 1971, թիվ 3, էջ 196-202): Հավանորեն, Արմինիայի մեջ Սասունի հետ միասին մտել էին Արզնն ու Բաղեշը (տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 172, ابن الاثير, V, էջ 288-289, **Jacut,** I, էջ 205, 526, بلاذري, I, էջ 248, طبري, VI, էջ 45): Դատելով բնաշխարհագրական պայմաններից՝ Արմինիայի մեջ էին մտնելու նաև Սասունի, Արզն քաղաքի և Մոկքի միջև գտնվող Աղձնիքի լեռնային գավառները՝ Կեթիկը, Տատիկը, Ազնվաց ձորը, Երխեթքը և Գզեղխը:

[7] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122, **Ibn al-Fakih**, էջ 290-291, بلاذري, I, էջ 231, **Jacut,** I, էջ 219-220:

որի՝ Արմինիային հարևան շրջանում ընդգրկված էին Մեծ և Փոքր Հայքերի մերձեփրատյան գավառները: Ավելի հյուսիս՝ Արմինիայի սահմանը Բյուզանդիայի հետ անցնում էր Պարխարյան և Մոսքական, իսկ Աբխազաց թագավորության[1] հետ՝ Լիխի լեռնաշղթաների ջրբաժաններով[2]:

Դեռևս Հայաստան և այսրկովկասյան երկրներ կատարած իրենց առաջին արշավանքների ժամանակ (641 թ., 647 թ., 654 թ., 655 թ. և այլն)[3] արաբները հստակ պատկերացում էին կազմել տարածաշրջանում ուժերի հարաբերակցության մասին: Հայաստանը, չնայած որ նրանից անջատվել էին նրա ծայրամասային շրջանները, իրենից ազդեցիկ քաղաքական ուժ էր ներկայացնում, իսկ հայ ժողովուրդը, չնայած օտար իշխողների կողմից նրա տարբեր հատվածների միջև առաջացրած արհեստական անջրպետներին, տարածաշրջանի բնակչության ամենամիատարր և մեծաթիվ հատվածն էր: Այդ իսկ պատճառով արաբական տիրապետության ժամանակաշրջանում Հայոց իշխանը գերագահ դիրք էր ստացել Այսրկովկասում, իսկ Հայաստանի մեծ մասն ու այսրկովկասյան երկրներն ընդգրկող վարչական միավորը կոչվում էր Արմինիա: Արաբներն իրենց առաջին արշավանքների ժամանակ Հայոց իշխաններ Թեոդորոս Ռշտունու և Գրիգոր Մամիկոնյանի իշխանությունը ճանաչեցին ողջ Այսրկովկասի վրա: Ըստ Սեբեոսի՝ Մուավիան Թեոդորոս Ռշտունուն «իշխանութիւն ետ զՀայս և զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս, մինչև ցԿապկոհ և ցՊահակն Ճորայ: Եւ նորա պայման էր եդեալ նմա՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն»[4]: Համաձայն Ասողիկի՝ Ասորիքի և Հյուսիսային Միջագետքի արաբ կառավարիչ Մուավիան իր

---

[1] Պետք է նշել, որ Հովհաննես Դրասխանակերտցին Աբխազաց թագավորությունն անվանում է Եգերաց թագավորություն, ըստ երևույթին, այն պատճառով, որ Աբխազաց թագավորության մեջ եգերացիները (մենգրելներ) զգալի դերակատարություն ունեին: Հայտնի է, որ VIII դ. վերջին հիմնված Աբխազաց թագավորությունը տարածքային առումով բաղկացած էր Աբխազքից և Եգերքից, իսկ թագավորը կոչվում էր «Աբխազաց թագավոր» (տե՛ս "Матиане Картлиса", էջ 28): Ելնելով այդ իրողությունից, մենք այսուհետ այն կկոչենք Աբխազաց թագավորություն:

[2] Տե՛ս **Ա. Եղիազարյան,** Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 86-87:

[3] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Երկեր, հ. Բ, մաս Ա, Եր., 1978, էջ 522-536, **Ստ. Մելիք-Բախշյան,** Դիտողություններ արաբների՝ Հայաստան կատարած առաջին արշավանքների մասին,-«ՊԲՀ», 1964, թիվ 3, էջ 84-90, **Է. Դանիելյան,** 647 թ. արաբական արշավանքը Հայաստան,-«ՊԲՀ», 1982, թիվ 2, էջ 106-116, **Ա. Եղիազարյան,** Արաբների արշավանքը Ատրպատականի վրայով դեպի Հայաստան,-ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Տարեգիրք», Եր., 2005, էջ 88-98, նույնի՝ Հաբիբ իբն Մասլամայի և Սալման իբն Ռաբիայի արշավանքները Հայաստան և այսրկովկասյան երկրներ,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 2008, թիվ 2, էջ 68-77:

[4] Տե՛ս **Սեբեոս,** էջ 169:

իշխանության երկրորդ տարում՝ 662 թ., Գրիգոր Մամիկոնյանին նշանակեց Հայոց ու Վրաց իշխան և ուղարկեց Հայաստան[1]: Ղևոնդի հաղորդումներից կարելի է բխեցնել, որ Գրիգոր Մամիկոնյանի իշխանությունն արաբների կողմից ճանաչվել էր այն սահմանների վրա, ինչ Թեոդորոս Ռշտունու իշխանությունը, այսինքն՝ նաև այսրկովկասյան երկրների վրա: Պատմիչը հաղորդում է, որ Գրիգոր Մամիկոնյանի իշխանության վերջում, «ի ժամանակի պատերազմին, որ ի մէջ Տաճկաց՝ դադարեցին ի հարկատուութենէ նոցա Հայք, Վիրք, Աղուանք, ծառայեալ նոցա ամս Լ»[2]: Պատմիչների հաղորդումներից հետևում է, որ Հայաստանը և այսրկովկասյան երկրները, որոնք ղեկավարվում էին Հայոց և Վրաց իշխան Գրիգոր Մամիկոնյանի կողմից[3], գործում էին համատեղ. նրանք թե՛ հարկատվական պարտականությունն էին ստանձնել ու կատարում միասին և թե՛ միասին հրաժարվեցին այդ պարտականությունից:

1.2. Հայ Բագրատունիների տերության կազմավորումը: VIII դ. վերջերից Հայոց իշխանի պաշտոնը սկսեցին զբաղեցնել միայն Բագրատունիները: Աշոտ Մսակերի (802-826[4]) իշխանության տարիներից սկսած Բագրատունիները կարողացան այնքան ընդարձակել սեփական տիրույթները, որ Հայաստանում և այսրկովկասյան երկրներում հասան առաջնակարգ դիրքի[5]:

Նշված իրադարձությունները զարգացան հետևյալ կերպ: Հայոց իշխան Աշոտ Մսակերը շրջահայաց քաղաքական գործիչ էր և, փոխանակ բացահայտորեն Խալիֆայության դեմ դուրս գալու, առանց ավելորդ աղմուկի իր տիրույթներին կցեց տարբեր նախարարական տոհմերի պատկանող տարածքները: Խնդիրն այն է, որ 774-775 թթ. արաբական տիրապետության դեմ Հայոց ապստամբությունից հետո քաղաքական ասպարեզից հեռացան մի շարք խոշոր նախարարական տներ, այդ թվում՝ Կամսարականները, իսկ Մամիկոնյանները կորցրեցին նախկին կշիռը: Աշոտ Բագրատունին կարողացավ տիրել վերջիններին

---

[1] Տե՛ս **Ղևոնդ,** էջ 14, **Ասողիկ**, էջ 122:

[2] **Ղևոնդ**, էջ 15:

[3] «Հայոց և Վրաց իշխան»-ը պետք է հասկանալ որպես Հայաստանի ու Այսրկովկասի հայադավանների և վրացադավանների իշխան: Այս մասին մանրամասնորեն կխոսվի ստորև:

[4] Կ. Յուզբաշյանի ճշտգրտման համաձայն՝ Աշոտ Մսակերի իշխանության շրջանը սկիզբ է առնում ոչ թե 804 թ., ինչպես ընդունված է կարծել (տե՛ս **А. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 126), այլ 802 թ. (տե՛ս **К. Юзбашян,** Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988, էջ 54):

[5] Տե՛ս **А. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 182:

պատկանող Տարոնին ու Տայքին և Կամսարականներին պատկանող Շիրակին ու Աշոցքին[1]: Բացի այդ, նա գնեց Կամսարականներին պատկանող Արշարունիք գավառը, որից հետո Բագրատունիների նստավայրը Դարյունքից տեղափոխեց այնտեղ[2]: Իր այս քաղաքականության իրականացման ճանապարհին թե՛ Տարոնում և թե՛ Արշարունիքում Աշոտ Մսակերը բախվից արաբ Ջահապի հետ, որն ամուսնացած լինելով 775 թ. Արծնիի ճակատամարտում զոհված Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ՝ նույնպես հավակնություններ ուներ այդ տարածքների նկատմամբ: Բագրատունիները հաղթեցին այդ պայքարում ու տիրեցին հիշյալ և մի շարք այլ շրջաններին[3]: Արաբ պատմիչները մեկ կապակցության մեջ են հիշատակում Շիրակն ու Տայքը (Սիրաջ-Թայր)[4], որը, հավանաբար, պայմանավորված է դրանց՝ Բագրատունիներին պատկանելու փաստով: Ն. Ադոնցը հավանական է համարում, որ Աշոտ Մսակերին հաջողվել է տիրել նաև Մոկքին, քանի որ նա IX դ. սկզբներին Մոկքի իշխան եղած Սահակին նույնացնում է Աշոտ Մսակերի որդի Սահակի հետ[5]:

Փաստորեն, Բագրատունյաց վերելքի սկիզբը դրել է Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին: Նրա գործունեության ճշգրիտ գնահատականը տվել է Ն. Ադոնցը: Ըստ մեծանուն հայագետի՝ «Աշոտ Մսակերն էր այն մեծ անձը, որ իր եղբոր՝ Շապուհի հետ հանեց երկիրը վիատ և լքված վիճակից և մեծագործ հիմնադիրը եղավ նոր և լուսավոր շրջանի»[6]: Հարկ է նշել, որ Բագրատունյաց վերելքով մեծապես պայմանավորված էր Հայաստանի քաղաքական անկախության վերականգնման գործընթացը:

Բագրատունիների հետագա հզորացումը կապված է Աշոտ Մսակերի որդի Բագարատի (Հայոց իշխան 826-851 թթ.) անվան հետ, որը դեռևս Աշոտ Մսակերի իշխանության շրջանում հաստատվել էր Տարոնում: Հենց այդ շրջանում առաջանում են Բագրատունիների երկու ճյուղեր՝ Շիրակի և Տարոնի: Բագարատը քաղաքական թատերաբեմում հայտնվեց Խալիֆայության համար անչափ դժվար պայմաններում: Բա-

---

[1] Տե՛ս **Վարդան վարդապետ,** էջ 83, **Ասողիկ**, էջ 106:
[2] Տե՛ս **Ասողիկ**, էջ 106:
[3] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 83-84:
[4] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122, **Ibn al-Fakih**, էջ 290-291, بلاذري, I, էջ 231, **Jakubi**, էջ 364 և այլն: Տե՛ս նաև Խալաթյանց Բ., «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», Վիեննա, 1919, էջ 27, ծանոթ. 3, Ս. **Շլեպչյան,** նշվ. աշխ., էջ 54, 64, ծանոթ. 4 և **Հ. Տեր-Գևոնդյան**, նշվ. աշխ., էջ 42:
[5] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 453-455:
[6] Անդ, էջ 447:

բեկի ապստամբությունից և այլ ելույթներից ցնցվող հսկա կայսրությունը սկսում է ծայրամասերում իշխանությունը պահելու գործում հույսը կապել տեղերի հզոր իշխանական տների հետ: Այս պայմաններում 830-ական թթ. Հայոց իշխան Բագարատը խալիֆայից ստանում է իշխանաց իշխանի (բաթրիկ ալ-բաթարիկա) պաշտոնը[1]: Հայտնի է, որ պարսկաբյուզանդական և արաբական տիրապետության ժամանակաշրջանում գոյություն ուներ Հայոց իշխանի ինստիտուտը[2]: Արաբական մատենագրության մեջ այն կոչվում է «բաթրիկ ալ-Արմանի»[3]: Ինչպես տեսանք, արաբները Հայոց իշխաններից Թեոդորոս Ռշտունու գերիշխանության տակ դրեցին Հայաստանը և այսրկովկասյան երկրները, իսկ Գրիգոր Մամիկոնյանին՝ ճանաչեցին Հայոց և Վրաց իշխան: Գրիգոր Մամիկոնյանից հետո մինչև Բագարատ Բագրատունու իշխանության շրջանը Հայոց իշխանները կոչվում էին լոկ «իշխան Հայոց»: Դատելով վերոհիշյալից՝ Հայոց իշխանին իշխանաց իշխան ճանաչելը նշանակում էր, որ Խալիֆայությունը նրան ճանաչել է որպես Հայաստանի ու Այսրկովկասի հայադավանների և վրացադավանների իշխանաց իշխան: Մեր տեսակետը հաստատվում է նաև նրանով, որ ըստ Ասողիկի՝ Աշոտ Բագրատունին «նախ քան զթագաւորութիւնն երեսնամեայ ժամանակօք իշխան և իշխանաց իշխան եղեալ Հայոց և Վրաց»[4]: Թերևս պատմիչի վկայությունից կարելի է բխեցնել, որ Աշոտ Բագրատունին սկզբում եղել է Հայոց իշխան, իսկ այնուհետև՝ Հայոց և Վրաց իշխանաց իշխան, ընդ որում, «իշխանաց իշխան Հայոց և Վրաց» արտահայտությունը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է ոչ միայն Հայաստանին և Վիրքին, այլ, ընդհանուր առմամբ, Արմինիա ոստիկանության մեջ ապրող հայադավաններին (Հայաստան և Աղվանք) և վրացադավաններին (Վիրք և հարևան որոշ շրջաններ): Ուշագրավ է նաև այն, որ հայ մատենագիրները հավաստում են, որ Սմբատ Ա-ի, ինչպես և նրա հոր ու նախորդի՝ Աշոտ թագավորի, իշխանության տակ էին գտնվում թե՛ Վիրքը և թե՛ Աղվանքը, սակայն Հայոց թագավորին նրանք կոչում են

---

[1] Տե՛ս طبري, VI, էջ 288: Պահպանվել է Հովհաննեսի ավետարանի մի մեկնություն, որի նախաբանում Բագարատ Բագրատունին կոչվում է «պետ իշխանաց» (տե՛ս **Н. Марр,** Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах,-**Н. Марр,** Кавказский Культурный мир и Армения, «Հայագիտական մատենադարան», Եր., 1995, էջ 220):

[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** «Հայոց իշխան»-ը արաբական տիրապետության ժամանակաշրջանում,-«ՊԲՀ», 1964, թիվ 2, էջ 121-134:

[3] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայոց իշխան տիտղոսի ծագումը և Հայոց տերությունը VII դարում,-**Ա. Տեր-Ղևոնդյան**, Հոդվածների ժողովածու, Եր., 2003, էջ 190-196:

[4] Տե՛ս **Ասողիկ**, էջ 158:

«թագաւոր Հայոց եւ Վրաց»[1]: Անկասկած, «թագաւոր Հայոց եւ Վրաց» ասելով՝ հայ պատմիչները նկատի ունեն Հայոց թագավորի՝ հայադավանների և վրացադավանների վրա թագավորելը, իսկ Աղվանքի բնակչությունը հայադավան էր, ուստի՝ չի հիշատակվում:

838 թ. իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին մասնակցեց արաբների հաղթական արշավանքին դեպի Անկյուրա և Ամորի: Հայ իշխաններից այդ արշավանքին մասնակցում էր նաև Վասպուրականի Աշոտ իշխանը[2]: Դրանից հետո Բագարատ Բագրատունին իրեն այնքան վստահ էր զգում, որ խալիֆայից նույնիսկ պահանջում էր Արմինիայի ոստիկանի լիազորությունները[3]: Ի վերջո, հարաբերությունները սրվեցին Արմինիայի ոստիկանի և իշխանաց իշխանի միջև, որը, ըստ Բալազուրիի՝ արհամարհում էր ոստիկանին և Խալիֆայության մյուս պաշտոնյաներին[4]: Այս ամենի պատճառով ոստիկանը նրան գերեվարեց, սակայն ինքն էլ սպանվեց նրա ապստամբած լեռնական հպատակների՝ սասունցիների կողմից[5]:

Անանուն Զրուցագիրը պահպանել է մի տեղեկություն, որ չնայած հակասական է, արտացոլում է Հայաստանում այդ շրջանում տիրող իրավիճակը. «ապայ հակառակութիւն եղև տանն Հայոց, զի ոչ կամեցան զտէրութիւն տան Մանաճի և բաժանեցին զաշխարհս Հայոց ի մէջ Բաքրատունեաց և ի մէջ Արծրունեաց, և կալեալ ի բաժին զաշխարհն Հայոց՝ զհիւսիսոյ դեհն տունն Բաքրատունեաց, որ էր անուն նորա Բաքրատ, զՎասպուրականի դեհն տունն Արծրունեաց»[6]: Պատմիչը դրանով ցույց է տալիս այն իրողությունը, որ Հայաստանի մեծագույն մասին IX դ. առաջին կեսին տիրում էին երկու նախարարական տները՝ Բագրատունիներն ու Արծրունիները:

Խալիֆայության կողմից Բագրատունիների նկատմամբ վարվող զիջողական քաղաքականությունը կապված էր նրանց նկատմամբ տածած վստահության հետ: Խալիֆայության մեջ անընդհատ ապստամբություններ էին տեղի ունենում, ընդ որում՝ ոչ միայն տեղերի ժողովուրդների, այլև տարբեր երկրներում հաստատված արաբ վերաբնակիչների կողմից: Ի վերջո, այդ ամենին գումարվեց նաև Բաբեկի ապստամբությունը, որը երկար տարիներ ցնցում էր Խալիֆայությունը:

---

[1] **Անանուն Զրուցագիր**, էջ 165, **Ասողիկ**, էջ 161, **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 366:
[2] Տե՛ս **Թեոփանեսի Շարունակող**, էջ 75-76, **Ioseph Genesios**, էջ 64:
[3] Տե՛ս طبري, VI, էջ 288:
[4] Տե՛ս بلاذري, II, էջ 247:
[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 186-190: طبري, VI, էջ 45, بلاذري, II, էջ 248, الاثير ابن, V, 288-289:
[6] **Անանուն Զրուցագիր**, էջ 109:

Ինչպես ճիշտ նկատել է Ա. Տեր-Ղևոնդյանը, այդ ժամանակ Բագրատունիները սկսում են ինքնուրույն իշխել Հայաստանում, իսկ խալիֆաներն էլ բավարարվում են նրանով, որ նրանք պահպանում էին հավատարմությունը Խալիֆայությանը: Նրանք նույնիսկ կողմ էին Բագրատունիների հզորացմանը, քանի որ վերջիններս սանձահարում էին տեղի արաբների անջատողական նկրտումները, որոնք ավելի վտանգավոր էին Խալիֆայության համար[1]:

Բաբեկի ապստամբության ճնշումից հետո որոշ ժամանակով կրկին հզորացած Խալիֆայությունը մեծ բանակով Արմինիա արշավանքի ուղարկեց սկզբում Աբուսեթ և Յուսուֆ զորավարներին, իսկ այնուհետև Բուղա զորավարին՝ ճնշելու այնտեղ ծագած ապստամբությունները: Վերջինս ասպատակեց Հայաստանը և այսրկովկասյան երկրներն ու գերեվարեց բազմաթիվ իշխանների[2]:

Աբուսեթի, Յուսուֆի ներխուժումները, իսկ այնուհետև նաև Բուղայի արշավանքը և Բագարատ Բագրատունու գերեվարությունը միայն ժամանակավորապես կասեցրեցին Բագրատունիների հզորացումը: Բագարատ Բագրատունու եղբայր, Հայոց սպարապետ Սմբատը որդեգրեց շրջահայաց քաղաքականություն՝ ձևացնելով, թե գործակցում է Բուղայի հետ[3]: Ի վերջո, սակայն, նա դաժանաբար սպանվեց[4]: Բայց Հայաստանում իրավիճակն արդեն փոխվել էր: Բագրատունիների Տարոնի ճյուղը կորցրել էր իր նախկին ազդեցությունը: Մինչդեռ Բագրատունիների Շիրակի ճյուղին հաջողվել էր պահպանել ունեցածը և առավել տարածել իր ազդեցությունը: Վերջինիս ապացույցն է այն, որ շուտով՝ 862 թ., Խալիֆայությունն Հայոց սպարապետ Սմբատ Բագրատունու որդի Աշոտին նշանակեց Արմինիա ոստիկանության իշխանաց իշխան[5] և, ընդհանրապես, ավելի մեծ զիջումների գնաց[6]: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ այդ ժամանակ «ոստիկան ոմն ի Հայս առաքեալ, որ Ալի արմանի անուանիւր՝ ըստ հրամանի ամիրապետին իշխան իշխանացս Հայոց զնա կացուցանէր, բազում զգեստիւք և

---

[1] Տե՛ս **А. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 130:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 120-134:

[3] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան,** էջ 170-171, **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 122-130, "Матиане Картлиса", էջ 30:

[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 132:

[5] Տե՛ս **К. Юзбашян,** նշվ. աշխ., էջ 66, **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 52, 80, «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Եր., 1976, էջ 24:

[6] Տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, Եր., 1978, էջ 596-597, 600, **Ռ. Մաթևոսյան,** Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 51-52, 80, «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 24:

արքունական պատուով ճոխացուցեալ՝ ի նա հաւատալով զսակս Հայոց և զամենայն բեկար արքունի: Եւ այսպէս պատուանակագոյն և առաջին նա գտեալ եղև քան զամենայն նախարարութիւնս Հայոց. և ամենեքեան դաշինս ընդ նմա դնէին՝ որպէս արդարև ընդ թագաւորական զարմի: Այլև ի մտի ամենեցուն եդեալ, զի թէ դէպ ինչ պիտոյից գտցի՝ նաև ի տոհմ իւր արժանի լիցին մատչել ի թագաւորութեան ցեղս՝ զնոսա որոշել յայլոց նախարարութեան ցեղից»[1]: Սա նշանակում է, որ Աշոտին տրվեցին ոստիկանի լիազորությունները, իսկ արաբ ոստիկանները, որոնք շարունակում էին նշանակվել Խալիֆայության կողմից, հազվադեպ էին ժամանում Արմինիա, և, քանի որ նրանց գործունեությունն իրականացնում էր Հայոց իշխանը, նրանք հիմնականում զբաղվում էին սահմանային ամրությունների գոտում Բյուզանդիայի դեմ պայքարով[2]:

Ինչպես տեսանք, այդ ժամանակ արդեն Աշոտ Բագրատունու շուրջն էին համախմբվել Հայաստանի բոլոր իշխանները, որն առավել ևս նպաստելու էր Խալիֆայության առջև Աշոտ Բագրատունու հեղինակության, ինչպես նաև նրա հզորությանն ու քաղաքական նկրտումներին աճին:

Պետք է նշել նաև, որ բացի այդ, եթե Հայոց իշխանի և սպարապետի պաշտոնները նախկինում պատկանում էին՝ մեկը՝ Բագրատունիների Տարոնի ճյուղին, իսկ մյուսը՝ Շիրակի, ապա այժմ Աշոտ Բագրատունուն հաջողվեց այդ երկու պաշտոններն էլ կենտրոնացնել Շիրակի ճյուղի ձեռքում[3]:

Աշոտ Բագրատունուն իշխանաց իշխան կարգելը, թերևս, կապված էր Խալիֆայության վարած քաղաքականության հետ: Արաբներն այդ ժամանակ մեծ արշավանք էին նախապատրաստում դեպի Բյուզանդիա: Արշավանքը տեղի ունեցավ 863 թ. և ավարտվեց արաբական զորքի կատարյալ պարտությամբ[4]:

Հայաստանի տարբեր իշխանների հետ Աշոտ Բագրատունին դաշնակցային կապերն ամրապնդեց նաև դինաստիական ամուսնություններով: Երբ Վասպուրականի Դերենիկ իշխանը (874/875-885) փորձ կատարեց չենթարկվելու Աշոտ Բագրատունու իշխանությանը, վերջինս անձամբ եկավ Վան և ձերբակալեց նրան, որից հետո ազատ արձակեց՝

---

[1] Տե՛ս **Յովհաննես Դրասխանակերտցի,** էջ 136, **Թովմա Արծրունի,** էջ 200-290, الاثير ابن, V, էջ 289-292 և այլն:

[2] Տե՛ս **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 234:

[3] Տե՛ս **Ասողիկ,** էջ 110:

[4] Տե՛ս **Ioseph Genesios**, էջ 90-93:

ամուսնացնելով իր դստեր հետ[1]: Իր մյուս դստերն Աշոտ Բագրատունին կնության տվեց Գեղարքունյաց Վասակ Գաբուռ իշխանին[2]: Խնդիրն այն է, որ հիմնականում Վասպուրականի և Սյունյաց իշխաններն էին, որ Բագրատունիներից հետո կարևոր դեր ունեին Հայաստանի քաղաքական կյանքում: Պատահական չէ, որ հենց նրանք որոշում կայացրեցին դիմելու խալիֆային՝ Աշոտ Բագրատունուն թագավոր հռչակելու խնդրանքով[3]: Պետք է նշել նաև, որ Աշոտի եղբայր՝ Հայոց սպարապետ Աբասն ամուսնացել էր Կղարջքի Ատրներսեհ կուրապաղատի դստեր հետ[4]: Աշոտի քույրերից մեկն ամուսնացել էր Կղարջքի Բագրատունիներից Գուրգենի հետ[5], իսկ մյուսը՝ Գուառամի[6]:

Թովմա Արծրունին պատմում է, որ երբ հայրենիք վերադարձան Բուղայի կողմից գերեվարված իշխանները, նրանք ենթարկվեցին իշխանաց իշխան Աշոտի իշխանությանը[7]: Սա էլ ավելի ամրապնդեց Աշոտ Բագրատունու դիրքերը: Ամենայն հավանականությամբ, գերությունից Հայոց իշխանների վերադարձի գործում Աշոտ Բագրատունին որոշ դերակատարություն էր ունեցել, որի հետևանքով էլ բոլոր վերադարձածներն առաջին հերթին ընդունեցին նրա իշխանությունը:

Աշոտ Բագրատունու դերակատարությունն ու հեղինակությունն այնքան էին աճել, որ նրա օգնությանն էին դիմում Հայաստանի տարբեր իշխաններ՝ իրենց ներքին հակասությունները կարգավորելու համար: Օրինակ՝ Աշոտ Բագրատունու որդիները զորքով գնացին և կարգավորեցին Դերենիկ և Գուրգեն Ապուպելճ Արծրունի իշխանների միջև ծագած հողային վեճը[8]:

Ա. Գրենը նշում է, որ Աշոտ Բագրատունու՝ իշխանաց իշխան լինելու վերջին տարիներին և թագավորության օրոք, Բագրատունիներն Այսրկովկասում (ըստ հեղինակի՝ Կովկասում) սկսում են խաղալ նույն դերը, ինչ նախկինում Արշակունիները: Ըստ նրա՝ Խալիֆայության համար կարևոր էր ունենալ Այսրկովկասն ընդգրկող մի մեծ թագա-

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 322, 356:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 136-138:

[3] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 175:

[4] Տե՛ս **С. Тер-Аветисян**, О раскопках в Карсе и новооткрытой армянской надписи IX в.,-"Известия Кавказского историко-археологического института в Тифлисе", т. III, Тифлис, 1925, էջ 121-128:

[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 148: Թերևս, սա այն Գուրգենն է, որը, ինչպես կտեսնենք, 881 թ. հայ-աբխազական բախման ժամանակ հանդես էր գալիս Աբխազաց թագավորի, իսկ 888 թ. բախման ժամանակ՝ Աշոտ Ա-ի կողմում:

[6] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 31, **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 187:

[7] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 322:

[8] Անդ, էջ 332:

վորություն, որը կարող էր փակել Կովկասյան լեռներից հյուսիս գտնվող ցեղերի արշավանքների ճանապարհն Այսրկովկաս և Խալիֆայության տարբեր շրջաններ: Այդ դերն Այսրկովկասում կարելի էր վերապահել միայն Բագրատունիներին, որոնց մի ճյուղը հաստատվել էր նաև Վիրքում (իմա՛ Կղարջք)[1]:

876 թ. տեղի ունեցավ մի իրադարձություն, որի հետևանքով Աշոտ Բագրատունու հեղինակությունը մեծապես աճեց: Բյուզանդիայի գահին բազմած հայազգի Վասիլ (Բարսեղ) Ա կայսրը Նիկիտ անունով ներքինիին ուղարկեց Աշոտ Բագրատունու մոտ՝ նրանից թագ խնդրելով: Վարդան վարդապետը տեղեկացնում է, որ այդ ժամանակ պատմում էին, որ Վասիլն հայ Արշակունիների տոհմից է[2], և Աշոտի կողմից թագի առաքումը նրան դիտվում էր որպես Սահակ կաթողիկոսի տեսիլքի իրականացում, ըստ որի՝ գահ է բարձրանալու Արշակունի արքան և թագադրվելու է Բագրատունու կողմից[3]:

Աշոտ Բագրատունին իր գերիշխանությունը հաստատեց նաև այսրկովկասյան երկրների և իշխանությունների վրա: Թովմա Արծրունին հաղորդում է, որ «հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ»[4]: Ա. Ալպոյաճյանն այն կարծիքին է, որ արաբները պայման էին դրել Աշոտ Բագրատունու առաջ՝ նվաճել այսրկովկասյան երկրները՝ նպատակ ունենալով այդ ճանապարհով իրենց իշխանության տակ պահել այդ երկրները[5]: Պետք է նշել, որ, իրոք, Թովմա Արծրունու հաղորդումը նման տեսակետի համար հիմք է տալիս: Մյուս կողմից, արաբական գերիշխանությունը Հայաստանում համարյա ամբողջովին վերացվել էր, ուստի Աշոտի կախվածությունը խալիֆայից անվանական էր: Աշոտը, լինելով շնորհալի քաղաքական գործիչ, ճիշտ էր համարում ձևականորեն պահպանել հավատարմությունը:

Վարդան վարդապետը տեղեկացնում է, որ Գևորգ կաթողիկոսի ժամանակ (877-897) «ընդարձակեալ մեծին Աշոտի ի Վիրս և Աղուանս, և զԿաւկասայինսն հնազանդեալ, և չէր ինչ պակաս՝ բայց ի թագէ»[6]: Այս

---

[1] Տե՛ս **Ա. Грен**, նշվ. աշխ., էջ 72: Նույնը տե՛ս The Cambridge history of the Byzantine Empire c. 500-1492, Cambridge University Press, 2008, էջ 159:

[2] Այս մասին տեղեկացնում են նաև բյուզանդական պատմիչները (տե՛ս **Թեոփանեսի Շարունակող**, էջ 127, **Лев Диакон,** VI, 5 և այլն):

[3] Տե՛ս **Վարդան վարդապետ,** էջ 91:

[4] **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 322:

[5] Տե՛ս **Ա. Ալպոյաճյան,** Պատմական Հայաստանի սահմանները, էջ 21-24, 62 և այլն:

[6] **Վարդան վարդապետ,** էջ 91:

տեղեկությունների մեջ Վիրք և Վրաց իշխան (կամ իշխաններ) հասկացությունները վերաբերում են ինչպես բուն Վիրքին, այնպես էլ Կղարջքի Բագրատունիներին, քանի որ Աշոտ Ա-ն Կղարջքի կուրապաղատներին տվել էր «Վրաց իշխան» կոչումը[1]:

Ինչպես տեսնում ենք, ըստ Թովմա Արծրունու և Վարդան վարդապետի տեղեկությունների՝ Աշոտ Բագրատունին իր նվաճումները կատարել է նախքան թագավոր դառնալը: Այսինքն՝ Աշոտ Բագրատունին իրեն էր ենթարկել Կղարջքի Բագրատունիներին, Գուգարքը, Վիրքը, Աղվանքը, Կովկասյան լեռների լեռնականներին և կայազոր դրել Ալանաց դռանը: Ըստ որում՝ դա տեղի էր ունեցել Խալիֆայության հավանությամբ:

Աշոտ Բագրատունու հաջողությունները հայ նախարարների շրջանում արթնացրեցին Հայոց թագավորությունը վերականգնելու գաղափարը: Ստեփաննոս Օրբելյանը հաղորդում է, որ «յայնմ ժամանակի խորհուրդ ի մէջ առեալ աստուածային իմն տեսչութեամբ Գրիգորի Սուփանայ և Վասակայ Իշխանիկ կոչեցելոյ՝ տէրանցն Սիւնեաց, ընդ Գրիգորի Դերենիկ կոչեցելոյ, որ էր իշխան տանն Արծրունեաց, և ընդ այլ իշխանաց Հայոց, խնդրեն յամիրապետէն Ամիր-Ահմատայ և կացուցանեն զԱշոտ Բագրատունի թագաւոր Հայոց»[2]: Ինչպես տեսնում ենք, Հայաստանի քաղաքական անկախության վերականգնման ճանապարհին համախորհուրդ գործունեություն էին իրականացնում Հայաստանի ամենաազդեցիկ նախարարական տները՝ Արծրունիներն ու Սյունիները, ինչպես նաև այլ նախարարներ՝ համախմբվելով Բագրատունիների շուրջը:

Ըստ Ա. Գրենի՝ այսրկովկասյան գրեթե բոլոր իշխանները սկսեցին ենթարկվել Աշոտ Բագրատունուն, քանի որ Հայ Բագրատունիների մեջ էին տեսնում մուսուլմանական իշխանություններից պաշտպանվելու գլխավոր հույսը: Դրա հետևանքով Այսրկովկասի մեծագույն մասը մտավ Հայ Բագրատունիների տերության մեջ, կամ ինչպես ուսումնասիրողն է անվանում՝ Կովկասյան թագավորության մեջ (իմա՛ Այսրկովկասյան թագավորություն): Վերջինս սկսեց վախ ներշնչել նույնիսկ արաբներին, քանի որ նրանք Բագրատունիների այդչափ արագ հզորացում չէին սպասում[3]:

Վերոհիշյալ հարցերում առավել պարզություն մտցնելու և Հայ Բագրատունիների տերության ձևավորման գործընթացի վերաբերյալ

---

[1] Անդ:
[2] **Ստեփաննոս Օրբելյան,** էջ 175:
[3] Տե՛ս **Ա. Грен,** նշվ. աշխ., էջ 72:

ավելի հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ ենք համարում ստորև անդրադառնալու հայկական պատմագիտության մեջ գրեթե չլուսաբանված այնպիսի կարևոր իրադարձության, ինչպիսին էր Վիրքին տիրելու համար 881 թ. տեղի ունեցած հայ-աբխազական բախումը[1]:

Աշոտ Ա-ի օրոք (885-890) Աբխազաց թագավորության հետ Հայոց տիրակալի փոխհարաբերությունների մասին հայ պատմիչներից տեղեկություն է պահպանել Հովհաննես Դրասխանակերտցին: Ըստ պատմիչի՝ Աշոտ Ա թագավորը «զթագաւորն Եգերացւոց ի սէր միաբանութեան ընդ իւր կապակցեալ՝ այնպէս նմա այցելէր, մինչ զի անընդհատ յորդիութեան սակի գոլով՝ մտերմաբար պարտավճար միշտ նմա ի ծառայութիւն բերէր»[2]: Այս անչափ կարևոր տեղեկությունը նախկինում չի լուսաբանվել: «Քարթլիի մատյան»-ը պահպանել է կարևոր տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ Աբխազաց թագավորն այնքան էլ «ի սէր միաբանութեան» չէր կապված Աշոտ Ա-ին, այլ հնազանդեցվել էր զենքի ուժով դեռևս Աշոտի՝ Արմինիա ոստիկանության իշխանաց իշխան եղած տարիներին: Այդ ժամանակ Այսրկովկասում ռազմական գործողություններ են տեղի ունեցել հայկական և աբխազական զորքերի միջև: Այդ են ցույց տալիս նաև որոշ այլ սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները:

«Քարթլիի մատյան»-ը տեղեկացնում է, որ Աբխազաց Գիորգի Ա թագավորը (861-868) նվաճում է Վիրքը (Քարթլին)[3]: Դրանից քիչ անց Աբխազաց թագավորությունում սկսվել էին գահակալական կռիվներ, և, ի վերջո, թագավոր էր դարձել Իովանեն, որ իր որդի Ատրներսեհի համար կնության էր բերել Կղարջքի Աշոտ կուրապաղատի (մահ՝ 826 թ.) որդի Գուառամի դստերը: Այս ժամանակ է, ահա՛, որ Արմինիա ոստիկանության իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին սկսեց կենտրոնական և արևմտյան Այսրկովկասում իր գերիշխանության հաստատման գործընթացը: Պարզ է, որ իր այս քաղաքականությունն իրականացնելիս Աշոտ Բագրատունին բախվելու էր Վիրքին տիրած և այսրկովկասյան երկրների նկատմամբ սեփական նկրտումներն ունեցող Աբխազաց թագավորության հետ: Նախքան ռազմական գործողություններ սկսելը

---

[1] Այս իրադարձությանն անդրադարձել է Ս. Երեմյանը (տե՛ս Լիպարիտ զորավարը և նրա նախորդները,-«Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ», Եր., 1947, թիվ 2, էջ 109-111: Տե՛ս նաև **Ա. Եղիազարեան**, Հայ-ափխազական պատերազմները Թ դ. 80-ական թուականներին եւ Կղարջքի կիւրոպաղատութիւնը,-«Բազմավեպ», Վենետիկ, 2009, էջ 182-192:

[2] **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 142:

[3] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 31:

կողմերը ձևավորում են սեփական ռազմաքաղաքական դաշինքները: Կղարջքի Բագրատունիներից Գուառամի որդի Նասրը, որի քույրը Աբխազաց թագավորի կինն էր, և Գուրգենը, որը Աշոտ կուրապաղատի որդի Ատրներսեհի որդին էր, դաշնակցում էին Աբխազաց թագավորի հետ, իսկ Թռեղքում հաստատված Լիպարիտ Բաղվաշը և Կղարջքի կուրապաղատ Դավիթը (մահ. 881)՝ հայերի: Ջ. Անչաբաձեն նշում է, որ քանի որ Աշոտ Բագրատունին դուրս էր եկել Աբխազաց թագավորության դեմ, Դավիթ կուրապաղատը, ինքնըստինքյան հասկանալի է, բռնելու էր աբխազների հակառակորդի կողմը, բացի այդ էլ՝ Նասրը անցել էր աբխազների կողմը: Հենց այդ պատճառով Դավիթն ու Լիպարիտը օգնեցին հայերին[1]: Ըստ «Քարթլիի մատյանի»՝ այդ ժամանակ ռազմական գործողություններ սկսվեցին հայերի և աբխազների միջև՝ Վիրքին տիրելու համար[2]:

Հ. Մարկվարտն այն կարծիքն է հայտնում, որ Աշոտ Բագրատունին և Աբխազաց թագավորը պայքարում էին Վիրքին տիրելու համար[3]: Ի. Ջավախիշվիլին համոզված է, որ այս շրջանում նախաձեռնությունն այսրկովկասյան գործերում պատկանում էր Հայ Բագրատունիներին, ուստի նա ևս կարծում է, որ պայքար էր ընթանում հայերի և աբխազների միջև՝ Վիրքին տիրելու համար[4]:

881 թ. նախօրեին Կղարջքի Աշոտ կուրապաղատի որդի Գուառամը Գուգարքում տիրում էր ընդարձակ տարածքների[5]: Այնտեղ ընդարձակ տիրույթներ ունեին նաև նրա եղբայրները՝ Բագարատը և Ատրներսեհը[6]:

«Քարթլիի մատյանի» տեղեկությունների համաձայն, 881 թ. Նասրը սպանեց իր հորեղբորորդի Կղարջքի կուրապաղատ Դավիթին (ըստ Վարդան վարդապետի՝ Դավիթին սպանել է Գուառամը[7]): Դրանից հետո Աշոտ Բագրատունին՝ Թռեղքի իշխան Լիպարիտ Բաղվաշի, Կղարջքի նոր կուրապաղատ Ատրներսեհի, Դավթի եղբայր Աշոտի և արաբների հետ արշավանքի ելավ և ջախջախեց Նասրին ու աբխազներին և

---

[1] Տե՛ս **Ց. Анчабадзе,** Из истории средневековой Абхазии (VI-XVII вв.), Сухуми, 1959, էջ 124:

[2] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 31:

[3] Տե՛ս **Յ. Մարկուարտ**, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, ծանօթութիւններով, գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մ. Հապոզեան, Վիեննա, 1913, էջ 140: Տե՛ս նաև **Ն. Ադոնց,** Երկեր, հ. Բ, էջ 504-505:

[4] Տե՛ս **Ã. Ì êðòóì ÿí**, Ãðóçèíñêîå ôåîäàëüíîå êíÿæåñòâî Êàõåòè â VIII-XIââ. è åãî âçàèìîòíîøåíèÿ ñ Àðìåíèåé, Åðåâàí, 1983, էջ 87-88:

[5] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 31:

[6] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 187:

[7] Տե՛ս **Վարդան վարդապետ,** էջ 87-88:

նվաճեց Նասրի հողերը: Նասրը փախուստի դիմեց Բյուզանդիա[1]: Զ. Անչաբաձեն կարծիք է հայտնել, թե իբր Նասրի փախուստից և նրա հայր Գուառամի մահից (882 թ.) հետո նրանց տիրույթներն անցան Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհին[2], որը քննություն չի բռնում, քանի որ նրանց հողերը, ինչպես կտեսնենք, մեծավ մասամբ անցել էին Հայաստանի Բագրատունիներին, որոնց ներկայացուցիչ Աշոտը վրացական աղբյուրներում արդեն հիշատակված է որպես թագավոր[3]: Ս. Երեմյանը թեականորեն հավանական է համարում, որ Ատրներսեհին էին անցել Արտահանն ու Ջավախքը[4], սակայն հետազոտողի կասկածը տեղին է: Իսկ Զ. Անչաբաձեն կարծում է նաև, որ Աշոտ Բագրատունին տիրել է Վիրքին, որի պատճառով վրացական աղբյուրում հիշատակվում է որպես «Հայոց և Վրաց իշխանաց իշխան»[5]: Ինչ վերաբերում է Աշոտ Բագրատունու կողմում հանդես եկած արաբներին, ապա, ամենայն հավանականությամբ, խոսքը Տփղիսի ամիրայության արաբների մասին է, որոնք արդեն ընդունել էին Արմինիայի իշխանաց իշխանի գերիշխանությունը: Իսկ վերջինն իր հերթին ցույց է տալիս, որ Աշոտ Բագրատունին Վիրքը և Աղվանքն իր գերիշխանությանն է ենթարկել նախքան 881 թ.:

Ամենայն հավանականությամբ, հենց այս իրադարձությունների վերաբերյալ է հայկական աղբյուրում պահպանված հետևյալ հիշատակությունը.«Եւ ելեալ աւուրսն ընդ յայնոսիկ իշխանն Հայոց Աշոտ ի կողմանս Վրաց, վասն ապստամբելոց ոմանց ելուզակաց, առ եզերբ գետոյն հզաւրի, որ կոչի Կուր»[6]: Եթե ճիշտ է մեր եզրակացությունը, ուրեմն այս հիշատակության մեջ առկա է մի ուշագրավ իրողություն: Կղարջքի իշխաններից Գուառամն ու Նասրը դիտվում են որպես «ապստամբ ելուզակներ», քանի որ Հայոց իշխան Աշոտ Բագրատունին Խալիֆայության կողմից ճանաչվել էր որպես Արմինիայի իշխանաց իշխան, ուստիև նրա իշխանության դեմ ցանկացած ընդվզում դիտվում էր որպես ապստամբություն:

Հարկ է նշել, որ իրենց ներկայիս ուսումնասիրություններում վրացի պատմաբանները խնդրո առարկա իրադարձությունների հետ կապված

---

[1] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 31:

[2] Տե՛ս **Զ. Անչաբաձե,** նշվ. աշխ., էջ 124-125:

[3] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 31, **Âàõóøòè Áàãðàòèîíè,** էջ 187:

[4] Տե՛ս **Ս. Երեմյան,** Լիպարիտ զորավարը և նրա նախորդները,-«Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ», Ե., 1947, թիվ 2, էջ 110:

[5] Տե՛ս **Զ. Անչաբաձե,** նշվ. աշխ., էջ 125:

[6] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Եր., 1988, էջ 42:

լռության են մատնում հայերի մասնակցության հարցն ընդհանրապես[1]:

Միևնույն ժամանակ կարևոր իրադարձություններ տեղի ունեցան Ծանարաց (Կախեթի) իշխանությունում (քորեպիսկոպոսություն): Այնտեղ իշխող գարդաբանյան հարստությանը փոխարինեց Արևմանելի հայկական տոհմը[2] հենց 881 թ., որը կարևոր հետևություններ է ծնում: «Քարթլիի մատյանի» համաձայն, երբ հայկական բանակը՝ հպատակ իշխանների զորակցությամբ ջախջախեց աբխազական դաշինքի ուժերին, հենց այդ ժամանակ «Քորեպիսկոպոս Փադլան (իմա՛ Փադլա Արևմանելի-Ա.Ե.) հզորացավ և ենթարկեց գարդաբանցիներին»[3]: Կարելի է եզրակացնել, որ հայ-աբխազական առաջին բախման ժամանակ հայկական բանակին աջակցող այսրկովկասյան հպատակ իշխանների ցանկում, ինչպես նաև հակառակորդ դաշինքի մեջ Ծանարաց քորեպիսկոպոսի անվան չհիշատակվելու փաստը պետք է հետևանք լիներ այն իրողության, որ նա չեզոք դիրք էր զբաղեցրել, որի հետևանքով հաղթանակած Աշոտը, որ գերիշխանության էր հասել Այսրկովկասի մեծագույն մասում, հատուկ ուշադրություն էր դարձնելու Ծանարաց քորեպիսկոպոսությանը, մանավանդ, որ այն իր կազմում ընդգրկում էր կարևորագույն նշանակություն ունեցող Ալանաց դուռը: Հենց այդ «հատուկ ուշադրության» հետևանքն էր այնտեղ Արևմանելիների հայկական տոհմի գերիշխանության հաստատումը: Վախուշտ Բագրատիոնը պահպանել է մի կարևոր հաղորդում, որն անհասկանալի է թվում առանց վերոհիշյալ պարզաբանման: Պատմելով այն մասին, որ Սամուելից հետո քորեպիսկոպոս դարձավ Գաբրիել Դոնաուրին, պատմիչն ի մասնավորի տեղեկացնում է.«Նրանից խլեցին Գարդաբանը: Եվ դրանից հետո մահացավ 881 թ.»[4]: Այնուհետև՝ «կորիկոզ դարձավ Ֆադալա Արևմանելին...: Նա կրկին գրավեց Գարդաբանը»[5]: Նախ անհայտ է մնում, թե ո՞վ խլեց Գարդաբանը Գաբրիելից: Հետո՝ «Քարթլիի մատյան»-ը, որ մանրամասն տեղեկություններ է հաղորդում այդ տարիներին տեղի ունեցած դեպքերի մասին, այդ անցքի մասին լռում է: Վախուշտ Բագրատիոնը հավանաբար օգտվել է մեզ անհայտ այլ աղբյուրից: Այսպես թե այնպես, մեր համոզմամբ, 881 թ. ջախջախելով Աբխազաց թագավորի ստեղծած դաշինքը՝ Աշոտ Բագրատունին ուշադրությունը բևեռեց Ծա-

---

[1] Տե՛ս "Очерки из истории Грузии: Абхазия (с древнейших времен до наших дней)", Тб., 2009, էջ 142:

[2] Այս տոհմին մանրամասնորեն կանդրադառնանք մեր ուսումնասիրության համապատասխան բաժնում:

[3] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 31:

[4] Տե՛ս **Вахушти Багратиони**, էջ 126:

[5] Անդ:

նարաց քորեպիսկոպոսության վրա: Պարզ է դառնում, որ Գարդաբանը, այսինքն՝ Գաբրիելի հիմնական հենարանը, քանի որ նա գարդաբանյան տոհմից էր, նվաճել է Այսրկովկասի իշխանաց իշխանը: Թերևս Գաբրիելի մահն էլ կապված է Գարդաբան հայկական զորքերի ներխուժման հետ: Պատահական չէ, որ հաջորդ քորեպիսկոպոսը՝ Փաղլան, «կրկին գրավեց» (իմա՛ ետ ստացավ) Գարդաբանը:

Այսպիսով՝ հայ-աբխազական պայքարի առաջին փուլն ավարտվեց Աբխազաց թագավորության և նրա դաշնակիցների ջախջախմամբ, որի հետևանքով Այսրկովկասում հաստատվեց հայկական գերիշխանությունը: Բայց դրանից դաս չքաղած Աբխազաց թագավորները շուտով մտան հաջորդ արկածախնդիր ձեռնարկի մեջ արդեն Աշոտ Ա-ի թագավորության շրջանում՝ 888 թ.:

1.3. Հայոց տերությունն Աշոտ Ա-ի գահակալության շրջանում: Աշոտ Բագրատունին, ըստ Ասողիկի՝ «նախ քան զթագաւորութիւնն երեսնամեայ ժամանակօք իշխան և իշխանաց իշխան եղեալ Հայոց և Վրաց, և յաղթող ամենայն ազգացս շուրջանակի»[1]:

Սկզբնապես անհրաժեշտ է տարբերակել Աշոտ Բագրատունու երկու թագադրությունները: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ Աշոտի բոլոր մեծագործությունները տեսնելով՝ հայ նախարարները որոշում են խալիֆայից նրա համար թագ խնդրել: Խալիֆան համաձայնում է նրանց խնդրանքին, որ ուղարկվել էր «ի ձեռն ոստիկանին Յիսէի՝ որդւոյն Շեխայ» ու Աշոտին թագավորական թագ ուղարկում[2]: Հ. Նալբանդյանն այս ոստիկանին նույնացնում է Իսհակ իբն Կունդաջիկին, որն իշխել է 879 թ.[3], իսկ Ա. Տեր-Ղևոնդյանը՝ ոստիկան Իսա իբն աշ-Շայխին, որն ըստ հեղինակի Աշոտին թագ է բերել 884 թ.[4]: Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի՝ Աշոտը թագավոր էր հռչակվել նախքան խալիֆայից թագ ստանալը: Ն. Ադոնցը Աշոտ Ա-ի թագադրության թվական է համարում 885 թ.-ն կամ 886 թ.-ն[5]: Սևանի արձանագրության համաձայն նա Հայոց թագավոր է հիշատակվում 874 թ. [6], իսկ Գառնու արձա-

---

[1] Տե՛ս **Ասողիկ**, էջ 158: Ըստ Թովմա Արծրունու, որը մանրամասնում է «երեսնամեայ ժամանակօք»-ը, Աշոտն իշխել է «ե ամ յիշխանական ճոխութեան, իե ամ յիշխանաց իշխանական պետութեանն» (տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 356), այսինքն՝ Աշոտը սկզբում 5 տարի եղել է Հայոց իշխան, իսկ այնուհետև, 25 տարի, Հայոց և Վրաց իշխանաց իշխան:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 140:

[3] Տե՛ս **Հ. Նալբանդյան,** Արաբացի ոստիկանները Հայաստանում,-Առանձնատիպ ՀՍՍՌ ԳԱԱ «Տեղեկագրից», 1956, թիվ 8, էջ 123-124:

[4] Տե՛ս **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 285:

[5] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 472-477, 501 և այլն:

[6] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Հայկական գրի սկզբնական տեսակները, Եր., 1939, էջ 88:

նագրության մեջ 879 թ. նրա կին Կատրանիդեն արդեն իրեն կոչում է «Հայոց թագուհի»[1]: Ա. Տեր-Ղևոնդյանը ենթադրում է, որ հայ նախարարների կողմից Աշոտը թագավոր է հռչակվել մոտավորապես 869 թ., քանի որ 870-ական թթ. Խալիֆայությունում իրավիճակն այնպիսին էր, որ Աշոտի թագավոր դառնալու հավանականությունը բացառվում էր, մինչդեռ 860-ական թթ. վերջը բավական հաջող էր դասավորվում Աշոտ Բագրատունու համար[2]: Ռ. Մաթևոսյանն այն կարծիքին է, որ Աշոտը հայ իշխանների և հոգևորականների կողմից Հայոց թագավոր է հռչակվել 869 թ. Շիրակավանի եկեղեցական ժողովում, իսկ 885 թ. տեղի է ունեցել նրա թագավորության ճանաչումը օտար պետությունների կողմից[3]: Ինչպես տեսանք, «Քարթլիի մատյան»-ի մեջ Աշոտ Բագրատունին 881 թ. հիշատակված է որպես «Հայոց թագավոր»[4]:

Աշոտը Խալիֆայությունից պաշտոնապես թագ է ստացել 885 թ. և հռչակվել որպես Հայոց և Վրաց թագավոր[5]: Այդ հարցում մեծ նշանակություն ուներ նաև այն, որ Բյուզանդիան հաղթանակներ էր տանում Խալիֆայության նկատմամբ սահմանային ամրությունների գոտում, որի հետևանքով արաբները Բագրատունիների նկատմամբ ավելի բարեհաճ էին դառնում[6]: Ըստ Կ. Յուզբաշյանի դիպուկ դիտարկման՝ Խալիֆայությունը, Աշոտին թագավոր ճանաչելով, զիջման էր գնացել, որը ստիպողական էր և արտացոլում էր նրա ձգտումը՝ Հայաստանի և այսրկովկասյան երկրների վրա պահպանելու իր, թեկուզ ձևական, իշխանությունը, քաղաքական ներկայությունը[7]:

«Հայսմավուրք»-ում պահպանվել է մի տեղեկություն, ըստ որի՝ «Առաջին թագաւոր Հայոց յազգէն Բագրատունեաց եղև Աշոտ...և իշխան Իսմայելի Աբդլա առաքեաց նմա թագ...արքայն Յունաց Վասիլ՝

---

[1] Տե՛ս **Բ. Առաքելյան**, Գառնի, հ. I, Եր., 1951, էջ 84-86:

[2] Տե՛ս **А. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 235-236:

[3] Տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, 96-97:

[4] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 31:

[5] Տե՛ս **А. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 238: Աշոտ Ա-ի թագավորության ճանաչման թվականը տարբեր հետազոտողներ տարբեր կերպ են թվագրում (տե՛ս **А. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 285, Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 29, «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 23: Աշոտ Ա-ի գահակալության թվականի մասին մանրամասնորեն տե՛ս «Մանր ժամանակագրություններ», կազմեց Վ. Հակոբյան, հ. 2, Եր., 1956, 156-162, История Византии в трех томах, т. II, М., 1967, էջ 191: Պետք է նշել, որ ըստ Հ. Բարթիկյանի՝ այդ իրադարձությունը տեղի է ունեցել 884 թ. օգոստոսի 26-ին (տե՛ս **Հ. Բարթիկյան,** Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ.,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1996, թիվ 2, էջ 17)):

[6] Տե՛ս **J. Laurent**, նշվ. աշխ., էջ 240-262:

[7] Տե՛ս **Կ. Юзбашян**, նշվ. աշխ., էջ 68:

առաքեաց և նա թագ Աշոտոյ, և պսակեալ նա յերկուց թագաւորացն»[1]: Ըստ Ա. Գրենի՝ Բյուզանդիայի Վասիլ կայսրը, որն ազգությամբ հայ էր, թագ ուղարկեց Աշոտ Ա-ին՝ հենց որ իմացավ Կովկասյան թագավորության ստեղծման մասին (իմա՛ Հայ Բագրատունիների տերություն): Խնդիրն այն է, որ Բյուզանդիան ուզում էր իրեն ենթարկել Այսրկովկասը, իսկ Հայ Բագրատունիների տերության ստեղծման մեջ Վասիլը տեսնում էր այդ հույսի իրականացման հնարավորությունը[2]: Հ. Բարթիկյանն իր հետազոտություններում ցույց է տվել, որ Բյուզանդիայի կողմից Բագրատունի թագավորներին թագ շնորհելը այդ իրադարձության ժամանակակից պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու կողմից չի հիշատակվում և, ամենայն հավանականությամբ, ուշ շրջանի հեղինակների կողմից հավելված վարկած է, որը մուտք է գործել հայագիտության մեջ[3]: Բացի այդ, Բյուզանդիայի կայսեր համար Արևելքի տիրակալները կոչվում էին ոչ թե թագավոր, այլ իշխան, իշխանաց իշխան, նաև կուրապաղատ: Այդ տրամաբանությամբ էլ Հայոց թագավորները կոչվում էին իշխանաց իշխան, իսկ Հայոց թագավորության կազմի մեջ մտնող իշխանությունների ղեկավարները՝ իշխան, կուրապաղատ և այլն: Հետազոտողն անդարադարձել է այն իրողությանը, որ Հայոց թագավորին Բյուզանդիայի կայսրը կոչում էր «որդի», որով արտահայտվում էին նրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունները[4]:

Թովմա Արծրունին և Վարդան վարդապետը Աշոտ Ա-ին կոչում են «Աշոտ Մեծ»[5], որից կարելի է բխեցնել, որ ժամանակակիցները նրան Աշոտ Մեծ էին անվանում:

Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդմամբ՝ Աշոտ Բագրատունին իր նվաճումները կատարել է արդեն թագավոր դառնալուց հետո: Սկզբում նա տեղեկացնում է, որ Աշոտ Ա-ն «ի նորոգատուր թագաւորութեանն բարձրացուցանէր զազգս Թորգոմեան»[6]: Աշոտ Ա-ն «ապա ձեռն զհիւսիսական կողմամբք արկեալ ի ծորձորս մեծի լերինն Կովկասու, որ ի հովիտն և ի ձորս երկայնագոգս բնակեալք էին ազգք ընդ իւրեաւ

---

[1] Տե՛ս **Մ. Ավդալբեկյան**, «Յասմաւուրք» ժողովածուները և նրանց պատմական արժեքը, Եր., 1982, էջ 93:

[2] Տե՛ս **Ա. Грен,** նշվ. աշխ., էջ 73:

[3] Տե՛ս **Հ. Բարթիկյան**, Առաջին երեք Բագրատունի թագավորների այսպես կոչված «բյուզանդական թագի մասին»,-«ՊԲՀ», 2001, թիվ 3, էջ 143-171:

[4] Տե՛ս **Հ. Բարթիկյան,** Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ.,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1996, թիվ 2, էջ 27-28: Կարծիք կա, թե Վասիլ Ա-ն պայմանագիր է կնքել Աշոտ Բագրատունու հետ (տե՛ս **Byzantium**, an introduction to East Roman civilization, Oxford, Oxford University Press, 1961, էջ 20-21):

[5] Թովմա **Արծրունի և Անանուն,** էջ 418, Վարդան վարդապետ, էջ 91:

[6] **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 142:

հնազանդեցուցանէր. այլ և զաղխատրոյզ բնակիչսն Գուգարաց և զելուզակուտ մարդիկ Ուտի գաւառի առհասարակ ընդ ձեռամբ նուաճէր՝ ի բաց ի նոցանէ հերքելով զաւազակութիւն մարդադաւութեան, և իբրև օրինաւորս և հլուս զամենեսեան կազմէր, և առաջնորդս և իշխանս նոցա կացուցանէր: Այլ և զթագաւորն Եգերացւոց ի սէր միաբանութեան ընդ իւր կապակցեալ՝ այնպէս նմա այցելէր, մինչ զի անընդհատ յորդիութեան սակի գոլով՝ մտերմաբար պարտավճար միշտ նմա ի ծառայութիւն բերէր»[1]:

Աշոտ Ա-ի գահակալության շրջանում Աբխազաց թագավորությունը Վիրքին տիրելու երկրորդ փորձը կատարեց: 881 թ. դեպքերից, որոնց մենք արդեն անդրադարձել ենք, որոշ ժամանակ անց Բյուզանդիայից վերադարձավ Աբխազաց Գիորգի Ա թագավորի եղբորորդի Բագրատը: Նա իր հետ օգնական բյուզանդական զորք էր բերել: Նրան հաջողվեց սպանել Իովանեի որդի Ատրներսեհին և տիրել Աբխազաց թագավորությանը (մինչև 893 թ.): Այնուհետև նա ամուսնացավ Ատրներսեհի կնոջ հետ և Բյուզանդիայից կանչեց իր կնոջ եղբայր Նասրին: Վերջինս վերադարձավ և աբխազական օգնական զորքով Սամցխեում տիրեց երեք բերդի՝ Օձրխեին, Ջվարիսցխեին և Լոմսիանթային, որոնք նախկինում կառուցել էր նրա հայր Գուառամը: Աբխազներին էր միացել նաև Ալանաց իշխան Բակատարը: Հայկական զորքը, որին միացել էր Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհի զորախումբը, արշավեց Նասրի դեմ: Այս անգամ Աշոտ Ա-ի կողմում հանդես եկավ նաև Կղարջքի Աշոտ կուրապաղատի որդի Ատրներսեհի որդի Գուրգենը: Գլխավոր ճակատամարտը տեղի ունեցավ Կուր գետի ափին և ավարտվեց հայկական զորքի հաղթանակով: Ճակատամարտում սպանվեցին Նասրը, ալանների իշխան Բակատարը և աբխազների իշխաններ[2]: Նասրի մահը Վախուշտ Բագրատիոնը դնում է 888 թ.[3]: Ըստ Դավթի որդի Սմբատի՝ Նասրը սպանվեց Ասպինձա գյուղում՝ Սամցխեում, որը գտնվում է Կուր գետի ափին[4]: Ամենայն հավանականությամբ, գլխավոր ճակատամարտը տեղի է ունեցել Ասպինձայի մոտակայքում: Փաստորեն, արդեն Աշոտ Ա-ի թագավորության տարիներին Աբխազաց թագավորության և նրա դաշնակիցների զորքերը երկրորդ անգամ ջախջախվեցին հայկական բանակի կողմից, և Աբխազաց թագավորն ընդունեց Աշոտ Ա-ի գերիշխանությունը: Ուստի և սխալվում են Ռ. Խոնելիան և այն հետազոտող-

---

[1] Անդ:
[2] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 32:
[3] Տե՛ս **Вахушти Багратиони**, էջ 187-188:
[4] Տե՛ս **Сумбат Давитис-дзе**, էջ 33:

ները, որոնք այն կարծիքն են հայտնում, թե իբր մոտ 890թ. Աշոտ Ա-ն ռազմա-քաղաքական դաշինք է կնքել աբխազների հետ[1]: Հովհաննես Դրասխանակերտցու վերոհիշյալ տեղեկությունն այն մասին, որ Աբխազաց թագավորը պարտահատույց լինելով ծառայում էր Աշոտ Ա-ին, մեր կարծիքով, վերաբերում է հենց նշված դեպքերին: Հետագայում՝ 906 թ., երբ Աբխազաց Կոստանդին Գ թագավորը ներխուժեց Վիրք և Գուգարք, որոնց տիրում էր Սմբատ Ա-ն, Կղարջքի թագավոր Ատրներսեհը նրան զգուշացրեց այդ քայլից, նշելով, թե պետք չէ «շամբուք մտօք ընդ վեհսն (իմա՛ Սմբատ Ա-Ա.Ե.) քան զինքն հակառակիլ»[2]: Այդ նույն հարաբերությունը գոյություն ուներ նաև Սմբատ Ա-ի և Բյուզանդիայի կայսեր միջև, երբ, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Հայոց թագավորը կայսեր առատաձեռնությունը փոխհատուցում էր տասնապատիկ՝ «իբրև վեհագունի քան զինքն»[3]: Եզրակացությունը պարզ է: Ինչպես Բյուզանդիայի կայսրն էր ավելի բարձր դասվում Հայոց թագավորից, այնպես էլ վերջինս՝ Աբխազաց թագավորից: Այդ իսկ պատճառով պատմիչը Սմբատ Ա-ին անվանում է «բոլորից արևելեայցս գլխավոր»[4]:

Նշենք նաև, որ, ամենայն հավանականությամբ, Աշոտ Ա-ի զորքերն առաջնորդում էր նրա որդի, ապագա Հայոց թագավոր Սմբատը: Այդ եզրակացությանը կարելի է հանգել Հովհաննես Դրասխանակերտցու այն վկայությունից, որ երբ մահացավ Աշոտ Ա-ն (890 թ.), նրա որդի Սմբատը թաղմանը չէր մասնակցում, քանի որ դեռևս գտնվում էր Գուգարքում[5]:

Ինչպես տեսնում ենք, տեղի են ունեցել կարևոր իրադարձություններ: Աբխազների ստեղծած դաշինքին միացել է նաև ալանների թագավորը, իսկ նախկինում վերջինիս դաշնակից Գուրգեն Բագրատունին արդեն մարտնչում է Աշոտ Ա-ի կողմում: Հավանաբար, Գուրգենի նպատակը Աշոտ Ա-ի օգնությամբ որևէ տիրույթ ձեռք բերելն է եղել: Ինչպես կարծում է Ս. Երեմյանը, նա տիրույթներ էր ստացել Արտահանում[6]: Ըստ երևույթին, այդ նրան չբավարարեց, որի հետևանքով նա դիմեց արկա-

---

[1] Տե՛ս **Р. Хонелия,** Политические взоимоотношения Абхазского царства и царства армянских Багратидов в IX-Xвв., автореферат кандидатской дисертации, Ер., 1967, էջ 9, **Бгажба О., Лакоба С.**, История Абхазии (с древнейших времен до наших дней), Сухум, 2007, էջ 140-141:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 204:

[3] Անդ, էջ 202:

[4] Անդ, էջ 278: Տե՛ս **Հ. Բարթիկյան,** Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ.,- «Լրաբեր (հաս. գիտ.)», 1996, թիվ 2, էջ 27-28:

[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 146-150:

[6] Տե՛ս **Ս. Երեմյան,** Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, էջ 111:

ծախնդրության արդեն Սմբատ Ա թագավորի օրոք, թերևս, օգտվելով վերջինիս թագավորության առաջին տարիներին եղած դժվարություններից[1]: 891թ. Կղարջքի Ատրներսեհ իշխանի դեմ ճակատամարտում նա պարտվեց և սպանվեց[2]:

Վրացի պատմաբանները, անդրադառնալով այս իրադարձություններին, ամբողջությամբ անտեսում են Հայոց Սմբատ Ա թագավորի մասնակցությունը դրանց: Մասնավորապես, նրանք նշում են, որ Կոստանդին Գ-ն փորձ էր կատարում «միավորել վրացական հողերը»: Նա IX-X դդ. սահմանագլխին իբր կորցրել էր Վիրքը, որին, ըստ վրացի պատմաբանների, ժամանակավորապես տիրել էին տեղի վրացական ավատատերերը, սակայն 904 թ. Կոստանդին Գ-ն կրկին տիրեց Վիրքին՝ Ուփլիսցխեում նշանակելով կուսակալ[3]:

Ինչպես տեսանք, ըստ Թովմա Արծրունու՝ Աշոտ Բագրատունին Վիրքը, Աղվանքը և կովկասյան ցեղերին (իմա՛ Կովկասյան լեռների՝ Ալանաց դռան հարևանությամբ բնակվող ցեղեր) նվաճել է նախքան թագավոր դառնալը: Նշվեց նաև, որ այդ կատարվել էր Խալիֆայության հավանությամբ:

Արդեն Հայոց թագավոր դառնալուց հետո, ամենայն հավանականությամբ, Աշոտ Ա-ն վերստին իր գերիշխանությունն է հաստատել Այսրկովկասում, արքունի տիրույթներին կցել Գուգարքը և Ուտիքը, ինչպես նաև ենթարկել Աբխազաց թագավորությունը: Ըստ որում, այն, որ Թովմա Արծրունին Աբխազաց թագավորության ենթարկման մասին չի խոսում, հաստատում է մեր տեսակետը: Կարծում ենք, Թովմա Արծրունու նկարագրած դեպքերը վերաբերում են նախքան և հենց 881 թ. տեղի ունեցած դեպքերին, իսկ Հովհաննես Դրասխանակերտցու նկարագրած դեպքերը՝ 888 թ. իրադարձություններին:

Ինչպես տեսանք, Աշոտ Ա-ն իր իշխանությանն էր ենթարկել գրեթե ամբողջ Այսրկովկասը՝ բացառությամբ Շիրվանշահերի թագավորության[4]: Խալիֆայությունը, փաստորեն, սկզբում նրան ճանաչել էր Արմինիայի իշխանաց իշխան, իսկ այնուհետև նաև թագավոր Արմինիայի

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 146-150:

[2] Տե՛ս **Сумбат Давитис-дзе**, էջ 34:

[3] Տե՛ս "Очерки из истории Грузии, Абхазия (с древнейших времен до наших дней)", էջ 142-143:

[4] Ստորև կտեսնենք, որ հայկական սկզբնաղբյուրներից մեկը հիշատակում է Շիրվանի՝ Հայոց տերության մեջ մտնելը:

ընդգրկած տարածքներում[1]: Աշոտ Ա-ի թագավորությունից դուրս մնաց միայն նախկինում Արմինիա ոստիկանության մաս կազմող Շիրվանշահերի թագավորությունը, որը տարածվում էր Աղվանքից արևելք՝ արևմուտքում հասնելով մինչև Կուր գետի ստորին հոսանքը (Կուր-երասխյան ջրկիցի շրջանում) ու ներկայիս Գյոկ-չայ գետը[2]: Մասուդիի հաղորդմամբ X դ. կեսերին Շիրվանշահերը տիրում էին Լփինք-Լիրանին, Մուկանին, Դարբանդին, Կասպից ծովի արևմտյան ափի երկրամասերին՝ Կուր գետի ստորին հոսանքից մինչև Դարբանդ[3]: Ըստ Մասուդիի՝ իր երկի ստեղծման շրջանում (947 թ.)[4] Շիրվանշահերին հաջողվել էր տիրել շրջակա երկրներին, սակայն դրանից առաջ նրանք տիրում էին միայն Շիրվանին և Լիրանին (Լփինք)[5]:

1.4. Հայոց տերությունը Սմբատ Ա-ի գահակալության շրջանում: 890 թ. Հայոց գահին է բազմում Սմբատ Ա-ն (890-914): Ըստ սկզբնաղբյուրների տեղեկությունների՝ նա ևս կոչվում էր «մեծ»[6]: Նրա օրոք վերջնականապես ձևավորվում է Հայ Բագրատունիների տերության վարչաքաղաքական բաժանման համակարգը: Պատմիչների տեղեկությունները հստակ պատկերացում են տալիս այդ համակարգի մասին:

Ասողիկն ընդհանուր առմամբ այսպես է ներկայացնում Սմբատ Ա-ի թագավորելը. «Սմբատ թագաւորեալ՝ տիրէ բոլոր հայրենեաց իւրոց, Հայոց և Վրաց, ժառանգելով զքաղաքս հակառակորդաց իւրոց»[7]: Ձեռագրերից մեկում հիշատակված է, որ Սմբատ Ա-ն տիրեց «Հայոց և Վրաց և շինեցաւ աշխարհս»[8]:

Սմբատ Ա-ի զորքերը տիրում են Հայոց հինավուրց մայրաքաղաք

---

[1] Տե՛ս **Ռ. Մաթևոսյան,** Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 80, **С. Бархударян,** Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений, Ер., 2011, էջ 38:

[2] Տե՛ս **Â. Ì è í î ðñêèé,** նշվ. աշխ., էջ 115-116:

[3] Տե՛ս مسعودي, I, էջ 177-179, 205: Տե՛ս նաև Աբու ալ-Հասան Ալի իբն ալ-Հուսայն իբն Ալի ալ-Մասուդի, Ոսկու մարգագետիններ և գոհարների հանքեր («Մուրուջ ազ-զահաբ վա մաադին ալ-ջավահիր»), Ցուցումների և դիտարկումների գիրք («Քիթաբ ատ-տանբիհ վալ-իշրաֆ»), (հատվածներ Հայաստանի, Կովկասյան լեռների և հարևան երկրների մասին), արաբերեն բնագրերից թարգմանությունը, Մասուդիի կենսագրությունը և ծանոթագրությունները Ա. Ս. Եղիազարյանի, Եր., 2007, էջ 15-17, 34:

[4] Տե՛ս **ал-Мас'уди,** Золотые сопи и россыпи самоцветов, перев. и ком. Д.В. Микульского, М., 2002, էջ 30:

[5] Տե՛ս مسعودي, I, էջ 177-178:

[6] Մեզ հասած մի ձեռագրում նշված է. «որդի Աշոտո[յ] Սմբատ, որ և մեծն կոչեցաւ» (տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս,** Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 16, 135): Տե՛ս նաև **Ստեփաննոս Օրբելյան,** էջ 182:

[7] **Ասողիկ**, էջ 161:

[8] **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 87:

Դվինին[1]: «Եւ այսպէս ձգտեալ աճեցուցանէր զշաւիղ տէրութեան իւրոյ յարևմտից հիւսիսոյ մինչև ցԿարնոյ քաղաք, և անդր ևս քան զԿղարջս՝ քերեալ մինչև առ ափն ծովուն մեծի, և մինչև ցսահմանս Եգերացւոց և մինչև ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս և ցՕանարս մինչև ցԴուռն Ալանաց, առեալ ևս յինքն և զամրոց դրան պահակի նոցա. և անտի ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչև ի քաղաքն Տփխիս. և զՈւտի գաւառ մինչև ի քաղաքն Հունարակերտ և մինչև ի Տուս և ի Շամքոր: Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տէրութեան իւրոյ, որ ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մաքսից կացուցեալ՝ զզէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանգնէր»[2]: Սմբատն իրեն է ենթարկում նաև Հայաստանում և այսրկովկասյան երկրներում հաստատված արաբներին[3]: Այսինքն՝ Հայոց տերության սահմանագիծը Կարնո քաղաքի հյուսիս-արևմուտքից սկսվելով՝ ձգվում էր հյուսիս՝ ընդգրկելով Կղարջքը, անցնում Սև ծովի ափագծով, ընդգրկում Կովկասյան լեռների լեռնականներին և, մասնավորապես, Օանարքը՝ Ալանաց դռնով, որտեղ հայկական կայազոր էր հաստատվել, Տփղիսի ամիրայությունը՝ Տփղիս քաղաքով, Գուգարքը և Ուտիքը:

Ինչ վերաբերում է Աբխազաց թագավորությանը, որ ըստ պատմիչի՝ կարծես թե դուրս է մնում Հայ Բագրատունիների տերության համակարգից, ապա այն, ինչպես տեսանք, գտնվում էր Հայոց տերության գերիշխանության ներքո: Քանի որ այն սկզբում չենթարկվեց Սմբատ Ա-ի արշավանքին, ապա կարծում ենք, որ դրա պատճառն այն էր, որ Աբխազաց թագավորը շարունակում էր հավատարմություն պահպանել:

Հայ Բագրատունիների տերության վարչաքաղաքական բաժանման համակարգի մասին հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է անդրադառնալ այդ համակարգը լուսաբանող անչափ կարևոր սկզբնաղբյուրի՝ Անանուն Զրուցագրի «Պատմությանը»: Չնայած հայագիտության մեջ ամրապնդված այն տեսակետի, թե Անանուն Զրուցագրի երկը ավանդապատումների ժողովածու է, որտեղ նկատվում են ժամանակագրական անհետևողականություն և սխալներ[4], հատկապես Սմբատ Ա-ի թագավորության շրջանի վերաբերյալ պատմիչի հաղորդած տեղեկությունները բավականաչափ ստույգ են և պարունակում են

---

[1] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 164:

[2] Անդ: Պետք է նշել, որ Ռ. Մաթևոսյանը կարծում է, որ Հովհաննես Դրասխանակերտցին, գրելով Սմբատի տերություն ասելով, ի նկատի ունի Արմինիան, քանի որ նա էր գլխավորում Արմինիայի հիերարխիան (տե՛ս Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 80):

[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր,** էջ 159-161:

[4] Անդ, էջ 26:

տվյալներ, որոնք մյուս պատմիչները չեն պահպանել: Պետք է նշել, որ Անանուն Զրուցագրի երկի ռուսերեն թարգմանության հեղինակ Մ. Դարբինյան-Մելիքյանը, ցույց տալու համար Անանուն Զրուցագրի կողմից թույլ տրված ժամանակագրական անհետևողականությունն ու սխալները, փորձում է այդ անել Սմբատ Ա-ի աբխազական արշավանքի վերաբերյալ պատմիչի հիշատակության քննությամբ: Նա կարծում է, թե հայ-աբխազական հերթական բախման վերաբերյալ Անանուն Զրուցագրի տեղեկությունը[1] իրականում վերաբերում է X դ. երկրորդ կեսի դեպքերին՝ Սմբատ Բ-ի ժամանակներին (977-990), երբ Հայոց թագավորը մարտնչել է Աբխազաց թագավոր Թեոդոս Գ-ի դեմ (ըստ հեղինակի՝ նույնական է Անանուն Զրուցագրի հիշատակած Դատոսին): Նա իր տեսակետը փորձում է ապացուցել այն փաստարկով, թե իբր Վասպուրականի զորքը Սմբատ Ա-ի աբխազական արշավանքին չի մասնակցել[2], չնայած այդ մասին սկզբնաղբյուրներում ոչինչ չկա: Այնուհետև հեղինակն անդրադառնում է այն իրողությանը, որ Անանուն Զրուցագիրը հիշատակում է Սմբատ թագավորի կողմից Գորի բերդի գրավման մասին, չնայած, որ Գորին կառուցվել էր XII դ. սկզբին: Հետևում է հաջորդ եզրակացությունը. Անանուն Զրուցագրի հիշյալ պատմությունը չէր կարող գրի առնված լինել XII դ. երկրորդ կեսից ավելի վաղ[3]: Սակայն հեղինակն ուշադրություն չի դարձրել այն իրողությանը, որ, ինչպես կտեսնենք, Անանուն Զրուցագիրը Հայոց թագավորի աբխազական արշավանքի մասնակիցների թվում հիշատակում է Տարոնի իշխանին, չնայած Տարոնի իշխանությունը Սմբատ Բ-ի օրոք արդեն միացվել էր Բյուզանդիային (967/968 թ.)[4], կամ Տայքի իշխան Գոռամին, չնայած հեղինակը ճիշտ կերպով նշում է, որ Սմբատ Բ-ի ժամանակակիցը Տայքի հայտնի կուրապաղատ Դավիթն էր[5]: Ինչ վերաբերում է Գորիի հետ կապված խնդրին, ապա Մ. Դարբինյան-Մելիքյանը չի անդրադարձել Անանուն Զրուցագրի երկում X դ. դեպքերի հետ կապված այդ քաղաքի անվան հայտնվելու հարցին: Մեր կարծիքով, հավանական է կարծել, որ Գորին պատմիչի երկի՝ հետագա գրիչների կողմից կատարված ընդմիջարկություն է և վերաբերում է այն ժամանակներին, երբ Գորին կարևոր նշանակություն էր ստացել Վիրքի քաղաքական կյանքում: Բացի այդ,

---

[1] Անդ, էջ 187-193:
[2] Անդ, էջ 25:
[3] Անդ, էջ 29-30:
[4] Տե՛ս **Ասողիկ,** էջ 183: Այդ մասին մանրամասնորեն տե՛ս **Գ. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 147-148, **К. Юзбашян**, նշվ. աշխ., էջ 125:
[5] Տե՛ս **Անանուն Զրուցագիր,** էջ 25:

Հովհաննես Դրասխանակերտցին Սմբատ Ա-ի աբխազական արշավանքի ընթացքում հիշատակում է Գուրիայի (Վուրի աշխարհ)[1] գրավման մասին[2]: Կարծում ենք, որ շատ հավանական է նաև գրչագրական թերությունը, երբ «Վուրի»-«Գուրի» (Գուրիա) անվանումը սխալմամբ գրի է առնվել «Գաւրի» ձևով, որը շատ իրական է: Նշենք նաև, որ Անանուն Զրուցագրի կողմից աբխազական արշավանքի մասնակիցների թվում հիշատակված Վասպուրականի իշխան Գուրգենը, ըստ պատմիչի՝ որդին էր Դերենիկ Արծրունու (Վասպուրականի իշխան 874/875-885 թթ.) և եղբայրը Աշոտի (Վասպուրականի իշխան 885-905 թթ.) ու Գագիկի (Վասպուրականի իշխան 905-908 թթ., թագավոր՝ 908 թ.-ից): Պատմիչը հաղորդում է նաև Սմբատ թագավորի նկատմամբ Արծրունի եղբայրների տածած թշնամության մասին, քանի որ Հայոց թագավորը ժամանակին Գագիկ Ապումրվանին ճանաչել էր որպես Վասպուրականի իշխան[3], իսկ Դերենիկ Արծրունուն էլ, որը, ի դեպ, նրա քրոջ ամուսինն էր[4], սպանել տվել Հերի ամիրայի միջոցով: Ըստ որում, դատելով Անանուն Զրուցագրի տեղեկություններից, Գուրգենին աբխազական արշավանքի ավարտին միայն տեղեկացրեցին վերջին իրողության մասին, և նա վերադառնալով Վասպուրական՝ այդ մասին հաղորդեց իր եղբայր Գագիկին: Վերջինս որոշեց, որ պետք է հանել իրենց հոր արյան վրեժը[5]: Պատմիչը հաղորդում է նաև Ամյուկ բերդում հաստատված արաբների մասին, որոնց դեմ գործողություններ են սկսում Վասպուրականի իշխանները[6]: Խոսքը, ինչպես կտեսնենք, 907 թ. իրադարձությունների մասին է, երբ ոչնչացվեցին Ամյուկի ութմանիկները: Անանուն Զրուցագիրը հաղորդում է, որ Հայոց թագավորի որդի Մուշեղն Աբխազաց թագավորի փեսան էր[7]: Այդ տեղեկությունը հաստատում է Հովհաննես Դրասխանակերտցին[8]: Կարծում ենք, որ բերված օրինակները բավարար են՝ ցույց տալու համար, որ Մ. Դարբինյան-Մելիքյանի տեսակետը, որի հիմքում դրված են այնպիսի փաստարկներ, ինչպիսիք են Աբխազաց թագավորի անվան սխալ հիշատակությունը, Գորի քաղաքի վերաբերյալ հաղոր-

---

[1] Վուրի աշխարհ-Գուրիա նույնականությանն անդրադարձել է Պ. Մուրադյանը (տե՛ս Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը, պրակ Ա, Եր., 2008, էջ 249):

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 202-204:

[3] Այդ մասին տեղեկացնում է նաև Թովմա Արծրունին (տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 362-364):

[4] Անդ, էջ 322, 356:

[5] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 195:

[6] Անդ, էջ 195-197:

[7] Անդ, էջ 187:

[8] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 182:

դումն ու թեական այն տեսակետը, թե իբր Վասպուրականի զորքը Սմբատ Ա-ի աբխազական արշավանքին չի մասնակցել, խիստ կասկածելի է և Անանուն Զրուցագրի «Պատմության» համար որպես գնահատական ծառայել չի կարող:

Անանուն Զրուցագիրը տեղեկացնում է. «Եւ մեռաւ Աշոտ Բագրատունի և թագաւորեաց տանն Հայոց Սմպատ, որդի Աշոտոյ: Եւ էր նայ այր գոռոզ և պատերազմող և առատամիտ: Եւ աջողեցաւ ճանապարհ թագաւորութեանն նորայ: Եւ կապեաց նմայ թագ արքայն Հոռոմոց Ռոմանոսն[1] և սիրէր զնայ յուժ: Եւ նայ տիրեաց ամենայն աշխարհին Հայոց և ընդ ձեռամբ էած զՀայք և զՏայք, զՎիրք և զԱղվանք և զՎրաց դաշտ և զՓարիսունք և զԱղորնիս և զԱրևիս և զԲաղս և զաւան Պարտաւայ: Եւ առեալ տիրեաց նմայ զՓայտակարանն, որ է Տփխիս, զՎաղարշապատ և զԴվին և զՎայոյ ձոր և զՆախջվան: Եւ էառ զամրոցն զերընչակայ և զԱղաշկերտ և զՎաղարշաւան, որ է Բասէն, զԱպահունիս, զՀարք, զՏարաւն: Եւ շինեաց նայ զամրոցն Խլաթայ, շինեաց և գաւարն և էառ զամենայն աշխարհն Առբերան:

Եւ զի էր մի Տաճիկ, և անուն նորայ Ապուհեճր, տայր զբերդն Բերկրոյ: Եւ տայր զքաղաքն Արճեշ Տաճկի մի, որ եկեալ էր ի Դարբանդ քաղաքէ առ արքայն Սըմպատ: Եւ զՇաղկիոտն գաւառն էրետ Տաճկի մի այլ՝ Ռաճայ անուն: Եւ մեծամտեցաւ և անուանեաց զինքն Սըմպատ տիեզերակալ:...Սըմպատ Հայոց և Վրաց թագաւոր և տիեզերակալ, բազում գաւառաց ինքնակալ»[2]:

Անանուն Զրուցագրի այս տեղեկությունը հավելվում է Մշո Սուրբ Աղբերիկ վանքում գտնված մի ձեռագրի («Կոնդակ Սուրբ Աղբրկայ վանից Մշոյ»)[3] տվյալներով[4]: Վերջիններս ակնհայտորեն կապված են

---

[1] Այստեղ սխալ կա: Ռոմանոս Ա Լեկապենոս կայսրն իշխել է Սմբատ Ա-ի մահից հետո՝ 919/920-944 թթ.: Ամենայն հավանականությամբ, Սմբատ Ա-ի թագավորությունը ճանաչվել է Լևոն VI կայսեր կողմից (886-912):

[2] **Անանուն Զրուցագիր,** էջ 159-161:

[3] Այդ կոնդակը արտագրվել է վանքում գտնվող մագաղաթից, վերարտագրվել և 1905 թ. հրատարակվել Վաղարշապատի «Արարատ» հանդեսում (տե՛ս «Արարատ», 1905, էջ 551-559), իսկ այնուհետև՝ վերահրատարակվել Գարեգին Ա կաթողիկոսի կազմած «Յիշատակարանք ձեռագրաց»-ի առաջին հատորում (էջ 179-188)):

[4] Պետք է նշել, որ որոշ ուսումնասիրողներ կոնդակը համարում են ոչ վավերական (տե՛ս **Գ. Գրիգորյան**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, էջ 170): Գարեգին Հովսեփյանը նշում է, որ «մեկից աւելի ապացոյցներ կան նորա (իմա՛ կոնդակի-Ա.Ե.) ուշ ժամանակներում ծագման մասին» (տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս,** Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 188-189): Մյուս կողմից, նա ընդգծում է նաև, որ այն ունի պատմական արժեք (անդ, էջ 189-190):

Անկասկած, կոնդակում առկա են մի շարք ընդմիջարկություններ, սակայն, այնտեղ պահպանված տեղեկությունները, ինչպես նաև դրանց համադրությունը և համեմատու-

Անանուն Զրուցագրի տեքստի հետ, սակայն, պահպանել են որոշ տարբերություններ: Կոնդակը, ընդհանուր առմամբ, ձևակերպված է Սմբատ Ա-ի անունից: Նշված է, որ «Ես Սմբատ Հայկազնի՝ որդի Աշոտոյ,...որ Տիեզերակալ կոչեցայ և տիրեցի Հայոց մինչեւ յԱսորիս»[1]: Այնուհետև, Սմբատ Ա-ի նվաճումների ցանկում[2] Տփղիսից հետո նշված են Կորնբերդն ու Լամիսը, այնուհետև, Տարոնից հետո, Սասունը (Սասունք, Սանասունք), Կերանը, Պելախանը և Շերվանը (իմա՛ Շիրվան)[3]:

Ինչպես տեսնում ենք, հավելումները պարունակում են զգալի նորություններ: Հավանաբար, Տփղիսից հետո հիշատակվող Կորնբերդը կարելի է նույնացնել Գորի բերդի, իսկ Լամիսը՝ Ալանաց դռան հետ՝ հաշվի առնելով Ալանք (սեռ.՝ Ալանից) անվան արաբական հնչողությունը (ալ-Լան - ալ-Լանիս, որտեղ «ալ»-ն արաբերենի որոշյալ հոդն է, իսկ արաբերենում «g» տառի բացակայության պայմաններում ամենահավանականը դրա փոխարինումն էր «u» տառով)[4]: Հետաքրքրական է նաև Սասունի և Բայլականի (Պելախան) հիշատակությունը[5], որոնք այլ աղբյուրներում Սմբատ Ա-ի նվաճումների ցանկում չեն հիշատակվում, չնայած, որ հետազոտությունը թույլ է տալիս ճշգրտել, որ դրանք մտել են Հայ Բագրատունիների տերության մեջ: Շատ կարևոր է ձեռագրում Սմբատ Ա-ի նվաճումների ցանկում նշված Շիրվանը (Շէրվան): Դատելով Մասուդիի տեղեկություններից, այն X դ. 30-40-ական թթ. հանդիսանում էր անկախ թագավորություն, որը նվաճում էր շրջակա մերձկասպյան երկրամասերը[6]: Ըստ Անանուն Զրուցագրի՝ Հայոց տերության մեջ

թյունն այլ սկզբնաղբյուրների հաղորդումների հետ, հնարավորություն են տալիս, ինչպես կտեսնենք, կատարել մի շարք էական եզրակացություններ:

[1] Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս,** Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 180:

[2] Քանի որ ձեռագրում Սմբատ Ա-ի խոսքերը դրված են առաջին դեմքով, ապա նվաճումներին վերաբերող հատվածը՝ ձևակերպված երրորդ դեմքով, ընդմիջարկություն է այլ հեղինակի կողմից, որը, դատելով տեքստերի նմանությունից, օգտվել է Անանուն Զրուցագրի երկից:

[3] Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս,** Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 180:

[4] Արաբերենում «g» տառի բացակայության պայմաններում հաճախ դրա փոխարեն օգտագործվում է «u» տառը: Պետք է նշել, որ կոնդակում անվանումները խիստ խեղաթյուրված են և, բացի այդ, առկա է արաբերենի և արաբական անվանաձևերի ազդեցությունը: Մասնավորապես, եթե Անանուն Զրուցագրի երկում արաբի անունը նշված է հայացրած Ռաճա ձևով, ապա կոնդակում պահպանվել է ավելի արաբերեն հնչող Ռաջա ձևը, Անանուն Զրուցագրի տեքստում նշված «զաւան Պարտաւայ» անունը ձեռագրում բերված է արաբական Պարդա (Բարդա-Բարդաա) ձևով, իսկ ձեռագրում բերված կոնդակի ընդունման թվականը նշված է նաև մահմեդական թվականով («տաճիկ թարիխն» («[ըստ] արաբական պատմության (իմա՛ թվականության))):

[5] Դժվարություն է հարուցում ձեռագրում Սասունի և Պելախանի միջև հիշատակվող Կերանի տեղադրությունը:

[6] Տե՛ս مسعودي, I, էջ 177-179, 205:

էր մտնում Շիրվանին հարևան ճիղբքը[1]՝ հանդիսանալով տերության արևելյան ծայրամասը: Կարող է լինել մեկ բացատրություն: Վերևում տեսանք, որ Արաբական խալիֆայությունն Աշոտ Բագրատունուն ճանաչել էր սկզբում իշխանաց իշխան, իսկ այնուհետև՝ թագավոր Արմինիա վարչական շրջանի տարածքում, որի մեջ էր մտնում նաև Շիրվանը: Այդ իսկ պատճառով, Սմբատ Ա-ն ժամանակակիցների կողմից ընկալվում էր որպես «բոլորից արևելեայցս գլխավոր»: Հավանորեն, հենց այդ իրողությունն է, որ հիմք է դարձել ձեռագրում Շիրվանի անվան հայտնվելու համար:

Անանուն Ջրուցագրի տեղեկությունները (հավելելով «Կոնդակ Սուրբ Աղբրկայ վանից Մշոյ» ձեռագրի հաղորդումներով) արտացոլում են Հայ Բագրատունիների տերության վարչաքաղաքական բաժանման հետևյալ պատկերը.

ա. «Ամենայն աշխարհին Հայոց»-ը Հայ Բագրատունիների տերությունն է, որ ընդգրկում էր՝ Հայքը, Վիրքը, Աղվանքը, մի քանի հայկական գավառ, որոնք մտնում էին հայկական տարբեր իշխանությունների կամ արաբական ամիրայությունների մեջ, սակայն, ամենայն հավանականությամբ, Սմբատ Ա-ի կողմից կցվել էին արքունի տիրույթներին,

բ. Սմբատ Ա-ն իրեն ենթարկեց տերության մեջ գտնվող բոլոր ամիրայություններին,

գ. Սմբատ Ա-ն Առբերանիի Բերկրի ամրոցը հանձնեց իրեն հավատարիմ մի արաբի, կայսիկների ձեռքում գտնվող Արճեշը[2]՝ Դարբանդից եկած մեկ այլ արաբի, Ծաղկոտնը՝ ուրիշ արաբի[3],

դ. Ութմանիկների ամիրայությունն ամբողջությամբ ենթարկվեց Սմբատ Ա-ին,

ե. Սմբատ Ա-ն իրեն հռչակեց Տիեզերակալ, Հայոց և Վրաց թագավոր:

Գուգարքի մեծագույն մասն Աշոտ Ա-ի օրոք արդեն վերածված էր արքունի տիրույթի՝ արքունի կառավարչի իշխանության ներքո[4]: Ինչ-

---

[1] Տե՛ս **Անանուն Ջրուցագիր**, էջ 189:

[2] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 83,157 և այլն:

[3] Մշո Սուրբ Աղբերիկ վանքի կոնդակի՝ արաբական ամիրայություններին վերաբերող հատվածում նշված է, որ Բերկրիի բերդը Սմբատ Ա-ն հանձնել էր Դարբանդից եկած Ռաճային (Ռաջապ), իսկ Ծաղկոտն գավառը՝ տվել մեկ այլ արաբի (էջ 180):

[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 142: Ա. Մելքոնյանը կարծում է, որ Գուգարքը Հայ Բագրատունիների տերությանն է կցվել Սմբատ Ա-ի օրոք (տե՛ս **Ա. Մելքոնյան,** Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 48-49):

պես կտեսնենք մեր ուսումնասիրության համապատասխան բաժնում՝ խնդրո առարկա ժամանակաշրջանում «Վրաց իշխանություն» ասելով հայ պատմիչները նկատի ունեն Կղարջքի կուրապաղատությունը, որտեղ իշխող Բագրատունիները Հայաստանի Բագրատունիների կողմից հռչակվել էին որպես «Վրաց իշխան», իսկ բուն Վիրքում գոյություն ունեին միմյանցից անկախ մի քանի իշխանություններ, որոնք ևս նվաճվել էին Հայ Բագրատունիների կողմից: Այն, որ Գուգարքի կենտրոնական և արևելյան հատվածի գավառները միացվել էին արքունի տիրույթներին, ցույց է տալիս նաև Հովհաննես Դրասխանակերտցու այն վկայությունը, թե Ատրպատականի Ափշին ամիրան ներխուժել է Վիրք և այնուհետև՝ Գուգարք[1]: Պատմիչը՝ միմյանցից առանձին հիշատակելով Վիրքն ու Գուգարքը, հստակորեն ներկայացնում է տիրող իրավիճակը: Ինչ վերաբերում է Տայքին, ապա այն պատկանում էր Հայ Բագրատունիներին, որտեղ ապաստանեց Ափշինի կողմից հալածվող Սմբատ Ա-ն[2]:

Ինչպես տեսանք, արքունի տիրույթներին էր կցվել նաև Ուտիքի մի մասը, որն ապացուցվում է նաև այլ սկզբնաղբյուրների հաղորդումներով:

Արաբ պատմիչները հաղորդում են, որ Սմբատ Ա-ի թագավորությունը տարածվում էր Պարտավից մինչև Կարնո քաղաք և Ջազիրայից ու Ատրպատականից մինչև Տրապիզոն[3]: Դեռևս Ա. Գրենը հանգել էր այն եզրակացության, որ Հայ Բագրատունիների տերության սահմանը հասնում էր Տրապիզոն[4]: Ամենայն հավանականությամբ, Սմբատ Ա-ի օրոք, երբ 893 թ. կնքվեց հայ-բյուզանդական պայմանագիրը, Տրապիզոնը հայ-բյուզանդական հարաբերություններում վերածվեց կարևոր առևտրական կենտրոնի: Ըստ ալ-Իսթախրիի՝ «նրանք (իմա՛ հայերը-Ա.Ե.) Ռումի երկիրը (իմա՛ Բյուզանդական կայսրություն-Ա.Ե.) մտնելու համար ունեն մի նավահանգիստ, որ հայտնի է Տարաբազունդահ (իմա՛ Տրապիզոն-Ա.Ե.) անունով, որտեղ հավաքվում են վաճառականները և [այնտեղից] մուտք գործում Ռումի երկիրը»[5]: Իբն Հաուկալը Տրապիզոնը համարում է Հայոց թագավորության մեջ մտնող դուռ կամ մուտք դեպի Բյուզանդիա[6]: Պետք է նշել, որ Տրապիզոնի՝ Հայ Բագրատունի-

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 180:
[2] Անդ, էջ 180-182:
[3] Տե՛ս **al-Istakhri,** էջ 188, **Ibn Haukal**, էջ 344:
[4] Տե՛ս **A. Грен,** նշվ. աշխ., էջ 78:
[5] **Àl-Istakhri**, էջ 188:
[6] Տե՛ս **Ibn Haukal,** էջ 344:

ների տերության մեջ մտնելու հարցը քննության առնելը դժվար է, քանի որ հայկական և բյուզանդական սկզբնաղբյուրները նման տեղեկություններ չեն պահպանել: Սակայն, քանի որ արաբական աղբյուրներում կա նման հիշատակություն, մենք այն շրջանցել չէինք կարող: Կարծում ենք, որ Տրապիզոնը հայերի համար Բյուզանդիայի հետ առևտրական հարաբերություններում ձեռք էր բերել կարևոր նշանակություն և, գտնվելով Հայոց տերությունից Բյուզանդիա ընթացող մայրուղու վրա, բառի բուն իմաստով դուռ էր հանդիսանում դեպի կայսրության խորքերը:

Ստեփան Տբեթցին հաղորդում է, որ Սմբատ Ա-ի տերության մեջ էին մտնում Վանանդը, Աշորնիքը (Արշարունիք)[1], Ապահունիքը, Ծաղկոտնը, Ճակատքը, Կոգովիտը՝ 2 ձորով, Շարուրը, Վասպուրականը՝ 12 ձորով, Վայոց ձորը՝ 4 ձորով, Դվինադաշտը՝ 3 ձորով, Գեղարքունիքը՝ 4 ձորով, Սյունիքը՝ 10 ձորով, Տաշիրքն ու Կողբոփորը[2]: «Ձոր»-ի տակ պետք է հասկանալ տարբեր իշխանությունների կազմում ստեղծված մանր իշխանությունները[3]: Չնայած վրաց պատմիչի տեղեկությունները խառնաշփոթ և թերի են, սակայն, ինչպես ցույց կտանք, օգնում են պարզաբանելու մի շարք կնճռոտ հարցեր:

Այսպիսով՝ Հայ Բագրատունիների տերությունը բուն հայկական հողերից բացի ընդգրկում էր Կղարջքի կուրապաղատությունը, Վիրքը, Կովկասյան լեռնաշղթայի արևմտյան հատվածի ցեղերին, Տփղիսի ամիրայությունը, Ծանարաց քորեպիսկոպոսությունը, Աղվանքը և ինչպես կտեսնենք, նաև Համշենը: Հայոց թագավորի գերիշխանությունն ընդունում էր Աբխազաց թագավորությունը:

Սմբատ Ա-ի օրոք նրա դեմ հանդես են գալիս Արծրունիները, Սյունիները և կայսիկները, սակայն Հայոց թագավորին հաջողվում է նրանց կրկին ենթարկել իր իշխանությանը:

X դ. սկզբին Հայոց տերության դեմ հանդես եկավ Աբխազաց թագավորությունը: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ այդ ժամանակ աբխազական զորքերը ներխուժում են Վիրք, Ծանարք և Գուգարք: Քանի որ այդ տարածքներին տիրում էր Հայոց թագավոր Սմբատ Ա-ն, Կղարջքի (Վրաց կոչված)[4] թագավոր Ատրներսեհն Աբխազաց թագավոր Կոնստանդին Գ-ին (893-9829) զգուշացնում է այդ քայ-

---

[1] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 40:

[2] Տե՛ս **Ստեփան Տրեթցի,-Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 91:

[3] Տե՛ս **Հ. Ութմազյան,** Սյունիքը IX-X դարերում, էջ 26-27, ծ. 2:

[4] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 504:

լից: Սակայն Աբխազաց թագավորը շարունակում է առաջխաղացումը, որին հետևում է Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը: Աբխազական զորքերը պարտություն են կրում, իսկ Կոստանդին Գ-ն գերվում է Կղարջքի Ատրներսեհ թագավորի կողմից ու հանձնվում Սմբատ Ա-ին: Այնուհետև հայկական զորքերը նվաճում են Աբխազաց թագավորությունը: Մասնավորապես, հիշատակվում է Գուրիայի (Վուրի աշխարհ) նվաճումը: Սմբատ Ա-ն այնտեղ կուսակալներ է կարգում: Որոշ ժամանակ անց Կոստանդին Գ-ն ընդունում է Սմբատ Ա-ի գերիշխանությունն ու ազատ է արձակվում[1]:

Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդմանը մի շարք կարևոր մանրամասներ է ավելացնում Անանուն Զրուցագրի հաղորդած տեղեկությունը: Ըստ պատմիչի՝ Սմբատ Ա-ն Աբխազաց Դատոս[2] (իմա՛ Կոստանդին Գ) թագավորի դստերը կնության է բերում իր որդի Մուշեղին և դրանից հետո որոշում տիրել իբրև թե Աբխազաց թագավորության մեջ մտնող Կանգարք, Գոգշեն, Ձայլցեղ, Կող և Արտահան գավառներին, որը և իրականացվում է: Դրա պատճառով Աբխազաց թագավորը ձերբակալում է Մուշեղին, իսկ Սմբատ Ա-ի զորքերը դիմում են հակահարձակման և հասնում Գորի քաղաքին, որտեղ գտնվում էր Դատոսը Մուշեղի հետ: Աբխազաց թագավորը բանակցությունների ժամանակ գերվում է, ազատում Մուշեղին և Սմբատ Ա-ին զիջում Կանգարքը, Գոգշենն ու Կողը: Հայկական զորքերը ներխուժում են Աբխազաց թագավորություն: Ի տարբերություն Հովհաննես Դրասխանակերտցու, որը հաղորդում է հայկական զորքերի կողմից Գուրիայի (Վուրի աշխարհ) նվաճման մասին, Անանուն Զրուցագիրը հիշատակում է նաև բուն Աբխազքի գրավումը (Նավհանաց աշխարհ)[3]: Մյուս կողմից, ի տարբերություն Հովհաննես Դրասխանակերտցու, ըստ որի՝ Աբխազաց թագավորին գերել է Կղարջքի թագավոր Ատրներսեհը, Անանուն Զրուցագիրը տեղեկացնում է, որ այդ արել է Վասպուրականի Գուրգեն իշխանը[4]: Մեր կարծիքով, Կղարջքի թագավորի չնչին դերակատարությունն է պատճառը, որ պատմիչը նրան պարզապես չի հիշատակում:

Խնդրո առարկա իրադարձությունների վերաբերյալ կարևոր տեղե-

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 202-204:

[2] Անանուն Զրուցագիրը շփոթում է Հայոց Սմբատ Ա և Աբաս թագավորների դեմ պատերազմած Աբխազաց Կոստանդին և Դատոս կամ Թևտաս թագավորներին (տե՛ս Անանուն Զրուցագիր, էջ 187, **Վարդան վարդապետ**, էջ 97-98):

[3] «Նավհանաց աշխարհ» անվանումը ցույց է տալիս, որ խոսքը Աբխազաց թագավորության ծովափնյա շրջանների մասին է, որտեղ գտնվող հայտնի նավահանգիստները ծովային առևտրական ուղիներով կապված էին սևծովյան այլ նավահանգիստների հետ:

[4] Տե՛ս **Անանուն Զրուցագիր,** էջ 189-193:

կություններ է հաղորդում նաև «Քարթլիի մատյան»-ը, ըստ որի՝ Կոստանդինն արշավում է Վիրք և նվաճում այն: Սմբատ Տիեզերակալն արշավանքի է ելնում, ետ նվաճում Վիրքը, պաշարում կարևոր նշանակություն ունեցող ամրոց Ուփլիսցխեն ու գրավում գրոհով: Դրանից հետո երկու թագավորները հաշտվում են, և Կոստանդինն ընդունում է Սմբատ Ա-ի գերիշխանությունը[1]:

Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ Սմբատ Ա-ն թագավորական ոսկե խույր է դնում Կոստանդին Գ-ի գլխին, արքայական հագուստներ հագցնում նրան և օգնական զորքով ուղարկում իր թագավորություն: Այնուհետև «ի բազում հնազանդութիւն և մտերմական ծառայութիւն համախոհութեան զինքն (իմա՛ Կոստանդին Գ-Ա.Ե.) արքային Սմբատայ բերէր սակս հայրաբուն նախախնամութեան նորա առ նա»[2]:

Անանուն Ձրուցագիրը կարևոր մի հաղորդում է պահպանել այն մասին, թե ովքեր էին մասնակցում Սմբատ Ա-ի աբխազական արշավանքին: Դրանից կարելի է բխեցնել Սմբատ Ա-ի տերության կազմի և վարչաքաղաքական բաժանման որոշ կարևոր մանրամասներ և առանձնահատկություններ: Պատմիչը արշավանքի մասնակիցների թվում հանվանե հիշատակում է Արևելից իշխան Սմբատին, Փառիսոսի իշխան Հմայակին, Աղձնիքի իշխան Գրիգորին, Գոռոզի իշխան Վասակին, Վայոց ձորի իշխան Ապուշամբին, Տայոց իշխան Գոռամին, Ճողբաց իշխանին, Տարոնի իշխան Գագիկին, Վասպուրականի իշխան Գուրգենին, Մոկաց իշխան Աշոտին, Անձևացյաց իշխան Համակարին, Կորդվաց իշխանին և Հայոց թագավորության մեջ գտնվող արաբական ամիրայություններին (ըստ պատմիչի՝ «ի աշխարհէն Պարսից այլք բազումք»): Ըստ որում՝ արշավանքին Գուրգեն Արծրունու հետ մասնակցելու էին եկել նաև Գնունի իշխաններ[3]: Վերջիններս դեռևս Աշոտ Մսակերի կողմից վերաբնակեցվել էին Տայքում[4], սակայն դատելով Թովմա Արծրունու հաղորդումներից՝ նրանց որոշ ներկայացուցիչներ մնացել էին Վասպուրականում[5]: Գնունիներից բացի Վասպուրականի Գուրգեն իշխանի հետ աբխազական արշավանքին մասնակցելու էին եկել նաև Քաջբերունի, Գաբեղենից, Ձյունական, Գազրիկյան և Գնթունի տոհմերի իշխաններ[6]:

Քարտեզագրելով այս անվանացանկի նախարարների և իշխաննե-

---

[1] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 32:
[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 204:
[3] Տե՛ս **Անանուն Ձրուցագիր,** էջ 189:
[4] Տե՛ս **Վարդան Վարդապետ**, էջ 83:
[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 230:
[6] Տե՛ս **Անանուն Ձրուցագիր,** էջ 189:

րի տիրույթները՝ տեսնում ենք, որ արշավանքին մասնակցում էին Հայոց տերության մեջ մտնող բոլոր երկրների և իշխանությունների զինված ուժերը, բացառությամբ Ծանարաց քորեպիսկոպոսության, որը ենթարկվել էր Կոստանդին Գ-ի արշավանքին: Աղվանքից աբխազական արշավանքին մասնակցում էր Ճողբաց իշխանը, որի իշխանությունը տեղադրվում է Լփինքից հյուսիս (Լփինքը տարածվում էր Կուր և Երասխ գետերի միախառնման վայրից մինչև Շամախի քաղաքի շրջանը)[1] Փիրսաղաթ գետի վերին հոսանքի ավազանում՝ Կապաղակից արևելք[2], և Արևելից իշխան կոչված Սմբատը:

Ինչ վերաբերում է Տարոնի իշխանությանը, ապա չնայած 898 թ. Թուղխի ճակատամարտում Սմբատ Ա-ի կրած պարտությանը և Տարոնի կորստին[3], Հայոց արքային հետագայում հաջողվել էր կրկին իր տերության մեջ մտցնել Տարոնի իշխանությունը, որի արդյունքում աբխազական արշավանքին մասնակցում էին Տարոնի երկու իշխանները՝ Գրիգորը («Աղձնեց» իշխան) և Գագիկը («Տարունո» իշխան):

Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը, որքան մեզ է հայտնի, դեռևս ոչ մի անգամ չի թվագրվել: «Քարթլիի մատյան»-ի տեղեկության համաձայն, այն տեղի է ունեցել 904 թ.[4]: Ընդհանուր առմամբ, այն տեղադրվում է 903-908 թթ. միջև[5]: Կարծիք է հայտնվել, որ հայ-աբխազական պատերազմը տեղի է ունեցել 905-907թթ. միջև[6] կամ մոտ 908 թ.[7]: Մեկ այլ տեսակետի համաձայն այդ իրադարձությունը տեղի է ունեցել 905 թ.[8]:

Ըստ պատմիչների տեղեկությունների՝ աբխազական արշավանքը տեղի է ունեցել Յուսուֆի 903 թ. արշավանքից հետո, երբ Սմբատ Ա-ն և Յուսուֆն առանց արյունահեղության հաշտվեցին[9]: Ինչպես տեսանք, աբխազական արշավանքին մասնակցում էր Վասպուրականի Գուրգեն

---

[1] Տե՛ս **Բ. Հարությունյան,** Լփինքի տեղադրության հարցի շուրջը,-«ԲԵՀ», 1981, թիվ 1, էջ 123:

[2] Տե՛ս **Բ. Հարությունյան,** Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Եր., 2001:

[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 366-368, **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 176-178:

[4] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 32: Տե՛ս "Очерки из истории Грузии, Абхазия (с древнейших времен до наших дней)", էջ 142-143:

[5] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 34:

[6] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 25:

[7] Տե՛ս **Ս. Բարխուդարյան,** Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում,-«ՊԲՀ», 1971, թիվ 1, էջ 68:

[8] Տե՛ս **C. Zuckerman,** À propos du livre des cérémonies, II, 48,-"Travaux et Mémoires", 13, Paris, 2000, էջ 544:

[9] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 200-202, **Ասողիկ,** էջ 163 և այլն:

իշխանը, որը արշավանքից վերադարձավ և արդյունքների մասին զեկուցեց իր գահերեց եղբայր Գագիկին[1]: Այսինքն՝ աբխազական արշավանքի ժամանակ Վասպուրականի գահերեց իշխան Աշոտ Արծրունին արդեն մահացել էր: Վասպուրականի Արծրունյաց թագավորության պատմության ուսումնասիրողներից Վ. Վարդանյանն Աշոտի մահը դնում է 904 թ. նոյեմբերի 13-ին[2]: Նա հենվում է Թովմա Արծրունու այն հաղորդման վրա, թե Աշոտը մահացել է 29 տարեկան հասակում, իսկ նրա տարիքը պետք է հաշվել Հայոց 325 թվականից (876)[3]: Սակայն, եթե հաշվի առնենք, որ 876 թ. ծնված Աշոտ Արծրունին մեկ տարեկան էր դառնալու 877 թ., ապա պարզ կդառնա, որ նրա 29-ամյակը լրանալու էր ոչ թե 904 թ., այլ 905 թ.[4]: Այդ է ցույց տալիս նաև պարզ թվաբանական հաշվարկը: Ըստ այդմ՝ նա մահացել է ոչ թե 904 թ. վերջին, այլ 905 թ. վերջին: Այստեղից էլ բխում է մի կարևոր հետևություն, որ Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը, որը պետք է տեղի ունեցած լիներ Աշոտ Արծրունու մահից հետո, 906 թ. ավելի վաղ տեղի ունենալ չէր կարող:

Պետք է նշել, որ աբխազական արշավանքից հետո մինչև Յուսուֆի 909 թ. ներխուժումը տեղի են ունենում մի քանի կարևոր իրադարձություններ: Ամենայն հավանականությամբ, 907 թ. Գագիկ Արծրունին գրավեց Ամյուկ բերդը, իսկ Սմբատ Ա-ն այն ետ նվաճեց և այնուհետև վաճառեց Գագիկին: Անանունը հաղորդում է, որ դրանից անմիջապես հետո Յուսուֆը խալիֆայի կողմից նշանակվեց Ատրպատականի և Հայաստանի ոստիկան[5]: Խոսքը 908 թ. մասին է, երբ Մուկթաֆի խալիֆան մահացավ, իսկ նրա հաջորդը հաշտվեց Յուսուֆի հետ ու վերջինիս նշանակեց ոստիկան[6]: Միևնույն ժամանակ՝ 908 թ., տեղի ունեցավ Հայ Բագրատունիների տերության պատմության մեջ վճռորոշ նշանակություն ունեցող մի իրադարձություն: Թերևս հենց Ամյուկ ամրոցի հետ կապված դեպքերի ազդեցության տակ Գագիկ Արծրունին խնդրեց Սմբատ Ա-ին իրեն հանձնել Նախճավանը՝ նույնիսկ ընդունելով իր մեղավորությունը այն կորցնելու մեջ: Արքայի մերժումը Գագիկին մղեց

---

[1] Տե՛ս **Անանուն Զրուցագիր,** էջ 195:

[2] Տե՛ս **Վ. Վարդանյան**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, էջ 59: Տե՛ս նաև **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը (պատմա-աշխարհագրական առումով), Եր., 1966, էջ 35, **Հարությունյան Հ.,** Հայաստանը IX-XI դարերում, էջ 50 և այլն:

[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 324:

[4] Աշոտ Արծրունու մահվան թվականը որոշելիս 905 թ. վրա կանգ են առել նաև Հ. Ութմազյանը (տե՛ս Սյունիքը IX-X դարերում, Եր., 1958, էջ 101) և Ա. Ալպոյաճյանը (տե՛ս Պատմական Հայաստանի սահմանները, էջ 157):

[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 434-438:

[6] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 206:

դեպի Յուսուֆը, որը նրան ընդունեց գրկաբաց և նրան «հանձնեց» Հայոց թագավորությունը[1]: Յուսուֆի կողմից Գագիկ Արծրունուն Հայոց թագավոր կարգելը տեղի ունեցավ 908 թ.[2]: Ստեփաննոս Օրբելյանը հաղորդում է, որ Յուսուֆի դեմ խալիֆայի կազմակերպած արշավանքից հետո, որին Սմբատ Ա-ն չմասնակցեց, Յուսուֆը կարողացավ կարճ ժամանակ անց հաշտվել արդեն նոր խալիֆայի հետ: Այնուհետև, նա զորքը պատրաստեց և սպասեց, մինչև որ անցնի ձմեռը, որպեսզի գարնանը ներխուժի Հայաստան: Հենց այդ ժամանակ՝ 908 թ., մահացավ Սյունյաց գահերեց Աշոտը[3], որի թաղմանը մասնակցում էր Սմբատ Ա-ն: Անցավ ձմեռը, և մյուս տարվա գարնանը Յուսուֆը ներխուժեց Հայաստան: Յուսուֆի արշավանքը պատմիչը դնում է Հայոց 358 թ., այսինքն՝ 909 թ.[4]:

Տեսնում ենք, որ հայ ուսումնասիրողների անորոշ թվագրումը հարցը թողնում է չլուծված, իսկ «Քարթլիի մատյան»-ի նշած թվականը անհնար է, քանի որ ցույց տվեցինք, որ աբխազական արշավանքը չէր կարող տեղի ունեցած լինել նախքան 906 թ.: Մյուս կողմից՝ դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից, Սմբատ Ա-ն Կոստանդին Գ-ի դեմ արշավանքի էր դուրս եկել անմիջապես, այսինքն՝ մեր համոզմամբ, Կոստանդին Գ-ի ներխուժումը և Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը տեղի են ունեցել նույն տարում: Մեր քննությունը ցույց տվեց, որ Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը պետք է տեղի ունեցած լիներ 905 թ.-ից հետո՝ 906-908 թթ. միջև, ըստ որում, ամենայն հավանականությամբ, Ամյուկ ամրոցի միջադեպը տեղի է ունեցել 907 թ., այսինքն՝ արդեն աբխազական արշավանքից հետո: Այս ամենից պետք է եզրակացնել,

---

[1] Անդ, էջ 212:

[2] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 442: «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 36:

[3] Ռ. Մաթևոսյանն այդ իրադարձությունը դնում է 906 թ. (տե՛ս Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 83), սակայն Ստեփաննոս Օրբելյանի հիշատակությունն այն մասին, որ նրա մահվանն հաջորդող գարնանը տեղի ունեցավ Յուսուֆի արշավանքը Հայաստան (909 թ.), ցույց է տալիս, որ այդ թվագրումը սխալ է: Հ. Ութմազյանը ճիշտ կերպով նշում է 908 թ. (տե՛ս Սյունիքը IX-X դարերում, էջ 102):

[4] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 184-185: Մշո Սուրբ Աղբերիկ վանքի կոնդակի մի տեղեկության համաձայն՝ 908 թ., Գագիկ Արծրունու թագավոր դառնալուց հետո, բախում էր հասունանում նրա (դաշնակցությամբ Յուսուֆ ամիրայի) և Սմբատ Ա-ի միջև, որից հնարավոր եղավ խուսափել Հովհաննես կաթողիկոսի միջնորդությամբ (տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս,** Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 182):

որ Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը տեղի է ունեցել 906 թ.[1]:

Այդ է վկայում նաև Ատենի Սբ. Սիոն եկեղեցու որմնանկարներից մեկի, որտեղ պատկերված են Սմբատ Ա-ն, նրա դուստրը և թագաժառանգը, Աբխազաց թագավոր Կոստանդին Գ-ն և նրա թագաժառանգը, թվագրումը 906 թ.-ով[2]: Այդ հանդիսավոր խմբանկարը, ամենայն հավանականությամբ, ստեղծվել է հենց Սմբատ Ա-ի աբխազական արշավանքից հետո:

908 թ., ինչպես տեսանք, Վասպուրականի Գագիկ իշխանն Ատրպատականի Յուսուֆ ոստիկանից թագ ստացավ, որով էլ ավարտվեց Հայ Բագրատունիների միասնական թագավորության շրջանը:

1.5. Աղվանից և Կղարջքի (Վրաց) թագավորությունների ստեղծումը: 890-ական թթ. Սմբատ Ա-ի կողմից թագադրվեցին նրան հպատակ Համամ Առանշահիկ և Ատրներսեհ Բագրատունի իշխանները: Այդ իրադարձությունները բխում էին Հայոց տերության հետ կապված քաղաքական զարգացումներից:

Համամ Առանշահիկի կողմից Աղվանից թագավորության վերականգնման վերաբերյալ տեղեկություն է պահպանել Մովսես Դասխուրանցին. «յերեք հարիւր երեսուն և վեց թուին (իմա՛ 887 թ.-Ա.Ե.) եղև Աշոտի Բագրատունւոյ նստուցանել զաթոռ թագաւորութեանն իւրոյ ի մէջ Հայաստանեայց...: Իսկ գալուստ Տաճկին ի Հայս և գրաւել զաշխարհն ընդ լծով ծառայութեան հարկաց թուականն Հայոց ՅԽԲ (իմա՛ 893 թ.-Ա.Ե.) լինէր...: Ապա բարեպաշտն Համամ որ և Աղուանից եղև թագաւոր, նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանս Աղուանից նորոգեաց, որպէս Աշոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւնն. այսք ի միում ժամանակի գործեցան»[3]:

Ատրներսեհ Բագրատունու՝ Վրաց թագավոր դառնալու վերաբերյալ վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին, ըստ որի՝ Սմբատ Ա-ն «կացուցանէ զնա (իմա՛ Ատրներսեհին-Ա.Ե.) թագաւոր Վրաց աշխարհին և երկրորդ իւրոյ տէրութեանն զնա հաստատէ»[4]:

Վրաց պատմիչ Դավթի որդի Սմբատը տեղեկացնում է, որ «Դավիթ կուրապաղատի որդի Ատրներսեհին դարձրեցին վրաց թագավոր» 888 թ. տեղի ունեցած դեպքերից (իմա՛ 888 թ. հայ-աբխազական բա-

---

[1] Պետք է նշել, որ այս թվականին է Ռ. Խոնելիան դնում հայ-աբխազական դաշինքի կնքումը (տե՛ս **Р. Хонелия**, Некоторые вопросы истории Абхазии и абхазов по армянским источникам,-«ՊԲՀ», 1965, թիվ 4, էջ 100):

[2] Տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունի թագավորների (Աշոտ I, Սմբատ I, Աշոտ I) բյուզանդական թագը,-«ՊԲՀ», 2001, թիվ 1, էջ 176:

[3] **Մովսես Կաղանկատվացի**, էջ 335:

[4] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 180-188:

խումը) հետո[1]: Ատրներսեհի թագադրության վերաբերյալ նույն տեղեկություններն են հաղորդում նաև վրացական այլ աղբյուրներ:

Ստեփաննոս Օրբելյանը հավաստում է, որ երբ Հայոց թագավորության մասնատման համար դուռ բանացին Արծրունիները և թագ ստացան Ատրպատականի ամիրայից (908 թ.), թագավոր դարձավ նաև Վրաց Ատրներսեհ Բագրատունի իշխանը, որից հետո «թագ կապեաց և Աղուանին Համամ»[2]: Ըստ որում՝ ինչպես հաղորդում է պատմիչը, Ատրպատականի ամիրա Յուսուֆն[3] առաջարկեց թագադրել նաև Սյունյաց Վասակ իշխանին, բայց վերջինս հրաժարվեց[4]: Ստեփաննոս Օրբելյանի հաղորդումը, որը լիովին տարբերվում է վերոհիշյալ հեղինակների տեղեկություններից, ցույց է տալիս, որ Աղվանից և Վրաց թագավորությունների վերականգնումը պետք է քննության առնել միևնույն համատեքստում: Սյունյաց պատմիչի հաղորդումը, ինչպես կտեսնենք, լույս է սփռում տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված մի կարևոր իրողության վրա:

Ն. Ադոնցը, անդրադառնալով Մովսես Դասխուրանցու վկայությանը, նշում է, որ ըստ պատմիչի՝ Համամի թագավորելը տեղի է ունեցել 893 թ.: Հեղինակը նշում է, որ դատելով Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններից՝ 893 թ. Համամը դեռևս թագավոր չէր: Այդ ժամանակ պատմիչը նրան անվանում է «մեծ իշխանն արևելից Համամ»[5]: Նա Հայոց թագավոր Սմբատ Ա-ի հրամանով գնում է բանակցելու արաբների հետ՝ Հայոց կաթողիկոս Գևորգին գերությունից ազատելու նպատակով[6]: Հովհաննես Դրասխանակերտցին և Մովսես Դասխուրանցին հաղորդում են, որ Հայոց կաթողիկոսը արաբների կողմից ձերբակալվել է 893 թ.[7]: Իսկ այն, որ վերջին իրադարձության հետ կապված Ասողիկը Համամին կոչում է թագավոր[8], Ն. Ադոնցը հակված է համա-

---

[1] Տե՛ս **Сумбат Давитис-дзе**, էջ 34:

[2] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 299:

[3] Ստեփաննոս Օրբելյանի երկում նշված է ոչ թե Յուսուֆը, այլ Ափշինը, որը, ամենայն հավանականությամբ, շփոթմունք է: Խնդիրն այն է, որ պատմիչի հիշատակած իրադարձությունները տեղի են ունեցել 908 թ., երբ Ատրպատականում իշխում էր Յուսուֆը:

[4] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 299:

[5] Քանի որ Աղվանքը մտնում էր Հայոց թագավորության մեջ, ուստի նրա իշխան Համամին տրվող «Արևելից մեծ իշխան» կոչումից պետք է ենթադրել, որ Հայոց թագավորության կազմում «Արևելից» էր կոչվում Աղվանից իշխանությունը (տե՛ս **Ա. Եղիազարեան**, Աղուանից թագաւորութեան պատմութեան որոշ խնդիրների շուրջ, էջ 167, 170):

[6] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 174:

[7] Անդ, էջ 172-174, **Մովսես Կաղանկատվացի,** էջ 335:

[8] Տե՛ս **Ասողիկ,** էջ 161:

ռելու հետին թվով արված դիտարկում: Համամը թագավոր է դարձել 893 թ. հետո[1]:

Ա. Կրիմսկին Համամի կողմից Աղվանից թագավորության վերականգնումը դնում է 885 թ.[2]: Նույն տեսակետն է արտահայտում նաև Բ. Ուլուբաբյանը: Նա Մովսես Դասխուրանցու վերոհիշյալ հաղորդումը քննության է առնում ոչ ամբողջությամբ, այլ հետևյալ ձևով. «բարեպաշտն Համամ նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանս Աղուանից նորոգեաց, որպէս Աշոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւնն. այսք ի միում ժամանակի գործեցան»: Այս հատվածի հիման վրա նա Համամի թագավոր դառնալը թվագրում է 880-ական թվականներով, այսինքն՝ Աշոտ Ա-ի կողմից Հայոց թագավորության վերականգնման հետ միաժամանակ[3]: Վերջին թվագրումը մուտք է գործել նաև «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակություն[4]: Հ. Աճառյանը և Կ. Յուզբաշյանը կարծում են, որ 893 թ. Համամն արդեն թագավոր էր[5]: Ս. Բարխուդարյանը Համամի թագավոր դառնալը դնում է 885-894 թթ. միջև[6]: Աղվանից թագավորության վերականգնումն ընդհանուր առմամբ IX դ. երկրորդ կեսին է դնում Ա. Տեր-Ղևոնդյանը[7]: Ա. Հակոբյանը Աղվանից թագավորության վերականգնումը դնում է IX դ. վերջին[8]: Վրաց պատմագիտության մեջ Աղվանից թագավորության վերականգնումը թվագրված է 893 թ.-ով[9]: Կ. Ցուկերմանը Համամի թագավոր հռչակվելը տեղադրում է 894 թ. վերջին կամ 895 թ. սկզբին[10]: Ադրբեջանցի պատմաբան Զ. Բունիաթովն այդ իրադարձությունը թվագրում է 866 թ.-ով (ամենայն հավանականությամբ, պետք է լինի 886)[11]:

---

[1] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 512:

[2] Տե՛ս **À. Êõûìñêèé,** Ñòðàíèöû èç èñòîðèè ñåâåðíîãî èëè êàâêàçñêîãî Àçåðáàéäæàíà (êëàññè÷åñêîé Àëáàíèè). Ø åêè,-տե՛ս Ñáîðíèê « Ï àìÿòè àêàäåìèêà Í . ß. Ì àððà (1864-1934)», Ì .-Ë., 1938, էջ 376:

[3] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան,** Խաչենի իշխանությունը, էջ 75-77, 80:

[4] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 25:

[5] Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Եր., 1948, էջ 25, Ê. Юзбашян, նշվ. աշխ., էջ 72:

[6] Տե՛ս **Բարխուդարյան Ս.**, Արցախի, Շաքիի եւ Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում, էջ 68:

[7] Տե՛ս **A. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 239:

[8] Տե՛ս **Ա. Յակոբեան,** Խաչէն-Խօխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը Թ.-ԺԳ. դարերում, էջ 80:

[9] Տե՛ս "Очерки Истории Грузии", т. II, էջ 274:

[10] Տե՛ս **C. Zuckerman,** À propos du livre des cérémonies, II, 48,-"Travaux et Mémoires", 13, Paris, 2000, էջ 568:

[11] Տե՛ս **З. Буниятов,** նշվ. աշխ., էջ 189:

Սկզբում քննության առնենք Մովսես Դասխուրանցու հաղորդումը՝ խնդրո առարկա շրջանի իրադարձությունների ժամանակագրության համատեքստում: Նախ՝ Աշոտ Բագրատունին վերականգնում է Հայոց թագավորությունը, իսկ այնուհետև, տարիներ անց, ըստ պատմիչի՝ 893 թ., արաբները հարկատու են դարձնում Հայոց թագավորությունը: Հայտնի է, որ 893 թ. Դվինում երկրաշարժ տեղի ունեցավ[1], որից հետո Հայաստան արշավեց Ատրպատականի Ափշին ամիրան: Դողսի ճակատամարտում հայկական բանակը հաղթանակ տարավ, որից հետո Ափշինը Սմբատ Ա-ից խնդրեց վճարել արքունի հարկերը, և Սմբատը համաձայնեց[2]: Փաստորեն, պատմիչի «գալուստ Տաճկին ի Հայս և գրաւել զաշխարհն ընդ լծով ծառայութեան հարկաց թուականն Հայոց ՅԽԲ լինէր» հաղորդումը վերաբերում է նշված դեպքերին: Այդ դեպքերից հետո, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, Արևելից մեծ իշխան Համամը Սմբատ Ա-ի հրամանով փորձեց գերությունից ազատել Հայոց կաթողիկոսին: Եթե համադրենք Մովսես Դասխուրանցու և Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունները, ապա կարող ենք արձանագրել, որ 893 թ.՝ Դողսի ճակատամարտի ժամանակ և դրանից հետո, երբ Համամը բանակցությունների մեջ էր մտել արաբների հետ՝ կաթողիկոսին ազատելու համար, նա դեռևս թագավոր չէր: Սակայն նույն կամ, որ ավելի հավանական է, արդեն 894 թ., դատելով Մովսես Դասխուրանցու հաղորդումից՝ նա թագավոր դարձավ: Ըստ պատմիչի, երբ Հայաստանը հարկատու դարձավ, Համամը վերականգնեց Աղվանից թագավորությունը: Ըստ որում՝ պատմիչը հավելում է, որ Համամը վերականգնել է Աղվանից թագավորությունը, ինչպես Աշոտ Բագրատունին՝ Հայոց թագավորությունը և «այսք ի միում ժամանակի գործեցան»: Վերջին տեղեկության հետ կապված Ա. Հակոբյանը հիմնավոր կերպով ցույց է տվել, որ այն ընդմիջարկություն է և, որ այնտեղ հստակ նշված է եղել վերականգնման թվականը[3]: Այս ամենի հիման վրա պետք է բխեցնել, որ Համամը թագավոր է դարձել 893 թ. դեպքերից հետո՝ 894 թ., որը, մեր կարծիքով, կապված էր նրա ջանքերով Հայոց կաթողիկոսին գերությունից ազատելու իրողության հետ: Կարծում ենք, որ 894 թ. Համամին թագադրել է Սմբատ Ա-ն, քանի որ նա Դողսի ճակատամարտում հաղթանակ էր տարել և իրեն շատ վստահ էր զգում: Խնդիրն այն է, որ

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 164-166, Թովմա Արծրունի և Անանուն, էջ 356-358:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 172:

[3] Տե՛ս **Ա. Акопян,** Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Е., 1987, էջ 203-210:

Համամին այդ ժամանակ կարող էին թագադրել կա՛մ Սմբատ Ա-ն, կա՛մ Ափշինը: Անկասկած, 893 թ. պարտություն կրած և Սմբատ Ա-ի հետ հաշտված Ափշինը Համամին թագադրել չէր կարող: Համամի կողմից ինքն իրեն թագավոր հռչակելու հնարավորությունը ևս վերոհիշյալ պայմաններում անհնար էր, քանի որ նա Հայոց թագավորի հպատակն էր: Ինչ վերաբերում է Սմբատ Ա-ի կողմից Համամին թագադրելու հարցին, ապա, ինչպես կտեսնենք, Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհը Սմբատ Ա-ից թագ ստացավ հավատարմության համար, ուստի նույն պատճառով Հայոց թագավորը կարող էր թագադրել նաև Համամին:

Ինչ վերաբերում է Կղարջքի Ատրներսեհ կուրապաղատի թագադրությանը, ապա այդ հարցում ամեն ինչ կարծես թե ավելի պարզ է: Հայտնի է, որ Կղարջքի Բագրատունիներն Աշոտ կուրապաղատի օրոք (մահ.՝ 826 թ.) Բյուզանդիայի կողմից ստացել էին կուրապաղատի աստիճան[1]: Այդ աստիճանով էլ նրանք հանդես են գալիս հետագայում՝ մինչև Ատրներսեհի թագադրությունը[2]: Ըստ Ի. Ջավախիշվիլու՝ Ատրներսեհի թագադրությունը տեղի է ունեցել 888 թ., իսկ ըստ Ե. Տակաիշվիլու՝ 890 թ.[3]: Մ. Բրոսսեն, Կ. Թումանովը և Ս. Երեմյանն այդ իրադարձությունը թվագրում են 888 թ.[4], իսկ Մ. Չամչյանցը, Հ. Մարկվարտը և Ն. Ադոնցը կարծում են, որ Ատրներսեհի թագադրությունը տեղի է ունեցել 899 թ.[5]: Ատրներսեհի թագադրությունը մոտավորապես տեղադրվել է նաև 906-908 թթ. միջև[6]:

Վրաց թագավորության վերականգնման թվականը ճշգրտելու համար հիմք ենք ընդունում այդ դեպքերի ժամանակակից Հովհաննես Դրասխանակերտցու երկում նկարագրված՝ 890-ական թթ. իրադարձությունների ժամանակագրական հերթականությունը: Ըստ որում՝ Սմբատ Ա-ի կողմից Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհի թագադրության մասին մանրամասն տեղեկություններ է պահպանել միայն Հովհաննես

---

[1] Տե՛ս **Վարդան վարդապետ,** էջ 83-84:

[2] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին,** էջ 15-17:

[3] Տե՛ս "Очерки Истории Грузии", т. II, էջ 310:

[4] Տե՛ս **M. Brosset,** Histoire de la Georgie, I, St.-Petersbourg, Imprimerie de L'Academie Imperiale des science, 1849, էջ 273-279, Toumanoff C., The Bagratids of Iberia from the eight to the eleventh Century.-"Le Museon", LXXIV, Idem. Studies, Louvain, 1961, էջ 21-25, **С. Еремян,** Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке,- «Լրաբեր (հաս. գիտ.)», 1971, թիվ 3, էջ 5, ծանոթ. 7:

[5] Տե՛ս **Մ. Չամչեանց**, նշվ. աշխ., էջ 727, **Յ. Մարկուարտ**, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 148 (ներդիր), **Ն. Ադոնց,** Երկեր, հ. Ա, էջ 501: Տե՛ս նաև **Մ. Ճանաշեան**, Դաւիթ կիւրապաղատ (պատմական ուսումնասիրութիւն), Վենետիկ-Ս. Ղազար, 1972, էջ 13-14:

[6] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 31-32:

Դրասխանակերտցին: Ըստ նրա՝ Դվինի 893 թ. երկրաշարժից հետո Ափշինը հարձակվեց Հայոց թագավորության վրա, սակայն պարտություն կրեց Դողսի ճակատամարտում[1]: Այնուհետև Վասպուրականի Աշոտ իշխանը (895-905) լքում է Սմբատ Ա-ին և մեկնում Ափշինի մոտ[2]: Դրանից հետո, թերևս Սմբատ Ա-ի օգնությամբ[3], Վասպուրականին տիրում է Գագիկ Ապումրվանը, որը ձերբակալում է Աշոտին և նրա երկու եղբայրներին[4]: Տարոնի Դավիթ իշխանը մահացավ Դվինի երկրաշարժից երկու տարի անց՝ 895 թ.[5], որից հետո Ամիդի ամիրան՝ հաղթելով նրան փոխարինած Գուրգենին՝ տիրեց Տարոնի իշխանությանը[6]: Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու տեղեկություններից՝ վերոհիշյալ իրադարձությունները տեղի են ունեցել 895 թ.: Տարոնն ազատագրելու համար, թերևս 896 թ., Սմբատ Ա-ն արշավանք կազմակերպեց Ամիդի ամիրայի դեմ: Հայոց բանակը Գագիկ Ապումրվանի դավաճանության պատճառով ծանր պարտություն կրեց[7]: Օգտվելով Սմբատ Ա-ի պարտությունից՝ Հայաստան է ներխուժում Ափշինը[8]: Թերևս, այդ իրադարձությունը տեղի է ունենում 897 թ.[9], քանի որ նույն տարվա վերջին (ձմռանը) մահացավ Գևորգ կաթողիկոսը (877-897)[10]: Հաջորդ կաթողիկոսը՝ Մաշտոցը (898) մահացավ յոթ ամիս գահակալելուց հետո[11]: Քանի որ Գևորգ կաթողիկոսը մահացել էր 897 թ. վերջին, իսկ Մաշտոցը՝ կաթողիկոս դարձել 898 թ. գարնանը[12], ուստի՝ Մաշտոցի գահակալությունը պետք է ավարտված լինի 898 թ. վերջին, որից հետո կաթողիկոս դարձավ Հովհաննես Դրասխանակերտցին (898-929): Այդ տարի կառուցվեց արքայանիստ Երազգավորսի եկեղեցին: Ամենայն հավանականությամբ, արդեն 899 թվականին է վերաբերում Հովհաննես Դրասխանակերտցու այն վկայությունը, որ Սմբատ Ա-ն՝ գնա-

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 172:
[2] Անդ, էջ 174:
[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 362-364, **Անանուն Զրուցագիր**, էջ 171:
[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 176:
[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 356-358:
[6] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 176:
[7] Անդ, էջ 176-178: Ըստ Մովսես Դասխուրանցու՝ Սմբատ Ա-ի արշավանքն Ամիդի ամիրայության դեմ տեղի է ունեցել 893 թ. դեպքերից չորս տարի անց, այսինքն՝ 896/897 թ. (տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 336):
[8] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 180-184
[9] Ըստ Մովսես Դասխուրանցու՝ արշավանքը տեղի է ունեցել 897 թ. (տե՛ս Մովսես Կաղանկատվացի, էջ 337): Ըստ պատմիչի՝ նույն թվականին վախճանվեց Գևորգ կաթողիկոսը (անդ):
[10] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 184:
[11] Անդ, էջ 186:
[12] Անդ:

հատելով Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհի հավատարմությունը՝ նրան թագադրում է[1]: Ըստ որում՝ Հայոց արքան նրան հռչակում է «թագաւոր Վրաց աշխարհին»[2], թեև նա Վիրքին դեռ չէր տիրում[3]: Կարևոր է այն, որ հաղորդելով Ատրներսեհի թագադրության մասին, որին հետևում է Ափշինի արշավանքը, թերևս, 900 թ., պատմիչը նրան դարձյալ կուրապաղատ է կոչում[4]: Խնդիրն այն է, որ Ատրներսեհին շնորհած թագը լուրջ նշանակություն չուներ, սակայն, ինչպես կտեսնենք, հետագայում քաղաքական բացասական հետևանքներ ունեցավ:

Ափշինը որոշ ժամանակ ասպատակելով Հայաստանը և Վիրքը, ինչպես նաև փորձելով խաբեությամբ ձերբակալել Սմբատ Ա-ին՝ հեռանում է Ատրպատական՝ Դվինում թողնելով իր որդուն և մեծ ներքինապետին: Տայքում ամրացած Սմբատ Ա-ն վերադառնում է, հանդիպում մեծ ներքինապետին և հաշտվում նրա հետ, որից հետո Ափշինի որդուն նա շուրջ մեկ տարի ռոճիկ էր վճարում[5]: Ռոճիկ վճարելու մեկ տարին, ամենայն հավանականությամբ պետք է հաշվել 900 թվականի կեսերից: Այնուհետև, հավանորեն, 901 թ. մեծ ներքինապետը հեռանում է Հայաստանից՝ Սմբատ Ա-ին հանձնելով նրա որդի Աշոտին և մյուս որդի Մուշեղի կնոջը, որոնք պատանդ էին պահվում նրա մոտ: Այդ պատճառով, 901 թ. Ափշինը կրկին որոշում է արշավել Հայաստան, սակայն ճանապարհին մահանում է[6]:

Ժամանակագրական վերոհիշյալ ճշգրտումներից պարզ է դառնում, որ Կղարջքի Ատրներսեհ կուրապաղատի թագադրությունը Սմբատ Ա-ի կողմից տեղի է ունեցել 899 թ.:

Ճշգրտելով Համամի և Ատրներսեհի թագադրությունների թվականները՝ արձանագրենք նաև, որ Սմբատ Ա-ի կողմից նրանց տրված թագերը, ընդհանուր առմամբ, քաղաքական լուրջ նշանակություն չունեին: Ինչպես տեսանք, Ատրներսեհի համար այդ իրենից ներկայացնում էր միայն Հայոց թագավորության աստիճանակարգում երկրորդ տեղի ամ-

---

[1] Անդ, էջ 186-188:

[2] Անդ, էջ 188:

[3] Տե՛ս **Յ. Մարկուարտ,** Հայ Բագրատունեաց ծիւղագրութիւնը, էջ 138, **Ն. Ադոնց,** Երկեր, հ. Ա, էջ 504, **Ա. Եղիազարյան,** Կղարջքի կյուրոպաղատությունը և Վիրքը հայ Բագրատունիների տերության կազմում,-Պատմամշակութային ժառանգության մատենաշար, «Հուշարձան տարեգիրք», Զ, 2010, էջ 209-216:

[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 188:

[5] Անդ, էջ 190:

[6] Անդ, էջ 190-192: Ափշինի մահը Թովմա Արծրունին դնում է 898 թ. (տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 376), որը սխալ է: Ըստ պատմիչի՝ Ափշինի մահից հետո միայն վախճանվեց Գևորգ կաթողիկոսը (անդ): Արծրունյաց պատմիչի նշված հաղորդումը պարունակում է ժամանակագրական սխալներ:

րագրում: Այդ իսկ պատճառով Հովհաննես Դրասխանակերտցին Ատրներսեհին շարունակում է կոչել կուրապաղատ, իսկ Համամին՝ Արևելից մեծ իշխան, քանի որ թագավոր դառնալուց հետո նրանց կարգավիճակը Հայոց թագավորության համակարգում չէր փոխվել: Հ. Բարթիկյանը ցույց է տվել, որ Հայոց թագավորի համար նրանք հանդիսանում էին «որդի» և հպատակ[1]:

Արդ, անդրադառնանք Ստեփաննոս Օրբելյանի հաղորդմանը: Այստեղ առաջին հայացքից ամեն ինչ պարզ է: Վրաց և Աղվանից թագավորությունների վերականգնումը տեղի է ունեցել 908 թ.՝ Վասպուրականի թագավորության ստեղծումից հետո: Ըստ որում՝ Աղվանից թագավորությունը վերականգնվել է Վրաց թագավորության վերականգնումից հետո: Պատմիչի հաղորդումը, սակայն, լուրջ հակասություն է ծնում, քանի որ Համամն ու Ատրներսեհը թագադրվել էին ոչ թե Վասպուրականի թագավորության հիմնադրումից (908 թ.) հետո, այլ հաջորդաբար՝ 894 թ. և 899 թ.: Մյուս կողմից, եթե հավաստի է պատմիչի հաղորդած տեղեկությունը, ապա մենք դրանով կարող ենք կատարել կարևոր բացահայտում:

Եթե Համամը թագավոր է դարձել 894 թ., իսկ Ատրներսեհը՝ 899 թ., ապա կարելի է ենթադրել, որ սխալ է Սյունյաց պատմիչի տեղեկությունն այն մասին, որ այդ իրադարձությունները տեղի են ունեցել 908 թ. կամ դրանից հետո: Մյուս կողմից տեսանք, որ Հովհաննես Դրասխանակերտցին՝ պատմելով Սմբատ Ա-ի կողմից Ատրներսեհի թագադրության մասին, այնուհետև անմիջապես նրան դարձյալ կուրապաղատ է կոչում: Ապա, նկարագրելով 902-903 թթ. դեպքերը, պատմիչն Ատրներսեհին կրկին որպես թագավոր է հիշատակում[2]: Կարծիք է հայտնվել, որ Ափշինի 900 թ. արշավանքը Հայաստան տեղի է ունեցել Սմբատ Ա-ի կողմից Ատրներսեհի թագադրության պատճառով, քանի որ թագադրության իրավունք ուներ միայն խալիֆան[3]: Եթե հիմք ընդունենք Ափշինի արշավանքի այդ միանգամայն հնարավոր դրդապատճառը, ապա կարող ենք առանց երկմտելու կարևոր եզրակացություն անել: Ափշինից Սմբատ Ա-ի կրած պարտությունից հետո Ատրներսեհի, ինչպես նաև Համամի թագադրությունները, անկասկած, կորցրել էին իրենց նշանակությունը: Հնարավոր է նաև, որ հենց Սմբատ Ա-ն էր պարտությունից հետո հրաժարվել նրանց թագավոր ճանաչելուց: Այդ պատճառով, միայն

---

[1] Տե՛ս **Հ. Բարթիկյան,** Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ.,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1996, թիվ 2, էջ 27-28:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 200:

[3] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 32:

Ափշինի մահից հետո է, որ Հովհաննես Դրասխանակերտցին Ատրներսեհին կրկին թագավոր է կոչում:

Ստեփաննոս Օրբելյանի հիշատակությունն ունի մի կարևոր նշանակություն: Վասպուրականի թագավորության ստեղծումը նա դիտարկում է որպես Հայոց թագավորության մասնատման գործընթացի սկիզբ, որին հաջորդեցին Վրաց և Աղվանից թագավորությունների ստեղծումը: Եթե հիմնվենք պատմիչի հաղորդման վրա, կարող ենք կատարել կարևոր եզրակացություններ: 908 թ. Յուսուֆը լուրջ քայլեր է կատարում Հայոց թագավորությունը մասնատելու և թուլացնելու ուղղությամբ: Այդ նպատակով նա թագադրում է Գագիկ Արծրունուն[1]: Սյունյաց իշխանը Յուսուֆի առաջարկած թագից հրաժարվում է: Հույժ կարևոր տեղեկություն է պահպանել Ասողիկը, որը, խոսելով 908 թ. իրադարձությունների մասին, տեղեկացնում է, որ Յուսուֆ ամիրայի մոտ «երթեալ Արտներսեհ Վրաց թագաւոր և Գագիկ իշխան Վասպուրականի» ու այլ հայ իշխաններ[2]: Փաստորեն, ի տարբերություն Հովհաննես Դրասխանակերտցու, համաձայն որի՝ Ափշինի մոտ գնացել է Գագիկ Արծրունին և թագ ստացել[3], Ասողիկը հաղորդում է, որ Յուսուֆի մոտ է գնացել նաև Ատրներսեհ Բագրատունին: Կարծում ենք, որ Յուսուֆին հարած Ատրներսեհ Բագրատունուն (անկասկած, նաև Համամին) հնարավոր էր բավարարել միայն թագավորական թագով, քանի որ նա արդեն այդպիսի թագ ստացել էր 899 թ., սակայն Ափշինի 900 թ. արշավանքը և Ատրներսեհին Վրաց թագավոր հռչակած Սմբատ Ա-ի պարտությունն ի չիք էին դարձրել այդ թագը: Նման ճակատագիր պետք է բաժին հասած լիներ նաև Համամի թագին: Նշենք նաև այն իրողությունը, որ Յուսուֆի 909 թ. արշավանքի ժամանակ, դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից, Սմբատ Ա-ն օգնություն չստացավ ոչ Ատրներսեհից և ոչ էլ Համամից, որը պետք է հետևանքը լիներ այն իրողության, որ նրանք հարել էին Յուսուֆին: Հայոց թագավորը ստիպված ապաստանեց Աբխազաց թագավորությունում[4]: Այն, որ շատ հավանական է Ատրներսեհի և Համամի թագադրությունը Յուսուֆի կողմից, ցույց է տալիս թեկուզ այն փաստը, որ վերջինս թագ էր առաջարկել նաև Սյունյաց Վասակ իշխանին: Այսինքն՝ Հայոց թագավորությունը մասնատելու նպատակի առումով Յուսուֆի համար ոչ մի խնդիր չկար Գագիկ Արծրունուց և Վասակ Սյունուց բացի թագ առաջարկելու նաև Ատրներսեհին և Համամին:

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 212:
[2] Տե՛ս **Ասողիկ**, էջ 164:
[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 212:
[4] Անդ: Տե՛ս նաև “Матиане Картлиса”, էջ 32:

Այսպիսով, Ատրներսեհի թագ ստանալը Յուսուֆից կարելի է բխեցնել սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից, մինչդեռ Համամի՝ Յուսուֆից թագ ստանալը նման հիմնավորում չի ստանում: Սակայն, այդ իրադարձությունը 908 թ. ավելի ուշ տեղի ունենալ չէր կարող, քանի որ արդեն դրանից հետո Յուսուֆը սկսել էր իր կողմն անցած իշխանների նկատմամբ բռնություններ իրականացնել, որի հետևանքով նրանից հեռացան Գագիկ Արծրունին և այլ իշխաններ[1]: Ուստի արձանագրենք միակ հնարավոր եզրակացությունը. Համամը թագ է ստացել Յուսուֆից 908 թ.՝ Ատրներսեհի հետ միասին: Ասողիկի մեկ այլ արժեքավոր տեղեկության համաձայն, երբ Աշոտ Երկաթը Հայաստանը մաքրեց թշնամուց, նա «գտանէ զծառայս հօր իւրոյ թագաւորեալ. զինքն անուանեաց Շահանշահ, այսինքն թագաւորաց թագաւոր»[2]: Ինչպես հաղորդում է Վարդան վարդապետը, խոսքը մասնավորապես Աշոտ Երկաթի հորեղբորորդի Աշոտի, Գագիկ Արծրունու, Ատրներսեհ (հեղինակի տեղեկության մեջ՝ Ներսեհ) Բագրատունու և, թերևս, նաև Համամ Առանշահիկի մասին է: Եվ Աշոտը «կոչեցաւ ի վերայ նոցա Շահնշահ (իմա՛ թագավորների թագավոր-Ա.Ե.)»[3]: Ասողիկի հաղորդման տրամաբանությունը պարզ է: Թեև, օրինակ՝ Համամն ու Ատրներսեհը թագ էին ստացել Սմբատ Ա-ից, դրանով նրանց միջև հարաբերությունները չէին փոխվել, և ավատատիրական աստիճանակարգի առումով Համամն ու Ատրներսեհը շարունակում էր դիտարկվել որպես «ծառա» Հայոց թագավորի համար: Բայց Ասողիկի հաղորդումն ունի ևս մեկ կարևոր կողմ: «Գտանէ» բառը ցույց է տալիս, որ կարծես թե Սմբատ Ա-ի «ծառաներն» առանց նրա հավանության էին թագավոր հռչակվել, ավելի ճիշտ՝ այլ տիրակալների կողմից: Ահա՛, այստեղ, մեր համոզմամբ, թաքնված է կարևոր իրողությունը: 908 թ. Յուսուֆը, բացի Վասպուրականի Գագիկ իշխանից, ճանաչել է նաև Կղարջքի Ատրներսեհի և Աղվանից Համամի թագավորությունները:

Վերոհիշյալ տեսակետի հաստատման համար անհրաժեշտ է պատասխանել ևս մեկ հարցի: Եթե Ատրներսեհը, փաստորեն, լքել է ժամանակին իրեն թագադրած Սմբատ Ա-ին, ապա ինչո՞ւ է Հովհաննես Դրասխանակերտցին նրա հասցեին արդեն Աշոտ Բ-ի օրոք դրվատանքի խոսքեր ասում[4]: Պատմիչի տեղեկություններից հայտնի է, որ Ատրներսեհն

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 228-238:

[2] Տե՛ս **Ասողիկ**, էջ 169-170: Տե՛ս նաև **Մխիթար Անեցի,** Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրութեամբ Հ. Մարգարեանի, Ե., 1983, էջ 116-117:

[3] Տե՛ս **Վարդան վարդապետ,** էջ 93:

[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 247:

առաջին անգամը չէ, որ լքում էր Սմբատ Ա-ին: Վերջինիս 906 թ. աբխազական արշավանքից հետո, դժգոհ լինելով գերված Աբխազաց թագավորի ազատ արձակման փաստից, Ատրներսեհը դավադրություն էր կազմակերպել Հայոց թագավորի դեմ, սակայն պատժից խուսափել էր միայն անձնատուր լինելով և որդուն պատանդ տալով[1]: Կարծում ենք, որ դրվատանքի խոսքերի պատճառն այն է, որ Ատրներսեհն օգնություն էր ցուցաբերել արաբների դեմ պայքարող թագաժառանգ Աշոտին[2], իսկ վերջինիս՝ թագավոր դառնալուց հետո՝ ընդունել նրա գերիշխանությունը[3]: Պատմիչը նման վերաբերմունք ունի նաև Գագիկ Արծրունու նկատմամբ, երբ Յուսուֆից թագ ստանալուց հետո պախարակում է նրան[4], իսկ Յուսուֆից հեռանալուց հետո՝ գովաբանում[5]:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ Հայոց թագավորության Արևելից մեծ իշխան Համամը Սմբատ Ա-ի կողմից թագադրվել է 894 թ., իսկ Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհ Բագրատունին՝ 899 թ.: Ատրպատականի ամիրա Ափշինը, որը պարտություն էր կրել Դողսի ճակատամարտում, Համամի թագադրությունից հետո որևէ քայլ անել չէր կարող, սակայն, Ատրներսեհի թագադրությունը նրա համար պատճառ դարձավ 900 թ. արշավանք կատարելու դեպի Հայաստան: Սմբատ Ա-ն պարտություն կրեց, իսկ նրա կողմից Արևելից մեծ իշխանին և Կղարջքի կուրապաղատին տրված թագերն ի չիք դարձվեցին: 908 թ. Հայոց թագավորին հպատակ մի շարք իշխաններ, այդ թվում՝ Գագիկ Արծրունին, Ատրներսեհ Բագրատունին և Համամ Առանշահիկը, հարում են Ատրպատականի Յուսուֆ ամիրային: Վերջինս, Հայոց թագավորությունը մասնատելու և թուլացնելու նպատակով, թագադրում է նրանց:

1.6. Հայ Բագրատունիների «տերություն»-ը: Հայ Բագրատունիների թագավորությունն Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի օրոք մենք անվանում ենք տերություն, քանի որ այն ուներ տերությանը բնորոշ հատկանիշները: Ընդհանուր առմամբ, ներկայիս ընկալմամբ, տերություն են կոչվում այն պետությունները, որոնք ազդեցիկ դերակատարություն ունեն միջազգային հարաբերություններում: Տերություն որակումը նախատեսում է հզորություն և տիրապետություն, այդ իսկ պատճառով այն օգտագործվում է միայն այն պետությունների վերաբերյալ, որոնք ունեն նշանակալի դերակատարություն, քաղաքական կշիռ, մասշտաբներ, տնտեսա-

---

[1] Անդ, էջ 204-212:
[2] Անդ, էջ 266:
[3] Անդ, էջ 310:
[4] Անդ, էջ 212:
[5] Անդ, էջ 238:

կան և ռազմական հզորություն և որոնք ընդունակ են ազդեցություն գործել հարևան և հեռավոր քաղաքական միջավայրերի վրա[1]:

Հարկ է նշել, որ տերությունը միջնադարում ուներ նաև յուրահատուկ՝ ավատատիրությանը բնորոշ ներքին համակարգ, իսկ ինչ վերաբերում է տերության արտաքին հատկանիշներին, ապա այդ առումով այն մշտապես ընկալվել է նույն իմաստով:

Ն. Ադոնցը և Հ. Մանանդյանը այն կարծիքն են արտահայտել, որ դեռևս Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանում և դրանից հետո «տերություն»-ը նույնիմաստ էր «նախարարություն» և «տանուտերություն» բառերին, բայց հաճախ ընդունում էր ավելի լայն իմաստ՝ նույնանալով «պետություն» հասկացությանը[2]:

Ն. Ադոնցը նշում է, որ «տերություն» բառն արտահայտում է «տիրոջ» հովանավորությունը և գերադասությունը վասալի նկատմամբ: Այն կարող էր նույնանալ երկու ավատատերերի միջև փոխհարաբերություններին, երբ գերադաս կողմն իր վրա է վերցնում տերությունը, իսկ ստորադասը՝ ենթակայությունը: Ըստ Ն. Ադոնցի՝ այդպիսին էին հարաբերությունները պարսից թագավոր Հազկերտի և հայ նախարարների միջև Հայոց թագավորության կործանումից հետո: Նա մեջ է բերում «տերություն» բառի համար խիստ բնորոշելի արտահայտությունը, որն անում է Հազկերտը Տիզբոն կանչված հայ նախարարների առաջ. «մեր առ ձեզ տէրութիւն և խնամարկութիւն, և ձեր առ մեզ արդարամտութեամբ ծառայութիւն և հնազանդութիւն»[3]: Այնուհետև Ն. Ադոնցը տալիս է տիրոջ և վասալի փոխհարաբերությունների բնորոշումը. «ուխտի միջոցով կողմերից մեկը ստանձնում էր տերությունն ու խնամակալությունը, իսկ մյուսը՝ հավատարիմ ծառայությունը և հնազանդությունը»[4]:

Վերոհիշյալի լույսով կարող ենք նշել, որ Հայաստանում և Այսրկովկասի մեծագույն մասում «տերությունը»-ը պատկանում էր Հայոց թագավորին, որին հպատակ էին մնացյալ իշխանները: Անհրաժեշտ է նշել, որ Հայոց իշխանի գերիշխանությունը (իմա՛ տերություն) այսրկովկասյան երկրների վրա հաստատվել էր դեռևս Բագարատ և Աշոտ Բագրատունիների ժամանակներից: Այդ գերիշխանությունը շարունակվեց

---

[1] Տե՛ս Политология: словарь-справочник /М. Василик, М. Вершинин и др/, М., 2001. К. Гарнов, Англо-русский политический словарь, М., 2005, **В. Бачинин,** Бачинин А., Политология: Энциклопедический словарь, М., 2005. Политологический словарь: Учеб. пособ. /Р. Григорян, А. Гришин, Г. Демин и др./, М., 1995.

[2] Տե՛ս **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 519, **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Դ, Եր., 1981, էջ 222-224:

[3] Տե՛ս **Ղազար Փարպեցի**, էջ 110:

[4] Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 523:

նաև Բագրատունիների՝ Հայոց թագավոր հռչակվելուց հետո: Ինչպես տեսանք, ականատես լինելով իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու մեծագործություններին՝ Հայոց իշխանները դիմեցին ամիրապետին՝ նրան ճանաչելու Հայոց թագավոր՝ այդպիսով նաև յուրովսանն ընդունելով նրա տերությունը: Այդ տերությունն արտահայտվում էր տարբեր ձևերով: Օրինակ՝ Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհը, թագ ստանալով Սմբատ Ա-ից, հռչակվեց որպես նրա տերության աստիճանակարգում երկրորդ մարդ[1], իսկ Աբխազաց թագավորը՝ պարտվելով Աշոտ Ա-ից՝ այնուհետև «պարտավճար միշտ նմա ի ծառայութիւն բերէր»[2]: Հայոց թագավորը տեր էր նաև Ծանարաց քորեպիսկոպոսի և Աղվանից իշխանի (Արևելից մեծ իշխան) համար: Ասողիկը, օրինակ՝ Հայոց թագավորին հպատակ հայկական և այսրկովկասյան իշխաններին պարզապես որպես նրա ծառաներ է հիշատակում: Ըստ պատմիչի՝ Աշոտ Բ-ն Հայաստանից վտարում է արաբական զորքը, բայց «գտանէ զծառայս հօր իւրոյ թագաւորեալ»[3]:

Մյուս կողմից՝ Հայոց թագավորությունն ուներ նաև տերությանը բնորոշ այն հատկանիշները, որոնք վերաբերում են վերջինիս՝ միջազգային հարաբերություններում ունեցած կշռին և ռազմական հզորությանը: Ընդհանրապես, դատելով հետազոտողների կարծիքներից, որոնց արդեն անդրադարձել ենք, թե՛ Խալիֆայությունը և թե՛ Բյուզանդիան ճանաչել էին Հայոց թագավորությունը՝ ելնելով վերջինիս զգալի դերակատարությունից և կշռից: Հետագայում, օրինակ՝ Սմբատ Ա-ի օգնության վրա էր հենվում խալիֆան, երբ ցանկանում էր պայքարել Ատրպատականի Յուսուֆ ոստիկանի դեմ[4]: Ամիդի Շայբանի ամիրան ընդհանրապես այն մտավախությունն ուներ, որ Հայոց տերությունն այնքան է հզորացել, որ Սմբատ Ա-ն նպատակ է հետապնդում տիրելու նաև Հյուսիսային Միջագետքին[5]: Բացի այդ, ինչպես Բյուզանդիան, այնպես էլ Խալիֆայությունը՝ միմյանց դեմ պայքարում փորձում էին իրենց կողմը գրավել սկզբում Հայոց իշխանին (այնուհետև՝ Արմինիայի իշխանաց իշխան), իսկ հետո՝ 885 թ. սկսած, Հայոց թագավորին: Դա նշանակում է, որ Հայոց թագավորությունը նշանակալից դեր և ազդեցություն ուներ միջազգային հարաբերություններում, որը զգալի չափով

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 188:
[2] Անդ, էջ 142:
[3] **Ասողիկ,** էջ 169-170:
[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 206:
[5] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 171-173:

հիմնված էր նաև նրա ունեցած տնտեսական և ռազմական հզորության վրա:

Հարկ է անդրադառնալ ևս մեկ կարևոր հարցի՝ Հայոց տերության կարգավիճակին դարաշրջանի երկու հզոր տերությունների՝ Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության հետ հարաբերություններում: Ինչպես տեսանք, Հ. Բարթիկյանը ցույց է տվել, որ Հայոց թագավորին «որդի» անվանելով՝ Բյուզանդիայի կայսրն արտահայտում էր նրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունները: Մյուս կողմից Հայոց թագավորը թագ էր ստանում արաբական խալիֆայից, որով էլ արտահայտվում էին վերջինիս և Հայ Բագրատունիների միջև հարաբերությունները: Փաստերը ցույց են տալիս, որ Հայոց թագավորը տերության մեջ մտնող իշխանների նկատմամբ ուներ մոտավորապես նույն կարգավիճակը, որը նրա նկատմամբ ունեին խալիֆան և կայսրը: Հայոց թագավորի համար «որդի» էին հանդիսանում Վրաց իշխանը (հետագայում՝ թագավոր), Աբխազաց թագավորը, Աղվանից (Արևելից) մեծ իշխանը և մյուսները[1]: Բացի այդ, Սմբատ Ա-ն, ինչպես ինքն էր թագ ստանում խալիֆայից, նույնպես և թագ էր շնորհում իրեն հպատակ իշխաններին:

Գոյություն ուներ, սակայն, մի էական տարբերություն: Ի հակադրություն խալիֆայից ձևական կախվածության և կայսեր նկատմամբ խորհրդանշական «որդիության»՝ Հայոց թագավորի «որդիների» իշխանությունները Հայոց տերության մաս էին կազմում, իսկ այդ իշխանները, բացի «որդի» լինելուց[2], նաև հպատակ և «ծառա» էին Հայոց թագավորի համար[3]: Աբխազաց թագավորը նույնպես՝ հնազանդեցված լինելով զենքի ուժով և ընդունելով Հայոց թագավորի գերիշխանությունը, ինչպես տեսանք, պարտահատույց լինելով՝ ծառայում էր նրան: Ուստի և զարմանալի չէ, որ եթե բյուզանդացիները այսրկովկասյան իշխաններին կոչում էին իշխան կամ կուրապաղատ, ապա Հայոց իշխանին (հետագայում Հայոց թագավորին)՝ իշխանաց իշխան (արքոնտների արքոնտ)[4]:

---

[1] Տե՛ս **Հ. Բարթիկյան,** Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ.,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1996, թիվ 2, էջ 27-28:

[2] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», կազմեց **Վ. Հակոբյան,** հ. 2, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1956, էջ 501:

[3] Ասողիկ, էջ 169-170:

[4] Տե՛ս **Հ. Բարթիկյան**, Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., էջ 27-28: Ս. Ջանաշիան նշում է, որ Կղարջքի Բագրատունիներին՝ Բյուզանդիայի կողմից տրված «կուրապաղատ» կոչումը բարձրագույն կոչում էր, և ողջ Մերձավոր Արևելքում միայն նրանց էր տրվում (տե՛ս **С. Джанашиа,** Об одном примере искажения исторической

Հ. Բարթիկյանը ցույց է տվել, որ Հայ Բագրատունիների տերությունը Բյուզանդական կայսրության կողմից բարձր էր դասվում բոլոր պետություններից, բացառությամբ Արաբական խալիֆայության: Այդ կարծիքը բխում է նաև այն իրողությունից, որ տարբեր պետությունների ղեկավարներին ուղարկվող նամակները բյուզանդացիների կողմից կնքվում էին տարբեր կշիռ ունեցող ոսկե կնիքներով: Արաբական խալիֆային և Եգիպտոսի ամիրային ուղարկվողները կշռում էին 4 սոլիդ, Հայ Բագրատունիներին ուղարկվողները՝ 3, իսկ մնացյալներինը՝ 2 և ավելի քիչ[1]:

Հենց վերոհիշյալի պատճառով է, որ հայկական սկզբնաղբյուրները ևս առանձնացնում են Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների գահակալության (իմա Հայ Բագրատունիների տերության) ժամանակաշրջանը: Խոսելով վերջինիս մասին, սկզբնաղբյուրներից մեկում նշված է. «ի թագաւորութեան Աշոտոյ և նորին որդւոյ Սմբատայ՝ քաջք և յաղթողք թագաւորաց Հայոց»[2]:

Հարկ ենք համարում այստեղ անդրադառնալ ևս մեկ կարևոր խնդրի: Հայկական սկզբնաղբյուրներից հայտնի է, որ Բագրատունի առաջին տիրակալները հարկ էին վճարում Խալիֆայությանը: Թագադրության ժամանակ թագն ու թագադրության հագուստները ուղարկում էր արաբական խալիֆան[3]:

Երբ Խալիֆայությունը Աշոտ Բագրատունուն ճանաչեց Արմինիայի իշխանաց իշխան և նրան հանձնեց ոստիկանի լիազորությունները, պարզ դարձավ, որ փաստորեն, այն այլևս բավարար ուժեր չուներ տեղերում իշխանությունը պահպանելու համար, և նրա համար միակ ելքը ծայրամասային երկրներում հզոր իշխանական տների վրա հենվելն էր, եթե նույնիսկ վերջիններիս հավատարմությունը պահպանելու համար ստիպված էր լինում նրանց թագավոր ճանաչել: Նման պայմաններում թագավոր հռչակված իշխանները դառնում էին լիովին անկախ թե՛ իրենց ներքին և թե՛ արտաքին քաղաքականության մեջ: Միակ կապը

правды. По поводу книги Н. Токарского “Архитектура древней Армении”, Тб., 1947, էջ 19-21): Սակայն, խոսելով այդ մասին, նա մոռանում է, որ Հայաստանի Բագրատունիները Բյուզանդիայի կողմից կոչվում էին «արքոնտների արքոնտ» (իշխանաց իշխան), որը ցույց էր տալիս նրանց գերագահությունը Հայաստանում և Այսրկովկասում, իսկ Հովհաննես Դրասխանակերտցին Բյուզանդիայի կայսերը գրված նամակում Սմբատ Ա-ին անվանում է ընդհանրապես «բոլոր արևելցիների գլխավոր» (տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 278):

[1] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին,** էջ 151-154: Տե՛ս **Հ. Բարթիկյան,** Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ.,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1996, թիվ 2, էջ 29:

[2] **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 125:

[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 140-142, 148-150:

մնում էր հարկատվական պարտականության կատարումը Խալիֆայության առաջ, որ նշանակում էր Խալիֆայության գերիշխանության ձևական ընդունում[1]: Սակայն խալիֆան ջանքեր էր գործադրում, որպեսզի նրանք իրենց այդ վերջին պարտավորությունից էլ չհրաժարվեն: Նման պայմաններում, Հայոց տերությանը հարավից սահմանակից Ատրպատականի ամիրաներին տրվում են արդեն իսկ գոյություն չունեցող Արմինիա ոստիկանության ոստիկանի լիազորությունները, որոնք արտահայտվում էին հարկը Հայոց թագավորից ստանալով և Խալիֆայության գանձարան փոխանցելով[2]:

Ըստ Հ. Հարությունյանի՝ Ափշինը եղել է միայն Ատրպատականի ոստիկան, որ ստանձնել էր Հայաստանը հսկողի դեր, և որին ձեռնտու չէր Հայոց թագավորության հզորացումը[3]: Ա. Տեր-Ղևոնդյանը նշում է, որ խալիֆան Ափշինին փոխարքա (իմա՛ ոստիկան) է նշանակում ոչ միայն Ատրպատականի, այլև Արմինիայի վրա, չնայած նման վարչաքաղաքական միավոր փաստացիորեն այլևս գոյություն չուներ[4]: Բ. Առաքելյանն այն կարծիքին է, որ Խալիֆայությունը՝ Ատրպատականի ամիրայության զորությունը Հայաստանի դեմ ուղղելու նպատակով, Ատրպատականի ամիրային նշանակում է Հայաստանի և Ատրպատականի ոստիկան՝ նրան շնորհելով Հայաստանի հարկերի հավաքումը և հանձնումը Խալիֆայությանը[5]: Հայտնվել են այլ կարծիքներ ևս, որոնք ոչինչ չեն ավելացնում վերոհիշյալ ուսումնասիրողների տեսակետերին:

Սկզբնաղբյուրների վկայությունների համաձայն՝ Հայոց տերության ոստիկան Խալիֆայությունը նշանակել էր սկզբում Ատրպատականի Ափշին ամիրային, իսկ այնուհետև նրա եղբորը՝ Յուսուֆին: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Ատրպատականի Ափշին ամիրան Աշոտ Ա-ի օրոք ոստիկանի լիազորություններ չուներ և միայն հետագայում՝ Սմբատ Ա-ի թագավորության տարիներին, նշանակվեց այդ պաշտո-

---

[1] Տե՛ս **Հ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 243:

[2] Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու վկայություններից՝ Աշոտ Բագրատունին թագ է ստացել «ի ձեռն ոստիկանին Յիսէի՝ որդւոյն Շեխայ» (տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 140): Շեխի որդի Հիսեն Իսա իբն աշ-Շայխ աշ-Շայբանին է, որ ոստիկան է եղել 870 թ. (տե՛ս **Հ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 285): 880-ական թթ. կեսերին՝ երկրորդ անգամ նշանակվելով ոստիկան՝ նա խալիֆայից թագ բերեց Աշոտին: Ինքը՝ Իսան, այլևս Արմինիայում որևէ լուրջ անելիք չուներ, որի պատճառով հիմնականում զբաղված էր սահմանային ամրությունների գոտում (անդ, էջ 150): Այսինքն՝ փաստացիորեն կա ոստիկան, բայց նրա հիմնական լիազորությունները տրված են Աշոտ Բագրատունուն:

[3] Տե՛ս **Հ. Հարությունյան,** Հայաստանը IX-XI դարերում, էջ 40-41:

[4] Տե՛ս **Հ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 241:

[5] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 29:

նին[1]: Ի դեպ, Մովսես Դասխուրանցու մի հետաքրքրական տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ Աշոտ Ա-ն Խալիֆայությանը հարկ չէր վճարում: Պատմիչը հաղորդում է, որ Աշոտ Ա-ից հետո տեղի ունեցավ «գալուստ Տաճկին ի Հայս և գրաւել զաշխարհն ընդ լծով ծառայութեան հարկաց թուականն Հայոց ՅԽԲ (իմա՛ 893 թ.-Ա.Ե.) լինէր»[2]:

Աշոտ Ա-ի մահից հետո Հայոց տերության ոստիկան է նշանակվում Ատրպատականի Ափշին ամիրան: Նա պատասխանատու էր Հայոց տերությունից հավաքված հարկը Բագրատունի տիրակալներից ստանալու և Խալիֆայությանը փոխանցելու համար[3]: Երբ Սմբատ Ա-ն նվաճեց շրջակա երկրները, Ափշինը «եդ ի մտի իւրում ոչ կալ նմա յայնմհետէ ընդ իւր ի միակամութիւն սիրոյ և հնազանդութեան սակի խոստմանն. այլ և ակնածեալ ևս թէ գուցէ ոչ լնուցու զսակ հարկացն, որ ի վերայ կայր»[4]: Փաստորեն, նա արդեն նշանակվել է ոստիկան: Կասկածելով, որ մեծ հաղթանակներից հետո Սմբատ Ա-ն կհրաժարվի հարկ վճարելուց, նա ներխուժեց Հայոց տերություն, բայց Դողսի ճակատամարտում պարտություն կրեց: Այնուհետև նա պատվիրակի միջոցով խնդրեց Սմբատ Ա-ին իրեն տալ արքունի հարկը: Սմբատ Ա-ն որոշում է կատարել նրա խնդրանքը[5]: Ըստ որում՝ Անանունը հաղորդում է, որ «Սա (Ափշինը-Ա.Ե.) շարժեալ բարկութեամբ մեծաւ ի վերայ Սմբատայ վասն բեկանելոյ նորա զհարկս արքունի»[6]: Պարզվում է, որ Սմբատ Ա-ն հրաժարվում է հարկ վճարելուց: Սակայն, եթե համադրենք Անանունի և մյուս պատմիչների հաղորդումները, կարելի է եզրակացնել, որ խոսքը ոչ թե ընդհանրապես հարկը տալուց հրաժարվելուի մասին է, այլ Ատրպատականի ամիրայի միջոցով այդ անելուց հրաժարվելու մասին: Այդ է ապացուցում Անանուն Զրուցագրի հաղորդումն այդ իրադարձության մասին: Ոստիկանը կամենում է հարկ վերցնել Սմբատ Ա-ից: Սմբատը հրաժարվում է՝ ասելով. «...ես ոչ տամ հարկ քեզ»: Այնուհետև Դողսի ճակատամարտում ամիրան պարտություն է կրում[7]:

Ափշինի մահից հետո Սմբատ Ա-ն «եդ ի մտի իւրում ոչ ևս դարձեալ դաւանս կրել ի խափանեալ երկիւղէն, և կամ դաշինս սիրոյ դնել ընդ

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 162, 170-174, 180 և այլն: Պատմիչն առաջին անգամ Ատրպատականի Ափշին ամիրային որպես ոստիկան է հիշատակում Սմբատ Ա-ի օրոք:

[2] **Մովսես Կաղանկատվացի,** էջ 335:

[3] Տե՛ս **Ա. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 243:

[4] Անդ, էջ 170:

[5] Անդ, էջ 170-172:

[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 438:

[7] Տե՛ս **Անանուն Զրուցագիր,** էջ 187, **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 172:

այնոսիկ, որոց իրաւունք բարձեալ է յերեսաց նոցա»[1]: Այդ մտքով նա խալիֆայի մոտ մարդ է ուղարկում՝ խնդրելով «ի բաց զինքն հատանել յազգէ յայնմանէ»: Խալիֆան համաձայնում է և նույնիսկ թեթևացնում արքունի հարկը[2]: Ասողիկը հաղորդում է. «Սմբատ ոչ կամեցաւ հնազանդել նմա (իմա՛ Յուսուֆի-Ա.Ե.), այլ գրէ հրովարտակ ընծայիւք առ ամիրապետն Բաբելոնի՝ ազատել զնա յանօրէն որդւոյ Սաճին, զոր և արար իսկ»[3]: Սմբատ Ա-ի դիմումը խալիֆային նշանակում էր, որ Հայոց թագավորը չի ցանկանում ճանաչել որևէ միջնորդ իր և Խալիֆայության միջև: «Եւ այնուհետև ի կարգս այլոց ևս հնազանդելոց և նա (իմա՛ Սմբատ Ա-Ա.Ե.) ևս մտանէր ի կապաւծս լծոյ ամիրապետին»[4]: Պատմիչի ընկալմամբ, եթե հարկը փոխանցվում է Ատրպատականի ամիրայի միջոցով, ապա Հայոց թագավորը գտնվում է վերջինիս գերիշխանության տակ, իսկ երբ հնարավորություն է ստեղծվում ուղղակիորեն հարկը փոխանցել Խալիֆայության գանձարան, պատմիչը այդ հասկանում է որպես Խալիֆայության գերիշխանության ընդունում:

Խալիֆան հետագայում Յուսուֆին կրկին ոստիկան է կարգում Հայոց տերության վրա, որի հետևանքով նրանք երկուսով Հայոց արքայից պահանջում են անմիջապես վճարել տարեկան հարկը[5]: Այդպիսով, վերականգնվում է Հայոց տերության տարեկան հարկը Խալիֆայությանն Ատրպատականի ամիրայի միջոցով փոխանցելու կարգը, իսկ Հովհաննես Դրասխանակերտցին Յուսուֆին այլևս ոստիկան է կոչում[6]: Ի զուր չէ, որ Սմբատ Ա-ն «ոչ կասեցուցանէր հատուցանել նմա (իմա՛ Յուսուֆին-Ա.Ե.) զսակ սովորական ծառայութեանն»[7]:

Խալիֆայությանը տրվող հարկը՝ դատելով Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունից, գանձվում էր տարին մեկ անգամ[8]: Ըստ պատմիչի՝ հարկաչափը 60 հազար դահեկան էր[9]: Հայտնի է, որ Արմինիա ոստիկանության հարկաչափը Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք (786-809) 13 մլն դիրհեմ էր[10]: Իբն Խորդադբեհը հաղորդում է, որ Արմինիայից գանձվող միայն հողահարկի չափն այդ ժամանակ 4մլն դիրհեմ

---

[1] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 196:
[2] Անդ:
[3] **Ասողիկ,** էջ 163:
[4] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 196:
[5] Անդ, էջ 206-208:
[6] Անդ, էջ 206:
[7] Անդ, էջ 212:
[8] Անդ, էջ 208:
[9] Անդ, էջ 216:
[10] Տե՛ս .151 ص ١٨٦٧، بولاق، كتاب العبر، ابن خلدون, 286 ص ١٩٣٨، القاهرة، بن عبد وسى الجهشيارى، كتاب الوزراء و الكتاب تصنيف ابن عبد الله محمد

էր[1]: Համեմատելով այդ հարկաչափերը՝ կարելի է ասել, որ Հայոց թագավորների կողմից Խալիֆայությանը տրվող հարկը պարզապես խորհրդանշական էր՝ բազմապատիկ զիջելով արաբական տիրապետության օրոք գոյություն ունեցած հարկաչափին:

Անդրադառնալով Յուսուֆի կողմից Գագիկ Արծրունուն Հայոց թագավոր կարգելուն՝ Անանունը պատմում է, որ դրա պատճառներից մեկն այն էր, որ «Սմբատ ոչ խնդրեաց երթալ զհետ խաղաղութեան, տալ զհարկս արքունի»[2]: Փաստորեն, Սմբատ Ա-ն վերջնականապես որոշել էր այլևս հարկ չվճարել Խալիֆայությանը: Անանունը նաև նպատակ ունի արդարացնելու Արծրունիների պառակտումը Հայոց տերությունից, որի հետևանքով նա մեղադրում է Սմբատ Ա-ին հարկատվությունից հրաժարվելու համար, իսկ «խոհեմ» Հայոց թագավոր Գագիկ Արծրունին ստանձնում է հարկատվական պարտավորություն: Յուսուֆը Գագիկին թագավոր օծեց, իսկ ամիրապետը «յանձն առնէ նմա զհարկս արքունի»[3]:

Դատելով այն իրողությունից, որ Հայոց Բագրատունի արքաներն իրենց միանգամայն անկախ էին դրսևորում թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության բնագավառում, պետք է միանշանակ եզրակացնել, որ հարկատվական պարտականությունն ուներ զուտ խորհրդանշական բնույթ և քիչ բանով էր պարտավորեցնում Աշոտ Ա-ին և Սմբատ Ա-ին: Զարմանալի չէ, որ Սմբատ Ա-ն չկատարեց խալիֆայի հրամանը՝ նրա հետ միասին հարձակվելու Յուսուֆի վրա[4]:

Ինչպես ճիշտ կերպով նշում է Ռ. Մաթևոսյանը, պետության անկախությունը որոշվում է երկու կարևոր ուղղություններում՝ սեփական պետության մեջ գերագույն իշխանությամբ և անկախությամբ՝ միջազգային հարաբերություններում: Հայոց պետությունը ուներ թե՛ առաջինը և թե՛ երկրորդը[5]: Բացի այդ, ուսումնասիրողը ճիշտ կերպով ցույց է տալիս, որ, չնայած խալիֆան թագ էր տալիս Հայոց թագավորին, նա դրանով սոսկ ամրագրում էր գոյություն ունեցող իրավիճակը և որևէ փոփո-

---

[1] Տե՛ս **Ibn Khordadbeh,** էջ 124: Երբեմն ուսումնասիրողների կողմից Իբն Խորդադբեհի նշած «խարաջ»-ը հասկացվում է սոսկ որպես հարկ, որը սխալ է (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, Եր., 1984, էջ 374):

[2] **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 440:

[3] Անդ, էջ 442:

[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 206:

[5] Տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 96:

խություն մտցնել չէր կարող[1]: Նույն կարծիքն է հայտնում նաև Կ. Յուզբաշյանը[2]:

Եթե Խալիֆայությունը ոչ մի կերպ չէր կարող միջամտել Բագրատունիների տերության ներքին գործերին, ապա ինչու՞ էին Բագրատունիները շարունակում նրան հարկ վճարել: Մեր կարծիքով, դա Հայոց տերության համար անվտանգության երաշխիք էր Հայաստանին սահմանակից Ատրպատականի և Ամիդի ամիրայությունների հարձակումներից: Իսկ վերջիններս Խալիֆայության կողմից որպես լծակ էին օգտագործվում՝ Հայ Բագրատունիների կախվածությունը պահպանելու համար:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ Հայ Բագրատունիների տերության ձևավորումը սկսվել է Հայոց իշխան Աշոտ Մսակերի ժամանակաշրջանից և ավարտին հասել իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու օրոք, երբ Այսրկովկասում հաստատվել է հայկական գերիշխանությունը: Աշոտի՝ թագավոր հռչակվելուց հետո և Սմբատ Ա-ի օրոք Հայոց տերությունը զգալիորեն ամրապնդվել է և Արաբական խալիֆայության ու Բյուզանդական կայսրության համար կարևորություն ձեռք բերել: Չնայած Հայ Բագրատունիների տերությունը ձևականորեն ընդունել է Խալիֆայության գերիշխանությունը, սակայն փաստացիորեն անկախ է եղել իր վարած ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Վերջին իրողությունն արտահայտվել է ինչպես Բյուզանդիայի հետ քաղաքական և տնտեսական կապերի վերահաստատմամբ ու խորացմամբ, Սմբատ Ա-ի կողմից իր տերության իշխաններից ոմանց թագադրությամբ, այնպես էլ հարևան երկրներում ունեցած զգալի ազդեցությամբ:

---

[1] Անդ, էջ 89:

[2] Տե՛ս **Կ. Յուզբաշյան**, «Բագրատունիների դարաշրջանի» Հայաստանը միջազգային-իրավական տեսանկյունից,-«ՊԲՀ», 1975, թիվ 1:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՀՄԱԿԱՆ ԵՎ ԱՐՔՈՒՆԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ

Արաբական տիրապետության շրջանում Բագրատունիներն աստիճանաբար հզորացան, Արմինիա ոստիկանությունում հասան առաջնակարգ դիրքի և աստիճանաբար թուլացող Խալիֆայության համար ձեռք բերեցին խոշոր նշանակություն, քանի որ ձևականորեն պահպանում էին հավատարմությունը խալիֆային: VIII դ. վերջերից սկսած Հայոց իշխանի պաշտոնը սկսեցին զբաղեցնել միայն Բագրատունիները: Ինչպես նշում է Ա. Տեր-Ղևոնդյանը, դեռևս VIII դ. կեսերին միայն Կոգովիտին տիրող Բագրատունիները շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում կարողացան տիրել Տարոնին, Սասունին, Բաղեշին, Արզնին, Մոկքին, Շիմշաթին, Արշարունիքին, Շիրակին, Վանանդին, Արագածոտնին, Աշոցքին, Տաշիրքին, Տայքին, Բագրևանդին, Աղստև գետի հովտին և Ոստան գավառին: Չնայած Այրարատում դեռևս գոյություն ունեին որոշ նախարարական տներ (Գնթունի, Վանանդեցի և Տաշրացի), Հայոց Միջնաշխարհում Բագրատունիներն հասան տիրապետող դիրքի[1]:

2.1. Այրարատ: Աշոտ Մսակերի ժամանակներից սկսած Բագրատունիները կարողացան աստիճանաբար տիրել Այրարատի մեծագույն մասին: Դա կապված էր այն իրողության հետ, որ 774-775 թթ. արաբական տիրապետության դեմ Հայոց ապստամբությունից հետո քաղաքական ասպարեզից հեռացան մի շարք խոշոր նախարարական տներ, այդ թվում՝ Կամսարականները, իսկ Մամիկոնյանները կորցրեցին նախկին կշիռը: Բագրատունիներին հաջողվեց օգտվել ստեղծված իրավիճակից և տիրել վերոհիշյալ նախարարական տների տիրույթներին:

Կոգովիտ: Կոգովիտ գավառը Արշակունյաց թագավորության շրջանում պատկանում էր Արշակունիներին, որտեղ՝ Դարյունից բերդում, պահվում էին արքունի գանձերը[2]: Հետագայում Կոգովիտն արդեն հիշատակվում է որպես Բագրատունյաց բնիկ տիրույթ: Ըստ Սեբեոսի՝ Սա-

---

[1] Տե՛ս **А. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 182:

[2] Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** էջ 288. «բերդն Դարօնից, որ է յերկրին Կոգայ, ուր կային գանձք արշակունեացն»:

սանյանների դեմ ապստամբած Սմբատ Բագրատունու մարմինը «տարան ի Հայաստան երկիր ի բնիկ հանգստարանսն, և եդին ի տապանի ի գիւղն Դարիւնս, որ է ի Գոգովիտ գաւառի»[1]: Ինչպես ենթադրում է Ն. Ադոնցը՝ Կոգովիտ գավառը Բագրատունիներին էր անցել Արշակունյաց թագավորության կործանումից հետո, ամենայն հավանականությամբ, Վարդանանց պատերազմի շրջանում հիշատակվող Տիրոց Բագրատունու ժամանակներից[2]: Այն բանից հետո, երբ Աշոտ Մսակերը տիրեց Արշարունիք գավառին, նա իր նստավայրը Կոգովիտի Դարյունք բերդից տեղափոխեց այնտեղ[3]: Հ. Մարկվարտը կարծում է, թե Կոգովիտից Բագրատունյաց նստավայրի տեղափոխման պատճառն այն է, որ այն հարևան էր Արծրունիների իշխանությանը, իսկ վերջիններս աստիճանաբար սկսեցին տիրել Կոգովիտին[4]: Սակայն այդ տեսակետը կասկածելի է, քանի որ Կոգովիտ գավառը Դարյունից բերդով Վասպուրականի թագավորությանը միացրել էր Գագիկ Արծրունին (908-943): Ըստ Թովմա Արծրունու՝ «ի գնալն Յուսփայ ամիրային ի Պարսս՝ գնաց և թագաւորն Գագիկ ի գաւառն Կոգովիտ, և պաշարեալ զանառն Դարիւնս՝ գողացեալ առնու ի գիշերի»[5]: Այդ է վկայում նաև Ստեփան Տբեթցու հաղորդումն այն մասին, որ X դ. սկզբին Կոգովիտը դեռևս հանդիսանում էր Բագրատունյաց տիրույթ[6]: Ամենայն հավանականությամբ, Դարյունից բերդից Բագրատունիների իշխանանիստի տեղափոխության պատճառն այն էր, որ երբ Աշոտ Մսակերին հաջողվեց տիրել Այրարատի մեծ մասին, անհրաժեշտություն առաջացավ իշխանանիստը տեղափոխել սեփական տիրույթների կենտրոնական հատվածը:

Կարծիք է հայտնվել, որ արդեն Սմբատ Ա-ի թագավորության շրջանում Կոգովիտը մտնում էր Արծրունիների տիրույթների մեջ[7]: Սակայն, Սմբատ Ա-ի օրոք, դատելով Հովհաննես Դրասխանակերտցու մի վկայությունից, ըստ որի՝ արքայական տոհմի որոշ ներկայացուցիչներ (օրինակ՝ Սմբատ Ա-ի եղբորորդի Սմբատը) թաղվում էին «ի Դարօնս ընդ հարս իւր»[8], Կոգովիտը հանդիսանում էր Բագրատունիների տիրույթ:

---

[1] **Սեբեոս,** էջ 103-104:
[2] Տե՛ս **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 341:
[3] Տե՛ս **Ասողիկ**, էջ 106:
[4] Տե՛ս **Յ. Մարկուարտ,** Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 33-34:
[5] Թովմա **Արծրունի և Անանուն,** էջ 444:
[6] Տե՛ս **Ստեփան Տբեթցի,-Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 91:
[7] Տե՛ս «Բագրատունյաց տերությունը Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների օրոք»,- «Հայաստանի պատմության ատլաս», Ա մաս, Եր., 2005, էջ 62-63:
[8] **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 228:

Բագրևանդ: Աշոտ Բագրատունին IX դ. երկրորդ կեսին կարողացավ սեփական տիրույթներին կցել Մամիկոնյաններին պատկանող վերջին տիրույթներից մեկը՝ Բագրևանդ գավառը: Ըստ Թովմա Արծրունու մի հիշատակության, որը վերաբերում է IX դ. երկրորդ քառորդին, Բագրևանդ գավառը պատկանում էր Քուրդիկ Մամիկոնյանին[1]: Վարդան վարդապետը, պատմելով Բուղայի կողմից գերի տարված իշխաններին բաժին հասած դառը ճակատագրի մասին, հաղորդում է, թե նրանցից մեկը՝ Քուրդիկ Մամիկոնյանի որդի Գրիգորը, «արիաբար պահեալ զհաւատն ելանէ ի բանտէն, և գայ մտանէ ի գաւառն իւր Բագրևանդ»: Սակայն, նա շուտով վախճանվում է: Օգտվելով դրանից՝ Աշոտ Բագրատունին նրա գլուխը կտրում, ուղարկում է ոստիկանին՝ հաղորդելով, թե նա կամենում էր անցնել Բյուզանդիա, իսկ ինքը մարդ է ուղարկել նրա ետևից ու սպանել տվել: Ի պատասխան, ոստիկանը դիմում է խալիֆային ու վերջինիս հրամանով Աշոտին հանձնում Բագրևանդ գավառը[2]:

Ն. Ադոնցը կարծում է, որ, հավանաբար, կապ կա Bagrata և Bagravanda անվանումների միջև, որից էլ կարելի է բխեցնել, որ Բագրևանդը Այրարատի Բագրատունիների նախնական կալվածքն էր[3]: Դատելով այն իրողությունից, որ IX դ. կեսերին այն հիշատակվում է որպես Մամիկոնյանների տիրույթ, պետք է կարծել, որ եթե ճիշտ է Ն. Ադոնցի կարծիքը, ապա Բագրատունիները սկզբնապես տիրում էին ոչ թե ամբողջ Բագրևանդին, այլ դրա այն հատվածին, որը սահմանակից էր Կոգովիտին և որի մեջ էր մտնում Բագավանը:

Բացի այդ, պետք է նշել, որ, ըստ ուսումնասիրողների՝ հնում Ծաղկոտնը որպես առանձին գավառ գոյություն չուներ, այլ մտնում էր Բագրևանդի մեջ[4]: Հավանաբար, Ծաղկոտնը Կոգովիտին հարևան Բագրևանդի արևելյան հատվածի հետ միասին մտնում էր Բագրատունիների տիրույթների մեջ: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Բագրևանդում Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք (786-809) տեղի ունեցած արաբական ցեղերի մեծ վերաբնակեցման ժամանակ հաստատվել էին արաբներ[5]: Կարծում ենք, որ խոսքը Ծաղկոտն գավառի մասին է, որտեղ, ինչպես կտեսնենք ստորև, արաբական գաղութ էր հաստատվել, իսկ Հովհաննես Դրասխանակերտցին Ծաղկոտն ավանդույթի ուժով համարում է Բագրևանդի մաս: Ավելորդ չէ նշել, որ Հովհաննես Դրաս-

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 302:
[2] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 87:
[3] Տե՛ս **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 341:
[4] Անդ, էջ 340, **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 125:
[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 110-112:

խանակերտցին Ծաղկոտն գավառը բոլորովին չի հիշատակում: Կարելի է կարծել նաև, որ Բագրատունյաց իշխանանիստի տեղափոխության պատճառը նույնպես նրա հարևանությամբ արաբների հաստատման հետևանքը պետք է լիներ:

Արշարունիք: Աշոտ Մսակերը 774-775 թթ. ապստամբությունից հետո գնեց այդ ապստամբության հետևանքով քաղաքական ասպարեզից հեռացած Կամսարականներին պատկանող Արշարունիք գավառը, որից հետո Բագրատունիների նստավայրը Դարյունքից տեղափոխեց այնտեղ: Իր այս քաղաքականության իրականացման ճանապարհին Աշոտ Մսակերը բախվեց արաբական կայսիկ ցեղին պատկանող Ջահապի հետ: Վերջինս ամուսնացել էր 775 թ. Արծնիի ճակատամարտում զոհված Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ և նույնպես հավակնություններ ուներ Մամիկոնյանների և Կամսարականների տիրույթների նկատմամբ: Ըստ Վարդան վարդապետի՝ Ջահապը «յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց»[1]: Հանդիսանալով Մամիկոնյան իշխանադստեր ամուսինը[2]՝ նա «խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին»[3]: Խնդիրն այն է, որ դատելով Ղևոնդի մի տեղեկությունից՝ Արշարունիքի մի հատվածը՝ Արտագերս բերդով, պատկանում էր 774-775 թթ. ապստամբության առաջնորդ Մուշեղ Մամիկոնյանին[4]: Բագրատունիները հաղթեցին Ջահապին և տիրեցին ողջ Արշարունիքին[5]: Ստեփաննոս

---

[1] **Վարդան վարդապետ,** էջ 83:

[2] Մ. Օրմանյանի կարծիքով, եթե Ջահապը միտք ուներ կնոջ միջոցով տիրելու Արշարունիք գավառին, նա պետք է գործ ունենար Բագրատունիների հետ, քանի որ Արշարունիքն այդ ժամանակ Բագրատունիների ձեռքում էր: Ըստ այդմ, Ջահապի կինը պետք է ոչ թե Մամիկոնյան լիներ, այլ Բագրատունի: Հավանաբար, նա Բագրատունի Աշոտի և Շապուհի քույրն էր, այլ ոչ թե Մամիկոնյան Շապուհի և Վարդի քույրը (տե՛ս **Մ. Օրմանեան,** Ազգապատում, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 909-910): Օրմանյանի այդ կարծիքի կողմնակիցն է Ա. Ալպոյաճյանը (տե՛ս «Պատմական Հայաստանի սահմանները», էջ 181): Հավանաբար, այդ կարծիքի համար հիմք է դարձել Վարդանի այն վկայությունը, թե Արշարունիքի մի մասին տիրող «[Ջահապը] խորհէր տիրել 'ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին» (**Վարդան վարդապետ**, էջ 83): Այդ արտահայտությունը հասկացվել է այնպես, իբր Ջահապը կամենում էր ամբողջովին տիրել Արշարունիք գավառին: Այս տեսակետը մերժելի է, քանի որ, նախ՝ հիշյալ արտահայտությունը նշանակում է, որ Արշարունիքի մի մասին տիրող Ջահապը կնոջ ժառանգական իրավունքի հիման վրա ցանկանում էր տիրել Մամիկոնյանների ժառանգությանը, հետո՝ 774-775 թթ. անմիջապես հետո Արշարունիքը դեռ չէր պատկանում Բագրատունիներին, այն Կամսարականներից գնեց Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին (790-826): Այնպես, որ մենք ճիշտ ենք համարում պատմիչի վկայությունը:

[3] **Վարդան վարդապետ**, էջ 83:

[4] Տե՛ս **Ղևոնդ,** էջ 139:

[5] Տե՛ս **Վարդան վարդապետ,** էջ 83-84:

Օրբելյանը և Ստեփան Տբեթցին Արշարունիքը հիշատակում են Աշորնիք ձևով[1]:

Արշարունիքում էր գտնվում Հայ Բագրատունիների տերության առաջին մայրաքաղաք Բագարանը[2]:

Ճակատք: Բագրատունյաց տիրույթների մեջ էր մտնում նաև Այրարատի Ճակատք գավառը[3]: Այն գտնվում էր Կոգովիտ և Արշարունիք գավառների միջև՝ զբաղեցնելով Գայլատու լճից հյուսիս ընկած լեռնային երկրամասը՝ Կողբ գյուղաքաղաքով և տարածվում մինչև Երասխ գետ[4]:

Ծաղկոտն: Հայ Բագրատունիների տիրույթների մաս էր կազմում նաև Ծաղկոտն գավառը, որը հնում Բագրևանդի մեջ էր մտնում: Անանուն Զրուցագիրը հաղորդում է, որ Սմբատ Ա-ն Ծաղկոտն գավառը հանձնել էր Ռաճա անունով մի արաբի[5]: Հավանական է, որ Ծաղկոտն գավառը, որտեղ, ամենայն հավանականությամբ, արաբներ կային, արքունի տիրույթ էր: Թերևս, նորաստեղծ այդ ամիրայությունը զբաղեցնում էր Այրարատի Ծաղկոտն գավառի տարածքը՝ Արածանի գետի ակունքների շրջանում:

Ըստ Ստեփան Տբեթցու՝ այն X դ. սկզբին հանդիսանում էր Բագրատունիների տիրույթ[6]:

Ամենայն հավանականությամբ, Ծաղկոտն գավառը Բագրատունիներին էր անցել կամ Աշոտ Մսակերի օրոք և կամ ավելի վաղ շրջանում, քանի որ գտնվում էր Բագրատունիների տիրույթներ Բագրևանդի արևելյան հատվածի և Կոգովիտի միջև: Հետագայում, ինչպես կտեսնենք, Ամբատ Ա-ն արքունի տիրույթներին էր կցել նաև Ծաղկոտնին հարևան Վասպուրականի Դառնի և Տուրուբերանի Աղիովիտ գավառները:

Շիրակ: Շիրակ գավառը սկզբնապես Կամսարականների տիրույթն էր, սակայն 774-775 թթ. ապստամբությունից հետո, երբ Կամսարականները հեռացան քաղաքական ասպարեզից, այն հայտնվեց Աշոտ Մսա-

---

[1] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան,** էջ 183, **Ստեփան Տբեթցի,-L. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 91:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 146:

[3] Տե՛ս **Ստեփան Տբեթցի,-L. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 91:

[4] Տե՛ս **Բ. Հարությունյան,** Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[5] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 161:

[6] Տե՛ս **Ստեփան Տբեթցի,-L. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 91:

կերի ուշադրության կենտրոնում: Նա կարողացավ տիրել Շիրակին և այն կցել սեփական տիրույթներին[1]:

Շիրակն աստիճանաբար դարձավ Բագրատունիների հիմնական կենտրոնը, որտեղ գտնվում էին Սմբատ Ա-ի և Աշոտ Բ-ի մայրաքաղաք Երազգավորսը և հետագայում Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք դարձած Անին[2]:

Աշոցք: Շիրակ գավառի հետ միասին Աշոտ Մսակերը կարողացավ տիրել նաև Աշոցք գավառին[3]: Սակայն՝ դատելով «Քարթլիի մատյան»-ի հաղորդած այն տեղեկությունից, թե 881 թ. որոշ ժամանակ առաջ Կղարջքի Աշոտ կուրապաղատի որդի Գուառամն Աշոցքը զիջել էր իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն[4], պետք է կարծել, որ թերևս Բուղայի արշավանքից հետո Կղարջքի Բագրատունիներին հաջողվել էր տիրել Աշոցք գավառի մի հատվածին: Վախուշտ Բագրատիոնը ևս հաղորդում է, որ Աշոցքը պատկանում էր Գուառամ Բագրատունուն[5]: Այսինքն, Աշոցքն ամբողջությամբ կցվել էր Բագրատունիների տիրույթներին 881 թ. դեպքերից որոշ ժամանակ առաջ: Անանուն Զրուցագրի մի տեղեկության համաձայն՝ Սմբատ Ա-ն X դ. սկզբին գրավել և իր տիրույթներին էր կցել Գոգշենը[6], որը Գուգարքի մի շարք գավառների հետ միասին մինչ այդ գրավել էին աբխազական զորքերը[7]: Պետք է նշել, որ երբ Սասանյանների տիրապետության շրջանում Զավախք գավառը բաժանվեց երկու մասի, վերջինիս հյուսիսային հատվածը մտնում էր Գուգարքի բդեշխության մեջ, իսկ հարավային հատվածը մաս էր կազմում Աշոցքի նախարարության[8]: Ըստ Ս. Երեմյանի՝ Աշոցքի նախարարության մեջ մտնող Զավախքի հատվածը խնդրո առարկա շրջանում կոչվում էր Գոգշեն[9]: Այնտեղ մինչև օրս էլ պահպանվել է Գոգշեն անունով մի գյուղ: Ամենայն հավանականությամբ, իշխանաց իշխան Աշոտին Գուառամ Բագրատունու զիջած «Աշոցք»-ը նույնական է հենց Գոգշենին: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ 906 թ. «թա-

---

[1] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 83:
[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 186, 200, 211:
[3] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 83:
[4] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 31:
[5] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè,** էջ 187:
[6] Տե՛ս **Անանուն Զրուցագիր,** էջ 193:
[7] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 202-204:
[8] Տե՛ս **Բ. Հարությունյան,** Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի,- «ԲԵՀ», 1977, թիվ 2, էջ 190:
[9] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ, Եր., 1976 (տե՛ս «ՀԺՊ», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III): Տե՛ս նաև **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 49:

գաւորն Եգերացւոց...զօրս գումարէ, խաղայ չուէ գնայ...աշխարհն Գուգարացւոց..., զի և ընդ իւրոյ ձեռամբ զնոսա նուաճէ: Եւ վասն զի ազգն այնոքիկ հաւանեալք և հնազանդեալք և նուաճեալք էին ընդ ձեռամբ արքային Սմբատայ...ապա արքայ Սմբատ զօրու բազմի... ընդ իւր ևս առեալ զթագաւորն Վրաց՝ գնացին ի միասին հրոսակ ընդ յառաջ Կոստանդնի»[1]: Եզրակացությունը պարզ է. Կոստանդին Գ-ն ի թիվս այլ շրջանների գրավել է Գուգարքի որոշ հատվածներ, որոնք Հայ Բագրատունիների արքունի տիրույթներից էին: Ըստ Անանուն Զրուցագրի՝ դրանք էին Գուգարքի Արտահան, Կանգարք և Գոգշեն գավառները[2]: Ինչպես տեսանք, Սմբատ Ա-ն ջախջախիչ պարտության մատնեց Աբխազաց թագավորին և վերականգնեց նախկին վարչաքաղաքական իրավիճակը, ինչպես նաև իր գերիշխանությունը հաստատեց Աբխազաց թագավորության վրա:

Վանանդ: Ամենայն հավանականությամբ, Վանանդը Բագրատունյաց տիրույթի էր վերածվել Աշոտ Մսակերի օրոք[3]: Այն Աշոտ Ա-ի օրոք նրա եղբայր, Հայոց սպարապետ Աբասի տիրույթն էր[4]: Պետք է նշել, սակայն, որ, դատելով որոշ տեղեկություններից, Վանանդի մի հատվածում դեռևս գոյատևում էր համանուն նախարարական տունը (887 թ. դրությամբ Վանանդում հիշատակվում է իշխան Վարդի որդի Սահակ-Մլեհը[5]), որը 888 թ. խռովություն բարձրացնելու փորձ կատարեց, սակայն Աշոտ Ա-ն սպարապետ Աբասի միջոցով ճնշեց խռովությունը և խռովարարների հողերը կցեց արքունի տիրույթներին[6]: Դրանից հետո Վանանդի Կարս ամրոցը վերածվեց Հայոց սպարապետի նստավայրի[7]:

Վանանդը հնում մաս էր կազմում Բասեն գավառի և կոչվում էր Անփայտ Բասեն: Արշակունիների թագավորության շրջանում բաժանվեց նրանից և վերածվեց իշխանական առանձին միավորի[8]:

Վանանդում էր գտնվում Կարսը, որը որոշ ժամանակով (928-961)

---

[1] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 202-204:

[2] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 187, 193:

[3] Տե՛ս **Թ. Հակոբյան,** Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 127:

[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 146-148:

[5] Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս,** Յիշատակարանք ձեռագրաց, էջ 87-88, 175, 239-240 և այլն:

[6] Այս եզրակացությունն անում է Ս. Երեմյանը՝ ելնելով այն իրողությունից, որ 887 թ. վերաբերող հիշատակության համաձայն Կարսի տերն էր Սահակ-Մլեհ Վանանդեցին, իսկ արդեն 890 թ.՝ Հայոց սպարապետ Աբասը (տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 146-148), որը հավանական է (տե՛ս **С. Еремян,** Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1971, թիվ 3, էջ 5):

[7] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 146-148, **С. Еремян,** Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, էջ 5::

[8] Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 333-334:

հանդիսանում էր Բագրատունյաց մայրաքաղաք:

Բասեն: Անանուն Ձրուցագիրը տեղեկացնում է նաև, որ Սմբատ Ա-ն կայսիկներից գրավել էր նաև Բասեն գավառը[1]: Այն արաբական տիրապետության շրջանում, ամենայն հավանականությամբ, մտնում էր կայսիկների տիրույթների մեջ[2]: Բասենով էր անցնում Բյուզանդիա ընթացող առևտրական մայրուղին: 893 թ. հայ-բյուզանդական առևտրական պայմանագրի կնքումից հետո այդ մայրուղու դերը մեծապես աճեց, որի հետևանքով Սմբատ Ա-ն իր տիրույթներին կցեց Բասենը՝ մայրուղին վերահսկողության ներքո պահելու նպատակով[3]:

Արագածոտն: Դատելով Անանուն Ձրուցագրի մի տեղեկությունից, Բագրատունիների տիրույթների մեջ էր մտնում նաև Վաղարշապատը: Ըստ պատմիչի՝ այն գրավվել էր Սմբատ Ա-ի կողմից Դվինի հետ միասին[4]: Կարծում ենք, որ Արագածոտն գավառը՝ Վաղարշապատի հետ միասին, Բագրատունյաց տիրույթ էր, սակայն Դվինի արաբներն անընդհատ փորձ էին կատարում ընդարձակելու իրենց տիրույթները հարևան շրջանների հաշվին: Նրանք IX դ. 90-ական թթ. սկզբին ջախջախիչ հարված ստացան Սմբատ Ա-ից, որից հետո նրանց տիրույթներն ամփոփվեցին Դվին քաղաքով[5]:

Ամենայն հավանականությամբ, Արագածոտնին ևս Բագրատունիները կարողացել էին տիրել Աշոտ Մսակերի օրոք: Հայտնի է, որ Ամատունիները բացի Արտազ գավառում ունեցած հողերից՝ տիրույթներ ունեին Այրարատում: Մասնավորապես, նրանց էր պատկանում Օշա-

---

[1] Տե՛ս **Անանուն Ձրուցագիր**, էջ 159-161:

[2] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 14-15: Տե՛ս նաև **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 216-223:

[3] Պետք է նշել, որ ըստ Կոստանդին Ծիրանածնի՝ բյուզանդական զորքն արշավել է Բասեն, որի եկեղեցիներն արաբների կողմից վերածվել էին բերդերի: Բյուզանդացիներն ավարի առան Բասենը, ազատագրեցին եկեղեցիները և վերադարձան: Այնուհետև նրանք կրկին արշավեցին, ասպատակեցին Կարինի և Բասենի շրջանները, (տե՛ս **Կոստանդին Ծիրանածին,** էջ 14-15): Այդ իրադարձությունները թվագրվում են համապատասխանաբար 901 թ. և 902 թ. (տե՛ս **К. Юзбашян,** նշվ. աշխ., էջ 130): Համադրելով Անանուն Ձրուցագրի և Կոստանդին Ծիրանածնի հաղորդումները՝ կարող ենք ենթադրել, որ Բասենում (ինչպես նաև Կարինում) տեղի ունեցած իրադարձությունները սերտորեն կապված էին Դվին-Տրապոզոն ճանապարհի վերագործարկման հետ: Այդ ճանապարհն անցնում էր Բասեն և Կարին գավառներով, որտեղ արաբական գաղութներ կային, ուստի՝ ճանապարհի անվտանգությունն ապահովելու համար նրանց պետք էր չեզոքացնել: Այդ գործում, ամենայն հավանականությամբ, բյուզանդական զորքն օգնել է Սմբատ Ա-ին:

[4] Տե՛ս **Անանուն Ձրուցագիր,** էջ 159:

[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 162-164:

կանն Արագածոտնում[1]: 789 թ. նրանք հեռացան իրենց տիրույթներից: Ղևոնդը հաղորդում է, որ երբ Արաբական խալիֆայության Հյուսիսային փոխարքայության փոխարքա Ովբեդլան կամ Ուբայդալլահը (788-791)[2] 788 թ. Արմինիայի ոստիկան նշանակեց Սուլեյմանին (788-790), վերջինս դաժան հալածանքներ սկսեց հայ նախարարների ու ժողովրդի նկատմամբ: Հաջորդ տարին՝ 789 թ., Ուբայդալլահն անձամբ եկավ Հայաստան և անտանելի վիճակ ստեղծվեց երկրում: Նույն թվականին հայ նախարարներից ոմանք՝ Շապուհ և Համամ Ամատունի նախարարների գլխավորությամբ և 12հզ ժողովրդով, որոշեցին հեռանալ Հայաստանից, շարժվեցին Խաղտիքի[3] ուղղությամբ, ճանապարհին Ճորոխ գետի ափին պարտության մատնեցին իրենց հետապնդող արաբական զորքին և, անցնելով գետը, բնակություն հաստատեցին Խաղտիքում՝ Բյուզանդիայից որպես ժառանգական տիրույթ ստանալով այդ հողերը[4]: Ըստ Լ. Խաչիկյանի՝ Ամատունիները լքել էին իրենց տիրույթներն Այրարատում[5]: Ամենայն հավանականությամբ, սխալված չենք լինի, եթե ենթադրենք, որ ինչպես Մամիկոնյանների և Կամսարականների, այնպես էլ Ամատունիների տիրույթներին տեր դարձան Բագրատունիները: Անանունը հաղորդում է, որ Սմբատ Ա-ի օրոք «Արագածն կոչեցեալ ոտն...է բաժին կալուածոց Աբասայ որդւոյ Սմբատայ»[6]:

Դվին և շրջակա գավառներ: IX դ. սկզբին Դվինն անընդհատ գտնվում էր թե՛ արաբների և թե՛ հայ նախարարական տների ուշադրության կենտրոնում: Դվինում հայ բնակչությունը մեծամասնություն էր կազմում, բայց իշխող դիրք ունեին արաբները[7]: Չնայած դրան, Դվին քաղաքն իր շրջակայքով Բագրատունիների տիրույթ էր[8]:

878 թ. Արմինիայի ոստիկան Մուհամմադ իբն Խալիդ աշ-Շայբանին Աբու ալ-Վարդ Կայսիկի հետ դավադրություն ծրագրեց Արմինիայի իշ-

---

[1] Տե՛ս **Ղազար Փարպեցի,** էջ 84, **Մովսես Խորենացի,** Գ. թ., Բ. ծէ: Տե՛ս նաև **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 337, **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 115:

[2] Տե՛ս **A. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 276:

[3] Խաղտիքը գրավում էր լեռնային այն շրջանը, որն ընկած էր Ճորոխ գետի, Սև ծովի առափնյա շերտի և Պարխարյան լեռների միջև՝ մինչև Տրապիզոն: Այն հարավում և արևելքում սահմանակցում էր Բարձր Հայքին, արևելքում՝ Տայքին (տե՛ս **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 36):

[4] Տե՛ս «Պատմությիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 166-169:

[5] Տե՛ս **Լ. Խաչիկյան,** էջեր համշինահայ պատմությունից,-«ԲԵՀ», 1969, թիվ 2, էջ 115-118:

[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 464:

[7] Տե՛ս **al-Istakhri**, էջ 188:

[8] Տե՛ս **Ibn Haukal,** էջ 343:

խանաց իշխան Աշոտ Բագրատունու դեմ, սակայն դավադրությունը բացահայտվեց, Դվինում Աշոտ Բագրատունու հրամանով ոստիկանը ձերբակալվեց և հետ ուղարկվեց խալիֆայի մոտ[1]: Դրանից հետո Դվինի արաբ բնակչությունն ամբողջությամբ ենթարկեցվեց Աշոտ Բագրատունուն: Հասկանալի է, որ Դվինի շրջակա գավառները, որոնք գտնվում էին Դվինի արաբների գերիշխանության տակ, կցվեցին Բագրատունիների տիրույթներին: Այդ է վկայում Հովհաննես Դրասխանակերտցին՝ պատմելով, որ Սմբատ Ա-ի օրոք ապստամբած Մահմետ և Ումայի եղբայրները սոսկ «գլխաւոր ոստիկանք և հրամանատարք քաղաքին» էին[2]: Այսինքն՝ Դվինի արաբների իշխանությունը տարածվում էր միայն քաղաքի և, թերևս շրջակայքի վրա: Սմբատ Ա-ն ճնշեց ապստամբությունը և Դվինը կցեց իր տիրույթներին[3]:

Վերոհիշյալից բխում է, որ Դվինը և շրջակա գավառները՝ Ոստան Դվնան (Ոստան Հայոց), Արածը և Ուրծաձորը մտնում էին արքունի տիրույթների մեջ:

Ըստ Ստեփան Տբեթցու տեղեկության՝ Հայ Բագրատունիների արքունի տիրույթների մեջ էր մտնում Դվինդաշտը՝ 3 ձորով[4], այսինքն՝ Դվինը՝ շրջակա 3 գավառներով: Ամենայն հավանականությամբ, խոսքն ընդհանուր առմամբ Ոստան (նաև Մազազի և Կոտայքի ընդգրկումով, քանի որ վերջինս, թերևս նաև Մազազը, նախապես Ոստան գավառի մի հատվածն էր[5]), Ուրծաձոր և Արած գավառների մասին է:

Մասյացոտն: Մասյացոտն գավառն Արշակունյաց թագավորության շրջանում պատկանում էր արքունիքին[6]: Արշակունյաց թագավորության կործանումից հետո, հավանաբար, այն աստիճանաբար անցավ Բագրատունիներին: Խնդիրն այն է, որ Բագրատունիների վերելքի շրջանում, երբ վերջիններս տիրել էին Այրարատի մեծ մասին, Մասյացոտն գավառը հայտնվել էր Բագրատունյաց տիրույթներով շրջապատված վիճակում, ուստի և մաս էր կազմելու նրանց տիրույթների:

Նիգ: Նիգ գավառը պատկանում էր Գնթունիների տոհմին[7], որոնք

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 338-346:
[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 164:
[3] Անդ, էջ 162-164:
[4] Տե՛ս **Ստեփան Տբեթցի,-Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 91:
[5] Տե՛ս **Թ. Հակոբյան,** Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 115, 145: Տե՛ս նաև «Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի»,-«Հայաստանի պատմության ատլաս», Ա մաս, էջ 42-43:
[6] Տե՛ս **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 335:
[7] Անդ, էջ 336-337:

Սմբատ Ա-ի թագավորության շրջանում զբաղեցնում էին «հրամանատար ի վերայ ամենայն տան արքայի» պաշտոնը[1]: Բացի այդ, Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ Սամշուլդեն ամբողջ շրջակայքով իր տիրույթներին էր կցել Սմբատ Ա-ն՝ բերդապահներ նշանակելով Գնթունի տոհմից Վասակ և Աշոտ իշխաններին[2]: Կարծում ենք, որ Նիգ գավառը ևս միացվել էր Հայ Բագրատունիների տիրույթներին, իսկ տեղի իշխանները Հայոց թագավորի կողմից նշանակվել էին արքունի այլ տիրույթների կառավարիչներ: Բացի այդ, որոշ Գնթունիներ հիշատակվում են Վասպուրականում Սմբատ Ա-ի 906 թ. աբխազական արշավանքի ժամանակ[3]:

Վարաժնունիք: Այս գավառը ևս միացվել էր Բագրատունիների տիրույթներին, ամենայն հավանականությամբ, Նիգի հետ միասին, որից դեպի արևելք, ինչպես կտեսնենք, Բագրատունիները տիրել էին նաև Փառիսոս գավառին:

Հավնունիք, Գաբեղյանք, Աբեղյանք: Այրարատի մեծագույն մասի՝ Բագրատունիներին անցնելուց հետո, այս գավառները հայտնվել էին Բագրատունիների տիրույթներով շրջապատված վիճակում: Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի՝ Հավնունիքի մի մասը արաբական տիրապետության շրջանում մաս էր կազմում կայսիկների ամիրայության[4]: Հավնունիքը ևս, Բասենի հողերի հետ միասին, Սմբատ Ա-ի կողմից կցվել էր արքունի տիրույթներին: Խնդրո առարկա շրջանում Հավնունիների մասին տեղեկություններ է պահպանել Հովհաննես Դրասխանակերտցին: Հավնունի իշխանը միացել էր Կղարջքի Ատրներսեհ իշխանի կողմից Սմբատ Ա-ի դեմ ծրագրած դավադրությանը և վերջինիս բացահայտումից հետո հեռացել իր տիրույթներից[5]: Դրանից հետո Սմբատ Ա-ն, անկասկած, արքունի տիրույթներին է կցել Հավնունիք գավառը:

Ինչ վերաբերում է Գաբեղյանք և Աբեղյանք գավառների համանուն իշխաններին, ապա դեռևս Ն. Ադոնցը նկատել է, որ թեև նրանց տոհմական տիրույթները գտնվում էին Այրարատում, սակայն Թովմա Արծրունու կողմից նրանք Բուղայի արշավանքների և հետագա շրջանում հիշատակվում են Վասպուրականում[6]: Գիտնականը կարծում է, որ Արծրունիների քաղաքական ազդեցության աճի հետևանքով տարբեր իշ-

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 182:
[2] Անդ, էջ 296:
[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր,** էջ 189:
[4] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին,** էջ 17: Տե՛ս նաև **Ա. Տեր-Ղևոնդյան,** Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 216-223:
[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 208-210:
[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 222, 364:

խաններ տեղափոխվել և ծառայում էին Վասպուրականում[1]: Նրանց տիրույթներն Այրարատում, ամենայն հավանականությամբ, անցել էին անընդհատ հզորացող Բագրատունիներին:

Վարդան վարդապետի մի կարևոր հաղորդումից պարզվում է, որ Գաբեղյանք գավառը կամ, որ առավել հավանական է, դրա՝ Բագրևանդին հարևան հատվածը, IX դ. կեսերին պատկանում էր Մամիկոնյաններին: Ըստ հեղինակի՝ Քուրդիկ Մամիկոնյանի որդի Գրիգորը երբ վերադարձավ իրեն պատկանող Բագրևանդ գավառը, «կամէր ամրանալ ի գաւառն Գաբեղինից»[2]: Կարծում ենք, որ այս տեղեկությունը խոսում է այն բանի օգտին, որ Գաբեղյանք գավառի մի մասը պատկանում էր Մամիկոնյաններին: Երբ Աշոտ Բագրատունին տիրեց Բագրևանդին, հավանաբար, նրան անցավ նաև Գաբեղյանքը:

Ինչպես տեսնում ենք, Այրարատը գրեթե ամբողջությամբ մտնում էր Հայ Բագրատունիների տիրույթների մեջ:

2.2. Տարոնի իշխանություն: Տարոնին Բագրատունիները տիրել էին Աշոտ Մսակերի օրոք, երբ 774-775 թթ. ապստամբությունից հետո Մամիկոնյաններն աստիճանաբար թուլացան և հեռացան Հայաստանի քաղաքական թատերաբեմից[3]: Աշոտ Մսակերի իշխանանիստը Արշարունիք գավառն էր: Նրա օրոք Տարոնում գտնվում էին նրա որդիները, որոնցից Բագարատը հոր մահից հետո դարձավ Հայոց իշխան, իսկ այնուհետև նաև՝ Արմինիայի իշխանաց իշխան: Բագարատը խալիֆայից նույնիսկ պահանջում էր Արմինիայի ոստիկանի լիազորությունները: Բուղայի արշավանքից հետո Հայոց իշխանի պաշտոնն անցավ Աշոտ Մսակերի սերունդներից Շիրակի ճյուղի ներկայացուցիչներին:

Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանում Տարոնի Բագրատունիների իշխանության ընդգրկած տարածքի վերաբերյալ սկզբնաղբյուրների տեղեկությունները սակավ են: Այդ պատճառով անհրաժեշտ է քննության առնել նախորդ ժամանակաշրջանում տիրող իրավիճակը և մասնավորապես Հայոց իշխան Բագարատ Բագրատունու օրոք Տարոնի իշխանության ընդգրկած տարածքների սահմանները: Այդ քննությունը մեզ կօգնի Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանում Տարոնի իշխանության տարածքի և վարչաքաղաքական իրավիճակի մասին կարծիք կազմելու հարցում:

---

[1] Տե՛ս **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 357:

[2] **Վարդան վարդապետ**, էջ 87:

[3] Անդ, էջ 83: Կ. Թումանովի կարծիքով՝ Տարոնի հարավ-արևմուտքում դեռևս գոյատևում էին Մամիկոնյանները (տե՛ս **C. Toumanoff,** Studies in Christian Caucasian history, Georgetown University Press, 1963, էջ 209-211, 270, 323-324, 452-453):

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Տարոնի իշխանությունը մտնում էր Արմինիա ոստիկանության Չորրորդ Արմինիա վարչական շրջանի մեջ, որն արևմուտքում տարածվում էր մինչև արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտին կամ «սուղուր»-ը: Յակուտը հաղորդում է, որ բոլոր տարածքները, որոնք հարևան են Բյուզանդիային և որտեղից կատարվում են արշավանքները դեպի այդ երկիրը, կոչվում էին սուղուր[1]: Այն ձևավորվել էր արաբա-բյուզանդական անընդհատ պատերազմների ընթացքում և տարածվում էր Միջերկրական ծովի կիլիկյան ափերից մինչև Բարձր Հայքի Կամախ քաղաքը: Սահմանային ամրությունների գոտին բաղկացած էր երկու մասից՝ Կիլիկիայի (Ասորիքի սահմանային ամրություններ) և Միջագետքի (Զազիրայի սահմանային ամրություններ): Վերջինի կազմում ընդգրկված էին Բարձր Հայք ու Ծոփք աշխարհների արևմտյան գավառները և Փոքր Հայքի հարավային հատվածը՝ Մալաթիա քաղաքով[2]: Հարավում Չորրորդ Արմինիան սահմանակցում էր Զազիրա ոստիկանության Դիար Բաքր երկրամասին: Վերջինի կազմում ընդգրկված էր Մեծ Հայքի Աղձնիք աշխարհի մի մասը: Արաբական առաջին արշավանքների շրջանում Ամիդի շուրջը հաստատված արաբական Բաքր ցեղախումբը տիրեց Աղձնիքին, որի անունից այս շրջանը կոչվեց Դիար Բաքր[3]: Սակայն, Աղձնիքի հյուսիսային լեռնային շրջանները և, հատկապես, Սասունը, որն ընդգրկում էր Աղձնիքի Սանասունք, Երխեթք, Գզեղխ և Սալնո ձոր գավառների, ինչպես նաև Տուրուբերանի Խույթ կամ Խութ գավառի տարածքները[4]՝ գտնվելով հանդերձ Դիար Բաքրի կազմում, պահպանում էին կիսանկախ վիճակ, և մի փոքրիկ ճնշումը բավական էր լինում, որպեսզի ապստամբություն բռնկվեր, ինչպես տեղի ունեցավ 749-752 թթ.[5]: Այդ ապստամբությունից հետո Սասունն աստիճանաբար առանձնացավ Զազիրայից և միացավ Արմինիա ոստիկանությանը: Արաբ հեղինակների տեղեկություններից պարզվում է, որ IX դ. առաջին կեսին արդեն Սասունը վարչականորեն Արմինիա ոստիկանության մաս էր կազմում: Աբու Սաիդ (Աբուսեթ) ոստիկանի սպանության առիթով Իբն

---

[1] Տե՛ս **Jacut** I, էջ 927:

[2] Արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտու մանրամասն քննությունը տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր),-«ՊԲՀ», 1981, թիվ 2, էջ 134-149:

[3] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 52:

[4] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 79:

[5] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Սասունի 749-752 թվականների անհայտ ապստամբությունը խալիֆայության դեմ,-«ՊԲՀ», 1971, թիվ 3, էջ 196-202:

ալ-Ասիրը սասունցիներին պարզապես կոչում է «Արմինիայի ժողովուրդ»[1]: Նույնպիսի տեղեկություն է հաղորդում նաև Իբն Մասկավայը[2]: Անհրաժեշտ է նշել, որ ոստիկանի սպանության դրդապատճառը նրա կողմից Տարոնի Բագարատ Բագրատունի իշխանի գերեվարությունն էր: Բագարատը, ամենայն հավանականությամբ, այդ ժամանակ տիրում էր Սասունին, որը միացվել էր VIII դ. վերջին Բագրատունյաց տիրույթ դարձած Տարոնին: Համենայնդեպս, Թովմա Արծրունու՝ այս ապստամբության մասին պատմածից երևում է, որ լեռնային այդ շրջանն այն ժամանակ մտնում էր Բագարատ Բագրատունու տիրույթների մեջ: Պատմիչը հաղորդում է, որ «յայնժամ բնակիչք լերինն (իմա՛ Սիմ լեռ կամ Սասուն-Ա.Ե.) իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն (իմա՛ Բագարատ-Ա.Ե.) ի գերութիւն, ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել զոր դաշտայինքն կրեցին:...եւ անդէն իսկ և իսկ փութացաւ, եհաս գուժկան առ թագաւորն, եթէ սպանաւ զօրավարն քո և ապստամբեաց ի պետութենէ քումմէ աշխարհն Հայոց»[3]: Պարզվում է, որ այդ ժամանակ Տարոնը և Սասունը կազմում էին Բագարատի մեկ միասնական տիրույթի երկու՝ դաշտային և լեռնային հատվածները:

Ուսումնասիրողներն Արմինիա ոստիկանության կազմի մեջ ներառում են նաև Արզնը (Արծն) և Բաղեշը[4]: Այդ են ցույց տալիս աղբյուրներում պահպանված տեղեկությունները: Ըստ որում՝ դրանք մաս էին կազմելու Չորրորդ Արմինիայի և Բագարատ Բագրատունու իշխանության: Ըստ հայկական ձեռագրերից մեկի հաղորդած տեղեկության՝ «զԲաղէշ իւր երկրովն» Հայ Բագրատունիների տերության մեջ էր մտնում: Վերջինիս մեջ էր մտնում նաև Սղերդ քաղաքը[5]: Հայտնի է, որ վերջինս արաբական տիրապետության շրջանում մաս էր կազմում Դիար Բաքրի[6]:

Իբն ալ-Ասիրը հաղորդում է, որ IX դ. կեսերին ոստիկանի դեմ ապստամբած Արմինիայի իշխանների թվում էր նաև Արզնի տեր Մուսա

---

[1] Տե՛ս ابن الاثير, V, էջ 288:

[2] Տե՛ս **Իբն Մասկավայ,-Բ. Խալաթեանց**, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիեննա, 1919, էջ 77:

[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 190:

[4] Տե՛ս **Ս. Շլեպչյան**, Արաբական Խալիֆաթի վարչական քաղաքականությունը Հայաստանում /7-9 դդ./, պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստճանի հայցման ատենախոսություն, Եր., 1954, էջ 49-52, **Ս. Երեմյան**, Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ, **A. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 156, նույնի՝ «Àðìèíèÿ â I ï î ë î â è í å IX â.» քարտեզը (անդ, էջ 168) և այլն:

[5] Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս,** Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 185:

[6] Տե՛ս **Jacut,** II, էջ 636:

իբն Զուրարան, որը Բագարատ Բագրատունու փեսան էր[1]: Նա, ըստ Թովմա Արծրունու՝ «տիրէր...Արզնայ և ներքոյ կողմանն Աղձնեաց մերձ ի սահմանս Տարունոյ (իմա՛ Տարոնի իշխանություն-Ա.Ե.)»[2]: Նա տիրում էր նաև Բաղեշին[3]: Իբն ալ-Ասիրը հաղորդում է, որ, երբ Մուտավաքքիլ խալիֆան Բուղային ուղարկեց ապստամբությունը ճնշելու, վերջինը սկզբում Մոսուլի և Զազիրայի վրայով հարձակվեց Մուսա իբն Զուրարայի վրա[4]: Այսինքն, ըստ պատմիչի՝ Մուսայի տիրույթ Արզնը Զազիրայի կազմում չէր: Ուստի և պատահական չէ, որ Յակուտն Արզնը և Բաղեշն Արմինիայի մաս է համարում[5]: Նույնն են վկայում նաև մյուս արաբ հեղինակների հաղորդումները: Բալազուրին տեղեկացնում է, որ Բուղան, գալով Արմինիա, Բաղեշում ձերբակալեց Մուսա իբն Զուրարային[6]: Իբն Մասկավայը հաղորդում է, որ Բուղան Արմինիայում ծագած ապստամբության ճնշումը սկսեց Արզնից՝ ձերբակալելով Մուսային[7]: Նույնը հաղորդում է Թաբարին[8]: Այս հաղորդումները խոսուն ապացույցներն են այն իրողության, որ Արզնը և Բաղեշն Արմինիայի մեջ էին մտնում: Այդ են ցույց տալիս նաև Թովմա Արծրունու վկայությունները: Պատմիչը հաղորդում է, որ Աբուսեթն Արմինիայից հեռանալիս, ոստիկանի լիազորությունները, այդ թվում նաև հարկահավաքությունը, հանձնեց Մուսա իբն Զուրարային (ըստ Թովմայի՝ Զօրահա)[9]: Սա ևս նշանակում է, որ Տարոնին, ինչպես նաև Սասունին հարևան Զուրարայի տիրույթներն այդ ժամանակ Արմինիայի մեջ էին մտնում: Այլապես հազիվ թե Աբուսեթը Զազիրայի իշխաններից մեկին հանձներ Արմինիայի ոստիկանի լիազորությունները, այն դեպքում, երբ Արմինիայի տարբեր մասերում հաստատված արաբական ծանրակշիռ գաղութներ գոյություն ունեին, քանզի հայտնի է, որ Արմինիայի ոստիկանները հաճախ լինում էին Արմինիայում հաստատված արաբական ցեղախմբերից[10]: Թովմա Արծրունին, այնուհետև, պատմելով Հայոց 306 թ. (857) իրադարձությունների մասին, հաղորդում է, թե Վասպուրականի իշխաններից Գուրգեն Ապուպելճ Արծրունին «օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ի

---

[1] Տե՛ս ابن الاثير, V, էջ 288:
[2] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**,էջ 172:
[3] Անդ, էջ 174-176: Տե՛ս նաև بلاذري, I, էջ 248, يعقوبي, II, էջ 489:
[4] Տե՛ս ابن الاثير, V, էջ 288-289:
[5] Տե՛ս **Jacut,** I, էջ 205, 526:
[6] Տե՛ս بلاذري, I, էջ 248:
[7] Տե՛ս **Իբն Մասկավայ,-Բ. Խալաթեանց,** Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, էջ 78:
[8] Տե՛ս طبري, VI, էջ 45:
[9] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 172:
[10] Տե՛ս **Ա. Տեր-Գևոնդյան**, նշվ. աշխ., էջ 274-285:

բազում քան թէ ի սակաւ տեղիս, զոր ի Տարօն և զԱնձաւացիս և զոր յԱրզն»[1]: Այսինքն՝ նրա ազդեցությունը տարածվում էր նաև Արզնի վրա, որտեղ իշխող արաբական Զուրարա տունը ծանր հարված էր ստացել Բուղայից: Արզնի՝ Արմինիայի մեջ մտնելու օգտին է խոսում պատմիչի ևս մեկ վկայությունը, թե Արզնի իշխանը և նրա բանակն ակտիվորեն մասնակցում էին հայ նախարարների միջև վեճերին ու ռազմական գործողություններին[2]: Այսինքն՝ այս շրջանում Արզնի ամիրայությունն ընկել էր Արծրունիների ազդեցության տակ:

Բաղեշը մտնում էր Տուրուբերան աշխարհի մեջ և սահմանակից էր Աղձնիքին[3], իսկ Արզնը մտնում էր վերջինիս կազմի մեջ[4]: Հայաստանի և Վիրքի 591 թ. բաժանման ժամանակ Աղձնիքն ու Տուրուբերանը անցան Բյուզանդիային, իսկ արաբական տիրապետության օրոք մտան՝ առաջինը՝ Զազիրայի, իսկ երկրորդը՝ Արմինիա ոստիկանության մեջ: Արզնի՝ Զազիրա ոստիկանության մեջ գտնվելու դեպքում Մուսայի տիրույթները, փաստորեն, գտնվելու էին երկու տարբեր ոստիկանությունների կազմերում, որն անհավանական է: Բագարատ Բագրատունին, որը տիրում էր ի թիվս այլ շրջանների նաև Սասունին և Տարոնին, Բաղեշի վերաբերմամբ նկրտումներ չուներ: Երբ նա Մուսային պարտության մատնեց ու պաշարեց Բաղեշը, հետո հեշտությամբ թողեց այն նրա ձեռքում՝ զիջելով իր քրոջ (որը Մուսայի կինն էր) խնդրանքին[5]: Մեր կարծիքով, եթե Մուսայի տիրույթներն այդ ժամանակ Զազիրայի մեջ լինեին, ապա հազիվ թե Բագարատը նրան զիջեր Արմինիայի կազմում գտնվող այնպիսի մի կարևորագույն հենակետ, ինչպիսին էր Բաղեշը: Այս պարագայում, երբ այնտեղ իշխում էր նրա փեսան, որ արդեն իսկ նրա ազդեցության տակ էր, Բագարատը ջանքեր չգործադրեց իր իշխանության մեջ ընդգրկելու Բաղեշը:

Դատելով վերոասացյալից՝ կարծում ենք, որ Բագարատ Բագրատունու իշխանության կազմում ընդգրկված էր Արզնը, որ հետագայում ընկել էր Արծրունիների ազդեցության ոլորտը: Մեր կարծիքով, Արմինիայի մեջ մտնելու էր ոչ թե Արզն գավառի ողջ տարածքը, որը հարավում տարածվում էր մինչև Տիգրիս գետը[6], այլ դրա հյուսիսային

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 324:
[2] Անդ, էջ 332:
[3] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 31:
[4] Անդ, էջ 30:
[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 172-176:
[6] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 30: Տե՛ս նաև **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ (տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ

լեռնային հատվածը՝ Արզն քաղաքով: Արմինիայի մեջ էին մտնելու նաև Աղձնիքի արևմտյան լեռնային գավառները՝ Կեթիկը, Տատիկը, Ազնվաց ձորը, Երխեթքը և Գզեղխը[1]: Արմինիայի հարավային սահմանագիծը, ամենայն հավանականությամբ, Սասունից արևելք անցնելու էր Արզն քաղաքից հարավ՝ Արմինիայի կազմում ներառնելով Հայկական Տավրոսի լեռնաբազուկները, ապա շարժվելու էր դեպի արևելք և հասնելու էր Ջերմ գետին՝ Սղերդ քաղաքի շրջանում: Սկզբնաղբյուրներում տեղեկությունների բացակայության պատճառով դժվարանում ենք ասել, թե երբ են Արզնը, Բաղեշը և վերոհիշյալ գավառներն մտել Արմինիայի մեջ: Հայտնի է, սակայն, որ Աղձնիքի գավառներից ամենահյուսիսայինը՝ Սասունը, Արմինիայի մեջ էր մտել VIII դ. վերջին կամ IX դ. սկզբին: Ուստի՝ այդ շրջանների մուտքն Արմինիա չէր կարող տեղի ունենալ նախքան այդ իրադարձությունը, դեռ ավելին, ամենայն հավանականությամբ, տեղի էր ունեցել դրա հետ միաժամանակ:

Բացի Տարոնից և Սասունից, ըստ Բալազուրիի՝ Բագարատի իշխանության մեջ էին մտնում նաև Արշամաշատի կամ Շիմշաթի գավառի որոշ հատվածներ[2]: Շիմշաթի գավառի մասին Բալազուրիի տեղեկությունները ցույց են տալիս, որ այն արաբներն ընկալում էին երկու ձևով: Բուն Շիմշաթ գավառն Արշամաշատ կամ Շիմշաթ քաղաքի շրջակա տարածքն է, այսինքն՝ Ծոփքի Բալահովիտ գավառը, որ պատկանում էր Բագարատ Բագրատունուն, իսկ ընդգրկուն իմաստով Շիմշաթի գավառը նույնանում է Շիմշաթի սահմանային շրջանին, որի մեջ էին մտնում արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտուն սահմանակից Արմինիայի հողերը՝ Արշամաշատից մինչև Կամախ[3], այսինքն՝ Բարձր Հայքի և Ծոփքի արևելյան գավառները: Ըստ որում՝ այդ շրջանի մեջ էր մտնում նաև Կարնո քաղաքը, որը համանուն գավառով ուներ որոշակի ինքնուրույնություն[4]: Նույնը հաղորդում է նաև Իբն Խորդադբեհը[5]:

Այսպիսով՝ սահմանային ամրությունների գոտուն սահմանակից Արմինիայի շրջաններն ընդգրկված էին Շիմշաթի սահմանային շրջանում, որի մաս էր կազմում վարչական որոշակի ինքնուրույնություն

«Աշխարհացոյց»-ի (Եր., 1963) աշխատությանը կից քարտեզը), **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[1] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 30-31, Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 389:

[2] Տե՛ս بلاذري, II, էջ 220:

[3] Անդ, էջ 218-220, 240:

[4] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 343, **al-Istakhri**, էջ 188, **Kudama**, էջ 236:

[5] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122:

ունեցող Կարնո քաղաքը կամ Կալիկալան, որն ընդգրկում էր Կարին գավառը: Շիմշաթը և Կարինը՝ սահմանային ամրությունների գոտու կազմի մեջ մտնող Մալաթիայի և Կամախի հետ միասին, կարևորությամբ առաջնային հենակետեր էին արաբների համար:

Շիմշաթի սահմանային շրջանը արևմուտքում սահմանակցում էր Անձիտ գավառին, որը սահմանային ամրությունների գոտու մաս էր կազմում[1] և որտեղ գտնվում էին Անձիտ և Խարբերդ (Հիսն Զիյադ) բերդերը[2]:

Այստեղ կարևոր է ճշտել Արմինիա ոստիկանության և սահմանային ամրությունների գոտու միջև սահմանագիծը՝ կարծիք կազմելու համար Շիմշաթի սահմանային շրջանում ընդգրկված Մեծ Հայքի գավառների մասին: Արաբական աղբյուրները բավական հաճախ են անդրադարձել այդ գոտում գտնվող Կամախին: Յակուտը հաղորդում է, թե Ծոփքի Անձիտ գավառը ևս մտնում էր այդ գոտու մեջ[3]: Իսկ վերջինիս հարևանությամբ գտնվող Արշամաշատ քաղաքը մաս էր կազմում Արմինիա ոստիկանության: Սահմանային ամրությունների գոտու մեջ պետք է մտնեին նաև Անձիտ գավառի և Կամախ քաղաքի միջև գտնվող Ծոփքի և Բարձր Հայքի գավառները՝ Գավրեքը, Ծոփքը (Ծոփք Շահունի), Դեգիքը, Մուզուրը և Դարանաղիի հարավային մասը[4]: Ամենայն հավանականությամբ՝ Արմինիա ոստիկանության սահմանագիծը սահմանային ամրությունների գոտու հետ հարավից հյուսիս անցնելու էր սկզբում Արղնիի լեռներով, այնուհետև Արշամաշատ քաղաքի արևմտակողմով, ապա Արածանի գետի հունով և Մնձուր (Մուզուր) ու Խոզաթ գետերի ջրբաժանով: Հետո սահմանագիծը հատելու էր Մնձուր լեռներն ու դուրս էր գալու Կամախի շրջակայքը: Ելնելով Կամախի մեծ կարևորությունից՝ Մնձուր լեռների՝ նրանից դեպի արևելք ձգվող հատվածը ևս պետք է ընդգրկված լիներ սահմանային ամրությունների գոտու մեջ:

Այսպիսով՝ Շիմշաթի սահմանային շրջանի մեջ էին մտնելու Մեծ Հայքի Ծոփք աշխարհի Բալահովիտ, Պաղնատուն, Խորձյան, Հաշտյանք, Բարձր Հայքի Մուզուր գավառի արևելյան և Եկեղյաց գավառի հարավային ու արևելյան հատվածները և Մանանաղի գավառը: Պետք է նշել, որ արաբական տիրապետության շրջանում Արմինիա ոստիկանության մեջ մտնում էր Դերջան քաղաքը՝ համանուն գավառի հարավային

---

[1] Տե՛ս **Jacut**, IV, էջ 993:
[2] Անդ, II, էջ 276, 417:
[3] Անդ, IV, էջ 993:
[4] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր), էջ 141:

հատվածով: Երբ Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի միջև կնքված 652 թ. պայմանագրի պատճառով Բյուզանդիայի Կոստաս Բ կայսրը (641-668) նույն թվականին արշավեց դեպի Հայաստան, «իբրև եհաս ի Դերջան, ընդ առաջ եղեն նմա արք իսմայելացիք և մատուցին նմա թուղթ յիշխանէն իւրեանց, որ էր գրեալ այսպէս, թե «Հայք իմ են, անդ մի՛ երթար. ապա թէ երթաս՝ ես գամ ի վերայ քոյ, և առնեմ զքեզ որ անդրէն փախչել ոչ կարես»»[1]: Անհրաժեշտ է նշել, որ հայ-արաբական պայմանագրում, ամենայն հավանականությամբ, որոշակիորեն պետք է արձանագրվեին հարկատու դարձող երկրի սահմանները: Ուստի՝ այն փաստը, որ Բյուզանդիայի կայսրն արաբներից վերջնագիր ստացավ այն ժամանակ, երբ հասավ Դերջան, ցույց է տալիս, որ արաբներին հարկատու դարձած Հայոց իշխանապետության սահմանն անցնում էր Դերջան գավառով: Սահմանագիծը Բյուզանդիայի հետ, ամենայն հավանականությամբ, Կամախից արևելք անցնում էր Եփրատ գետով մինչև Դերջան և հետո դրանից հյուսիս գտնվող լեռների ջրբաժանով՝ դեպի արևելք:

Դատելով այն իրողությունից, որ Շիմշաթի գավառը, այսինքն՝ Բալահովիտ գավառը, պատկանում էր Բագարատ Բագրատունուն, պետք է կարծել, որ Բագարատի իշխանության մեջ էին մտնում նրա բուն տիրույթ Տարոն գավառից բացի Ծոփքի Հաշտյանք գավառը, քանի որ Հաշտյանքը գտնվում էր Բագարատի տիրույթներ Տարոնի և Բալահովիտի միջև, ինչպես նաև Խորձյան, Պաղնատուն և Բալահովիտ գավառները: Դատելով այն իրողությունից, որ Բալազուրին Բագարատ Բագրատունուն անվանում է «Խլաթի պատրիկ»[2], նրա տիրույթների մեջ էր մտնում նաև Տուրուբերանի Բզնունիք գավառը, քանի որ Խլաթ քաղաքը գտնվում էր Բզնունիքում: Տարոնի իշխանության մեջ էր մտնում նաև Արշամունիք գավառի հարավային հատվածը՝ Ուլնուտ կամ Եղանց (Եղնուտ) բերդով[3] և Հարք գավառի արևմտյան մասը[4]: Կարելի է բխեցնել նաև, որ Հայոց իշխանին, որը միաժամանակ նաև Տարոնի իշխանն էր, պատկանելու էր Շիմշաթի սահմանային շրջանի մնացած հատվածը ևս՝ Բարձր Հայքի Մուզուր գավառի արևելյան և Եկեղյաց գավառի հարավային և արևելյան հատվածներն ու Մանանաղի

---

[1] **Սեբեոս**, էջ 165:
[2] Տե՛ս بلاذري, II, էջ 220:
[3] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 9-10:
[4] Տե՛ս **Գ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 64, 88:

գավառը[1]: Ըստ որում՝ Բագարատ Բագրատունին այդ տարածքներին տիրում էր երկու իրավունքով՝ Արմինիայի իշխանաց իշխանի և Տարոնի իշխանի: Այստեղից էլ բխում է, որ այն բանից հետո, երբ Տարոնի Բագրատունիներն այլևս Հայոց իշխանի և Արմինիայի իշխանաց իշխանի պաշտոնը չէին ստանում, նրանք Տարոնի իշխանի իրավունքով տիրում էին վերոհիշյալ շրջաններին:

Վերոհիշյալ ողջ տարածքը մտնում էր Արմինիա ոստիկանության Չորրորդ Արմինիա երկրամասի մեջ[2]:

Վերևում կատարված քննությունը ցույց տվեց, որ Բագարատ Բագրատունու տիրույթների մեջ ընդգրկված էր Չորրորդ Արմինիան՝ բացառությամբ Կարին գավառի և Տուրուբերանի որոշ գավառների:

Հայ Բագրատունիների տերության ձևավորման շրջանում իրավիճակը փոխվեց: Բագրատունիների Տարոնի ճյուղից գերագահությունն անցավ Այրարատի ճյուղին:

Արզնը, ինչպես տեսանք, ընկավ Արծրունիների ազդեցության տակ: Ամենայն հավանականությամբ, Արծրունիների գերիշխանության տակ էին անցնելու նրանց տիրույթներ Տուրուբերանի Երևարք գավառի, Մոկքի և Աղձնիքի Արզն գավառի միջև գտնվող Աղձնիքի գավառները՝ Ազնվաց ձորը, Կեթիկը և Տատիկը: Չորրորդ Արմինիայի տարածքում ստեղծվում են նաև Ապահունիքի, Խլաթի, Արճեշի և Կարինի արաբական ամիրայությունները: Ապահունիքի (կամ Մանազկերտի) ամիրայությունն ընդգրկում էր Ապահունիք գավառի տարածքը և Հարք գավառի արևելյան մասը, Կարինի ամիրայությունը՝ Կարնո գավառի տարածքը, իսկ Խլաթի և Արճեշի ամիրայությունները՝ համանուն քաղաքները՝ շրջակա տարածքներով: Ուստի և այդ շրջանում Տարոնի իշխանությունն ընդգրկելու էր Չորրորդ Արմինիայի մնացյալ տարածքները՝ Տուրուբերանի Տարոն, Խույթ, Ասպակունյաց ձոր գավառները, Արշամունիք (Աշմունիք) գավառի հարավային և Հարք գավառի արևմտյան հատվածները, Աղձնիքի Սանասունք, Երխեթք, Գզեղխ, Սալնո ձոր գավառները, Ծոփքի Հաշտյանք, Բալահովիտ, Պաղնատուն, Խորձյան գավառները և Բարձր Հայքի Մուզուր գավառի արևելյան և Եկեղյաց գավառի արևելյան և հարավային հատվածներն ու Մանանաղի գավառը:

Բուղան ի թիվս մյուս հայ իշխանների գերեվարեց Բագարատ Բագ-

---

[1] Անդ, էջ 63-64: Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ:

[2] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122, بلاذري, I, էջ 231 և այլն:

ռատունու երկու որդիներին՝ Աշոտին և Դավիթին[1]: Դեռևս այն ժամանակ, երբ Գուրգեն Ապուպելճ Արծրունին իր իշխանությունն էր տարածում Անձևացիքում, Արզնում և Տարոնում, Բուղան ճանաչեց նրա իշխանությունը Հայաստանի հարավային շրջաններում և Տարոնում[2]: Սակայն, երբ մյուս իշխանների հետ արաբական գերությունից վերադարձան նաև Բագարատի որդիներ Աշոտը և Դավիթը, Գուրգենը Տարոնը զիջեց նրանց և նրանց հետ բարեկամական հարաբերություններ էր պահպանում: Դրա ապացույցն էր այն, որ 862 թ. նա ապաստանեց Տարոնում[3]: Այսպիսով վերականգնվեց Տարոնի Բագրատունիների իշխանությունը:

Շուտով Վասպուրականի Գրիգոր-Դերենիկ Արծրունին (875-885) խաբեությամբ ձերբակալեց Տարոնի Աշոտ իշխանին և օգնեց նրա փոխարեն Տարոնի իշխան դառնալու Աշոտի եղբայր, իր քույր Մարիամի ամուսին Դավիթին, որ կոչվում է նաև Արքա կամ Արքայիկ[4]: Ըստ Կոստանդին Ծիրանածնի՝ Դավիթ Արքայիկը երկու որդի ուներ, իսկ ըստ Թովմա Արծրունու՝ մեկ[5]:

Դավիթ Արքայիկը ըստ Թովմա Արծրունու՝ մահացել է Դվինի երկրաշարժից (893 թ.) երկու տարի անց, այսինքն՝ 895 թ.[6]: Նրան հաջորդեց նրա եղբորորդի Գուրգենը, որ կարճ իշխեց և մահացավ Դիար Բաքրի ամիրա Ահմադի հետ բախումներից մեկի ժամանակ, որից հետո Ահմադը տիրեց Տարոնի իշխանությանը[7]: Թովմա Արծրունու հաղորդմամբ՝ «մեռաւ արքայն իշխան Տարունոյ, և բռնազբօսեալ զաշխարհն Ահմաթ որդի Յիսէի Շեհայ յինքն նուաճել»[8]: Այսինքն՝ Ահմադը Տարոնի իշխանության որոշ հատվածների տիրացել էր Դավիթի մահից հետո: Արդեն Գուրգենի մահից հետո նա տիրացավ Տարոնի իշխանության մնացյալ հատվածին ևս: Ըստ Թովմա Արծրունու՝ Ահմադը տիրել էր «զկողմանս Տարունոյ...տուն Հայոց անուանեալ առաջին ասէին զՏարօն»[9]:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ իրողությունը հանգեցնելու էր Հայոց տիրակալի և Դիար Բաքրի ամիրայի միջև բախման: Սմբատ

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 122:
[2] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 324, **Գ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 96, 98-100:
[3] Տե՛ս **Գ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 99:
[4] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 4-5:
[5] Անդ, էջ 5, **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 342:
[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 356-358:
[7] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 176:
[8] **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 358:
[9] Անդ, էջ 366:

Ա-ն մի քանի անգամ գրել էր նրան՝ թողնել Տարոնը, բայց նա Հայոց թագավորի պահանջը չէր կատարել[1]:

Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ երբ Սմբատ Ա-ն տեսավ, որ երկիրը միավորված էր, «եդ ի մտի իւրում երթալ հարթել հաստատել և նուաճել զաշխարհն ևս Տարօնոյ և զկողմանս նահանգին ևս Աղձնեաց. զի մի՛ տարամերժեսցի սեպհականութիւն ազգացն այնոցիկ ի բնիկ տերութիւնէ: Վասն զի մեծ իշխանն Իսմայէլեան՝ Ահմատ, որ տիրեալ ունէր և Միջագետս Ասորոց մինչև ցՊաղեստին՝ ձերբակալ արարեալ զփեսայացեալն Արծրունեաց Ապլմախրայ, որ ի ծածուկ ունէր զհաւատս քրիստոնէութեան և փոխանակ բդեշխացն պայազատէր զաշխարհն Աղձնեաց՝ և ի բանտի զնա եդեալ՝ յինքն գրաւէր զսեպհականութիւն տանն և զբնակիչս Սիմ լերինն»[2]: Այստեղ խոսքն, ամենայն հավանականությամբ, Աղձնիքի այն հատվածի մասին է, որ նախկինում՝ մաս կազմելով Արմինիա ոստիկանության, հետագայում Հայ Բագրատունիների տերության մեջ էր մտնում և պատկանում Տարոնի Բագրատունիներին:

Սմբատ Ա-ն անմիջապես դիմեց վճռական գործողությունների: Նա «դեսպանս արարեալ յամենայն սահմանս տէրութեան Հայոց, Վրաց և Աղուանից», հավաքեց իր տերության զինված ուժերը և արշավեց Տարոնի ուղղությամբ[3]: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 896 թ. Թուղխ գյուղի մոտ և Գագիկ Ապումրվան Արծրունու դավաճանության պատճառով ավարտվեց հայկական զորքի պարտությամբ[4]:

Սակայն Ահմադի մահից հետո (898 թ.) Տարոնի իշխանությունն ազատվում է արաբական գերիշխանությունից[5]: Հասկանալի է, որ այն կրկին ընդգրկվում է Հայոց տերության կազմի մեջ, սակայն հիմա արդեն Տարոնի իշխանության նկատմամբ սկսում է հետաքրքրություններ դրսևորել Բյուզանդական կայսրությունը:

898 թ. Տարոնի իշխան դարձավ Գրիգոր Բագրատունին, չնայած Սմբատ Ա-ն ցանկանում էր Տարոնի իշխան տեսնել իր եղբոր փեսային, որ Դավիթ Արքայիկի որդին էր[6]: Ավելին, Գրիգոր Բագրատունին ձերբակալեց Դավիթ Արքայիկի որդիներին:

Ո՞վ էր Գրիգոր Բագրատունին: Ըստ Թովմա Արծրունու, երբ Գրի-

---

[1] Անդ:
[2] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 176:
[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 366:
[4] Անդ, էջ 366-368, **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 176-178:
[5] Տե՛ս **Գ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 125:
[6] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 5, **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 176:

գոր-Դերենիկի օգնությամբ Տարոնի իշխան դարձավ Դավիթ Արքայիկը, որոշ ժամանակ անց գերությունից ազատվեց Տարոնի նախորդ իշխան Աշոտը[1]: Սրա մասին այլևս որևէ հիշատակություն չկա: Դավիթի մահից հետո, չնայած նա երկու որդի ուներ, Տարոնի իշխան դարձավ նրա եղբորորդի Գուրգենը: Այն, որ Դավիթն այլ եղբայր չուներ, ցույց է տալիս, որ նրա մահից հետո Տարոնի իշխանությունն անցել է Աշոտի որդուն՝ Գուրգենին: Ն. Ադոնցը ենթադրում է, որ Գրիգորը Թոռնիկի որդին էր, որը Բագարատի որդիներից էր[2], իսկ Յ. Մարկվարտը կարծում է, որ Գրիգորի հայրը Սողոմոն Բագրատունին էր, որին հիշատակում է Թովմա Արծրունին[3]: Գ. Գրիգորյանը սկզբնաղբյուրներում տեղեկությունների բացակայության պատճառով ձեռնպահ է մնում Գրիգորի հորը որոշելուց, նշելով միայն, որ նա հավանորեն Բագարատ Բագրատունու շառավիղներից էր[4]: Մեր կարծիքով Գրիգորն ամենայն հավանականությամբ Գուրգենի որդին պետք է լիներ, որից էլ բխում էր թերևս Տարոնի իշխանական աթոռի նկատմամբ նկրտումներ ունեցող Դավիթ Արքայիկի որդիների ձերբակալությունը:

Անանուն Ձրուցագիրը Սմբատ Ա-ի աբխազական արշավանքի մասնակիցների թվում հիշատակում է «իշխան Աղձնեց Գրիգոր բազում զաւրաւք» և «իշխանն Տարունոյ Գագիկ բազում հեծելաւք»[5]: Պատմիչը, որ հայ Բագրատունյաց տերության մասին պահպանել է եզակի և անչափ կարևոր տեղեկություններ, իր այս հաղորդման մեջ իրարից առանձին հիշատակում է «Աղձնեց»-ը, որ մեր կարծիքով ոչ այլ ինչ է, եթե ոչ Տարոնի իշխանության մեջ մտնող Աղձնիքի գավառների ընդհանրությունը և «Տարունոյ»-ը, որ Տարոնի իշխանության մնացյալ հատվածն է: Որքան մեզ է հայտնի, դեռևս այս հաղորդման քննությամբ ոչ մի ուսումնասիրող չի զբաղվել: Բացի այդ, մյուս պատմիչներին անհայտ է Տարոնի իշխան Գագիկը: Ինչ վերաբերում է Գրիգորին, ապա նրա մասին որոշակի տեղեկություններ է պահպանել Կոստանդին Ծիրանածինը: Ըստ կայսր-պատմիչի՝ Գրիգորը (Կրիկորիկ Տարոնացի) խաղում էր երկու լարերի վրա: Մի կողմից նա Բյուզանդիային հավաստիացնում էր, որ դաշնակից է նրան, իսկ մյուս կողմից օգնում էր արաբներին, երբ վերջիններս արշավանքի էին դուրս գալիս Բյուզանդիայի դեմ[6]: Այս

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 348

[2] Տե՛ս **N. Adontz**, Les Taronites en Arménie et a Byzance, Byzantion 10, «Etudes Armeno-Byzantines», Lisbonne, 1965, էջ 214, 242:

[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 318:

[4] Տե՛ս **Գ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 128:

[5] Տե՛ս **Անանուն Ձրուցագիր**, էջ 189:

[6] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 4-5:

հաղորդումից երևում է, որ Գրիգորի իշխանությունը՝ սահմանակցելով արևմուտքում Բյուզանդական կայսրությանը, որ ակտիվ ռազմական գործողություններ էր ձեռնարկում սահմանային ամրությունների գոտում, իսկ հարավում՝ Արաբական խալիֆայությանը, միաժամանակ երկու վտանգի տակ էր: Այդտեղից էլ բխում էր նրա երկու լարի վրա խաղալու հնարքը:

Ըստ Կոստանդին Ծիրանածինի՝ Գրիգոր իշխանը Ապոգանեմ անունով եղբայր ուներ, որը մեկնել էր Կոստանդնուպոլիս և բյուզանդական կայսեր կողմից պատրիկի կոչում ստացել: Բացի կոչումից կայսրը նրան բաժին էր հանել նաև մայրաքաղաքում գտնվող Բարբարոսի տունը: Սակայն երբ իր հերթին Գրիգորը մեկնեց Բյուզանդիա, Բարբարոսի տունը հանձնեցին նրան: Սրա դեմ բողոքեց Ապոգանեմի որդի Թոռնիկը, որ նույնպես ստացել էր պատրիկի կոչում: Գրիգորը երկու որդի ուներ՝ Բագարատ և Աշոտ: Առաջինը կայսեր կողմից նշանակվել էր Տարոնի զորավար: Երկու եղբայրները նեղեցին Թոռնիկին, որը գրեց կայսերը, որպեսզի վերջինս մարդ ուղարկի և ստանա Տարոնի իշխանության մեջ գտնվող նրա երկիրը: Այնուհետև մահից առաջ Թոռնիկն իր երկիրը կտակեց կայսրությանը: Կայսրը մարդ ուղարկեց «Ապոգանեմի երկիրը կամ պատրիկ Թոռնիկի բաժինը»՝ տիրանալու դրան: Գրիգորի որդիները առաջարկեցին կայսրությանը՝ վերցնել Ուլնուտը՝ շրջակայքով, Թոռնիկի երկրի փոխարեն: Կայսրն ընդառաջեց այս առաջարկին և իրեն վերցրեց Ուլնուտը՝ ողջ շրջակայքով: Այնուհետև պատմիչն ավելացնում է, որ Տարոնի երկիրը բաժանվեց երկու մասի: Մի մասը գտնվում էր Գրիգորի որդիների ձեռքում, իսկ մյուս մասը՝ Ապոգանեմի որդիների[1]:

Այսպիսով՝ Կոստանդին Ծիրանածինի տեղեկությունից պարզվում է, որ Տարոնի իշխանությունը Գրիգոր Բագրատունու օրոք բաժանված էր երկու մասի՝ նրա և նրա եղբայր Ապոգանեմի միջև: Այն, որ Ապոգանեմը և նրա որդի Թոռնիկը կայսրից ստանում են պատրիկի, այսինքն՝ իշխանի տիտղոս, ցույց է տալիս, որ Գրիգորը և Ապոգանեմը հավասար իրավունքներ ունեին, չնայած հնարավոր է, որ եղբայրներից մեկին, ամենայն հավանականությամբ, Գրիգորին, պատկանում էր ավագության կամ գերագահության իրավունքը:

Եթե համադրենք Անանուն Զրուցագրի և Կոստանդին Ծիրանածինի հաղորդումները, ապա կարող ենք արձանագրել, որ որպես Տարոնի Գրիգոր իշխանի ժամանակակից նրանցից առաջինը հիշատակում է

[1] Անդ, էջ 6-10:

Գագիկ իշխանին, իսկ երկրորդը՝ Ապոգանեմին: Մյուս կողմից, եթե ըստ Անանուն Զրուցագրի Տարոնի իշխանը Գագիկն էր, ապա ըստ Կոստանդին Ծիրանածինի՝ Գրիգորը: Ակնհայտ է, որ Ապոգանեմ անունը արաբական Աբու Ղանըմ անվան աղավաղումն է: Բագրատունի իշխանը, մեր համոզմամբ, ունենալու էր նաև հայկական անուն, որ, մեր կարծիքով, Անանուն Զրուցագրի հիշատակած Գագիկն է: Այս դեպքում հարց է առաջանում: Տարոնացի կոչված Գրիգորը, փաստորեն, «Աղձնեց» իշխան է, այսինքն՝ Տարոնի իշխանության մեջ մտնող Աղձնիքի հողերի իշխանը, իսկ Տարոնին տիրում է Գագիկ-Ապոգանեմը: Այն, որ Ապոգանեմի տիրույթները գտնվում էին Տարոն գավառում և հարակից շրջաններում, պարզ է դառնում թեկուզ Կոստանդին Ծիրանածինի այն հաղորդումից, որ հենց Թոռնիկն իր տիրույթները կտակեց կայսրությանը, Գրիգորի որդիները առաջարկեցին կայսերը վերցնել ոչ թե Թոռնիկի երկիրը, այլ Ուլնուտը՝ շրջակայքով: Այսինքն՝ նրանք չէին ցանկանում, որ Տարոնի իշխանության սիրտը՝ Տարոն գավառը, անցներ կայսրության գերիշխանության տակ: Սակայն կարծում ենք, որ Գրիգորին Կոստանդին Ծիրանածինի կողմից տրվող «Տարոնացի» անվանումը կարող էր ունենալ երկու պատճառ: Առաջին՝ Գրիգորին էր պատկանում գերագահությունը Տարոնի իշխանության մեջ և երկրորդ՝ նա տիրում էր Տարոն գավառի մի մասին: Այս պարագայում, ամենայն հավանականությամբ, երկու պատճառն էլ իրենց ազդեցությունն են թողել: Տարոնի իշխանության գահերեց Գրիգոր Բագրատունին տիրելու էր Տարոնի իշխանության մեջ մտնող Աղձնիքի գավառներին և Աղձնիքին հարակից Տուրուբերանի Ասպակունյաց ձոր և Խույթ կամ Խութ գավառներին, ինչպես նաև Տարոն գավառի հարավային որոշ հատվածների: Ըստ որում Ուլնուտը, որ նույնական է Տուրուբերանի Արշամունիք կամ Աշմունիք գավառի հարավ-արևմուտքում գտնվող Եղանց բերդին կամ Եղնուտին[1], սահմանակցում էր Տարոն գավառին, այսինքն՝ եղբայրներին հաջողվել էր կայսերը զիջելով Տարոնի իշխանության մեջ մտնող Արշամունիք գավառի տարածքները՝ իշխանության սահմաններում պահել Տարոն գավառն ամբողջությամբ:

Պարզվում է նաև այն իրողությունը, որ չնայած Ապոգանեմ-Գագիկի որդի Թոռնիկը իբրև թե կտակել էր իր հողերը կայսրությանը, սակայն Կոստանդին Ծիրանածինը նշում է, որ դրանից հետո Տարոնի իշխանությունը բաժանվեց երկու մասի, ըստ որում՝ առաջինում իշխում էին Գրիգորի որդիները, իսկ երկրորդում՝ Ապոգանեմի: Այսինքն՝ կտակի մասին

[1] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ:

ողջ պատմությունը հորինվածք է, որ կատարվել է ապագայում Բյուզանդիայի կողմից Տարոնին տիրելը հիմնավորելու համար: Ըստ որում այն հիշատակությունը, թե կայսրը տիրել էր Ուլնուտը կամ Եղնուտը՝ շրջակայքով, ևս պատահական չէ: Այդ շրջանը Տարոնի իշխանության կենտրոնական հատվածներից էր, ուստի այդպիսով բյուզանդական պատմիչի կողմից փորձ է արվում ցույց տալու, թե կայսրը ստացել է որպես ժառանգություն Տարոնի արևմտյան և կենտրոնական շրջանները:

Գիտական գրականության մեջ արմատացած այն տեսակետները, թե իբր Տարոնի Գրիգոր իշխանը համարյա թե չէր ենթարկվում Սմբատ Ա-ին[1] կամ էլ լիովին անկախ էր[2], քննություն չեն բռնում Անանուն Զրուցագրի այն հաղորդման լույսի ներքո, որ, ինչպես տեսանք, Սմբատ Ա-ի աբխազական արշավանքին մասնակցում էին թե՛ Գրիգոր Տարոնացին և թե՛ Ապոգանեմ-Գագիկը: Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը տեղի է ունեցել 906 թ.: Ուստի այդ շրջանում Տարոնի իշխանությունը գտնվում էր Հայոց տերության կազմում, իսկ նրա իշխանները ենթարկվում էին Հայոց թագավորին:

Անդրադառնալով Տարոնի Գրիգոր և Ապոգանեմ-Գագիկ իշխանների տիրույթներին, նշենք, որ, դատելով աղբյուրների տեղեկություններից, դրանք ընդգրկում էին Տարոնի իշխանության նախկին տարածքները: Մշո Սուրբ Աղբերիկ վանքի կոնդակում նշված է, որ թագավոր հռչակված Գագիկ Արծրունին ցանկացել է տիրանալ «զԱնձտայ, զՍասունք, զԽօյթ, զՏարաւն, զՇատահն[3], զԽլաթ, զՀայք[4]»[5], որոնք Տարոնի իշխանության մաս էին կազմում, սակայն հաջողություն չի ունեցել:

Դատելով պատմաաշխարհագրական պայմաններից, ամենայն հավանականությամբ Գրիգորին էր պատկանում իշխանության ամբողջ հարավային հատվածը, որի մեջ էին մտնում Տարոն գավառի հարավային մասը, Ասպակունյաց ձորը և Խույթը, Աղձնիքի գավառներից Սանասունքը, Սալնո ձորը, Երխեթքը և Գզեղխը, Ծոփքի Բալահովիտ և Պաղնատուն գավառներն ամբողջությամբ և Հաշտյանք գավառի հարավային հատվածը: Վերջինի հյուսիսային մասը, Խորձյանը, Տարոնի հյուսիսային և Հարքի արևմտյան հատվածները, Արշամունիքի հարավային մասը, Մուզուրի արևելյան, Եկեղյացի արևելյան և հարավային շրջան-

---

[1] Տե՛ս **Գ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 125:
[2] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 84:
[3] Բաղեշ (Բիթլիս) գետի միջին հոսանքի աջ ափին:
[4] Պետք է լինի Հարք:
[5] **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 183:

ները և Մանանաղին պատկանում էին Գագիկին: Ըստ որում, ինչպես կտեսնենք, Հարքն ամբողջությամբ Սմբատ Ա-ի կողմից կցվել էր արքունի տիրույթներին: Տարոնի իշխանության երկու հատվածների սահմանագիծն անցնելու էր արևելքից արևմուտք Մեղ (Մեղրագետ) և Արածանի գետերի հարավային ջրբաժաններով մինչև Բալահովիտ գավառի արևելյան սահմանագիծը, այդտեղից բարձրանում էր դեպի հյուսիս սկզբում ներկայիս Սանջակի լեռներով, իսկ այնուհետև՝ դեպի Մյուս Գայլ գետի կիրճը ձգվող երկու լեռնաբազուկներով մինչև այդ գետի միջին հոսանքը, որտեղից թեքվում էր դեպի արևմուտք և՝ անցնելով Մյուս Գայլ և Գայլ գետերի միջին հոսանքների միջև ձգվող լեռնաբազուկով, հատում էր Գայլ գետն ու Խոզաթ գետի միջին հոսանքի շրջանում հասնում Բյուզանդիայի սահմանին:

Նշենք նաև, որ Տարոնի իշխանն ընդգրկված էր Կոստանդին Ծիրանածնի այն ցուցակում, որտեղ նշված են այն իշխանները, որոնց նամակներ էին ուղարկվում Բյուզանդիայի արքունիքից[1]:

2.3. Հայ Բագրատունիների արքունի տիրույթները Տուրուբերանում: Հայ Բագրատունիների արքունի տիրույթների մեջ էին մտնում նաև Տուրուբերանի որոշ գավառներ:

Աղորնիք (Մարդաղի): Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի ճշգրտման՝ արաբական տիրապետության շրջանում մտնում էր կայսիկների տիրույթների մեջ[2]: Անանուն Զրուցագիրը՝ անդրադառնալով Սմբատ Ա-ի նվաճումներին, հաղորդում է, որ նա արքունի տիրույթներին է կցել Աղորնիքը[3]: Այն, ամենայն հավանականությամբ, նույնական էր Տուրուբերանի Մարդաղի գավառին կամ դրա արևելյան հատվածին, որտեղ՝ Մուրց գետի միջին հոսանքի աջափնյակում, գտնվում էր Հավճիչ ամրոցը[4]: Արիստակես Լաստիվերցին Հավճիչ ամրոցը հիշատակում է Աղորիում[5] (իմա՛ Աղորնիք), որից էլ բխեցվում է Մարդաղին կամ նրա մի հատվածի նույնականությունը Աղորնիքին: Գրավելով Աղորնիքը՝ Հայոց թագավորը կայսիկների ամիրայությունը կտրել էր Կարինի ամիրայությունից:

Հարք: Տարոնի իշխանության բաժնում ցույց տվեցինք, որ Հարք գավառի արևմտյան մասը մտնում էր Տարոնի իշխանության մեջ, իսկ արևելյանը՝ մաս էր կազմում կայսիկների ամիրայության: Սմբատ Ա-ի

---

[1] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 151:

[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 216-223:

[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 159-161:

[4] Տե՛ս «Բագրատունյաց տերությունը Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների օրոք»,- «Հայաստանի պատմության ատլաս», Ա մաս, էջ 62-63:

[5] Տե՛ս **Արիստակես Լաստիվերտցի**, էջ 62, 63 և այլն:

օրոք, երբ Հայոց թագավորը վճռական գործողություններ էր ձեռնարկում իր տերության կազմում գտնվող արաբական ամիրայությունների դեմ, տեղի է ունենում կարևոր իրադարձություն: Ըստ Անանուն Զրուցագրի՝ ի թիվս այլ շրջանների, Սմբատ Ա-ն «էառ...զՀարք»[1]: Այդպիսով Հայոց արքան իր հսկողության տակ էր առնում Հայոց տերությունը հարավի հետ կապող երկու մեծ ճանապարհների հսկողությունը: Առաջինը նախկինում Արքունի պողոտա կոչվող մեծ ճանապարհն էր, իսկ երկրորդը՝ Դվինից Խլաթով դեպի Ասորիք և Միջագետք տանող մայրուղին: Պատմիչն այստեղ թե՛ կայսիկների ամիրայությունից, որի մեջ նախկինում մտնում էր Հարքի արևելյան մասը, և թե՛ Տարոնի իշխանությունից, որի մեջ էր մտնում այդ գավառի արևմտյան մասը, առանձնաբար է հիշատակում Հարքը: Պետք է բխեցնել, որ Սմբատ Ա-ն արքունի տիրույթներին էր կցել Հարք գավառը (բացառությամբ վերջինիս որոշ արևմտյան շրջանների, որոնք մտնում էին Տարոնի իշխանության մեջ), հավանաբար, Ապահունիքի կայսիկներին 902 թ. ջախջախելուց անմիջապես հետո: Ուստի և պատահական չէ, որ Կոստանդին Ծիրանածինը հաղորդում է, որ Հարքը պատկանում էր Սմբատ Ա-ին[2]:

Կորո ձոր (Կորի): Ըստ Կոստանդին Ծիրանածնի՝ Սմբատ Ա-ն կայսիկներից գրավել էր նաև Տուրուբերանի Կորո ձոր գավառը (Կորի)[3], թերևս, Հարքի հետ միասին: Այն տարածվել է Կորո ձոր գետի (Քյոր-սու դերեսի) հովտում՝ ընդգրկելով նաև Խաչլու լճի ավազանը[4]:

Ապահունիք: Սմբատ Ա-ն իր տիրույթներին էր կցել նաև Ապահունիքի մեծ մասը[5], որն արաբական տիրապետության շրջանում պատկանում էր կայսիկներին: Սկզբնաղբյուրների տեղեկությունները ցույց են տալիս, որ Սմբատ Ա-ն անդամահատել էր նախկինում ընդարձակ տարածքներ զբաղեցնող կայսիկների ամիրայությունը: Նախ, ինչպես տեսանք, նրանից պոկվել էր Կարինի ամիրայության հետ կապող Աղորնիքը, ապա՝ Վանա լճի հյուսիսային ափամերձ ամբողջ հատվածը, այնուհետև՝ Հարք գավառը, Բասենի հողերը, ինչպես նաև Ապահունիքի որոշ հատվածներ: Դա պետք է անմիջական հետևանքը լիներ կայսիկների 902 թ. ապստամբության[6]:

Ինչպես տեսանք, նվաճելով Վանա լճի հյուսիսային ափին գտնվող

---

[1] **Անանուն Զրուցագիր**, էջ 161:
[2] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10-11:
[3] Անդ, էջ 11:
[4] Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 348, **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 61 և այլն:
[5] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 161:
[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 382:

ամիրայությունները մինչև Մանազկերտ և Հարքը, Հայոց արքան հսկողության տակ էր առնում Հայոց տերությունը հարավին կապող երկու ճանապարհների հսկողությունը:

Աղիովիտ: Աղիովիտ գավառը նախապես պատկանում էր Գնունիներին, սակայն Աշոտ Բագրատունին «բողոք կալեալ ազգին Գնունեաց՝ թափել զնոսա յԻսմայելացւոցն, որոյ երթեալ հազար արամբ յԱղիովիտ գաւառ, և առ ինքն գումարեալ զամենայն ազգն ախիւն իւրեանց, տանի բնակեցուցանէ ի Տայս»[1]: Կարծիք է հայտնվել, թե Գնունիների գաղթի պատճառն ութմանիկներն են եղել, իսկ նրանց գաղթեցումից հետո Աղիովիտ գավառն անցել է նրանց[2]: Հայտնի է, որ ութմանիկները տիրում էին նաև Առբերանի գավառին[3] և տարածվել էին հարավում մինչև Վարագա լեռան շրջանը[4]: Ինչպես կտեսնենք, Աղիովիտ գավառի տարածքում գտնվող Արճեշ քաղաքը, որտեղ կայսիկներ էին հաստատվել, միացվել էր Հայ Բագրատունիների արքունի տիրույթներին, իսկ ութմանիկներն էլ ընկել էին Սմբատ Ա-ի գերիշխանության տակ և կայսիկներից պաշտպանվելու համար ապավինում էին Սմբատ Ա-ի օգնությանը[5]: Այսինքն՝ ութմանիկներն ամբողջությամբ հայտնվել էին Հայ Բագրատունիներից կախյալ վիճակում: Անանունը հաղորդում է, որ Գագիկ Արծրունին մոտ 907 թ. ութմանիկներից գրավել է Ամյուկ ամրոցը[6]: Սմբատ Ա-ի զորքերն անմիջապես արշավեցին դեպի Ամյուկ և գրավեցին այն, բայց քանի որ Ամյուկի ութմանիկներն այլևս գոյություն չունեին, Սմբատ Ա-ն այն վաճառեց Գագիկին[7]: Ամենայն հավանականությամբ, Ամյուկի ութմանիկների ոչնչացումից հետո Աղիովիտ գավառն ամբողջությամբ մտցվել է Արքունի տիրույթների մեջ:

Ինչ վերաբերում է Արճեշ քաղաքին, ապա հաստատվել էր արաբական կայսիկ ցեղի մի հատվածը դեռևս VII դ. երկրորդ կեսին, ուստի և դրա խնդիրը կքննարկենք կայսիկների մյուս գաղութների հետ միասին:

Արճեշ, Խլաթ և Արծկե: Հայտնի է, որ Վանա լճի ափերի գտնվող այս քաղաքներում արաբներ էին հաստատվել: Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո Հայոց թագավորները սկսեցին իրենց գերիշխանության ներքո վերցնել այդ շրջանները: Կոստանդին

---

[1] **Վարդան վարդապետ**, էջ 83:
[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները, էջ 85:
[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 434. պատմիչն հաղորդում է, որ ութմանիկներին էր պատկանում «բերդն Ամիւկ իւրական գաւառաւն»:
[4] Անդ, էջ 306, 332-334:
[5] Անդ, էջ 380-382, **Անանուն Զրուցագիր**, էջ 161:
[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 434:
[7] Անդ, էջ 438:

Ծիրանածնի հաղորդմամբ, «Իշխանաց իշխանը (իմա՛ Աշոտ Բագրատունի-Ա.Ե.) տիրում էր վերոհիշյալ երեք ամրոցներին, այն է Պերկրիին (Բերկրի), Խալիատին (Խլաթ) և Արզեսին (Արճեշ)...: Մանցիկիերտին էր տիրում Ապելվարդը, որ գտնվում էր իշխանաց իշխան Աշոտի...իշխանության ներքո: Իշխանաց իշխան Աշոտը այս Ապելվարդին տվեց նաև Խլիատ ամրոցը, Արզեսը և Պերկրին»[1]:

Սմբատ Ա-ի օրոք իրավիճակը փոխվեց: Սկզբնաղբյուրների տեղեկությունները ցույց են տալիս, որ Սմբատ Ա-ն գրավել է Արճեշ, Խլաթ և Արծկե քաղաքներն ու կցել արքունի տիրույթներին: Անանուն Զրուցագիրը հաղորդում է, որ Սմբատ Ա-ն Արճեշը հանձնել էր Դարբանդից եկած մի արաբի[2]: Բացի այդ՝ «Սըմպատ էառ աշխարհն Ղլաթայ և շինեց ինքն բերդ և կամեցաւ ձգել զձեռն իւր ի Միջագետս Ասորոց»[3]: Երբ նախապատրաստվում էին ռազմական գործողություններ Սմբատ Ա-ի և Շայբանիների ամիրայության միջև, վերջինիս ամիրան Սմբատ Ա-ին մեղադրում էր, թե «դարձար Ասորոց դէհս և առեր զԱրճեշ և զԱրձկէ և զՄացկերտ: Եւ դարձեալ անդգնեցար և առեր զգաւարն Ղլաթայ»[4]: Այս հույժ կարևոր հաղորդումները ցույց են տալիս, որ Սմբատ Ա-ն գրավել է Խլաթը և Արծկեն և, ամենայն հավանականությամբ, վերջ տվել տեղի արաբական ամիրայություններին: Ըստ որում, Հայոց թագավորը Խլաթ գավառում սեփական ամրոցն է կառուցում: Սմբատ Ա-ն «զի էր մի Տաճիկ, և անուն նորայ Ապուհեճր, տայր զբերդն Բերկրոյ»[5]: Հավանաբար վերոհիշյալ Ապուհեճրն ութմանիկ էր, իսկ քաղաքը նրան հանձնելը կարելի է ընկալել որպես Սմբատ Ա-ի գերիշխանության ընդունումը նրա կողմից: Սմբատ Ա-ն նաև կայսիկներից գրավեց Երիկավ ամրոցը Բերկրու մոտակայքում, որ կայսիկները խլել էին ութմանիկներից, և վերադարձրեց վերջիններիս[6]: Ինչպես տեսանք, Առբերանի գավառի հարավային հատվածը՝ Ամյուկ ամրոցով, անցել էր Գագիկ Արծրունուն: Կոստանդին Ծիրանածինը հաղորդում է, որ Խլաթը, Բերկրին և Արճեշը գրավվել էին Սմբատ Ա-ի կողմից և միայն նրա մահից հետո անցել Մանազկերտի

---

[1] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10:

[2] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 161:

[3] Անդ, էջ 171-173: Հետաքրքիր է այն, որ Մշո Սուրբ Աղբերիկ վանքի կոնդակում հիշատակված է Սմբատ Ա-ի զորքի՝ «Ասորիք» հասնելը. «Ես Սմբատ Հայկազնի՝ որդի Աշոտոյ,...որ Տիեզերակալ կոչեցայ և տիրեցի Հայոց մինչեւ յԱսորիս» (տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 180):

[4] **Անանուն Զրուցագիր**, էջ 171:

[5] Անդ, էջ 161:

[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 380-382:

ամիրային[1]: Այսինքն՝ Առբերանի գավառի հյուսիսային հատվածը՝ Բերկրի քաղաքով, մտնում էր արքունի տիրույթների մեջ:

Փաստորեն, Սմբատ Ա-ն իր գերիշխանությունը հաստատեց արաբական գաղութների վրա՝ փոխելով Աշոտ Ա-ի ստեղծած վիճակը, երբ Բերկրին ու Արճեշը հանձնվել էին Մանազկերտում նստող Ապլվարդին: Ըստ որում՝ հանձնելով Արճեշը Դարբանդից եկած մի արաբի, հավանաբար, Սմբատ Ա-ն կատարել է կրկնակի քայլ: Նախ, դրանով նա վերացրել է Արճեշում կայսիկների իշխանությունը և հետո՝ հարևան արաբական գաղութների դեմ ստեղծել է լուրջ հակակշիռ, որովհետև հայտնի է, որ Դարբանդում և շրջակայքում հաստատվել էին արաբների հարավային ցեղախմբին պատկանող արաբական ցեղեր[2], որոնք թշնամի էին հյուսիսային ցեղախմբի արաբներին, որոնցից էր կայսիկների ցեղը:

Ամենայն հավանականությամբ, գրավելով Վանա լճի հյուսիսային ափերին գտնվող ամիրայությունները՝ Սմբատ Ա-ն վերահսկողություն էր հաստատում Արևելքից եկող, Հերով և Վանա լճի հյուսիսային ափերով անցնող մայրուղու վրա:

Ուստի կարող ենք արձանագրել, որ Սմբատ Ա-ն արքունի տիրույթներին էր կցել Աղիովիտ ու Բզնունիք գավառները, Առբերանի գավառի հյուսիսային հատվածը և Ապահունիքի մեծ մասը:

2.4. Տայք: Տայքը Սասանյան Պարսկաստանի տիրապետության ժամանակաշրջանում մտնում էր Հայոց մարզպանության մեջ, իսկ Տայքին հյուսիսից սահմանակից Մեծ Հայքի թագավորության Գուգարքի բդեշխությունը միացվել էր Վրաց մարզպանությանը[3]: Արաբները մեծավ մասամբ պահպանեցին գոյություն ունեցող վարչական բաժանումը, որի հետևանքով Տայքը մաս էր կազմում Արմինիա ոստիկանության Երրորդ Արմինիա վարչական շրջանի, որի մեջ մտնում էին նաև Վասպուրականը, Դվինը, Շիրակը, Բագրևանդը և Նախճավանը[4], իսկ Գուգարքը՝ Երկրորդ Արմինիայի[5]:

Այս վարչաքաղաքական իրավիճակն էր տիրում տարածաշրջանում, երբ Հայաստանում հզորացած Բագրատունիները սկսեցին Հայաստանի քաղաքական անկախության վերականգնման գործընթացը:

---

[1] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10-11:

[2] Տե՛ս بلاذري, I, էջ 244:

[3] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի,- «ԲԵՀ», 1977, թիվ 2, էջ 187-188:

[4] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122, **Ibn al-Fakih**, էջ 290-291, بلاذري, I, էջ 231, Jakubi, էջ 364, **Jacut**, I, էջ 219-220:

[5] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 60-61:

774-775 թթ. Հայոց հուժկու ապստամբությունը կտրուկ փոխեց իրավիճակն Արմինիայում: Արաբներն անզոր գտնվեցին Արմինիայում ունեցած ուժերով այն ճնշել և որդեգրեցին նոր քաղաքականություն: Բացի այն, որ այդ ապստամբությունից հետո նրանք Արմինիա տեղափոխեցին մեծաթիվ արաբական ցեղեր, նրանք սկսեցին Արմինիայում իրենց տիրապետությունը պահպանելու համար հենվել նույն այդ ապստամբությունից հետո աննախադեպ հզորության հասած Բագրատունիների հետ: Ապստամբությունից հետո դրան մասնակցած Բագրատունիները՝ փախչելով արաբների վրեժխնդրությունից, հեռացան իրենց տիրույթներից և ապաստանեցին Կղարջքում: Վարդան վարդապետը Բագրատունիների այդ ճյուղի մասին պատմում է. «Սմպատ Բագրատունի, և զկնի նորա Աշոտ, որդի Վասակայ, զոր կուրացուցին Մամիկոնեանքն. սմա լինին երկու որդիք: Սմբատ՝ նախնի թագաւորացն Հայոց, և Վասակ սկիզբն թագաւորացն Վրաց. որոյ որդին Ատրներսեհ, սորա՝ Աշոտ, սորա՝ Բագարատ, որոյ եղբայրն Գորամ, հետ սմա՝ Դաւիթ որդի Բագարատայ՝ որ սպանաւ ի Գորամայ հօրեղբօրմէ իւրմէ, որոյ որդին Ատրներսեհ, սորա որդի Դաւիթ. ամա եղբօրորդի Գուրգէն, որոյ որդին Բագարատ, որ առ իւր կին զդուստր Սենեքերիմայ թագաւորին Վասպուրականի: Իսկ Հայոց նախնոյն Սմբատայ որդի Աշոտ Մսակեր»[1]: Կղարջք հեռացած Բագրատունին եղել է Վասակը: Վրաց պատմագիտական գրականության մեջ ընդունված է այն կարծիքը, թե Վասակը

---

[1] **Վարդան Վարդապետ**, էջ 87-88: Վրաց Բագրատունիների ծագման մասին հիշատակություն է պահպանվել նաև Ստեփանոս և Ներսես Մեծոփեցիների անունով մեզ հասած ձեռագրում: Նշված է, որ Վրաց թագավորը ծագում էր «յազգէն հրէից, որք գերեցան յազգէն բաբելացոց յառաջն և յետոյ ի Տիգրանայ, և այս պատճառաւ խառնեցան յազգս մեր և յետոյ եղեն մեզ թագաւորք ընդիրք..., և այլ մնացեալքն ի Բագրատունեաց գնացին ի մէջ Վրաց և եղեն նոցա թագաւոր» (տե՛ս Խաչիկյան Լ., Հայ պատմագրության անհայտ էջերից,-«ՊԲՀ», 1972, թիվ 4, էջ 239): Որոշ տարբերություններ կան Թովմա Մեծոփեցու աշխատության մեկ այլ ձեռագրում, ըստ որի՝ Բագրատունիները «...թագաւորք եղեն յետ ցեղին Արշակունեաց...եւ ի նեղութենէ անօրինաց փախուցեալ ի տունն Վրաց՝ եղեն ուրացողք ճշմարտութեանն եւ հաւատովքն քաղկեդոնիկ» (տե՛ս Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրի, գլ. Ը,-digilib.am):

Վրացի պատմաբանները՝ նպատակ հետապնդելով «վրաց» կոչված Բագրատունիներին կտրելու հայկական արմատներից, չնայած հայկական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններին, թե Կղարջքում հաստատվել են Հայաստանի Բագրատունիների այն ճյուղի ներկայացուցիչները, որոնք մասնակցել էին 774-775 թթ. ապստամբությանը, փորձ են կատարում նրանց կապելու վրացական Փառնավազյան թագավորական հարստության հետ կամ Բագրատունիների հինավուրց տիրույթ Սպեր գավառը հռչակելու որպես հին վրացական երկրամաս (տե՛ս С. Джанашиа, նշվ. աշխ., էջ 19-20): Պետք է նշել, որ դեռևս Ն. Մառը Կղարջքի Բագրատունիներին պարզապես անվանում էր «վրացացած Բագրատունիներ» (տե՛ս **Н. Марр,** История Грузии (Культурно-исторический набросок), по поводу слова прот. И. Восторгова о грузинском народе,-"К грузинскому вопросу", N 1, СПб., 1906, էջ 23):

հաստատվել է Տայքի հյուսիսային մասում (Կող գավառ) և Կղարջքում, որոնք դրանից հետո էլ շարունակել են մաս կազմել վրացական Բագրատունիների տիրույթների[1]: Այս խնդրին դեռ կանդրադառնանք, իսկ այժմ նշենք, որ մեզ այդ տեսակետը թվում է ոչ հիմնավոր որոշ տեսակետներից: Սկզբում նշենք, որ դրա հիմքը «Քարթլիի մատյանի» պահպանած այն հաղորդումն է, թե Վասակի որդի Ատրներսեհը տիրում էր Ստորին Տայքին և Ասիսփորիին (իմա՛ Արսեաց փոր)[2]: Այս տեղեկությունը հակադրվում է նշված դեպքերի ժամանակակից Ղևոնդի այն վկայությանը, որ 774-775 թթ. ապստամբությունից հետո ստեղծված անելանելի իրավիճակից մղված՝ Ամատունիները և որոշ այլ նախարարներ՝ 12հզ. ժողովրդով, հեռացան իրենց տիրույթներից և հասան «ի սահմանս Վրաց ի գաւառն Կող»[3]: Այս վկայությունը ցույց է տալիս, որ Տայքի հյուսիսային Կող գավառը չէր գտնվում Երկրորդ Արմինիայի մեջ, այլ մաս էր կազմում այդ վարչական շրջանին հարավից սահմանակից Երրորդ Արմինիայի[4]: Բացի այդ, մինչև այժմ անհայտ է, թե երբ են Բագրատունիների կրտսեր ճյուղի ներկայացուցիչները տեղափոխվել Կղարջք: Կարող են լինել երկու վարկած: Առաջինը Ն. Ադոնցի տեսակետն է, թե այդ իրադարձությունը տեղի է ունեցել 775 թ.[5]: Երկրորդ՝ հնարավոր է, որ այդ տեղի է ունեցել հենց Ամատունիների գաղթի ժամանակ, այսինքն՝ 789 թ.[6]: Ըստ որում, Ղևոնդի կողմից Ամատունիների գաղթի երթուղու նկարագրությունը խոսում է երկրորդ տեսակետի օգտին, քանի որ այն անցնում էր Ճորոխ գետի ստորին հոսանքի շրջանով[7]: Բայցևայնպես, առավել հավանական է Ն. Ադոնցի կարծիքը, քանի

---

[1] Տե՛ս **Ì. Ëîðäêèíàíèäçå,** նշվ. աշխ., էջ 306-316: Տե՛ս նաև "Некоторые вопросы истории Грузии в армянской историографии" (Тб., 2009) ժողովածուի նյութերը, որտեղ հեղինակները փորձ են կատարել Մեծ Հայքի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջանները (Տայք, Գուգարք, Սպեր և այլն) ցուցադրելու որպես վրացական հողեր, որոնց IX-X դդ. իբր փորձել են տիրել հայերը):

[2] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 28:

[3] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 168-169:

[4] Ս. Ջանաշիան փորձում է ցույց տալ, որ Ղևոնդի «հասանէր ի սահմանս Վրաց ի գաւառն Կող» արտահայտությունը ցույց է տալիս, որ Կող գավառը մտնում էր Վիրքի մեջ (տե՛ս **С. Джанашиа**, նշվ. աշխ., էջ 14-15): Այդ հիշատակությունը հակառակ իմաստ է արտահայտում և, բացի այդ, բերված հիշատակության մեջ «Վիրք»-ը, ինչպես կտեսնենք, բուն Վիրքից տարբերվող վարչաքաղաքական հասկացություն է:

[5] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 485: Ա. Տեր-Ղևոնդյանը կարծիք է հայտնել, թե այդ իրադարձությունը տեղի է ունեցել 775-784 թթ. (տե՛ս А. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 124):

[6] Ըստ Ղևոնդի՝ Ամատունիների գաղթը տեղի է ունեցել Արաբական խալիֆայության Հյուսիսային փոխարքայության փոխարքա Ովբեդլայի կամ Ուբայդալլահի (788-791) և Արմինիա ոստիկանության արաբ ամիրա (ոստիկան) Սուլեյմանի (788-790) իշխանության երկրորդ տարում, այսինքն՝ 789 թ. (տե՛ս **Ղևոնդ**, էջ 166-169):

[7] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 166-169:

որ ապստամբությանը մասնակից Բագրատունիները պետք է անմիջապես հեռանային իրենց տիրույթներից, այլապես կենթարկվեին արաբների վրեժխնդրությանը: Սա առավել ևս խոսում է մեր տեսակետի օգտին: Եթե Վասակն արդեն հեռացել էր Կղարջքի կողմերը 775 թ.-ին կամ դրանից քիչ անց, ապա 789 թ. դրությամբ Կող գավառը՝ ըստ Ղևոնդի, ինչպես նաև ամբողջ մնացյալ Տայքը դուրս է նրա տիրույթներից: Պատմիչի ընկալմամբ Վիրք հասկացությունը նույնանում է Երկրորդ Արմինիային՝ ընդգրկելով նաև Գուգարքը, ինչի պատճառով էլ Կող գավառից հյուսիս գտնվող Գուգարքը նշվում է որպես Վիրքի մաս: Մեկ այլ ընկալմամբ հայ պատմիչների երկասիրություններում Վիրք հասկացությունը նույնանում է այն տարածքներին, որոնք պատկանում էին հետագայում Հայոց Սմբատ Ա-ի կողմից Վրաց թագավոր կարգված Ատրներսեհ Բագրատունու սերունդներին: Դրան մենք մանրամասնորեն կանդրադառնանք ստորև: Կող գավառը վերոհիշյալ երկու ընկալումներով էլ դուրս է մնում Վիրք հասկացությունից: Դա է ապացուցում նաև Վարդան վարդապետի այն տեղեկությունը, թե երբ խալիֆան Վասակի որդի Ատրներսեհի որդի Աշոտին տվեց Վիրքը, նա սկզբում «տիրեաց ի Կաղրջաց մինչև ի Տփխիս, լեռնակողմամբն հանդերձ»[1]: Այսինքն՝ Աշոտը տիրում էր Գուգարքի Կղարջք գավառին և այնտեղից էլ սկսեց սկզբում Գուգարքի արևելյան մասի նվաճումը: Ուստիև հստակ նշված է՝ «Կղարջքից մինչև Տփղիս»: Աշոտն իր ծրագրերն իրականացնելիս բախվեց Տփղիսի ամիրայությանը, պարտություն կրեց ու նահանջեց Կղարջք՝ ամրանալով Արտանուջ բերդում[2]: Ինչ վերաբերում է Տայքին, ապա այն, ինչպես նաև 774-775 թթ. ապստամբությունից հետո Հայաստանի քաղաքական թատերաբեմից հեռացած Մամիկոնյանների և Կամսարականների մյուս տիրույթները, ժառանգական իրավունքով անցել էր Բագրատունիներին, քանի որ Հայոց իշխան Աշոտ Մսակերի մայրը Մամիկոնյան էր, իսկ Մամիկոնյաններն ապստամբությունից առաջ տիրում էին Տայքին[3]: Վարդան վարդապետը հաղորդում է. «Աշոտ և Շապուհ...գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց»[4]: Այսինքն՝ Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունու և Կղարջքի կուրապաղատ Աշոտ Բագրատունու օրոք Տայքը մտնում էր առաջինի տիրույթների մեջ:

---

[1] **Վարդան վարդապետ**, էջ 84:

[2] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 187, **Ì. Ëîðáêèïàíèäçå**, նշվ. աշխ., էջ 248, 307-308:

[3] Տե՛ս **Ասողիկ**, էջ 106:

[4] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 83:

Փաստորեն, 774-775 թթ. ապստամբությունից հետո տեղի են ունենում երկու կարևոր իրադարձություն՝ Տայքին տիրում է Աշոտ Մսակեր Բագրատունին, իսկ Կղարջքում հաստատվում են ապստամբությանը մասնակից Բագրատունիները: Ինչպես իրավամբ նշում են Հ. Մարկվարտը և Ն. Ադոնցը, «Վրաց» կոչված Բագրատունիները տիրում էին միայն Կղարջքին[1]:

Ըստ «Քարթլիի մատյանի»՝ 881 թ. դեպքերից որոշ ժամանակ առաջ Կղարջքի Աշոտ կուրապաղատի որդի Գուառամը տիրել էր Ջավախքին, Թռեղքին, Տաշիրքին, Աշոցքին և Արտահանին, որից հետո իր տիրույթները բաժանել էր եղբայրների՝ Ատրներսեհի և Բագարատի հետ, իսկ Աշոցքը՝ զիջել իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն[2]: Վախուշտ Բագրատիոնը տեղեկացնում է, որ Աշոտի որդիներից Բագարատը տիրում էր Քարթլիին և Սամցխեին, Ատրներսեհը՝ Կղարջքին, իսկ Գուառամը Ջավախքին, Թռեղքին ու Աշոցքին և Հայաստանի որոշ հատվածների[3]: Այն իրողությանը, որ վրացական երկու աղբյուրների տեղեկությունների համեմատությունը ցույց է տալիս, որ Արտահանը, Աշոցքը և Տաշիրքը Հայ Բագրատունիների տիրույթներ էին, ակնհայտ է: Այստեղ հավելենք, որ, քարտեզագրելով Վախուշտ Բագրատիոնի տեղեկության մեջ նշված երեք եղբայրներին պատկանող գավառները, տեսնում ենք, որ Ատրներսեհը տիրում էր բուն Կղարջք գավառին, Գուառամը՝ հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք տեղաբաշխված Արտահանին, Ջավախքին, Աշոցքին, Թռեղքին, ինչպես նաև Ջավախքի արևելքում գտնվող Տաշիրքին, իսկ Բագարատի տիրույթը՝ Վերին Քարթլին կամ Սամցխեն, հյուսիսում սահմանակցում էր Աբխազաց թագավորությանը, արևմուտքում՝ Ագարին կամ Էգր-Աճարային, հարավում՝ Գուառամի տիրույթներին, իսկ հարավ-արևմուտքում՝ Շավշքին (Շավշեթ): Ամենայն հավանականությամբ, Բագարատի տիրույթ «Քարթլի»-ն վերաբերում էր Ագարին և Շավշքին և ոչ մի կերպ Տայքի հյուսիսային գավառներին, որոնցից Բագարատի տիրույթները բաժանված էին Գուառամի հողերով: Բացի այդ, վրացական աղբյուրներում երեք եղբայրների տիրույթների մեջ Տայքի կամ դրա որևէ հատվածի չհիշատակվելը խոսում է այն բանի օգտին, որ նրանց տիրույթները տեղաբաշխված էին Տայքից հյուսիս և հյուսիս-արևելք:

Վրացական պատմագրության մեջ փորձ է արվել ցույց տալու, թե

---

[1] Տե՛ս **Յ. Մարկուարտ,** Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 138, **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 504:

[2] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 31:

[3] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 187:

Աշոտ կուրապաղատի մահից հետո նրա իշխանությունը, որն իբր ընդգրկում էր Տայքն ու Կղարջքը, բաժանվել է նրա ժառանգների միջև: Ըստ որում՝ Կղարջքի իշխան Ատրներսեհը, որը Սմբատ Ա-ից թագ ստացավ, ներկայացվում է որպես Տայքի իշխան[1]: Ըստ Ս. Ջանաշիայի, IX դ. առաջին կեսին Աշոտ կուրապաղատի որդիներն ընդարձակեցին իրենց տիրույթները (ըստ ուսումնասիրողի՝ «իրենց թագավորությունը», որը սխալ է) Կուր գետի վերին հոսանքի ավազանում՝ տիրելով Կող գավառին, Արտահանին, Ջավախքին, Սամցխեին և Տայքին: Հենց այս տարածքները, ըստ նրա, միմյանց միջև բաժանեցին Աշոտ կուրապաղատի ժառանգները[2]: Նրա տեսակետը հակասության մեջ է մտնում «Քարթլիի մատյանի» և Վախուշտ Բագրատիոնի տեղեկությունների հետ, որոնք, հանվանե հիշատակելով Աշոտ կուրապաղատի որդիների տիրույթները, դրանց մեջ Տայքի որևէ գավառ չեն նշում: Փաստորեն, ոչ մի նման բաժանման մասին խոսք լինել չի կարող, քանի որ Տայքը Մամիկոնյանների՝ քաղաքական թատերաբեմից հեռանալուց հետո, դարձել էր Հայաստանի Բագրատունիների տիրույթ: Վրացական պատմագիտության մեջ գործածվում է այսպես կոչված «Տաո-Կլարջեթի վրացական իշխանություն» արտահայտությունը՝ ի նկատի ունենալով Տայքում և Կղարջքում միմյանցից անկախ «Վրաց» Բագրատունիների իշխանությունների առկայությունը: Նշվում է, որ այն առավել հստակ է արտահայտում տիրող իրավիճակը[3]: Ըստ Ս. Ջանաշիայի, այսպես կոչված Տաո-Կլարջեթի իշխանության մեջ ընդգրկված էին ոչ միայն Տայքն ու Կղարջքը, այլ նաև Սամցխեն, Ջավախքը, Արտահանը, Կողը, Սպերը և այլ շրջաններ: Այդ իշխանությունը, ըստ նրա, IX-X դդ. սահմանագլխին ներկայացված էր երկու ճյուղով՝ Կղարջքի կամ Արտանուջի, որի հիմնադիրն Աշոտ կուրապաղատի որդի Ատրներսեհն էր, և Տայքի, որի հիմնադիրը նրա մյուս որդին էր՝ Բագարատը[4]: Վերևում տեսանք, որ Բագարատը Տայքի հետ որևէ կապ չուներ:

Պետք է նշել, սակայն, որ երբեմն նույնիսկ վրացական պատ-

---

[1] Տե՛ս Ì. Ëîðäêèïàíèäçå, նշվ. աշխ., էջ 310-316:

[2] Տե՛ս С. Джанашиа, նշվ. աշխ., էջ 21:

[3] Տե՛ս Ì. Ëîðäêèïàíèäçå, նշվ. աշխ., էջ, էջ 306 և այլն:

[4] Տե՛ս С. Джанашиа, նշվ. աշխ., էջ 9-10, 20-21: Բացի այդ, հեղինակը, անդրադառնալով հայկական, վրացական և բյուզանդական աղբյուրներում բերված՝ Բագրատունիների ոչ հայկական ծագման մասին պատմություններին, այն կածիքն է հայտնում, թե իբր դրանք ցույց են տալիս, որ ինչպես Բագրատունիները, այնպես էլ Ճորոխ գետի միջին և վերին հոսանքների շրջանի ազգաբնակչությունը (ի նկատի ունի Սպեր գավառը, որը պատկանում էր Բագրատունիներին, Տայքը և Կղարջքը) հայկական չի եղել (տե՛ս С. Джанашиа, նշվ. աշխ., էջ 17-18):

մաբանները «Տաո-Կլարջեթ» եզրույթը պայմանական են համարում[1]: Բացի այդ, տեղյակ լինելով Տայքի՝ Մամիկոնյանների նախարարական տանը պատկանելու փաստին՝ վրացական որոշ պատմաբաններ փորձ են կատարել նույնիսկ այդ հինավուրց հայկական տոհմին վերագրելու վրացական ծագում[2]:

1902 թ. Ի. Ճավճավաձեն հանդես եկավ մի գրքույկով, որտեղ սուր քննադատության էր ենթարկում բոլոր այն հայ և այլազգի գիտնականներին, որոնք Տայքի, Գուգարքի և Ցարական կայսրության Թիֆլիսի գավառի տարբեր շրջանների մասին խոսել էին որպես հայկական երկրամասերի[3]: Ի. Ճավճավաձեի գրքույկին ի պատասխան Խ. Վերմիշևը 1904 թ. կատարեց մի ծավալուն ուսումնասիրություն, որտեղ ոչ միայն ցույց տվեց վրացի հեղինակի պնդումների կեղծ և շինծու լինելը, այլև նրա կողմից քննադատության ենթարկված հեղինակների տեսակետները հավելեց նոր փաստարկներով[4]: Նույնիսկ Մ. Բրոսսեն, որը առանձնահատուկ համակրանք ուներ վրացիների նկատմամբ, անդրադառնալով Տայքին, Գուգարքին և Աղվանքին (ըստ ուսումնասիրողի՝ Կախեթի ընդգրկմամբ), նշել է, որ այդ շրջանները ոչ մի կերպ չեն կարող կապվել վրացիների գոյության հին շրջանի հետ[5]: Չնայած վերոհիշյալին, մինչև այսօր վրաց պատմաբանների շրջանում դեռևս ի հայտ են գալիս Ի. Ճավճավաձեի գրքույկի ոճով գրված աշխատություններ: 2009 թ. Վրաստանում լույս տեսավ «Վրաստանի պատմության որոշ հարցերը հայկական պատմագրության մեջ» վերտառությամբ հոդվածների մի ժողովածու[6], որի նպատակաուղղվածության մասին կարելի է կարծիք կազմել նախաբանն ընթերցելիս: Վերջինիս, որի հեղինակն ակադ. Դ. Մուսխելիշվիլին է, լի է թշնամական և վիրավորական շեշտադրումներով ներկայիս ողջ հայկական պատմագիտության նկատմամբ: Նա գրում է, թե իբր հայ պատմաբանները Հայաստանին են վերագրում վրացական երկրամասեր, և թե այդ սովորությունը սկիզբ է

---

[1] Տե՛ս **Е. Такайшвили**, Археологическая экспедиция 1917-го года в южные провинции Грузии, Тб., 1952, էջ 31, **В. Беридзе**, Архитектура Тао-Кларджети: Место памятников Тао-Кларджети в истории грузинской архитектуры, Тб., 1981, էջ 17:

[2] Տե՛ս **С. Джанашиа**, նշվ. աշխ., էջ 19:

[3] Տե՛ս **И. Чавчавадзе**, Армянские ученные и вопиющие камни, Тифлис, 1902.

[4] Տե՛ս **Х. Вермишев**, Материалы для истории грузино-армянских отношений, Ответ на книжку кн. **И. Г. Чавчавадзе**: Армянские ученные и вопиющие камни, С.-Петербург, 1904:

[5] Տե՛ս **M. Brosset**, Revue des antiquités georgiennes, Bullet. Scientif. N3 (V, p. 3, St.-Petersbourg, 1839).

[6] Տե՛ս "Некоторые вопросы истории Грузии в армянской историографии", сборник статей, Тб., 2009:

առնում Մովսես Խորենացուց[1]: Նշվում է նաև, թե հայերը պատմության ընթացքում երեք փորձ են կատարել Վրաստանի հարավային շրջաններին տիրանալու, որոնցից մեկը տեղի է ունեցել մ.թ.ա. II դ., մյուսը՝ մ.թ. IX-X դդ., իսկ երրորդը՝ 1918 թ.[2]:

Երկրորդ Արմինիայի մեջ մտնող շրջաններից միասնական կենտրոնածիգ իշխանության ստեղծման դրոշով հանդես եկան Կղարջքի Բագրատունիները, որոնց ներկայացուցիչ Աշոտը, ինչպես նշում է Վարդան վարդապետը, խալիֆայից իշխանություն էր ստացել Վիրքի վրա: Նրան իրեն ենթարկելու նպատակով Բյուզանդիան Աշոտին տվեց կուրապաղատի կոչում: «Եվ տայր իշխանն Իսմայելի Աշոտի որդւոց Ատրներսեհի որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Վրաց. որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան. և կայսրն առաքէ նմա պատիւ կիւրապաղատութեան»[3] և, ինչպես տեսանք, «բայց կիւրապաղատն Աշոտ տիրեաց ի Կաղրջաց մինչև ի Տփխիս, լեռնակողմամբն հանդերձ»: «Քարթլիի մատյան»-ը հաղորդում է, որ Աշոտի հայր Ատրներսեհը տիրում էր Շավշքին, Կղարջքին, Նիգալին, Ագարին (Էգր), Սամցխեին և հարակից որոշ շրջանների[4], իսկ Դավթի որդի Սմբատը՝ որ Աշոտ կուրապաղատը իշխում էր միայն «Շավշքի և Կղարջքի վրա»[5]: Այնուհետև, հեղինակը տեղեկացնում է, որ Աշոտի տիրույթներն էին Շավշքը, Կղարջքը և Նիգալը[6]: Այն, որ Աշոտ կուրապաղատի իշխանությունը տարածվում էր միայն Կղարջքի և հարևան որոշ շրջանների վրա, ցույց են տալիս նաև Գեորգի Մերչուլի հաղորդումները, ըստ որոնց Կղարջքի հոգևոր առաջնորդ Գրիգոր Խանձթեցու ողջ եկեղեցաշինական գործունեությունն ամփոփվում էր միայն Կղարջքով[7]:

Նույն 826 թ. վախճանվեցին Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին և Կղարջքի իշխան Աշոտը: Աշոտ Մսակերի օրոք Բագրատունիներն Արմինիայում հասան աննախադեպ հզորության: Եվ եթե Աշոտ Մսակերը հասավ իր բոլոր նպատակների իրականացմանը, ապա սկզբում խալիֆաների, իսկ այնուհետև Բյուզանդիայի հովանավորությունը փնտրող Կղարջքի իշխան Աշոտը պարտություն կրեց և ի վերջո սպանվեց: Արաբները գրավեցին նրա տիրույթները[8]: Հայ

---

[1] Անդ, էջ 5:
[2] Անդ, էջ 6:
[3] **Վարդան վարդապետ**, էջ 83:
[4] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 28-29:
[5] **Сумбат Давитис-дзе**, էջ 31:
[6] Անդ, էջ 31-32:
[7] Տե՛ս **Георгий Мерчуле**, գլ. X, XXVIII և այլն:
[8] Տե՛ս **Сумбат Давитис-дзе**, էջ 32:

Բագրատունիների վերելքի շրջանում Կղարջքի Բագրատունիները լավ հասկացան, թե որ կողմից է փչում հաջողության քամին և երկար ժամանակով իրենց նկրտումների իրականացումը կապեցին իրենց ավագ ճյուղի օգնության հետ:

Փաստորեն, Կղարջքի Բագրատունիները տիրում էին միայն Կղարջքին և հարևան որոշ շրջանների, իսկ Գուգարքի արևելյան հատվածը, ինչպես կտեսնենք, վերածվել էր Հայ Բագրատունիների արքունի տիրույթի:

Տայքը Սմբատ Ա-ի օրոք հանդիսանում էր այն հիմնական վայրը, որտեղ հաճախ ապաստանում էր Ափշինի կողմից հալածվող Հայոց արքան[1]:

Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, թե Տայքում Կղարջքի Ատրներսեհ իշխանը կալվածքներ ուներ[2]: Արդեն համոզվեցինք, որ Ատրներսեհի նախորդները չէին տիրում Տայքին կամ էլ դրա որևէ հատվածի: Անկասկած, պատմիչն ի նկատի ունի ոչ թե ողջ Տայքը, այլ նրա հյուսիսային Կող գավառը, որը որոշ ժամանակով, թերևս, տիրել էին Կղարջքի Բագրատունիները: Երկրորդ հնարավորությունն ավելի իրական է, քանի որ դրա հաստատումն է, թերևս, Անանուն Զրուցագրի հաղորդումը 906 թ. աբխազական արշավանքի վերաբերյալ: Սմբատ Ա-ն որոշում է տիրել Աբխազաց թագավորության մեջ մտնող որոշ շրջանների, որոնցից էր իբր Տայքի Կող գավառը[3]: Այնուհետև տեղի է ունենում աբխազական արշավանքը և Սմբատ Ա-ն տիրում է Կող գավառին[4]: Այս տեղեկությունը որքան էլ որ հակասական է, պարունակում է կարևոր իրողություններ: Այն, մեր համոզմամբ, պարունակում է խառնաշփոթ ժամանակագրական տվյալներ, ինչը երևում է Հովհաննես Դրասխանակերտցու՝ նույն իրադարձության նկարագրության ժամանակ: Պատմիչը հաղորդում է, որ Աբխազաց թագավորը ներխուժել է Գուգարք, որից հետո տեղի է ունեցել աբխազական արշավանքը[5]:

Ակնհայտ է, որ Տայքի Կող գավառը Սմբատ Ա-ն նախապես արդեն կամ հենց այդ ժամանակ կցել էր իր տիրույթներին (հնարավոր է նաև, որ այդ իրադարձությունը տեղի ունեցած լիներ ավելի ուշ, որին կանդրադառնանք ստորև), որն այլևս դադարել էր Ատրներսեհի տիրույթը լինելուց, ուստի և աբխազները ոտնձգություն են կատարել Հայ

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 180-182:
[2] Անդ, էջ 188:
[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 187:
[4] Անդ, էջ 193:
[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 202-204:

Բագրատունիների արքունի տիրույթների դեմ:

Աբխազական արշավանքի ժամանակ Սմբատ Ա-ն գերեց Կոստանդին Գ-ին, սակայն հետո ազատ արձակեց: Դրա պատճառով Կղարջքի Ատրներսեհ թագավորը դավադրություն կազմակերպեց Հայոց թագավորի դեմ[1]: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, երբ Կղարջքի Ատրներսեհ իշխանը կողմնակիցների հետ մահափորձ կազմակերպեց Սմբատ Ա-ի դեմ, բայց անհաջողության մատնվեց, ապա փախուստի դիմեց Տայքի ամուր տեղերը[2]: Սրանից կարելի է բխեցնել, որ Տայքի հյուսիսային գավառները դեռևս գտնվում էին Ատրներսեհի իշխանության սահմաններում[3]: Սակայն շուտով Սմբատ Ա-ն արշավում և նվաճում է այդ շրջանները[4]: Ատրներսեհը ներում է խնդրում: Սմբատ Ա-ն ներում է նրան, բայց նրա որդուն պատանդ է պահում իր մոտ՝ որպես Ատրներսեհի հավատարմության գրավական[5]: Ատրպատականի ամիրայի հաջորդ արշավանքի ժամանակ արդեն պատմիչը վկայում է, որ ամիրան հետապնդեց նահանջող Սմբատ Ա-ին, որ գնաց «մինչև յաշխարհ Վրաց...մինչև անկանէր մերձ յանմատչելի յամուրսն Կղարջաց»[6]: Այսինքն՝ «աշխարհ Վրաց»-ն այլևս սկսում է Կղարջքի անմատչելի շրջաններով, ուստի Տայքի հյուսիսային հատվածը մտցվել է Հայ Բագրատունիների արքունի տիրույթների մեջ, որտեղ էլ՝ Կղարջքի ամրությունների մոտակայքում, ապաստանում է Հայոց տիրակալը[7]:

Անհրաժեշտ է կատարել ևս մեկ ճշգրտում: Տեսանք, որ Կղարջքի առաջին իշխաններից Վասակի որդի Ատրներսեհը տիրում էր Ստորին Տայքին և Ասիսփորիին կամ Տայքի Արսեաց փոր գավառին: Ատրներսեհի որդի Աշոտ կուրապաղատի իշխանության մեջ մտնում էին, ինչպես տեսանք, Շավշքը, Կղարջքը և Նիգալը: Բացի այդ, Տայքի որևէ հատվածի չէր տիրում նաև նրա որդիներից և ոչ մեկը: Մեր կարծիքով, իրադրությունը զարգացել է հետևյալ ձևով: 775 թ., երբ ճնշվեց Հայոց հուժկու ապստամբությունը, Մամիկոնյանները կործանիչ հարված ստացան և դրանից հետո այլևս ուշքի չեկան: Երբ Վասակ Բագրա-

---

[1] Տե՛ս **Ասողիկ**, էջ 163-164:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 210:

[3] Անդ:

[4] Անդ:

[5] Անդ:

[6] Անդ, էջ 216:

[7] **Ս. Ջանաշիան,** անդրադառնալով Հովհաննես Դրասխանակերտցու «մինչև յաշխարհ Վրաց...մինչև անկանէր մերձ յանմատչելի յամուրսն Կղարջաց» հաղորդմանը, բխեցնում է, որ ինչպես Կղարջքը, այնպես էլ Տայքը, անվիճելիորեն, պատկանում էին վրացիներին (տե՛ս С. Джанашиа, նշվ. աշխ., էջ 21-22):

տունին իր որդի Ատրներսեհի հետ 775 թ. գաղթեց Կղարջք, Բագրատունիները Տայքին դեռևս չէին տիրում: Վասակի և Ատրներսեհի՝ Տայքի հյուսիսարևմտյան անմատչելի շրջաններում, այսինքն՝ Պարխարյան լեռների շրջանում գտնվող Տայքի Արսեաց փոր գավառում հաստատվելն այդ առումով հասկանալի է: Բայց երբ Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին ժառանգական իրավունքով տիրեց Տայքին, Վասակը և Ատրներսեհը քաշվեցին Կղարջք: Այդ պատճառով ո՛չ Աշոտ կուրապաղատը և ո՛չ էլ նրա որդիները Տայքի որևէ հատվածի չէին տիրում, որն էլ հաստատում են սկզբնաղբյուրները: Այս առումով հույժ կարևոր տեղեկություն է պահպանել նաև Գեորգի Մերչուլը: Ըստ հեղինակի, երբ Կղարջքի հոգևոր առաջնորդ Գրիգոր Խանձթեցու շրջապատի հոգևորականներից Սաբանը հաստատվեց Տայքում՝ Իշխանի վանքում, նա դադարեց ենթարկվել Կղարջքի կուրապաղատին: Վերջինս իր մոտ հրավիրեց Սաբանին, սակայն նա չեկավ, իսկ երբ, այնուամենայնիվ, եկավ Գրիգոր Խանձթեցու հրավերով, Բագարատ կուրապաղատի այն հարցին, թե նա ինչո՞ւ չեկավ իր հրավերին, ասաց, որ ենթարկվում է միայն Հիսուս Քրիստոսին[1]: Վերոհիշյալից պարզ է, որ Իշխանի վանքի ընդգրկած տարածքը ենթակա չէր Կղարջքի կուրապաղատին, և, չնայած Սաբանն ի սկզբանե դուրս էր եկել Կղարջքից, սակայն՝ հայտնվելով Տայքում, դադարեց ենթարկվել Կղարջքի կուրապաղատին, քանի որ Իշխանը դուրս էր նրա տիրույթներից: Ինչ վերաբերում է Գրիգոր Խանձթեցու հրավերին արձագանքելուն, ապա դա արդյունք էր այն բանի, որ վերջինիս հոգևոր ավագությունը Սաբանը շարունակում էր ընդունել: Վերջին խնդիրը ևս կարող է քննության առարկա դառնալ, քանի որ ըստ Մշո Սուրբ Աղբերիկ վանքի կոնդակի, որը շարադրված է Սմբատ Ա-ի անունից, վերջինս պարտավորություններ է ստանձնում Հայաստանի եկեղեցական թեմերի նկատմամբ, որոնց թվում հիշատակվում է նաև «Տայոցն գահ»-ը[2]:

Կարևոր է նաև այն, որ դատելով Գեորգի Մերչուլի հաղորդումներից՝ Գրիգոր Խանձթեցին իրավասու էր համարվում միայն այն եկեղեցիների նկատմամբ, որոնք կառուցվել կամ վերակառուցվել էին իր հովվապետության օրոք: Այսպես, նա սկզբում Օպիզայի վանքն ու նրա քահանային համարում էր իրեն ոչ ենթակա[3]: Կարելի է բխեցնել, որ Տայքում հաստատված Սաբանի նկատմամբ ևս նա իրավասություններ չուներ:

---

[1] Տե՛ս **Георгий Мерчуле**, գլ. XIV, XXVI:
[2] Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս,** Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 187:
[3] Տե՛ս **Георгий Мерчуле**, գլ. XXXIV:

Փաստորեն, Կղարջքի Բագրատունիները սկզբնապես կարճ ժամանակով կարողացել են տիրել Տայքի հյուսիսային որոշ շրջաններ, բայց շուտով ողջ Տայքին տիրել է Հայոց իշխան Աշոտ Մսակերը: Կարճ ժամանակով միայն Կղարջքի Ատրներսեհ Բագրատունի իշխանը, որ Աշոտ կուրապաղատի թոռնորդին էր, կարողացել էր կրկին տիրել Տայքի հյուսիսային որոշ հատվածների: Սմբատ Ա-ն աբխազական արշավանքի և Կղարջքի իշխան Ատրներսեհի դեմ ուղղված պատժիչ արշավանքի ժամանակ Տայքի վերոհիշյալ հատվածն ամբողջությամբ հանեց Ատրներսեհի ենթակայությունից, որից հետո Վրաց իշխանի տիրույթները՝ ըստ սկզբնաղբյուրների, հարավում սկսվում էին Կղարջքից:

2.5. Հայ Բագրատունիների արքունի տիրույթները Գուգարքում: Վերևում տեսանք, որ Կղարջքի Աշոտ կուրապաղատի որդի Գուառամը տիրում էր Ջավախքին, Թռեղքին, Տաշիրքին, Աշոցքին և Արտահանին: Նա իր տիրույթները բաժանել էր եղբայրների՝ Ատրներսեհի և Բագարատի հետ, իսկ Աշոցքը՝ զիջել իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն: Բացի այդ, Արտահանը, Աշոցքը և Տաշիրքը վրացական աղբյուրներում, ինչպես տեսանք, դիտվում են որպես Հայ Բագրատունիների տիրույթներ: Ըստ որում, դատելով «Քարթլիի մատյան»-ի և Վախուշտ Բագրատիոնի տեղեկություններից, այդ գավառները Գուառամը նախկինում ստացել էր իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուց, քանի որ ամուսնացած էր նրա քրոջ հետ[1]:

881 թ. Նասրի ձեռքով սպանվեց նրա հորեղբորորդի, Կղարջքի կուրապաղատ Դավիթը: Դրանից հետո տեղի ունեցավ բախում Աշոտ Բագրատունու զորքի և Նասր Բագրատունու ու Աբխազաց թագավորի կողմից ստեղծված դաշինքի ուժերի միջև, որն ավարտվեց երկրորդների կատարյալ պարտությամբ[2]: Դատելով այն իրողությունից, որ Արտահանը, Աշոցքը (ավելի ճշգրիտ, Գոգշենը) և Տաշիրքը իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին Գուառամին էր հանձնել, թերևս, օժիտի կարգով, ապա Գուառամի և Նասրի մահից հետո, այդ գավառները վերստին անցան Հայ Բագրատունիներին, որոնց ներկայացուցիչ Աշոտը «Քարթլիի մատյանի» մեջ արդեն հիշատակված է որպես «Հայոց թագավոր»[3]: Հավելենք, որ Գոգշենը Գուառամի կողմից, ինչպես տեսանք, Աշոտ Բագրատունուն էր հանձնվել ավելի վաղ: Տեսանք նաև, որ X դ. սկզբին Աբխազաց թագավոր Կոստանդին Գ-ն տիրել էր Հայ Բագրատունիների

---

[1] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 31, Âàõóøòè Áàãðàòèîíè, էջ 187:
[2] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 31:
[3] Անդ:

արքունի տիրույթներ Արտահանին, Կանգարքին և Գոգշենին, սակայն, ջախջախիչ պարտություն կրել:

Գուառամի և Նասրի մնացյալ տիրույթները ևս, այսինքն՝ Ջավախքի հողերը, ամենայն հավանականությամբ, անցել էին Աշոտ Բագրատունուն: Խնդիրն այն է, որ Սամցխեի իշխանությունները, ինչպես կտեսնենք ուսումնասիրության համապատասխան բաժնում, այդ ժամանակ Կղարջքի Բագրատունիներից անկախ էին, Արտահանն անցել էր Հայ Բագրատունիներին, որի հետևանքով Ջավախքը կտրված էր Կղարջքի կուրապաղատությունից: Մյուս կողմից, 876 թ. Թռեղքում հաստատվեց Լիպարիտ Բաղվաշը և նա ընդունեց Աշոտ Բագրատունու գերիշխանությունը: Նա 881 թ. բախմանը մասնակցեց վերջինիս կողմից: Այդ իրողությունը ցույց է տալիս, որ Թռեղքը Գուառամի տիրույթներից բաժանվել էր ավելի վաղ: Այդ ամենի հետևանքով Ջավախքը հայտնվել էր մեծավ մասամբ Հայ Բագրատունիների արքունի տիրույթներով և մասամբ նրանց հպատակ իշխանությունների հողերով շրջապատված վիճակում, ուստիև, անկասկած, մաս էր կազմելու Բագրատունիների տիրույթների:

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Աշոտ Ա թագավորը «զաղխատրոյզ բնակիչսն Գուգարաց և զելուզակուտ մարդիկ Ուտի գաւառի առհասարակ ընդ ձեռամբ նուաճէր՝ ի բաց ի նոցանէ հերքելով զաւազակութիւն մարդադաւութեան, և իբրև օրինաւորս և հլուս զամենեսեան կազմէր, և առաջնորդս և իշխանս նոցա կացուցանէր»[1]: Այս հաղորդումը ցույց է տալիս, որ Գուգարքի մեծ մասն ու Ուտիքի հյուսիսային հատվածը միացվել են արքունի տիրույթներին: Հետաքրքիր է, որ Մովսես Դասխուրանցին նույնպես այս շրջանների բնակիչներին անվանում է «ավազակ», իսկ նրանց իշխաններին՝ «ավազակապետ»[2]:

Այն, որ Գուգարքի կենտրոնական և արևելյան հատվածի գավառները միացվել էին արքունի տիրույթներին, ցույց է տալիս նաև Հովհաննես Դրասխանակերտցու այն վկայությունը, թե Ատրպատականի Ափշին ամիրան ներխուժել է Վիրք և Գուգարք[3]: Պատմիչը՝ միմյանցից առանձին հիշատակելով Վիրքն ու Գուգարքը[4], հստակորեն ներկայացնում է տիրող իրավիճակը:

Բացի այդ, դատելով այն իրողությունից, որ Մանգլեաց փոր գավա-

---

[1] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 142:
[2] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 341:
[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 180:
[4] Պատմիչը Վիրքն ու Գուգարքը միմյանցից առանձին է հիշատակում նաև այլ դեպքում (անդ, էջ 266):

ռի հարավային հատվածում՝ Քվիշափոր գավառի սահմանին գտնվող Սամշուլդեն և նրանից հյուսիս-արևելք գտնվող Սակուրեթը (Ասկուրեթ) մտնում էին Հայ Բագրատունիների արքունի տիրույթների մեջ[1], ինչպես նաև վերջիններիս քարտեզագրումից, անկասկած, դրանց մաս էին կազմում նաև Գուգարքի կենտրոնական և արևելյան գավառները՝ Կողբոփորը[2], Ձորոփորը (քանի որ Սմբատ Ա-ն տիրում էր Հունարա-կերտին[3]), Ծոբոփորը, Քվիշափորը, Բողնոփորը, Մանգլեաց փոր գավառի մի մասը և, ինչպես տեսանք, Կանգարքը:

Մշո Սուրբ Աղբերիկ վանքի կոնդակում թվարկված են Հայոց մի քանի մեծամեծեր, որոնք մասնակցել են վանքին ընծաներ տալու արարողությանը: Նրանց թվում հիշատակվում է «Գնուն Գուգարաց» իշխանը[4]: Անունից կարելի է բխեցնել նախարարական տոհմը՝ Գնունի: Կարծում ենք, որ խոսքը ժամանակին Աշոտ Մսակերի կողմից Տայքում վերաբնակեցված Գնունիների մասին է, որոնցից մեկն էլ հանդես է գալիս որպես Գուգարքի իշխան: Վերջին անվանումն էլ, ամենայն հավանականությամբ, վերաբերում է Գուգարքի արքունի տիրույթներին:

2.6. Հայ Բագրատունիների արքունի տիրույթները Վասպուրականում: Հայ Բագրատունիների արքունի տիրույթների մեջ էին մտնում նաև Վասպուրականի որոշ գավառներ:

Դառնի: Դատելով Անանուն Ձրուցագրի մի հաղորդումից՝ Վասպուրականի Դառնի գավառը, որ Թովմա Արծրունու կողմից 905 թ. Վասպուրականի բաժանման ժամանակ հիշատակվում է Գագիկ Արծրունու տիրույթների մեջ[5], 906 թ. դրությամբ պատկանում էր Սմբատ Ա-ին: Աբխազական արշավանքի հաղթական ավարտից հետո, ինչպես հաղորդում է պատմիչը, տեղյակ լինելով արշավանքին մասնակից Գուրգեն Արծրունու դժգոհությանը՝ Սմբատ Ա-ն ասում է նրան, որ «տամ քեզ...զգաւառն Գառնոյ (իմա՛ Դառնի-Ա.Ե.)»[6]: Փաստորեն Դառնիին Սմբատ Ա-ն տիրել է 905-906 թթ. միջև: Դժվար է ասել, թե հատկապես ինչպես է դա տեղի ունեցել, բայց հավանորեն այն սերտորեն կապված է Վասպուրականի իշխանների և Սմբատ Ա-ի գերիշխանության ներքո գտնվող

---

[1] Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ այն մեծ ամրոց էր, որը ամբողջ շրջակայքով իր տիրույթներին էր կցել Սմբատ Ա-ն՝ բերդապահներ նշանակելով Գնթունի տոհմից Վասակ և Աշոտ իշխաններին (տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 296):

[2] Տե՛ս Ստեփան Տբեթցի,-**Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 91:

[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 164:

[4] Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս,** Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 184:

[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 388-390:

[6] **Անանուն Ձրուցագիր**, էջ 195:

ութմանիկների միջև հարաբերությունների աստիճանական սրման հետ: Իսկ Դառնին հարևան էր ութմանիկների ամիրայությանը:

Նախճավան և Գողթն: Թովմա Արծրունին հաղորդում է, որ Նախճավան և Գողթն գավառները Վասպուրականի կազմից հանվել էին VII դ. սկզբին[1]: Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանում Նախճավանը, դատելով Անանուն Զրուցագրի մի տեղեկությունից, ըստ որի՝ Սմբատ Ա-ն նվաճել է Նախճավանը[2], այն մտնում էր արքունի տիրույթների մեջ: Խնդիրն այն է, որ Նախճավանի կարևոր ռազմաստրատեգիական դիրքը մղում էր Հայոց թագավորին այն վերցնելու հսկողության տակ: Այնտեղով էր անցնում հարավից եկող և Նախճավանով Դվին ընթացող առևտրական մեծ մայրուղին, որով էլ երբեմն Ատրպատականի ամիրաները ներխուժում էին Հայոց տերություն: 902 թ. Սմբատ Ա-ն, ելնելով Մանազկերտի կայսիկների հետ բախման ժամանակ Վասպուրականի Արծրունիների ցույց տված օգնությունից, Նախճավանը հանձնեց նրանց[3], իսկ քիչ անց՝ դատելով Թովմա Արծրունու հիշատակությունից, որ 905 թ. Գագիկ և Գուրգեն Արծրունի եղբայրների միջև Վասպուրականի գավառների բաժանման ժամանակ նրանցից և ոչ մեկի բաժնում Նախճավանը հիշատակված չէ, այն ետ վերցրեց նրանցից[4]: Քանի որ Գողթնը Նախճավանի հետ միասին ներկայացնում էր բնաշխարհագրական մի ամփոփ միջավայր և ռազմավարական առումով նրանից անբաժանելի էր, ապա Նախճավանի մասին խոսելիս պետք է նրա հետ անպայման ի նկատի ունենալ նաև Գողթնը: Հենց դրանով էր պայմանավորված Նախճավանի հետ միասին նաև Գողթնի անջատումը Վասպուրականից Թովմա Արծրունու նկարագրած դեպքերից երկու դար առաջ:

Առբերանի: Ըստ Անանուն Զրուցագրի՝ Սմբատ Ա-ն «զի էր մի Տաճիկ, և անուն նորայ Ապուհեճր, տայր զբերդն Բերկրոյ»[5]: Հավանաբար վերոհիշյալ Ապուհեճրն ութմանիկ էր, իսկ քաղաքը նրան հանձնելը կարելի է ընկալել որպես Սմբատ Ա-ի գերիշխանության ընդունումը նրա կողմից: Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունին մոտ 907 թ. գրավեց Ամյուկ բերդը՝ վերացնելով ութմանիկներին: Ինչպես տեսանք, Առբերանի գավառի հարավային հատվածը՝ Ամյուկ բերդով, Սմբատ Ա-ն գրավեց, իսկ այնուհետև վաճառեց Գագիկին: Կոստանդին Ծիրանածի-

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 390:
[2] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 159:
[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 382, 428:
[4] Անդ, էջ 388-390:
[5] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 161:

նը հաղորդում է, որ Բերկրին գրավվել էր Սմբատ Ա-ի կողմից և միայն նրա մահից հետո անցել Մանազկերտի ամիրային[1]: Այսինքն՝ Առբերանի գավառի հյուսիսային հատվածը՝ Բերկրի քաղաքով, մտնում էր Սմբատ Ա-ի տիրույթների մեջ:

2.7. Հայ Բագրատունիների արքունի տիրույթները Սյունիքում: Հայ Բագրատունիների արքունի տիրույթների մեջ էին մտնում նաև Սյունիքի որոշ գավառներ:

Երնջակ: Սմբատ Ա-ի գահակալության տարիներին տեղի ունեցած դեպքերը, որոնք կապված են Երնջակ ամրոցի հետ, իրոք խոսում են այն բանի օգտին, որ այն վերածվել է Հայ Բագրատունիների արքունի տիրույթի: Անանուն Զրուցագիրը հաղորդում է, որ Սմբատ Ա-ն ի թիվս այլ գավառների, տիրել էր նաև Նախճավան գավառի և Սյունիքի սահմանին գտնվող Երնջակ ամրոցին[2]:

Երբ Յուսուֆը գերեց Սմբատ Ա-ին, նա Երնջակ ամրոցը գրավելու համար, որտեղ ամրացել էին շատ իշխաններ, պահանջում է, որ Սմբատ Ա-ն հրամայի ամրոցի պաշտպաններին անձնատուր լինել, բայց Հայոց թագավորը հրաժարվում է[3]: Սրանից բխում է, որ Երնջակի պաշտպանները ճանաչում էին միայն Սմբատ Ա-ի իշխանությունը, որ իր հերթին ցույց է տալիս Երնջակի արքունի կալվածք լինելը:

Այս ամենից բխում է, որ Սմբատ Ա-ն իր ձեռքում էր պահում Դվինից Երասխ գետի ափով՝ Նախճավանով և Գողթնով ընթացող մեծ առևտրական մայրուղին, որ նաև թշնամիների համար հարձակման ճանապարհ էր: Այդ մայրուղու հարևանությամբ գտնվող ամրաշեն Երնջակ ամրոցը վերահսկողություն ուներ մայրուղու վրա և, փաստորեն, ում ձեռքում այն գտնվեր, նա էլ իր ձեռքում էր պահելու նաև ճանապարհի հսկողությունը:

Արևիք: Անանուն Զրուցագիրը հաղորդում է, որ Սմբատ Ա-ն տիրել էր Արևիք գավառին[4], որը, գտնվելով Գողթնից հարավ-արևելք՝ Երասխի ափամերձ հատվածում, ռազմավարական կարևոր նշանակություն ուներ Հայոց տերության համար՝ Ատրպատականի ոստիկանությանը հարևան լինելու պատճառով:

2.8. Հայ Բագրատունիների արքունի տիրույթները Ուտիքում: Հայ Բագրատունիների արքունի տիրույթների մեջ էին մտնում նաև Ուտիքի որոշ շրջաններ:

---

[1] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10-11:
[2] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 159-161:
[3] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 190-191, **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 238:
[4] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 159:

Աղուէ: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Սմբատ Ա-ն տիրել էր նաև «զՈւտի գաւառ մինչև ի քաղաքն Հունարակերտ և մինչև ի Տուս և ի Շամքոր»[1]: «Մինչև ի Տուս» հաղորդումը ցույց է տալիս, որ արքունի տիրույթներին էր միացվել Ուտիքի հյուսիսային հատվածը՝ Աղստև գետի հովտում գտնվող Աղուէ գավառը, որը տարածվում էր Հայ Բագրատունիների արքունի տիրույթ հանդիսացող Գուգարքի արևելյան հատվածի և Սևորդիներին պատկանող և Տավուշ գետի ավազանում գտնվող Տուչ Կատակ գավառի միջև[2], ինչպես նաև Հունարակերտը:

Հայտնի է, որ Գարդմանի Սահակ Սևադա իշխանը «առհասարակ տիրեաց Գարդմանայ և Քաւսայ և Փառնայ գաւառաց, այլ և աւազակապետաց Ձորոյգետոյն բովանդակ եղև իշխան:...ընդ որում և բազմաջան հնարիւք թագաւորն Հայոց Սմբատ մարտուցեալ ոչ ինչ կարաց ստերիւրել զնա ի կամս իւր»[3]: Այսինքն՝ Սահակ Սևադայի տիրույթների մեջ նախապես մտնում էին Գարդման և Քուստ-ի-Փառնես գավառներն, որից հետո արդեն Սմբատ Ա թագավորի օրոք կարողացել էր իր իշխանությունը ընդարձակել ընդհուպ մինչև Ձորագետ՝ տիրելով, ամենայն հավանականությամբ, Աղստև և Ձորագետ գետերի ստորին հոսանքների և Կուր գետի միջև տարածվող դաշտին: Սմբատ Ա-ն նույնիսկ զենքի ուժով այդ գավառները ետ գրավել չկարողացավ: Փաստորեն, Հայ Բագրատունիների տիրույթների մեջ էր մտնում նաև Աղստև գետի հովիտը, որը տարածվում էր Հայ Բագրատունիների արքունի տիրույթ հանդիսացող Գուգարքի արևելյան հատվածի և Սևորդիներին պատկանող Տուչ Կատակ գավառի միջև: Հայտնի է, որ «[էր] զՏաւուշ գաւառն Սեւորդեաց»[4]: Տուս կամ Տավուշ գավառը տեղադրվում է Տավուշ գետի ստորին հոսանքի ավազանում[5]: Փաստորեն, Սևորդիների իշխանությունը ընդգրկում էր Տուչ Կատակ գավառի կենտրոնական և հյուսիսային հատվածը՝ այսինքն՝ Տավուշ գետի միջին և ստորին հոսանքի ավազանը՝ Տավուշ կամ Տուս բերդով, իսկ այդ գավառի հարավային հատվածը, ամենայն հավանականությամբ, մնացել էր Գարդմանի տերերի իշխանության մեջ, որով էլ վերջիններիս Ուտիքի տիրույթները միանում էին Գուգարքում գրավված տիրույթներին:

Փառիսոս: X դ. սկզբին Սահակ Սևադայի իշխանությունից բաժանվում է Փառիսոսը կամ Քուստ-ի-Փառնես գավառը: Սմբատ Ա-ի 906 թ.

---

[1] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 164:
[2] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 98:
[3] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 341:
[4] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 98:
[5] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 86:

աբխազական արշավանքի մասնակիցների թվում Անանուն Զրուցագիրը հիշատակում է «իշխան Փառիսոյ Հըմաեկ բազում հեծելաւք»[1]: Պատմիչի մեկ այլ վկայությունից հայտնի է, որ Սմբատ Ա-ն գրավել էր Փառիսոսը և, ամենայն հավանականությամբ, կցել արքունի տիրույթներին[2]: Մեր կարծիքով, Հմայակը Սմբատ Ա-ի արքունի այդ տիրույթի կառավարիչն էր: Պարզվում է, որ 906 թ. դրությամբ Փառիսոսն այլևս անջատված է Գարդմանի իշխան Սահակ Սևադայի տիրույթներից: Այդ իրադարձությունը պետք է տեղի ունեցած լիներ այն բանից հետո, երբ Գեղամա ծովի ողջ շրջակայքը միացվել էր Սմբատ Ա-ի արքունի տիրույթներին:

2.9. Մոկաց իշխանություն: Ըստ Հ. Մարկվարտի՝ Բագրատունիները Մոկքին տիրել էին Աշոտ Մսակերի օրոք[3]: Ն. Ադոնցը հավանական է համարում, որ IX դ. սկզբներին Մոկքի իշխան եղած Սահակը Աշոտ Մսակերի որդին էր[4]: Բուղայի արշավանքի ժամանակ Մոկքը հանդիսանում էր Բագրատունիների տիրույթ: Այդ ժամանակ Մոկքի իշխանը Սմբատ Բագրատունին էր[5]:

Վասպուրականի 895 թ. բաժանման ժամանակ Մոկքը, ըստ Թովմա Արծրունու՝ անցավ Գագիկ Արծրունուն[6]: Եղավ մի պահ, երբ Անձևացյաց Գուրգեն Ապուպելճ իշխանը փորձ կատարեց տիրելու Մոկաց իշխանությանը, սակայն, չնայած Մոկաց Մուշեղ իշխանը սպանվեց, Գուրգեն Ապուպելճն այլ հաջողության չհասավ[7]:

Վասպուրականի 905 թ. բաժանման ժամանակ Թովմա Արծրունին Մոկքը չի հիշատակում Արծրունյաց իշխանների տիրույթների մեջ[8]: Անանունը 905 թ. բաժանումը ներկայացնելիս նշում է, որ Գագիկին անցել է Մոկքի Ջերմաձոր գավառը[9]: Կարծում ենք, որ 895 թ. բաժանման ժամանակ Գագիկ Արծրունու բաժնում հիշատակվող Մոկք անվան տակ ևս պետք է հասկանալ վերջինիս Ջերմաձոր գավառը: Անանունի հաղորդումից երևում է, որ Մոկքի մյուս շրջաններում դեռևս իշխում էին Բագրատունիները, որոնց պատմիչը կոչում է Մոկաց տերեր: Վերջիններս պայքար սկսեցին Գագիկ Արծրունու դեմ, երբ վերջինս փորձ կա-

---

[1] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 189:
[2] Անդ, էջ 159:
[3] Տե՛ս **Յ. Մարկուարտ,** Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 66:
[4] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 453-455:
[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 200:
[6] Անդ, էջ 360:
[7] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 180:
[8] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 388-390:
[9] Անդ, էջ 432:

տարեց տիրելու նաև Մոկքի մյուս գավառներին[1]: Ի վերջո, Գագիկին հաջողվեց տիրել Տուրուբերանի Երևարք ու Մոկքի Առվենից ծոր գավառներին[2]: Դա տեղի ունեցավ, թերևս, 907 թ.՝ Գագիկ Արծրունու կողմից Ամյուկի ամիրայության ոչնչացման տարում: Ուստի կարող ենք արձանագրել, որ այդ իրադարձություններից հետո Մոկաց իշխանությունը ամփոփվեց Մոկքի կենտրոնական և արևմտյան գավառներով (Մոկք Առանձնակ, Իշոց, Միջա, Իշայր և Մյուս Իշայր)՝ կենտրոն ունենալով Մոկս բերդավանը: Ինչ վերաբերում է Արքայից և Արգաստովիտ գավառներին, ապա դրանք ևս՝ Մոկաց իշխանությունից բաժանված լինելով Ջերմաձոր գավառով, ինչպես նաև շրջապատված լինելով Արծրունիների տիրույթներով, ամենայն հավանականությամբ, անցել էին Գագիկ Արծրունուն:

Անանուն Ջրուցագիրը հաղորդում է, որ 906 թ. աբխազական արշավանքին Մոկաց իշխան Աշոտ Բագրատունին մասնակցում էր առանձին զորախմբով[3]:

Մոկաց իշխանն ընդգրկված էր Կոստանդին Ծիրանածնի այն իշխանների ցուցակում, որոնց նամակներ էին ուղարկվում Բյուզանդիայի արքունիքից[4]:

Ամփոփելով Հայ Բագրատունիների տիրույթների վերաբերյալ քննությունը՝ կարող ենք նշել, որ Բագրատունիների հզորացումը սկսվել է Հայոց իշխան Աշոտ Մսակերի ժամանակներից, որի օրոք Այրարատի մեծագույն մասը, Տարոնն ու Տայքը անցան նրանց: Բագրատունիների տիրույթները շարունակեցին ընդարձակվել Արմինիա ոստիկանության իշխանաց իշխաններ Բագարատ Բագրատունու և Աշոտ Բագրատունու (հետագայում՝ Հայոց թագավոր) կողմից: Բագարատ Բագրատունու ժամանակներից սկսած Տարոնի իշխանությունը հանդես է գալիս որպես Բագրատունիների առանձին իշխանություն: Սմբատ Ա-ն կարողացավ էլ ավելի ընդարձակել արքունի տիրույթները, որոնք IX դ. սկզբին ընդգրկում էին Այրարատի մեծագույն մասը, Տայքը, Մոկքի կենտրոնական և արևմտյան գավառները, Գուգարքից՝ Արտահան, Ջավախք, Կանգարք, Գոգշեն, Քվիշափոր, Բողնոփոր, Ծոբոփոր, Կողբոփոր, Ջորոփոր և Տաշիրք գավառները, ինչպես նաև Մանգլեաց փոր գավառի մի մասը, Տուրուբերանից՝ Աղորնիք (Մարդաղի), Հարք,

---

[1] Տե՛ս Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., Եր., 1969, էջ 66-67:

[2] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 434:

[3] Տե՛ս **Անանուն Ջրուցագիր**, էջ 189:

[4] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 151:

Կորի, Բզնունիք, Աղիովիտ գավառները և Ապահունիք գավառի արևել-
յան մասը, Վասպուրականից՝ Նախճավան, Գողթն, Դառնի գավառները
և Առբերանի գավառի հյուսիսային հատվածը, Ուտիքից՝ Փառիսունք
կամ Փառիսոս և Աղուէ գավառները, ինչպես նաև Սյունիքի Երնջակ և
Արևիք գավառները:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

IX դ. և X դ. սկզբին Հայաստանի քաղաքական կյանքում զգալի դերակատարություն ունեին մի քանի իշխանություններ, որոնցից էին Վասպուրականի, Սյունիքի, Հայոց Արևելից կողմերի և Համշենի իշխանությունները:

3.1. Վասպուրականի իշխանություն: Դատելով պատմիչների տեղեկություններից՝ Վասպուրականը Հայ Բագրատունիների տերության կազմավորման և կայացման ժամանակաշրջանում մի քանի անգամ ներքին վարչական վերաձևումների էր ենթարկվել, որոնք հետևանք էին ինչպես Արծրունի իշխանների գործողությունների, այնպես էլ Բագրատունի թագավորների միջամտության:

Անանուն Զրուցագիրը հիշատակություն է պահպանել այն մասին, որ 860-ական թթ. առաջին կեսին գերությունից վերադարձած և Վասպուրականի իշխան դարձած Աշոտ Արծրունու (մահ.՝ 874/875) երեք որդիները միմյանց միջև բաժանել են հայրական ժառանգությունը. «զՎանն, որ ի գաւառն Տոսբայ՝ Գրիգոր-Դէրէն բաժին, իսկ ամուռն Կայան և Տոտոր (իմա՛ Կոտոր) ամրոցն և զճուաշայ գաւառն միւսն եղբորն Կագկայ, իսկ տունն Հաղբակոյ Համազասբայ կրտսերին»[1]:

Այսինքն՝ առաջին եղբորն անցել է Արծրունիների իշխանության արևմտյան, երկրորդին՝ հյուսիսարևելյան, իսկ երրորդին՝ հարավային հատվածը: Ինչպես տեսնում ենք, Անանուն Զրուցագրի տեղեկությունը մանրամասնություններ չի պարունակում, որի պատճառով հստակություն մտցնել այս շրջանում Վասպուրականի իշխանության տարածքի, սահմանների և վարչական բաժանման մեջ դժվար է: Կարելի է միայն ասել, որ գահերեցության իրավունքը պատկանում էր Գրիգոր-Դերենին կամ Գրիգոր-Դերենիկին (Վասպուրականի իշխան 874/875-885 թթ.), որ տիրում էր Վան քաղաքին՝ շրջակայքով:

Վասպուրականի իշխանության երկրորդ բաժանումը տեղի է

---

[1] **Անանուն Զրուցագիր**, էջ 113:

ունեցել Գրիգոր-Դերենիկի մահից (885) հետո: Նրա երեք որդիները դեռ մանուկ էին, և Հայոց թագավոր Աշոտ Ա-ն Վասպուրականի իշխան կարգեց նրանցից ավագին՝ Աշոտին, բայց Գագիկ Ապումրվան Արծրունուն էլ նշանակեց ոստիկան, կամ ինչպես պատմիչն է հստակեցնում՝ հրամայեց «տեղապահութեամբ տիրել», մինչև մանուկները հասակ կառնեին[1]: Սմբատ Ա-ի թագավորության 3-րդ տարում, այսինքն՝ 893 թ., Դվինում երկրաշարժ տեղի ունեցավ: Այնուհետև պատմիչը նկարագրում է երկրաշարժից երկու տարի հետո տեղի ունեցած դեպքերը և նշում, որ Գրիգոր-Դերենիկի որդիները բաժանեցին իրենց հայրական տիրույթները, և Աշոտին անցավ «զգահն նախնական իշխանութեան այլովք յոլովագոյն միջոցօք աշխարհիս, մինչև յամուրն Նախճաւանու: Իսկ Գագիկ զկողմանս Ռշտունեաց այլովք մօտակացիւք գաւառօք, և որքան իցէ հասումն ուժոյ՝ անդր ևս յաշխարհն Մոկաց: Եւ Գուրգէն զկողմանս արևելից, յելից Աղբագոյ և որ շուրջ զնովաւ ամենայն Պարսկահայք մինչև ի մուտս Կորդաց, և ուր և ըստ այնմ իցէ հնար ածել զձեռամբ»[2]: Բայց Գագիկ Ապումրվան իշխանը՝ պատճառ բերելով Դերենիկի որդիների մանկահասակությունը, տիրեց Նկան ամրոցին Թոռնավան գավառում, Կոտոր ամրոցին՝ Անձախիձորում (Ընծայից ձոր) և Սևան ամրոցին՝ Լմբա փորում, այսինքն՝ իշխանության կենտրոնական հատվածին, բայց այլ հաջողությունների չհասավ[3]:

Աշոտ Արծրունուն անցած «զգահն նախնական իշխանութեան» արտահայտությունը մեր կարծիքով վերաբերում է Մեծ Աղբակ գավառին, որտեղ գտնվում էր Արծրունյաց ոստան Հադամակերտը[4]: Բացի այդ, Աշոտին անցան նաև Վասպուրականի՝ Աղբակ գավառից մինչև Նախճավանի մատույցներ, այսինքն՝ Երասխ գետ ընկած գավառները: Գագիկին բաժին հասավ Ռշտունյաց կողմանքը, այսինքն՝ Ռշտունիքը՝ շրջակա գավառներով և նաև այն գավառները, որ նա կկարողանար տիրել ուժով, ինչպես նաև Մոկքը: Գուրգենը ստացավ Վասպուրականի իշխանության՝ Աղբակից արևելք ընկած հատվածը, շրջակայքի՝ Պարսկահայքի և Կորճայքի հյուսիսային գավառները, ինչպես նաև այն շրջանները, որ նա կկարողանար տիրել ուժով: Խոսքը Պարսկահայքի և Կորճայքի այն գավառների մասին է, որոնք նախկինում Արմինիա ոստիկանության Երրորդ Արմինիա վարչական շրջանի մաս էին կազմում, այսինքն՝ Պարսկահայքից՝ Հեր, Զարևանդ, Զարեհավան, Այլի, Թրաբի,

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 354:
[2] Անդ, էջ 360:
[3] Անդ:
[4] Անդ, էջ 184:

Տամբեր և Ըռնա գավառների և Կորճայքից՝ Կորդիք, Ճահուկ, Փոքր Աղբակ և Որսիրանք գավառների մասին[1]: Ինչպես կտեսնենք, Հերի ամիրայությունը, որ ընդգրկում էր նաև Զարևանդը և շրջակա որոշ գավառներ, իրեն էր ենթարկել Գրիգոր-Դերենիկը:

Երբ Վասպուրականի Աշոտ իշխանը (885-905) գնաց Ափշինի մոտ, Սմբատ Ա-ն՝ նրան պատժելու նպատակով կանչեց իր մոտ Գագիկ Ապումրվանին և Գուրգեն Անձևացուն, որ, ինչպես կտեսնենք, ոչ այլ ոք է, եթե ոչ Գուրգեն Ապուպելճ Արծրունին, և նրանց ուղարկեց տիրելու Վասպուրականին՝ խոստանալով այն բաժանել նրանց միջև: Այդպես էլ եղավ, սակայն Ափշինի օգնությամբ վերադարձած Աշոտը ետ մղեց նրանց մինչև նրանց սեփական տիրույթները[2]: Այսինքն՝ բացի Վասպուրականի հիմնական Արծրունի իշխաններից, այնտեղ գործունեություն են ծավալում և տիրույթներ ունեն Արծրունյաց տան այլ ներկայացուցիչներ ևս:

Համեմատելով Թովմա Արծրունու և Անանուն Զրուցագրի տեղեկությունները Վասպուրականի իշխանության՝ երեք մասի երկու անգամ հաջորդաբար բաժանելու վերաբերյալ՝ կարող ենք նշել, որ սահմանաբաժանումը տեղի չէր ունենում միևնույն սկզբունքով:

Խոսելով Աշոտ Արծրունու մահից հետո 905 թ. նրա եղբայրներ Գագիկ և Գուրգեն Արծրունի իշխանների միջև տիրույթների բաժանման մասին, Թովմա Արծրունին տալիս է մանրամասն տեղեկություններ, թե Վասպուրականի հատկապես որ գավառներն են անցել եղբայրների իշխանության տակ: Գագիկին անցան Ճվաշը (Ճվաշ-ռոտ), Թոռնավանը, Արտազը, Մարդաստանը, Դառնին, Առբերանին, Աղանդ-ռոտը, Բառիլովիտը (Բառիղովիտ), Պալունիքը, Մեծնունիքը, Տոսպռշտունիքը, Բոգունիքը (Բոդունիք), Գուգանը (Գուկան) և Արտաշեսյանը (Արտաշիսյան), իսկ Գուրգենին՝ Անձահից ձորը (Անձախիձոր), Կրճունիսը (Կրճունիք), Կկուղանովիտը (Կուղանովիտ), Բուն Մարդաստանը, Արճիշակովիտը, Առնոոտնը, Մեծ և Փոքր Աղբակները, Ակեն, Տամբերը, Տագրեանը, Ըռնան և Զարեհավանը[3]:

Ի սկզբանե նշենք, որ երկու եղբայրների նախնական տիրույթներից այս բաժանման ժամանակ բացակայում են Մոկքը՝ Գագիկի բաժնում և Պարսկահայքի ու Կորճայքի մի շարք գավառներ՝ Գուրգենի բաժնում:

---

[1] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 63-42: Տե՛ս նաև նույնի՝ Արմինիա ոստիկանության սահմանները,-«ՊԲՀ», 2005, թիվ 1, էջ 247-251:

[2] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 362:

[3] Անդ, էջ 388-390:

Վերջինի բաժնում Պարսկահայքի գավառներից հիշատակվում են միայն Տամբերը, Ըռնան և Զարեհավանը, իսկ Կորճայքից՝ միայն Փոքր Աղբակը:

Դժվար է գերագնահատել Թովմա Արծրունու տեղեկության արժեքը, որ զուրկ չէ նաև որոշ թերություններից: «Աշխարհացոյց»-ում բերված Վասպուրականի գավառացանկի համեմատ բացակայում են Բուժունիքը, Անձևացիքը, Տրպատունիքը, Երվանդունիքը, Պարսպատունիքը, Արտավանյանը, Բագանը, Գաբիթյանը, Գազրիկյանը, Վարաժնունիքը, Գողթնը, Նախճավանը, Մարանդը և Հայոց ձորը («Աշխարհացոյց»-ում այդ անունով գավառ չկա, այն իրենից ներկայացնում էր այնտեղ հիշատակվող Երվանդունիքի, Գուկանի և Արտաշեսյանի ընդհանրությունը[1])[2]: Վերոհիշյալ գավառներից Տոսպռշտունիքը պետք է տարանջատել Տոսպի և Ռշտունիքի, իսկ «զԱղբագ Մէծ և զՓոքր»-ը՝ Մեծ և Փոքր Աղբակների, որոնցից Մեծը Վասպուրականի մաս էր կազմում, իսկ Փոքրը՝ Կորճայքի[3]: Ըստ որում՝ այս խնդրով զբաղված Վ. Վարդանյանը վերջին տարանջատումը չի կատարում, որի հետևանքով ըստ նրա Գուրգենի բաժնում ընդգրկված էր ոչ թե 13, այլ 11 գավառ[4]: Թովմա Արծրունին ավելացնում է, որ Զարեհավանը, Ըռնան և Տամբերը «հանեալ էին ի Պարս Հայոց»[5], այսինքն՝ գրավվել էին Պարսկահայքից, որի կազմում են դրանք հիշատակվում «Աշխարհացոյց»-ում[6], իսկ Գողթնը և Նախճավանը Վասպուրականի կազմից հանվել էին շուրջ երկու հարյուրամյակ առաջ[7]:

Ըստ Թովմա Արծրունու՝ բաժանումից հետո, քանի որ Փոքր Աղբակը, Կորճեից աշխարհն ու Պարսկահայքը սահմանակից էին, Գուրգեն Արծրունու և Կորճեից գործավարների միջև գժտություններ էին ծագում: Դրա հետևանքով Գուրգենը վերագրավեց Տամբեր և Ըռնա գավառները, Ապուջափրի բերդը և Կորճեից Վիրի քաղաքում վերակացուներ նշանակեց[8]: Մեր համոզմամբ, «աշխարհն Կորճէից»-ը Կորճայքին չի

---

[1] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62:

[2] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 32-33: Տե՛ս նաև **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի,-«ԲԵՀ», 1983, թիվ 3, էջ 110-112:

[3] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 32:

[4] Տե՛ս **Վ. Վարդանյան,** Վասպուրականի թագավորության սահմանները IX-XI դարերում,-«ՊԲՀ», 1969, թիվ 4, էջ 230: Մեկ գավառանուն ուսումնասիրողը սխալմամբ բաց է թողել:

[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 390:

[6] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 32:

[7] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 390:

[8] Անդ, էջ 400:

վերաբերում, այլ Պարսկահայքի գավառներին[1], որոնք՝ մաս կազմելով Արծրունիների իշխանության և ղեկավարներով վերջինիս գործավարներով, փորձ են կատարում չենթարկվելու Արծրունիներին: Շուտով շրջակա ամիրայությունների զորքը ասպատակում է Լեկը, Աղգին, Կրերիքը և Ճահուկ գավառը: Գուրգենը հակահարձակման է անցնում, վերանվաճում Այլի կամ Ելի գավառը, և թշնամիները ստիպված փախուստի են դիմում[2]: Այսինքն՝ Ճահուկ գավառը ևս մտնում էր Արծրունիների տիրույթների մեջ: Ըստ Անանունի՝ նախկինում Վասպուրականի ոստիկան Գագիկ Ապումրվանը մանուկ Աշոտ Արծրունուն էր հանձնել Ճահուկը՝ Ագարակի բերդով[3]: Որսիրանքը ևս մտնում էր Արծրունիների իշխանության մեջ, որտեղ՝ ըստ Անանունի, Ափշինի հարձակումից ապաստանում են երեք եղբայրները[4]:

Անանունը 905 թ. բաժանման սեփական տարբերակն ունի: Ըստ պատմիչի՝ նախապես Գագիկը եղբորը տվել էր «զԱռնիոտն, և ի ձորոյն Ընձահից, մինչև ցերկուս ամրոցսն Սրնգայ և Ջղմարայ»[5]: Երբ Գուրգենը վերանվաճեց Ելի գավառը, «տուեալ Գագկայ Վասպուրական իշխանի զբերդն Ագարակայ և զգաւառն Ճախուկ՝ առնու զբերդն Ջռէլ և զգաւառն կոչեցեալ Ջերմաձոր, որ է մասն երկրին Մոկաց»[6]: Պարզ է, որ Անանունի հաղորդումն ի մեծի մասի համընկնում է Թովմա Արծրունու հաղորդմանը և որոշ տեղերում նույնիսկ լրացնում այն: Անանունի տեղեկությունից պարզվում է, որ Գուրգենի բաժնի մեջ էին Կորճայքի Փոքր Աղբակ գավառի մեջ մտնող Ջլմար և Սրինգ ամրոցները և Ճահուկ գավառը՝ Ագարակի բերդով: Առանց որևէ հաղորդման էլ պարզ է, որ Որսիրանք գավառը, որը այդպիսով հայտնվում էր Գուրգեն Արծրունու տիրույթներով շրջապատված վիճակում, մաս էր կազմելու նրա տիրույթների: Գագիկի բաժնում հիշատակվում է նաև Մոկքը (իմա՛ Մոկքի Ջերմաձոր գավառ): Գագիկին հաջողվել էր տիրել նաև Տուրուբերանի Երևարք ու Մոկքի Առվենից ձոր գավառներին[7]: Դա տեղի էր ունեցել, թերևս, 907 թ.՝ Գագիկ Արծրունու կողմից Ամյուկ բերդի գրավման տա-

---

[1] Պետք է նշել, որ Պարսկահայքը (ավելի հավանական է՝ դրա մի հատվածը) «Կորճեից գավառ» է անվանում նաև Փավստոս Բուզանդը: Նա Պարսկահայքում գտնվող Սաղամաս քաղաքի մասին գրում է.«ի գաւառն Կորճէից ի Սաղամաս» (տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 244):

[2] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 402:

[3] Անդ, էջ 418:

[4] Անդ, էջ 424:

[5] Անդ, էջ 432:

[6] Անդ:

[7] Անդ, էջ 434:

ռում, որին դեռ կանդրադառնանք: Բացի այդ, Վասպուրականի հարավարևմտյան որոշ գավառներ, ինչպես ստորև ցույց կտանք, գտնվում էին Կանգավար ամրոցում նստող Գուրգեն Ապուպելճի իշխանության ներքո:

Քարտեզագրելով երկու եղբայրների բաժիններում ընդգրկված գավառները՝ ակնհայտ է դառնում, որ Գագիկի բաժնում ընդգրկված էին Վասպուրականի հյուսիսային և արևմտյան, իսկ Գուրգենի բաժնում՝ կենտրոնական և հարավային գավառները[1]:

Վերևում ցույց տվեցինք, որ ՝ դատելով Անանուն Ձրուցագրի մի հաղորդումից, Վասպուրականի Դառնի գավառը, որ Թովմա Արծրունու կողմից հիշատակվում է Գագիկ Արծրունու տիրույթների մեջ, 906 թ. դրությամբ պատկանում էր Սմբատ Ա-ին:

Վ. Վարդանյանը՝ դատելով Թովմա Արծրունու հիշատակությունից, կարծիք է հայտնել, որ Վասպուրականի իշխանությունից դուրս են մնացել Վասպուրականի արևելյան գավառները, այսինքն՝ նվաճվել արաբական ամիրայությունների կողմից[2], որոնք նախկինում մեծավ մասամբ Արմինիա ոստիկանության Երրորդ Արմինիա վարչական շրջանի մաս էին կազմում[3], և հարավարևմտյան գավառները[4], որոնք ևս մտնում էին Երրորդ Արմինիայի մեջ[5]: Հարավարևմտյան գավառների մասին դեռ կխոսենք, իսկ այժմ նշենք, որ Վասպուրականի արևելյան գավառները, որ տարածվում էին մինչև Փայտակարան աշխարհը[6], նախքան 591 թ. բաժանումը՝ կազմելով Հայոց մարզպանության Վասպուրական գնդի երկիր վարչական շրջանի մաս, այդ բաժանումից հետո մնացին Հայոց մարզպանության կազմում, իսկ հետո էլ մտան Արմինիա ոստիկանության մեջ: Հետագայում, երբ այդ գավառներում արաբներ էին հաստատվում, այդ իրողությունը, ինչպես Պարսկահայքի հյուսիսային գավառների պարագայում, հիմք էր տալիս արաբ հեղինակներին՝ դրանք Ատրպատականի ոստիկանության մաս համարելու: Նրանք հաղորդում

---

[1] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[2] Տե՛ս **Վ. Վարդանյան,** Վասպուրականի թագավորության սահմանները IX-XI դարերում, էջ 230:

[3] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 68-69, 75-76:

[4] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[5] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 63-69:

[6] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

են, որ, օրինակ՝ Մարանդը Ատրպատականի մեջ էր մտնում[1]: Սակայն ալ-Մուկադդասին, որ X դ. պատմիչ է և քաջածանոթ էր Հայոց թագավորության ընդգրկած տարածքներին, Մարանդը հիշատակում է Հայաստանի քաղաքների թվում[2]: Իսկ եթե Մարանդը՝ մտնելով Հերի ամիրայության մեջ, Հայոց տերության մաս էր կազմում, ապա վերջինիս մեջ էին մտնում նաև Վասպուրականի արևելյան մյուս գավառները: Այստեղ, հավանաբար, տեղի է ունեցել հետևյալը: Վասպուրականի նշյալ գավառները՝ միավորված Հերի ամիրայի իշխանության ներքո, այլևս Վասպուրականի իշխանության մաս չեն, այլ ուղղակիորեն ենթարկվում են Հայոց թագավորին, որ և ակնհայտ է դառնում Անանուն Զրուցագրի հաղորդումներից[3]:

Անդրադառնալով Վասպուրականի հարավարևմտյան չհիշատակված գավառներին, անհրաժեշտ ենք համարում տալ մի փոքրիկ պատմական ակնարկ, որ լույս կսփռի այդ խնդրի վրա: Գրիգոր-Դերենիկի օրոք (874/875-885) Գուրգեն Ապուպելճ Արծրունին՝ բուն տիրույթ ունենալով Մարդաստան գավառը[4] և նախապես տիրելով Սրինգ և Ձլմար ամրոցներին[5], տիրում է Անձևացիքին ու Արզնին և փորձ անում տիրելու նաև Տարոնին[6]: Նա տիրեց Անձևացիքին՝ ամուսնանալով մահացած Անձևացյաց իշխանի այրու հետ[7] և իր նստավայր դարձրեց Կանգավար ամրոցը[8]: Վասպուրականի իշխան Գրիգոր-Դերենիկը կարողացավ նրանից խլել Անձևացիքի մի մասը՝ Նորաբերդ ամրոցով, որ նրան էր կտակել Անձևացյաց իշխան Մուշեղը: Գրիգոր-Դերենիկը Գուրգենին ճանաչել էր սոսկ որպես Մարդաստանի իշխան[9]: Սակայն Գուրգենին հաջողվել էր վերատիրել կորցրած Անձևացյաց հողերին[10]: 860-ական թթ. սկզբին գերությունից վերադարձել էր Աշոտ Արծրունին: Նա Գուրգենից պահանջեց իր որդուն զիջել Անձևացիքի մի մասը, սակայն տեղի ունեցած ճակատամարտում պարտություն կրեց[11]: Աշոտը կարողացավ Գուրգենի դեմ հանել Արմինիայի իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու որդի Շապուհին, Մոկաց և Արզնի զորքերը: Ի վերջո նրանք հաշտվեցին,

---

[1] Տե՛ս **al-Istakhri**, էջ 181-182, **Ibn al-Fakih**, էջ 285, Jakubi, էջ 106, يعقوبي, II, էջ 171:
[2] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 51, 373:
[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 163-169:
[4] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 322:
[5] Անդ, էջ 306:
[6] Անդ, էջ 324:
[7] Անդ, էջ 324-326:
[8] Անդ, էջ 364:
[9] Անդ, էջ 326:
[10] Անդ:
[11] Անդ, էջ 330-332:

և ամեն մեկը մնաց իր տեղում[1]: Մեր համոզմամբ, հենց այս պատճառով, գավառաբաժանման ժամանակ Գուրգեն Ապուպելճի տիրույթների մեջ մտնող Վասպուրականի իշխանության Անձևացյաց և, թերևս, որոշ այլ գավառներ չեն հիշատակվում երկու եղբայրների բաժիններում: Բացի այդ, Գուրգեն Ապուպելճին պատկանող Մարդաստան գավառի խնդիրը կասկածներ է հարուցում, քանի որ այդ իշխանի գործունեությունը հիմնականում ծավալվում էր Վասպուրականի իշխանության հարավ-արևմուտքում, իսկ Մարդաստան գավառը գտնվում էր Վասպուրականի հյուսիսում և սահմանակցում էր Այրարատ աշխարհի Կոգովիտ գավառին[2]: Բ. Հարությունյանը ցույց է տվել, որ Բուն Մարդաստան գավառը նույն Տրպատունիքն է[3]: Մեր կարծիքով, Գուրգեն Ապուպելճին պատկանող Մարդաստան գավառը ոչ թե Մարդաստանն է, այլ Բուն Մարդաստան կամ Տրպատունիք գավառը, որ գտնվում էր Անձևացյաց գավառի հարևանությամբ[4]:

Վ. Վարդանյանի այն կարծիքը, թե Վասպուրականի թվով 13 կամ 14 գավառ նվաճել են արաբական շրջակա ամիրայությունները[5], ճիշտ չէ: Նա իր հաշվարկը կատարում է՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ «Աշխարհացոյց»-ը Վասպուրական աշխարհում նշում է 35, իսկ նրա որոշ ձեռագրեր՝ 36 գավառ[6]: Ըստ Թովմա Արծրունու՝ երկու եղբայրների բաժիններում ընդգրկված էին Վասպուրականի 23 գավառ: Դուրս են մնում թվով 12 կամ 13 գավառ, որոնք էլ ըստ Վ. Վարդանյանի պետք է նվաճած լինեին շրջակա արաբական ամիրայությունները:

Արծրունյաց տան պատմիչի հաղորդումները մեզ այն համոզմանն են բերում, որ այդ գավառները Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանում ևս մաս էին կազմում Վասպուրականի իշխանության: Արդեն տեսանք, որ եղբայրների բաժիններում չհիշատակվող գավառներից Անձևացիքը պատկանում էր Գուրգեն Ապուպելճ Արծրունուն: Գրիգոր-Դերենիկի որդիների միջև հայրական ժառանգության բաժանման մասին խոսելիս Թովմա Արծրունին հաղորդում է, որ Գուրգեն

---

[1] Անդ, էջ 332:

[2] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[3] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 361-362:

[4] Տե՛ս Անդ:

[5] Տե՛ս **Վ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 231:

[6] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի,-«ԲԵՀ», 1983, թիվ 3, էջ 110-112:

Արծրունուն բաժին հասավ արևելյան կողմը՝ Աղբակից արևելք և դրա շուրջն ընկած գավառներով, Պարսկահայքը, մինչև Կորդուքի, այսինքն՝ Կորճայք աշխարհի արևմտյան կողմը և մինչև ուր հնարավոր կլիներ տիրել[1]: Առաջին հայացքից հասկանալի թվացող այս տեղեկությունը սակայն ծնում է մի քանի հարցադրումներ: Նախ՝ պարզվում է, որ Կորճայքի՝ Աղբակի հարավից՝ Փոքր Աղբակից սկսած մինչև արևմտյան հատվածը մտնում էր Արծրունիների իշխանության մեջ, ինչպես որ էր արաբական տիրապետության ժամանակաշրջանում: Հետո՝ Գուրգենի տիրույթների քարտեզագրումից պարզվում է, որ չնայած ըստ պատմիչի Գուրգենին բաժին էր հասել իշխանության արևելյան հատվածը՝ ինչպես Վասպուրականի, այնպես էլ Պարսկահայքի գավառներով, սակայն նրան էր անցել նաև Կորճայքի հյուսիսային հատվածի կենտրոնական և արևելյան մասը (ավելի ճշգրիտ՝ Կորդիք, Ճահուկ, Որսիրանք և Փոքր Աղբակ գավառները): Փաստորեն նա տիրում էր Վասպուրականի իշխանության արևելյան, հարավային և հարավարևմտյան գավառները: Թեև նման բաժանման տրամաբանությունը փոքր-ինչ անհասկանալի է, բայց մեզ համար կարևոր է մեկ այլ իրողություն: Եթե այս գավառները մտնում էին Արծրունիների իշխանության մեջ, ապա Երվանդունիքը, Անձևացիքը և Բուժունիքը, որ այդ դեպքում հայտնվում էին եղբայրների տիրույթներով շրջապատված վիճակում (հաշվի առնելով նաև այն իրողությունը, որ Մոկաց իշխանության մի զգալի մասը ևս գտնվում էր Արծրունիների գերիշխանության ներքո), ամենայն հավանականությամբ, պետք է մտնեին Արծրունյաց տիրույթների մեջ: Պատմիչը նշում է, որ Անձևածյաց գավառին տիրել էր դեռևս Գուրգեն Ապուպելճ Արծրունին. «Գուրգէն օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ի բազում քան թէ ի սակաւ տեղիս, զոր ի Տարօն և զոր յԱնձաւացիս և զոր յԱրզն...: Բայց յետ բազում յուզիցն և պատերազմացն եհաս տիրել նմա Անձաւացեաց տէրութեանն»[2]: Նման ճակատագիր էր վիճակվել նաև, ամենայն հավանականությամբ, Երվանդունիքին և Բուժունիքին, որոնք երկու եղբայրներից և ոչ մեկի բաժնում չեն հիշատակվում: Գավառացանկից դուրս մնացած Հայոց ձորը, որ իրենից ներկայացնում էր Երվանդունիքի, Գուկանի և Արտաշեսյանի ընդհանրությունը[3], այսինքն՝ իր տարածքով մաս էր կազմում Արծրունիների իշխանության: Նշենք նաև, որ Գուրգեն Ապուպելճի մահից հետո (890-ական թթ.) իշխեց նրա որդի Ատոմ Արծրունին,

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 360:
[2] Անդ, էջ 324:
[3] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 62:

որ հիշատակվում է Դիար Բաքրի ամիրայից Սմբատ Ա-ի կրած պարտությունից քիչ առաջ[1]:

Այսպիսով պարզվում է, որ հիշատակության մեջ պակասող գավառներից 5-ը, որ տեղադրվում են Վասպուրականի հարավարևմտյան հատվածում, ևս մաս էին կազմում Վասպուրականի Արծրունյաց իշխանության: Հավելենք, որ Մշո Սուրբ Աղբերիկ վանքի կոնդակում նշված է, որ թագավոր հռչակված Գագիկ Արծրունին ընդհանրապես «տիրապետէ Խլաթայ (իմա՛ Բզնունյաց-Ա.Ե.) ծովուն հարաւակողմն ամենայն գաւառաւքն, որ Հայոց լեալ էին»[2]: Պակասող մյուս գավառներից Պարսպատունիքի տեղադրության հարցում Ս. Երեմյանն այն կարծիքին է, որ այն եղել է Վասպուրականի ծայր արևելյան գավառը և զբաղեցրել ընդարձակ տարածություն՝ նույնանալով ներկայիս Ղարադաղին[3]: Բ. Հարությունյանը իրավացիորեն մերժում է այս տեղադրությունը՝ նշելով, որ ըստ «Զորանամակ»-ի 50 զինվոր մարտադաշտ դուրս բերող Պարսպատունիքի իշխանը չէր կարող տիրել այդպիսի մեծ տարածքի[4]: Ցույց տալով, որ Պարսպատունիքը պետք է գտնվեր արևմտյան Վասպուրականում, Բ. Հարությունյանն այն տեղադրում է Հերից արևմուտք՝ Կոտոր գետի հովտում՝ նշելով սակայն, որ չնայած իր տեղադրությունը զերծ չէ թեականությունից, սակայն ավելի մոտ է իրականությանը[5]: Ի վերջո հետազոտողը՝ անդրադառնալով այդ գավառի՝ Գագիկ և Գուրգեն իշխանների բաժիններում չհիշատակվելուն, նշում է, որ այն թերևս անցել էր Հերի ամիրայությանը[6]: Սակայն Հերի ամիրայությունը ևս մտնում էր Հայոց տերության մեջ: Վասպուրականի մնացած գավառները՝ Արտավանյանը, Բագանը, Գաբիթյանը, Գազրիկյանը, Վարաժնունիքը և Մարանդը տեղադրվում են Վասպուրականի՝ Կոտոր գետից արևելք գտնվող հատվածում[7]: Արևելյան Վասպուրականի այդ վեց գավառները, ինչպես տեսանք, մեծավ մասամբ մտնում էին Արմինիա ոստիկանության Երրորդ Արմինիա վարչական շրջանի մեջ: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Պարսկահայքի հյուսիսային հատվածներն ընդգրկող Հերի ամիրայությունը տիրել էր, թերևս, այս շրջաններին, որի հետևանքով դրանք այլևս չեն հիշատակվում

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 364:

[2] Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 183:

[3] Տե՛ս **Ս. Երեմյան**, նշվ. աշխ., էջ 77:

[4] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 370-371:

[5] Անդ, էջ 374-375:

[6] Անդ, էջ 375:

[7] Անդ, էջ 375-380:

Վասպուրականի իշխանության մեջ: Սակայն այն ժամանակ, երբ Աշոտ Ա-ն կատարում էր իր նվաճումները, նույն ժամանակ Գրիգոր-Դերենիկ Արծրունին Հերի ամիրայության Հեր և Զարևանդ գավառներն իրեն է ենթարկում[1]: Այդ ամիրայության մեջ էր մտնում նաև Մարանդը[2]: Սա նշանակում է, որ Հերի ամիրայությունը որոշ ժամանակով ենթարկվել էր Արծրունիների իշխանությանը: Նույնն է վկայում Հովհաննես Դրասխանակերտցին: Ըստ նրա՝ Աշոտ Ա-ի՝ խալիֆայից թագ ստանալու ժամանակ Գրիգոր-Դերենիկը Հերի և Զարևանդի կողմերում նվաճում է քաղաքներ և գավառներ[3]: Այնուհետև, արդեն Սմբատ Ա-ի օրոք, Ատրպատականի Ափշին ամիրան՝ տեսնելով Սմբատ արքայի մտերմությունը Բյուզանդիայի կայսր Լևոնի հետ, արշավում է Հայաստան: Նրան 30 հզ. զորքով ընդառաջ է գնում Սմբատ արքան: «Գնայր ընդ առաջ նորա մինչև ի գաւառն Ռոտոկայ մերձ յԱտրպատական»[4]: Այսինքն՝ այստեղ սահմանագիծը նույնն էր, ինչ մարզպանական ու ոստիկանական շրջանում՝ Հեր և Զարևանդ գավառները (Ռոտոկ կամ Ռոստակ), մտնում էին Հայոց թագավորության մեջ: Արդեն տեսանք, որ Մարանդը՝ մտնելով Հերի ամիրայության կազմի մեջ, ևս մաս էր կազմում Հայ Բագրատունիների տերության: Ըստ Կոստանդին Ծիրանածնի՝ Աշոտ Ա-ն իր իշխանությանն էր ենթարկել Հերի և Սալամասի արաբական ամիրայություններին[5], իսկ ըստ ալ-Մուկադդասիի՝ Հայոց թագավորության մեջ էին մտնում Հերը, Սալամասը, Ուրմիոն և Մարանդը[6]: Այսպիսով, Վասպուրականի 7 գավառ մաս էին կազմում Հերի ամիրայության, որ Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի օրոք ուղղակիորեն ենթարկվում էր Հայոց թագավորին[7]:

Ինչ վերաբերում է Վասպուրականի մնացած երկու գավառներին՝ Նախճավանին և Գողթնին, ապա արդեն տեսանք, որ դրանք Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանում մտնում էին արքունի տիրույթների մեջ: Դատելով Ղևոնդի մի վկայությունից՝ արաբական տիրապետության ժամանակաշրջանում Նախճավանում ստեղծվել էր ամիրայություն, որի ամիրան, ըստ Թովմա Արծրունու, Իբրահիմն էր[8] և, որը, անկասկած, ընդգրկելու էր նաև Գողթնը[9]:

---

[1] Անդ:
[2] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 167:
[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 142:
[4] Անդ, էջ 162:
[5] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10:
[6] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 51:
[7] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 163-169:
[8] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 304:
[9] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 24:

Դատելով Թովմա Արծրունու տեղեկություններից՝ Արծրունիները տիրել էին նաև Մոկքի մի մասին: Ըստ պատմիչի, 895 թ. բաժանման ժամանակ Մոկքն անցել էր Գագիկ Արծրունուն[1], իսկ դա նշանակում է, որ այն պատկանում էր դեռևս Գրիգոր-Դերենիկին: Երբ Սմբատ Ա-ն արշավեց Ապահունիք, վերջինիս հետ էին Վասպուրականի մեծ իշխան Աշոտը՝ Դերենիկի որդին, նրա հետ՝ Մոկաց Գրիգորն ու Անձևացյաց զորքը, քանի որ Մոկաց և Անձևացյաց իշխանությունները նա նվաճել էր[2]: Ինչպես տեսանք, Վասպուրականի ապագա թագավոր Գագիկ Արծրունուն էին պատկանում Մոկքի Ջերմաձոր, Արքայից, Արգաստովիտ և Առվենից ձոր գավառները:

Ի մի բերելով վերոհիշյալ քննության արդյունքները՝ նշենք, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում Վասպուրականի Արծրունիների իշխանությունը ներառում էր Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի մեծ մասը, Պարսկահայքի կենտրոնական գավառները և Կորճայքի հյուսիսային հատվածը: Այս տարածքներում ներքին վարչական բաժանումը երբեմն փոփոխվում էր: Գուրգեն Ապուպելճը, որ հիմնական տիրույթ ուներ Բուն Մարդաստան կամ Տրպատունիք գավառը, տիրել էր Անձևացիքին և շրջակա գավառներին: Անձևացիքում Գուրգենից հետո իշխում էր նրա որդի Ատոմը: Գագիկ Ապումրվանը (մահ.՝ X դ. սկիզբ.) տիրել էր Նկան, Սևան և Կոտոր կամ Կոտորոց բերդերին, մի պահ նույնիսկ՝ Վանա բերդին: Սակայն Գագիկ Ապումրվանից հետո նրա տիրույթներն անցան Գագիկ Արծրունուն՝ Վասպուրականի ապագա թագավորին: Հերի ամիրայությունը, որ ընդգրկում էր Վասպուրականի արևելյան գավառների մեծ մասը, ուղղակիորեն ենթարկվում էր Հայոց թագավորին:

Նշենք նաև, որ Վասպուրականը ընդգրկված էր Կոստանդին Ծիրանածնի այն ցուցակում, որտեղ նշված են այն թագավորություններն ու իշխանությունները, որոնց նամակներ էին ուղարկվում Բյուզանդիայի արքունիքից[3]:

3.2. Անձևացյաց իշխանություն: Հայ Բագրատունիների տերության շրջանում, ինչպես տեսանք Վասպուրականի իշխանության հատվածում, Անձևացյաց իշխանությունն ընդգրկում էր Անձևացյաց գավառից բացի նաև Բուժունիքն ու Երվանդունիքը, ինչպես նաև որոշ ժամանակով Բուն Մարդաստան կամ Տրպատունիք գավառը:

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 360:
[2] Անդ, էջ 380:
[3] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 151:

906 թ. աբխազական արշավանքին Անձևացյաց իշխանը մասնակցում էր առանձին զորախմբով[1]:

Նշենք նաև, որ Անձևացյաց իշխանությունն ընդգրկված էր Կոստանդին Ծիրանածնի այն ցուցակում, որտեղ նշված են այն իշխանները, որոնց նամակներ էին ուղարկվում Բյուզանդիայի արքունիքից[2]:

3.3. Սյունյաց իշխանություններ: Արաբ հեղինակները VII-IX դդ. Սյունիքը հիշատակում են Արմինիա ոստիկանության Առաջին Արմինիա վարչական շրջանի կազմում[3]: Ինչպես հայտնի է, մինչ 571 թ. ապստամբությունն «ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց, և խնդրեաց ի Խոսրովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դընայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի, զի մի՛ ևս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա: Եւ կատարէր հրամանն»[4]: Սակայն, Հայոց իշխան Համազասպ Մամիկոնյանի իշխանության տարիներին (655-662) հայերը «հապճեպ երթևեկով հնազանդեցան ի ծառայութիւն թագաւորին Յունաց, հանդերձ միաբանութեամբ իշխանացն և զաւրացն Աղուանից և իշխանացն աշխարհին Սիւնեաց հանդերձ աշխարհաւն իւրեանց. որք լծեալ էին յառաջագոյն յաշխարհագիրն Ատրպատականի, մինչև բարձաւ թագաւորութիւն Պարսից և տիրեաց Իսմայելացին, նոքա անդրէն նուաճեալ միաբանեցան ընդ Հայոց»[5]: Այսինքն՝ նախքան Արմինիա ոստիկանության ձևավորումը Սյունիքը միացվել էր Հայոց իշխանապետությանը: Հենց այդ է պատճառը, որ արաբները սկզբում Սյունիքը վարչականորեն Հայաստանի մաս էին դիտում: Դա է ցույց տալիս այն փաստը, որ 655 թ. արշավանքի ժամանակ այն գրավեց ոչ թե նախորդ շրջանի Աղվանից մարզպանության տարածքները նվաճող Սալման իբն Ռաբիան, այլ Հայաստանի և Վիրքի նվաճող Հաբիբ իբն Մասլամա[6]: Արաբները, ամենայն հավանականությամբ, VIII դ. սկզբին Սյունիքը մտցրեցին Առաջին Արմինիայի մեջ՝ հետապնդելով այն նույն նպատակը, ինչ Սասանյանները: Նրանք

---

[1] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 189:

[2] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 151:

[3] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122, **Ibn al-Fakih**, էջ 290-291, بلاذري, I, էջ 231, يعقوبي, II, էջ 364, **Jacut**, I, էջ 219-220:

[4] **Սեբեոս**, էջ 67-68:

[5] Անդ, էջ 175:

[6] Տե՛ս بلاذري, I, էջ 237: Տե՛ս նաև **Ա. Եղիազարյան**, Հաբիբ իբն Մասլամայի և Սալման իբն Ռաբիայի արշավանքները Հայաստան և այսրկովկասյան երկրներ,-«Լրաբեր(հաս. գիտ)», 2008, թիվ 2, էջ 68-77, տե՛ս նաև **Է. Մինասյան, Ա. Եղիազարյան**, Հայ դիվանագիտությունը VII դարում,-«Լրատու» Մեսրոպ Մաշտոց Համալսարանի, Ստեփանակերտ, 2008, էջ 6-24:

պարզապես ցանկանում էին թուլացնել Հայաստանը՝ նրա տարբեր հատվածների միջև արհեստական անջրպետներ առաջացնելով: Արաբ հեղինակներից Յակուտը Սյունիքն Առաջին Արմինիայի մեջ հիշատակվելու պատճառ է համարում դրա՝ Առանի հետ միասին հիշատակվելը[1]: Առան անունով, ինչպես հայտնի է, արաբները կոչում էին Հայոց Արևելից կողմերը: Վերջին հանգամանքը, մեր կարծիքով, կապված էր Մեծ և Փոքր Սյունիք վարչա-քաղաքական հասկացությունների հետ, երբ Փոքր Սյունիք անվան տակ հանդես էր գալիս Արցախը:

Սակայն Սյունիքի IX-X դդ. պատմության ուսումնասիրությունը մեզ այն համոզմանն է բերում, որ չնայած Սյունիքի՝ Առաջին Արմինիայի մեջ մտնելու իրողությանը, այն ամբողջությամբ ընդգրկված էր հայկական միջավայրում, որի արդյունքում Սյունյաց իշխաններն իրենց վճռորոշ ազդեցությունն ունեցան Հայաստանի քաղաքական անկախության վերականգնման գործում: Նշենք նաև, որ IX դ. Արմինիա ոստիկանության ներքին վարչական բաժանումը գրեթե լիովին սպառել էր իրեն և արդեն որևէ նշանակություն չուներ:

Հայ պատմագիտության կողմից արդեն ցույց է տրված, որ IX դ. սկզբին Սյունիքում ստեղծվում են մի քանի իշխանություններ, որոնց իշխանները Սյունի նախարարական տնից էին և ունեին սեփական ժառանգությունը: Նրանցից առաջինը, որ համարվում էր նաև «մեծ նահապետ», Վասակ Սյունին էր[2]: Վասակի իշխանությունն ընդգրկում էր Սյունիքի մեծ մասը՝ Գեղարքունիք գավառը և Գեղարքունյաց ծովի շրջակայքը, Բաղքը, Վայոց ձորը, Ծղուկը, Ճահուկը և Հաբանդը, սակայն 821 թ. Վասակի մահից հետո նրա որդի Սահակը Գեղարքունիքը բաժանում է հայրական ժառանգությունից և ստեղծում առանձին գահակալ իշխանություն[3]: Գրիգոր Սյունի իշխանի ճյուղի տիրույթները թերևս գտնվում էին Սյունիքի հարավային մասում, Սահակյանները տիրում էին Կովսական և Քաշունիք գավառներին, իսկ X դ. վերջին ստեղծվում է Ջագիկյանների ճյուղը[4]: Երբ 831/832 թ. Կավակերտի ճակատամարտում սպանվեց Գեղարքունիքի Սահակ իշխանը, նրան փոխարինեց որդին՝ Գրիգոր Սուփանը. «զկնի Սահակայ պայազատէ զտէրութիւնն զայն Գրիգոր որդի նորուն, որ փաղաքշական անուամբ Սուփան անուանիւր»[5]: «Տերութիւն» ասելով Հովհաննես Դրասխանա-

---

[1] Տե՛ս **Jacut**, I, էջ 184, II, էջ 740:
[2] Տե՛ս Հ. Ութմազյան, նշվ. աշխ., էջ 25-26:
[3] Անդ, էջ 26:
[4] Անդ:
[5] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 118:

կերտցին նկատի ունի ողջ Սյունյաց իշխանությունը, իսկ Սահակը և նրա որդի Գրիգորը փաստորեն տեղի գահերեց իշխաններն են: Չնայած կենդանի է գահերեց Փիլիպպե իշխանը (մահ. 848 թ.), որ Վասակի որդին էր և տիրում էր Սյունիքի կենտրոնական գավառներին[1], պատմիչը նրան չի հիշատակում, իսկ որպես գահերեց ներկայացնում է Գեղարքունյաց իշխաններին: Փաստորեն, Գեղարքունյաց իշխաններին հաջողվում է, անկասկած, Բագրատունյաց տոհմի հետ սերտ համագործակցության արդյունքում, ստանալ Սյունյաց գահերեց իշխանի իրավունքը[2]: Երբ Գեղարքունիքի Գիրգոր Սուփան իշխանը փորձեց զավթել Վայոց ձորը, որ մտնում էր Փիլիպպեի իշխանության մեջ, նա հանդիպեց Բաբկենի համառ դիմադրությանը[3]: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 849 թ. Վայոց ձորում և ավարտվեց Գրիգոր Սուփանի պարտությամբ: Գրիգոր Սուփանը սպանվեց այդ ճակատամարտում[4]: Այսինքն՝ Գրիգոր Սուփանը կարողացել էր տիրել Վայոց ձորին, կամ, որ ավելի հավանական է, դրա մի մասին: Հովհաննես Դրասխանակերտցին Գրիգոր Սուփանին անվանում է «Սիւնեաց տէր», իսկ Բաբկենին՝ «Սիսական նահապետ»[5]: Այսինքն՝ պատմիչի համար գահերեցը Բաբկենն է, չնայած, որ Գրիգոր Սուփանն էլ կարևոր դիրք էր ստացել Հայաստանում՝ Բագրատունիների հետ համագործակցության հետևանքով:

Բաբկեն Սյունին մահացել է, հավանաբար, 851 թ. կամ 852 թ.: Գեղարքունիքում Գրիգոր Սուփանին հաջորդեց նրա որդի Վասակ Գաբուռը, իսկ Բաբկենին՝ նրա եղբայր Վասակ Իշխանիկը:

Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումներում հստակորեն ի հայտ է գալիս Սյունիքում իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու օրոք գոյություն ունեցող իրավիճակը: Երբ հայրենիք էին վերադառնում Բուղայի կողմից գերեվարված հայ իշխանները, իշխանաց իշխան Աշոտը «Վասակ հայկազուն, որ Գաբուռն յորջորջէր՝ վասն զի փեսայացեալ էր Աշոտոյ իշխանաց իշխանի, իշխան ապա Սիւնեաց զնա կացուցանէր՝ յարքունուստ նմա առնելով զպատիւ. որ բազում ճոխութեամբ վարեալ զիշխանական պետութիւն իւր, տիրելով միանգամայն Սիսական ազգին»[6]: Սյունյաց մեծ իշխանն այդ ժամանակ Իշխանիկ կոչվող Վասակն

---

[1] Տե՛ս **Հ. Ութմազյան,** նշվ. աշխ., էջ 77:
[2] Անդ, էջ 76-77:
[3] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 118:
[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 120, **Մովսես Կաղանկատվացի**, էջ 333:
[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 120:
[6] Անդ, էջ 136-138:

էր, որը նույնպես ենթարկվում էր իշխանաց իշխան Աշոտին[1]: Այստեղից պարզ է դառնում, որ գահերեցությունն Աշոտ Բագրատունու կողմից այլևս տրված է Գեղարքունյաց իշխաններին, չնայած, պատմիչը Սյունիքը դիտում է որպես մեկ ամբողջություն: Մեծ դեր ուներ այստեղ նաև այն, որ Վասակ Գաբուռը կնության էր առել Աշոտ Բագրատունու դուստր Մարիամին[2]: Դեռ ավելին, երբ Բուղան մտադրվեց արշավել Սյունիք, Հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին, որ ուղեկցում էր նրան, հարվածից զերծ պահեց Գեղարքունյաց իշխանությունը՝ Բուղայի զորամասերը տանելով Վասակ Իշխանիկի դեմ: Վասակը նահանջեց Կոտայք, այնտեղից անցավ Գարդման, բայց տեղի Կտրիճ իշխանի կողմից գերվեց և հանձնվեց Բուղային[3]: Ամենայն հավանականությամբ, Գեղարքունիքը չի ենթարկվել Բուղայի արշավանքին, իսկ Սմբատ Բագրատունու որդի Աշոտն էլ հոգացել է այն մասին, որ Սյունյաց գահերեց դառնա տեղի Վասակ Գաբուռ իշխանը, որ նրա փեսան էր: Ստեփաննոս Օրբելյանը հաղորդում է. «...նա (Աշոտ Բագրատունին-Ա.Ե.) յոյժ մտերմաբար հոգայր վասն Վասակայ. սակս որոյ և անցեալ եղև փառօք և իշխանութեամբ ընդ նախնիս իւր խառնեալ ի թագաւորեալ ցեղն Բագրատունի»[4]: Հովհաննես Դրասխանակետցու վերոհիշյալ հաղորդումը, թե «Վասակ հայկազուն, որ Գաբուռն յորջորջէր՝ վասն զի փեսայացեալ էր Աշոտոյ իշխանաց իշխանի, իշխան ապա Սիւնեաց զնա կացուցանէր՝ յարքունուստ նմա առնելով զպատիւ. որ բազում ճոխութեամբ վարեալ զիշխանական պետութիւն իւր, տիրելով միանգամայն Սիսական ազգին», ցույց է տալիս, որ իշխանաց իշխան Աշոտը իր փեսա Վասակի իշխանությունը ճանաչում է ողջ Սյունիքի վրա:

Սակայն շուտով գերությունից վերադարձավ Վասակ Իշխանիկը: Թեև նա չպատերազմեց Վասակ Գաբուռի դեմ, թերևս, վախենալով Աշոտ Բագրատունու ցասումից, սակայն, իրավիճակը շուտով փոխվեց հօգուտ նրա: Նրա վերադառնալու հետ միաժամանակ մահացավ Վասակ Գաբուռը: Աշոտ Բագրատունին դեմ չեղավ, որ Վասակ Իշխանիկը տիրի իր հայրական ժառանգությանը, այսինքն՝ Բաղք, Վայոց ձոր, Ծղուկ, Ճահուկ, Հաբանդ և Շնհեր գավառներին[5], իսկ Վասակ Գաբուռի որդի Գրիգոր Բ Սուփանին մնաց նրա հայրական բուն կալվածքը՝ Գե-

---

[1] Անդ, էջ 138:
[2] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 169:
[3] Անդ, էջ 170-171:
[4] **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 169:
[5] Անդ, էջ 176-177, 197, 298:

ղարքունիք գավառը: Վասակ Իշխանիկը շարունակում է այն քաղաքականությունը, ինչ Վասակ Գաբուռը[1]:

Հայոց պատմության մեջ մոտենում էր մի կարևոր իրադարձություն՝ Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը, որին իրենց ակտիվ մասնակցությունն են ունենում Սյունյաց իշխանները: Ստեփաննոս Օրբելյանը հաղորդում է, որ «յայնմ ժամանակի խորհուրդ ի մէջ առեալ աստուածային իմն տեսչութեամբ Գրիգորի Սուփանայ և Վասակայ Իշխանիկ կոչեցելոյ՝ տէրանցն Սիւնեաց, ընդ Գրիգորի Դերենիկ կոչեցելոյ, որ էր իշխան տանն Արծրունեաց, և ընդ այլ իշխանաց Հայոց, խնդրեն յամիրապետէն Ամիր-Ահմատայ և կացուցանեն զԱշոտ Բագրատունի թագաւոր Հայոց»[2]: Ներկա հաղորդումը ցույց է տալիս, որ Սյունիքում գոյություն ունեն երկու հիմանական իշխանական ճյուղեր, ըստ որում՝ հաղորդման տրամաբանությունը խոսում է այն բանի օգտին, որ, չնայած հայագիտության մեջ գոյություն ունեցող այն կարծիքի, թե գերությունից վերադառնալուց հետո Վասակ Իշխանիկը վերստին ստանձնել էր Սյունյաց գահերեցությունը[3], վերջինը պատկանում էր Գեղարքունիքի ճյուղին, որը գլխավորում էր Գրիգոր Սուփան Բ-ն: Բացի այդ, բերյալ հաղորդումից նաև բխում է, որ Բագրատունիներից բացի Հայոց մեջ այդ ժամանակ հիմնական դերակատարությունը պատկանում էր Սյունյաց և Վասպուրականի իշխանություններին:

Վասակ Իշխանիկը մահացավ Սմբատ Ա-ի թագավորության առաջին տարիներին: Վայոց ձորի Կեչուտ գյուղի հինավուրց եկեղեցու մոտ գտնվող մի խաչքարի արձանագրության մեջ, որը թվագրված է 886 թ., նշվում է, որ «ի թագաւորութեան Վասակա. տր. Բաբգէն որդի Սիւնեաց իշխանին, հայոց թուականութեան որ :ՅԼԵ (իմա՛ 886 թ.-Ա.Ե.): էր, ես Դաւիթ կանգնեցի զխաչս վասն հոգւոյ...յաղաւթս յիշեցէք»[4]: Կարծում ենք, որ սույն տեղեկությունը, թե Վասակը թագավորել է, հավաստի չէ, քանի որ նման իրադարձություն այլ աղբյուրներում հիշատակված չէ, և, բացի այդ, Վասակն այն իշխանների թվում էր, որոնք ջանքեր գործադրեցին Աշոտին Հայոց թագավոր կարգելու հարցում: Մյուս կողմից, Ատրպատականի ամիրաները դեռևս չէին որդեգրել Հայոց տերության տեղական իշխաններին թագադրելու քաղաքականությունը: Արդեն տեսանք, որ Սյունյաց իշխաններն այնքան շրջահայաց էին, որ 908 թ. նույ-

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 138, **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 172:

[2] **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 175:

[3] Տե՛ս Հ. Ութմազյան, նշվ. աշխ., էջ 90:

[4] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմեց Ս.Գ. Բարխուդարյան, Եր., 1967, էջ 21:

նիսկ հրաժարվեցին Յուսուֆ ամիրայի առաջարկած թագից: Բացատրությունը կարող է լինել միայն մեկը: Խաչքարի արձանագրության հեղինակը դրանով պարզապես ցանկացել է մեծարել Սյունյաց իշխանին:

Վասակին հաջորդեց եղբայրը՝ Աշոտը: Նրա իշխանությունը բաժանվեց որդու՝ Փիլիպպեի և եղբոր՝ Աշոտի միջև: Առաջինին բաժին հասան Հաբանդ գավառը և Շնհերը, իսկ երկրորդին՝ մնացած գավառները, այսինքն՝ Բաղքը, Վայոց ձորը, Ծղուկը և Ճահուկը[1]: Ըստ որում, ինչպես տեսանք, Սմբատ Ա-ի աբխազական արշավանքի ժամանակ արդեն Վայոց ձորում ձևավորվում է ինքնուրույն իշխանություն: 903 թ. դրությամբ, ինչպես կարելի է եզրակացնել Թովմա Արծրունու մի հաղորդումից, Վայոց ձորը գտնվում էր Սյունյաց Սմբատ իշխանի տիրույթների կազմում: Պատմիչը տեղեկացնում է, որ 902 թ. կայսիկների ապստամբության հաջորդ տարին Սմբատ (իմա՛ Աշոտ) Սյունին նույնպես ապստամբեց և ամրացավ Վայոց ձորի ամրոցներում, սակայն Սմբատ Ա-ի հետ նրա դեմ արշավանքի դուրս եկած Աշոտ Արծրունին համոզեց Սյունյաց իշխանին վերստին հպատակվել Հայոց տիրակալին[2]: Աշոտը հիշատակվում է որպես Սյունյաց գահերեց[3]:

Ամփոփելով մինչ այս կատարած ուսումնասիրության արդյունքները՝ նշենք, որ փաստորեն Սյունիքում գոյություն ունեին երեք հիմնական իշխանություններ՝ բուն Սյունյաց, Գեղարքունիքի և Վայոց ձորի: Նրանք առանձին զորախմբերով հիշատակվում են Սմբատ Ա-ի արշավանքների ժամանակ: Օրինակ՝ Թուղխի ճակատամարտում սպանվածների թվում էր «Աշոտ Հայկազնեաց Գեղարքունեաց իշխան, որ Սուփանայ որդին ճանաչէր»[4], իսկ Սմբատ Ա-ի աբխազական արշավանքի ժամանակ Անանուն Զրուցագիրը հիշատակում է «Իշխան Վայոձորոյ Ապուշամբ բազում զաւրաւք»[5]:

Վրաց պատմիչ Ստեփան Տբեթցին X դ. Հայաստանի վարչաքաղաքական բաժանումը ներկայացնելիս մասնավորապես Սյունիքում հիշատակում է երեք իշխանություն՝ 18 «ձոր»-երով՝ Վայոց ձորը՝ 4, Գեղարքունիքը՝ 4 և Սյունիքը՝ 10 ձորով[6]: «Ձոր»-ի տակ պետք է հասկանալ Սյունիքում գոյություն ունեցող այդ երեք գլխավոր իշխանությունների

---

[1] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 298:

[2] **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 382:

[3] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 183-184, 223, 229, 236, **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 228

[4] **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 368:

[5] **Անանուն Զրուցագիր**, էջ 189:

[6] Տե՛ս **Ստեփան Տբեթցի,-Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 91:

կազմերում գոյություն ունեցող մանր ժառանգական իշխանությունները[1]:

Գեղարքունիքի իշխանությունն ընդգրկելու էր Սյունիքի Գեղարքունիք գավառի տարածքը և Գեղամա ծովի շրջակա տարածքները[2], Վայոց ձորի իշխանությունը՝ Վայոց ձոր և Ճահուկ գավառների տարածքը, իսկ Սյունյաց իշխանությունը՝ Սյունյաց հարավային գավառները: Վերջինը Սմբատ Ա-ի օրոք բաժանվել էր Վասակ Իշխանիկի եղբայր Աշոտի և որդի Փիլիպպեի միջև:

Կարևորություն է ներկայացնում Անանուն Զրուցագրի հաղորդումը Սմբատ Ա-ի տիրույթների վերաբերյալ: Սյունիքի հատվածում, ըստ պատմիչի՝ Հայոց արքայի տիրույթների մեջ էին մտնում Արևիք և Բաղք գավառները, Վայոց ձորը, Երնջակ ամրոցը և Նախճավանը[3]:

Հ. Ութմազյանն այդ տեղեկության մեջ, ի տարբերություն Լեոյի, որ կարծում էր, թե Սմբատ Ա-ն գրավել է այդ տարածքները[4], այլ իմաստ է տեսնում: Ըստ նրա, այդ հաղորդումը պետք է հասկանալ գերիշխանության հաստատման տեսանկյունից[5]:

Հայ Բագրատունիների արքունի տիրույթների բաժնում ցույց տվեցինք, որ Երնջակ և Արևիք գավառները վերածվել էին արքունի տիրույթների: Այդ կերպ Սմբատ Ա-ն իր ձեռքում էր պահում Դվինից Երասխ գետի ափով՝ Նախճավանով և Գողթնով ընթացող մեծ առևտրական մայրուղին, որ նաև թշնամիների համար հարձակման ճանապարհ էր: Այդ մայրուղու հարևանությամբ գտնվող ամրաշեն Երնջակ ամրոցը վերահսկողություն ուներ մայրուղու վրա և փաստորեն ում ձեռքում այն գտնվեր, նա էլ իր ձեռքում էր պահելու նաև ճանապարհի հսկողությունը:

Ինչ վերաբերում է Սյունիքի Սոդք և Աղահեճք գավառներին, ապա դրանց կանդրադառնանք Խաչենի իշխանության բաժնում, որի կազմի մեջ դրանք մտնում էին խնդրո առարկա ժամանակաշրջանում:

Նշենք նաև, որ Վայոց ձորի իշխանն ընդգրկված էր Կոստանդին Ծիրանածնի այն ցուցակում, որտեղ նշված են այն իշխանները, որոնց նամակներ էին ուղարկվում Բյուզանդիայի արքունիքից[6]:

3.4. Հայոց Արևելից կողմերի իշխանություններ: Խնդրո առարկա

---

[1] Տե՛ս **Հ. Ութմազյան,** Սյունիքը IX-X դարերում, էջ 26-27:
[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 202:
[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 159:
[4] Տե՛ս **Լեո,** Հայոց պատմություն, հ. Բ, էջ 531-537:
[5] Տե՛ս **Հ. Ութմազյան,** նշվ. աշխ., էջ 95:
[6] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 151:

շրջանում Հայոց Արևելից կողմերում ձևավորված վարչաքաղաքական իրավիճակը, չնայած Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհների շուրջ տիրող և հիմնականում քաղաքական ենթատեքստ ունեցող վեճերին, պատկանում է հայագիտության մեջ դեռևս համակողմանի ուսումնասիրության չենթարկված հիմնահարցերի շարքին: Տարբեր ուսումնասիրողներ այս կամ այն չափով անդրադարձել են այդ կարևոր խնդրին: Հատկապես նշելի է Բ. Ուլուբաբյանի անունը, որ մի շարք աշխատություններ է նվիրել Հայոց Արևելից կողմերի պատմությանը[1]: Նրա՝ Խաչենի X-XVI դդ. նվիրված ուսումնասիրությունը մի կարևոր փորձ էր, ի թիվս այլ հարցերի, խնդրո առարկա ժամանակաշրջանում Հայոց Արևելից կողմերում տիրող վարչաքաղաքական իրադրությունը բացահայտելու: Հիմնական նպատակակետ ունենալով Խաչենի իշխանության պատմության և պատմական աշխարհագրության ուսումնասիրությունը, որի քննությունը՝ ելնելով հետազոտության շահերից, նա սկսել է IX դ. սկզբից, գիտնականն անդրադարձել է նաև Եսայի Աբու Մուսեի հիմնած իշխանության (Դիզակի, Քթիշի կամ Գոռոզի իշխանություն) պատմությանը: Հարգանքի տուրք մատուցելով հեղինակի կատարած ողջ աշխատանքին, սակայն, հարկ ենք համարում նշել, որ հատկապես Գոռոզի իշխանության վերաբերյալ նրա ուսումնասիրությունը ոչ թե լուծել է խնդիրը, այլ ստեղծել է որոշ թերըմբռնում:

Հայ Բագրատունիների տերության կազմում Հայոց Արևելից կողմերի իշխանությունների ընդգրկած տարածքների քննության շահերը պահանջում են մանրամասնորեն անդրադառնալու IX դ. երկրորդ քառորդում Հայոց Արևելից կողմերում տեղի ունեցած իրադարձություններին, որոնց հետևանքով աստիճանաբար կազմավորվեցին և հզորացան Առանշահիկների տոհմի երկու՝ Սահլ Սմբատյանի և Եսայի Աբու Մուսեի իշխանությունները: Մովսես Դասխուրանցին 830 թ. վերաբերող մի հաղորդման մեջ պատմում է, որ «Եւ դարձեալ ամպստամբքն ի Բաբանայ դիմադարձ պատերազմաւ ամրացան ի բերդն Գորոզու և կալեալ զգաւառսն զամս ԺԲ, որք են զայսոքիկ՝ Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մխանք և Տրի գաւառ:...Եւ Յիսայի անուանեալն Աբու Մուսէ՝ այր խաղաղութեան...ըմբռնեալ զնոյն գաւառսն՝ իշխանացաւ ամենայնի»[2]: Այնուհետև, պատմիչը տեղեկացնում է, թե 840 թ. «եկին հասին բաղականացիքն և արարին վնաս Սիսան, Տրւոյ և Ամարաս գաւառաց: Եւ ել Եսայի անուանեալն Աբու

---

[1] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության, նույնի՝ Խաչենի իշխանությունը X-XVI դարերում և այլն:

[2] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 327:

Մուսէ ի վերայ նոցա և կոտորեաց զնոսա»[1]: Այս հաղորդումներում հիշատակված որոշ գավառանուններ բացատրության կարիք ունեն: Սիսականն Արցախի Սիսական-ի-Կոտակ գավառն է, Հաբանդը՝ դատելով Սյունյաց իշխանության վերաբերյալ մեր քննությունից, ըստ որի՝ Սյունիքի Հաբանդ գավառը մտնում էր Սյունյաց իշխանության մեջ, համապատասխանում է Արցախի Մյուս Հաբանդ գավառին: Պետք է նշել, որ Ամարասի վանքը գտնվում էր Մյուս Հաբանդ գավառում, ուստի՝ Ամարաս անունով գավառը պետք է նույնանա Մյուս Հաբանդ գավառի այն հատվածին, որ տարածվում էր Ամարասի վանքի շուրջը: Պատմիչի երկրորդ հիշատակության մեջ նշված Սիսանը նույնպես նույնական է Սիսական-ի-Կոտակ գավառին: Ինչ վերաբերում է Վերին Վայկունիքին, ապա այն՝ դատելով այն իրողությունից, որ Վայկունիք գավառի հարավում գտնվող Բաղանիք Արքունականը պատկանում էին Սահլ Սմբատյանին և նրա ժառանգներին[2], պետք է նույնանա Վայկունիք գավառի հյուսիսարևելյան հատվածին:

Քարտեզագրելով պատմիչի առաջին հաղորդման մեջ նշված Եսայի Աբու Մուսեին պատկանող գավառները[3]՝ քանի որ նա «ըմբռնեալ զնոյն գաւառսն՝ իշխանացաւ ամենայնի», տեսնում ենք, որ նրան պատկանող Վերին Վայկունիք և Բերձոր գավառները բաժանված են Հայոց Արևելից կողմերի հարավային մասում գտնվող և դարձյալ նրան պատկանող մյուս գավառներից Մեծիրանք, Հարճլանք և Պիանք գավառներով, որոնք մաս էին կազմում, ինչպես կտեսնենք, Սահլ Սմբատյանի տիրույթների: Դատելով Սյունիքի վերաբերյալ մեր ուսումնասիրությունից՝ Սյունյաց Աղահեճք գավառը, որ զբաղեցնում էր Աղավնո գետի վերին հոսանքի ավազանը, դուրս էր մնացել Սյունյաց իշխանների տիրույթներից: Մեր համոզմամբ, այն ևս պետք է մաս կազմեր

---

[1] Անդ, էջ 331:

[2] Անդ, էջ 340:

[3] Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհների գավառների տեղադրության հարցում մենք հենվել ենք Բ. Հարությունյանի հետազոտությունների վրա («Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջ»,-«ՊԲՀ», 1994, թիվ 1-2, էջ 256-266, «Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թվականներին»,-«ԲԵՀ», 1976, թիվ 2, էջ 77-95, «Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի»,-«Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան», Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2007, էջ 20-43 և այլն): Խնդրով զբաղվել են նաև Ղ. Ալիշանը («Ուտիք», «Արցախ»,-«Բազմավէպ», 1988-1989, § 1-166, տե՛ս նաև «Արցախ», Եր., 1993), **Ս. Երեմյանը** («Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», Եր., 1963), **Ա. Հակոբյանը** («Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք)», Վիեննա-Երեւան, 2009, «Կենտրոնական Արցախի Հարջլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնն ըստ «Աշխարհացոյց»-ի»,-«Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան», էջ 44-52) և այլք:

Եսայի Աբու Մուսեի տիրույթների, որով էլ վերջինիս պատկանող հյուսիսային և հարավային գավառները միանում էին իրար: Բացի այդ, ամենայն հավանականությամբ, Կուր և Երասխ գետերի միախառնման վայրի մերձակայքում՝ Տռի գավառից հարավ գտնվող Ռոտ-Պայակ (Ռոտ-Պացեան) գավառը, որը՝ դատելով վերոհիշյալ քարտեզագրումից, հայտնվում էր Եսայի Աբու Մուսեի տիրույթներով շրջապատված վիճակում, ևս պետք է մտներ այդ իշխանի տիրույթների մեջ: Այդ է ցույց տալիս նաև այն իրողությունը, որ արաբ հեղինակները հաղորդում են, թե այդ գավառում գտնվող Բայլական քաղաքը՝ համանուն գավառակով, նույնպես պատկանում էր Եսայի Աբու Մուսեին[1]: Թովմա Արծրունին ընդհանրապես հաղորդում է, թե Բուղայի արշավանքի ժամանակ «տիրէր...մեծի կողմանն Աղուանից Ապումուսէ ոմն»[2]:

Այսպիսով՝ Եսայի Աբու Մուսեի տիրույթները ընդգրկում էին Հայոց Արևելից կողմերի ամբողջ հարավային հատվածը, ինչպես նաև որոշ կենտրոնական գավառներ[3]:

Անդրադառնալով Սահլ Սմբատյանի իշխանության պատմաաշխարհագրական ուսումնասիրությանը՝ նշենք, որ ըստ Մովսես Դասխուրանցու՝ Միհրանյանների վերջին շառավիղ Սպրամը, որն ապաստանել էր Խաչենի բերդում, ամուսնացել էր Մեծիրանք գավառի Խաչեն և Շիկաքար բերդերի տեր Սահլ Սմբատյանի որդի Ատրներսեհի հետ, որ, ըստ Մովսես Դասխուրանցու, «էր ի տոհմէն Հայկայ՝ տէր Սիւնեաց, որոյ բռնազբօսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ»[4]: Այնուհետև պատմիչն ավելացնում է, որ Սահլ Սմբատյանի որդի Ատրներսեհը «շինէ զբերդն Հանդու, և զապարանս իւր եդեալ ի գիւղն, որ կոչի Վայ(կ)ունիք, ուր և բաղանիք արքունական են»[5]: Մովսես Դասխուրանցին տեղեկացնում է նաև, որ Սպրամը «շինէ զՆորավանս ի գաւառին Սոդէից»[6], իսկ նրա և Ատրներսեհի որդի Գրիգորը «շինէ զՀաւախաղացին բերդն, և յայն կողմն ձգէ զձեռն իւր իշխանութեանն»[7]:

Սահլ Սմբատյանին և նրա ժառանգներին պատկանող Հանդաբերդը գտնվում էր Վայկունիք գավառում, Խաչենը՝ Մեծիրանք գավառում, իսկ Հավախաղաց բերդը՝ Հարճլանք գավառում: Ինչպես տեսանք,

---

[1] Տե՛ս طبري, VI,էջ 47-48, ابن الاثير, էջ 291-292:
[2] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 276:
[3] **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:
[4] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 340:
[5] Անդ, էջ 340:
[6] Անդ:
[7] Անդ, էջ 340-341:

Սահլ Սմբատյանին էր պատկանում նաև Գեղամա կոչված գավառը, որ նույնանում է Սյունիքի Սոդք գավառին[1]: Սրանից էլ բխում է Սահլ Սմբատյանին պատմիչի կողմից տրվող «տէր Սիւնեաց» անվանումը:

Որոշ ուսումնասիրողներ Սահլ Սմբատյանի հիմնած իշխանության մեջ ներառում են միայն Սյունիքի Սոդք և Արցախի Վայկունիք, Պիանք, Հարճլանք, Մեծիրանք և Մեծ Կվանք գավառները, ինչպես նաև իրականում Եսայի Աբու Մուսեի հիմնած իշխանության մեջ մտնող Բերձոր և Աղահեճք գավառները[2]: Բ. Ուլուբաբյանն այն կարծիքն է հայտնում, թե Խաչենի իշխանության մեջ էին մտնում Արցախի Մյուս Հաբադ գավառի մեծագույն մասը, Մեծիրանք, Մեծ Կվանք, Քուստ-ի-Փառնես, Բերձոր, Վայկունիք գավառները, ինչպես նաև առանձին գավառամասեր Ուտիքից և Սյունիքից[3]:

Քարտեզագրելով Սահլ Սմբատյանի և նրա հետնորդների տիրույթները՝ տեսնում ենք, որ նրան պատկանող Սոդք և Վայկունիք գավառները Մեծիրանք և Հարճլանք գավառներից բաժանված էին Քուստ-ի-Փառնես, Կողթ և Մեծ Կվանք գավառներով, որոնք, ամենայն հավանականությամբ, ևս մտնելու էին Սահլ Սմբատյանի տիրույթների մեջ: Նրա տիրույթների մաս էր կազմելու նաև Մեծիրանքի և Հարճլանքի միջև գտնվող Պիանք գավառը, որտեղ՝ նախկին Աղդամ քաղաքի մոտակայքում, Սահլ Սմբատյանի թոռը՝ Գրիգորը, արձանագրություն է թողել[4]: Սահլ Սմբատյանի իշխանության սահմանների մեջ էին գտնվելու նաև Ուտիքի հյուսիսային գավառները՝ Տուչ Կատակը, Գարդմանը, որոնք, ինչպես կտեսնենք, հետագայում պատկանում էին Ատրներսեհի որդի Գրիգորի որդի Սևադա կոչվող Սահակին, ինչպես նաև Շակաշեն և Ուտի Առանձնակ գավառների որոշ հատվածներ: Արդեն ցույց ենք տվել, որ Աղուէ գավառը մտնում էր արքունի տիրույթների մեջ:

Դատելով մինչ այս կատարված քննությունից՝ արձանագրենք, որ Հայոց Արևելից կողմերում IX դ. 30-ական թվականներից սկսած հզորանում են Առանշահիկների տոհմի երկու՝ Եսայի Աբու Մուսեի և Սահլ Սմբատյանի ճյուղերը, որոնք տիրում էին Արցախ և Ուտիք աշխարհների մեծագույն մասին:

837 թ. Սահլ Սմբատյանը գերեց Բաբեկին ու հանձնեց արաբ զորավար Ափշինին, որի համար ստացավ մեծ գումար, Կուր գետի ձախ

---

[1] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 516:

[2] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[3] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 31:

[4] Անդ, էջ 77:

ափին գտնվող Շաքե քաղաքը և գերագույն իշխանապետություն Հայոց Արևելից կողմերի ու Աղվանքի վրա[1]: Նա իր իշխանանիստը Խաչենից տեղափոխեց Շաքե, իսկ Խաչենում իշխանացավ նրա որդի Ատրներսեհը: Այդ իսկ պատճառով Սահլ Սմբատյանի կենդանության օրոք որպես Խաչենի իշխան է հիշատակվում Ատրներսեհը[2]: Սահլ Սմբատյանի գերագույն իշխանությունը Հայոց Արևելից կողմերի ու Աղվանք կոչված երկրամասի վրա պահպանեցին Հովհաննեսն ու Համամը, որոնց մասին կխոսենք: Համամը հանդիսանում էր Հայոց տերության «Արևելից մեծ իշխան»[3]:

Ըստ Մովսես Դասխուրանցու՝ 842 թ. Խազարաց Փատգոս խաքանը հարձակվեց Հայոց Արևելից կողմերի վրա, սակայն անհաջողության մատնվեց, որից հետո արշավեց նրա որդին, ավերեց երկիրն ու անցավ գնաց Բաղդադ: Ստանալով խալիֆայի հովանավորությունը՝ նա վերադարձավ և 846 թ. Շակաշեն գավառում կառուցեց Գանձակ քաղաքը. «Եւ յետ այսորիկ արշաւանս առնէր յաշխարհն Սիւնեաց և գերի վարեալ զԲաղացն սահմանս՝ գայ իջանէ յԱղահէջ գաւառ՝ յաւան մի՝ Արքուգետ կոչեցեալ»[4]: Այսպիսով՝ Փատգոսի որդին, որ հաստատվել էր Շակաշեն գավառում, պայքար սկսեց, դատելով նրա ասպատակած գավառներից, թե՛ Եսայի Աբու Մուսեի, թե՛ Սահլ Սմբատյանի ժառանգների և թե՛ Սյունիքի իշխանների դեմ, սակայն պարտություն կրեց[5]: Այդ ժամանակներից Գանձակում հաստատված օտար տարրը աստիճանաբար սկսեց ինքնուրույնություն ձեռք բերել:

Նման իրավիճակում, ինչպես կտեսնենք, հայտնվել էր նաև Պարտավը՝ շրջակա Ուտի Առանձնակ գավառով, սակայն Սմբատ Ա-ն նվաճել և իր տերությանն էր կցել այդ շրջանը[6]:

Նախքան հետագա քննությանն անցնելը՝ կարևոր ենք համարում անդրադառնալ մի կարևոր հարցի: Ադրբեջանցի պատմաբան Զ. Բունիաթովը փորձում է ապացուցել, թե Սահլին պատկանող Շաքե քաղաքը ոչ մի կապ չունի Կուր գետի ձախափնյակի հետ, որտեղ գտնվում է Շաքե-Նուխին: Որպես ապացույց իր տեսակետի նա դիտավորյալ խեղաթյուրմամբ սկզբում մեջ է բերում ադ-Դինավարի պատմիչի մի տեղեկությունը, թե իբր 837 թ. Սմբատի որդի Սահլ իշխանը տիրում էր

---

[1] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 330:
[2] Տե՛ս طبري, VI, էջ 48:
[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 174:
[4] Տե՛ս **Մովսես Կաղանկատվանցի**, էջ 331:
[5] Անդ, էջ 331-332:
[6] Տե՛ս **Անանուն Ձրուցագիր**, էջ 159, 171 և այլն:

Երասխ գետի առափնյա շրջաններին[1]: Այս փաստարկն՝ ինքնըստինքյան, նշված նպատակի իրականացման համար հիմք ծառայել չի կարող: Նրա վկայակոչած մյուս հեղինակը Թաբարին է, որը պատմելով Բադդ ամրոցի անկումից հետո Խուրամյան շարժման առաջնորդ Բաբեկի փախուստի մասին, հաղորդում է, որ նա փորձեց ապաստանել Բյուզանդիայում[2], դեպի ուր ճանապարհը, ըստ Զ. Բունիաթովի, անցնում էր Սահլի տիրույթներով՝ Շաքիով, իսկ այնուհետև Սյունիքով[3]: Զ. Բունիաթովն ընդհանրապես մեջ է բերում արաբ պատմիչների տեղեկությունները (հիմնականում կապված Սահլի կողմից Բաբեկի ձերբակալման հետ) այն մասին, թե իբր Երասխի առափնյա շրջանները պատկանում էին Սահլին[4]: Պարզ է, որ նա փորձում է ցույց տալ, թե Երասխ գետի առափնյա հատվածին տիրող Սահլ չէր կարող կապ ունենալ Շաքե-Նուխիի հետ:

Մինչդեռ ադ-Դինավարիի երկում կարդում ենք, որ Բաբեկը «փախավ Հայաստան, անցնելով Արաքս գետը և ուղղվեց դեպի Ռում: Երբ նա անցավ Արաքս գետը, նրա մոտ եկավ նահանգի կառավարիչ Սմբատի որդի Սահլը» և այլն[5]: Ինչպես տեսնում ենք, այս հաղորդումը բոլորովին էլ ցույց չի տալիս, թե Սահլ Սմբատյանը տիրում էր Երասխ գետի ափամերձ գավառներին, այլ հիշատակված է որպես «նահանգի կառավարիչ», որը, մեր համոզմամբ, ոչ այլ ինչ է, եթե ոչ Սահլ Սմբատյանի՝ Առանշահիկների մեջ գերագահության հիշատակությունը:

Վերոհիշյալ քննությունը ցույց տվեց, որ Երասխ գետի առափնյա Արցախի և Ուտիքի գավառները պատկանում էին ոչ թե Սահլ Սմբատյանին, այլ Եսայի Աբու Մուսեին: Այդ իրողությունը արձանագրում են նաև ավելի ուշ շրջանի հեղինակները: Մասուդին, օրինակ՝ հաղորդում է, որ «Ար-Ռասը (իմա՛ Երասխ գետ-Ա.Ե.) հոսում է ալ-Բադդայն երկրի[6],

---

[1] Տե՛ս Ç. Áóíèÿò îâ, նշվ. աշխ., էջ 187:

[2] Տե՛ս طبري, III, էջ 317-332:

[3] Զ. Բունիաթովը նշում է, որ Շաքի գյուղում ինքն ամրոցի պարիսպներ է «հայտնաբերել» (տե՛ս **Ç. Áóíèÿò îâ**, նշվ. աշխ., էջ 187): Փաստորեն, նա նույնիսկ տեղյակ չէ, որ իր նշած Շաքին գտնվում է Սյունիքում:

[4] Անդ, էջ 186-188:

[5] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի նասին», 16, «Արաբական աղբյուրներ», Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 2005, էջ 218:

[6] Ալ-Բադդայն կամ Բադդ երկիրը գտնվում էր Ատրպատականի կազմում և Արմինիայից բաժանվում էր Երասխ գետով, իսկ նրա բերդերից մեկը, որի անունը չի պահպանվել, Երասխի ափին էր (տե՛ս **Jacut**, I, էջ 529-530, տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 114-115):

որն Ադարբայջանում [գտնվող] Խուրամյան Բաբաքի[1] հայրենիքն է, և Աբի Մուսա լեռան[2] միջև, որն Առան երկրի[3] մասերից է»[4]:

Սակայն, հարց է առաջանում: Եթե Երասխի առափնյա գավառները պատկանում էին Եսայի Աբու Մուսեին, ապա ինչպե՞ս Բաբեկին ձերբակալեց ոչ թե նա, այլ Սահլ Սմբատյանը: Զ. Բունիաթովի այն պնդումը, թե իբր Բաբեկի փախուստի երթուղին անցնում էր Սյունիքով, քննություն չի բռնում երկու փաստի պատճառով: Առաջինն այն է, որ Բաբեկին ձերբակալողը Խաչենի իշխանն էր, մատնանշում է Բաբեկի փախուստի Արցախյան երթուղին: Մյուս կողմից, Բաբեկը, որը հատկապես մեծ վնասներ էր հասցրել Սյունիքին[5], պարտությունից հետո դժվար թե համարձակվեր անցնել Սյունիքով, որտեղ անմիջապես հաշվեհարդար կտեսնեին նրա հետ: Մեր համոզմամբ, Առանշահիկների մեջ ավագությունը պատկանում էր Սահլ Սմբատյանին, որի պատճառով Բաբեկին գերելու պատիվն էլ պատկանելու էր նրան: Հնարավոր է նաև, որ Բաբեկին ձերբակալելու գործողությունն իրականացրել են Սահլ Սմբատյանն ու Եսայի Աբու Մուսեն համատեղ, որի արդյունքում, ինչպես հաղորդում են արաբական աղբյուրները, Բաբեկի հետ ձերբակալված նրա եղբորը տեղափոխեցին Եսայի Աբու Մուսեի ամրոցը, մինչդեռ Բաբեկը մնաց Սահլ Սմբատյանի հետ[6]:

Առանշահիկների հզորացումը ժամանակավորապես ընդհատվեց Բուղայի արշավանքով: Ըստ Թովմա Արծրունու՝ Բուղայի զորքը հատկապես հզոր դիմադրության հանդիպեց Արցախում, որտեղ Քթիշ բերդում ամրացած Եսայի Աբու Մուսեն հերոսական կռիվներ մղեց Բուղայի զորամասերի դեմ[7]: Բուղան խաբեությամբ և այլ միջոցներով կարողացավ գերել նրան, ինչպես նաև Հայոց Արևելից կողմերի տերերից Խաչենի կամ «Աղվանից իշխան» Ատրներսեհին և վերջինիս հայր՝ Շաքեի իշխան Սահլ Սմբատյանին[8]:

---

[1] Իմա՛ Խուրամյան շարժման առաջնորդ Բաբեկ: Սամառայում 838 թ. նա տանջամահ արվեց (տե՛ս **Babak, D. Sourdel,** տե՛ս The Encyclopaedia of Islam, CD-ROM edition, v.1.0 © 1999 Koninklijke Brill NV, Leiden, The Netherlands, I:844a):

[2] Աբի Մուսա լեռ ասելով՝ Մասուդին նկատի ունի Քթիշ լեռը, որի գագաթին գտնվող համանուն բերդում ամրացած Եսայի Աբու Մուսե Առանշահիկ իշխանը հերոսական կռիվներ մղեց Բուղայի զորամասերի դեմ (**Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 278, 290):

[3] Այս տեղանունը վերաբերում է Մեծ Հայքի երկու աշխարհներին՝ Արցախին և Ուտիքին (տե՛ս **Jacut**, I, էջ 183-184, **Ibn Khordadbeh**, էջ 121):

[4] Տե՛ս مسعودي, I, էջ 206:

[5] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 326-328:

[6] Տե՛ս طبري, VI, էջ 47-48, ابن الاثير, V, էջ 291-292:

[7] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 278, 290:

[8] Անդ, էջ 296-298:

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Բուղայի կողմից գերեվարվել էին նաև Հայոց Արևելից կողմերի տերերից Գարդմանի իշխան Ներսեհ Կտրիճը, Սևորդյաց իշխան Ստեփաննոս Կոնը, Խաչենի իշխան Ատրներսեհի և Եսայի Աբու Մուսեի ընտանիքները, ինչպես նաև «այլ ևս տեարք և իշխանք աշխարհին Աղուանից»[1]: Խալիֆան նրանցից պահանջեց ընդունել մահմեդականություն, և՝ ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, բոլորը՝ բացի Ստեփաննոս Կոնից, կատարեցին այդ պահանջը[2]:

Ինչպես տեսանք, Ատրներսեհի որդի Գրիգորը «շինէ զՀաւախաղացին բերդն, և յայն կողմն ձգէ զձեռն իւր իշխանութեանն»: Բ. Ուլուբաբյանը՝ հետևելով Ա. Կրիմսկուն[3], «յայն կողմ»-ը համարում է Կուրի ձախափնյակը, քանի որ պատմող հեղինակը Կուրի աջափնյակից է[4]: Կուրի ձախափնյակին Առանշահիկները տիրել էին դեռևս Սահլ Սմբատյանի օրոք: Մեր կարծիքով, «յայն կողմ»-ը՝ դատելով Մովսես Դասխուրանցու տեքստի տրամաբանությունից, պետք է հասկանալ որպես «Հավախաղաց բերդից այն կողմ»՝ ի նկատի ունենալով դեպի Պարտավ ընկած շրջանները, ինչպես նաև՝ դատելով բնաշխարհագրական պայմաններից, Ուտիքի Առան-ռոտ գավառը, որ տարածվում էր Գրիգորին պատկանող Պիանք և Մեծիրանք գավառներից դեպի արևելք՝ մինչև Կուր գետ:

Չնայած Եսայի Աբու Մուսեի գերեվարությանը, նրա իշխանությունը, ամենայն հավանականությամբ, ժառանգել էր նրա որդի Մովսեսը: Այդ մասին է վկայում Եսայի Աբու Մուսեի անունը, որ կնշանակի Մովսեսի հայր: Ըստ որում, չնայած սկզբնաղբյուրները լռում են Եսայու որդի Մովսես-Մուսեի մասին, սակայն այն իրողությունը, որ Եսայու նման հանրահայտ հերոսը գրեթե բացառաբար հիշատակվում է որպես Մովսես-Մուսեի հայր, ցույց է տալիս, որ վերջինս ևս հայտնի և ծանրակշիռ ռազմաքաղաքական գործիչ է եղել: Գտչա վանքի գերեզմանատանը պահպանված մի արձանագրությունից տեղեկանում ենք Եսայի Աբու Մուսեի այլ շառավիղների մասին, որոնք իշխում էին Հայոց Արևելից կողմերի հարավային հատվածում: Դրանք են 1000 թ.-ով թվագրվող արձանագրության մեջ որպես թագավոր հիշատակվող Գագիկը և նրա

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դերասխանակերտցի**, էջ 128-130: Տե՛ս նաև **Վարդան վարդապետ**, էջ 81:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 132:

[3] Տե՛ս **À. Êõûìñêèé**, նշվ. աշխ., էջ 375:

[4] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 75:

քույր Սոփին՝ որպես Մուսե-Մովսեսի որդի և դուստր[1]: Իբն Հաուկալը հիշատակում է մի ոմն Վաչագանի (Վաշական), որը նույնպես Մուսեի (Մուսա) որդին էր ու Գոռոզ ամրոցի (Ջուրուզ) տերը[2]: Վերջինիս հետ միևնույն ժամանակագրական շրջանակում արաբ պատմիչը հիշատակում է նաև Խաչենի (Խաջին) տեր Սենեքերիմին (Սանհարիբ)[3]: Ըստ Անանիա կաթողիկոսի 958 թ. վերաբերող մի հիշատակության՝ Գոռոզի տեր Վաչագանը Աղվանից թագավոր Իշխանակի և Խաչենի Գրիգոր իշխանի որդի Սենեքերիմի ժամանակակիցն էր[4]: Ինչպես տեսնում ենք, Իբն Հաուկալի և Անանիա կաթողիկոսի տեղեկությունները հաստատում են միմյանց: Այսինքն՝ Վաչագանը Եսայի Աբու Մուսեի սերունդներից էր՝ Մովսես իշխանի որդին: Վաչագանի հանդես գալու ժամանակաշրջանը ճշտելու նպատակով հարկ է ճշգրտել նաև Իշխանակի թագավորելու շրջանը: Անդրադառնալով Իշխանակի թագավորության ժամանակաշրջանին՝ Բ. Ուլուբաբյանը նշում է, թե իբր ըստ Մասուդիի՝ նրա հայրը և նախորդը՝ Ատրներսեհը իշխում էր Աղվանից թագավորությունում 956 թ. դրությամբ[5]: Հեղինակն անտեղյակ է եղել մի կարևոր իրողության: Մասուդին իր երկասիրությունը գրել է 943 թ., վերանայել 947 թ. և վերամշակել 956 թ.: Մեզ է հասել միայն 947 թ. վերանայված տարբերակը[6]: Այստեղից էլ բխում է այն իրողությունը, որ Ատրներսեհի մասին Մասուդիի հիշատակությունը կարող է վերաբերել 943 թ.: Վախուշտ Բագրատիոնի մի հիշատակության համաձայն՝ Իշխանակը «Աղվանից» թագավոր էր դարձել Ծանարաց Փադլա քորեպիսկոպոսի մահվանից քիչ առաջ, իսկ Փադլան մահացել էր 929 թ.[7]:

Վերոհիշյալ քննությունը ցույց է տալիս, որ Գոռոզի իշխան Վաչագանը պետք է իշխեր X դ. կեսերին, որը ժամանակագրական առումով կեսդարյա անջրպետ է առաջացնում նրա և նույնպես Մուսեի ժառանգներ հիշատակվող Գագիկ թագավորի և նրա քույր Սոփիի միջև: Պետք է եզրակացնել, որ սխալվում է Բ. Ուլուբաբյանը, երբ Վաչագանին համա-

---

[1] Տե՛ս **Ս. Բարխուդարյան**, Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում, էջ 55-58:

[2] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 354:

[3] Անդ, էջ 355:

[4] Տե՛ս Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս լեալ իցէ ծեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն,-«Արարատ», 1897 (հրատ. Գ. Տէր-Մկրտչեան), էջ 143-144:

[5] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 84:

[6] Տե՛ս **ал-Мас'уди**, Золотые сопи и россыпи самоцветов, перев. и ком. Д.В. Микульского, М., 2002, էջ 30:

[7] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 127:

րում է Գագիկի և Սոփիի եղբայրը[1]: Հենց այս սխալի պատճառով է, որ նա, չնայած ի սկզբանե ընդգծում է, թե «մեր խնդրից դուրս է Դիազակի ճյուղի (իմա՛ Առանշահիկների-Ա.Ե.) հետագա ընթացքի քննությունը»[2], քննադատության է ենթարկում Ն. Ադոնցի և Ս. Բարխուդարյանի կողմից մեկ այլ Մովսեսի և Եսայու՝ Եսայի Աբու Մուսեի տոհմացանկի մեջ մտցնելու մոտեցումը[3]: Մենք ևս պետք է նշենք, որ Եսայի Աբու Մուսեի տոհմածառը դուրս է մեր քննության շրջանակներից, սակայն հայ պատմագրության մեջ այդ հարցի հետ կապված ողջ խառնաշփոթը ստիպում է մեզ, թեկուզ համառոտ, անդրադառնալու այդ խնդրին: Բ. Ուլուբաբյանը Եսայի Աբու Մուսեի գերեվարության թվականը ճիշտ կերպով համարում է 855 թ.: Այդքանից հետո նա 855-1000 թթ.՝ այսինքն՝ մոտ մեկուկեսդարյա ժամանակահատվածում առանց երկմտելու տեղադրում է Եսայի Աբու Մուսեի միայն երկու սերունդ՝ նրա որդի Մովսեսին և իբր թե վերջինիս ժառանգներ հանդիսացող Վաչագանին, Գագիկին ու Սոփիին: Հասկանալի է, որ հենց նշված պատճառով էլ նրա կողմից քննադատված հեղինակները Քթիշի գերեվարված իշխանի տոհմածառի մեջ փորձել են ներմուծել այլ անուններ: Ս. Բարխուդարյանն ուղղակի նշում է, որ մեկուկեսդարյա այդ բացը լրացնելուն օգնում է Ստեփաննոս Օրբելյանի կողմից 905-906 թթ. Տաթևի վանքի մայր տաճարի օծման ներկաների և կատարված նվիրատվությունների վավերագիրը ստորագրողների մեջ Աղվանքը ներկայացնող Գրիգոր, Եսայի և Ատրներսեհ իշխանների հիշատակությունը[4]: Նա այն ճիշտ եզրակացությանն է գալիս, որ Ատրներսեհը «Աղվանից» թագավոր Համամի որդին և հաջորդն էր, իսկ Եսային՝ Եսայի Աբու Մուսեի թոռը[5]: Զարգացնելով ուսումնասիրողի տեսակետը՝ նշենք, որ Գրիգորն էլ, ամենայն հավանականությամբ, Սահլ Սմբատյանի թոռն էր՝ Ատրներսեհի որդին: Եթե ճիշտ է մեր մտահանգումը, ապա այն մեկ անգամ ևս ապացուցում է, որ սխալվում են այն ուսումնասիրողները, որոնք, Գրիգորին նույնացնում են «Աղվանից» Համամ թագավորի հետ[6]: Այն, որ խոսքն այստեղ Սահլ Սմբատյանի թոռ Գրիգորի մասին է, ցույց է տալիս Անանիա կաթողիկոսի այն հաղորդումը, թե Հայոց Արևելից կողմերի հոգևոր և աշխարհիկ տերերի 958 թ. ժողովին մասնակցում էր «Սենեքերիմ՝ որդի Գրիգորի Խաչեան

---

[1] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 63:
[2] Անդ, էջ 64:
[3] Անդ, էջ 63-64, ծան. 43-44:
[4] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 234:
[5] Տե՛ս **Ս. Բարխուդարյան**, Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում, էջ 57:
[6] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 75-77:

իշխանի»[1]: Ս. Բարխուդարյանը մեզ մատուցում է նաև Եսայի Աբու Մուսեի տոհմածառը, որն ակնհայտորեն թերի է: Խնդիրն այն է, որ 905-906 թթ. հիշատակված Եսայու և 997-1000 թթ. հիշատակվող Գագիկի և Սոփիի միջև որևէ անուն չկա[2], որն անտրամաբանական է: Մեր համոզմամբ, այդ ցուցակում 906-997 թթ. միջև հարկ է ներմուծել առնվազն երեք անձի՝ Գոռոզի իշխան Վաչագանին, Գագիկի ու Սոփիի հորը՝ Մովսես-Մուսեին, ինչպես նաև Անանուն Զրուցագրի կողմից Սմբատ Ա-ի աբխազական արշավանքի մասնակիցների թվում հիշատակվող Գոռոզի իշխան Վասակին[3]: Սմբատ Ա-ի աբխազական արշավանքը տեղի է ունեցել 906 թ.՝ Տաթևի վանքի մայր տաճարի օծումից և Վասպուրականի Աշոտ իշխանի մահվանից (905 թ.) անմիջապես հետո: Այստեղից էլ բխում է, որ 906 թ. Գոռոզի Եսայի իշխանին փոխարինել է Վասակը: Հաշվի առնելով վերոհիշյալը՝ կստանանք հետևյալ տոհմածառը՝ Եսայի Աբու Մուսե Ա (գերեվարված 855 թ.)-Մուսե (Մովսես) Ա-Եսայի Բ (հիշատակված 905-906 թթ.)-Վասակ (905/906 թ.-ից)-Վաչագան (հիշատակված 958 թ.)-Մուսե (Մովսես) Բ-Գագիկ, Սոփի (հիշատակված 997-1000 թթ.): Ընդ որում՝ Մովսես Ա-ն Եսայի Աբու Մուսեի որդին էր, Եսայի Բ-ն՝ Մովսես Ա-ի որդին, Վասակը՝ Մովսես Ա-ի որդին և Եսայի Բ-ի եղբայրը, Վաչագանը՝ Մովսես Ա-ի որդին և Վասակի ու Եսայի Բ-ի եղբայրը, Մովսես Բ-ն՝ Վաչագանի որդին և Գագիկն ու Սոփին՝ Մովսես Բ-ի զավակները:

Ինչ վերաբերում է Խաչենի իշխանությանը, ապա Սահլ Սմբատյանի և նրա որդի Ատրներսեհի գերեվարությունից հետո այնտեղ իշխում էր Գրիգորը՝ Սահլի որդի Ատրներսեհի որդին:

Ստեփաննոս Օրբելյանի կողմից բերված 905-906 թթ. վերաբերող հիշատակությունը լույս է սփռում նաև Հայոց Արևելից կողմերում տիրող վարչաքաղաքական իրավիճակի վրա: Պարզվում է, որ այն վարչաքաղաքական իրավիճակը, որը տիրում էր Եսայի Աբու Մուսեի և Սահլ Սմբատյանի օրոք, պահպանվել էր նաև 905-906 թթ. դրությամբ: Խաչենում իշխում էր Գրիգորը, իսկ Գոռոզում՝ Եսային: Իսկ Աղվանք կոչված երկրամասում արդեն իշխում էր Ատրներսեհը, չնայած նրան պատմիչի կողմից տրվող «իշխան» տիտղոսից կարելի է բխեցնել նաև, որ դեռ կենդանի էր նրա հայր Համամը, որը թագ էր ստացել Սմբատ Ա-ից:

Այսինքն՝ Հայ Բագրատունիների տերության ձևավորման և կայացման շրջանում Հայոց Արևելից կողմերում ստեղծվել էին երկու իշխա-

---

[1] Տե՛ս «Արարատ», 1897, էջ 144:
[2] Տե՛ս **Բարխուդարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 57:
[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 189:

նություններ: Գոռոզի իշխանությունն ընդգրկում էր Հայոց Արևելից կողմերի հարավային, իսկ Խաչենի իշխանությունը՝ կենտրոնական և հյուսիսային հատվածը: Դատելով արաբ հեղինակների՝ IX դ. վերջին և X դ. սկզբին վերաբերող հիշատակություններից, վերևում հստակեցված վարչաքաղաքական իրավիճակը Հայոց Արևելից կողմերում պահպանվում էր նաև Հայոց Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների օրոք: Ըստ Յակուբիի, որ իր «Գիրք երկրների մասին» աշխատությունը գրել է մոտ 891 թ., Ատրպատականի ամիրայության հյուսիսային սահմանը հասնում էր մինչև Վարդանակերտ քաղաքը (Վարսան) Երասխ գետի ստորին հոսանքի աջ ափին: Պատմիչը Հայոց Արևելից կողմերից միայն Պարտավն է հիշատակում որպես Ատրպատականի ամիրայության մաս[1]: Ըստ որում, պատմիչի հաղորդումը բոլորովին էլ չի նշանակում, թե Պարտավը մտնում էր Ատրպատականի ամիրայության մեջ, այլ զուտ հետևանք է այն փաստի, որ Պարտավում գոյություն ուներ արաբական ամիրայության: Նույնն է փաստում X դ. անմիջապես սկզբում (մոտ 903 թ.) իր երկասիրությունը շարադրած Իբն ալ-Ֆակիհը՝ ավելացնելով, որ Արդաբիլ-Պարտավ ճանապարհի՝ Ատրպատականի ամիրայության ամենահյուսիսային Վարդանակերտ գավառում գտնվող համանուն կայարանից հետո հաջորդ կայարանը, այսինքն՝ Բայլականը, գտնվում էր Հայաստանում[2]: Կուդաման, որ իր աշխատությունը գրել է մոտ 928 թ., նշում է, որ Առանից միայն Պարտավն էր մտնում Ատրպատականի ամիրայության մեջ և նույնիսկ հանդիսանում էր վերջինիս մայրաքաղաքը, իսկ Առանի մնացյալ հատվածները մտնում էին Հայաստանի մեջ[3]: Նույնիսկ ալ-Իսթախրին, որ իր «Գիրք թագավորությունների ճանապարհների մասին» աշխատությունը գրել է մոտ 930-933 թթ., Հայաստանի և Ատրպատականի ընդարձակ նկարագրության մեջ Առանից միայն Պարտավն է նշում Ատրպատականի ամիրայության կազմում[4]:

Ամփոփելով մինչ այս կատարած քննության արդյունքները՝ կարող ենք տալ Եսայի Աբու Մուսեի և Սահլ Սմբատյանի, ինչպես նաև վերջիններիս ժառանգորդների տիրույթների գործնականում ճշգրտված սահմանները:

Եսայի Աբու Մուսեի և նրա ժառանգների իշխանության սահմանագիծը Ղարաբաղի բարձրավանդակի կենտրոնական մասից՝ սկսյալ Դալի կոչված լեռից, շարժվում էր հյուսիս՝ անցնելով Տրտու գետի վերին

---

[1] Տե՛ս **Jakubi**, էջ 271-272:
[2] Տե՛ս **Ibn al-Fakih**, էջ 285, 292:
[3] Տե՛ս **Kudama**, էջ 244:
[4] Տե՛ս **al-Istakhri**, էջ 180-194:

հոսանքի և Դալի լեռից սկիզբ առնող վտակի ձախափնյա ջրբաժանով, հասնում Տրտու գետին, այնուհետև՝ դեպի հարավ էր շարժվում վերոհիշյալ վտակի աջափնյա ջրբաժանով և Արցախի լեռների գագաթնագծով՝ հասնելով Մեծ Քիրս լեռից դեպի հյուսիս սկզբնավորվող և դեպի արևելք ձգվող լեռնաբազուկին: Այդ լեռնաբազուկով սահմանագիծը ընթանում էր դեպի արևելք և հասնում Կարկառ գետին՝ նախկին Աղդամ քաղաքից դեպի արևելք: Կարկառ գետի հունով շարժվելով դեպի արևելք՝ սահմանագիծը հասնում էր Կուր գետին: Եսայի Աբու Մուսեի իշխանության արևելյան և հարավային սահմանագիծն անցնում էին հաջորդաբար Կուր և Երասխ գետերով մինչև Աղավնո գետ, որի հունով բարձրանում էր հյուսիս, Արցախի լեռների ստորին մասում թեքվում արևելք, վերջինիս ջրբաժանով կրկին ուղղվում դեպի հյուսիս, Բերձոր քաղաքից մի փոքր հարավ կտրուկ թեքվում էր արևմուտք՝ Գոռոզի իշխանության մեջ ընդգրկելով Ղարաբաղի բարձրավանդակի հարավային և կենտրոնական հատվածները և հասնում Դալի լեռանը:

Սահլ Սմբատյանի և նրա սերունդների իշխանության սահմանագիծն ընդգրկում էր Տրտու գետի վերին հոսանքի ավազանը, Ղարաբաղի բարձրավանդակի հյուսիսային և Վարդենիսի լեռնաշղթայի արևելյան հատվածները, ինչպես նաև ներկայիս Մասրիկի դաշտը: Սահլի իշխանության մեջ ներառնված էր Արցախի լեռների և Մեծ Քիրս լեռից դեպի հյուսիս սկզբնավորվող ու արևելյան ուղղությամբ ձգվող լեռնաբազուկի միջև գտնվող շրջանը՝ մինչև Պարտավ քաղաքի մատույցները, ընդգրկելով Պարտավից դեպի հարավ՝ մինչև Կարկառ գետը տարածվող Առան-ռոտ գավառը: Խաչենի իշխանությունը ներառում էր նաև Մռավի լեռնաշղթան՝ իր բոլոր լեռնաբազուկներով: Սահմանագիծը Գանձակ քաղաքն ընդգրկող Շակաշեն գավառի հատվածի հետ անցնում էր Հարությունաջուր (Ղոչղարա) գետով մինչև Կուր գետ, իսկ այնուհետև վերջինիս հունով ընթանալով հասնում էր Աղստև գետին՝ Հունարակերտի մոտակայքում: Սահմանագիծը դրանից այն կողմ անցնում էր Աղստև գետի ստորին հոսանքով, ապա Աղստևի ձախափնյա ջրբաժանով՝ մինչև ներկայիս Դիլիջան քաղաքի հյուսիսակողմը, որտեղից դեպի հարավ էր շարժվում Արեգունի լեռնաշղթայից հյուսիս գտնվող լեռնապարով և Սևանի լեռնաշղթայով՝ մինչև Մասրիկի դաշտ: Խաչենի իշխանությունից դուրս էին մնում միայն Հայոց Արևելից կողմերի՝ Պարտավ ու Գանձակ քաղաքներն ընդգրկող Ուտի Առանձնակ և Շակաշեն գավառների որոշ հատվածներ, որտեղ արաբական ամիրայություններ էին ձևավորվել, իսկ Պարտավի և Գանձակի ամիրայությունների միջև գտնվող Ուտի Առանձնակ և Շակաշեն գավառների տարածք-

ները մաս էին կազմում Խաչենի իշխանության:

Ավատատիրական հարաբերությունների խորացման և Բագրատունի տիրակալների միջամտությունների հետևանքով վերոհիշյալ երկու ընդարձակ իշխանություններն աստիճանաբար սկսում են բաժանվել ավելի փոքր իշխանությունների: Չնայած Գոռոզի իշխանության նման բաժանումների մասին սկզբնաղբյուրները հիշատակություններ չեն պահպանել, փոխարենը Խաչենի իշխանության մասին տեղեկությունները հնարավորություն են տալիս հստակ կարծիք կազմելու այդ իշխանության ներսում առաջացած, ինչպես նաև այդ իշխանությունից առանձնացած ավելի մանր իշխանությունների մասին:

Դեռևս Սահլ Սմբատյանի և նրա որդի Ատրներսեհի օրոք Գարդմանն իրենից ինքնուրույն իշխանություն էր ներկայացնում, որի իշխան Ներսեհ Կտրիճը գերեվարվեց Արաբիա: Ստեփաննոս Օրբելյանի՝ 905-906 թթ. վերաբերող հաղորդման մեջ հիշատակվում է նաև Գարդմանի տեր Սահակը[1]: Վերջինս ոչ այլ ոք է, եթե ոչ Գրիգորի որդին, որը կոչվում էր Սևադա և տիրում էր Գարդման և Քուստ-ի-Փառնես գավառներին: Այդտեղից դեպի արևմուտք նա իր իշխանության մեջ է ներառում Չորագետի շրջանի ավազակների մանր իշխանությունները[2]: Այստեղից բխում է, որ նրա իշխանության մաս էին կազմելու Ուտիքի Տուչ Կատակ գավառը և Աղուէ գավառի մի մասը, թերևս, հյուսիսարևելյան հատվածում: Ինչպես տեսանք, Աղուէ գավառն ամբողջությամբ նախապես մաս էր կազմում Հայ Բագրատունիների արքունի տիրույթների, սակայն, ամենայն հավանականությամբ, օգտվելով Սմբատ Ա-ի կրած դժվարություններից, Սահակ Սևադային հաջողվել էր տիրել այդ գավառի մի մասին: Այսինքն՝ նրա իշխանությունը տարածվում էր Շամքոր գետից մինչև Աղստև և Սևանի լեռնաշղթայից մինչև Կուր գետ: Ըստ որում՝ դատելով Մովսես Դասխուրանցու վերոհիշյալ հաղորդումից՝ նա իր իշխանությունը ընդարձակել էր ընդհուպ մինչև Չորագետ՝ տիրելով, ամենայն հավանականությամբ, Աղստև և Չորագետ գետերի ստորին հոսանքների և Կուր գետի միջև տարածվող դաշտին:

Մեր համոզմամբ, հենց այդ է պատճառը, որ 905-906 թթ. Տաթևի վանքի մայր տաճարի օծմանը Հայոց Արևելից կողմերը ներկայացված էին երեք իշխաններով՝ Խաչենի Գրիգոր, Գոռոզի Եսայի և Գարդմանի Սահակ:

X դ. սկզբին Սահակ Սևադայի իշխանությունից բաժանվում է Փա-

---

[1] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 234:
[2] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 341:

ռիսոսը կամ Քուստ-ի-Փառնես գավառը: Սմբատ Ա-ի 906 թ. աբխազական արշավանքի մասնակիցների թվում Անանուն Զրուցագիրը հիշատակում է «իշխան Փառիսոյ Հըմաեկ բազում հեծելաւք»[1]: Պատմիչի մեկ այլ վկայությունից հայտնի է, որ Սմբատ Ա-ն գրավել էր Փառիսոսը և, ամենայն հավանականությամբ, վերածել արքունի տիրույթի[2]: Մեր կարծիքով, Հմայակը Սմբատ Ա-ի արքունի այդ տիրույթի կառավարիչն էր: Փաստորեն, 906 թ. դրությամբ Փառիսոսն այլևս անջատված է Սահակ Սևադայի տիրույթներից:

Ինչպես տեսանք, Սևորդիները ունեին իրենց փոքրիկ իշխանությունը, որի իշխան Ստեփաննոս Կոնը գերեվարվեց 855 թ.: Ն. Կարաուլովն Սևորդիներին (արաբ.՝ աս-Սիավուրդիա) տեղորոշում է ներկայիս Շուլավերի շրջանում՝ Խրամ գետի աջ ափին[3]: Վ. Մինորսկին, աս-Սիավուրդիա անվանման ստուգաբանության համար հենվում է Կոստանդին Ծիրանածնի այն հաղորդման վրա, որ հունգարների հին անունը «սաբարտ ասֆալ» էր, այսինքն՝ «սպիտակ սաբարտ»: Պեչենեգների ճնշման տակ, հունգարների մի մասը հեռացավ արևմուտք, իսկ մյուս մասը՝ հաստատվեց Պարսկաստանի մի մասում, հավանաբար, VIII դ. կեսին: Նա այն տեսակետն է արտահայտում, որ վերջիններին հայերն անվանել են Սևորդիք (սև որդիներ), իսկ արաբներն աս-Սիավուրդիա[4]: Հայտնի է, որ «[էր] զՏաւուշ գաւառն Սեւորդեաց»[5]: Տուս կամ Տավուշ գավառը տեղադրվում է Տավուշ գետի ավազանում[6]: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ Բուղա զորավարը «չուեալ յՈւտի գաւառ՝ ծերբակալ 'ի Տուս գիւղ առնէ զՍտեփաննոս, որում և Կոն անուանէին զնա»[7]: Այս հաղորդումը ցույց է տալիս, որ Վ. Մինորսկու տեսակետը քննություն բռնել չի կարող և պարզապես սխալ է: Ընդ որում՝ Վ. Մինորսկին անուշադրության է մատնել արաբ հեղինակ Մասուդիի աշխատության՝ իր իսկ կողմից կատարված թարգմանության համապատասխան հատվածը, որտեղ ասված է.«[Կուր գետը] հոսում է սիավուրդացիների հողերով, որոնք հայերի ճյուղն են հանդիսանում»[8]:

---

[1] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 189:

[2] Անդ, էջ 65:

[3] Տե՛ս **Í. Êàðàóëîâ**, Ñâåäåíèÿ àðàáñêèõ ïèñàòåëåé î Êàâêàçå, Àðìåíèè è Àäåðáåéäæàíå.-«Ñáîðíèê ìàòåðèàëîâ äëÿ îïèñàíèÿ ìåñòíîñòåé è ïëåìåí Êàâêàçà», âûï. 38, էջ 77, ծան. 129:

[4] Տե՛ս **Â. Ìèíîðñêèé**, Èñòîðèÿ Äåðáåíäà è Øèðâàíà IX-XI ââ., Ì., 1963, էջ 214, ծան. 115:

[5] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 98:

[6] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 86:

[7] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 130:

[8] **В. Минорский**, նշվ. աշխ., էջ 214: Տե՛ս مسعودي, I, էջ 205:

Այդ հայկական տոհմը, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, ինչպես տեսանք, Սևորդի էր կոչվում իր նախահայր Սևուկի անունից: Բալազուրին հաղորդում է, որ Սևորդիները հարձակվել ու ավերել էին Շամքոր քաղաքը[1]: Սևորդիների իշխանությունն ընդգրկում էր Տուչ Կատակ գավառի կենտրոնական և հյուսիսային հատվածը՝ այսինքն՝ Տավուշ գետի միջին և ստորին հոսանքի ավազանը՝ Տավուշ կամ Տուս բերդով, իսկ այդ գավառի հարավային հատվածը, ամենայն հավանականությամբ, մնացել էր Գարդմանի տերերի իշխանության մեջ, որով էլ Ուտիքի նրանց տիրույթները միանում էին Գուգարքում գրավված տիրույթներին:

Նշենք նաև, որ Խաչենի և Սևորդյաց իշխաններն ընդգրկված էր Կոստանդին Ծիրանածնի այն ցուցակում, որտեղ նշված են այն իշխանները, որոնց նամակներ էին ուղարկվում Բյուզանդիայի արքունիքից[2]:

3.5. Համշենի (Համամաշեն) իշխանություն: Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանում Համշենի պատմության վերաբերյալ պահպանվել է միայն մեկ հաղորդում: Համշենահայերի շրջանում պահպանվել էր մի պատմություն Գրիգոր և Մարտիրոս իշխանների մասին, որոնցից մեկը սերում էր թագավորական տոհմից: Մարտիրոսը Գրիգորի դստերը կնության է խնդրում իր որդի Արտաշենի համար: Գրիգորը չի համաձայնում, և Մարտիրոսը զորքով հարձակվում է նրա վրա, հաղթում նրան, գերում նրա դստերն ու ամուսնացնում իր որդու հետ: Արտաշենը Գրիգորի երկրում, Համշենի մեծ գետի ափին, վերջինիս ակունքների շրջանում, մի մեծ քաղաք է կառուցում, որը մինչև օրս էլ նրա անունով կոչվում է Արտաշեն[3]: Լ. Խաչիկյանը, անդրադառնալով այս պատմությանը, եկել է այն ճիշտ եզրակացությանը, որ Համշենի իշխանությունը գտնվել է Սպերի և Տայքի Բագրատունիների քաղաքական ազդեցության ոլորտում: Ըստ նրա՝ պատմաաշխարհագրական այդ միջավայրում թագավորական ցեղ էին համարվում հենց Բագրատունիները, որոնք զենքի ուժով, խնամիական կապեր հաստատելով և այլ ճանապարհներով տիրում էին շրջակա երկրամասերին, նամանավանդ Դավիթ կուրապաղատի օրոք[4]: Պետք է ավելացնել, որ Բագրատունիները «թագավորական ցեղ» են դարձել IX դ. վերջին, ուստի՝ հիշյալ իրադարձությունները պետք է տեղի ունեցած լինեին դրանից հետո: Ցավոք, գալով ճիշտ եզրակացության՝ ուսումնասիրողը չի շարունա-

---

[1] Տե՛ս بلاذري, II, էջ 240:
[2] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 151:
[3] Տե՛ս **Ս. Հայկունի,** Համշեն, «Արարատ», 1895, էջ 295-297:
[4] Տե՛ս **Լ. Խաչիկյան**, էջեր համշինահայ պատմությունից,-«ԲԵՀ», 1969, թիվ 2, էջ 122:

կում իր հետազոտությունը, որը կարող էր նրան հասցնել անչափ կարևոր հետևությունների: Վերոհիշյալ պատմությունը ցույց է տալիս, որ Համշենի իշխանը Գրիգորն էր, քանի որ պարզ նշվում է, որ Արտաշենը նրա հողում է քաղաք կառուցել: Այստեղից պետք է բխեցնել, որ Գրիգորը՝ հանդիսանալով Համշենի իշխան, թագավորական տոհմից սերվել չէր կարող: Ուստի՝ թագավորական տոհմից, այսինքն՝ Բագրատունիներից, սերում էր Մարտիրոսը, որ, փաստորեն Համշենի իշխանը չէր: Ահա՛, մեր կարծիքով, այստեղ թաքնված է անչափ կարևոր մի իրողություն: Ամենայն հավանականությամբ, Մարտիրոսը Տայքի իշխաններից մեկն էր, իսկ Տայքի իշխանները կրում էին մագիստրոսի կոչում[1]: Համշենահայերի մեջ պահպանված պատմության սկզբնական տարբերակում, մեր համոզմամբ, «Մարտիրոս»-ի փոխարեն եղել է «Մագիստրոս» անվանաձևը: Անցել են դարել, փոխվել է իրավիճակը, և համշենահայերի մեջ Մագիստրոս անվանումը սկսվել է թերըմբռնում առաջացնել: Իսկ քանի որ այդ անունը նման է հայերի շրջանում տարածում ունեցող Մարտիրոս անվանը, աստիճանաբար այն սկսել է ընկալվել որպես Մարտիրոս, սակայն, մնացել է այն իրողությունը, որ նա սերված էր թագավորական տոհմից, այսինքն՝ Բագրատունի էր: Այսպիսով, պարզվում է, որ Տայքի կուրապաղատները՝ մագիստրոսները, տիրել են Համշենի իշխանությունը: Նրանց ներկայացուցիչը սկզբում փորձել է այդ անել խնամիական կապ հաստատելով տեղի իշխան Գրիգորի հետ, բայց քանի որ նա չի համաձայնել, Մարտիրոսն այդ իրականացրել է զենքի ուժով: Սրանից կարելի է բխեցնել, որ Արտաշեն Բագրատունուց՝ Համշենի նոր իշխանից հետո Համշենի իշխանները եղել են Բագրատունյաց տոհմից[2]:

Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանում Տայքի իշխանները միայն երկու դեպքում կարող էին տիրանալ Համշենի իշխանությանը: Այդ կարող էր պատահած լինել Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների օրոք, կամ էլ Տայքի Դավիթ կուրապաղատի օրոք: Վերջին պարագան մենք հակված ենք բացառելու, քանի որ Դավիթ կուրապաղատի օրոք Բյուզանդիան հզորացել էր ու հասել Տայքի սահմաններին, ուստի՝ ամենայն հավանականությամբ, այստեղ խոսքը Սմբատ Ա-ի օրոք Համշենը գրավելու մասին է: Սմբատ Ա-ի օրոք հայկական զորքերը դուրս էին եկել Սև ծովի ափերը և հասել Համշենի իշխանության

---

[1] Տե՛ս **Կ. Юзбашян**, նշվ. աշխ., էջ 133, 135: Տե՛ս նաև **Ì. Ëîðäêèÿàíèäçå**, նշվ. աշխ., էջ 315, 327, **Ì. Минорский,** նշվ. աշխ., էջ 135, ծանոթ. 5:

[2] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Համշենահայոց պատմությունից,-«Եզերք», 2006, թիվ 2, էջ 34:

սահմաններին, որով էլ Համշենը տիրելու հնարավորություն էր ստեղծվել Տայքի իշխանների համար:

Հովհաննես Դրասխանակերտցին՝ նկարագրելով Սմբատ Ա-ի նվաճումները, այդ թվում՝ նաև Կղարջքի կողմից Սև ծովի ափ դուրս գալը, պատմում է, որ դրանից անմիջապես հետո տեղի ունեցավ Դվինի 893 թ. մեծ երկրաշարժը[1]: Ըստ այդմ՝ Համշենի միացումը Հայ Բագրատունիների տերությանը պետք է տեղի ունեցած լիներ 892 կամ 893 թ.:

Հայտնի է, որ 1001 թ. Տայքի կուրապաղատությունն անցնում է Բյուզանդիայի տիրապետության տակ, որը նախքան այդ տիրել էր նաև Տարոնի իշխանությանը[2]: Համշենի իշխանությունը, հավանաբար, միևնույն ժամանակ Տայքի կուրապաղատության հետ միասին միացվել էր Բյուզանդիային:

Չնայած Համշենի պատմության և աշխարհագրության վերաբերյալ տարաբնույթ ուսումնասիրություններում վեր են հանվել այդ հայաշխարհին վերաբերող որոշ հիմնահարցեր, ցայսօր բաց է մնում Համշեն քաղաքի, համանուն իշխանության, Արտաշենի և այլ բնակավայրերի տեղորոշման ու տեղադրության խնդիրը: Վերոասացյալը չի նշանակում, թե ուսումնասիրողների տեսադաշտից բոլորովին դուրս է մնացել այդ անչափ կարևոր հարցը: Խնդիրն այն է, որ ներկայումս Համշենի վերաբերյալ որևէ ուսումնասիրություն կատարելիս անհնար է գտնել գեթ մեկ գիտական հետազոտություն, որը միանշանակ պատասխան կտար վերոհիշյալ խնդիրներին:

789 թ. Տամբուր քաղաքը վերակառուցած և Համամաշեն կոչած Համամ Ամատունին հիմնել էր անկախ հայկական իշխանություն[3]: Արաբներից փախստական հայ իշխանը, ամենայն հավանականությամբ, հաստատվելու էր լեռնային անվտանգ մի վայրում, որը բնական անառիկ ամրություն էր իրենից ներկայացնում: Ներկայումս խնդրո առարկա տարածքում գոյություն ունեն Համշեն անունը կրող առնվազն հինգ բնակավայր՝ Հեմշինը, Չեմլիհեմշինը, Բաշ Հեմշինը, Օրթա Հեմշինը և Աշաղի Հեմշինը, Բաշ Հեմշինի մոտակայքում գտնվող մի բերդ՝ Հեմշին-կալեսի (կամ Կալե) անունով, ինչպես նաև Հեմշինի լեռներ անունը կրող լեռնապարը, որը ձգվում է Պոնտական լեռների՝ Սպերի հյուսիսակողմյան հատվածից մինչև Քաջքար լեռը: Բացի այդ, օսմանյան տիրապետության շրջանում, ինչպես նաև այսօր, Ֆիրթինա գետի (Բյուլուք-դերե) միջին և

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 162-166:

[2] Տե՛ս **Ասողիկ**, էջ 168:

[3] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 166-169: Տե՛ս նաև Լ. Խաչիկյան, Էջեր համշինահայ պատմությունից,-«ԲԵՀ», Երևանի համալսարանի հրատ., 1969, թիվ 2, էջ 115-118:

վերին հոսանքների ավազանը զբաղեցնող լեռնային հատվածը կոչվում է Հեմշին անունով[1]:

Ըստ Կ. Կոխի՝ Համշենի սահմանագիծն արևելքում սկսվում էր Աթինայի մոտակայքում, ընդգրկում Ֆիրթինա գետի աջ վտակ Խալա գետի ավազանը, վերջինիս վերին հոսանքի ավազանում գտնվող Արտա բնակավայրի շրջանը, Ջեմիլի լեռնային հատվածը և Ֆիրթինա գետի վերին և միջին հոսանքի ողջ ավազանը: Իսկ Աթինայի և Ռիզեի մոտ Համշենի սահմանը մոտենում էր Սև ծովին: Ըստ որում, Ֆիրթինա գետի գետաբերանը վերաբերում էր Լազիստանին[2]: Այսինքն՝ Համշենի սահմանագիծն հյուսիսում անցնում էր Սպերի հյուսիսակողմից մինչև Քաջքար լեռը ձգվող Պոնտական լեռների ջրբաժանով: Այս տեղեկությունը հաստատվում է նաև Ս. Հայկունու վկայություններով[3]: Նույն նկարագրությունը ներկայացնում է Հ. Տաշյանը[4]: Վ. Պալգրևը պատմում է, որ Համշենի շրջանը ունի 50 մղոն երկարություն և 25 մղոն լայնություն և զբաղեցնում էր Պարխարի լեռների վերին մասը, որը սկսվում է 1500 մետր բարձրությունից և հասնում 3 մեծ լեռների՝ Օպուտ-դաղ (Օվիտ-դաղ), Վերջնբակ և Ալթը-Փարմաղ-դաղ: Այս լեռներից դեպի ծովն են իջնում երեք ձորահովիտներ, որոնցից արևելյանը կոչվում է Բյուլյուք-դերե (համանուն գետի անունից), կենտրոնականը՝ Ցիվար-դերե և արևմտյանը՝ Քսենոս-դերե: Հեմշին բնակավայրը, որի լեռնամասում գտնվում են մի քանի հին ամրոցների ավերակներ, գտնվում է մի բաց լեռնային հարթակում՝ 2150 մ բարձրության վրա՝ Օպուտ-դաղի լանջին, Բյուլյուք-դերեի վերնամասում[5]:

Նշենք, որ Ալթը-Փարմաղ-դաղը գտնվում է Ֆիրթինա գետի աջ վտակի ակունքների շրջանում, իսկ Օպուտ-դաղը՝ Վերջնբակից մոտ 20 կմ արևմուտք[6]:

---

[1] Տե՛ս **K. Koch**, Reise im Pontischen Gebirge und Turkischen Armenien, Wanderungen im Oriente II, Weimar, 1846, 80, pp. XVI+468, Ռիզեի շրջանի վարչական բաժանման քարտեզ,-Map of Rize, Turkey, 2006.

[2] Տե՛ս **K. Koch**, նշվ. աշխ., pp. XVI+468:

[3] Տե՛ս **Ս. Հայկունի**, Նշխարներ, կորած և մոռացուած հայեր,-«Արարատ», 1895, էջ 296:

[4] Տե՛ս **Հ. Տաշեան**, Տայք, դրացիք և Խոտորջուր,-«Հանդէս ամսօրեայ», 1971, թիվ 10-12, էջ 399-400:

[5] Տե՛ս **В. Джиффорд Пальгрев**, Отчет о провинциях Анатолии за 1867-68, 1869 и 1872 гг.,-Материалы для описания Азиатской Турции и Батумской области, Тифлис, 1882, էջ 70-71:

[6] Տե՛ս Ցարական Ռուսաստանի բանակային շտաբի հինգ և տասվերստանոց քարտեզների համապատասխան պլանշետներ (հինգվերստանոց-В.7., В.8., Г.7., Г.8., տասվերստանոց-թիվ 80): Սովետական Միության բանակային շտաբի տարբեր մասշտաբների տոպոգրաֆիկ քարտեզների համապատասխան պլանշետներ: Թուրքական հինգվերս-

Ինչ վերաբերում է Համշենի, համանուն իշխանության և Արտաշենի տեղադրությանը, ապա ըստ Ղ. Ինճիճյանի՝ Համշենը նույնական է Հեմշին-կալեսի բերդին, որ գտնվում է Դեմիր-դաղ լեռան հյուսիսարևելյան ստորոտին՝ Ջիլ-կալե բերդից մեկ օրվա հեռավորությամբ (մոտ. 30 կմ), մի գետի վրա, որ կոչվում էր Բաշ Հեմշին և որ ներկայումս թուրքական Չաթ անունը կրող հայկական Տափ գյուղի մոտակայքում խառնվում է Ֆիրթինա գետին[1]: Պետք է նշել, որ Ղ. Ինճիճյանը Համշենն ու Արտաշենը նույնացնում է[2]: Ս. Հայկունին ևս Արտաշենը նույնացնում է Համշեն-կալեսիին[3]: Ղ. Ալիշանի կարծիքով Համշենը նույնական է ներկայիս Բաշ Հեմշինին, որ գտնվում է ներկայիս Հեմշին բնակավայրից կես օրվա ճանապարհ (մոտ. 15 կմ) հեռավորության վրա: Նա գրում է. «Համշէն, որ եւ Պաշ-Համշէն կայ ի ստորոտս Տէմիտաղ լերին. առ որով եւ Խաչէքար լեառն»[4]: Նույն Դեմիր-դաղ լեռան հարավային ստորոտին, ինչպես ցույց է տրված Կիպերտի քարտեզում, գտնվում են Վերին, Ստորին և Ներքին [Հեմշին] գյուղերը (Բաշ քյոյ, Օրթա քյոյ և Աշաղ քյոյ)[5]: Արտաշենը Հ. Տաշյանը նույնացնում է ներկայիս Արտա բնակավայրին, որը գտնվում է Խալայի մոտակայքում[6]: Ներկայիս Հեմշին բնակավայրը (Փազար գետի աջ ափին) Կ. Կոխը համարում է Համշենի իշխանների նախանիստ, սակայն նրանից կես օրվա հեռավորությամբ գտնվող Հեմշին-կալեսի բերդը չի նշում քարտեզում, քանի որ ինքն այնտեղ չի եղել և քարտեզի վրա այդ հատվածը նշել է սպիտակ գույնով[7]: Հ. Տաշյանի կարծիքով, բուն Համշենը Բաշ Հեմշինն է, որի մոտ գտնվում է Հեմշին-կալեսին[8]: Համշենը, ըստ Հ. Տաշյանի, զբաղեցնում էր Քաջքարի և Պարխարի ստորոտի ողջ լեռնային շրջանը, ինչպես նաև Օֆիի արևելքում ծովը թափվող մեծ գետի վերին հոսանքի ավազանը[9]: Համշենը ներկայիս Բաշ Հեմշինին են նույնացնում նաև Մ. Բժշկյանը[10] և

տանոց քարտեզի համապատասխան պլանշետներ: Ռիզեի շրջանի թուրքական ներկայիս տուրիստական քարտեզներ: **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[1] Տե՛ս **Ղ. Ինճիճեան,** Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, Ասիա, Վենետիկ, 1806, էջ 397:

[2] Անդ, էջ 396-397:

[3] Տե՛ս **Ս. Հայկունի**, Նշխարներ, կորած և մոռացուած հայեր,-«Արարատ», 1895, էջ 295-297:

[4] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, § 4, ծան., § 49, էջ 39:

[5] Տե՛ս **Հ. Տաշեան**, նշվ. աշխ., էջ 407, ծան. 19:

[6] Անդ, էջ 406:

[7] Տե՛ս K. Koch, նշվ. աշխ., էջ 111:

[8] Տե՛ս **Հ. Տաշեան**, նշվ. աշխ., էջ 407, ծան. 19:

[9] Անդ, էջ 399-400:

[10] Տե՛ս **Մ. Բժշկեան**, Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեւ ծով, Վենետիկ, 1819, էջ 97:

Բ. Թոռլաքյանը[1]: Նոր ուսումնասիրողներից Ի. Կուզնեցովը նույնպես հակված է վերոհիշյալ տեսակետի օգտին[2]: Ա. Թուլումջյանի կարծիքով, ներկայիս Զիլ-կալեն մեծ հավանականությամբ կարելի է նույնացնել Արտաշենին[3]: Նա իր ուղեգրության մեջ պատմում է, որ Զիլ-կալեի և վերջինիցս հյուսիս ընկած լեռնային շրջանը կոչվում է Համշեն[4]: Տափ կամ Չաթ գյուղից մի ճանապարհ տանում է դեպի Եղնովիտ (Էլևիտ) և Խաչիվանք (սկզբնապես Խաչիկ վանք, հետո՝ Խաչեքար վանք, ապա՝ Խաչեքար-Քաջքար, ներկայումս Խաչիվանիկ), մի այլ ճանապարհ էլ՝ Բաշ Հեմշին և Վերջնբակ լեռ[5]: Չաթ գյուղի և Բաշ Հեմշինի միջև գտնվում է Կալե-քյոյը կամ Վարոշը, որտեղ մի մեծ ամրոցի ավերակներ են պահպանվել[6]:

Բացի այդ, ներկայումս կազմվող քարտեզներում ուսումնասիրողները Համշենը տեղադրում են կամ Չեմլիհեմշինի կամ Զիլ-կալեի տեղում[7]:

Ինչպես տեսնում ենք, բոլոր այս ուղեգրություններն ու ուսումնասիրությունները վերաբերում են XIX դ. կամ դրանից հետո եկող ժամանակներին: Ինչ վերաբերում է հնագույն տեղեկություններին, ապա ոչինչ չի պահպանվել, իսկ պահպանվածներից ամենահինը XIV-XV դդ. հիշատակարաններ են, որոնք հիշատակում են «Համշենի երկրում» գտնվող Եղնովիտ գյուղի հարևանությամբ գործող Խաչիվանքին, որն առանձին վիճակ էր[8]: Տամբուրում հաստատված Ամատունիների մասին իր պատմության մեջ Ղևոնդը ոչ մի կողմնորոշիչ տեղեկություն չի մատուցում Համշենի գտնվելու վայրի մասին, ինչը չի անում նաև Հովհան Մամիկոնյանը, բացառությամբ Սբ. Սիոնի եկեղեցու մասին հիշատակության, որը Տամբուրում էր գտնվում, ինչպես նաև Վաշդեանի արշավան-

---

[1] Տե՛ս **Б. Торлакян,** Этнография амшенских армян,-"Амшенская библиотека", I, сборник статей и материалов, Краснодар, 2002, էջ 35:

[2] Տե՛ս **И. Кузнецов,** Хемшилиы и амшенские армяне в культурном контексте Понта,-"Амшенская библиотека", I, էջ 132:

[3] Տե՛ս **А. Тулумджян**, Земля и корни,-«Анив», 2005, N 3, стр. 7. Նշենք, որ մեր համատեղ կատարած ուսումնասիրության ժամանակ Ա. Թուլումջյանը հրաժարվեց իր տեսակետից՝ համաձայնելով մեզ հետ, որ առավել հավանական է Արտաշենի նույնացումը ներկայիս Վարոշին:

[4] Անդ, էջ 7-8:

[5] Անդ, էջ 8-9:

[6] Անդ, էջ 9:

[7] Տե՛ս **Ս. Երեմյան**, Բագրատունիների թագավորությունը 9-11 դարերում, Եր., 1987, քարտեզ, Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, Եր., 2005, էջ 56-57, 58-59, 62-63, 64-65, 66-67, 68-69, 70-71, և այլն:

[8] Տե՛ս **Հ. Տաշեան**, նշվ. աշխ., 1972, թիվ 1-3, էջ 23-28:

քի երթուղու նշումը, որն անցնում էր Ճորոխի ստորին հոսանքով[1]: Չնայած այս վերջին հիշատակությունները ևս չեն օգնում Տամբուր-Համշենի տեղադրությանը, քանի որ այդ եկեղեցու գտնվելու վայրն անհայտ է, իսկ արշավանքի երթուղու ճշտումը՝ հարաբերական: Ղևոնդը հաղորդում է, որ երբ 788-790 թթ. Արաբական խալիֆայության Արմինիա վարչական միավորի արաբ ամիրա (իշխան) Սուլեյմանը (788-789)[2] դաժան հալածանքներ սկսեց հայ նախարարների ու ժողովրդի նկատմամբ, նրանցից ոմանք՝ Շապուհ և Համամ Ամատունի նախարարների գլխավորությամբ և 12 հազար ժողովրդով հեռացան իրենց տիրույթներից, հասան Մեծ Հայքի Գուգարք աշխարհին սահմանակից Տայք աշխարհի հյուսիսային Կող գավառը, Ճորոխ գետի ափին պարտության մատնեցին իրենց հետապնդող արաբական զորքին ու անցնելով գետը, բնակություն հաստատեցին Սև ծովի ափամերձ լեռնային շրջաններում՝ Բյուզանդիայից որպես ժառանգական տիրույթ ստանալով այդ հողերը[3]:

Հարկ է սկզբում հստակեցնել Համշենի տեղադրության հնարավոր տարածքը, քանի որ այդ տեղադրությունը դժվարանում է Ֆիրթինա գետի ավազանում պահպանված Համշեն անունը կրող հինգ բնակավայրերի առկայությամբ: Ա. Թուլումջյանն իր ուղեգրության մեջ նշում է, որ Ֆիրթինայի և դրա վտակների ձորերը փակ են, այսինքն՝ զառիվայր, որտեղ հնարավոր չէր քաղաք կառուցել[4]: Այս տեսակետը բացառում է Համշենի տեղադրությունը ինչպես ներկայիս Չեմլիհեմշին (մինչև 1950-ական թվականները՝ Թամսիվան), այնպես էլ Հեմշին բնակավայրերի տեղերում, և բացի այդ վերը բերված տեղեկությունները ցույց տվեցին, որ նույնիսկ XIX դ. գոյություն չունեին ո՛չ ներկայիս Հեմշինը, ո՛չ Չեմլիհեմշինը, որոնց մոտակայքում չկան նաև ամրոցների ավերակներ: Մեր ուսումնասիրությունը մեզ տանում է դեպի Ֆիրթինա գետի վերին հոսանքի ավազանը, որտեղ գտնվում են Բաշ Հեմշինը (Վերին Համշեն), Օրթա Հեմշինը (Ներքին Հեմշին), Աշաղի Հեմշինը (Ստորին Համշեն) և Հեմշին-կալեսի (կամ պարզապես Կալե) բերդը: Այդ է ապացուցում նաև այն իրողությունը, որ հիշյալ գետի վերին հոսանքի ավազանում են հիմնականում պահպանվել հայկական անվանումներ ունեցող բնակավայ-

---

[1] Տե՛ս **Հովհան Մամիկոնյան**, էջ 284-285:
[2] Տե՛ս А. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 230:
[3] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 167-168:
[4] Տե՛ս **А. Тулумджян**, նշվ. աշխ., էջ 10:

ները[1]: Այն իրողությունը, որ ներկայումս ևս պահպանվել են Վերին, Ներքին և Ստորին Համշեն բնակավայրերը, ցույց է տալիս, որ սկզբնապես գոյություն է ունեցել Համշեն անունը կրող մի ավան, հավանական է՝ բերդաքաղաք, որտեղից հետագայում դուրս եկած բնակիչների կողմից հիմնվել են Վերին, Միջին և Ստորին Համշեն բնակավայրերը: Մնում է մեկ տարբերակ: Համշենը պետք է նույնացնել Հեմշին-կալեսի բերդին, որը սկզբում պետք է բերդաքաղաք եղած լիներ: Հեմշին-կալեսին գտնվում է Ֆիրթինա կամ Բյույուք-դերե գետի ակունքներից մոտ 2-3 կմ արևմուտք: Սույն տեղադրության օգտին է խոսում այն, որ Հեմշին-կալեսին գտնվում է ներկայումս Թեքֆուր (Թագվոր-Թագավոր) կոչվող լեռան (3352 մ) ստորոտին[2]: Անունը, հավանաբար, առաջացել է Համշենի իշխանանիստի հետ հարևանության պատճառով: Տեղագննությամբ զբաղվող գալիք ուսումնասիրողը Սբ Սիոնի եկեղեցին պետք է փնտրի հենց Հեմշին-կալեսիում կամ Համշենի բերդում: Ինչ վերաբերում է ներկայիս Չեմլիհեմշին և Հեմշին բնակավայրերին, ապա դրանք հիմնել են բուն Համշենից հետագայում տեղափոխված հայերը:

Արտաշենի տեղադրության մասին խոսելիս հարկ է կրկին վերհիշել համշենահայերի շրջանում պահպանված վերոբերյալ պատմությունը, որտեղ ասված է, որ Արտաշենը կառուցվել է Համշենի մեծ գետի ակունքների մոտ[3]: Վերևում տեսանք, որ փորձ է կատարվել Արտաշենը նույնացնել ներկայիս Զիլ-կալեին կամ Արտա բնակավայրին: Առաջին տեսակետը քննություն չի բռնում, քանի որ Զիլ-կալեն մի փոքրիկ բերդ է գետի կիրճում, մինչդեռ Արտաշենը պետք է մեծ քաղաք (այսինքն՝ բերդաքաղաք) լիներ ըստ վերոհիշյալ պատմության: Արտա բնակավայրի տեղում Արտաշենի տեղադրությունը ևս քննություն չի բռնում, քանի որ դրա շրջակայքում որևէ բերդ չի պահպանվել, բացի այդ էլ, Կ. Կոխն այն նկարագրում է որպես ամառանոց[4]: Դրան ավելացնենք, որ Արտա բնակավայրը հեռու է Ֆիրթինա կամ Բյույուք-դերե գետի ակունքներից: Ինչ վերաբերում է Ղ. Ալիշանի կողմից Համշեն-Արտաշեն նույնացմանը, ապա մենք դրան համաձայնել չենք կարող, չնայած աշխարհագրական տարածքի առումով այդ տեսակետն ավելի քան հավանական է, քանի որ, գտնվելով նույն գետի ակունքների մոտակայքում, այդ երկու բեր-

---

[1] Տե՛ս **À. Åãèàçàðÿí,** Àðìÿíñêèå òîïîíèìû hÀìàìàøåíà-hÀìøåíà,-"Àìøåí-Ïîíòîñ", âûïóñê II, Êðàñíîäàð, 2009, էջ 94-100:

[2] Տե՛ս Ցարական Ռուսաստանի բանակային շտաբի հինգ և տասվերստանոց քարտեզների համապատասխան պլանշետներ (հինգվերստանոց-Â.7., Â.8., Ã. 7., Ã. 8., տասվերստանոց-թիվ 80):

[3] Տե՛ս **Ս. Հայկունի**, Համշեն, «Արարատ», 1895, էջ 295-297:

[4] Տե՛ս **Հ. Տաշեան**, նշվ. աշխ., 1971, թիվ 10-12, էջ 407:

դաքաղաքները պետք է միմյանց բավական մոտ լինեին: Բայց Համշենի տեղում նոր քաղաքի կառուցումն այնքան նշանակալի իրադարձություն կլիներ, որ անպայման կնշվեր հիշյալ պատմության մեջ: Դա կնշանակեր նաև, որ Համշենը՝ վերակառուցված և վերանվանված Տամբուրը, կրկին ավերվել է, ինչի վկայությունը ևս սկզբնաղբյուրները չեն պահպանել: Մեր համոզմամբ, Արտաշենը պետք է տեղադրել Վարոշ կամ Կալե-քյոյ կոչվող մեծ ամրոցի ավերակների տեղում, որոնք գտնվում են Ստորին Համշենից մոտ 5 կմ հեռավորության վրա: Ինչ վերաբերում է Ֆիրթինա գետի գետաբերանի մոտակայքում գտնվող ներկայիս Արտաշենին, ապա կարծում ենք, որ այն հիմնել են բուն Արտաշենից գաղթածները:

Քանի որ Համշենի ու Արտաշենի տեղորոշումը մեզ բերեց Բյուլուք-դերե գետի ակունքների լեռնաշխարհը, ապա համոզված կարելի է ասել, որ Գրիգոր և Մարտիրոս իշխանների վերաբերյալ պատմության մեջ հիշատակվող Համշենի մեծ գետը հենց ներկայիս Բյուլուք-դերեն է: Վերջինիս վերին հոսաքը կազմող աջափնյա վտակը, որը Տափ կամ Չաթ գյուղի մոտակայքում խառնվում է Եղնովիտի մերձակայքով հոսող համանուն գետին, ներկայումս կոչվում է Բաշ Հեմշին գետ, իսկ անցյալում՝ Համշենի գետ:

Համշենի իշխանությունը, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրողների և ուղեգիրների կարծիքները, ինչպես նաև պատմաաշխարհագրական միջավայրը, ընդգրկում էր Համշենի մեծ գետի (Ֆիրթինա կամ Բյուլուք-դերե) վերին և միջին հոսանքի ավազանը, նրա վտակներ Բաշ Հեմշին, Եղնովիտ, Բալովիտ, Քաջքար և Խալա գետերի ավազանները, ինչպես նաև Ջեմիլ գետի վերին և Աթինա կամ Փազար գետի վերին և միջին հոսանքների ավազանները: Իշխանության արևելյան սահմանն անցնում էր Ֆիրթինա կամ Բյուլուք-դերե գետի աջ վտակի արևելյան ջրբաժանով՝ սահմանակցելով Եգերքին կամ Լազիստանին, արևմուտքում՝ ընդգրկում Ջեմիլ գետի վերին և Փազար գետի վերին և միջին հոսանքների ավազանները, իսկ հյուսիսում Համշենի իշխանությունը ընդգրկում էր Պոնտական լեռների՝ Սպերի հյուսիսակողմից մինչև Ալթը-Փարմաղ լեռը ձգվող հատվածը: Այստեղ Համշենի իշխանությունը սահմանակցում էր Սպերի Բագրատունիների, իսկ ավելի արևելք՝ Տայքի Բագրատունիների իշխանությանը: Մեր գծած սահմանները վերաբերում են Համշենի իշխանության՝ VIII-XI դարերի ընդգրկած տարածքներին, չնայած հետագայում էլ Ռուի Գոնսալես դե Կլավիխոյի ուղեգրության մեջ հիշատակվող Առաքել իշխանությունն ընդգրկում էր

նույն տարածքը[1]: Ինչպես տեսանք, Համշենի ձորապետությունը Կ. Կոխի ժամանակ ևս ընդգրկում էր նույն տարածքը:

Վերջում հարկ ենք համարում անդրադառնալ նաև մի անչափ կարևոր իրողության: Ընդգրկելով Պոնտական լեռների վերոհիշյալ հատվածը՝ Համշենի իշխանությունը փաստորեն իր սահմաններում ներառում էր նաև Մեծ Հայքի հողերը[2], ինչը մեր կարծիքով ցույց է տալիս եթե անգամ ոչ ամբողջ Համշենի իշխանության, ապա գոնե դրա հյուսիսային հատվածի պատկանելությունը Մեծ Հայքին: Դատելով այն իրողությունից, որ Վարդանանց պատերազմի ժամանակ Ավարայրի ճակատամարտից հետո նահանջած Հմայակ Մամիկոնյանի գնդերը ապաստանել էին Տայքի Արսեաց փոր գավառի մեջ մտնող Պոնտական լեռների գագաթներին և Խաղտիքում[3], կարելի է ամենայն հավանականությամբ արձանագրել Պոնտական լեռների՝ Սպերի հյուսիսակողմից մինչև Ճորոխ գետի ստորին հոսանքի շրջանը ձգվող հատվածի պատկանելությունը Մեծ Հայքին: Ուստի արձանագրենք: Համշեն և Արտաշեն քաղաքներն ի սկզբանե մտել են Մեծ Հայքի մեջ: Հետագայում Համշենի իշխաններն իրենց տիրույթներն ընդարձակեցին դեպի հարավ՝ տիրելով Ֆիրթինա կամ Համշենի մեծ գետի միջին հոսանքի ավազանին, ինչպես նաև արևմուտք՝ տիրելով Սև գետի վերին հոսանքի ավազանին:

Ամփոփելով վերոասացյալը՝ կարող ենք նշել, որ Հայ Բագրատունիների տերությունն ընդգրկում էր Մեծ Հայքի մեծ մասը, որտեղ Բագրատունիների ընդարձակ տիրույթներից բացի գտնվում էին Վասպուրականի, Սյունյաց, Հայոց Արևելից կողմերի և Համշենի իշխանությունները:

Հայոց տերության սահմանագիծն արևելքում (Հայոց Արևելից կողմերի իշխանությունների կողմից) մոտավորապես ներկայիս Զարդոբ քաղաքից հարավ անցնում էր Կուր գետով, իսկ այնուհետև՝ հարավային սահմանագիծը Երասխ գետի հունով շարժվում էր դեպի արևմուտք, անցնում Քասաբե լեռան շրջանով ու Միշոուդաղ լեռնաշղթայի գագաթնագծով հասնում Ուրմիո լճին: Այդ հատվածում Հայ Բագրատունիների տերության կազմում ընդգրկված էին Վասպուրականի արևելյան որոշ գավառներ ու Պարսկահայքի Զարևանդ և Հեր գավառները: Այնուհետև Ուրմիո լճի արևմտյան ափագծով սահմանագիծն

---

[1] Տե՛ս **Рюи Гонзалес де Клавихо**, Дневник путишествия ко двору Тимура в Самарканд в 1403-1406 гг., СПб., 1881, էջ 382-384:

[2] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[3] Տե՛ս **Եղիշե**, IV, Ղազարայ Փարպեցի, II, 41, III, 79:

իջնում էր մինչև ներկայիս Բարանդուզ-չայ գետը, որի հունով ընթանում էր դեպի արևմուտք և սկզբում Կորդվաց լեռների հարավակողմով, իսկ հետո, մոտավորապես այսօրվա թուրք-իրաքյան սահմանագծով, հասնում Խաբուր գետին: Այնուհետև սահմանը Ձերմ (Բոհտան) գետի հարավային ջրբաժանով հասնում էր Ձերմ գետին, որտեղից բարձրանում էր դեպի հյուսիս, հավանաբար, Ազնվաց ձոր և Կեցան գետերի ջրբաժանով: Այնուհետև սահմանագիծը Սղերդի հյուսիսակողմով շարժվում էր դեպի արևմուտք ու Հայոց տերության կազմում էր թողնում Տավրոսյան լեռների հարավային լեռնաբազուկների շրջանում գտնվող Արզն քաղաքն ու Սասունը: Սասունից արևմուտք սահմանը շարժվում էր սկզբում Տավրոսյան լեռների, իսկ, այնուհետև, Արղնիի լեռների ջրբաժանով:

Հայ Բագրատունիների տերության արևմտյան սահմանագիծն Արղնիի լեռներից այն կողմ՝ ընթանալով Արշամաշատ քաղաքի արևմտակողմով և հատելով Արածանի գետը, անցնում էր Մնձուր (Մուզուր) և Խոզաթ գետերի ջրբաժանով: Դրանից հետո սահմանագիծը հաղթահարում էր Մնձուր լեռներն ու դուրս էր գալիս Կամախի շրջակայքը: Կամախից արևելք սահմանագիծն անցում էր Եփրատ գետով մինչև Դերջան և, հետո, այդ քաղաքից հյուսիս գտնվող լեռների ջրբաժանով՝ դեպի արևելք: Այնուհետև, ամենայն հավանականությամբ, սահմանագիծը դեպի հյուսիս անցնում էր Կոփա (Կապույտ) լեռների արևելյան մասի և ներկայիս Աղբաբա լեռան միջև, հատում Ճորոխ գետը և Ճորոխի լեռնաշղթայի ջրբաժանով հասնում Չորմայրի լեռան շրջանը: Այնտեղից սահմանագիծը դեպի հյուսիս էր շարժվում Տայքի և Բարձր Հայքի սահմանով՝ Սպեր քաղաքի արևելակողմով շարժվելով դեպի հյուսիս, անցնելով Ճորոխ գետն ու հասնելով Պարխարյան լեռների Վերջնբակ գագաթին[1]: Ավելի հյուսիս Հայոց տերության կազմի մեջ էր մտնում Համշենի իշխանությունը:

---

[1] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 88-89: Նշված սահմանագծի ճշգրտումը մենք կատարել ենք Արմինիա ոստիկանության և Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջաններին վերաբերող հայկական և օտար սկզբնաղբյուրների տեղեկությունների լույսի ներքո:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Արևելից մեծ իշխանություն (Աղվանից թագավորություն): Հայ Բագրատունիների տերության մաս էր կազմում նաև Արևելից (Աղվանից) մեծ իշխանությունը, որը տարածվում էր Ծանարաց քորեպիսկոպոսությունից մինչև Ճիղբք և Կուր գետից մինչև Կովկասյան լեռների ջրբաժան:

IX դ. տեղի ունեցող իրադարձությունները հանգեցրեցին Հայոց տերության կազմում Աղվանից թագավորության հիմնադրմանը: Խնդրո առարկա ժամանակաշրջանում Աղվանքի պատմության, վարչաքաղաքական իրավիճակի, ինչպես նաև այնտեղ իշխողների ազգային ու տոհմային պատկանելության հարցերում հայ ուսումնասիրողները միասնական կարծիք չունեն, որն էլ հնարավորություն է տալիս ադրբեջանական պատմաբաններին՝ շատ դեպքերում հենվելով հենց հայ ուսումնասիրողների աշխատությունների վրա, նենգափոխելու պատմական իրականությունը:

Պետք է նշել, որ ադրբեջանական պատմաբանները Աղվանքի հարցում գրեթե ամբողջությամբ հիմնվում են Զ. Բունիաթովի տեսության վրա, որին մանրամասնորեն անդրադարձել ենք նախկինում[1]:

Սակայն վերջին ժամանակաշրջանում Ադրբեջանում ի հայտ են գալիս պատմության կեղծարարության խրոնիկական այլակերպումների դրսևորումներ: Ներկայումս բունիաթովական տեսության հետևորդները՝ օգտագործելով համացանցային և այլ քարոզչական հնարավորությունները և ելնելով զուտ քաղաքական դրդապատճառներից, փորձում են նաև «ապացուցել», թե իբր հայերը Այսրկովկասում հայտնվել են ուշ միջնադարում, ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը «Արևմտյան Ադրբեջան»-ն է, ադրբեջանական պետության ար-

---

[1] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 40-43, 131-137:

մատները բխում են Աղվանքից, Ատրպատականի Սաջյանների պետությունից և այլն[1]:

2001 թ. Բաքվում անցկացվեց «Կովկասյան Ալբանիայի էթնոմշակութային ժառանգությունը» խորագրով միջազգային կոչված մի խորհրդաժողով[2], որտեղ Ֆ. Մամեդովան, Ռ. Մելիքովը և այլք հանդես եկան հակապատմական և հակագիտական զեկուցումներով՝ հիմնական առանցք ունենալով Աղվանքի պատմության նենգափոխումը և հակահայկական քարոզչությունը[3]: Ֆ. Մամեդովան, որի զեկուցումը վերաբերում էր Աղվանքի և Հայաստանի պատմական աշխարհագրության հիմնախնդիրներին, մասնավորապես ներկայացրեց, թե իբր «Հայկական թագավորության վերածնման փորձեր ձեռնարկվեցին IX-XI և XII-XIV դդ. Փոքր Ասիայի տարածքում, այսպես կոչված «թափառող պետություններ»: IX-XI դդ. Կարսի և Էրզրումի շրջանում ստեղծվեց Բագրատունիների հայկական թագավորությունը (մայրաքաղաքը՝ Անի)»[4]: Ինչպես տեսնում ենք, նույնիսկ այդ թռուցիկ ակնարկն ակներևաբար ցույց է տալիս Ֆ. Մամեդովայի «նպատակային» ու կեղծ մոտեցումը Հայոց պատմությանը վերաբերող պատմական և պատմաաշխարհագրական խնդիրներին:

Վերոհիշյալ «ուսումնասիրություններ»-ն այնքան բռնազբոսիկ և հակագիտական են, որ դրանց անդրադարձ կատարելը պետք է դարձնել առանձին աշխատության խնդիր: Բացի այդ, ժամանակագրական առումով վերոհիշյալ միջոցառումները զուտ հպանցիկ են անդրադարձել խնդրո առարկա ժամանակաշրջանին՝ հիմնական թիրախ ունենալով Աղվանքի պատմության վաղ և ուշ միջնադարյան շրջանները:

Ինչ վերաբերում է մեր սույն հետազոտությանը, ապա մենք մի քանի անհրաժեշտ անդրադարձ կկատարենք Զ. Բունիաթովի և որոշ այլ ադրբեջանական հեղինակների աշխատություններին:

---

[1] Ադրբեջանական պատմաբանների նմանատիպ «ուսումնասիրությունները» տե՛ս "Историческая география Западного Азербайджана", составитель С. Асадов, Баку, 1998, "Исторические факты о Карабахе", Баку, 2009: Տե՛ս նաև http://www.bakililar.az/ca/history/ կայքում:

[2] Խորհրդաժողովի միջազգային լինելը պայմանավորված էր ռուս և ուկրաինացի մասնակիցների ներկայությամբ, որոնց զեկուցումները հիմնականում շրջանցում էին այն նպատակը, որը դրված էր խորհրդաժողովի առաջ: Չնայած, օրինակ՝ ուկրաինացի Գ. Խալիմոնենկոյի զեկուցումը վերնագրված էր «Ադրբեջանի պատմական աշխարհագրությունն Ուկրաինայի ուսումնական հաստատությունների ադրբեջանագիտության ուսումնական ծրագրում»:

[3] Խորհրդաժողովի նյութերը տե՛ս http://www.bakililar.az/ca/photos/parts.html կայքում:

[4] Տե՛ս **Ф. Мамедова**, Об историчекой географии Кавказской Албании, Армении и албанском этносе,- http://www.bakililar.az/ca/photos/parts.html.

Աղվանից թագավորության ստեղծումը սերտորեն կապված է Հայոց Արևելից կողմերի իշխաններից Սահլ Սմբատյանի գործունեության հետ:

Համաձայն Թովմա Արծրունու մի տեղեկության, որն ուսումնասիրողների կողմից տարբեր մեկնաբանություններ է ստացել, Արաբական խալիֆայության Բուղա զորավարի կողմից գերեվարված հայ իշխանների թվում էր «...Սահլ Սմբատայ որդի[1], Շաքեոյ տէր, որ զԲաբանն կալաւ»[2]:

Հայոց Արևելից կողմերի պատմիչ Մովսես Դասխուրանցին Սմբատի որդի Սահլին անվանում է «արի եւ շքեղատեսակն Սահլ Սմբատեան Եռանշահիկն տէր»[3], Եռանշահիկների կամ Առանշահիկների տոհմը՝ «զնախնական ազգն Հայկազնեանց»[4], իսկ իրենց՝ Եռանշահիկներին՝ «Հայկազանց արք»[5]: Այնուհետև հեղինակը Սահլի մասին գրում է, որ նա «յարքայից Զարմիրիական տոհմէն էր»[6]: 837 թ. Սահլը՝ Խուրամյան շարժման առաջնորդ Բաբեկին ձերբակալելու համար, արաբներից իշխանություն է ստանում «ի վերայ Հայոց, Վրաց եւ Աղուանից»[7]: Գրականության մեջ ընդունված է համարել, որ այդ իշխանությունը ժառանգում է «տերանց տէրն Յովհաննէս, որ Հայոց, Վրաց եւ Աղուանից եղեւ տէր»[8]: Այնուհետև Համամ անունով իշխանը «զկործանեալ թագաւորութիւն տանս Աղուանից նորոգեաց», ընդ որում՝ ըստ Մովսես Դասխուրանցու՝ «որպէս Աշոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւնն. այսք ի միում ժամանակի գործեցան»[9]:

Միքայել Ասորու՝ Բաբեկին ձերբակալելու վերաբերյալ հիշատակության մեջ Սահլն անվանված է Սահակ («Սահակ իշխանն Հայկազուն»)[10], ինչից կարելի է եզրակացնել, որ Սահլը հայ իշխանի անվան արաբական ձևն է, իսկ նրա հայկական անունը եղել է Սահակ[11]:

---

[1] Հայկական սկզբնաղբյուրներում Սահլը կոչվում է «Սահլ Սմբատայ որդի» (**Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 298, **Վարդան Վարդապետ**, էջ 86), «Սահլ Սմբատեան Եռանշահիկ» (**Մովսես Կաղանկատվացի**, էջ 326), իսկ արաբական աղբյուրներում՝ «Սահլ իբն Սնբատ» (بلاذري, I, էջ 248, طبري, IV, էջ 317-332, ابن الاثير, V, էջ 240-245, Jacubi, II, էջ 577-579 և այլն):

[2] **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 296-298:

[3] **Մովսես Կաղանկատվացի**, էջ 326:

[4] Անդ, էջ 172:

[5] Անդ, էջ 338:

[6] Անդ, էջ 330:

[7] Անդ, էջ 330:

[8] Անդ, էջ 330-331:

[9] Անդ, էջ 335:

[10] Տե՛ս **Միքայէլ Ասորի**, ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1879, էջ 365:

[11] Տե՛ս **C. Toumanoff**, Manuel de Généalogie et de Chronologie pour le Caucase chrétien (Arménie, Géorgie, Albanie), 1976, էջ 69-70 :

Ուսումնասիրողներից ոմանք (Ն. Ադոնց և այլք) Աղվանից կամ Շաքիի կոչված իշխանության ստեղծման համար հիմնվում են «Քարթլիս ցխովրեբա»-յի տեղեկությունների վրա: Այդ իշխանության առաջացման մասին «Քարթլիս ցխովրեբա»-ն հաղորդում է, որ 774-775 թթ. ապստամբությունից հետո «եկին ի Տարոնոյ եղբայրք երեք (սրանք Ատրներսեհ Կույր կոչվող իշխանի եղբոր որդիներն էին, որին Ն. Ադոնցը նույնացնում է կուրացված Հայոց իշխան Աշոտ Բագրատունուն[1] (732-748)[2]) և բնակեցան մինչև ցԳաղգաղ (կամ Գուլգուլ, ներկայումս համանուն գյուղ Թելավ քաղաքի մոտակայքում-Ա.Ե.) հրամանաւ Արչիլին»[3]: Ապա, վրացական աղբյուրն ավելացնում է, որ այդ «երեք եղբայրները...Տարոնից էին եկել Շաքի ու հաստատվել այնտեղ Արչիլի հրամանով, քանի որ Կովկասի բոլոր ծայրերը Ռանի[4] կողմից անբնակ էին դարձել... և երեք եղբայրները հաստատվեցին մինչև Գուղգուղ (Գուլգուլ[5])»[6]:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև Վախուշտ Բագրատիոնի՝ խնդրո առարկային վերաբերող հաղորդմանը: Այն խճճված է և, մեր կարծիքով, ուսումնասիրողների կողմից սխալ է հասկացվել կամ էլ հարմարեցվել է «Քարթլիս ցխովրեբա»-յի վկայությանը: Այն, ընդհանուր առմամբ, ունի հետևյալ բովանդակությունը: Առասպելական էրոսը երկու Ալազան գետերի (իմա՛ Իոր և Ալազան գետերը-Ա.Ե.) ջրկիցի մոտակայքում կառուցել է էրեթի (Հերեթ) կոչվող քաղաքը, որը հետագայում կոչվեց Խորանթա: Նույնպես առասպելական Քարթլոսի կողմից նրան տրված իշխանությունը, որը նրա անունից կոչվեց Հերեթ, տարածվում էր Իոր և Ալազան գետերի ջրկիցից մինչև Տկետբա քաղաքը՝ Թելավի մոտակայքում՝ ընդգրկելով այդ գետերի միջագետքը[7]: Այսինքն՝ Հերեթը նույնանում է Կամբեճանի հյուսիսային հատվածին, որը տարածվում էր Իոր և Ալազան գետերի միջագետքում՝ Թելավի մոտակայքում գտնվող Գուղգուղ (Գուլգուլ) բնակավայրից մինչև վերոհիշյալ գետերի ջրկիցը: Հետագայում վրացական Փառնավազ թագավորից իշխանություն ստա-

---

[1] **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 478-482:

[2] Տե՛ս նաև **Ա. Տեր-Ղևոնդյան**, «Հայոց իշխանը» արաբական տիրապետության ժամանակաշրջանում,-«ՊԲՀ», 1964, թիվ 2, էջ 130:

[3] «Քարթլիս Ցխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը», լույս ընծայեց Ի. Աբուլաձեն, Թբիլիսի, 1953, էջ 199:

[4] Կամ Առան: Խոսքը Աղվանք կոչված երկրամասի մասին է:

[5] Ներկայումս համանուն գյուղը Թելավ քաղաքի մոտակայքում:

[6] Տե՛ս **Զուանշեր Զուանշերյան**,-**Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, էջ 196:

[7] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 125, տե՛ս նաև **Ì. Ëîðäêèïàíèäçå**, նշվ. աշխ., էջ 273:

ցած բոլոր իշխանները և նրանց ժառանգորդները մշտապես ենթարկվում էին Վրաց թագավորներին: Նրանցից էր VIII դ. սկզբին Հերեթում իշխող Ադարնասե (իմա՛ Ատրներսեհ) իշխանը: Անհրաժեշտ է մեջ բերել Վախուշտ Բագրատիոնի՝ Ատրներսեհին վերաբերող վկայությունը, որպեսզի ցույց տրվի ուսումնասիրողների սխալն այս հարցում.«...Հետո Հերեթի իշխան դարձավ Ադարնասեն...: Եվ նրանք (իմա՛ Վրաց Փառնավազ թագավորից իշխանություն ստացած բոլոր իշխանները-Ա.Ե.) մշտապես ենթարկվում և ծառայում էին վրացական թագավորներին:...Իսկ Հերեթը նվաճեցին Ադարնասե Կույրի եղբորորդիները, որոնք խարանել էին իրենց հորեղբոր աչքերը: Եվ նվիրեց նրան տառապյալ Արչիլը Շակիխին ու Աբուխոսրո կնոջը: Եվ նվաճեցին որդիները նրա [հողերը] Շակիխիից մինչև Գուլգուլա և Վրաց իշխանաց իշխան Ջվանշերի մահից հետո տիրեցին ողջ Հերեթին և թագավորներ կոչվեցին...: Քրիստոսի 787 և վրացական 7 թվականին մահացավ իշխանաց իշխան Ջուանշերը:...հենց այդ ժամանակ Ադարնասեի եղբորորդիները նվաճեցին Հերեթը...»[1]: Ի՞նչ ենք տեսնում: Վրաց աղբյուրը հաղորդում է, թե Ատրներսեհը իշխում էր Հերեթում և մյուս թագավորների հետ միասին հավատարիմ էր վրացական թագավորներին: Այնուհետև տեղեկացնելով Ատրներսեհ Կույրի եղբորորդիների կողմից Հերեթի նվաճման մասին, գրում է, թե տառապյալ Արչիլը, որն, ըստ նույն այդ աղբյուրի, իշխել է 668-718 թթ., «նրան» (՞) նվիրեց Շաքի քաղաքը և կնության տվեց Աբուխոսրոյին: Անկասկած, «նրան» ասելով վրաց աղբյուրը նկատի ունի Ատրներսեհին: Իսկ ինչ վերաբերում է «Իսկ Հերեթը նվաճեցին Ադարնասե Կույրի եղբորորդիները, որոնք խարանել էին իրենց հորեղբոր աչքերը», տեղեկությանը, ապա այն, դատելով վերն արված պարզաբանումից, Վախուշտ Բագրատիոնի կողմից կատարված ընդմիջարկություն է: Խնդիրն այն է, որ Ատրներսեհ Կույրի եղբորորդիների հաստատումը Հերեթում և Շաքիում, ըստ Վախուշտի, տեղի է ունեցել 787 թ. հետո, իսկ Արչիլը իշխել է 668-718 թթ.[2], այսինքն՝

---

[1] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 125-126:

[2] Անդ: Վրացական աղբյուրների որոշ տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Արչիլի ժամանակակիցն է եղել Ասիմ ոստիկանը, որը իշխել է 744 թ. , սակայն դա սխալ է, քանի որ այդ Ասիմը եղել է դավաճան վրացական իշխան՝ Գարդամբել սկզբնական անունով, այլ ոչ թե արաբ ոստիկան (տե՛ս **Ջուանշեր Ջուանշերյան**,-**Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, էջ 196): Ն. Ադոնցը, հենվելով Մարկվարտի և Բրոսսեի տեսակետների վրա, փորձում է Արչիլի իշխանության շրջանը հասցնել մինչև VIII դ. վերջերը (տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 482-484): Սակայն, նա հաշվի չի առնում Ջվանշերի այն տեղեկությունը, որտեղ Արչիլն ասում է. «Յորժամ էանց ընդ երկիրս մեր Հերակլ՝ տղայ էի ես» (տե՛ս **Ջուանշեր Ջուանշերյան**,-**Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, էջ 196): Այս հաղորդումը խոսում է Վախուշտ

Վախուշտի հաղորդումը Շաքին նվիրելու մասին պետք է վերաբերի ոչ թե Ատրներսեհ Կույրի եղբորորդիներին, այլ Ատրներսեհ իշխանին, որն Արչիլի ժամանակակիցն էր: Իսկ «և նվաճեցին որդիները նրա [հողերը] Շակիխիից մինչև Գուլգուլա և Վրաց իշխանաց իշխան Ջվանշերի մահից հետո տիրեցին ողջ Հերեթին և թագավորներ կոչվեցին» հատվածը՝ դատելով մեր վերը կատարած քննությունից, անշուշտ, պետք է վերաբերի Ատրներսեհ Կույրի եղբորորդիներին, այսինքն՝ այն պետք է սրբագրել «Եվ նվաճեցին [Ատրներսեհ Կույրի եղբոր]որդիները նրա [հողերը] Շակիխիից մինչև Գուլգուլա և Վրաց իշխանաց իշխան Ջվանշերի մահից հետո տիրեցին ողջ Հերեթին և թագավորներ կոչվեցին»: Դրա ապացույցն է նաև վրացական հեղինակի վերոհիշյալ հաղորդումը, որ «հենց այդ ժամանակ (իմա՛ վրացական իշխան Ջվանշերի մահից (787 թ.) հետո-Ա.Ե.) Ադարնասեի եղբորորդիները նվաճեցին Հերեթը»: Վախուշտ Բագրատիոնը տեղեկացնում է, որ X դ. առաջին կեսին (սկսած 910 թ.) Հերեթում իշխում էր Ատրներսեհ անունը կրող մի թագավոր (ըստ որոշ ուսումնասիրողների՝ նա Սահլի թոռնորդին էր, որի մասին կխոսենք ստորև), որը, սակայն, Ծանարաց քորեպիսկոպոսի և Տփղիսի ամիրայի թշնամական գործողությունների հետևանքով վախից իրեն այլևս թագավոր չէր կոչում: Ծանարաց Կվիրիկե քորեպիսկոպոսը 915 թ. կազմակերպեց Աբխազաց թագավոր Կոստանդինի արշավանքն Ատրներսեհի իշխանության դեմ: Արշավանքը զգալի արդյունքներ չտվեց, և նրանք հաշտություն կնքեցին[1]: Ատրներսեհն իր որդի Իշխանիկին (կամ Իշխանակ)[2] ամուսնացրեց Վրաց իշխանաց իշխան Գուրգենի քրոջ՝ Դինարի հետ: Մինչև Իշխանակը Հերեթի բնակչությունը, սկսած Կասրեհ (իմա՛ Խոսրով Անուշիրվան (531-579)-Ա.Ե.)[3] ժամանակներից, հերձվածող էր (իմա՛ հայադավան-Ա.Ե.), որը վերացրեց Դինարը: Երբ մահացավ Իշխանակը, մնաց միայն Դինար թագուհին, և քանի որ վերջիններս ժառանգորդ չունեին, Վրաց թագավոր Բագրատը նվաճեց Հերեթը՝ Դինարի փոխարեն նշանակելով այլ իշխանի[4]: Ինչպես տես-

---

Բագրատիոնի հաղորդման օգտին, որ Բյուզանդիայի Հերակլ կայսեր (610-641) օրոք մանուկ եղած Արչիլն իշխել է VII դ. վերջին և VIII դ. սկզբին:

[1] Âàõóøòè Áàãðàòèîíè, էջ 127:

[2] Իշխանակի՝ Ատրներսեհի որդի և Համամ Բարեպաշտ արքայի թոռ լինելու փաստը արձանագրում է Անանիա Մոկացի կաթողիկոսը (տե՛ս «Արարատ», 1897, մարտ):

[3] Պարսից Խոսրով Անուշիրվան արքային Կասրե կամ Կասրա են կոչում վրացական ու արաբական սկզբնաղբյուրները (տե՛ս Леонти Мровели, Жизнь картлийских царей, извлечение сведений об абхазах, народах Северного Кавказа и Дагестана, перевод с древнегрузинского, предисловие и комментарии Г. Цулая, М., 1979, էջ 59, مسعودي, I, էջ 176 և այլն):

[4] Տե՛ս Âàõóøòè Áàãðàòèîíè, էջ 127:

նում ենք, վրաց աղբյուրների տեղեկությունները հակասական են և խնդրի լուծման համար հիմք ծառայել չեն կարող:

Թվում է, թե Վախուշտ Բագրատիոնը, որն օգտվել է «Քարթլիս ցխովրեբա»-յի տեղեկություններից, որոշ շտկումներ է մտցնում դրա հիշյալ հաղորդման մեջ: Եթե վերջինս նշում է, թե Տարոնից եկած Ատրներսեհ Կույրի եղբորորդիները Շաքիում հաստատվել էին Արչիլի հրամանով, ապա Վախուշտ Բագրատիոնը տեղեկացնում է, թե նրանք պարզապես եկել ու նվաճել են Հերեթը Արչիլի մահից շատ տարիներ հետո: Բացի այդ էլ, ըստ Վախուշտու՝ Արչիլը Շաքին նվիրել է Ատրներսեհ իշխանին: Արդեն ցույց տվեցինք, որ Արչիլի և Ատրներսեհ Կույրի եղբորորդիների՝ միևնույն ժամանակաշրջանում հիշատակությունը սխալ է: Ընդգծենք նաև, որ վրացական աղբյուրները Շաքիի իշխանական տան ծագման վերաբերյալ հաղորդումներում Սահլ իշխանի մասին բոլորովին չեն խոսում:

Արաբ աշխարհագետ Մասուդին վկայում է, որ X դ. սկզբին Շաքիում թագավորում էր «Ադարնարսեհ իբն Համամ»-ը (իմա՛ Համամի որդի Ատրներսեհ-Ա.Ե.): Վերջինիս թագավորությունը տարածվում էր Ծանարների երկրի (աս-Սանարիա)[1] և Կապաղակի (Կաբալա)[2] միջև[3]:

Ատրներսեհի որդի Իշխանակին հիշատակում է Իբն Հաուկալը: Խոսելով Հայաստանից ու այսրկովկասյան երկրներից արաբների կողմից գանձվող հարկերի մասին, արաբ հեղինակը հարկատուների թվում հիշատակում է Շաքիի տեր (սահիբ) Իշջանիկին (իմա՛ Իշխանիկ-Ա.Ե.), որն այլ կերպ կոչվում էր Աբու Աբդ ալ-Մալիք[4]:

Ադրբեջանական պատմաբան Զ. Բունիաթովը փորձում է նաև ժխտել Սահլ իշխանի հայ լինելու փաստը: Նա, հիմնվելով Սահլի մասին Մովսես Դասխուրանցու այն հաղորդման վրա, թե նա «յարքայից Զարմիրհական տոհմէն էր», մերժում է Սահլի հայկական ծագումը: Նա գրում է, թե իբր Մովսես Դասխուրանցու այդ հաղորդումը ցույց է տալիս, թե «Սահլը ալբանական արքայական Զարմիրհ տոհմի ժառանգն էր, որի միակ ներկայացուցիչը կենդանի թողնվեց Միհրանյան Վարդանի կողմից»[5]: Նա հաշվի չի առնում Մովսես Դասխուրանցու այն տեղեկությունը, որտեղ պատմիչը Սահլին անվանում է «արի և շքեղա-

---

[1] Ծանարների երկիրը տարածվում էր Թերեք գետի ակունքների և հարևան շրջաններում (տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 56):

[2] Նույնական էր ներկայիս Կաբալա գյուղին (Չուխուր Կաբալա), որը գտնվում է Նիջ գյուղի մոտակայքում (անդ, էջ 58):

[3] مسعودي, I, էջ 204-205:

[4] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 354:

[5] Տե՛ս **З. Буниятов**, նշվ. աշխ., էջ 185:

տեսակն Սահլ Սմբատեան Եռանշահիկն տէր»: Բացի այս, պատմիչի մի այլ հետաքրքիր հաղորդումից պարզվում է, թե ինչ նկատի ունի նա, երբ, Սահլին սկզբում Եռանշահիկ անվանելով, քիչ անց Զարմիրիական տոհմի ժառանգ է ներկայացնում: Պատմելով Միհրական տոհմից «քաջ» կոչված Վարդանի[1] դավադրության մասին, որի նպատակն էր իսպառ վերացնել Առանշահիկներին, Մովսես Դասխուրանցին հաղորդում է, որ նա կենդանի թողեց «ի նոցանէն զփեսայացեալն իւրում ցեղին Զարմիհրն[2] Եռանշահիկ»[3]: Անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրողները Մովսես Դասխուրանցու հիշյալ հաղորդումից եզրակացրել են, թե եղել է Միհրանյաններին փեսայացած մի Զարմիհր[4] կամ Արմիհր[5] անունով Առանշահիկ իշխան, որին Քաջ Վարդանը խնայել է: Պատճառն այն է, որ, օրինակ՝ Բ. Ուլուբաբյանն այդ նախադասությունը քննության է առնում առանց «զփեսայացեալն իւրում ցեղին» բառերի, այսինքն՝ ստացվում է, որ Վարդան Քաջը կենդանի «թողոյր ի նոցանէ զԱրմիհրն Եռանշահիկ»[6]: Սակայն, այդ հաղորդումն ընդհանուր առմամբ քննության առնելիս պարզ է, որ մի ոմն Առանշահիկ իշխան փեսայացած է եղել «իր (Քաջ Վարդանի-Ա.Ե.) ցեղին: Իսկ Քաջ Վարդանին Մովսես Դասխուրանցին անվանում է «քաջն Վարդան ի Միհրական տոհմէն»[7]: «...յարքայից Զարմիրիական տոհմէն» արտահայտությունը Սահլի մասին, որն, ինքնըստինքյան, ապացույցն է «Զարմիրի» անվան՝ տոհմանուն լինելու փաստի, մեր կարծիքով, պատմիչի նպատակաուղղվածության արտահայտությունն է՝ Սահլին արքայական տոհմից սերված ցուցադրելու: Եզրակացությունը միանշանակ է. պատմիչը Սահլին երբեմն Եռանշահիկ կամ Առանշահիկ է անվանում, քանզի նա ծագումով

---

[1] Ըստ Մովսես Դասխուրանցու՝ երբ պարսից Խոսրով Բ Փարվեզ թագավորը (591-628) Բյուզանդիայի Մորիկ կայսեր օգնությամբ գրավում է պարսից գահը և փորձում վրեժխնդիր լինել իր սպանված հոր՝ Որմիզդ արքայի համար, վրեժից խուսափելով Միհրան անունով նրա մի ոմն ազգակիցն իր հետ վերցնելով 30 հազար ընտանիք՝ գալիս է Ուտի գավառի Պարտավ քաղաքը: Նրա նպատակն էր անցնել Խազարական թագավորություն՝ միանալու Խոսրով թագավորի թշնամիներին: Այս հասկանալով՝ Խոսրովը հաշտության գիր է ուղարկում՝ նրան հանձնելով այն շրջանը, որտեղ նա գտնվում էր: Այդ ժամանակ Միհրանը կանգ էր առել Գարդման գավառում: Եվ ահա թագավորի հրամանագրով ստանալով այդ հողերը՝ Միհրանյանները ծեռնամուխ են լինում տեղի իշխանական տան՝ Առանշահիկների, վերացմանը, և խնջույքի հրավիրելով՝ կոտորում են նրանց (տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 171-172):

[2] Մովսես Դասխուրանցին այս տոհմին մերթ Զարմիրի է կոչում, մերթ Զարմիհր:

[3] **Մովսես Կաղանկատվացի**, էջ 172:

[4] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 509:

[5] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 68-70:

[6] Անդ, էջ 69:

[7] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 304:

Առանշահիկ էր, երբեմն էլ Զարմիրիական տոհից, որը բխում էր նրա հեռավոր նախնու անունից: Իսկ «յարքայից Զարմիրիական տոհմէն» արտահայտությունն էլ հեշտությամբ բացատրելի է, քանզի հայտնի է, որ Միհրանյանները սերում էին Սասանյաններից[1]: Ուստի այստեղ ևս Զ. Բունիաթովը կեղծում է (կամ պարզապես անտեղյակ է)՝ հավատացնելով, թե Զարմիրիը հին ալբանական թագավորական հարստության անվանումն է[2]:

Կ. Թումանովը Սահլ Սմբատյանին համարում է Զառմիհր Առանշահիկի սերունդներից[3]:

Դեռևս Ա. Մնացականյանը ցույց է տվել, որ Զ. Բունիաթովը՝ փորձելով Սահլին ոչ հայկական ծագում վերագրել, հակասության մեջ է մտնում իր իսկ կողմից իր աշխատության հավելվածում տպագրված մի շարք վավերագրերի և վկայությունների այն տեղեկությունների հետ, որոնք ուղղակիորեն մատնանշում են Սահլի հայ լինելը[4]:

Վ. Մինորսկին մերժում է Սահլի Առանշահիկ լինելու տեսակետը և նրան կապում Տարոնի Բագրատունիների հետ[5]:

Պետք է նշել, որ Սահլի՝ Շաքիի տեր լինելու ուսումնասիրողների կարծիքին դեմ է նաև Բ. Ուլուբաբյանը: Նա սկզբնաղբյուրների այն միակ վկայությունը, որտեղ Սահլը հանդես է գալիս որպես Շաքիի տեր[6], համարում է մատենագրական թյուրիմացություն[7], որի վրա էլ խարսխված Ն. Ադոնցի այն վարկածը, թե Սահլն իրականում Բագրատունյաց տոհմի ներկայացուցիչ է եղել և Շաքիի իշխան[8]:

---

[1] Անդ, էջ 171:

[2] Անկասկած, Զ. Բունիաթովը նպատակ ունի այդ անվանումը տարածել Առանշահիկների տոհմի վրա, ապացուցելու համար, որ այն հայկական չէ: «Զարմիրիական» տոհմանունն Առանշահիկներին վերագրում է նաև Բ. Ուլուբաբյանը (ըստ նրա, տոհմանունն Արմիհրական էր և ոչ թե Զարմիրիական), բայց այլ հայեցակետից: Քանի որ, ինչպես վերևում տեսանք, հեղինակն համոզված էր, թե եղել է Արմիհր անունով Առանշահիկ իշխան, ուստի և նրա ժառանգորդները (Առանշահիկները) կարող էին կոչվել Արմիհրական: Իսկ ինչ վերաբերվում է «յարքայից Զարմիրիական տոհմէն» արտահայտությանը, ապա հայտնի է, որ Առանշահիկները նախկինում թագավորել են (տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 69):

[3] Տե՛ս **C. Toumanoff**, Studies in Christian Caucasian history, Georgetown University Press, 1963, pp. 257-258.

[4] Տե՛ս **Ա. Մնացականյան**, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Եր., 1966, էջ 83:

[5] Տե՛ս **V. Minorsky**, Caucasica IV, “Bulletin of the School of Oriental and African Studies”, University of London,1953, vol. 15, N 3, էջ 505-510:

[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 298:

[7] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 70:

[8] Անվանի հայագետը հենվում է Մարկվարտի՝ Հայ Բագրատունիների ծյուղագրության վերաբերյալ աշխատության վրա (տե՛ս «Հայ Բագրատունեաց ծիւղագրութիւնը»,

Ա. Հակոբյանը կարծում է, որ Թովմա Արծրունու տեքստում առկա «Սահլ...Շաքեոյ տէր»-ը պետք է համարել տեխնիկական թերություն, իսկ իրականում եղել է «Սահլ...Խաչենոյ տէր»[1]:

Ն. Ադոնցի եզրակացությունն ու այն ապացուցելու համար կատարված քննությունը տրամաբանական են: Եթե Շաքիում հաստատվել են երեք Բագրատունի եղբայրներ, ուստի մի քանի տասնամյակ անց Շաքիի տերը հանդիսացող իշխանը նույնպես պետք է Բագրատունի լիներ, մանավանդ, որ Աղվանից թագավորությունը «վերականգնող» Համամին կարելի է վերագրել Մխիթար Այրիվանեցու այն հաղորդումը, որտեղ մի ոմն Համամ անվանված է Հովհաննես Բագրատունի[2]: Բացի այդ, եթե Շաքիի տերը Սմբատի որդի Սահլն է, որին Մովսես Դասխուրանցին անվանում է Առանշահիկ, ապա նրա հայրանունն անգամ հուշում է նրա տոհմը, քանզի Սմբատ անունը մեծ տարածում ուներ Բագրատունյաց մեջ, իսկ մյուս իշխանական տներում այն հազվադեպ էր հանդիպում[3]: Նույն կարծիքը հայտնում է նաև Մ. Լորդկիպանիձեն[4]:

Գալով սկզբնապես Խաչենի իշխան հանդիսացող Սահլին[5] վերագրվող Շաքիին՝ նշենք, որ կասկածից վեր է, որ այն նույնական է այժմյան Շաքի-Նուխիին, որտեղ Սահլից հետո իշխում էին նրա սերունդները: Նրանց էին պատկանում, ինչպես կհամոզվենք ստորև, նաև Հերեթն ու Կամբեճանը: Վերջինը՝ ըստ «Աշխարհացոյց»-ի, մտնում էր Աղվանք կոչված երկրամասի մեջ, որը Մեծ Հայքին սահմանակցում էր

ծանօթութիւններով, գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մ. Հապոզեան, Վիեննա, 1913): Ն. Ադոնցին այս հարցում լիովին համամիտ է նաև **Ս. Բարխուդարյանը** (տե՛ս Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում,- «ՊԲՀ», 1971, թիվ 1, էջ 58-72):

[1] Տե՛ս **Ա. Յակոբեան,** Խաչէն-Խօխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը Թ.-ԺԳ. դարերում (քննական ակնարկ),-«Հանդէս ամսօրեայ», 2010, թիվ 1-12, էջ 71-170:

[2] Տե՛ս «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց»: Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 55: Սակայն, հարկ ենք համարում ընդգծել, որ այս Համամը, ամենայն հավանականությամբ, Աղվանից թագավորության «վերականգնողը» չէ, քանի որ Մխիթար Այրիվանեցին «Համամ, որ եւ Յովհաննէս Բագրատունի» արտահայտությունից հետո ավելացնում է, որ նա «մեկնեաց զառակսն եւ եդ զվերջի գուբղայսն ի գլուխ սաղմոսացն»: Այս տեղեկությունը հաստատում է նաև Վարդան վարդապետը. «Յաւուրս սորա (Հայոց Աշոտ թագավորի) էր Համամ, որ գրեաց մեկնութիւն Առակացն եւ Քերականին» (**Վարդան վարդապետ**, էջ 91): Բ. Ուլուբաբյանն ճիշտ ձեւով տարբերակում է երկու Համամներին (տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 78-79):

[3] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 509:

[4] Տե՛ս **Ì. Ëîðäêèïàíèäçå**, նշվ. աշխ., էջ 273-274:

[5] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 326, 340: Տե՛ս նաև **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 64:

Կուր գետով[1]: Կամբեճան գավառի տարածքը նույնական էր ներկայիս Շիրակի դաշտավայրին[2]: Շաքի քաղաքը նույնական է ներկայիս Շաքի կամ Նուխի քաղաքին, իսկ Շաքի գավառը՝ Շաքիի կամ Նուխիի շրջանին[3]:

Բ. Ուլուբաբյանը, ինչպես տեսանք, այն կարծիքին է, թե այն միակ վկայությունը, որտեղ Սահլը հիշված է որպես Շաքիի տեր, սոսկ թյուրիմացություն է: Այդ կարծիքին նրան մղում են հայ և արաբ մատենագիրների տեղեկությունները, որոնք Սահլի կյանքն ու գործունեությունը կապում են կուր-երասխյան միջագետքի հետ[4]: Բայց ուսումնասիրողը նաև իրավացիորեն համոզված է, որ Շաքիում թագավորողների տոհմը սերում էր Սահլից, որի թոռ Համամը, որը վերականգնեց Աղվանից թագավորությունը, վերատիրել էր Կամբեճանին ու Շաքիին, քանի որ նախկինում Հայոց Արևելից կողմերի իշխանները տիրում էին Կամբեճանին[5]: Համամից հետո Կամբեճանի ու Շաքիի հատվածում իշխում էր նրա որդին՝ Ատրներսեհը[6]: Ահա՛, այս Շաքին է միայն, որ այնքան հաճախ հիշատակում են արաբ հեղինակները և, որի տերը Սահլն էր ըստ Թովմա Արծրունու:

Հարազատ մնալով Հայոց Արևելից կողմերի պատմիչի տեղեկություններին՝ նշենք, որ Սահլն իրականում Առանշահիկ (կամ Եռանշահիկ) է եղել, իսկ Բագրատունի տոհմանունը նրան տրվել է՝ լոկ վրացական աղբյուրների տեղեկությունների հիման վրա: Մեր կարծիքով, «Քարթլիս ցխովրեբա»-յի և Վախուշտի վերոհիշյալ տեղեկությունները պետք է, որ քաղաքական նպատակադրվածության արդյունք լինեն, ուղղված վրացական Բագրատունիների՝ Շաքիին տիրելը պատմականորեն հիմնավորելուն: Վրաց մատենագիրները՝ տեղյակ լինելով 774-775 թթ. ապստամբությունից հետո Հայ Բագրատունիների ճյուղի՝ Կղարջքում հաստատվելու փաստին, նման մի բան էլ Շաքիի համար են հնարել[7]՝ ցույց տալու համար ինչպես Գուգարքի, այնպես էլ Շաքիի պատկանելությունը Վրաց Բագրատունիներին: Իսկ Շաքիում հաս-

---

[1] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 28-29. «Աշխարհ Աղբանիա, այսինքն Աղուանք...մինչեւ ցՀայոց սահմանաւ, առ Կուր գետով»:

[2] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 57:

[3] Անդ, էջ 73: Տե՛ս նաև Â. Ì è í î ðñêèé, նշվ. աշխ., էջ 116:

[4] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 70-71:

[5] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության, էջ 246:

[6] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 82:

[7] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 489: Հնարավոր է նաև, որ իրոք VIII դ. վերջին Հերեթում Բագրատունիներ են հաստատվել, բայց հետագայում արաբներն այն հանձնել են Սահլ Սմբատյանին:

տատվածների գաղթի ժամանակն էլ Վախուշտ Բագրատիոնը հարմարեցրել է Կղարջքում Բագրատունիների հաստատվելու ժամանակի հետ՝ ապացուցելու, որ այդ Բագրատունիները մեկ միասնական ճյուղի անդամներ են, որոնց ջանքերով հիմնադրվեց վրացական թագավորությունը: Փաստորեն, եթե Կղարջքում հաստատվել էր կուրացված Աշոտ իշխանի որդի Վասակն իր ժառանգներով[1], ապա Շաքիում էլ հաստատվել են նույն Աշոտի եղբորորդիները: Բացի այս, «Քարթլիս ցխովրեբա»-յի և Վախուշտի տեղեկությունները, ինչպես արդեն ցույց ենք տվել, բավական մշուշոտ են ու մեծ մասամբ հակասում են պատմական իրողություններին: Ըստ այդ աղբյուրների, Շաքիում հաստատված երեք եղբայրները «Կույր» կոչվող Ատրներսեհի եղբորորդիներն են եղել, որոնք հեռացել են իրենց հորեղբորը կուրացնելուց հետո: Ն. Ադոնցը, հետևելով Հ. Մարկվարտին, Ատրներսեհ Կույրին իրավացիորեն նույնացնում է 747-750 թթ. ապստամբության ժամանակ կուրացված Աշոտ Բագրատունու հետ[2]: Հայտնի է, սակայն, որ վերջինիս կուրացրել են ոչ թե իր եղբորորդիները, այլ Գրիգոր Մամիկոնյանը՝ ի վրեժ իր տանջամահ արված Դավիթ եղբոր[3]: Բացի այդ, «Քարթլիս ցխովրեբա»-ն հաղորդում է, թե Վրաց իշխան Արչիլն է Ատրներսեհ Կույրի եղբորորդիներին նվիրել Շաքին, այսինքն՝ ուզում է ցույց տալ, թե Շաքին Վիրքի կազմի մեջ էր մտնում նույնիսկ արաբական տիրապետության ժամանակաշրջանում, չնայած, ինչպես համոզվեցինք, Արչիլի իշխանության և Բագրատունիների՝ Շաքիում հաստատվելու ժամանակները չեն համապատասխանում: Այդ նկատել է նաև Վախուշտ Բագրատիոնը՝ փորձելով հարթել այդ խնդիրը: Ուստի և մենք «Քարթլիս ցխովրեբա»-յի և Վախուշտու հիշյալ տեղեկությունները համարում ենք նպատակադիր այլափոխումներ, մանավանդ, որ հայկական սկզբնաղբյուրներն այդպիսի պատմական իրադարձություն չեն հիշում:

Սահլի թոռնորդի ու Համամի որդի Ատրներսեհի ժամանակ, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, որը եղել է Աղվանից թագավորությունում, վերջինիս բնակիչները «ի ժողովրդենէն մերմէ և խաշն արօտի մերոյ էին»[4]: Ըստ որում՝ «՝ի ժողովրդենէն մերմէ» արտահայտությունը տեղի բնակչության հայ լինելու մասին է, իսկ «խաշն արօտի մերոյ»-ն՝ դրա հայադավանության մասին: Այդ են ցույց տալիս նաև վրացական

---

[1] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 83:

[2] Տե՛ս **Ն. Ադոնց**, նշվ. աշխ., էջ 98, 109:

[3] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 123-124: Գրիգորն այդ գործը հանձնարարեց իր սպանված եղբայր Դավթի ծառաներին:

[4] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 220:

աղբյուրները, որոնց տեղեկություններին արդեն անդրադարձել ենք: Հավելենք, որ դեռեւս VI դ. Վիրքի հոգևոր առաջնորդը՝ Դավիթ Գարեջեցին, Կամբեճանում ստիպված է եղել խոսել հայերեն[1]: Վրաց մատենագիր Արսեն Սափարացին (IX դ.), պատմելով Հովհան Մայրավանեցու մասին, թե ինչպես Թեոդորոս Ռշտունին նրա ճակատին աղվեսադրոշմ խարանեց, հաղորդում է, որ նա փախուստի դիմեց կովկասյան լեռնականների մոտ, որոնք նրան չընդունեցին, որից հետո նա «անցավ Կամբեչովան (իմա՛ Կամբեճան-Ա.Ե.)՝ տիրելով Փոքր ծորին, որ «Հայոց (Սոմխիթի) ծոր» է կոչվում»[2]: Շաքե-Կամբեճանի միասնական իշխանության ստեղծումը ցույց է տալիս, որ այդ ժամանակ արդեն հայաբնակ պետք է լիներ Բուն Աղվանից աշխարհի Շաքե գավառը: Ատրներսեհի որդի Իշխանակի օրոք, ըստ Անանիա կաթողիկոսի՝ Աղվանից թագավորը «էր դարձեալ յաղանդն Քաղկեդոնի եւ մոռացեալ զհարցն դաւանութիւն»[3]: Այդ քայլն Իշխանակը կատարել էր մոր՝ Դինարի դրդմամբ[4]: Իշխանակի մահից հետո Աղվանից թագավորությունը նվաճվեց Վրաց թագավորության կողմից:

Անհրաժեշտ ենք համարում լուսաբանել ևս մեկ կնճռոտ խնդիր: Ս. Բարխուդարյանը կարծում է, որ Դինարը եղել է Ատրներսեհի կինը և Իշխանակի մայրը[5]: Նրան այդ տեսակետին մղում է Վախուշտի 917 թ. վերաբերող մի հաղորդումը. «Հիշատակ է անվան Ատրներսեհ (Ադարնասէ) պատրիկի և նրա որդու՝ Դինար թագուհու ամուսնու և նրանց որդի Իշխանիկի»[6], թեև այդ հաղորդումը ավելի շատ հակասություններ է ծնում, քան հաստատում ուսումնասիրողի տեսակետը, քանի որ Իշխանիկ-Իշխանակը Ատրներսեհի որդին էր, իսկ բերված տեղեկությունից պարզվում է, որ Իշխանակը Ատրներսեհի թոռն է եղել, ինչը չի համապատասխանում իրականությանը: Վախուշտի մոտ կարդում ենք նաև. «Իսկ Ադարնասե պատրիկը իր որդուն կին բերեց Ադարնասեի դստերը և իշխանաց իշխան Գուրգենի քրոջը, որը Աշոտ կուրապաղատի ծոռն էր: Իսկ մինչև նրա որդի Իշխանիկը Հերեթը, սկսած Կասրեի ժամանակ-

---

[1] Տե՛ս **Անանուն,-Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 98: Տե՛ս նաև **Ա. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 51:

[2] Անդ, էջ 46-47:

[3] Տե՛ս «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից»,-«Արարատ», 1897, մարտ, էջ 143-144:

[4] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 34:

[5] Տե՛ս **Ս. Բարխուդարյան**, Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում, էջ 69:

[6] Տե՛ս **Արսեն Սափարացի,-Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. Ա, էջ 67:

ներից, հերձվածող էր»[1]: Այս տեղեկությունը ցույց է տալիս, որ Դինարը Իշխանակի կինն է եղել և ոչ թե մայրը: Սակայն, «Քարթլիի մատյան»-ը տեղեկացնում է, որ Դինարը Իշխանակի մայրն է եղել[2]: Ընդհանուր առմամբ, «Քարթլիի մատյան»-ը Դինարին համարում է իշխանաց իշխան Գուրգենի դուստրը[3], Վախուշտ Բագրատիոնը՝ քույրը[4], իսկ «Քարթլիս ցխովրեբա»-ն մի դեպքում Դինարին համարում է իշխանաց իշխան Գուրգենի քույրը[5], իսկ մեկ այլ դեպքում՝ տեղեկացնում, որ «...Իշխանիկը Գուառամ իշխանաց իշխանի քեռորդին էր, Գուառամի քույր Դինար թագուհին ուղղափառ դարձրեց այն Հերեթը»[6]: Եթե անգամ թեականորեն ընդունենք, որ Գուառամը Գուրգեն անվան աղավաղումն է, ապա հարցը դրանով չի լուծվի, քանի որ Դինարը, ինչպես տեսանք, մի դեպքում հիշված է որպես Գուրգենի քույր, մեկ այլ դեպքում՝ որպես դուստր: Եթե ընդունենք, որ Գուառամը եղել է Գուրգենի որդին, ապա Դինարը պետք է լինի Գուրգենի դուստրը, քանի որ վերջինս Գուառամի քույրն էր, սակայն այդ դեպքում Իշխանակը պետք է լիներ Գուառամի քրոջ ամուսինը: Եթե Դինարը Գուրգենի քույրն էր, ապա Իշխանակը պետք է լիներ Գուառամի հորաքրոջ որդին կամ ամուսինը: Մեր կարծիքով, դատելով վերոբերյալից, եզրակացությունը միակն է. գոյություն են ունեցել երկու Դինար՝ մեկը Գուրգենի քույրը, իսկ մյուսը՝ դուստրը: Առաջինը կնության էր տրվել Համամի որդի Ատրներսեհին, իսկ երկրորդը՝ Ատրներսեհի որդի Իշխանակին: Մենք հակված ենք այս տեսակետին, քանի որ այն փաստը, որ մի կողմից վրացական աղբյուրները Դինարին հիշատակում են որպես Գուրգենի քույր կամ դուստր, իսկ մյուս կողմից՝ որպես Իշխանակի մայր կամ կին, դրա օգտին է: Կարելի է կարծել, որ վրացական իշխանները Աղվանից թագավորության նկատմամբ վարում էին հետևյալ քաղաքականությունը. նրանք իրենց իշխանական տան կանանց կնության էին տալիս տեղի թագավորներին, որպեսզի նրանց օգնությամբ կարողանան տիրել այդ թագավորությանը և վրացադավան դարձնել տեղի հայությանը, ինչն էլ, ի վերջո, տվեց իր պտուղները: Փաստորեն, Շաքիի Առանշահիկները կնության են առել վրացական Բագրատունիների տնից երկու իշխանուհու՝ Դինար անունով: Ըստ որում, «Քարթլիի մատյանի» համաձայն, ինչպես տեսանք,

---

[1] **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 127:
[2] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 34:
[3] Անդ:
[4] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 127:
[5] Տե՛ս **Անանուն,-L. Մելիքսեթ-Բեկ**, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. Ա, էջ 203:
[6] Անդ, էջ 203:

տեղի հայությանը վրացադավանություն է պարտադրել Իշխանակի մայր Դինարը:

Ցարդ Աղվանից թագավորության «վերականգնող» Համամ Բարեպաշտի՝ այս կամ այն իշխանական տոհմին պատկանելու խնդիրն ուսումնասիրողները լուծել են՝ նրան այս կամ այն անձին նույնացնելու միջոցով: Սկզբից եթ լուսաբանենք մի կնճռոտ խնդիր: Համամին թագավոր է կոչում միայն Մովսես Դասխուրանցին[1], իսկ Հովհաննես Դրասխանակերտցին Հայոց Սմբատ Ա Բագրատունի արքայի օրոք (890-914) նրան անվանում է «մեծ իշխանն արևելից Համամ», որը Հայոց թագավորի հրամանով գնում է բանակցելու արաբների հետ՝ Հայոց կաթողիկոսին գերությունից ազատելու նպատակով[2]: Անշուշտ, Հովհաննես Դրասխանակերտցին՝ Համամին «արևելից մեծ իշխան» կոչելով, նկատի ունի նրա կարգավիճակը Հայոց թագավորության համակարգում, քանի որ Սմբատ Ա-ի թագավորության սահմանները տարածվում էին մինչև Կովկասյան լեռներն ու Ալանաց դուռը՝ ընդգրկելով թե՛ Վիրքը և թե՛ Աղվանք կոչված երկրամասը[3]: Անկասկած, «Արևելից մեծ իշխան»-ը Հայոց թագավորության համակարգում հանդես էր գալիս որպես այդ թագավորության արևելյան հատվածի իշխան: Համամի որդի Ատրներսեհին Հովհաննես Դրասխանակերտցին կոչում է «թագաւորն Ատրներսեհ»[4]: Ստեփաննոս Օրբելյանը հավաստում է, որ երբ ստեղծվեց Արծրունիների թագավորությունը (908 թ.), այնուհետև Հայոց թագավորից թագ ստացավ Կղարջքի (Վրաց կոչված) Ատրներսեհ Բագրատունի իշխանը, որից հետո «թագ կապեաց և Աղուանին Համամ»[5]: Ատրներսեհի որդի Իշխանակին Իբն Հաուկալն անվանում է «սահիբ Իշջանիկ», այսինքն՝ «իշխան Իշխանիկ»[6]: Կարծում ենք, որ Համամի իշխանությունը՝ հանդիսանալով Հայոց թագավորության մաս, իսկ Համամը՝ գտնվելով Սմբատ արքայի գերիշխանության ներքո ու հանդիսանալով Հայոց թագավորության «արևելից մեծ իշխան», անշուշտ, «Աղվանից» թագավոր կոչվել չէր կարող: Վերևում տեսանք, որ Սմբատ Ա-ն

---

[1] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 335: Համամին թագավոր է կոչում նաև Ասողիկը (էջ 161), սակայն ակնհայտ է, որ պատմիչի մոտ շփոթ կա ավելի վաղ և ուշ ժամանակների իրողությունների միջև: Նրա պատմության համապատասխան գլխում հիշատակություն կա Հայոց կաթողիկոս և պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցու մասին, այսինքն՝ նա, անշուշտ, ծանոթ է եղել նշյալ դեպքերի ժամանակակից պատմիչի երկասիրությանը, որում Համամը հիշատակված է որպես «Արեւելից մեծ իշխան»:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 174:

[3] Անդ, էջ 142, 164, **Անանուն Զրուցագիր**, էջ 159, 163 և այլն:

[4] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 220:

[5] **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 299:

[6] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 354:

Համամին թագ տվեց և հռչակեց «Աղվանից» թագավոր 894 թ.: Ուստի, Մովսես Դասխուրանցու այն պնդումը, թե իբր Համամը «վերականգնել» է Աղվանից թագավորությունը Աշոտ Ա-ի հետ միաժամանակ, թերևս պատմիչի ստեղծագործությունն է: Քանի որ Համամի որդի Ատրներսեհը, ըստ Վախուշտի, սկզբում թագավոր լինելով, հետագայում վախենում էր իրեն այդպես կոչել, նույն կարգավիճակը պահպանում էր նաև նրա որդի Իշխանակը՝ կոչվելով իշխան, չնայած, որ Անանիա Մոկացին նրան թագավոր է կոչում[1]: Փաստորեն, խոսք անգամ լինել չի կարող այն մասին, որ Համամը վերականգնել է Աղվանից թագավորությունը: Նա, հանդիսանալով Հայոց թագավորության «արևելից մեծ իշխան», թագ է ստացել Սմբատ Ա թագավորից՝ ճանաչելով նրա իշխանությունը:

Ն. Ադոնցը, որ Սահլին Բագրատունի էր համարում, նրա որդի Հովհաննեսին նույնացնում է մյուս որդի Մուավիային ու, քանի որ կա նաև Մխիթար Այրիվանեցու «Համամ, որ և Յովհաննէս Բագրատունի» հաղորդումը, իսկ ուսումնասիրողը, հանձինս այս Համամի, տեսնում է Աղվանից թագավորությունը «վերականգնողին», ուստի և ծնվում է ուսումնասիրողի այն կարծիքը, թե Հովհաննես-Մուավիան նույն ինքը Համամն է: Սակայն, Ն. Ադոնցն անհավանական է համարում եռակի անվանակոչումը և «Մուավիա» անունը համարում «Համամ» անվան աղավաղումը[2]: Մուավիա-Հովհաննես նույնացումն ընդունում է նաև Բ. Ուլուբաբյանը, սակայն, նա դեմ է հիշյալ անվանումները կրողի, որը Սահլի որդին էր, և Համամի նույնացմանը: Համամին նա նույնական է համարում Սահլի թոռանը՝ Ատրներսեհի որդի Գրիգորին[3]: Քանի որ Սահլը, ըստ Բ. Ուլուբաբյանի՝ Առանշահիկ էր, ուստի Առանշահիկ էր նաև Համամ-Գրիգորը: Բ. Ուլուբաբյանը նշում է, որ իբր, ըստ Մովսես Դասխուրանցու՝ Համամն ու Գրիգորը նույն անձն են: Համաձայն նրա՝ պատմիչի տեղեկություններից հետևում է, թե ինչպես Ատրներսեհի որդին ու Սահլի թոռն էր Գրիգորը, այնպես էլ Ատրներսեհի որդին ու Սահլի թոռն էր նաև Համամը: Ընդգծենք սակայն, որ Հայոց Արևելից կողմերի պատմիչի վկայությունը Ատրներսեհի որդի և Սահլի թոռ է ճանաչում միայն

---

[1] Տե՛ս «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից»,-«Արարատ», 1897, մարտ, էջ 144:

[2] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 510-511:

[3] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 75-77: Բ. Ուլուբաբյանը, հետևելով Ա. Կրիմսկուն, «Համամ» անունը պարզապես դիտում է որպես «Գրիգոր»-ի արաբերեն թարգմանություն: «Գրիգոր» մկրտչական անունը (որը նշանակում է «արթուն», «զգոն», «հոգատար») թարգմանվել է այն ժամանակ տարածված արաբական «Համամ»-ի, որը նույն արմատն ունի՝ լինել զգոն, հոգատար (տե՛ս Ëðû ì ñêèé À., նշվ. աշխ., էջ 374, ծանոթ. 6):

Գրիգորին, իսկ Համամի մասին նման տեղեկություն չի հաղորդում[1]:

Անդրադառնանք ուսումնասիրողների ուշադրությունից դուրս մնացած մի կարևոր իրողության: Հայտնի է, որ Սահլը՝ Բաբեկին ձերբակալելուց ու արաբներին հանձնելուց հետո, խալիֆայից ստացել էր իշխանությունն «ի վերայ Հայոց, Վրաց և Աղուանից»: Իբն ալ-Ասիրը հաղորդում է, որ արաբները Սահլին՝ Բաբեկին ձերբակալելու համար, տվել են պատրիկի կոչում[2], ինչը խոսում է Մովսես Դասխուրանցու հիշյալ հաղորդման օգտին: Սահլի որդին էր, թերևս, «տերանց տէրն Յովհաննէս, որ Հայոց, Վրաց և Աղուանից եղեւ տէր»: Եթե նա էր «տերանց տէր»-ն ու հորից «Հայոց, Վրաց և Աղուանից» իշխանության ժառանգողը, ուրեմն և նա էր որդիներից ավագն ու հոր ուղղակի ժառանգորդը: Սրան է վերաբերում Մեծիրանից Սբ. Հակովբի վանքի այն արձանագրությունը, որտեղ հիշվում է մի ոմն Հովհաննես. «ՅԲ (853 թ.-Ա.Ե.) թուականութե<ա>ն Հայո<ց> ի ժամանակ Յովանիսի Աղվան<ից> իշխանի ես Սողոմ<ոն> Մեծարանց եպիսկ<ոպոս> կանգնեցի զ<սուրբ>...»[3]: Այս Հովհաննեսին, ինչպես տեսանք, ուսումնասիրողներն հակված են նույնացնելու Սահլի Մուավիա անունով մյուս որդուն, որը, ըստ Իբն ալ-Ասիրի՝ հետագայում հոր հետ գերեվարվեց[4]: Պետք է նշել, որ Թովմա Արծրունին հավաստում է, որ Սահլի հետ գերի էր տարվել նրա որդի Ատրներսեհը[5]: Ի հակադրություն հիշյալ տեսակետների՝ մենք կարծում ենք, որ իրականում Հովհաննեսի ու Մուավիայի նույնացումը սխալ է, որ դրանք տարբեր մարդիկ են: Ուրեմն՝ պետք է, որ Սահլը երեք որդիներ ունեցած լինի, որոնցից Ատրներսեհն ու Մուավիան հոր հետ տարվել են Սամառա: Ավելին, եթե համեմատենք Իբն ալ-Ասիրի հաղորդումը Թովմա Արծրունու վկայության հետ, ապա կտեսնենք, որ նրանցից յուրաքանչյուրը վկայում է, որ Սահլի հետ գերության է տարվել նրա միայն մեկ որդին: Ըստ առաջինի, դա Մուավիան է, իսկ, ըստ երկրորդի՝ Ատրներսեհը: Ուստի առավել հավանական է (եթե, իհարկե, Սահլի՝ երեք որդիներ ունենալու մեր վերը բերված կարծիքը կասկածելի է) Ատրներսեհի ու Մուավիայի նույնացումը, մանավանդ, որ Թովմա Արծրունու «Ատրներսէհ Աղուանից իշխան»-ին համապատասխանում է Իբն ալ-Ասիրի «Առանի պատրիկ Մուավիա»-ն: «Աղվանից» իշխան Ատրներսեհը Սահլի որդին է: Իսկ եթե IX դ. 50-ական թթ. սկզբներին հոր

---

[1] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 340-341:
[2] Տե՛ս ابن الاثير, V, էջ 245:
[3] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ.Ա, էջ 509:
[4] Տե՛ս ابن الاثير, V, էջ 292:
[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 296-298:

կենդանության օրոք նա էր «Աղվանից» իշխանը, ուստի և Սահլի՝ Շաքիի տեր լինելու մասին վկայությանը պետք է լրջորեն վերաբերվել, մանավանդ, որ հոր ժառանգորդը, ինչպես տեսանք, նրա Հովհաննես որդին է եղել, որը, չնայած իր բարձրագոչ կոչմանը, այլևս չի հիշատակվում: Հավանական է, որ նա հոր հետ հաստատված լիներ Շաքիում, այն բանից հետո, երբ նրա հայրը խալիֆայից ստացել էր իշխանությունն «ի վերայ Հայոց, Վրաց և Աղուանից»: Զարգացնելով մեր տեսակետը՝ նշենք, որ հավանական է նաև, որ Սահլին «ի վերայ Հայոց, Վրաց և Աղուանից» իշխանություն տալը ձևական էր, քանի որ, ինչպես տեսանք, 838 թ. այդ կոչումը կրում էր արդեն Բագարատ Բագրատունին:

Թովմա Արծրունին, եթե որպես «Աղվանից» իշխան է հիշատակում (այս «Աղուանից» անվան տակ Թովմա Արծրունին նկատի ունի Հայոց Արևելից կողմերը) Սահլի որդի Ատրներսեհին, ապա Սահլն էլ իշխելու էր խալիֆայից ստացած իշխանության մյուս հատվածում, այն է՝ Շաքիում, Կամբեճանում ու Հերեթում, սակայն, պահպանելով գերագույն իշխանապետությունը: Իսկ Հովհաննեսը՝ հոր անմիջական ժառանգորդը, առանց կասկածի, նրա կողքին պետք է գտնվեր: Այս դեպքում առաջ է գալիս նաև Համամ Բարեպաշտի հարցը: Ինչպես վերևում տեսանք, ուսումնասիրողները Համամի հարցը լուծել են՝ նրան այս կամ այն անձին նույնացնելով: Մեր տեսակետի՝ ճիշտ լինելու դեպքում, Համամին հարկ չկա նույնացնելու ոչ Սահլի Հովհաննես որդուն, որը սխալ է հենց թեկուզ ժամանակների ակնհայտ անհամապատասխանության պատճառով[1], ոչ էլ Ատրներսեհի Գրիգոր որդուն: Համամը պետք է, որ Հովհաննեսի որդին եղած լիներ:

Բ. Ուլուբաբյանն Առանշահիկ իշխանների՝ Շաքիին տիրելու (ըստ նրա՝ վերատիրելու) պատիվը տալիս է Համամ Բարեպաշտին, հենվելով Մովսես Դասխուրանցու այն հաղորդման վրա, թե «Գրիգոր (ըստ ուսումնասիրողի՝ նույն ինքը՝ Համամ Բարեպաշտը-Ա.Ե.) շինէ զՀաւախաղացին բերդն, և յայն կողմն ձգէ զձեռն իւր իշխանութեանն»[2]: Նա, հետևելով Ա. Կրիմսկուն[3], «յայն կողմ»-ը համարում է Կուրի ձախափնյակը, քանի որ պատմող հեղինակը աջափնյակից է[4]: Մեր քննությունը, սակայն ցույց տվեց, որ Առանշահիկները հաստատվել էին Շաքիում Սահլի

---

[1] Հովհաննեսը «Հայոց, Վրաց եւ Աղուանից» իշխան էր դարձել, ըստ Դասխուրանցու, 838 թ. (տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 330-331), իսկ Համամը, նույն հեղինակի վկայությամբ, Աղվանից թագավորությունը վերականգնել է իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու հետ միաժամանակ, այսինքն նույն դարի 80-ական թթ. (անդ, էջ 335):

[2] **Մովսես Կաղանկատվացի**, էջ 340-341:

[3] Տե՛ս Крымский А., նշվ. աշխ., էջ 375:

[4] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 75:

ժամանակներից սկսած: Բացի այդ, Բ. Ուլուբաբյանը՝ ապացուցելու համար Ատրներսեհի որդի Գրիգորի նույնությունը Համամ Բարեպաշտին, վկայակոչում է Գրիգորի թողած արձանագրությունը՝ գտնված Սոդքի Մեծ Մազրա գյուղից, որը բարբառում է, թե Գրիգորը «Սիւնեաց և Աղուանից» իշխան է եղել[1]: Ուստի ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ նա, պետք է վերականգներ Աղվանից թագավորությունը: Երբ արաբները Սահլին իր որդի Ատրներսեհի հետ գերեցին, վերջինիս ողջ իշխանությունն անցավ որդուն՝ Գրիգորին: Իսկ ի՞նչ եղավ Հովհաննեսի ճյուղը: Նա չէր գերվել, բայց այլևս չի հիշատակվում: Եվ եթե նա, որպես հոր անմիջական ժառանգ, գտնվում էր Շաքիում, ուրեմն և Աղվանից թագավորության վերականգնման պատիվն էլ պետք է նրա սերունդներին պատկաներ: Այսինքն՝ Համամն, անկասկա՛ծ, նրա՛ որդին էր: Համամի, ինչպես նաև նրա որդի Ատրներսեհի թագավորանիստը Շաքին էր, ինչպես վկայում են Հովհաննես Դրասխանակերտցին ու Մասուդին: Մեր կարծիքով, Հայոց թագավորից թագ ստացած և Շաքիում գտնվող Համամ Բարեպաշտը սկզբնապես համարվում էր գերագույն իշխան Շաքիի, Հերեթի, Կամբեճանի և Հայոց Արևելից կողմերի վրա: Հովհաննես Դրասխանակերտցու «Արևելից մեծ իշխան» հաղորդումը վերաբերում էր հիշյալ ողջ տարածքին, որը Բագրատունի թագավորների օրոք կազմում էր նրանց տերության «արևելից» հատվածը: Սակայն Աղվանից թագավորությունն իր ընդարձակ սահմանները հետագայում պահպանել չկարողացավ ու շուտով սահմանափակվեց Կուրի ձախափնյա հողերում: Վերը տեսանք, որ արդեն Համամի որդի Ատրներսեհի օրոք Շաքիի թագավորությունը, ըստ Մասուդիի՝ տարածվում էր Կապաղակի և Ծանարաց երկրի միջև, այսինքն՝ ընդգրկելով թե՛ Կամբեճան ու Շաքի գավառները և թե՛ Հերեթը, չնայած, որ անվանապես հոր գերագահ դիրքը պահպանում էր նաև Ատրներսեհը, ինչն ապացուցում է Հովհաննես կաթողիկոսի վկայությունը, որ ինքը հալածական «ի կողմանս արևելեայ Աղուանից առ մեծ իշխանն Սահակ երթեալ և առ թագաւորն նոցունց Ատրներսեհ»[2]: Այսինքն՝ «Աղվանից» (իմա՛ Հայոց Արևելից կողմեր-Ա.Ե.) մեծ իշխանի կողքին կա նաև գերագահ մեկը՝ Շաքիի կամ «Աղվանից» Ատրներսեհ թագավորը:

---

[1] Անդ: Բ. Ուլուբաբյանը «Սիւնեաց»-ը սրբագրում է «Փոքր Սյունիք»-ի: Այս ճշտումն անհիմն է, քանի որ արձանագրության մեջ Սյունիք աշխարհը հստակորեն տարանջատում է «Աղուանից» տեղանունից, որի տակ նկատի ունի Արցախ և Ուտիք նահանգները: Իսկ Փոքր Սյունիքը Արցախն է (տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 310):

[2] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 220:

Հարկ է վերջում անդրադառնալ ևս մեկ կարևոր իրողության: Համամի «վերականգնած» թագավորությունն «Աղվանից» են անվանում միայն հայկական աղբյուրները: Վրացական աղբյուրներն, ինչպես տեսանք, այն Հերեթ գավառի անունից կոչում են Հերեթի թագավորություն, իսկ արաբական աղբյուրները՝ սկզբում Շաքի-Կամբեճանի իշխանություն[1], իսկ հետո նաև Շաքիի թագավորություն[2]: Տեսանք, որ այդ թագավորության բնակչությունը հայկական էր ու հայադավան, սակայն հայկական աղբյուրներն, այնուամենայնիվ, այն կոչում են «Աղվանից»: Դատելով Մովսես Խորենացու տվյալներից, «Աղվանք»-ը էթնիկական անուն չէր: Նա սկզբում հաղորդում է, թե ինչպես է Վաղարշակ թագավորը մի ոմն Առանի կարգում «նահապետ ի վերայ մեծ դաշտին Առանայ, յԵրասխայ մինչև ցՀունարակերտ»: Այնուհետև, Պատմահայրը տեղեկացնում է, որ նրա ցեղը «ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի» և, որ «աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա»[3]: Այսինքն՝ «աղու» անունը բնորոշում էր նրա բարի բնավորությունը: Ինչպես ճշտել է Բ. Հարությունյանը, տարածքին տրվող «Աղու+ան+ք» անվանումը ցույց էր տալու դրա արգավանդ ու բարեբեր լինելը[4]: Իսկ, քանի որ խոսքը, ըստ Պատմահոր՝ դաշտի մասին է, ապա, անշուշտ, արգավանդ ու բարեբեր էր կոչվելու Կուրի առափնյա դաշտը: Բացի այդ, «աղվան» անունը չէր վերաբերում միայն մեկ ցեղի: Ստրաբոնն այդպես է անվանում Կուր գետի և Կովկասյան լեռների միջև բնակվող 26 ցեղերի, որոնց, ճիշտ է, Ստրաբոնի ժամանակներում տիրում էր մեկ թագավոր, բայց նախկինում դրանցից յուրաքանչյուրն իր թագավորն ու լեզուն ուներ[5]: Ըստ որում՝ վերջին հաղորդումը ցույց է տալիս, որ այդ ցեղերի միջև նույնիսկ ազգակցություն չկար: Արաբ հեղինակների հաղորդումներից երևում է, որ Հայոց Արևելից կողմերին տրվող «Առան» (իմա՛ դաշտ)[6] անունը[7] երբեմն տարածվում էր նաև Աղվանք կոչված

---

[1] Տե՛ս بلاذري, I, էջ 240:

[2] مسعودي, I, էջ 204-205, **Ibn Haukal**, էջ 354:

[3] **Մովսես Խորենացի,** էջ 126-128: Տե՛ս նաև **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 16:

[4] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն,- «Վէմ» (համահայկական հանդես), 2010, թիվ 4, էջ 33-34:

[5] Տե՛ս **Ñòðàáî í**, Ãåîãðàôèÿ, â 17 êíèãàõ, ïåðåâîä, ñòàòüÿ è êîìåíòàðèè Ã. Ñòðàòàíîâñêîãî, Ì., 1964, XI, IV, 6:

[6] Մեզանում այսօր էլ Արարատյան դաշտն անվանվում է Արան (Առան), իսկ տեղի բնակչությունը՝ արանցի (տե՛ս **Ս. Երեմյան**, Ն. Մառը և VII դարի «Աշխարհացոյց»-ը,- «Մառը և հայագիտության հարցերը», Եր., 1968, էջ 88-89):

[7] Տե՛ս **Jacut**, I, էջ 183-184, **Ibn Khordadbeh**, էջ 121:

երկրամասի վրա[1], իսկ հայկական աղբյուրները հաճախ «Աղվանք» տեղանունը վերագրում են թե՛ Աղվանք երկրամասին և թե՛ Հայոց Արևելից կողմերին[2]: Եզրակացությունը պարզ է. նույն իմաստն արտահայտող բառերի փոխատեղումը միանգամայն բացատրելի ու հնարավոր է: Ուստի՝ արձանագրենք. Կուրից հյուսիս գտնվող Աղվանք-Առանը և հարավ ընկած Առան-Աղվանք-Հայոց Արևելից կողմերը (հատկապես Ուտիք աշխարհը) հայերի շրջանում հանդես էին գալիս «արգավանդ երկիր», «դաշտ» նշանակությամբ և այդ իմաստով հայկական միջավայրում գոյատևեցին բավական երկար: Նշենք նաև, որ չնայած Համամի հիմնած թագավորությունը, դատելով վերն ասվածից, կոչվելու էր Շաքիի թագավորություն, հայկական աղբյուրներն ավանդույթի ուժով այն կոչում են «Աղվանից», քանի որ այդտեղ էր գտնվել Աղվանից կամ Ալբանիա թագավորությունը:

Ամփոփելով Արևելից մեծ իշխանության վերաբերյալ քննության արդյունքները, նշենք, որ Սահլ Սմբատյան իշխանը եղել է հայկական Եռանշահիկ կամ Առանշահիկ իշխանական տոհմից, իշխել է Խաչենում և Բաբեկին ձերբակալելուց և արաբներին հանձնելուց հետո գերագույն իշխանություն է ստացել Հայոց Արևելից կողմերի, Շաքի-Կամբեճանի ու Հերեթի հայկական իշխանության վրա: Հայոց թագավորության հիմնադրումից և Աշոտ Ա ու Սմբատ Ա-ի թագավորների կողմից մինչև Կովկասյան լեռներն ընկած երկրների նվաճումից հետո այդ իշխանությունը դառնում է Հայոց թագավորության մաս և կոչվում «Արևելից» ընդհանրական անունով՝ նկատի ունենալով Հայոց թագավորության մեջ նրա աշխարհագրական և ռազմավարական դիրքը: Սահլի որդիներից Ատրներսեհը իշխում էր Հայոց Արևելից կողմերում, իսկ Շաքիում հոր կողքին գտնվում էր Հովհաննեսը: Վերջինս Սահլ Սմբատյանի ուղղակի ժառանգորդն էր: Հովհաննեսից հետո Համամը, հանդիսանալով Հայոց թագավորության «Արևելից մեծ իշխան», հետագայում դարձավ Աղվանից թագավոր: Նրա թագավորությունն ընդգրկում էր Կամբեճանը, Հերեթը, Շաքին, Կապաղակի շրջանը և Ճիղբքը՝ տարածվելով Կուր գետից մինչև Կովկասյան լեռներ և Թելավ քաղաքից արևմուտք գտնվող

---

[1] Տե՛ս **Jacut**, IV, էջ 259, **Ibn Haukal**, էջ 355:

[2] Մանրամասնորեն տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, «Ալբանիա», «Աղվանք» և «Առան» տեղանունները,-«ՊԲՀ», 1971, թիվ 3, էջ 115-126, **Սվազյան Հ.,** «Աղվանք» տեղանվան բովանդակային փոփոխությունների և գործածության ոլորտների շուրջ,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 2008, թիվ 2, էջ 258-267, նույնի՝ История страны Алуанк (с древнейших времен по VIII век), Ер., 2009, էջ 241-248:

Գաղգաղ բնակավայրից մինչև Փիրսահաթ գետի վերին հոսանքի ավազան:

4.2. Ճիղբք (Ճողբաց իշխանություն): Մաս էր կազմում Հայ Բագրատունիների տերության և գտնվում էր նրա հյուսիսարևելյան ծայրամասում: Անանուն Զրուցագիրը հաղորդում է, որ Սմբատ Ա-ի աբխազական արշավանքի մասնակիցների թվում էր «իշխանն Ճողբաց բազում զաւրաւք»[1]: Խոսքը Ճիղբք կոչված ազգագավառի մասին է, որը՝ համաձայն Բ. Հարությունյանի տեղադրության, գտնվում էր Փիրսահաթ գետի վերին հոսանքի ավազանում՝ Աղվանից երկրամասի հարևանությամբ[2]:

Այն պետք է մաս կազմեր Արևելից մեծ իշխանության կամ Աղվանից թագավորության, որն իր հերթին Սմբատ Ա-ի աբխազական արշավանքին ներկայացել էր առանձին զորախմբով: Անանուն Զրուցագիրը հիշատակում է «իշխան յԱրևելից Սմպատ բազում զաւրաւք»[3]:

Նշենք նաև, որ սահմանագիծն Արևելից մեծ իշխանության և Շիրվանշահերի պետության միջև անցնում էր Աղվանիից թագավորության մաս կազմող Կապաղակ քաղաքի և Շիրվանշահերին պատկանող Շամախու միջև՝ հյուսիսում Բաբադաղ լեռից սկիզբ առնող և հարավ իջնող լեռնապարով ու ներկայիս Գյոկ-չայ գետով մինչև Կուր գետ՝ ներկայիս Զարդոբ բնակավայրից արևելք: Արևելից մեծ իշխանության հյուսիսային սահմանագիծն անցնում էր Կովկասյան լեռների ջրբաժանով՝ սկսած Ավարյան Կոյսու գետի ակունքների շրջանից մինչև Ճիղբք:

4.3. Ծանարաց (Կախեթի) քորեպիսկոպոսություն: Սկսյալ 881 թ., ինչպես տեսանք, Հայ Բագրատունիների տերության մաս էր կազմում Ծանարաց քորեպիսկոպոսությունը:

Խնդրո առարկա շրջանում Ծանարաց քորեպիսկոպոսության պատմաաշխարհագրական իրավիճակին լավագույնս ծանոթանալու նպատակով անհրաժեշտ ենք համարում ներկայացնել մի համառոտ պատմական ակնարկ: Արմինիա ոստիկանության Երկրորդ Արմինիա վարչական շրջանի, որի մեջ մտնում էին Գուգարքը, Վիրքը և Կովկասյան լեռների արևմտյան որոշ շրջաններ, սահմանները հյուսիսում հասնում էին Դարբանդից մինչև Ալանաց դուռը ձգվող սահմանային ամրությունների գոտուն[4]: Ալանաց դռան հարևանությամբ գտնվում էր Ծանարների երկիրը կամ Ծանարքը (արաբական աղբյուրներում՝ աս-Սանարիա): Ծանարքը գրավել էր արաբ զորավար Հաբիբ իբն Մասլա-

---

[1] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 189:
[2] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Լփինքի տեղադրության հարցի շուրջը, էջ 123:
[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 189:
[4] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արմինիա ոստիկանության սահմանները, էջ 244-246:

ման դեռևս VII դ. կեսերին[1]: Ծանարների երկիրը, հետևաբար նաև Ալանաց դուռը, արաբների կողմից վերջնականապես նվաճվել էր Արմինիայի, Ատրպատականի և Ջազիրայի փոխարքա Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքի (որոշ ընդմիջումներով փոխարքա է եղել 709-732 թթ.[2]) արշավանքի ժամանակ: Այդ ժամանակ Ալանաց դռանն արաբները մշտական կայազոր հաստատեցին[3]: Դատելով Մովսես Դասխուրանցու հաղորդած մի տեղեկությունից՝ այդ իրադարձությունը տեղի է ունեցել 714/715 թ.: Խոսելով հայոց ՃԿ թվականին (711 թ.) տեղի ունեցած իրադարձությունների մասին՝ պատմիչը հաղորդում է, որ դրանցից երեք տարի անց Մասլաման ավերեց Դարբանդը և «ելանէր ընդ Վրաց կողմն»[4]: Այդ ժամանակ, մեր կարծիքով, Մասլաման նվաճեց Ծանարների երկիրն ու Ալանաց դուռը: Ճիշտ է, Իբն ալ-Ասիրն Ալանաց դռնով Մասլամայի կատարած մի արշավանք էլ դնում է հիջրայի 110 թ. (728-729 թ.)[5], սակայն, այդ, հավանորեն, պարզապես ցույց է տալիս, որ այդ ժամանակ արդեն Ալանաց դուռը գտնվում էր արաբական տիրապետության ներքո: Չնայած, որ ծանարները հաճախ էին փորձում թոթափել արաբական լուծը, Խալիֆայությունը կարողանում էր կրկին իրեն ենթարկել նրանց[6]: Այսպես, Աբու Ջաֆար ալ-Մանսուր խալիֆայի օրոք (754-775), երբ ծանարներն ապստամբեցին Խալիֆայության դեմ, Յազիդ իբն Ուսայդ ոստիկանը (Արմինիայի ոստիկան է եղել երեք անգամ՝ 752-754, 759-769, 775-780 թթ.) կրկին Խալիֆայությանը ենթարկեց նրանց երկիրը, վերանվաճեց Ալանաց դուռը և այնտեղ բնակեցրեց Խալիֆայության դիվանում գրանցված զինվորների[7]:

Ծանարաց երկրի մասին «Աշխարհացոյց»-ը հիշատակում է Սարմատիայի ցեղերին թվարկելիս, նշելով, որ արդոզներից հետո, դեպի արևելք, «բնակեն Դաջանք, Դուալք, Ծըխոյք, Փուրքա, Ծանարքայ՝ յորում Ալանաց դուռն»[8]:

Ըստ Թովմա Արծրունու՝ Բուղան «դիմեալ գնաց հասանել ի վերայ

---

[1] Տե՛ս بلاذري, I, էջ 239:

[2] Տե՛ս **Ա. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 272-273:

[3] Տե՛ս مسعودي, I, էջ 194:

[4] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 319-320:

[5] Տե՛ս ابن الاثير, էջ 205:

[6] Տե՛ս **À. Áîãîâîðîäöåâ**, նշվ. աշխ., էջ 180:

[7] Տե՛ս بلاذري, I, էջ 246: اهل الديوان-Դիվանի մարդիկ. դրանք այն զինվորներն են, որոնք խալիֆայության գանձարանից թոշակ էին ստանում՝ ըստ այնտեղ պահվող ցուցակի:

[8] «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 26: «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ ասված է.«Գաճանք, Փինճք, Դուաղք, Խոնք, Ափուրք, Ծանաւրք՝ յորում Ալանաց դուռն» (տե՛ս **Ա. Աբրահամյան**, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 347):

կողմանց հիւսիսոյ, յերկիրն յորում Ծանակ (իմա՛ Ծանարք-Ա.Ե.) կոչի. սոքա բնակին յամուրս լեռնականս...: Եւ մօտ առ սոցա կայ լեառն Կաւ-կասու»[1]:

Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ Սմբատ Ա արքան ընդլայնեց իր տերության սահմանները «մինչև ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս և զԾանարս մինչև ցԴուռն Ալանաց»[2]:

«Մոքցեվայ Քարթլիսա»-ն («Վրաց դարձ») Դարիալի կիրճը անվանում է «Ծանարների կիրճ» և հաղորդում, որ պարսիկները Ալանաց դռան պահպանության գործը վստահեցին ծանարներին[3]:

Ըստ Բալազուրիի՝ Աբու Ջաֆար ալ-Մանսուր խալիֆայի օրոք Արմինիայի ոստիկան Յազիդ իբն Ուսայդը (759-769) «նվաճեց Բաբ-Ալլանը...և...ջախջախեց սանարներին»[4]:

Կովկասագետ Վ. Մինորսկին ծանարների մասին գրում է, որ նրանք վրացերեն կոչվում են «ծանար», քաջ լեռնականներ էին և բնակվում էին Դարիալի լեռնանցքի մոտ, իսկ հետագայում ընդարձակեցին իրենց տիրույթները դեպի արևելք՝ Կախեթ: Ըստ ուսումնասիրողի, Մասուդին, նրանց համարելով Շաքիի հարևանները, շփոթում է նրանց կախեթցիների հետ[5]:

Ս. Երեմյանը ծանարներին տեղադրում է Թերեք գետի ակունքների շրջանում, որը համապատասխանում է ներկայիս Ղազբեկի շրջանին[6]: Ծանարների հար և նման տեղադրություն է տրված նաև վրացական պատմագիտության մեջ[7]: Ծանարաց երկրի այդ տեղադրությունը համապատասխանում է սկզբնաղբյուրների և, մասնավորապես, «Աշխարհացոյց»-ի տեղեկություններին:

Հ. Մկրտումյանը, որ զբաղվել է Կախեթի իշխանության (Ծանարաց քորեպիսկոպոսություն) VIII-XI դդ. պատմության ուսումնասիրությամբ, այն եզրակացության է եկել, որ Տփղիսի ամիրաները VIII դ. վերջին և IX դ. սկզբին իրենց կողմն էին քաշել ծանարներին՝ վերջիններիս և նրանց հարևան ու դաշնակից լեռնական ցեղերին հանձնելով Ալանաց դռան և այդ դռնով անցնող ճանապարհի (իմա՛ Ռազմա-վիրական ճանապարհ)

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 274:
[2] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 164:
[3] Տե՛ս **Հ. Մկրտումյան,** Ծանարների ցեղը և նրանց դերը Դարիալ լեռնանցքի պահպանության գործում,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1972, թիվ 6, էջ 85:
[4] بلاذري, I, էջ 246:
[5] Տե՛ս **Â. Ìèíîðñêèé**, նշվ. աշխ., էջ 210-211, ծանոթ. 100:
[6] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 56:
[7] Տե՛ս **Ì. Ëîðäêèïàíèäçå**, նշվ. աշխ., էջ 306-316., էջ 256:

վերահսկողությունն ու պաշտպանությունը, ըստ որում Ալանաց դռանը և ճանապարհի շրջակայքում տեղակայված արաբական կայազորները պետք է վերացվեին՝ փոխարինվելով ծանարական և նրանց դաշնակից ցեղերի կայազորներով[1]: Ըստ հեղինակի՝ դատելով վրացական և հայկական հեղինակների որոշ երկիմաստ տեղեկություններից, Տփղիսի ամիրաներն օգտագործում էին նաև գարդաբանցիների զինված ուժերը, իսկ գարդաբանցիները բնակվում էին ներկայիս Վրաստանի հանրապետության Գարդաբանի շրջանում՝ Տփղիսից հարավ[2]: Ճիշտ է Հ. Մկրտումյանը, երբ այն տեսակետն է հայտնում, որ հավանաբար արդեն նախքան արաբական արշավանքները Կախեթում սկսվել էր տարբեր ցեղերի միավորման գործընթացն առավել հզոր ծանարների գերիշխանության ներքո: Արդեն VIII դ. 70-ական թթ., երբ ծանարները պայքարում էին արաբ զորավար Ամիր իբն Իսմայիլ ալ-Հարիսիի դեմ, Կախեթն իրենից ներկայացնում էր տեղի ցեղերի միություն՝ ծանարների գլխավորությամբ[3]: Կախեթի իշխանական տոհմի, որի անդամները սկզբնաղբյուրներում կոչվում են քորեպիսկոպոսներ, հիմնադիր Գրիգոլը (787-827) ծանար էր: Նա տիրեց Արագվ գետի հովտի մի մասին[4]: Դրանով նա իր ձեռքը վերցրեց ռազմավիրական ճանապարհի վերահսկողությունը: Նրան հաջողվեց իր ենթակայության ներքո առնել նաև Գարդաբանը, որ դրանից հետո մաս էր կազմում Ծանարաց քորեպիսկոպոսության: Այդ ամենի հետևանքով Տփղիսի ամիրայության տարածքը խիստ կրճատվեց, Տփղիսի ամիրաները վերածվեցին հասարակ ավատատերերի, իսկ ամիրայությունը՝ քաղաք-պետության[5]:

Ծանարաց քորեպիսկոպոսությունը IX դ. սկզբին պայքար է սկսում Վիրքին տիրելու համար: Քորեպիսկոպոս Գրիգոլը նվաճում է Վիրքի հողերի մի զգալի մասը՝ Քսան գետի հովիտը, որտեղով անցնում էր ռազմավիրական ճանապարհը: Այդ ժամանակ նրա դեմ հանդես է գալիս Կղարջքի կուրապաղատ Աշոտ Բագրատունին[6]: Ճակատամարտը տեղի ունեցավ Քսան գետի հովտում և ավարտվեց Գրիգոլի պարտությամբ: Աշոտ կուրապաղատը զբաղեցրեց Վիրքի՝ մինչև Քսան գետն ընկած հողերը[7] (հմմտ. Վարդան վարդապետ. Աշոտ կուրապաղատը «տիրեաց ի Կաղրջաց մինչև ի Տփխիս, լեռնակողմամբն հանդերձ»): Հարկ է նշել, որ

---

[1] Տե՛ս Ã. Ìêðòóìÿí, նշվ. աշխ., էջ 73:
[2] Անդ, էջ 73-74:
[3] Անդ, էջ 72:
[4] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 29:
[5] Տե՛ս Г. Мкртумян, նշվ. աշխ., էջ 72:
[6] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 29:
[7] Անդ:

Քսան գետի հովտին տիրելը Ծանարաց քորեպիսկոպոսության համար ուներ կարևոր նշանակություն: Այդպիսով նրա հսկողության տակ էին անցնում ինչպես Պարտավ-Տփղիս-Ալանաց դուռ-Հյուսիսային Կովկաս մեծ առևտրական ճանապարհը, այնպես էլ Ալազան, Իոր և Արագվ գետերի հովիտներով անցնող առևտրական ճանապարհները: Սակայն, ինչպես տեսանք, Գրիգոլին հաջողվեց միայն պահպանել Քսան գետի ձախափնյակը:

827 թ. Գրիգոլի մահից հետո, հավանաբար Տփղիսի ամիրայի օգնությամբ, քորեպիսկոպոսությունում իշխանությունն անցավ գարդաբանյան Դոնաուրի իշխանական տանը: «Քարթլիի մատյան»-ը հաղորդում է. «գարդաբանցիները...քորեպիսկոպոս ընտրեցին Դաչիին (կամ Վաչեին[1]), որ Կվաբուլի որդի Հովհանի որդին էր, իսկ նրանից հետո քորեպիսկոպոս դարձրեցին Սամուել Դոնաուրիին»[2]:

Սամուել Դոնաուրիի (839-861) մահից հետո իշխանությունն անցավ նրա եղբայր Գաբրիել Դոնաուրիին (861-881)[3]: Այնուհետև, ըստ «Քարթլիի մատյանի»՝ «հզորացավ քորեպիսկոպոս Փադլան և իրեն ենթարկեց գարդաբանցիներին»[4]:

IX դ. առաջին կեսին Երկրորդ Արմինիայում տեղի էին ունենում կարևոր իրադարձություններ: Տփղիսի ամիրաները աստիճանաբար դադարում են ենթարկվել Խալիֆայության գերիշխանությանը: Ալ-Մամուն խալիֆան (813-833) Տփղիսի անհնազանդ Իսմայիլ իբն Շուայբ ամիրային (809-813) փոխարինում է Մուհամմադ իբն Աթաբ ամիրայով (813-830): Վերջինս 829-830 թթ. ծանարների աջակցությամբ ապստամբում է խալիֆայի իշխանության դեմ[5]: Ապստամբության ճնշման նպատակով խալիֆան ուղարկում է Աբդ ալ-Ալա իբն Սհմադ զորավարին, որին Տփղիսի ամիրայի և ծանարների միացյալ զորքը պարտության է մատնում: Հետևում է Խալիդ իբն Յազիդ աշ-Շայբանի ոստիկանի (829-832) արշավանքը Տփղիսի վրա: Ըստ Յակուբիի՝ Տփղիսի ամիրան մեղայականով ներկայացավ Շայբանի զորավարին: Վերջինիս հետ ծանր պայմաններով հաշտության պայմանագիր կնքեցին նաև ծանարները[6]: Սակայն Ծանարաց քորեպիսկոպոսության մեջ մտնող գարդաբանցիները չհետևեցին ծանարների օրինակին, այլ Սամուել քորեպիսկոպոսի

---

[1] Հ. Մկրտումյանն այդ անվան ճիշտ ձևը, հետևելով Վախուշտ Բագրատիոնին (տե՛ս Вахушти Багратиони, էջ126)՝ համարում է Վաչեն (տե՛ս Г. Мкртумян, նշվ. աշխ., էջ 75):

[2] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 29:

[3] Անդ, էջ 30:

[4] Անդ, էջ 32:

[5] Տե՛ս يعقوبي, II, էջ 475:

[6] Անդ:

գլխավորությամբ ճակատամարտ տվեցին նրան Գավազ բնակավայրի մոտակայքում և պարտության մատնեցին[1]:

Տփղիսի ամիրա Իսհակ իբն Իսմայիլ իբն Շուայբը (833-853) ի սկզբանե դադարեց խալիֆաներին ենթարկվել և նրանց գանձարան հարկ մուծել[2]: Մութասիմ խալիֆայի օրոք (833-842) Իսհակը դաշնակցում էր Արմինիայի ոստիկան Մուհամմադ իբն Խալիդի (838-839) հետ ծանարների դեմ[3]: Բայց շուտով իրավիճակը փոխվեց, և ոստիկանը ստիպված պայքար էր մղում դաշնակցած Իսհակի և ծանարների դեմ[4]:

Երբ Մուհամմադ իբն Խալիդը շարժվում էր Իսհակի դեմ, նրան միացավ Կղարջքի կուրապաղատ Բագարատը (826-876), որ Աշոտ կուրապաղատի որդին էր: Դրա դիմաց Արմինիայի ոստիկանը խոստացավ նրան հանձնել Վիրքը[5]: Քանի որ Կղարջքի կուրապաղատը փորձեց անցնել Քսան գետը, Մուհամմադ իբն Խալիդի և նրա դաշնակիցների դեմ ելած Իսհակին օգնության հասան Ծանարաց քորեպիսկոպոսության ուժերը[6]: Բախումը կողմերից ոչ մեկին զգալի հաջողություններ չբերեց, միայն Արմինիայի ոստիկանին հաջողվեց գրավել Ուփլիսցխեն[7]: Ըստ Յակուբիի՝ արաբները փախուստի են մատնել Իսհակին[8]:

Մուտավաքքիլ խալիֆան (847-861) Արմինիայի տարբեր մասերում ծագած ապստամբությունները ճնշելու նպատակով 852 թ. մեծ բանակով ուղարկում է Բուղա զորավարին: Հայաստանը հրի և սրի մատնելուց հետո Բուղան 853 թ. շարժվեց Տփղիսի ուղղությամբ: Քաղաքը գրավվում է գրոհով, որից հետո Իսհակը մահապատժի է ենթարկվում[9]:

Այս ժամանակ Ծանարաց քորեպիսկոպոսությունում կրկին մեծանում էր ծանարների ազդեցությունը: Ըստ «Քարթլիի մատյանի» Բուղայի զորքերի վրա հարձակում են գործում գարդաբանցիները՝ Սամուել Դոնաուրիի գլխավորությամբ, որի հետևանքով Բուղայի զորքերը փոխում են արշավանքի ուղղությունը և շարժվում Տփղիսից դեպի հյուսիս, մթիուլ-լեռնականներից պատանդ վերցնում 300 մարդու, հասնում ցխավատների երկիր և ցանկանում անցնել Ալանաց դռնով: Հայոց

---

[1] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 29-30, **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 126:

[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 95:

[3] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 29:

[4] Անդ, էջ 29-30:

[5] Անդ:

[6] Անդ:

[7] Անդ:

[8] Տե՛ս يعقوبي, II, էջ 476:

[9] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 30, **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 272:

սպարապետ Սմբատ Բագրատունին (824-855) և Կղարջքի Աշոտ կուրապաղատի որդի Գուառամը ցուցում տվեցին մթիուլներին դիմադրել Բուղայի զորքերին, որոնք պարտություն կրեցին[1]: Հետաքրքրականն այն է, որ Սմբատ Բագրատունին, որ ուղեկցում էր Բուղային[2], փաստորեն գաղտնի կերպով մղում էր Արմինիայի իշխաններին պայքարել Բուղայի զորքերի դեմ, որի պատճառով գերեվարվում է Սամառա, որտեղ էլ կնքում է իր մահկանացուն[3]:

Ինչպես տեսանք, Ծանարաց քորեպիսկոպոսությունում 881 թ. իշխանության եկավ Փադլան (881-893): Նա Արևմանելի տոհմից էր: Նրա օրոք Ծանարաց քորեպիսկոպոսության կենտրոնը Բոծորմայից տեղափոխվեց Թիանեթ (Բոդոջի պալատ)[4]: Իսկ Փադլային փոխարինեց Կվիրիկե Ա-ն (893-918):

Հենց վերջիններիս օրոք է, որ Այսրկովկասում իրենց տիրապետության հաստատման համար պայքար են սկսում Հայ Բագրատունիները: Իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին (հետագայում թագավոր) և նրանից հետո նրա որդի Սմբատ Ա-ն նվաճում են Ալանաց դուռը:

Ուշագրավ է Ն. Ադոնցի տեսակետը Ծանարաց իշխանական տան ծագման վերաբերյալ: Իր «Բագրատունյաց փառքը» աշխատության մեջ մեծանուն գիտնականն այն համոզմունքն է հայտնում, որ քրիստոնեացած Ծանարաց հոգևոր տերերը համարվել են եպիսկոպոսներ կամ քորեպիսկոպոսներ Գարդմանի (իմա՛ Գարդաբան) աթոռի և պահպանել են այդ կոչումն անգամ այն ժամանակ, երբ հոգևոր իշխանությունն աստիճանաբար վերափոխվել է աշխարհիկ իշխանության: Այդ իսկ պատճառով վրաց մոտ Ծանարաց երկիրը հայտնի է Գարդաբան անունով: Ըստ նրա՝ Գարդաբանը վրացականացված տարբերակն է հայկական Գարդմանի և գործ է ածվել կրկնակի իմաստով՝ նշանակելով բուն Գարդման (ըստ ուսումնասիրողի՝ բուն Գարդմանի արևմտյան մասը, որը, ըստ նրա՝ հարում էր Բերդուջ գետին) և Ծանարաց աշխարհ իմաստով: Գրիգոլից հետո առաջին քորեպիսկոպոսը Դաչին էր կամ Վաչեն[5], որ գարդաբանցիների կողմից ընտրվեց 827 թ.: Նրան հաջորդեցին Սամուել և Գաբրիել քորեպիսկոպոսները մինչև 881 թ.: Հետո ոմն Գաբլուց (Գաբուլոց), որ Տփղիսի Սահակ ամիրայի ազգականն էր և Հայոց Աշոտ

---

[1] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 30:
[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 130-134:
[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 296:
[4] Տե՛ս **Գ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 89-90:
[5] Տե՛ս **Вахушти Багратиони**, էջ 126:

Ա թագավորի հորեղբորորդին, տիրեց Գարդաբանին[1]: Ն. Ադոնցը նկատում է, որ եթե Գաբլուցը մահմեդական Սահակի ազգականն էր, ապա նա չէր կարող Աշոտ Ա-ի հորեղբորորդին լինել: Սրան փոխարինեց Փադլա Արևմանելին: Պարտավի 707 թ. ժողովին մասնակցում էր Հայոց Արևելից կողմերի իշխաններից Թեոդորոս Վստամ Արևմանյանը: Այստեղից էլ ուսումնասիրողը եզրակացնում է Արևմանելի և Արևմանյան անվանումների ազգակցությունը: Նշելով, որ Փադլայից հետո իշխեցին Կորիկե կամ Կվիրիկե (893-918) և Փադլա (918-929) քորեպիսկոպոսները՝ Ն. Ադոնցը մատնանշում է նրանց ծագման անհայտ լինելը: Կորիկե Գ-ի (1010-1039) քույրն ամուսնացած էր Կյուրիկյան թագավոր Դավիթ Անհողինի հետ, և վերջինիս որդին քեռու մահվանից հետո ժառանգեց նրա իշխանությունը: Ն. Ադոնցը ցույց է տալիս, որ վրաց աղբյուրի տեղեկություններում կա շփոթություն Կախեթի և Գարդաբանի մեջ: Նա հենվում է Իբն Հաուկալի տեղեկության վրա, ըստ որի՝ մոտ 950 թ. Գարդաբանի քորեպիսկոպոսը Սենիքերիմն էր[2], բայց հայտնի է, որ միևնույն ժամանակ իշխում էր նաև Կորիկե Բ-ն: Վերջինս ըստ ուսումնասիրողի իսկապես Ծանարաց քորեպիսկոպոսն էր, որ գրավել կամ ժառանգել էր Գարդաբանը, սակայն 950 թ. մոտերքը Գարդաբանն ապստամբեց և Սենիքերիմը դարձավ քորեպիսկոպոս Գարդաբանում: Այնուհետև 958 թ. եկեղեցական ժողովի մասնակիցներից Գուրգեն Արևելից իշխանին (ըստ Անանիա կաթողիկոսի) Ն. Ադոնցը նույնացնում է Կյուրիկե Բ-ի հետ, որից էլ բխում է նրա հայ ազգությունը: Այնուհետև բխեցվում է նաև այն, որ Ծանարաց քորեպիսկոպոսությունում հայկական իշխանական տոհմը սկսել էր իշխել Կյուրիկե Ա-ից (893-918) սկսած: Ուստի և Կյուրիկե Գ-ի ժառանգության անցումը Դավիթ Անհողինի որդի Գագիկին միանգամայն բնական է դիտվում: Հեղինակը միանգամայն դիպուկ դիտարկում է, որ այսրկովկասյան երկրներում հայկական ազդեցությունը հզորացավ Սմբատ Ա-ի օրոք, ուստի և պատահական չէ, որ հենց նրա թագավորության ժամանակ՝ 893 թ., Ծանարաց քորեպիսկոպոսությունում իշխանության եկան նրա տոհմակիցները, այսինքն՝ Բագրատունիները[3]:

Մենք միանգամայն հավանական ենք համարում Ն. Ադոնցի տեսակետն այն մասին, որ Ծանարաց քորեպիսկոպոսները՝ սկսած Կվիրիկե կամ Կյուրիկե Ա-ից, ազգությամբ հայ են եղել: Անվանի գիտնականի կողմից Կվիրիկե-Կյուրիկե-Կորիկե անվանաձևի նույնացումը Գուր-

---

[1] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 31:
[2] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 348:
[3] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, Եր., էջ 526-529:

գենին ևս ստույգ է: «Կյուրիկ»-ը Գուրգեն անվան տեղական արտասանությունն էր[1]: Հայտնի է, որ X դ. ստեղծվել էր Տաշիր-Ձորագետի թագավորությունը: Հետագայում այն կոչվում էր նաև Կյուրիկյան թագավորություն՝ Գուրգեն անունից: Այստեղից էլ կարելի է բխեցնել, որ մեկ այլ Բագրատունի իշխան՝ Ծանարաց քորեպիսկոպոսը, կրում էր Գուրգեն անունը, որ նույնպես տեղական արտասանությամբ վերածվել էր Կյուրիկեի, իսկ հետագայում՝ Կվիրիկեի: Ձարգացնելով անվանի հայագետի տեսակետը՝ նշենք, որ ինչպես տեսանք Ծանարքում Կվիրիկե Ա-ից առաջ իշխանության եկավ Փադլան (881-893): Նա Արևմանելի տոհմից էր: Նրա օրոք Ծանարաց քորեպիսկոպոսության կենտրոնը Բոծորմայից տեղափոխվեց Բոդոջ: Այսինքն՝ Փադլայով Ծանարաց քորեպիսկոպոսությունում իշխանական տոհմ է փոխվել, ըստ որում՝ գարդաբանյան տոհմից քորեպիսկոպոսությունն անցել է ծանարական տոհմին՝ Արևմանելի անունով: Այն, որ «Արևմանելի»-ն և «Արևմանյան»-ը նույնական են, կարծում ենք, միանգամայն հավանական է: Լրացնելով Ն. Ադոնցի տեսակետն այն մասին, որ Կվիրիկե Ա-ից սկսած հայերն են իշխանության գալիս Ծանարաց քորեպիսկոպոսությունում, նշենք, որ դա, փաստորեն, տեղի է ունեցել Սմբատ Ա-ի թագավորության տարիներից առաջ՝ Փադլա Արևմանելիից սկսած: Դեռ ավելին, եթե հաշվի առնենք Ն. Ադոնցի վերոբերյալ այն տեղեկությունը՝ քաղված «Քարթլիի մատյան»-ից, թե 881 թ. քորեպիսկոպոս է դարձել ոմն Գաբուլոց, որ հիշատակվում է որպես Աշոտ Ա-ի հորեղբորորդի, ակնհայտ կդառնա, որ այնտեղ մենք տեսնում ենք Ծանարաց քորեպիսկոպոսությունում Բագրատունիների հաստատման արձագանքը: Մեր կարծիքով հենց այդ պատճառով միտումնաբար Վախուշտ Բագրատիոնը Գաբուլոցին բոլորովին չի հիշատակում: Փաստորեն «Արևմանելի» անվանումը կրում էին Ծանարաց քորեպիսկոպոսության Բագրատունիները: Այդ անունը սրբագրելի է «Արմանելի»-ի կամ «Արևմանյան»-«Արմանյան»-ի, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ հայկական «Հայկազյան» անունը: Ծանարաց քորեպիսկոպոսությունում Բագրատունիների հաստատումն իրականացվել է Աշոտ իշխանաց իշխան Բագրատունու աջակցությամբ և կամքով: Գաբուլոց Բագրատունին կարճ իշխեց: Նույն թվականին նա խաբեությամբ գերվեց Կղարջքի Բագրատունիներից Աշոտի որդի Գուառամի կողմից և ուղարկվեց Բյուզանդիա[2]: նրան փոխարինեց հավանաբար նրա որդին կամ ազգականը՝ Փադլան: Ըստ «Քարթլիի մատյան»-ի՝

---

[1] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 100, ծ. 1:
[2] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 31:

հենց այդ ժամանակ պայքար սկսվեց հայերի և աբխազների միջև Վիրքը նվաճելու համար[1]: Սկսված պայքարի սկզբում՝ 881 թ. Կղարջքի Բագրատունիներից Նասրի կողմից սպանվեց Կղարջքի Դավիթ կուրապաղատը, որ դրդեց Արմինիայի իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն անցնել վճռական գործողությունների: Նա արշավանքի ելավ աբխազների, ալանների և Նասր Բագրատունու կազմած դաշինքի դեմ: Նրա հետ էին Կղարջքի Դավիթ իշխանի որդի Ատրներսեհը և Թռեղքի իշխան Լիպարիտ Բաղվաշը[2]: Արշավանքի հաջող ավարտից հետո, բավական ժամանակ անց, արդեն իր մահվանից առաջ՝ 889 կամ 890 թ., Աշոտ Ա-ն «դնէ իշխան Վրաց զքեռորդի իւր», այսինքն՝ Ատրներսեհ Բագրատունուն, որը հետագայում Սմբատ Ա-ից թագ ստացավ: Այսինքն՝ 881 թ. Աշոտ Բագրատունին վճռական հաղթանակի էր հասել Այսրկովկասում՝ իրեն ենթարկելով տեղի գրեթե բոլոր իշխաններին և Աբխազաց թագավորին: Վերևում տեսանք, որ Ծանարաց քորեպիսկոպոսությունում գարդաբանյան հարստության փոխարինումը Արևմանելի հայկական տոհմով տեղի է ունեցել 881 թ., այն բանից հետո, երբ Աշոտ Բագրատունին ջախջախեց Աբխազաց թագավորի կազմած դաշինքի ուժերին: «Քարթլիի մատյան»-ի համաձայն, երբ հայկական բանակը ջախջախեց վերոհիշյալ դաշինքի ուժերին, հենց այդ ժամանակ «Քորեպիսկոպոս Փադլան հզորացավ և ենթարկեց գարդաբանցիներին», մի բան, որ չէր հաջողվել Գաբուլոցին: Խնդիրն այն է, որ վերոհիշյալ բախմանը մասնակցում էին Այսրկովկասի բոլոր իշխանները, բացառությամբ Ծանարաց քորեպիսկոպոսության: Հաղթանակած Աշոտն իր ուշադրությունը բևեռեց Ծանարաց քորեպիսկոպոսությանը, մանավանդ, որ այդ իշխանությունն իր կազմում ընդգրկում էր Ալանաց դուռը: Արդյունքում Ծանարաց քորեպիսկոպոսությունում հաստատվեց Արևմանելիների հայկական տոհմը: Վախուշտ Բագրատիոնի համաձայն՝ Սամուելից հետո քորեպիսկոպոս դարձավ Գաբրիել Դոնաուրին, որից «խլեցին Գարդաբանը: Եվ դրանից հետո մահացավ 881 թ. ...»[3]: Այնուհետև՝ «կորիկոզ դարձավ Ֆադալա Արևմանելին...: Նա կրկին գրավեց Գարդաբանը»[4]: Մեր կարծիքով, 881 թ. ջախջախելով Աբխազաց թագավորի ստեղծած դաշինքը, Աշոտ Բագրատունին գրավեց Գարդաբանը, այսինքն՝ Գաբրիելի հիմնական հենարանը, քանի որ նա գարդաբանյան տոհմից էր: Հաջորդ քորեպիսկոպոսը՝ Փադլա Արևմա-

---

[1] Անդ:
[2] Անդ:
[3] Տե՛ս Вахушти Багратиони, էջ 126:
[4] Անդ:

նելին, «կրկին գրավեց» (իմա՛ ետ ստացավ) Գարդաբանը:

Այն, որ Աշոտ Բագրատունուց սկսած Ծանարաց քորեպիսկոպոսությունը ենթարկված էր հայկական գերիշխանությանն ընդհուպ մինչև Սմբատ Ա-ի մահը, ցույց է տալիս հետևյալ իրողությունը: 914 թ. ըստ «Քարթլիի մատյանի» Ատրպատականի բանակը Յուսուֆի գլխավորությամբ ներխուժեց Հայաստան, ասպատակեց երկիրը: Այնուհետև Հայոց թագավոր Սմբատ Ա-ն ինքնակամ գերի հանձնվեց և սպանվեց: Յուսուֆի բանակը ներխուժեց Վիրք, մտավ Տփղիս, որտեղից էլ անցավ Ծանարաց քորեպիսկոպոսություն: Ուշարմա ամրոցն ընկավ երկարատև պաշարումից հետո, իսկ այնուհետև արաբները գրավեցին Բոծորման: Կվիրիկե Ա-ն հաշտության բանակցություններ սկսեց արաբների հետ[1]: Այսինքն՝ Ծանարաց քորեպիսկոպոսը պայքարեց Յուսուֆի դեմ մինչև Սմբատ Ա-ի մահը:

Ինչ վերաբերում է Ն. Ադոնցի մատնանշած փաստին, թե պատահական չէր Ծանարաց քորեպիսկոպոսությունում իշխանության ժառանգումը Կյուրիկյան Դավիթ Անհողինի որդու կողմից, մեզ նույնպես այն համոզմանն է բերում, որ Արևմանելիները կամ Բագրատունիներ էին, կամ էլ նրանց ազգականները: Այսինքն՝ մեր կարծիքով, Արևմանելի էին նաև Կվիրիկե Ա-ն և նրա հետնորդները, որը հաստատում է Վախուշտ Բագրատիոնը[2]:

Անհրաժեշտ է անդրադառնալ Ն. Ադոնցի ևս մեկ կարևոր բացահայտմանը: Անդրադառնալով Հովհաննես Դրասխանակերտցու այն վկայությանը, որ ի թիվս այլ երկրների և ժողովուրդների, Սմբատ Ա-ն նվաճեց նաև «ցԳուգարացիս եւ զԾանարս մինչև զԴուռն Ալանաց», ուսումնասիրողը մեջ է բերում նաև 1673 թ. թվագրված հունական մի ձեռագիր, որտեղ ասված է.«Կան Հակոբիկներ, ուր նրանք կոչվում են Խևսուրք, կա նաև մի ուրիշ ցեղ, որ կոչվում է Թուշք, որոնք կաթուղիկյա քրիստոնյայք են: Հայտնի է մեկ այլ ցեղ, որ կոչվում է Դիդոյք և մի ուրիշը, որ կոչվում է Քիսաք (պետք է լինի Քիստք-Ա.Ե.)»[3]: Այդտեղ հիշատակված ցեղերը ներկայումս էլ ապրում են նախկին Ծանարքի զբաղեցրած տարածքի հարևանությամբ: Հակովբիկ էր կոչվում հակաեստորական և հակաքաղկեդոնական ասորական եկեղեցին, որ դավանաբանական խնդիրներում գաղափարակից է հայկական եկեղեցուն:

---

[1] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 32-33:
[2] Անդ:
[3] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 529:

Խևսուրք[1]-հակոբիկներ ասելով, ըստ հեղինակի, ի նկատի չեն ունեցվում VIII դ. սկզբին Կամբեճան գաղթած հակովբիկները, քանի որ եթե անգամ նրանց մի հատվածը ապաստան գտած լիներ Ծանարքում և Դաղստանի լեռներում, ապա դժվար թե այդպիսի չնչին մի բեկոր կարողանար իր ինքնուրույնությունը պահպանել մինչև XVII դ.: Ըստ Ն. Ադոնցի, այստեղ խոսքը վերաբերում է հայկական եկեղեցուն, իսկ դա այլ բան չի նշանակում, քան հին հայ գաղթականությունը, որ հասել է մինչև Կովկասյան լեռներ, ձուլվել է տեղական ցեղերի, ի մասնավորի, խևսուրների հետ, բայց պահել իր կրոնական ինքնությունը[2]: Այսպիսով պարզվում է, որ Ծանարքի հարևանությամբ ապրող հայկական տարրը վճռական ազդեցություն ուներ Ծանարաց քորեպիսկոպոսության քաղաքական կյանքում: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ Խևսուրքը նույնպես մաս էր կազմում Ծանարաց քորեպիսկոպոսության:

«Քորեպիսկոպոս» կոչումի մասին Հ. Մկրտումյանը նշում է, որ այն հավանաբար Ալանաց դռան շրջանի ժառանգական կառավարչի՝ ծանարների ցեղապետի տիտղոսն էր, իսկ հետագայում դառնում է Կախեթի իշխանի հորջորջում: Վրացական աղբյուրներում այն հանդիպում է «քորեպիսկոպոս» կամ «քորիկոզ» ձևով: Վերջինս Մասուդիի երկում հանդիպում է «քարասքուս» ձևով[3]: Իսկ հայկական աղբյուրներում՝ «քորեպիսկոպոս» կամ «մեծ քորեպիսկոպոս» տարբերակներով[4]: Նեղ իմաստով քորեպիսկոպոս կնշանակի թեմի կառավարման գործում եպիսկոպոսի տեղակալ կամ օգնական, սակայն ժամանակի ընթացքում այն դառնում է Կախեթի տիրակալի տիտղոս[5]:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Ծանարաց քորեպիսկոպոսությունը տարածքային պայքար էր մղում միայն արևմուտքում, իսկ արևելքում, որտեղ կազմավորվել էր Շաքե-Կամբեճանի իշխանությունը, սկզբնաղբյուրները որևէ դեպք կամ դիպված կապված սահմանների փոփոխության հետ չեն հիշատակում: Միայն Սմբատ Ա-ից հետո է, որ Ծանարաց քորեպիսկոպոսները սկսում են ուշադրություն դարձնել Շաքեի թագավորությանը վերջինիս Ատրներսեհ թագավորի օրոք: Վախուշտ Բագրատիոնը գրում է, որ X դ. առաջին կեսին Հերեթում իշխում

---

[1] Հայտնի է, որ խևսուրների երկիրը կամ Խևսուրքը գտնվում էր Լիախվի գետի ակունքների շրջանում՝ Ծանարքից արևմուտք (տե՛ս **Ս. Երեմյան**, «Աշխարհացույցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ,-«ՊԲՀ», 1973, թիվ 2, էջ 269, ծ. 84):

[2] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 529-530:

[3] Տե՛ս مسعودي, I, էջ 204:

[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 304:

[5] Տե՛ս **Հ. Մկրտումյան**, Ծանարների ցեղը և նրանց դերը Դարյալի լեռնանցքի պահպանության գործում,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1972, թիվ 6, էջ 86-87:

էր Ատրներսեհը, որը, սակայն, Ծանարաց քորեպիսկոպոսի և Տփղիսի ամիրայի թշնամական գործողությունների հետևանքով վախից իրեն այլևս թագավոր չէր կոչում: Ծանարաց Կվիրիկե քորեպիսկոպոսը 915 թ. կազմակերպեց Աբխազաց թագավոր Կոստանդինի արշավանքն Ատրներսեհի թագավորության դեմ: Արշավանքն զգալի արդյունքներ չտվեց, և նրանք հաշտություն կնքեցին[1]:

Տարածքային առումով VIII դ. վերջին ստեղծված Ծանարաց քորեպիսկոպոսությունը սկզբնապես ընդգրկում էր միայն Ծանարքը և հարևան ցեղերին, սակայն երբ հակաարաբական շարժման մեջ ընդգրկվեցին նախապես Տփղիսի ամիրայության մեջ մտնող և Կախեթի հարթավայրային մասում՝ Տփղիսից արևելք բնակվող գարդաբանցիները, այն հանգեցրեց Կուր գետի՝ Տփղիսից արևելք գտնվող հատվածից մինչև Ալանաց դուռն ընկած տարածքներն ընդգրկող Ծանարաց միասնական քորեպիսկոպոսության կազմավորմանը: Սկզբնապես, ինչպես տեսանք, գարդաբանցիներն այնքան հաջող ներգրավվեցին այդ շարժման մեջ, որ սկսեցին վճռական դեր խաղալ քորեպիսկոպոսության կյանքում և նույնիսկ նրանց ներկայացուցիչները դարձան Կախեթի քորեպիսկոպոսներ:

Խնդրո առարկա շրջանում Ծանարաց քորեպիսկոպոսությունը Տփղիսի ամիրայությանը սահմանակցում էր ներկայիս Գարդաբան քաղաքից հյուսիս սկզբնավորվող Քարթլիի և Կախեթի լեռնաշղթաների հարավային ճյուղավորումներով և Գոմբորի լեռնաշղթայի կենտրոնական հատվածի հարավային ճյուղավորումներով, իսկ Տփղիս քաղաքից հյուսիս՝ Կուր գետով: Վիրքի իշխանությունների հետ Կախեթի քորեպիսկոպոսության արևմտյան սահմանագիծն անցնում էր սկզբնապես Քսան գետով, իսկ այնուհետև՝ Քսան և Արագվ գետերի ջրբաժանով, այսինքն՝ Գուդամակարի լեռնաշղթայով: Այնուհետև սահմանագիծը թեքվում էր արևմուտք և Մտիուլեթիի լեռնաշղթայի ջրբաժանով Արագվ գետի ակունքների շրջանում հասնում մինչև Գուդիսի լեռնաշղթան, որի ջրբաժանով շարժվում էր մինչև Ջավա քաղաքից հյուսիս սկզբնավորվող լեռնաբազուկը: Վերջինիս ջրբաժանով սահմանագիծն հասնում էր Կովկասյան լեռներին՝ ընդգրկելով Մեծ Լիախվ գետի ակունքների շրջանը՝ Խևսուրքը: Ծանարաց քորեպիսկոպոսության հյուսիսային սահմանագիծն անցնում էր Կովկասյան լեռների ջրբաժանով՝ սկսած Մեծ Լիախվ գետի ակունքների շրջանից մինչև Ալանաց դուռ, որից

---

[1] Տե՛ս Âàõóøòè Áàãðàòèîíè, էջ 127:

դեպի արևելք ընդգրկում էր Անդյան Կոյսու գետի ակունքների շրջանում գտնվող Դիդոյքն ու Թուշքը:

Ծանարաց քորեպիսկոպոսության սահմանագիծը Շաքե-Կամբեճանի իշխանության հետ անցնում էր հյուսիսից հարավ, սկսած Բողոսի լեռնաշղթայի հարավային հատվածից Կովկասյան լեռնաշղթայի հարավային լեռնաբազուկով, այնուհետև կիսելով Ալազանի հարթավայրը՝ անցնում էր Թելավ քաղաքի արևելյան կողմով, ներկայիս Սագարեջո և Գուրջաանի բնակավայրերի միջով հասնելով Կամբեճ կամ Իոր գետին: Հատելով գետը՝ սահմանգիծը թեքվում էր արևմուտք և Ռուսթավից ու Կալա իբն Քանդամանից արևելք հասնում էր Տփղիսի ամիրայության սահմանին:

4.4. Կղարջքի կուրապաղատություն: Ինչպես տեսանք, Կղարջքի կուրապաղատությունում հաստատվել էին 774-775 թթ. ապստամբությանը մասնակցած և դրա պարտությունից հետո իրենց տիրույթներից հեռացած Բագրատունիները:

Ի սկզբանե նշենք, որ Ն. Մառը, հետազոտելով վրացական աղբյուրները, եկել է այն համոզման, որ նույնիսկ X դ. կեսերին վրացերենը Կղարջքում բնակչության լեզու չէր, այլ օգտագործվում էր միայն եկեղեցական արարողությունների ժամանակ[1]: Կղարջքի բնակչության լեզուն հայերենն էր[2]: Այնուհետև Ն. Մառը, խորացնելով իր դիտարկումները և հիմնվելով վրացական աղբյուրների վրա, նշում է, որ IX-X դդ. վրաց հոգևորականները Կղարջքում շրջապատված էին թեև քաղկեդոնական դավանանք ունեցող, բայց հայ բնակչությամբ[3]: Բացի այդ, որոշ տվյալ-

---

[1] Դատելով Գեորգի Մերչուլի հաղորդումներից՝ Գրիգոր Խանձթեցու կողմից մշակված բանաձևի համաձայն՝ Վրաստան էր համարում այն երկիրը, որտեղ եկեղեցական ծառայությունն իրականացվում և աղոթքները կատարվում էին վրացերեն լեզվով (տե՛ս **Георгий Мерчуле**, գլ. XLIII): Պետք է նշել, որ քաղկեդոնական հայերը, դատելով տարբեր տեղեկություններից, եկեղեցական արարողությունները հաճախ կատարում էին հայերեն: Այդ է փաստում հայերեն Ավետարանը՝ գտնված Թորթոմ գետի հովտում գտնվող Վիհիկ գյուղից (տե՛ս **Н. Марр**, Об армянской иллюстрованной рукописи из халкедонитской среды,-**Н. Марр**, Кавказский Культурный мир и Армения, էջ 302-306): Բացի այդ, Նիկոն Սևսարեցու «Տակտիկոն»-ում (XI դ.) պահպանվել են փաստաթղթեր, որոնք վերաբերում են հայ քաղկեդոնականներին: Վերջիններս կոչվում են ծաթեր: Ասվում է, որ նրանք եկեղեցական արարողությունները կատարում էին հայերեն (տե՛ս **Н. Марр**, Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах,- **Н. Марр**, Кавказский Культурный мир и Армения, էջ 242-244: Տե՛ս նաև **Հարությունովա Վ.**, Գրիգոր Պակուրյանը (Բակուրյանը) և Պետրիծոնում վանք հիմնելու նրա նպատակները, էջ 173):

[2] Անդ, էջ XVI:

[3] Տե՛ս **Н. Марр**, Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах,- **Н. Марр**, Кавказский Культурный мир и Армения, էջ 228-230:

ների համաձայն, Կղարջքում՝ Արտանուջի անմիջական մոտերքում գտնվող Տանձոտ բնակավայրում, XI դ. կեսերին (1059 թ.) բնակվում էին լուսավորչական հայեր[1]: Դատելով Գեորգի Մերչուլի հաղորդումներից՝ Կղարջքում այլ հատվածներում էլ կային լուսավորչական հայեր: Հենց նրանց մասին է հարցնում Օպիզա վանքի վանահայրը Գրիգոր Խանձթեցուն, թե արդյոք պե՞տք է կնքել հերետիկոսների (իմա՛ հայադավանների) զավակին, եթե նա ցանկանում է դառնալ ուղղափառ: Գրիգոր Խանձթեցին պատասխանում է, որ Պողոս առաքյալն էլ սխալ էր համարում նրանց, որոնք իրենց կոչում են առաքյալների անուններով (ի նկատի ունի՝ հայադավանների՝ առաքելական կոչվելը): Հերետիկոսները, ըստ Գրիգոր Խանձթեցու, հեռացել են մայր կաթոլիկ-առաքելական եկեղեցուց, և նրանց զավակներին հարկ է կնքել[2]: Պ. Մուրադյանը ցույց է տվել, որ «Պղնձե քաղաքի պատմություն»-ը Դավիթ կուրապաղատի (X դ. երկրորդ կես) հանձնարարությամբ արաբերենից թարգմանվել է հայերեն, որ այն պատմվի արքունիքում՝ թագավորներին և իշխաններին զվարճացնելու համար: Դրանից բխում է, որ Տայքի կուրապաղատության ոչ միայն ժողովուրդը, այլև Դավիթ կուրապաղատը, իր պալատականներն ու իշխանները, նույնպես եղել են հայախոս հայեր[3]: Վերոհիշյալը ցույց է տալիս, որ նույնիսկ Կղարջքի կուրապաղատությունը խնդրո առարկա շրջանում չուներ վրացական կամ վրացադավան դիմագիծ[4]:

---

[1] Տե՛ս **Հ. Բարթիկյան**, Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր,-«Բանբեր մատենադարանի», 1960, թիվ 5, էջ 411-413:

[2] Տե՛ս **Георгий Мерчуле**, գլ. LXXV:

[3] Տե՛ս **Պ. Մուրադյան,** «Պատմութիւն Պղնձէ քաղաքի» զրույցի հայկական և վրացական պատումների և նրանց փոխհարաբերության շուրջ,-«ԲԵՀ», 1962, թիվ 6, էջ 249-262:

[4] Հաճախ, երբ տեղի բնակիչներն իրենք իրենց կոչում են կամ այլոց կողմից կոչվում վրացի, վերջինիս տակ հասկանում են վրացադավանությունը (տե՛ս **Մուրադյան Պ.**, Գրիգոր Բակուրյանի «Սահմանք»-ի հունարեն և վրացերեն խմբագրությունների գնահատման հարցի շուրջ,-«ՊԲՀ», 1968, թիվ 1, էջ 103): Անդրադառնալով Տայքի և Կղարջքի քաղկեդոնական հայերին՝ Վ. Հարությունովան նշում է, որ, լինելով քաղկեդոնականներ՝ նրանք պետք է մտնեին սահմանակից Վիրքի քաղկեդոնական եկեղեցու կազմի մեջ: Կղարջում և Տայքում եկեղեցական արարողությունների լեզուն դառնում է վրացերենը, իսկ այդ արարողությունների համար անհրաժեշտ հայերեն գրականությունը՝ թարգմանվում վրացերեն: Աստիճանաբար, Կղարջքի հայերը տեղ-տեղ սկսում են խոսել վրացերեն, տեղ-տեղ էլ՝ խառը՝ «վրացահայերեն»: Իսկ Տայքում եկեղեցական արարողությունները կատարվում են վրացերեն, սակայն, մնացյալ բնագավառներում օգտագործվում էր հայերենը: Հայ քաղկեդոնականները սկսում են իրենց անվանել այն ժողովրդի անունով, որից ընդունել էին քաղկեդոնականությունը՝ հույներ կամ վրացիներ: Միևնույն ժամանակ, «հայ» բառը սկսում է ընկալվել որպես «միաբնակ» հասկացության հոմանիշ (հետազոտողը իր այս տեսակետը կառուցում է Ս. Երեմյանի մի ձեռագիր հոդվածի վրա (**С. Еремян**, Замечания на труд Н. М. Токарского "Архитектура древней Армении"): Այդ մասին մանրա-

Պետք է նշել, որ սկզբնաղբյուրներում պահպանված որոշ հիշատակություններ հիմք են տալիս ենթադրելու, որ Կղարջքի Բագրատունիները (կամ նրանց մի մասը) IX դ. ընթացքում դեռևս քաղկեդոնական չէին: Ստեփանոս և Ներսես Մեծոփեցիների անունով մեզ հասած մի ձեռագրի տեղեկությունների համաձայն՝ Կղարջքի Բագրատունիները Հայաստանից «գնացին ի մէջ Վրաց և եղեն նոցա թագաւոր և յետոյ եղեն քաղկեդոնիկ»[1]: Հայկական իրականության մեջ քաղկեդոնական հայերի գոյության հարցն այնքան ցավոտ խնդիր էր, որ պատմիչը հարկ է համարել հիշատակել Կղարջքի Բագրատունիների՝ քաղկեդոնական դառնալու իրողությունը, ըստ որում՝ ճշգրտելով, թե հատկապես երբ է դա տեղի ունեցել: Պատմիչը ներկայացնում է իրար հաջորդող երեք իրողություն՝ ա. Բագրատունիները Վիրք (իմա՛ Կղարջք) է տեղափոխվել Հայաստանից, բ. այդ ճյուղի ներկայացուցիչները Վիրքում թագավոր դարձան, գ. նրանք այդուհետ դարձել են քաղկեդոնական: Կղարջքի Բագրատունիների՝ սկզբում Վրաց թագավոր և միայն հետո քաղկեդոնական դառնալու մասին տեղեկությունը կարևոր հետևություններ է ծնում, որովհետև հայտնի է, որ Աշոտ կուրապաղատի թույլատվությամբ և աջակցությամբ քաղկեդոնական եկեղեցիների շինարարությունը Կղարջքում IX դ. առաջին կեսին մեծ չափեր էր ընդունել[2]: Հայտնի է նաև, որ Աշոտ կուրապաղատի որդիներից Գուառամն ընդդիմանում էր եղբոր՝ Բագարատի կողմից հովանավորվող քաղկեդոնական Գրիգոր Խանձթեցու հոգևոր իշխանությանը[3]: Պետք է նշել, որ Աշոտ կուրապաղատի կողմից քաղկեդոնական եկեղեցիների շինարարությունը հովանավորելը միանշանակորեն չի ցուցանում նրա՝ քաղկեդոնական լինելը: Խնդիրն այն է, որ իրենց տիրույթներից հեռացած Բագրատունիները Կղարջքում հայտնվել էին գերազանցապես քաղկեդոնական միջավայրում, որի հետևանքով կամա թե ակամա պետք է թույլատրեին, իսկ հետո նաև հովանավորեին քաղկեդոնական եկեղեցիների շինարարությունը: Սակայն, այդ միջավայրն աստիճանաբար կլանել է նրանց, որը, եթե հավաստի է Ստեփանոս և Ներսես Մեծոփեցիների հիշատա-

---

մասնորեն տե՛ս Վ. Հարությունովա, Գրիգոր Պակուրյանը (Բակուրյանը) և Պետրիծոնում վանք հիմնելու նրա նպատակները,-«Մառը և հայագիտության հարցերը», Եր., 1968, էջ 170-173): Վերոհիշյալ հեղինակների տեսակետները քննադատության են ենթարկվել Դ. Մուսխելիշվիլիի կողմից (տե՛ս "Некоторые вопросы истории Грузии в армянской историографии" (Тб., 2009) վերնագրով հոդվածների ժողովածուի նախաբանը (էջ 5-10)):

[1] Տե՛ս **L. Խաչիկյան,** Հայ պատմագրության անհայտ էջերից,-«ՊԲՀ», 1972, թիվ 4, էջ 239:

[2] Տե՛ս **Георгий Мерчуле**, գլ. X, XXVIII և այլն:

[3] Անդ, գլ. XLII:

կությունը, տեղի է ունեցել Սմբատ Ա-ի կողմից Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհին թագավոր հռչակվելուց (899 թ.) հետո, երբ, 908 թ. սկսած, Կղարջքի Բագրատունիները հետզհետե սկսեցին անկախանալ: Կարծում ենք, որ սկզբնաղբյուրների նման տեղեկությունները, ինչպես նաև դրանցից բխող ենթադրությունները բավարար են, որպեսզի Կղարջքի Բագրատունիների՝ քաղկեդոնականությունն ընդունելու ժամանակի հարցը դառնա առանձին քննության նյութ:

Կղարջքի կուրապաղատության և Վիրքի վարչաքաղաքական իրավիճակի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է տալ նախորդող ժամանակաշրջանի մի համառոտ պատմաաշխարհագրական ակնարկ:

Մեծ Հայքի թագավորության Գուգարք աշխարհը Սասանյան Պարսկաստանի տիրապետության օրոք միացվել էր Վրաց մարզպանությանը, որի մեջ էին մտնում նաև բուն Վիրքը, Ծանարքը և Կախեթը[1]: VII դ. սկզբին նշված և մի քանի այլ տարածքներից արաբները կազմեցին Արմինիա ոստիկանության Երկրորդ Արմինիա վարչական շրջանը[2]:

Արաբների վարչական բաժանման հիմքում դրված էին հետևյալ վարչաքաղաքական իրողությունները.

ա. Երկրորդ Արմինիան ընդգրկում էր Վրաց մարզպանության տարածքը՝ բացառությամբ Տփղիս քաղաքի և շրջակայքի: Վերջիններն արաբները մտցրել էին Առաջին Արմինիայի մեջ[3], որ արտացոլում էր Հայաստանի և Վիրքի 591 թ. պարսկա-բյուզանդական բաժանումից հետո ստեղծված իրավիճակը: Մեր կարծիքով, այստեղ բացվում է Սասանյանների տիրապետության օրոք տեղի ունեցած վարչական մեկ փոփոխության գաղտնիքը: 591 թ. բաժանումից հետո, հավանաբար, Սասանյանները Տփղիսը միացրել էին Աղվանից մարզպանությանը, որին ակնատես եղան արաբ նվաճողները: Խնդրո առարկա շրջանում Տփղիսում գոյություն ուներ քաղաքն ու շրջակայքն ընդգրկող համանուն ամիրայություն,

բ. Գուգարքի արևմտյան հատվածը Վրաց մարզպանության մեծ մասի հետ 591 թ. բաժանումով անցել էր Բյուզանդիային[4], իսկ հետագայում՝ նվաճվել արաբների կողմից: Արաբները, Հայաս-

---

[1] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի,- «ԲԵՀ», 1977, թիվ 2, էջ 187-188:

[2] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 120, **Ibn al-Fakih**, էջ 290-291, **Jacut**, I, էջ 219-220:

[3] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 120, **Ibn al-Fakih**, էջ 290-291:

[4] Տե՛ս **Սեբեոս**, էջ 84: Տե՛ս նաև **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 140:

տանը թուլացնելու նպատակով, Գուգարքը վարչականորեն անջատեցին հայկական մյուս տարածքներից՝ այն մտցնելով Երկրորդ Արմինիայի մեջ,

գ. ինչ վերաբերում է Կախեթին և Ծանարքին, որոնք մաս էին կազմում Վրաց մարզպանության, ապա դրանք իրենց վրա պահպանեցին մարզպանության անունը նաև 591 թ. բաժանումից հետո, իսկ հետագայում արաբների կողմից մտցվեցին Երկրորդ Արմինիայի մեջ:

774-775 թթ. ապստամբությունը կտրուկ փոխեց իրավիճակն Արմինիայում: Արաբներն անզոր գտնվեցին Արմինիայում ունեցած ուժերով այն ճնշել և որդեգրեցին նոր քաղաքականություն: Բացի այն, որ այդ ապստամբությունից հետո նրանք Արմինիա տեղափոխեցին մեծաթիվ արաբական ցեղեր, նրանք սկսեցին Արմինիայում իրենց տիրապետությունը պահպանելու համար հույս կապել նույն այդ ապստամբությունից հետո աննախադեպ հզորության հասած Բագրատունիների հետ: Ապստամբությունից հետո դրան մասնակցած Բագրատունիների մի ճյուղը՝ արաբների վրեժխնդրությունից խուսափելու նպատակով, հեռացավ իր տիրույթներից և ապաստանեց Կղարջքում:

774-775 թթ. ապստամբությունից հետո, ինչպես տեսանք, տեղի են ունենում երկու կարևոր իրադարձություն՝ Տայքին տիրում է Աշոտ Մսակեր Բագրատունին, իսկ Կղարջքում հաստատվում են ապստամբությանը մասնակցած Բագրատունիները: Ինչպես նշում են Հ. Մարկվարտը և Ն. Ադոնցը, «Վրաց» կոչված Բագրատունիները տիրում էին միայն Կղարջքին[1]:

Կղարջքի Բագրատունիների ներկայացուցիչ Աշոտը, ինչպես նշում է Վարդան վարդապետը, խալիֆայից իշխանություն էր ստացել Վիրքի վրա: Նրա իշխանությունը շուտով ճանաչեց նաև Բյուզանդիան: Օգտվելով դրանից՝ Աշոտ կուրապաղատը տիրեց Կղարջքից մինչև Տփղիս ընկած շրջաններին[2]:

«Քարթլիի մատյանի» պահպանած մի հաղորդման համաձայն՝ Կղարջքում հաստատված Վասակ Բագրատունու որդի Ատրներսեհը տիրում էր այսպես կոչված Ստորին Տայքին կամ Ասիսփորիին (թերևս Արսեաց փոր), Շավշքին, Կղարջքին, Նիգալին, Ագարին (էգր) և Սամցխեին[3]: Ըստ Դավթի որդի Սմբատի՝ Աշոտ կուրապաղատը իշխում էր

---

[1] Տե՛ս Յ. Մարկուարտ, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 138, **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 504:

[2] **Վարդան վարդապետ**, էջ 83-84:

[3] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 28-29:

Շավշքում և Կղարջքում[1]: Այնուհետև, հեղինակը տեղեկացնում է, որ Աշոտի տիրույթներն էին Շավշքը, Կղարջքը և Նիգալը[2]: Այդ իրողությունը հաստատում են նաև Գեորգի Մերչուլի տեղեկությունները՝ Կղարջքի հոգևոր առաջնորդ Գրիգոր Խանձթեցու եկեղեցաշինական գործունեության մասին, որն ամփոփված էր միայն Կղարջքով և հարևան որոշ շրջաններով[3]: Ինչպես տեսանք, այն բանից հետո, երբ Կղարջքի հոգևորականներից Սաբանը տեղափոխվեց Իշխանի վանք, նա դադարեց ենթարկվել Կղարջքի կուրապաղատին[4]: Խնդիրն այն էր, որ Իշխանի վանքն դուրս էր Կղարջքի կուրապաղատության սահմաններից: Բացի այդ, Աբխազաց թագավորին նկարագրելով Կղարջքը և այնտեղի եկեղեցիները՝ Գրիգոր Խանձթեցին, ըստ Գեորգի Մերչուլի, մասնավորապես պատմում է, որ Կղարջքի եկեղեցիները մի կողմից սահմանակցում են Աբխազաց թագավորությանը Ղադո լեռներով (Մոսքական լեռների շրջանում), իսկ մյուս կողմից շրջապատված են Շավշքի մեծ գետերով: Ընդհանրապես, Գեորգի Մերչուլի հիշատակած անվանումը՝ «Կղարջքի մենաստաններ», արդեն իսկ խոսում է այն բանի օգտին, որ դրանք բոլորը գտնվում էին Կղարջքում[5]: Սակայն, չնայած վրացական աղբյուրների տեղեկությանը, Մ. Լորդկիպանիձեն և այլք փորձում են ցույց տալ, թե Աշոտ կուրապաղատը տիրում էր Շավշքին, Կղարջքին, Նիգալին, Ագարին, Տայքին, Սամցխեին, Ջավախքին և Արտահանին[6]: Սակայն, վերևում արդեն տեսանք, որ Աշոտ կուրապաղատը տիրում էր միայն Կղարջքին, Շավշքին ու Նիգալին, իսկ երբ տիրեց Կղարջքից մինչև Տփղիս ընկած հողերին, հակահարված ստացավ արաբներից, ծանր պարտություն կրեց և սպանվեց[7]:

Համադրելով վերոհիշյալ տեղեկությունները՝ համոզվում ենք, որ Ատրներսեհի ոչ բոլոր տիրույթներն են ժառանգական իրավունքով անցել նրա որդի Աշոտին: Նա ժառանգել է միայն Շավշքը, Կղարջքը և Նիգալը: Իսկ Տայքն ամբողջությամբ կցվել էր Բագրատունիների տիրույթներին Հայոց իշխան Աշոտ Մսակերի օրոք: 826 թ. վախճանվեցին Աշոտ Մսակեր Բագրատունին և Կղարջքի իշխան Աշոտը: Բայց եթե Աշոտ Մսակերը հասավ իր բոլոր նպատակների իրականացմանը, ապա Աշոտ կուրապաղատը անհաջողության մատնվեց: Ինչպես տեսանք, ըն-

---

[1] Сумбат Давитис-дзе, էջ 31:
[2] Անդ, էջ 31-32:
[3] Տե՛ս Георгий Мерчуле, գլ. X, XXVIII:
[4] Անդ, գլ. XXVI:
[5] Անդ, գլ. XXII:
[6] Տե՛ս Ì. Ëîðäêèïàíèäçå, նշվ. աշխ., էջ 308:
[7] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 29:

դարձակ տիրույթներ ունեին Աշոտ կուրապաղատի որդիները: Առավել լայնատարած էին Գուառամի տիրույթները, սակայն նրա մահից հետո նրա տիրույթներն անցան Հայ Բագրատունիներին:

Արդեն ցույց ենք տվել, որ Աշոտ Բագրատունին իր գերիշխանությունը Վիրքում հաստատել էր 881 թ.՝ հայ-աբխազական բախման ժամանակ հասնելով վճռական հաղթանակի: 888 թ., երբ Աշոտն արդեն թագավոր էր հռչակվել, տեղի ունեցավ հայ-աբխազական երկրորդ բախումը, որը կրկին ավարտվեց հայկական բանակի հաղթանակով:

Երբ Աշոտ Ա-ն Գուգարքի կենտրոնական և արևմտյան հատվածները կցեց արքունի տիրույթներին, Կղարջքի Բագրատունիների տիրույթները սահմանափակվեցին Կղարջքով և հարևան որոշ շրջաններով:

Վրացական պատմագրության մեջ, ինչպես տեսանք, փորձ է արվել ցույց տալու, թե իբր Աշոտ կուրապաղատի մահից հետո նրա ժառանգները միմյանց միջև բաժանել են Տայքն ու Կղարջքը, ինչը հակասում է պատմական փաստերին: Վրացական պատմաբանները փորձում են ցույց տալ նաև, թե «Վրաց» ապագա թագավոր Ատրներսեհն Աշոտ կուրապաղատի ժառանգներից Տայքի ճյուղի ներկայացուցիչն էր[1]: Սակայն այս պնդումը ևս չի դիմանում պատմական փաստերի քննությանը:

Վարդան վարդապետը հաղորդում է, որ Աշոտ Ա-ն «դնէ իշխան Վրաց զքեռորդի իւր, և ինքն կատարի ի Քրիստոս»[2]: «Իշխան Վրաց» արտահայտությունը, անկասկած, վերաբերում է Կղարջքի Բագրատունիներին: Հենց այդ ժամանակ է, որ Հայ Բագրատունիները Կղարջքի Բագրատունիներին հռչակում են որպես «իշխան Վրաց»: Ըստ որում, ինչպես տեսանք, «իշխան Վրաց» կոչումը նրանց տրվել է Հայոց արքայի կողմից դեռևս այն ժամանակ, երբ նրանք տիրում էին միայն Կղարջքին և շրջակա որոշ շրջանների: Երբ Աշոտ Ա-ն արշավանքի ելավ աբխազների, ալանների և Նասր Բագրատունու կազմած դաշինքի դեմ, նրա հետ էր Կղարջքի Դավիթ կուրատաղատի որդի Ատրներսեհը[3]: Փաստորեն, Կղարջքի իշխանն Աշոտ Ա-ի վերջին տարիներին արդեն Ատրներսեհն էր, ուստի՝ սխալ է Ն. Ադոնցի այն կարծիքը, թե Աշոտ Ա-ն մահվանից առաջ «Վրաց իշխան» է կարգել Դավթին[4]: Ն. Ադոնցի կար-

---

[1] Տե՛ս Ì. Ëîðäêèïàíèäçå, նշվ. աշխ., էջ 310: Ըստ Ս. Ջանաշիայի՝ Աշոտ կուրապաղատից հետո նրա իշխանությունը բաժանվել է երկու մասի՝ Կղարջքի կամ Արտանուջի, որի հիմնադիրը նրա որդի Ատրներսեհն էր, և Տայքի, որի հիմնադիրը նրա մյուս որդին էր՝ Բագարատը (տե՛ս **С. Джанашиа**, նշվ. աշխ., էջ 20-21):

[2] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 91:

[3] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 31:

[4] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 505:

ծիքի դեմ է իր իսկ կողմից Դավթի մահվան թվագրումը 881 թ.-ով[1]: Այդ ժամանակ Աշոտ Ա-ն դեռ պաշտոնապես թագավոր չէր ճանաչվել Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության կողմից, իսկ, ինչպես տեսանք, Կղարջքի Բագրատունի իշխանին Աշոտ Ա-ն «Վրաց իշխան» է կարգել մահվանից առաջ: Վերոհիշյալ ճշգրտումը ցույց է տալիս, որ Աշոտ Ա-ն «Վրաց իշխան» է կարգել Ատրներսեհ Բագրատունուն: Ատրպատականի ամիրա Ափշինը խալիֆայից թագ բերեց Սմբատի համար և Ատրներսեհի միջոցով մատուցեց նրան[2]: Այն, որ թագը Սմբատին է մատուցվում Ատրներսեհի միջոցով, արտացոլում է Հայ Բագրատունիների տերության համակարգի մի կարևոր առանձնահատկությունը: Կղարջքի Բագրատունիները՝ լինելով Հայ Բագրատունիների կրտսեր ճյուղի ներկայացուցիչներ, իրականացնում էին թագադիր ասպետի իրենց վաղնջական գործակալական պաշտոնն ավագ ճյուղի նկատմամբ, որ հասել էր հզորության ու արքայական թագի: Բացի այդ՝ Բագրատունիների ավագ և կրտսեր ճյուղերը սկսել էին դինաստիական ամուսնություններ կնքել: Պատահական չէ, որ Աշոտ Ա-ի քույրն ամուսնացած էր ապագա «Վրաց թագավոր» Ատրներսեհի պապի՝ Բագարատի հետ[3]:

890 թ. Հայոց գահին է բազմում Սմբատ Ա-ն: Նրա օրոք վերջնականապես ձևավորվում է Հայ Բագրատունիների տերության վարչաքաղաքական համակարգը[4]:

Երբ Վերին Միջագետքի Ահմադ ամիրան պարտության մատնեց Սմբատ Ա-ին, դրանից օգտվեց Ատրպատականի Ափշին ամիրան և ներխուժեց Սմբատ Ա-ի տերություն: Չնայած Սմբատ Ա-ի կրած դժվարություններին, Կղարջքի Ատրներսեհ իշխանը հավատարիմ մնաց նրան, որի համար էլ Սմբատ Ա-ն Ափշինի հեռանալուց հետո «կացուցանէ զնա թագաւոր Վրաց աշխարհին և երկրորդ իւրոյ տէրութեանն զնա հաստատէ»[5]: Թե ինչ տարածքների էր տիրում «Վրաց թագավոր» Ատրներսեհ Բագրատունին, սկզբնաղբյուրները հստակ տեղեկություններ չեն պահպանել: Պետք է եզրակացնել, որ նրա իշխանությունը տարածվում էր Տայքի, Գուգարքի, Աբխազաց թագավորության և Սամցխեի միջև: Դրանից բխում է, որ Ատրներսեհ Բագրատունին այդ ժամանակ տիրում էր Կղարջքին, Շավշքին, Ագարին (Էգր) և Նիգալին:

---

[1] Անդ, էջ 94:
[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 146-150:
[3] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 505:
[4] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 159-161:
[5] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 180-188:

4.5. Վիրք: Անդրադառնալով Վիրքին, պետք է նշել, որ IX դ. սկզբին այն գտնվում էր Տփղիսի ամիրայության գերիշխանության ներքո և իրենից ներկայացնում էր սահմանային շրջան[1]:

820-ական թթ. Վիրքին տիրելու փորձ են կատարում Ծանարաց քորեպիսկոպոսությունը, Աբխազաց թագավորությունը և Կղարջքի կուրապաղատությունը: Ըստ «Քարթլիի մատյան»-ի՝ Ծանարաց քորեպիսկոպոս Գրիգոլը (787-827) գրավեց Քսան գետի հովիտը, այսինքն՝ Վիրքի արևելյան հատվածը: Նրա դեմ դուրս եկավ Կղարջքի կուրապաղատ Աշոտ Բագրատունին՝ Աբխազաց թագավոր Թեոդոս Բ-ի (798-825) օգնությամբ: Գրիգոլին օգնության եկան մթիուլները կամ այն լեռնականները, որոնք բնակվում էին Դուշեթի շրջանում՝ փշավներից և խևսուրներից արևելք, Փշավյան Արագվ գետի կիրճում և Իոր գետի վերնագավառում[2], ինչպես նաև Տփղիսի ամիրան[3]: Ճակատամարտը տեղի ունեցավ Քսան գետի հովտում և ավարտվեց Գրիգոլի և Տփղիսի ամիրայի պարտությամբ, որոնք ստիպված եղան նահանջել գետի մյուս ափը: Ինչպես նշում է «Քարթլիի մատյան»-ը, Աշոտ կուրապաղատը տիրեց Վիրքի՝ մինչև Քսան գետն ընկած հողերին[4]: Սակայն, նա էլ շուտով պարտություն կրեց Տփղիսի ամիրայից, նահանջեց, որից հետո նրա տիրույթներն ամփոփվեցին Կղարջքով[5]:

Վիրքին տիրելու հաջորդ փորձը կատարեց Կղարջքի կուրապաղատ Բագարատը (826-876), որին Արմինիայի ոստիկան Մուհամմադ իբն Խալիդը (838-839) Տփղիսի ամիրա Իսհակի (833-853) դեմ պայքարում օգնություն ցուցաբերելու դիմաց խոստացավ Վիրքը[6]: Տիրելով Ուփլիսցխեին՝ ոստիկանի և կուրապաղատի զորքերը շարժվեցին դեպի Տփղիս: Նրանց դեմ դուրս եկան Տփղիսի ամիրայության և Ծանարաց քորեպիսկոպոսության միացյալ զորքերը[7]: Սակայն, գոյություն ունեցող իրավիճակը պահպանվեց[8]:

Ըստ Մասուդիի՝ այդ իրավիճակը շարունակվել է մինչև Մուտավաքքիլի Խալիֆայության տարիները (846-861): Այդ ժամանակ Տփղիսի ամիրա Իսհակի իշխանության տակ էր գտնվում Վիրքի մի զգալի մասը: 850-ական թթ. սկզբին, Բուղայի արշավանքի շրջանում, Տփղիսի ամի-

---

[1] Տե՛ս مسعودي, I, էջ 203-204:
[2] Տե՛ս **Г. Мкртумян**, նշվ. աշխ., էջ 74, ծ. 88:
[3] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 29:
[4] Անդ:
[5] Տե՛ս **Сумбат Давитис-дзе**, էջ 32:
[6] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 29:
[7] Անդ:
[8] Անդ:

ռայությունը ջախջախվեց, որի հետևանքով Վիրքում նրա դիրքերը խիստ թուլացան, իսկ սահմանները կրճատվեցին[1]:

Դատելով «Քարթլիի մատյան»-ի հաղորդած մի տեղեկությունից՝ Վիրքում Բուղայի արշավանքի շրջանում զգալի ազդեցություն ուներ Հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին (824-855): Մասնավորապես, երբ Բուղայի զորքերն արշավում էին դեպի Ալանաց դուռ, նրա ցուցումով մթիուլները դիմադրեցին Բուղայի զորքերին և արդյունքում պարտության մատնեցին արաբական զորքերին[2]: Անկասկած, այդ ազդեցությունը բխում էր այն իրողությունից, որ Բագրատունիներն այդ ժամանակ վարում էին Արմինիայի իշխանաց իշխանի պաշտոնը:

Ինչպես տեսնում ենք, Վիրքի հյուսիսային հատվածում բնակվող մթիուլները երբեմն հանդես էին գալիս Ծանարաց քորեպիսկոպոսի, երբեմն էլ՝ Կղարջքի կուրապաղատի կողմում: Վերջին դեպքում մեծ դեր էր խաղացել այն իրողությունը, որ նա համագործակցում էր Հայոց Սմբատ սպարապետի հետ: Մինչև IX դ. կեսերը Վիրքը ձեռքից ձեռք էր անցնում, որն էլ մղում էր տեղի իշխաններին և, մասնավորապես, մթիուլներին՝ հանդես գալու Վիրքում գերիշխանության համար պայքարող ուժերից առավել հզորի կողմում:

Բուղայի արշավանքից հետո ակտիվանում է պայքարն Աբխազաց թագավորության, Ծանարաց քորեպիսկոպոսության և Կղարջքի կուրապաղատության միջև՝ անտերունչ վիճակում հայտնված Վիրքին տիրելու համար: Այդ պայքարին շուտով խառնվում է նաև իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին, որը, ակնհայտորեն, սպասում էր պատեհ առիթի: Առիթը շուտով ներկայացավ, այն բանից հետո, երբ Աբխազաց Գիորգի Ա թագավորը (861-868) նվաճեց Վիրքը և որոշ ժամանակով այն ենթարկեց իր գերիշխանությանը[3]: Կղարջքի կուրապաղատները, Աբխազաց թագավորությանը դիմակայելու համար, անհրաժեշտաբար, սկսում են հույսը դնել իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու վրա, որն էլ միջամտում է Վիրքի համար մղվող պայքարին:

Վերջինիս կողմից Վիրքին տիրելու վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրների տեղեկություններին արդեն անդրադարձել ենք, իսկ ինչ վերաբերում է վրացական աղբյուրներին, ապա, համաձայն դրանց, Վիրքին տիրելու համար 881 և 888 թթ. տեղի են ունեցել հայ-աբխազական բախումներ: Զ. Անչաբաձեն, հիմք ընդունելով Ի. Ջավախիշվիլիի տեսակետը, նշում է, որ հայկական կողմը հաղթանակի է հասել այդ

---

[1] Տե՛ս مسعودي, I, էջ 203-204:
[2] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 30:
[3] Անդ, էջ 31:

պայքարում՝ տիրելով Վիրքին, որի պատճառով վրացական աղբյուրում Աշոտ Բագրատունին հիշատակվում է որպես «Հայոց և Վրաց իշխանաց իշխան»[1]: Մինչդեռ, ինչպես տեսանք, վրացի պատմաբաններից ոմանք Վիրքի համար մղվող պայքարում փորձում են անտեսել Հայ Բագրատունիներին:

Այսպիսով՝ անդրադառնանք Կղարջքի կուրապաղատության և Վիրքի սահմաններին:

Գուգարքի արևմտյան Կղարջք գավառին՝ շրջակայքով, տիրում էին Բագրատունյաց կրտսեր ճյուղի ներկայացուցիչները՝ Կղարջքի կուրապաղատները: Վրացի պատմաբանները փորձ են անում ցույց տալու, որ նրանց իշխանության մեջ էին մտնում նաև Տայքը, Ջավախքը և Արտահանը[2]: Արդեն տեսանք, որ Տայքը՝ Հայոց իշխան Աշոտ Մսակերի, իսկ Ջավախքն ու Արտահանը՝ Արմինիայի իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու օրոք, միացվել էին Հայ Բագրատունիների տիրույթներին: Տեսանք նաև, որ X դ. սկզբին Աբխազաց թագավորությունը կարողացավ կարճ ժամանակով տիրել Արտահանին, Գոգշենին և Կանգարքին, սակայն ջախջախիչ պարտություն կրեց Սմբատ Ա-ի զորքերից, որից հետո այդ գավառները կրկին միացվեցին Հայ Բագրատունիների արքունի տիրույթներին:

Կղարջքի կուրապաղատության սահմանագիծն արևմուտքում տարածվում էր մինչև Պարխարյան լեռների հյուսիսարևելյան ծայրը, հյուսիսում անցնում Մոսքական լեռների, իսկ հարավում և արևելքում՝ Արսիանի լեռնաշղթայի ջրբաժանով:

Տփղիսի ամիրայությունը տիրում էր Տփղիս քաղաքին շրջակայքով, այսինքն՝ նաև Գարդաբանին (մինչև IX դ. կեսերը), Կուխեթի հարավային մերձկուրյան հատվածին և Պարուար գավառին՝ Տփղիսից մինչև Կուր գետ՝ վերջինիս աջափնյակում[3]:

Այս շրջանների միջև գտնվող տարածքը, որ Աբխազաց թագավորությանը սահմանակցում էր Լիխի լեռնաշղթայով[4] և Ռաճայի ու Դվալի լեռնաշղթաների հյուսիսային հատվածներով, բուն Վիրքն էր: Վրաց իշխանությունները արևելքում սահմանակցում էին Ծանարաց քորեպիսկոպոսությանը մոտավորապես Արագվ գետով[5]:

Ինչ վերաբերում է Վրաց դաշտին, ապա այն, ամենայն հավանակա-

---

[1] Տե՛ս З. Анчабадзе, նշվ. աշխ., էջ 125:
[2] Տե՛ս Ì. Ëîðäêèïàíèäçå, նշվ. աշխ., էջ 308:
[3] Անդ, էջ 339-340:
[4] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 28:
[5] Տե՛ս Ì. Ëîðäêèïàíèäçå, նշվ. աշխ., էջ 266:

նությամբ, նույնական էր Կուր գետի միջին հոսանքի՝ Տփղիսից արևմուտք ընկած հովտին: Ըստ Ուխտանեսի՝ Վրաց դաշտը տարածվում էր Հայոց և Վրաց սահմանին[1], իսկ ըստ «Աշխարհացոյց»-ի՝ այդ սահմանը Կուր գետն էր (Վիրքը տարածվում է «մինչեւ ցՀայոց սահմանն՝ առ Կուր գետովն»)[2]: Ասողիկը տեղեկացնում է, որ «...Դաւիթ (իմա՛ Անհողին-Ա.Ե.)...ունի զկողմանս Տաշրաց եւ զՎրաց դաշտի զՇամշուլտեայ մեծ քաղաքանիստ դղեակն...»[3], իսկ այնուհետև, որ Հայոց Գագիկ թագավորը «գնաց զօրօք ի Տաշիր, շրջան առեալ ընդ Շամշուլտէ եւ ընդ Վրաց դաշտ»[4]: Այն, որ Վրաց կոչվող դաշտի մաս էր համարվում Տաշիրքի հյուսիսային հատվածը՝ Սամշուլդեով, կարևոր հետևություն է ծնում: Պետք է նշել, որ նույն այս տարածքները վրացիները Սոմխեթ (իմա՛ Հայք) էին կոչում[5]: Ամենայն հավանականությամբ, հայերը այն Վրաց դաշտ էին կոչում այնտեղ բնակվող հայերի մի մասի՝ վրացադավան լինելու պատճառով[6], իսկ վրացիները, քանի որ նրանք հայ էին, երկրամասն անվանում էին Սոմխեթ:

Հայոց տերության կազմի մեջ էին մտնում նաև Վիրքից դեպի հյուսիս բնակվող կովկասյան ցեղերը: Ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրության արդյունքները, Հայ Բագրատունիների տերության կազմում ընդգրկված «Կավկասայինք»-ը վերաբերում էր սվաններին և Ալանաց դռան շրջակայքում բնակվող ցեղերին: Կովկասյան լեռների արևմտյան հատվածի ցեղերի մասին կարելի է հստակ պատկերացում կազմել «Աշխարհացոյց»-ի հաղորդած տեղեկություններից, որոնք անհրաժեշտ ենք համարում մեջ բերել ամբողջությամբ: «Աշխարհացոյց»-ը՝ Սարմատիայի ցեղերի նկարագրության բաժնում՝ սկսելով Խազիրքից, Բուխքից և Բարսիլքից՝ մինչև Ղեկք կամ Լեկք, որ մտնում էր Շիրվանշահերի թագավորության մեջ[7], հիշատակում է. «Ապշեղք, Աբխազք, թագաւորական Սարմատք. Ձիակերք, Նախճամատակեանք, Որջլակերք, Սիսիկացիք, Միթռիկացիք, Ամազոնք, Ալանք, Խեբուրք, Քուգեւոք, Սիյիմք, Արդաւետք, Մարգոյլք, Թակոյիք, Արգողք, Գաճանք, Փինճք, Դուաղք, Խոնք, Ափուրք, Ծանաւրք՝ յորում Ալանաց դուռն, եւ Ծիծեն դուռն, Թուժք, Խուժք, Քիսք, Մարդակերք, Ցխաւատք, Գուդամակարք,

---

[1] Տե՛ս **Ուխտանես**, գլ. ԺԸ:
[2] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 28:
[3] Տե՛ս **Ասողիկ**, էջ 256:
[4] Անդ, էջ 279:
[5] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 95:
[6] Հնարավոր է նաև, որ այս շրջանը Վրաց դաշտ կոչվեր այն պատճառով, որ ժամանակին Սասանյանների կողմից մտցվել էր Վրաց մարզպանության կազմի մեջ:
[7] مسعودي, I, էջ 177:

Դուիցուկք, Դիդոյք»[1]: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ նույն հատվածն ունի հետևյալ տեսքը. «Գարշք եւ Քութք եւ Սւանք մինչեւ ցՊիսինուն (քաղաք) ծովեզերային Աւազով աշխարհի, որ են Ափշիլք եւ Աբխազք, մինչեւ ցքաղաքն իւրենաց ծովեզերային՝ Սեւաստուպաւլիք, եւ անդր եւս մինչեւ ցգետն որ կոչի Դռակոն, որ է Վիշապ, որ հոսի յԱղուանաց, եւ բաժանի ընդ Աբխազս եւ ընդ Եգր աշխարհ. եւ ունի ազգագաւառս քառասուն եւ վեց: Եւ ի հիւսիսոյ՝ առ Անծանօթ երկրաւ բնակեն թագաւորական Սարմատք եւ Չիակերք. իսկ առ մտիւքն Տանայիս գետոյ՝ բնակին Նախճամատեանք, եւ ազգ մի այլ որ են Կղարջք. եւ ապա Սիւռակացիք, ապա Միդոսդեսէն գաւառն. եւ ապա յարեւելից կուսէ Շանթային լերանցն բնակեալ են Ամազունք, որք են կանայք պատերազմողք, մինչեւ ցգետն որ կոչի Իռա, որ երկակի բղխէ ի հիւսիսոյ Անծանոթ երկրի, եւ միանան. եւ հասեալ մերձ Չիական լերանցն արձակէ վտակ մի ի Տանայիս գետոյ որ ի Միովիտ ծովակ իջանէ...ազգ Աղուանաց, Աշտիգոր որ ըստ հարաւոյ. համաբնակ նոցա Խեբուրք եւ Քութետք եւ Արգուել եւ Մարդոյլ, եւ Թակոյր. եւ Ալանք են յետ Դիքորին, յԱրդոզ աշխարհի Կաւկասին լերանցն...եւ ի նոյն լերինն՝ յետ Արդոզեան ազգին բնակեն Դաջանք, Դուալք, Ծըխոյք, Փուրքա, Ծանարքայ՝ յորում Ալանաց դուռն. եւ միւս դուռն որ ասի Քծեքեն, հոմանուն ազգի. եւ ապա Դուծք եւ Խուժք եւ Խիստք մարդակերք. ապա Չղաւատք, ապա Գուգամակարք, ապա Դուրծք, ապա Դիդոք»[2]:

Հայոց տերության կազմում ընդգրկված էին (Դ)Գաճանքը՝ Ռիոն գետի վերին հոսանքի ավազանում, Փինճքը՝ վերջինիցս դեպի արևելք, Դուաղքը՝ Արդոն գետի ակունքների շրջանում, Ցխոյմքը՝ Լե-Չխումիի շրջանում, Ափուրքը (Ավսուրք, Խևսուրք)՝ Լիախվ գետի ակունքների շրջանում, Ծանարքը՝ Ալանաց դռնով, Թուժքը (Թուշք)՝ Ալազան և Իոր գետերի ակունքների շրջանում, Ցխաւատքը՝ Սպիտակ Արագվ գետի ակունքների շրջանում, Գուդամակարքը՝ Գուդամակարիս Արագվ գետի կիրճում, և Դիդոյքը՝ Անդյան Կոյսու գետի ակունքների շրջանում[3]: Հայ Բագրատունիների տերության կազմի մեջ էին մտնում նաև վրացական աղբյուրներում հիշատակվող մթիուլները կամ այն լեռնականները[4], որոնք բնակվում էին Դուշեթի շրջանում:

Այսպիսով, Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջա-

---

[1] Տե՛ս Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 347:

[2] «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 25-27:

[3] Տե՛ս **Ս. Երեմյան**, «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ,- «ՊԲՀ», 1973, թիվ 2, էջ 268-270:

[4] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 29:

նում Վիրքը ընդգրկված էր Հայոց տերության կազմում: Տեղի վրացական իշխանները ենթարկվում էին միայն Հայոց թագավորին: «Վրաց իշխան» և «Վրաց թագավոր» տիտղոսները խնդրո առարկա ժամանակաշրջանում Հայոց թագավորների կողմից տրվել էին Կղարջքի Բագրատունիներին, որ տիրում էին միայն Մեծ Հայքի Գուգարք աշխարհի արևմտյան Կղարջք գավառին՝ հարակից որոշ շրջաններով և, կարճ ժամանակով՝ Տայքի հյուսիսային որոշ հատվածների, իսկ Գուգարքի մեծագույն մասը վերածվել էր Հայ Բագրատունիների արքունի տիրույթի: Ինչպես տեսանք, Սմբատ Ա-ն աբխազական արշավանքի և Կղարջքի իշխան Ատրներսեհի դեմ ուղղված պատժիչ արշավանքի ժամանակ[1] Տայքի վերոհիշյալ հատվածն ամբողջությամբ հանեց Ատրներսեհի ենթակայությունից, որից հետո Վրաց իշխանի տիրույթները՝ ըստ սկզբնաղբյուրների, հարավում սկսվում էին Կղարջքից: Տփղիսում և շրջակայքում ստեղծվել էր արաբական ամիրայություն, որ իր գոյությունը պաշտպանեց մինչև XII դ. սկիզբ[2]:

4.6. Սամցխեի իշխանություններ: Թեև մինչև այսօր խնդրո առարկա շրջանում Սամցխեի իշխանությունների գոյության մասին գիտական գրականության մեջ գրեթե չի խոսվել, սակայն փաստերը մեզ այն համոզմանն են բերում, որ IX դ. Սամցխեում սկսում են ձևավորվել առանձին իշխանություններ, որոնք X դ. 40-ական թթ.՝ Հայոց Աբաս թագավորի օրոք, հանդես են գալիս որպես մեկ թագավորություն:

Մենք արդեն անդրադարձել ենք այն խնդրին, որ Կղարջքում հաստատված Վասակ Բագրատունու որդի Ատրներսեհը տիրում էր, ի թիվս այլ շրջանների, նաև Սամցխեին, բայց վերջինս դուրս էր մնացել նրա որդի Աշոտ կուրապաղատի տիրույթներից: Սակայն, Վախուշտ Բագրատիոնը, անդրադառնալով Աշոտի որդիների տիրույթներին, մասնավորապես, Սամցխեն հիշատակում է որպես Բագարատի տիրույթ[3]:

Մյուս կողմից, հայտնի է, որ Սամցխեում գտնվող երեք բերդ՝ Օձրխեն, Ջվարիսցխեն և Լոմսիանթան կառուցվել էին Գուառամ Բագրատունու կողմից[4]: Կարելի է բխեցնել, որ Սամցխեի՝ Աբխազաց թագավորությանը հարակից հատվածը՝ վերոհիշյալ երեք բերդերով, մտնում

---

[1] Ինչպես հաղորդում է Հովհաննես Դրասխանակերտցին, երբ Սմբատ Ա-ն ազատ արձակեց Աբխազաց թագավորին, Կղարջքի թագավոր Ատրներսեհը և որոշ հայ նախարարներ դավադրություն կազմակերպեցին Հայոց թագավորի դեմ: Սմբատն արշավեց Ատրներսեհի դեմ, և վերջինիս այլ ելք չմնաց, քան հանձնվել և Սմբատին որպես պատանդ տալ իր որդուն (տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 210):

[2] Տե՛ս **À. Áîãâåðàäçå**, նշվ. աշխ., էջ 233:

[3] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 187:

[4] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 32, **Вахушти Багратиони**, էջ 187-188:

էր Գուառամ Բագրատունու տիրույթների մեջ: Այդ իսկ պատճառով, երբ Գուառամը Զավախքում եկեղեցական ժողով գումարեց՝ քննարկելու Վիրքի կաթողիկոս դարձած Արսենի խնդիրը, Կղարջքից որևէ հոգևորական չհրավիրեց: Միևնույն ժամանակ, ժողովին հրավիրվել էին Սամցխեի հոգևորականները, որոնք նույնպես դժգոհ էին Արսենի՝ կաթողիկոս դառնալու փաստից[1]:

IX դ. առաջին կեսին՝ Կղարջքում ծավալված եկեղեցաշինական աշխատանքներից հետո, Բագարատ կուրապաղատի օրոք, փորձ է կատարվում Կղարջքի հոգևոր իշխանությունը տարածելու Սամցխեում՝ այնտեղ ուղարկելով մի խումբ հոգևորականների՝ Սերապիոն Զարզմեցու գլխավորությամբ: Ըստ Վասիլ Զարզմեցու՝ Սամցխեի տարբեր շրջաններում Կղարջքի հոգևորականներին թշնամաբար էին ընդունում և արտաքսում իրենց երկրամասերից: Երբ նրանք նոր էին մտել Սամցխե և կառուցել առաջին վանքը, տեղի իշխանը չցանկացավ նրանց տեսնել իր տիրույթներում և վտարեց[2]: Ամենայն հավանականությամբ, այդ իշխանությունը սահմանակից էր Կղարջքի կուրապաղատությանը: Սակայն, Սամցխեի մյուս իշխաններից Գեորգի Չորչանեցին (Չորչան բնակավայրն այսօր էլ գոյություն ունի և գտնվում է ներկայիս Ախալցխա քաղաքից արևմուտք՝ Կուր գետի՝ Մոսքական լեռներից սկիզբ առնող վտակի ափին) նրանց հրավիրեց իր մոտ և իր իշխանության մեջ գործունեության ազատություն տվեց[3]: Գլխավոր վանքը, որ Կղարջքի հոգևորականները կառուցեցին Սամցխեում, Զարզմայի վանքն էր[4]: Սակայն, երբ Գեորգի Չորչանեցու մահից հետո նրա իշխանության մեջ երկպառակություններ սկսվեցին, հարցը կարողացավ լուծել միայն Սամցխեի Ածղուր վանքի հոգևոր առաջնորդ Գեորգին, որը դրանից հետո իր ձեռքը վերցրեց Սամցխեի հոգևոր ղեկավարությունը[5]: Ածղուր վանքը, ինչպես կտեսնենք, Սամցխեի եպիսկոպոսանիստ վանքն էր, որը խնդրո առարկա շրջանում դուրս էր Կղարջքի հոգևոր իշխանությունից և, ավելին, հակադրվում էր նրան: Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ Սամցխեն Բագարատի տիրույթների մեջ չէր մտնում, կամ, ավելի ստույգ, Բագարատի տիրույթների մեջ էր մտնում միայն Սամցխեի մի փոքրիկ մասը:

Անդրադառնալով Գեորգի Չորչանեցու իշխանությանը՝ հարկ ենք

---

[1] Տե՛ս Георгий Мерчуле, գլ. XLII:
[2] Տե՛ս Василий Зарзмели, գլ. V:
[3] Անդ, գլ. VI-VII:
[4] Անդ, գլ. VIII-XIII:
[5] Անդ, գլ. XVIII:

համարում նշել, որ՝ դատելով վերոասացյալից, այն չէր մտնում Կղարջքի կուրապաղատներից և ոչ մեկի տիրույթների մեջ, այլ անկախ էր: Խնդիրն այն է, որ, եթե այդ իշխանությունը ենթակա լիներ Բագարատ Բագրատունուն, ապա նա պարզապես Կղարջքի հոգևոր իշխանությունը կպարտադրեր տեղի բնակչությանը: Մինչդեռ, Գեորգի Չորչանեցին Կղարջքի հոգևորականների՝ Սամցխեում գտնվելու մասին տեղեկանալով՝ ինքը նրանց հրավիրեց իր մոտ: Նա այդ արեց զուտ հոգևոր իմաստով և ոչ թե ընդունելով Կղարջքի Բագրատունիների իշխանությունը: Ինչպես տեսանք, Գուառամ Բագրատունին, որը տիրում էր Սամցխեի որոշ հատվածների, հակադրվում էր Գրիգոր Խանձթեցու հոգևոր իշխանությանը: Կարծում ենք, որ Սամցխեում գտնվող այն իշխանությունը նույնպես, որտեղից Սերապիոն Զարզմեցուն վտարեցին, կամ անկախ իշխանություն էր և կամ ենթակա Գուառամ Բագրատունուն:

Խոսելով Գեորգի Չորչանեցու իշխանության մասին՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մի կարևոր իրողության: Ըստ Վասիլ Զարզմեցու՝ իշխանանիստ Զանավ ավանի (գտնվում է Չորչան բնակավայրից հյուսիս) մայր եկեղեցին կառուցվել էր Ամասպի և Քուրդիի կողմից[1]: Ամենայն հավանականությամբ՝ այդ անվանումների ներքո պետք է հասկանալ Համազասպ և Քուրդիկ անունները: Թեև Համազասպ անունը տարածում ուներ նաև Վիրքում, սակայն Քուրդիկ անունը գոյություն ուներ բացառապես հայկական իրականության մեջ և միայն Մամիկոնյանների շրջանում, որոնցից Քուրդիկ Մամիկոնյանը, ինչպես տեսանք, հիշատակվում է IX դ. սկզբին: Ուստի՝ Քուրդիկ անվան կողքին Համազասպի հիշատակությունը կարող ենք վերագրել այն բանին, որ խոսքը երկու Մամիկոնյան իշխանների մասին է: Բայց թե հատկապես ովքեր են նրանք եղել, սկզբնաղբյուրներում տեղեկությունների բացակայության պատճառով, դժվարանում ենք ճշգրտել: Հայտնի է միայն, որ VIII դ. երկրորդ կեսին, երբ արաբական տիրապետության դեմ ապստամբեց Արտավազդ Մամիկոնյանը, նա սկզբում հեռացավ «ի կողմանս Վրաց աշխարհին, և ընդ նմա ամենայն նախարարք աշխարհիս»: Արաբական զորքը հետապնդեց նրանց և հասավ «յաշխարհին Վրաց ի գաւառին որ կոչի Սամցխէ. և կալեալ զկիճսն՝ թափէր ապուռ ինչ յաւարէն. և զնոսա վարեալ փախստական առնէր

[1] Անդ, գլ. XVII:

յաշխարհէս Հայոց»[1]: Մենք արդեն ցույց ենք տվել, որ Արաբական խալիֆայության Արմինիա ոստիկանությունը բաժանված էր չորս վարչական շրջանի, որոնցից Երկրորդ Արմինիայի մեջ էր մտնում Սամցխեն: Ղևոնդը Երկրորդ Արմինիայի մեջ մտնող տարածքները ընդհանուր առմամբ կոչում է Վիրք, քանի որ արաբ տիրողները Երկրորդ Արմինիայի մեծագույն մասը կոչում էին Վիրքի անունից՝ Ջուրզան[2]: Այդ իսկ պատճառով Ղևոնդը Սամցխեն հիշատակում է Վիրքում՝ ի նկատի ունենալով Վիրքից մեծապես տարբերվող վարչատարածքային միավոր՝ Ջուրզանը: Սակայն, երբ նշում է Արտավազդի հեռանալը Սամցխեից, նա պարզապես մեջ է բերում փաստացի վիճակը՝ «յաշխարհէն Հայոց»:

Սակայն, խնդրո առարկայի համար առավել կարևոր է Ղևոնդի հաղորդման մյուս մասը. «...նոքա (իմա՛ Արտավազդ Մամիկոնյան և յուրայիններ-Ա.Ե.) երթեալ պատսպարէին յաշխարհին Եգերացւոց. և ստանայր անձամբ (իմա-Արտավազդ Մամիկոնյան-Ա.Ե.) զիշխանութիւն անձին իւրոյ ի վերայ Եգերացւոց և ի վերայ Վէռիոյ, որ են Վիրք»[3]: Այն, որ հաղորդման մեջ նշված Վիրքը բուն Վիրքին չի վերաբերում, հաստատվում է այն իրողությամբ, որ այդ շրջանում Վիրքի մեծագույն մասը գտնվում էր Տփղիսի ամիրայության կազմում և իրենից ներկայացնում էր սահմանային շրջան[4]: Եթե եզրակացնենք, որ խոսքը Սամցխեի մասին է[5], կարող ենք կատարել ևս մեկ կարևոր հետևություն: Սամցխեում կարող էին հաստատվել Արտավազդ Մամիկոնյանի հետ Հայաստանից հեռացած իշխաններ, այդ թվում՝ Համազասպը և Քուրդիկը Մամիկոնյանների տոհմից, որոնց կողմից կառուցված վանքի շրջակայքում գտնվում էր տեղի իշխանների հանգստարանը: Մասնավորապես, այնտեղ է թաղվել Գեորգի Չորչանեցի իշխանը[6]: Վերոհիշյալ եզրահանգումներն ունեն որոշակի թեականություն և կարող են հաստատվել կամ մերժվել մեզ անհասանելի այլ սկզբնաղբյուրների տեղեկություններով:

Երբ քաղաքական թատերաբեմից հեռացան Գուառամ և Նասր Բագրատունիները, նրանց տիրույթների մեծ մասն անցավ Հայոց Աշոտ

---

[1] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 138:

[2] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 57-58, 60-61, նույնի՝ «Տայքի իշխանությունը Հայ Բագրատունիների տերության համակարգում»,-«ՊԲՀ», 2008, թիվ 3, էջ 198-199:

[3] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 138-139:

[4] Տե՛ս مسعودي, I, էջ 203-204:

[5] Կ. Թումանովը կարծում է, որ Արտավազդից կարող էին սերել Լիպարիտյանները, որոնց ներկայացուցիչն էր Լիպարիտ Բաղվաշը (տե՛ս **C. Toumanoff**, The Mamikonids and the Liparitids.-"Armeniaca", Mélanges d'Études Arméniennes, Venice, 1969, էջ 129): Այդ մասին տե՛ս նաև **Ս. Երեմյան**, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, էջ 103-149:

[6] Տե՛ս **Василий Зарзмели**, գլ. XVII:

Ա թագավորին: Սամցխեում նրանց տիրույթները, ամենայն հավանականությամբ, անցան կամ Կղարջքի Ատրներսեհ Բագրատունի իշխանին և կամ Սամցխեի մյուս իշխանություններին: Առավել հավանական է երկրորդ հնարավորությունը, քանի որ, ինչպես ստորև կտեսնենք, Սամցխեի իշխանությունները պահպանեցին իրենց անկախ վիճակը:

Դատելով Մասուդիի տեղեկություններից՝ X դ. առաջին կեսին Սամցխեն վերածվեց առանձին թագավորության: Արաբ աշխարհագրագետը, որ եղել է Հայաստանում, մասնավորապես տեղեկացնում է. «Ջուրզանների (իմա՛ Վրաց-Ա.Ե.) թագավորության կողքին գտնվում է Սամսախի (իմա՛ Սամցխե-Ա.Ե.) կոչվող թագավորությունը: Բնակչությունը խառն է՝ քրիստոնյա և հեթանոս»[1]: Հեղինակը Սամցխեի թագավորությունը հիշատակում է Վրաց թագավորությունից առանձին, իսկ ինչ վերաբերում է բնակչության՝ քրիստոնյա և հեթանոս լինելու իրողությանը, ապա այն կարելի է հասկանալ ինչպես բառի բուն իմաստով, այնպես էլ որպես հայադավան և վրացադավան բնակչության առկայության վկայություն, քանի որ վերջիններս միմյանց հաճախ պարզապես կոչում էին «հերետիկոս», «անհավատ» և այլն:

Մեր քննությունը ցույց տվեց, որ Սամցխեում IX դ. աստիճանաբար հանդես են գալիս առնվազն երկու առանձին իշխանություն, որոնք նույն դարի երկրորդ կեսից մտնում էին Հայ Բագրատունիների տերության մեջ:

4.7. Լիպարիտ Բաղվաշի իշխանություն: Ըստ «Քարթլիի մատյանի»՝ 876 թ. Արգվեթից, որ գտնվում էր Ղվիրիլա գետի և Արգվեթի կամ Լիխի լեռնաշղթայի միջև[2], տեղափոխվել և Գուգարքի Թռեղք գավառին տիրել էր Լիպարիտ Բաղվաշ իշխանը՝ այնտեղ կառուցելով Կլդեկար(ն) ամրոցը[3]: Նա հպատակվել էր Աշոտ Բագրատունուն և վայելում էր նրա հովանավորությունը, որի ապացույցն է այն, որ նա մասնակցեց IX դ. 80-ական թթ. տեղի ունեցած հայ-աբխազական բախումներին հայկական կողմում[4]: Թռեղքը համապատասխանում է ներկայիս Թրիալեթի կամ Ծալկայի շրջանին[5]:

---

[1] Տե՛ս مسعودي, I, էջ 204:

[2] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 39:

[3] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 31, «Ջուանշէրի պատմչի համառօտ պատմութիւն Վրաց», Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1884, էջ 113: Տե՛ս **Ս. Երեմյան**, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, էջ 106-107:

[4] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 31:

[5] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 54:

Կ. Թումանովի կարծիքով՝ Լիպարիտ Բաղվաշը պատկանում էր Մամիկոնյանների տոհմին[1]:

4.8. Աբխազաց թագավորություն: Մենք արդեն ցույց ենք տվել, որ արաբական տիրապետության շրջանում Արմինիա ոստիկանության հյուսիսարևմտյան սահմանագիծը Ճորոխ գետից հյուսիս պետք է անցներ Մոսքական լեռներով (այժմ՝ Մեսխեթի լեռներ)՝ վերջինիցս դեպի արևմուտք գտնվող շրջանները թողնելով Բյուզանդական կայսրության և մասամբ Աբխազաց թագավորության կազմում[2]: Այստեղից դեպի հյուսիս, ըստ «Քարթլիի մատյանի»՝ սահմանն անցնում էր Լիխի լեռնաշղթայով, իսկ, այնուհետև, հավանաբար, Մեծ Լիախվ գետի վերին հոսանքի հյուսիսային ջրբաժանով ու Կովկասյան լեռների գագաթնագծով մինչև Ալանաց դուռը: Լիխի լեռնաշղթայից դեպի արևմուտք գտնվող շրջանները մտնում էին Աբխազաց իշխանության մեջ, որի իշխան Լևոնը VIII դ. վերջին հիմնեց Աբխազաց թագավորությունը[3]: «Քարթլիի մատյան»-ը հաղորդում է, թե Լևոնը, որը ժառանգել էր Աբխազաց իշխանությունը, մոր կողմից խազարների արքայի թոռն էր և վերջինիս օգնությամբ նա դուրս եկավ բյուզանդական տիրապետությունից ու, «տիրելով Աբխազեթին ու էգրիսին մինչև Լիխ, Աբխազական թագավոր կոչվեց»[4]:

Ինչպես վերևում ցույց տվեցինք, 881, 888 և 906 թթ. հայ-աբխազական բախումներն ավարտվել էին հայկական կողմի հաղթանակով: Արդյունքում Աբխազաց թագավորն ընդունել էր հայկական գերիշխանությունը: Աբխազաց թագավորության պատմական և աշխարհագրական հիմնական խնդիրները մանրամասնորեն արդեն քննարկել ենք մեր աշխատության էջերում, ուստի այժմ միայն անդրադառնանք նրա սահմաններին: Այն տարածվում էր Լիխի լեռնաշղթայից մինչև Սև ծով՝

---

[1] Տե՛ս C. Toumanoff, Armenia and Georgia.-The Cambridge Medieval History, IV, The Byzantine Empire, I, chapter XIV, Cambridge, 1966, էջ 612, նույնի՝ The Mamikonids and the Liparitids,-"Armeniaca", Mélanges d'Études Arméniennes, Venice, 1969, էջ 125: Ըստ Դ. Բակրաձեի՝ Լիպարիտ Բաղվաշի սերունդներից էր Վիրքում հանդես եկող այն Լիպարիտը (XI դ. սկիզբ), որը սկզբնաղբյուրներում ներկայացվում է որպես Օրբելյանների տոհմի ներկայացուցիչ (տե՛ս "Опись памятников древности в некоторых храмах и монастырях Грузии (грузинские надписи прочтены и истолкованы Д. Бакрадзе)", С.-Петербург, 1890, էջ 52): Լիպարիտի՝ Օրբելյանների տոհմին պատկանելու տեսակետը չի ընդունում Ս. Երեմյանը (տե՛ս Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, էջ 103-149):

[2] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 56-57, 62-63:

[3] Տե՛ս **Ì. Ëîðäàêèíà**, նշվ. աշխ., էջ 250, 281:

[4] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 28: Ավելի ուշ շրջանում սահմանը Լիխի լեռնաշղթայով անցնում էր նաև Աբխազաց ու Վրաց թագավորությունների միջև (անդ, էջ 52):

ընդգրկելով Աբխազքը՝ Բզիբ և Կոդոր գետերի միջև[1], Աբխազքից հյուսիս գտնվող ջիքերի կամ ադղների երկիրը, Ափշիլքը՝ Աբխազքից հարավ՝ մինչև Վիշապ (Դռակոն) գետ (այժմ՝ Ինգուր), Եգերքը կամ Լազիկան, այսինքն՝ Փասիս գետի (Ռիոն) ավազանը[2]: Աբխազաց թագավորության հյուսիսային սահմանագիծն անցնում էր Կովկասյան լեռնաշղթայի արևմտյան հատվածի ջրբաժանով, իսկ հարավայինը՝ Մոսքական լեռների արևմտյան հատվածի ջրբաժանով[3]:

Աբխազաց թագավորության մեջ էր մտնում Կոդոր գետի վերին հոսանքի շրջանում գտնվող միսիմիացիների երկիրը[4], որի գլխավոր ամրոց Ձախարի պաշտպանությունն արաբները VIII դ. սկզբին հանձնել էին մի ոմն Փարսմանի[5]:

Աբխազաց թագավորության մաս էր կազմում Արգվեթը:

Ամփոփելով Հայ Բագրատունիներին հպատակ այսրկովկասյան երկրների և իշխանությունների վերաբերյալ պատմաաշխարհագրական քննությունը՝ կարող ենք արձանագրել, որ Հայոց տերության սահմաններն արևմուտքում տարածվում էին մինչև Պոնտական (Սև) ծովի ափերը, հյուսիսում անցնում Կովկասյան լեռնաշղթայի ջրբաժանով, իսկ արևելքում՝ հասնում մինչև Կովկասյան լեռների արևելյան հատվածի լեռնաբազուկների շրջանը:

---

[1] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 42:

[2] Անդ, էջ 50, 54:

[3] Տե՛ս **Ì. Ëîðäåêèïàíèäçå**, նշվ. աշխ., էջ 283:

[4] Տե՛ս **Ä. Ìóñõåëèøâèëè**, Èñòîðè÷åñêàÿ ãåîãðàôèÿ Ãðóçèè IV-X ââ., էջ 386-387:

[5] Տե՛ս **Թեոփանես Խոստովանող**, էջ 104: Տե՛ս նաև **À. Áîãäàíîâàçå**, նշվ. աշխ., էջ 174:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Դվինի ամիրայություն: Դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ արաբները Դվինում հաստատվել էին դեռևս VII դ. վերջին: Մովսես Դասխուրացին հաղորդում է, որ «Ի ՃԽԶ երորդ թուականութեան Հայոց (697 թ.-Ա.Ե.) եկն Մահմետն Երկրորդ ի Հայս. և աճապարեալ ընդ աշխարհն Աղուանից՝ մտանէ ի Չոր»[1]: Հայոց Արևելից կողմանց պատմիչը տեղեկացնում է, որ Մահմետի կամ Մուհամմադ իբն Մրվանի՝ Չող (իմա՛ Ճորա պահակ) գնալուց հետո «ապստամբեալ Հայոց՝ արգելին զՏաճիկսն ի Դունի և ԿԲ հազարս ի Տաճկացն սպանին՝ ածեալ զօր բազում ի Հոռոմաց»[2]: Իհարկե, պատմիչի նշած թվաքանակը՝ 62 հզ արաբ, ամենայն հավանականությամբ, ուռճացված է, սակայն այն ցույց է տալիս, որ Մուհամմադ իբն Մրվանը, ելնելով Դվինի մեծ կարևորությունից, այնտեղ մեծ քանակությամբ արաբներ էր հաստատել, ըստ որում ոչ միայն զինվորական կայազոր, այլ նաև արաբ վերաբնակիչներ:

Արդեն VIII դ. սկզբին արաբները Դվինն օգտագործում էին որպես հենակետ: 705 թ., երբ արաբները Նախճավանի և Խրամի եկեղեցիներում այրեցին բազմաթիվ հայ նախարարների և նախարարական տոհմերի ներկայացուցիչների, «վրիժագործ այլազգիքն յապահովս կացեալք յերկիւղէ քաջացն զօրաց և զմնացեալ ընտանիս հրակիզելոցն գերի առեալ ածէին ի Դուին քաղաք. և անտի յուղարկեալ տանէին ի Դամասկոս»[3]: Հովհաննես Օձնեցուն փոխարինած Դավիթ կաթողիկոսի մասին խոսելիս Հովհաննես Դրասխանակերտցին պատմում է, թե «վասն զի ի բնակչաց հեթանոսաց ի Դվին քաղաքի յոյժ տաղտկացեալ լինէր այրն Աստուծոյ Դաւիթ, այլ և բազում չար ոճիրք զնա նեղեցին. ապա տագնապեալ և արտաքս ի միջոյ նոցա...շինէ եկեղեցի ի գեօղն

---

[1] **Մովսես Կաղանկատվացի**, էջ 317:
[2] Անդ, էջ 317-318:
[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 100:

Արամոնս»[1]: Փաստորեն արդեն VIII դ. առաջին կեսին արաբները Դվինը հենակետ էին դարձրել իրենց համար, այնտեղ կայազոր և արաբ վերաբնակիչներ հաստատել: Այդ իսկ պատճառով Դվինից հեռացավ նույնիսկ Հայոց կաթողիկոսը:

Դվնում արաբ վերաբնակիչները հիշատակվում են նաև 774-775 թթ. ապստամբության նախօրեին: Ըստ Ղևոնդի, երբ 774թ. ապստամբություն բարձրացավ արաբական տիրապետության դեմ, Դվինի արաբները՝ «արք և կանայք», խուճապահար եղան[2]: Հետագայում արաբները Դվինում սեփական ամիրայությունը ստեղծեցին[3]:

Դվինը սկզբում Արմինիայի ոստիկանի միակ նստավայրն էր, իսկ, այն բանից հետո, երբ, թերևս, 747-750 և 774-775 թթ. ապստամբությունների պատճառով, Արմինիայի ոստիկանները որպես նստավայր ընտրեցին Պարտավը[4], այն չկորցրեց իր նշանակությունը և շարունակեց մնալ որպես ոստիկանի երկու նստավայրերից մեկը: Ալ-Իսթախրին վկայում է, որ, «ինչ վերաբերում է Դաբիլին, ապա այն...ավելի մեծ է Արդաբիլից: Այն Հայաստանի մայրաքաղաքն է, և այնտեղ գտնվում է ամիրի պալատը, այնպես, ինչպես Առանի ամիրի պալատը Բարդաայում և Ադարբայջանի ամիրի պալատն Արդաբիլում»[5]: X դ. հեղինակ ալ-Մուկադդասին հաղորդում է, որ «Դաբիլը մեծ քաղաք է. այնտեղ [կան] անառիկ ամրոց և մեծ հարստություններ»[6]: Իսկ Իբն Հաուկալը տեղեկացնում է, որ Դվինը «Արմինիայի ամենամեծ քաղաքն է»[7]: Դվինի շուրջը, ըստ հայ և օտար հեղինակների՝ արաբները նոր ամրություններ կառուցեցին: Բալազուրին հաղորդում է, որ Աբդ ալ-Ազիզ իբն Հատամ իբն Նման ոստիկանը (705-709) «կառուցեց (խոսքը քաղաքի նոր ամրությունների կառուցման մասին է-Ա.Ե.) Դվին քաղաքը»[8]: Ղևոնդը վկայում է, որ ոստիկան «Աբդլ-Ազիզն...շինէր վերստին զքաղաքն Դուին, հզօրագոյն և ընդարձականիստ մեծութեամբ քան զառաջինն, և ամրացուցանէր դրամբք և դռնափակօք, անցուցանէր շուրջ զպարսպովն պարկէնս փոսից լցեալ ջուր յապաստան ամրոցին»[9]: Ալ-Իսթախրին ու Իբն Հաու-

---

[1] Անդ, էջ 108:

[2] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 141:

[3] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Դվին քաղաքի ժամանակագրությունը 9-11-րդ դարերում,- ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1957, թիվ 10, էջ 13-15:

[4] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 166: Պատմիչը հաղորդում է, որ Սուլեյման ոստիկանը (788-790) նստում էր Պարտավում:

[5] **Al-Istakhri**, էջ 188:

[6] **Al-Moqaddasi**, էջ 377:

[7] **Ibn Haukal**, էջ 342:

[8] Տե՛ս بلاذري, I, էջ 242:

[9] **Ղևոնդ**, էջ 36:

կալը հաղորդում են, որ X դ. սկզբին ոստիկանի ապարանքը դեռևս գոյություն ուներ Դվինում, այնպես, ինչպես Պարտավի կամ Արտավետի (Արդաբիլ) ոստիկանական ապարանքները[1]:

IX դ. սկզբին Դվինն անընդհատ գտնվում էր թե՛ արաբների և թե՛ հայ նախարարական տների ուշադրության կենտրոնում:

861 թ. Մուտավաքքիլ խալիֆայի սպանությունից հետո Խալիֆայությունը թևակոխեց նոր փուլ: Խալիֆայության գահին կարճ ժամանակում միմյանց հաջորդեցին չորս խալիֆա[2]: Արմինիայում ևս Խալիֆայության դիրքերը խիստ թուլացան: Այդ ժամանակ Դվինը դարձավ կռվախնձոր Բագրատունիների և արաբների միջև:

Պետք է նշել, որ Բագրատունյաց հզորացման ժամանակաշրջանում Դվինը հանդիսանում էր հայերով և մահմեդականներով բնակեցված մի քաղաք, որտեղ հայ բնակչությունը մեծամասնություն էր կազմում[3]: Քաղաքում գլխավոր դերը վերապահված էր արաբական բնակչությանը, որն էլ մեծապես ազդում էր Դվինի ճակատագրի վրա: Թերևս հենց այդ է պատճառը, որ Աշոտ Բագրատունին իշխանաց իշխան եղած ժամանակ չջանաց վերացնել արաբական տարրը Հայոց հինավուրց մայրաքաղաքում, իսկ թագավոր հռչակվելուց հետո էլ այն չդարձրեց իր տերության մայրաքաղաք, չնայած Դվին քաղաքն իր շրջակայքով Բագրատունիների տիրույթ էր[4]:

Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ Աշոտ Բագրատունու՝ Արմինիայի իշխանաց իշխան նշանակվելուց անմիջապես հետո Դվինում երկրաշարժ եղավ. «ահագին իմն շարժմանց եղելոց ի Դվին քաղաքի, բազում սասանութիւնս և փլուզմունս տանց և պարսպաց և ապարանից լինէր, և առհասարակ քանդումն դղրդումն առնոյր քաղաքն. այլ և մահ յոլովից մարդկան ի վերայ հասանէր»: Ըստ պատմիչի՝ երկրաշարժը տեղի է ունեցել ձմռանը[5]: Դատելով հիշյալ տեղեկությունից պետք է ամրագրել Դվինի երկրաշարժի թվականը՝ 863 թ. (հավանաբար ձմռանը): Հասկանալի է, որ երկրաշարժից հետո վերականգնվող Դվին քաղաքում առավելապես հաստատվելու էին արաբ վերաբնակիչներ, որ ավելի էր մեծացնելու քաղաքի արաբ բնակչության տոկոսը:

878 թ. Աշոտ Բագրատունու առաջարկությամբ Արմինիայի ոստի-

---

[1] Տե՛ս **al-Istakhri**, էջ 188, **Ibn Haukal**, էջ 342:
[2] Տե՛ս **И. Фильштинский**, История арабов и халифата (750-1517), М., 2006, էջ 124:
[3] Տե՛ս **al-Istakhri**, էջ 188:
[4] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 343:
[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 136:

կան նշանակված Մուհամմադ իբն Խալիդ աշ-Շայբանին Աբու ալ-Վարդ Կայսիկի հետ դավադրություն ծրագրեց Արմինիայի իշխանաց իշխանի դեմ: Սակայն Աշոտը՝ կանխազգալով դավադրությունը, Հայաստանի բոլոր ճանապարհներին, լեռնանցքներում և կամուրջներին կայազորներ էր նշանակել, առգրավել ոստիկանի գրագրությունը և տեղյակ դարձել կազմակերպված դավադրությանը: Հայ նախարարները, որոնք գնացել էին ոստիկանին դիմավորելու, ուղեկցել էին նրան մինչև Դվին և գտնվում էին նրա մոտ, Աշոտ Բագրատունու հրամանով հեռացան նրանից: Ոստիկանը կայսիկների հետ մնաց միայնակ: Աշոտը ներկայացավ ոստիկանին ճոխ նվերներով, սակայն հայկական հեծելազորի զորահանդեսի ժամանակ բանակի սպարապետ արքայեղբայր Աբասը շրջապատեց ոստիկանի վրանը, ներս մտավ և ցուցադրեց նրան նրա իսկ գրած նամակը: Վերջապես Աշոտի հրամանով ոստիկանին նստեցրեցին ջորու վրա, հասցրեցին երկրի հարավային սահմանը և ուղարկեցին այնտեղ, որտեղից եկել էր[1]: Այսպիսով Դվինի արաբ բնակչությունն ամբողջությամբ հպատակվեց Հայոց թագավորին:

Հովհաննես Դրասխանակերտցին Սմբատ Ա-ի օրոք Դվինում որպես «գլխաւոր ոստիկանք և հրամանատարք քաղաքին» հիշատակում է Մահմետ և Ումայի եղբայրներին (Մուհամմադ և Ումայյա)[2]: «Ոստիկանք» և «հրամանատարք քաղաքին» արտահայտությունները ցույց են տալիս, որ պատմիչը բոլորովին էլ ի նկատի չունի նրանց՝ Դվին քաղաքում խալիֆայի կողմից նշանակված լինելը, քանի որ հայտնի չէ որևէ նախադեպ որևէ քաղաքում խալիֆայի կողմից առանձին ոստիկան նշանակելու մասին[3]: Մյուս կողմից «հրամանատարք» բառը ցույց է տալիս, որ նրանք քաղաքի կայազորի հրամանատարներն էին: Ուշագրավ է, որ պատմիչը նրանց ամիրա չի անվանում: Ա. Տեր-Ղևոնդյանն այն կարծիքին է, որ երկու արաբ եղբայրները որպես ամիրաներ պետք է Դվինում հաստատված լինեին կամ Աշոտ Ա-ի թագավորության վերջին տարիներին և կամ Սմբատ Ա-ի թագավորության առաջին տարիներին[4]: Զարգացնելով ուսումնասիրողի տեսակետը՝ նշենք, որ առավել հավանական է, որ նրանք Դվինում հաստատվել էին Աշոտ Ա-ի օրոք, ըստ որում ճանաչվել էին հենց Հայոց թագավորի կողմից: Այդ է ցույց տալիս այն իրողությունը, որ Սմբատը Դվինը գրավեց այն բանից հետո, երբ տեսավ, որ արաբներն իրեն այլևս չեն ենթարկվում և արքունի հարկերն

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 338-346:
[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 164:
[3] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Դվին քաղաքի ժամանակագրությունը, էջ 13:
[4] Անդ:

ու մաքսերը պակասեցրել են. «Սմբատ ընդ կրունկն դարձեալ՝ հասանէր ի մայրաքաղաքն Դվին: Եւ վասն զի ըստ առաջնոյ կիտին եդելոյ ոչ ետես զնոսա հնազանդեալս ի ծառայութիւն ինքեան և զսակ արքունի հարկաց և մաքսից նուազեցուցեալ, ապա դուռն ևս քաղաքին փակեցաւ ընդդէմ նորա. նա պաշարեալ ուժգնապէս զնոսա և բազում աղխատրոյզ շփոթմունս և աւարառութիւնս և տնկակոտորութիւնս և հրացանութիւնս զնոքօք զեղեալ՝ ստէպ ստէպ զերկեամ մի զայս առնէր»: Հայոց թագավորի դեմ ըմբոստության կազմակերպիչ արաբ եղբայրները փորձում են փախուստի դիմել, սակայն ձերբակալվում են և շղթայակապ ուղարկվում Բյուզանդիայի կայսերը[1]: Սմբատ Ա-ն «անշուշտ նուաճեալ այնուհետև զքաղաքացիսն ընդ լծով ծառայութեան իւրոյ, և ինքն ձեռնթափ լեալ՝ ի գիւտս աշխարհաց զամենեսեան յանձանձէ ածէ համագունդ և ընդ իւրեաւ նուաճէ»[2]: Ամենայն հավանականությամբ, չնայած վերոհիշյալ երկու եղբայրները սկզբնապես ենթարկվում էին Հայոց թագավորի իշխանությանը, բայց երբ Ատրպատականի Ափշին ամիրան սպառնալից դիրք գրավեց Սմբատ Ա-ի նկատմամբ, օգտվելով դրանից՝ նրանք որոշեցին ապստամբել: Ա. Տեր-Ղևոնդյանը նկատել է, որ Սմբատ Ա-ն միայն Դվինի ապստամբության ճնշումից հետո է, որ կարողացավ ճնշել մնացյալ ապստամբություններն իր տերության մեջ: Այստեղից էլ ուսումնասիրողը բխեցնում է այն կարևոր դերը, որ կարող էր խաղալ Դվինը Հայոց թագավորության միասնականության պահպանման գործում, սակայն, ցավոք, չխաղաց[3]:

Վերոհիշյալից ակնհայտ է դառնում, որ Դվինում Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի օրոք դեռևս ամիրայություն գոյություն չուներ, չնայած քաղաքում տեղակայված էր բավական մեծաթիվ արաբ բնակչություն: Ինչպես ցույց տվեցինք, Դվինի շրջակա բոլոր գավառները դեռևս Աշոտ Մսակերի ժամանակներից սկսած կցվել էին Բագրատունիների տիրույթներին:

Դվինի ապստամբության ճնշումը տեղի ունեցավ 893 թ. մեծ երկրաշարժից անմիջապես առաջ: Նախքան այդ երկու իրադարձությունները տեղի էր ունեցել ևս մի կարևոր դեպք: Ատրպատականի ոստիկան Ափշինը հարձակվել էր Սմբատ Ա-ի տերության վրա, սակայն բանն ավարտվել էր խաղաղությամբ: Եվ ահա, օգտագործելով Դվինի երկրաշարժի առաջ բերած խառնաշփոթը և Դվինի ապստամբության ճնշման ու երկու արաբ եղբայրների՝ Բյուզանդիայի կայսերը հանձնելու փաս-

---

[1] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 164:
[2] Անդ, էջ 162-164:
[3] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Դվին քաղաքի ժամանակագրությունը, էջ 14:

տը, ինչպես նաև հայ-բյուզանդական առևտրական պայմանագրի կնքումը, Ափշինը 894 թ. կրկին ներխուժեց Հայաստան: Նրան հաջողվեց ժամանակավորապես գրավել Նախճավանը և Դվինը[1]: Սրանով Դվինի պատմության մեջ սկսվում է նոր շրջան: Մինչև Գագիկ Ա-ի թագավորության տարիները (990-1020) Գողթն-Նախճավան-Դվին հատվածը, որտեղով անցնում էր Դվինից Նախճավան, իսկ այնտեղից էլ Ատրպատական գնացող մեծ մայրուղին, սկսում է աստիճանաբար անցնել մահմեդական տիրապետության տակ: Սմբատ Ա-ի օրոք Նախճավանը համանուն գավառով մտնում էր արքունի տիրույթների մեջ, իսկ Սմբատ Ա-ն այն օգտագործում էր որպես Սյունյաց և Վասպուրականի իշխանությունների միջև հավասարակշռությունը պահպանելու գործիք՝ այն հանձնելով մերթ առաջինին, մերթ էլ երկրորդին: Իսկ Դվինում Բագրատունի թագավորները վերջնականապես չէին կարողանում հաստատել իրենց իշխանությունը, և մյուս կողմից այնտեղ միմյանց հաջորդում էին տարբեր արաբական իշխանություններ: Ինչպես նշում է Ա. Տեր-Ղևոնդյանը, չնայած մենք այն անվանում ենք Դվինի ամիրայություն, սակայն այն նման չէր Հայաստանում ստեղծված մյուս ամիրայություններին, քանի որ այնտեղ ժառանգաբար ոչ մի ամիրայական տուն չէր իշխում: Ափշինի կողմից գրավվելուց հետո Դվինը վերածվեց Ատրպատականի ամիրաների հենարանի ընդդեմ Հայոց թագավորության[2]: Ափշինը հաճախ էր լինում Դվինում և ամեն անգամ հեռանալիս քաղաքում կառավարիչ էր նշանակում: Վերջին անգամ Դվինից մեկնելիս նա կառավարիչ նշանակեց իր որդի Դևդատին և մեծ ներքինապետին[3]: Ատրպատականի հաջորդ ամիրա Յուսուֆը Դվինը դարձրեց Սմբատ Ա-ի դեմ գործողությունների հենարան: Նա այստեղ հավաքեց գերված հայ իշխաններին, նա այստեղ բերեց ձերբակալված Հովհաննես կաթողիկոսին: Այստեղ էլ նա խաչ բարձրացրեց սպանված Սմբատ Ա-ին[4]:

Ավելի ամրացնելու համար Ատրպատականի կապը Դվինի հետ, նա Գողթնում արաբական ամիրայություն ստեղծեց[5]:

Վերոհիշյալից բխում է, որ, երբ ասում ենք Դվինի ամիրայություն, պետք է հստակորեն արձանագրել, որ խոսքը վերաբերում է Սմբատ Ա-ից հետո տեղի ունեցած իրադարձություններին, ըստ որում՝ ի նկատի

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 170-172:
[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Դվին քաղաքի ժամանակագրությունը, էջ 15:
[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 188-192:
[4] Անդ, էջ 245:
[5] Անդ, էջ 308:

ունենալով միմիայն քաղաքը, քանի որ դրա շրջակա գավառները պատկանում են Հայոց թագավորին:

5.2. Պարտավի ամիրայություն: Պարտավն Արմինիայի նշանավոր քաղաքներից մեկն էր, որը VIII դ. վերջից դարձավ Արմինիայի ոստիկանի հիմնական նստավայրը: Ըստ Ղևոնդի՝ Սուլեյման ոստիկանը (788-790) արդեն նստում էր Պարտավում[1]: Այդ ժամանակներից էլ պետք է հաշվել Պարտավի՝ որպես Արմինիայի ոստիկանի երկրորդ նստավայրի, հանդես գալը[2]: Արաբ հեղինակներից ալ-Մուկադդասին Պարտավն անվանում է «Արմինիայի Բաղդադ»[3], ալ-Իսթախրին վկայում է, որ «Իրաքում և Խորասանում Ռեյից և Իսբահանից հետո չկա ավելի նշանակալից, ավելի ծաղկուն և ավելի գեղեցիկ քաղաք..., քան Բարդաան է»[4], իսկ Իբն Հաուկալը Պարտավն անվանում է «Առանի մայրաքաղաք»[5]:

Դատելով արաբ հեղինակների հաղորդումներից՝ VIII դ. հարավային ցեղախմբի արաբներից կազմված կայազոր էր հաստատվել Պարտավում[6]:

Հայոց Արևելից կողմերի երկու աշխարհներում՝ Արցախում և Ուտիքում արաբական ցեղերի վերաբնակեցման մասին պատմում է Մովսես Դասխուրանցին: Պատմիչը տեղեկացնում է, որ հայոց 200 թ. (751 թ.) «եղև այս տանս Աղուանից զրկանք մեծապէս, զի զմայրաքաղաքն Պարտաւ խլեցին յիշխանացն Աղուանից Տաճիկք ըստ իւրեանց անառակ ազգաշաղախութեանն: Եւ որպէս զառաջինն աթոռ իշխանութեանն իւրեանց արկին ի Դամասկոս Ասորեստանեայց, նոյնպէս աստ յԱղուանս նստուցին ի Պարտաւ կալ արքունեացն՝ և ծծել զպարարտութիւն երկրիս. յորոց մի ոմն յարքունեացն եկեալ ի Պարտաւ»[7]: Պատմիչն ապա պատմում է, որ Պարտավում հաստատված արաբները դուրս էին գալիս Պարտավից և թալանի մատնում շրջակա բնակավայրերը[8]: Այսպիսով՝ Պարտավում աստիճանաբար կազմավորվեց արաբական ամիրայություն:

Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո, ինչպես հաղորդում է Հովհաննես Դրասխանակերտցին, Աշոտ Ա-ն

---

[1] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 166:
[2] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, էջ 364:
[3] **Al-Moqaddasi**, էջ 375:
[4] **Al-Istakhri**, էջ 182:
[5] **Ibn Haukal**, էջ 337:
[6] Տե՛ս يعقوبي, II, էջ 426-428, بلاذري, I, էջ 246:
[7] **Մովսես Կաղանկատվացի**, էջ 325:
[8] Անդ, էջ 326:

«զելուզակուտ մարդիկ Ուտի գաւառի առհասարակ ընդ ձեռամբ նուաճէր՝ ի բաց ի նոցանէ հերքելով զաւազակութիւն մարդադաւութեան, և իբրև օրինաւորս և հլուս զամենեսեան կազմէր, և առաջնորդս և իշխանս նոցա կացուցանէր»[1]: Այս հաղորդման մեջ Ուտի գավառի տակ պետք է հասկանալ Ուտիքը, որը ցույց է տալիս Ուտիքի մեծ մասի՝ Հայոց տերության մեջ մտնելը: Ըստ Անանուն Ձրուցագրի՝ Սմբատ Ա-ն «տիրեաց...զաւան Պարտաւայ»[2]: Իսկ այնուհետև Շայբանի ամիրան մեղադրում էր Սմբատ Ա-ին, որ «բռնութեամբ առեր զամենայն կողմանս արևմտից մինչև հասար յաւանդ քաղաքաց ի Պարտաւ, նոյնպէս և Նախջևան և զմեծ շահաստանն զԹվին»[3]:

Հովհաննես Դրասխանակերտցին՝ նկարագրելով Սմբատ Ա-ի նվաճումները, պատմում է, որ նա գրավեց Ծանարք, «առեալ ևս յինքն և զամրոց դրան պահակի նոցա. և անտի ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչև ի քաղաքն Տփխիս. և զՈւտի գաւառ մինչև ի քաղաքն Հունարակերտ և մինչև ի Տուս և ի Շամքոր»[4]:

Հայոց Արևելից կողմերի իշխանությունների բաժնում ցույց տվեցինք, որ Պարտավի շրջակա գավառները մտնում էին Սահլ Սմբատյանի և նրա ժառանգների տիրույթների մեջ, իսկ Պարտավի ամիրայությունն ընդգրկում էր միայն քաղաքն ու դրա շրջակայքը:

Ըստ ալ-Իսթախրու՝ Հայոց թագավորության սահմանները Սմբատ Ա-ի օրոք տարածվում էին Պարտավից մինչև Կարին[5]: Այնուհետև հեղինակն ավելացնում է, որ Պարտավ-Դվին ճանապարհի բոլոր կայարանները գտնվում են Սմբատի թագավորության մեջ[6]: Նույնը հաստատում է Իբն Հաուկալը[7]: Այդ հաղորդումները հստակորեն ցույց են տալիս, որ Պարտավի ամիրայությունը մաս էր կազմում Հայոց տերության:

Պետք է նշել, որ արաբ պատմիչ Յակուբին Հայոց Արևելից կողմերից միայն Պարտավն է հիշատակում որպես Ատրպատականի ամիրայության մաս[8]: Ըստ որում, պատմիչի հաղորդումը, չի նշանակում, թե Պարտավը մտնում էր Ատրպատականի ամիրայության մեջ, այլ զուտ հետևանք է այն փաստի, որ Պարտավում գոյություն ուներ արաբական

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 142:
[2] Տե՛ս **Անանուն Ձրուցագիր**, էջ 159:
[3] Անդ, էջ 171:
[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 164:
[5] Տե՛ս **al-Istakhri**, էջ 188:
[6] Անդ, էջ 194:
[7] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 350:
[8] Տե՛ս Jakubi, էջ 271-272:

ամիրայություն: Նույնն են փաստում Իբն ալ-Ֆակիհը, Կուդաման և ալ-Իսթախրին[1]:

Այս ամենից պետք է բխեցնել, որ Պարտավն ընդգրկված էր Հայոց տերության կազմում, սակայն այնտեղ գոյություն ունեցող արաբական ամիրայությունը հենակետ էր հանդիսանում Ատրպատականի ամիրաների համար Հայ Բագրատունիների դեմ պայքարում:

5.3. Կայսիկների ամիրայություն: Արաբական հյուսիսային ցեղախմբին պատկանող Սուլայմ ցեղի մաս կազմող կայսիկներն արաբական տիրապետության շրջանում հաստատվել էին Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի հարավային հատվածներում: Չնայած Ա. Տեր-Ղևոնդյանի հայտնած այն կարծիքին, թե կայսիկների ցեղը Հայաստան է տեղափոխվել Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք (786-809) սկիզբ առած մեծ վերաբնակեցման ժամանակ[2], հավանական է նաև այն, որ կայսիկների մի հատվածը, Հայաստանում հաստատված պետք է լիներ նախքան այդ: 775 թ. Արծնիի ճակատամարտում ընկել էր 774-775 թթ. ապստամբության կազմակերպիչ և ղեկավար Մուշեղ Մամիկոնյանը՝ թողնելով երկու որդի և չորս դուստր: Վարդան վարդապետը հաղորդում է, որ սրանք «անկան յերկիրն Վասպուրական. զորս եսպան զերկոսին Մեհրուժան Արծրունի, որպէս թե ի պատճառս հօրն նոցա եղև աղէտն մեծ. և մի ի քերց նոցա ետ զինքն յամուսնութիւն Ջահապի ումեմն իսմայելացւոյ՝ թիկունս առնելով զնա»[3]: Ջահապը՝ ամուսնանալով Մամիկոնյան օրիորդի հետ, ցանկանում էր նրա ժառանգական իրավունքով տեր դառնալ Մամիկոնյանների տիրույթներին[4]: Պարզ է, որ Հարուն ալ-Ռաշիդի օրոք Հայաստան տեղափոխված Ջահապը չէր կարող այդքան արագ ակտիվանալ՝ 774-775 թթ. ապստամբությունից մի փոքր անց հավակնություններ ցուցաբերելով ոչ վաղ անցյալում երկրի խոշոր հողատերերից մեկի ժառանգության նկատմամբ՝ պայքարի մեջ մտնելով Բագրատունիների հետ: Այս տեսակետի օգտին է խոսում այն փաստը, որ, ըստ Թովմա Արծրունու՝ ութմանիկներն իրենց կալվածքները հայ նախարարներից խլել էին նախքան 774-775 թթ. ապստամբությունը: Կայսիկները սկզբում տիրել էին Արծեշին և Խլաթին: Հենց Խլաթի իր ցեղակիցների մոտ հեռացավ պարտված Սևադա Ջահաֆյանը[5]: Կայ-

---

[1] Տե՛ս **Ibn al-Fakih**, էջ 285, 292, **Kudama**, էջ 244, **al-Istakhri**, էջ 180-194:

[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 96:

[3] **Վարդան վարդապետ**, էջ 83:

[4] Անդ:

[5] Տե՛ս يعقوبي, II, էջ 463:

սիկների և ութմանիկների՝ Բզնունյաց ծովի հյուսիսային ափերին VIII դ. կեսերին հաստատված լինելու իրողությունն ապացուցում են Ղևոնդի վկայությունները: Պատմիչը հաղորդում է, որ 774-775 թթ. ապստամբությունը ճնշելու համար Հայաստան արշավող Ամր զորավարը նախապես եկավ Խլաթ և այնտեղի քաղաքացիներից հավաքեց իրեն անհրաժեշտ բոլոր տեղեկությունները հայ ապստամբական զորքի և նրա ղեկավարների մասին[1]: Թերևս, սխալված չենք լինի, եթե այն կարծիքն արտահայտենք, որ Ամրին տեղեկություններ տվողները տեղի արաբ վերաբնակիչներն են եղել: Մեր կարծիքը հաստատում է նաև Ղևոնդի մյուս վկայությունը, թե հայ ապստամբները կեղծ համարեցին այդ ժամանակ Խլաթում գտնվող Աշոտ Բագրատունու ուղարկած լուրը թշնամու հարձակման մասին, կարծելով, թե այդ կերպ նա կամենում է փրկել քաղաքը հայ ապստամբների կողմից պաշարումից[2]: Ավելին, Ղևոնդի հետագա տեղեկություններից պարզվում է, որ այդ ժամանակ արաբ վերաբնակիչներ կային նաև Արճեշում: Պատմիչը հաղորդում է, թե երբ 774-775 թթ. ապստամբության ժամանակ Արծրունյաց իշխաններն արշավանքի ելան Արճեշի վրա՝ կամենալով «բրել զնա ի հիմանց և զզօրսն որ ի նմա՝ հարկանել սրով», Արճեշի քաղաքացիներն այդ մասին արագ լուր տվեցին Խլաթ[3]: Այսինքն՝ բացի Արճեշում տեղակայված արաբական զորքից, որը հայ ապստամբները ցանկանում էին կոտորել, քաղաքում բնակվում էին նաև վերաբնակիչ արաբներ («բնակիչք քաղաքին»):

Կայսիկները, ինչպես ութմանիկները, կարողացան մեծապես օգտվել Բուղայի արշավանքից: Նրանց այդ ժամանակ հաջողվեց տիրել արաբ հեղինակների աշխատություններում Բաջունայս անվամբ հանդես եկող Ապահունիքին՝ Մանազկերտ քաղաքով[4]:

Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի՝ կայսիկները հաստատվել էին Բզնունյաց ծովի հյուսիսային ափերին՝ տիրելով Արճեշին, Խլաթին, Ապահունիքին, Բզնունիքի և Հարքի մի մասին, Կորո ձորին, Վարաժնունիքին (Խնունիս բերդով), Բասենին, ինչպես նաև առանձին ռազմավարչական միավոր կազմող Կարնո գավառին, Աղորնիքին (Հավճիչ բերդով) և Բասենի ու Հավնունիքի որոշ հատվածների[5]:

---

[1] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 145:
[2] Անդ, էջ 145-146:
[3] Անդ, էջ 146-147:
[4] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 334, 348:
[5] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 216-223:

Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո Աշոտ Ա-ն իր գերիշխանությունը հաստատեց Հայաստանի տարածքում հաստատված բոլոր ամիրայությունների վրա: Կոստանդին Ծիրանածնի հաղորդմամբ «Իշխանաց իշխանը (իմա՛ Աշոտ Բագրատունի-Ա.Ե.) նստում էր Մեծ Հայքում՝ Կարս ամրոցում և տիրում էր վերոհիշյալ երեք ամրոցներին, այն է Պերկրիին (Բերկրի), Խալիատին (Խլաթ) և Արզեսին (Արճեշ), ինչպես և Տիվիին (Դվին), Խերտին (Հեր) և Սալամասին: ...Մանցիկիերտին էր տիրում Ապելվարդը, որ գտնվում էր իշխանաց իշխան Աշոտի...իշխանության ներքո: Իշխանաց իշխան Աշոտը այս Ապելվարդին տվեց նաև Խլիատ ամրոցը, Արզեսը և Պերկրին»[1]: Ճիշտ է Ա. Տեր-Ղևոնդյանը, երբ այն կարծիքն է հայտնում, թե Կոստանդին Ծիրանածինը, չնայած Բերկրին այդ ժամանակ պատկանում էր ութմանիկներին, այն հիշատակելով Աշոտ Ա-ի կողմից կայսիկներին հանձնված քաղաքների թվում՝ նպատակ ունի հնարավորինս շատ տարածքներ ընդգրկել կայսիկների տիրույթների մեջ, քանի որ X դ. կայսիկները որոշ չափով ենթակա էին դարձել Բյուզանդիային, ուստի՝ ինչքան շատ քաղաքներ Աշոտ Ա-ն կամովին հանձնած լիներ նրանց, այնքան ձեռնտու կլիներ Բյուզանդիային[2]:

Իրավիճակը փոխվեց Սմբատ Ա-ի օրոք, երբ վերջին վճռական գործողություններ ձեռնարկեց Հայոց թագավորության մեջ մտնող արաբական ամիրայությունների նկատմամբ, թերևս, այն պատճառով, որ վերջիններս աջակցում էին Սմբատ Ա-ի դեմ թշնամական դիրք բռնած Ատրպատականի Սաջյան ամիրաներին:

Բացի այն, որ Հայոց արքան գրավեց Դվինը, նա լայն գործունեություն ծավալեց Հայոց թագավորության մեջ գտնվող արաբական ամիրայությունները թուլացնելու ուղղությամբ: Անանուն Զրուցագիրը հաղորդում է.«Եւ զի էր մի Տաճիկ, և անուն նորայ Ապուհեճր, տայր (Սմբատ Ա-ն) զբերդն Բերկրոյ: Եւ տայր զքաղաքն Արճեշ Տաճկի մի, որ եկեալ էր ի Դարբանդ քաղաքէ առ արքայն Սըմպատ: Եւ զՇաղկիոտն գաւառն էրետ Տաճկի մի այլ՝ Ռաճայ անուն»[3]:

Այսինքն՝ Սմբատ Ա-ն ուղղակիորեն առանձին-առանձին իր գերիշխանությունը հաստատեց արաբական գաղութների վրա՝ փոխելով Աշոտ Ա-ի ստեղծած վիճակը, երբ Բերկրիի, Արճեշի և Խլաթի վրա ճանաչել էր Մանազկերտում նստող Ապլվարդի իրավունքները: Ըստ

---

[1] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10:

[2] Տես **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 97:

[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 161:

որում՝ հանձնելով Արծեշը Դարբանդից եկած մի արաբի, հավանաբար, Սմբատ Ա-ն կատարել է կրկնակի քայլ: Նախ, դրանով նա վերացրել է Արծեշում կայսիկների իշխանությունը և հետո՝ հարևան արաբական գաղութների դեմ ստեղծել է լուրջ հակակշիռ, որովհետև հայտնի է, որ Դարբանդում և շրջակայքում հաստատվել էին արաբների հարավային ցեղախմբին պատկանող արաբական ցեղեր, որոնք թշնամի էին հյուսիսային ցեղախմբի արաբներին, որոնցից էր կայսիկների ցեղը: Բալազուրիի հաղորդմամբ՝ VIII դ. սկզբին Մասլամա իբն Աբդ ալ-Մալիք զորավարը, երբ գրավեց Դարբանդը, այնտեղ հաստատեց հարավային ցեղախմբին պատկանող 24 հզ արաբներից բաղկացած մի կայազոր[1]: Պատմիչը հաղորդում է, որ Դարբանդի կայազորը նույնիսկ IX դ. թույլ չէր տալիս ոչ մի նորանշանակ ոստիկանի մտնել քաղաք, եթե վերջինը բերած չլինի այն դրամը, որը Խալիֆայությունը պարտավոր էր վճարել նրան[2]:

Ըստ Անանուն Զրուցագրի՝ «Սըմպատ էառ աշխարհն Ղլաթայ և շինեց ինքն բերդ և կամեցաւ ձգել զձեռն իւր ի Միջագետս Ասորոց»[3]: Բացի այդ, երբ նախապատրաստվում էին ռազմական գործողություններ Սմբատ Ա-ի և շայբանիների ամիրայության միջև, վերջինիս ամիրան Սմբատ Ա-ին մեղադրում էր, թե «դարձար Ասորոց դէհս և առեր զԱրծեշ և զԱրձկէ և զՄացկերտ: Եւ դարձեալ անդգնեցար և առեր զգաւարն Ղլաթայ»[4]: Այս հույժ կարևոր վկայությունները ցույց են տալիս, որ Սմբատ Ա-ն գրավել է Խլաթը և, ամենայն հավանականությամբ, վերջ տվել տեղի արաբական ամիրայությանը: Ըստ որում, այնտեղ բնակվող արաբներին հնազանդ պահելու նպատակով Հայոց թագավորը Խլաթի գավառում (այս անվան տակ պատմիչն ի նկատի ունի Խլաթ քաղաքի շրջակա տարածքը) սեփական ամրոցն է կառուցում, անկասկած, արքունի կայազորով:

Անանուն Զրուցագիրը՝ անդրադառնալով Սմբատ Ա-ի նվաճումներին, հաղորդում է, որ նա, ի թիվս Հայաստանի տարբեր գավառների, արքունի տիրույթներին է կցել Աղորնիքը, Բասենը, Ապահունիքի մեծ մասն ու Հարքը, ինչպես նաև իրեն ենթարկել Արծեշն ու Խլաթը[5]: Ըստ Կոստանդին Ծիրանածնի՝ Սմբատ Ա-ն կայսիկներից խլել էր Տուրու-

---

[1] Տե՛ս بلاذري, I, էջ 244:
[2] Անդ:
[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 171:
[4] Անդ:
[5] Անդ, էջ 159-161:

բերանի Կորո ձոր գավառը (Կորի) և Հարքը (Խարկա)[1]:

Ինչպես տեսնում ենք, Սմբատ Ա-ն անդամահատել է նախկինում ընդարձակ տարածքներ զբաղեցնող կայսիկների ամիրայությունը: Նախ՝ նրանից պոկվել է Կարինի ամիրայության հետ կապող Աղորնիքը[2], ապա՝ Բզնունյաց ծովի հյուսիսային ափամերձ ամբողջ հատվածը, այնուհետև՝ Հարք գավառը, Բասենի հողերը, ինչպես նաև Ապահունիքի որոշ հատվածներ: Այսինքն՝ խնդրո առարկա շրջանում կայսիկների ընդարձակ ամիրայությունից մնացել էին Մանազկերտ քաղաքից մինչև Եղանց բերդ և Հավնունիքից մինչև Հարք ընկած տարածքները: Դա պետք է անմիջական հետևանքը լիներ հետևյալ իրադարձությունների:

Աշոտ Ա-ի օրոք, ինչպես նաև Սմբատ Ա-ի թագավորության սկզբնական շրջանում կայսիկները հավատարիմ էին Հայոց թագավորներին և հարկ էին վճարում և զինվորներ տրամադրում նրանց: 898 թ. Թուղխի ճակատամարտում Սմբատ Ա-ի կրած պարտությունը ինչպես նաև Ափշինի արշավանքը ոգևորեցին կայսիկներին: Նրանք 902 թ. հրաժարվեցին Հայոց արքային հարկ վճարելուց և զինվորներ տրամադրելուց: Սմբատ Ա-ն կրկին իրեն հպատակեցրեց կայսիկներին, նրանցից խլեց Երիկավ ամրոցը Բերկրու մոտակայքում և հանձնեց ութմանիկներին, որոնց այն նախկինում պատկանում էր[3]:

Ինչպես տեսանք, Բերկրին Հայոց արքայի կողմից հանձնվել էր ութմանիկներին[4]: Պարզ է, որ դրանով նա հակակշիռ էր ստեղծել կայսիկների դեմ, ուստի և հասկանալի է կայսիկների և ութմանիկների միջև հակամարտությունը, որի հետևանքով Երիկավ ամրոցը գրավել էին կայսիկները, ինչպես նաև այն, որ Սմբատ Ա-ն ետ գրավեց Երիկավն ու վերադարձրեց ութմանիկներին:

Այստեղ անհրաժեշտ է նաև անդրադառնալ մի կարևոր իրողության: Նվաճելով Բզնունյաց ծովի հյուսիսային ափին գտնվող ամիրայությունները մինչև Մանազկերտ և Հարքը, Հայոց արքան իր հսկողության տակ էր առնում Հայոց տերությունը հարավի հետ կապող երկու մեծ ճանապարհների հսկողությունը: Առաջինը նախկինում Արքունի պողոտա կոչվող մեծ ճանապարհն էր, իսկ երկրորդը՝ Դվինից Խլաթով դեպի Ասորիք և Միջագետք տանող մայրուղին:

Ըստ Կոստանդին Ծիրանածնի՝ Ատրպատականի ամիրայի կողմից

---

[1] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 11:

[2] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 159:

[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 380-382: Ըստ պատմիչի Երիկավ ամրոցը կայսիկները խլել էին ութմանիկներից:

[4] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 161:

Սմբատ Ա-ի սպանվելուց հետո, կայսիկ Ապոսևատան իրեն հռչակեց Մանազկերտի և հարևան շրջանների տեր[1]: Նա տիրեց Խլաթին, Բերկրիին և Արծեշին, ինչպես նաև Արծկե ամրոցին[2]:

Տարոնի իշխանության բաժնում ցույց տվեցինք, որ նախքան Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը Հարք գավառի արևմտյան մասը մտնում էր Տարոնի իշխանության մեջ, իսկ արևելյանը՝ մաս էր կազմում կայսիկների ամիրայության: Սմբատ Ա-ի օրոք, երբ վերջինս վճռական գործողություններ էր ձեռնարկում իր տերության կազմում գտնվող արաբական ամիրայությունների դեմ, տեղի է ունենում ևս մեկ կարևոր իրադարձություն: Ըստ Անանուն Զրուցագրի՝ ի թիվս այլ շրջանների, Սմբատ Ա-ն «էառ...զԱպահունիս, զՀարք, զՏարաւն»[3]: Պատմիչն այստեղ թե՛ կայսիկների ամիրայությունից, որի մեջ նախկինում մտնում էր Հարքի արևելյան մասը, և թե՛ Տարոնի իշխանությունից, որի մեջ էր մտնում այդ գավառի արևմտյան մասը, առանձնաբար է հիշատակում Հարքը: Պետք է բխեցնել, որ Սմբատ Ա-ն արքունի տիրույթներին էր կցել Հարք գավառը, հավանաբար, Ապահունիքի կայսիկներին ջախջախելուց անմիջապես հետո: Ուստի և պատահական չէ, որ Կոստանդին Ծիրանածինը հաղորդում է, որ Կորին (Տուրուբերանի Կորո ձոր գավառը) և Խարկան (Հարք) պատկանում էին Սմբատ Ա-ին[4]:

Ինչպես տեսանք, Դիար Բաքրի Շայբանի ամիրան՝ մեղադրելով Սմբատ Ա-ին դեպի Ասորիք սեփական տերության սահմաններն ընդարձակելու մտադրության մեջ, ի մասնավորի նշում է Հայոց թագավորի կողմից գրավված մի շարք քաղաքներ ու շրջաններ, ըստ որում՝ բացառապես այն քաղաքներն ու շրջանները, որտեղ արաբական ամիրայություններ են հաստատվել: Այստեղից էլ պետք է բխեցնել, որ Արծկեում, որ նշված է Սմբատ Ա-ի նվաճած քաղաքների հետ, ևս արաբական գաղութ էր հաստատվել: Դրա օգտին է խոսում նաև այն իրողությունը, որ Արծկեի ողջ շրջակայքում արաբական գաղութներ կային, որոնք կլանելու էին նաև Արծկեն: Թերևս, այստեղ ևս հաստատվել էին կայսիկներ: Սմբատ Ա-ի մահից հետո Արծկեն ևս, ամենայն հավանականությամբ, անցավ Մանազկերտի ամիրային:

5.4. Ութմանիկների ամիրայություն: Արաբական տիրապետության շրջանում ութմանիկ կոչվող ցեղը, որը, ամենայն հավանականությամբ, պատկանում էին արաբական ցեղերի հյուսիսային խմբին, հաստատվել

---

[1] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10:
[2] Անդ, էջ 11:
[3] **Անանուն Զրուցագիր**, էջ 159-161:
[4] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10:

էր Բզնունյաց ծովի հյուսիսարևելյան ափերին: Ա. Տեր-Ղևոնդյանը հավանական է համարում, որ ութմանիկները Հայաստան են տեղափոխվել Հարուն ալ-Ռաշիդի օրոք իրականացված մեծ վերաբնակեցման ընթացքում[1]: Սակայն, դատելով սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից՝ ութմանիկները Հայաստան էին տեղափոխվել նախքան 774-775 թթ. ապստամբությունը: Թովմա Արծրունին հաղորդում է, թե ութմանիկներն իրենց կալվածքները հայ նախարարներից խլել էին 860-ական թվականների վերջի և 870-ական թվականների սկզբի իրադարձություններից հարյուր տարի առաջ[2], այսինքն՝ նախքան 774-775 թթ. ապստամբությունը: Այդ ժամանակ նրանք, ամենայն հավանականությամբ, տիրել էին Աղիովտի մի մասին, իսկ հետագայում սկսեցին քայլ առ քայլ իրենց տիրույթներինց դուրս մղել Գնունիներին: Նրանք 774-775 թթ. հայոց ապստամբության պարտությունից հետո կարողացան գրավել նաև Բերկրի քաղաքը[3]: Գնունիները ստիպված օգնության խնդրանքով դիմեցին Հայոց իշխան Աշոտ Բագրատունուն, որը հազար հոգուց կազմված մի զորագնդով գնաց Աղիովիտ գավառը և այնտեղից Տայք տեղափոխեց նրանց[4]: Գաղթեցված Գնունիների հողերին, ամենայն հավանականությամբ, ամբողջովին տիրեցին ութմանիկները[5]: Հետագայում, ութմանիկները, օգտվելով այն իրավիճակից, որը ստեղծվել էր Բուղայի կողմից Արծրունիներին պարտության մատնելուց հետո, որին մասնակցել էին նաև իրենք[6], տարածվեցին մինչև Ամյուկ բերդն ու հասան Վարագա լեռ[7]: Թովմա Արծրունին, որ ութմանիկներին պարզապես անվանում է «Բերկրու քաղաքացիներ»[8], խոսելով գերությունից վերադարձած Աշոտ Արծրունու գործունեության մասին, հաղորդում է, թե նա «գնացեալ տալ պատերազմ ընդ ծովեզրեցիսն որք Ութմանիկ կոչին, որք ամրանային ի յԱմիւկ անկասկածելի քարանձաւին»: Սակայն, տեսնելով, որ ամրոցն անառիկ է, Աշոտը բավարարվեց միայն Վարագը (հավանաբար, պատմիչը նկատի ունի Վարագա լեռան շրջակայքը) նրանցից ազատագրելով[9]:

---

[1] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 84-85:
[2] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 333:
[3] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 152-153:
[4] **Վարդան վարդապետ**, էջ 83:
[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 306, 332:
[6] Անդ, էջ 306:
[7] Անդ, էջ 306, 332-334:
[8] Անդ, էջ 306:
[9] Անդ, էջ 332:

Ըստ Անանունի՝ «զգաւառն ծովեզերի, յորում է սքանչելի և անառիկ բերդն Ամիւկ, զոր բազում ժամանակօք յափշտակեալ էին այլազգեաց, բազում և անհուն պատերազմօք յարձակեալ ի վերայ աստուածասէր իշխանաց մերոց առաջնոց. դեռ ևս ցայն ժամանակս անդ յղփացեալ ամրացեալ կային մարդիկ դարուն Ութմանիկք կոչեցեալ ազգաւ: Ընդ որոց մեծ ջանիւ աշխատեալ տանն Արծրունեաց, ոչինչ ստնանել նոցա կարացեալ մանաւանդ քաջն և յաղթողն մեծանուն իշխանն Գրիգոր, անուանեալն Դերենիկ...: Եւ մնացեալ բերդն Ամիւկ իւրական գաւառաւն վէրք մեծ անբժշկելի ի սիրտս իշխանաց Վասպուրականի»[1]: Պարզվում է, որ ութմանիկները տիրում էին ողջ Առբերանի գավառին:

Ութմանիկների ամիրայությունը շարունակեց գոյատևել նաև Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո՝ ընդունելով Հայոց տիրակալի գերիշխանությունը[2]: Անանուն Զրուցագիրը հաղորդում է, թե Սմբատ Ա-ն «զի էր մի Տաճիկ, և անուն նորայ Ապուհեճր, տայր զբերդն Բերկրոյ»[3]: Հավանաբար վերոհիշյալ Ապուհեճրն ութմանիկ էր, իսկ քաղաքը նրան հանձնելը կարելի է ընկալել որպես Սմբատ Ա-ի գերիշխանության ընդունումը նրա կողմից, այսինքն՝ ավատատիրական վասալիտետի տեսանկյունից:

Կարծում ենք, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել Սմբատ Ա-ի թագավորության սկզբում, իսկ հետո, երբ 902 թ. կայսիկներն ապստամբեցին Սմբատ Ա-ի դեմ, սակայն պարտություն կրեցին և դարձյալ հպատակվեցին, Սմբատ Ա-ն նրանցից վերցրեց Երիկավ ամրոցը Բերկրու մոտակայքում, որ կայսիկները խլել էին ութմանիկներից, և վերադարձրեց նրանց[4]:

Անանունը հաղորդում է, որ 905 թ. Վասպուրականի իշխան դարձած Գագիկ Արծրունին մոտ 907 թ. ութմանիկներից խլել է Ամյուկ ամրոցը[5]: Ըստ որում՝ Գագիկը «հնարեալ խորհուրդ մեծ՝ ի գիշերի գողանայ զամրոցն. և սրախողխող արարեալ զբնակիչս բերդին՝ բնաջինջ բառնայ յերկրէ: Իսկ զգլխաւորսն ռազմարարս՝ քարավէժս արարեալ ի խորս խաղացուցանէ սրտից ծովուն»[6]: Ամյուկի ութմանիկները ոչնչացվեցին:

Այդ իրադարձությունից անմիջապես հետո Հերի ամիրայության

---

[1] Անդ, էջ 434:
[2] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10:
[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 161:
[4] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 380-382:
[5] Անդ, էջ 434:
[6] Անդ:

զորքը՝ Ատրպատականի և շրջակա այլ ամիրայությունների օգնությամբ ներխուժեց այդ ժամանակ Արծրունիների իշխանության կազմում գտնվող Սալամաս քաղաքը: Գագիկ Արծրունու առաջապահ զորամասը պարտության մատնեց թշնամիներին և ետ նվաճեց Սալամասը[1]:

Սմբատ Ա-ն անմիջապես արձագանքեց Գագիկ Արծրունու այդ քայլին: Հայկական զորքերն արշավեցին դեպի Ամյուկ և այնտեղ Գագիկ Արծրունու կողմից վերակացու նշանակված Ապուսակր Վահունու օգնությամբ գրավեցին ամրոցը: Սակայն, քանի որ ութմանիկների ամիրայությունն այլևս գոյություն չուներ, Սմբատ Ա-ն նպատակահարմար գտավ այն վաճառել Գագիկին[2]:

Այսպիսով՝ մոտ 907 թ. ոչնչացվեցին Ամյուկ ամրոցի ութմանիկները, նրանց պատկանող Առբերանի գավառի հարավային մասն անցավ Արծրունիներին, իսկ նրանց տիրույթների հյուսիսային հատվածը և Աղիովիտ գավառը՝ կցվեցին արքունի տիրույթներին: Ինչպես տեսանք, Բերկրին Սմբատ Ա-ի մահից հետո անցավ կայսիկներին:

5.5. Կարինի ամիրայություն: Արաբները՝ Բյուզանդիայի դեմ հաջող պատերազմներ մղելու անհրաժեշտությունից ելնելով, VII դ. կեսերին աստիճանաբար գաղութներ էին ստեղծում Արմինիա ոստիկանության արևմտյան հատվածում: Այստեղ հաստատվեց Սուլայմ ցեղը, որի մասնակցությունը մեծ էր Մեծ Հայքի արևմտյան աշխարհների գրավման գործում: Երբ արաբական զորքերը նվաճեցին Վերին Միջագետքը՝ Մուավիան Հաբիբ իբն Մասլամային և Սաֆվան իբն Մուաթթալ ալ-Սուլամիին Եփրատի հովտով ուղարկեց Բյուզանդական զորքերին ետ մղելու: Նրանք գրավեցին Շիմշաթը, բարձրացան մինչև Կամախ, որը գրավել նրանց չհաջողվեց: Կամախը գրավեց մի այլ Սուլամի՝ Ումայր իբն ալ-Հուբաբը[3]: Մուավիան Շիմշաթի կառավարիչ նշանակեց Սաֆվան իբն Մուաթթալ աս-Սուլամիին, որն այդ պաշտոնում մնաց ցմահ[4]: Բալազուրին հաղորդում է, որ VIII դ. կեսին Կոստանդին Կոպրոնիմոսի արշավանքի ժամանակ Կամախին տիրում էր Աբու Քարիմ անունով մեկը, որը Սուլայմ ցեղից էր[5]:

Հայաստանի արևմտյան շրջաններում արաբների առաջին վերաբնակեցումը տեղի ունեցավ Կարնո քաղաքում Հաբիբ իբն Մասլամայի կողմից 655 թ. արշավանքի ժամանակ: Գրավելով քաղաքը՝ Հաբիբը մի

---

[1] Անդ, էջ 436:
[2] Անդ, էջ 438:
[3] Տե՛ս بلاذري, I, էջ, 219:
[4] Անդ:
[5] Անդ, I, էջ 236:

քանի ամիս մնաց այնտեղ: Շուտով նրան հայտնեցին, որ Արմանիակուսի իշխանը (բաթրիկ) զորք է հավաքում մուսուլմանների դեմ և, որ նրան են միացել զորաջոկատներ «Ալլանի, Աֆխազի[1] և խազարական Սամանդարի բնակիչներից»[2]: Հաբիբն օգնության խնդրանքով դիմեց խալիֆա Օսմանին (644-656), իսկ վերջինն էլ հանձնարարեց Մուավիային՝ Հաբիբին ուղարկել Ջազիրայի և Ասորիքի այն արաբներից, որոնք կցանկանային մասնակցել պատերազմին և բաժին ունենալ ավարից: Մուավիան Հաբիբին ուղարկեց երկու հազար զինվոր, որոնց նա տեղավորեց Կարնո քաղաքում և հողեր տրամադրեց[3]: Դատելով այն փաստից, որ Հաբիբը արաբ զինվորներին հողեր տրամադրեց, նրանք, հավանաբար, Հայաստան էին եկել ընտանիքներով: Այս եզրակացությունը կարելի է բխեցնել նաև Ղևոնդի մի վկայությունից, որը վերաբերում է VIII դ. կեսերին, երբ Բյուզանդիայի կայսր Կոստանդինը գրավեց Կարնո քաղաքը և «զզօրսն քաղաքին և զբնակեալսն ի նմա Սառակինոսս բառնայր նոցին ընտանեօքն յաշխարհն Յունաց»[4]: Բյուզանդական զորքերի նահանջից հետո Յազիդ իբն Ուսայդ ոստիկանը, ինչպես տեսանք, վերականգնեց Կարնո քաղաքն ու նոր արաբ վերաբնակիչներ բերեց, հավանաբար, սուլամիներ, որոնք կայսիկ ցեղից էին: Փաստորեն, արաբներն ի սկզբանե Կարնո քաղաքում արաբական գաղութ էին հաստատել: Դատելով Մեծ Հայքի արևմտյան աշխարհների գրավման գործում Սուլայմ ցեղի ակտիվ դերակատարությունից՝ պետք է կարծել, որ Հաբիբը Կարնո քաղաքում հենց սուլամիների էր վերաբնակեցրել: Արաբական գաղութ էր ստեղծվել նաև Շիմշաթում, որն Չորրորդ Արմինիայի կազմում վարչականորեն առանձին միավոր էր համարվում և ուներ առանձին զինվորական կառավարիչ[5]: Այստեղ ևս, ամենայն հավանականությամբ, հաստատվել էին սուլամիները:

Հայաստանում Սուլայմ ցեղի հաստատմանը նպաստեց նաև այն, որ այդ ցեղի որոշ ներկայացուցիչներ զբաղեցրել են նաև Արմինիայի ոստիկանի պաշտոնը: Օրինակ՝ Յազիդ իբն Ուսայդ աս-Սուլամին այդ պաշտոնը զբաղեցրել է 3 անգամ (752-754, 759-769, 775-780 թթ.)[6]: Իր առաջին կառավարման շրջանում Յազիդը վերականգնեց բյուզանդական զորքերի կողմից ավերված Կարնո քաղաքը և այնտեղ վերաբնա-

---

[1] Ըստ երևույթին, պետք է լինի Աբխազ:
[2] ياذلا, I, էջ 234:
[3] Անդ:
[4] **Ղևոնդ**, էջ 129:
[5] Տե՛ս ياذلا, I, էջ 220, 240: Տե՛ս նաև **Ibn Khordadbeh**, էջ 122:
[6] Տե՛ս **Ա. Տեր-Գևոնդյան**, նշվ. աշխ., էջ 274-275:

կեցրեց արաբների իրենց ընտանիքներով[1]: Ամենայն հավանականությամբ, նա Կարնո քաղաքում վերաբնակեցրել էր իր ազգական սուլամիներին: Յակուբին, պատմելով Հարուն ալ-Ռաշիդի նշանակած ոստիկանների և նրանց գործունեության մասին, նրանց թվում հիշատակում է նաև Յազիդի երկու որդիներին, որոնք նույնպես վարել են ոստիկանի պաշտոնը Արմինիայում: Խալիդ իբն Յազիդը ոստիկան է եղել 794 թ., իսկ Ահմադ իբն Յազիդը՝ 796-797 թթ.[2]: Յազիդի ընտանիքից բացի Արմինիայում ոստիկաններ են եղել նաև այլ Սուլամիներ: Հայտնի է Յուսուֆ իբն Ռաշիդ աս-Սուլամին (787), որը, ինչպես տեսանք, նպաստեց դեպի Արմինիա (այս դեպքում, ամենայն հավանականությամբ, Հայաստան իմաստով-Ա.Ե.) արաբական ցեղերի գաղթին:

Ինչպես ճշգրտել է Ա. Տեր-Ղևոնդյանը, Կարինի ամիրայության մեջ մտնում էին Աղորնիքը (Հավճիչ բերդով) և Բասենի ու Հավնունիքի որոշ հատվածներ[3]:

Հայաստանի քաղաքական անկախության վերականգնման գործընթացի ժամանակ Կարինի ամիրայության վերաբերյալ ուղղակի հիշատակություններ չկան: Դատելով Անանուն Ձրուցագրի՝ Սմբատ Ա թագավորի նվաճումների վերաբերյալ հիշատակությունից, որին արդեն անդրադարձել ենք, կարող ենք արձանագրել, որ Հայ Բագրատունիների վարած քաղաքականության արդյունքում Կարինի ամիրայությունը կտրվեց կայսիկների ամիրայությունից, նրանից բաժանվեցին և Հայ Բագրատունիների տիրույթներին կցվեցին ինչպես Աղորնիքը, այնպես էլ Բասենի և Հավնունիքի հողերը, որից հետո Կարինի ամիրայությունն ամփոփվեց Կարին գավառի տարածքում: Այն, ինչպես տեսանք, գտնվում էր Հայոց տերության կազմում, սակայն միևնույն ժամանակ արաբների համար հանդիսանում էր կարևոր հենակետ Բյուզանդիայի դեմ պայքարում: Բյուզանդացիները 895 թ. և 902 թ. փորձեր են կատարել գրավելու Կարնո բերդը, որն արաբների գլխավոր կենտրոնն էր Կարին գավառում, սակայն գրավել չեն կարողացել և բավարարվել են շրջակայքն ասպատակելով[4]:

5.6. Նախճավանի ամիրայություն: Ղևոնդի մի հաղորդումից պարզվում է, որ արդեն VIII դ. սկզբին արաբները Նախճավանում մեծաքա-

---

[1] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 130:

[2] Տե՛ս يعقوبي, II, էջ 426-428: Տե՛ս նաև А. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 277-278:

[3] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 216-223:

[4] Տե՛ս **Ասողիկ**, էջ 231, **Կոստանդին Ծիրանածին**, էջ 14-15: Տե՛ս նաև К. Юзбашян, նշվ. աշխ., էջ 130:

նակ կայազոր էին պահում: Պատմիչը, հաղորդում է, որ հայ նախարարներից ոմանք այդ ժամանակ փորձում էին հեռանալ Բյուզանդիա, բայց «զօրքն Իսմայելի, որ էին ի Նախջաւան քաղաքի՝ յարձակեցան զկնի նոցա»: Ըստ Ղևոնդի՝ նրանց թիվն անցնում էր 5 հազարից[1]:

Հետագայում, դատելով սկզբնաղբյուրների վկայություններից՝ Նախճավանի արաբները հիմնադրեցին սեփական ամիրայությունը: Բուղայի արշավանքի ժամանակ Նախճավանի Աբրահամ (Իբրահիմ) անունով ամիրան Սմբատ սպարապետից լուր ստացավ Վասպուրականի զորքերի հարձակման մասին, ճակատամարտ տվեց նրանց, բայց պարտություն կրեց[2]:

Անանուն Զրուցագիրը հաղորդում է, որ Սմբատ Ա-ն ի թիվս այլ գավառների, տիրել էր նաև Նախճավանին, ինչպես նաև Նախճավան գավառի և Սյունիքի սահմանին գտնվող Երնջակ ամրոցին[3]:

Սմբատ Ա-ի գահակալության տարիներին տեղի ունեցած դեպքերը, որոնք կապված են Նախճավան գավառի և Երնջակ ամրոցի հետ, իրոք խոսում են այն բանի օգտին, որ դրանք վերածված են եղել արքունի տիրույթների: Ըստ Թովմա Արծրունու՝ Գողթնը և Նախճավանը Վասպուրականի կազմից հանվել էին X դ. առաջին տասնամյակի դեպքերից շուրջ երկու հարյուրամյակ առաջ, այսինքն՝ VII դ. սկզբին[4]: Խնդիրն այն է, որ Նախճավանի կարևոր ռազմաստրատեգիական դիրքը ստիպում էր Հայոց թագավորին այն վերցնելու հսկողության տակ: Այնտեղով էր անցնում հարավից եկող և Նախճավանով Դվին ընթացող առևտրական մեծ մայրուղին, որով էլ երբեմն Ատրպատականի ամիրաները ներխուժում էին Հայոց տերություն:

Ամենայն հավանականությամբ, Սմբատ Ա-ն վերացրել էր Նախճավանի ամիրայությունը, քանի որ այդ դեպքերից հետո տեղի արաբական ամիրայության մասին հիշատակություններ չեն պահպանվել:

Այն, որ Նախճավան և Գողթն գավառները Սմբատ Ա-ն ձեռքից ձեռք էր փոխանցում կամ ետ վերցնում Վասպուրականի և Սյունյաց իշխաններից, ցույց է տալիս, որ դրանք արքունի կալվածքներ էին:

902 թ. Սմբատ Ա-ն, ելնելով Մանազկերտի կայսիկների հետ բախման ժամանակ Վասպուրականի Արծրունիների ցույց տված օգնությունից, Նախճավանը հանձնեց նրանց[5], իսկ քիչ անց՝ դատելով Թով-

---

[1] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 24:
[2] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 304:
[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 159-161:
[4] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 390:
[5] Անդ, էջ 382, 428:

մա Արծրունու հիշատակությունից, որ 905 թ. Գագիկ և Գուրգեն Արծրունի եղբայրների միջև Վասպուրականի գավառների բաժանման ժամանակ նրանցից և ոչ մեկի բաժնում Նախճավանը հիշատակված չէ, այն ետ վերցրեց նրանցից[1]:

Քանի որ Գողթնը Նախճավանի հետ միասին ներկայացնում է բնաշխարհագրական մի ամփոփ միջավայր և ռազմավարական առումով նրանից անբաժանելի էր, ապա Նախճավանի մասին խոսելիս պետք է նրա հետ ի նկատի ունենալ նաև Գողթնը: Հենց դրանով էր պայմանավորված Նախճավանի հետ միասին նաև Գողթնի անջատումը Վասպուրականից VII դ. սկզբներին:

Դրա օգտին է խոսում նաև այն իրողությունը, որ Շայբանի ամիրան մեղադրում էր Սմբատ Ա-ին, որ «բռնութեամբ առեր զամենայն կողմանս արևմտից մինչև հասար յաւանդ քաղաքաց ի Պարտաւ, նոյնպէս և Նախջևան և զմեծ շահաստանն զԹվին»[2]:

Վերևում արդեն տեսանք, որ Գողթնում Յուսուֆն արաբական նոր ամիրայություն էր ստեղծել, որն ընդգրկում էր Գողթն գավառի տարածքը:

5.7. Հերի ամիրայություն: Երբ Արմինիայի այս կամ այն մասում հաստատվում էին արաբ վերաբնակիչներ և հիմնադրում իրենց իշխանությունները, նրանք վարչականորեն ենթարկվում էին Արմինիայի ոստիկանին ու, այդ իսկ պատճառով, ավելի ուշ, Հայոց թագավորներն ու իշխաններն իրենց իրավունքն էին համարում նրանց իրենց ենթարկելը: Օրինակ՝ Աշոտ Ա-ն իր իշխանությանն էր ենթարկել Հերի և Սալամասի (Սալմաստ) արաբական ամիրայություններին[3]: Բայց արաբների հաստատումն Արմինիայի տարբեր մասերում փոփոխություններ էր մտցնում ժամանակակիցների մտածողության մեջ: Այն ստիպում էր, որ այլ աղբյուրներում Պարսկահայքի հյուսիսային գավառները համարվեն Ատրպատականի մաս: Ղևոնդն, օրինակ՝ նկարագրելով արաբների անընդհատ սաստկացող բռնությունները, պատմում է, թե VIII դ. կեսերին Գագիկ Արծրունին հավաքեց իր զորքը և «ելեալ ասպատակ սփռէր զկողմամբք Ատրպատական աշխարհին, ի Զարևանդ գաւառ, ի Բուտակս և Զիդռոյ, ի Տասուկ, ի Գազնակ, ի Յորմի, ի Սուրենապատ և յայլ ևս մերձակայ գաւառսն...և գայր հասանէր ի գաւառն Հէր»[4]: Վերոհիշյալ պատճառով VIII դ. կեսերին Ղևոնդի կողմից Պարսկահայքի կենտրոնա-

---

[1] Անդ, էջ 388-390:
[2] **Անանուն Զրուցագիր**, էջ 171:
[3] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10:
[4] **Ղևոնդ**, էջ 133-134:

կան և հյուսիսային գավառների հիշատակությունն Ատրպատականի կազմում մենք համարում ենք այդտեղ արաբական գաղութների հաստատման հետևանք[1]:

Դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ արաբական գաղութներ էին հաստատվել Հերում, Զարևանդում, Սալամասում, որը գրավվել էր Արծրունիների կողմից, և Վասպուրականի Մարանդ գավառում: Հովհաննես Դրասխանակերտցին տեղեկացնում է, թե Վասպուրականի Գագիկ թագավորն անընդհատ կռիվներ էր մղում Հերի, Զարևանդի, Մարնադի և Նախճավանի շրջաններում հաստատված արաբական ամիրայությունների դեմ[2]: Իսկ Անանուն Զրուցագիրը պատմում է, թե Վասպուրականի Դերեն (Դերենիկ) (874/5-885) իշխանը սուրհանդակ է ուղարկում Հերի ամիրայի որդիների մոտ, հաղորդելով, որ ինքը կամենում է գնալ և որս անելու նպատակով ծմեռել նրանց մոտ, քանի որ Մարանդի կողմերը որսաշատ են[3]: Ընդ որում, նա հաղորդում է, թե Մարանդի ամիրայությունը Դերեն իշխանի օրոք միացվել էր Հերի ամիրայությանը[4]: Պատմիչի այլ հաղորդումները ցույց են տալիս, որ Հերի ամիրայության կազմում ընդգրկված էր ինչպես Մարանդը, այնպես էլ Սալամասը[5]:

Վասպուրականի իշխանության բաժնում ցույց տվեցինք, որ Հերի ամիրայության մեջ մտնում էին Վասպուրականի Պարսպատունիք, Արտավանյան, Բագան, Գաբիթյան, Գազրիկյան և Վարաժնունիք գավառները, որոնք տեղադրվում են Վասպուրականի՝ Կոտոր գետից արևելք գտնվող հատվածում[6]:

Հերի ամիրայությունը գրավում էր աստիճանաբար հզորացող Վասպուրականի Արծրունիների ուշադրությունը: Ինչպես հաղորդում է Անանուն Զրուցագիրը՝ «Եւ նայ (իմա՛ Դերենիկ Արծրունին) դիմեաց և գնաց ի Զարևանդ և շինեաց քաղաք ամուր և պարսպեաց զքաղաքն և շինեաց իւր բերդն, որ Մողոքարն ասեն, և զամուրն Միջայ. և զամենայն գաւարն Դաշտայ Աւարին շինեաց մինչև ի ծովն Աղի: Եւ էհար զտուն Պարսից և շինեաց ի գլուխ դաշտին Հերայ զՀողաբլուրն»[7]: Պատմիչի հաղորդումը

---

[1] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արմինիա ոստիկանության սահմանները,-«ՊԲՀ», 2005, թիվ 1, էջ 248:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 290-292:

[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 165-167:

[4] Անդ, էջ 159:

[5] Անդ, էջ 127, 157:

[6] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 375-380:

[7] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 131:

ցույց է տալիս, որ Արծրունի իշխանը Հերի ամիրայությունից գրավել է Զարևանդ գավառը, Հերի մի մասը, իսկ այնուհետև իր տիրույթներն ընդարձակել է մինչև Աղի կամ Կապուտան ծովի ափերը: Այնուհետև, ըստ պատմիչի, Դերենիկը գրավել է նաև Զարեհաբերդն ու Սալամասը[1]: Ըստ Հովհաննես Դրասխանակերցու՝-Դերենիկ Արծրունին Հեր և Զարևանդ գավառներն իրեն է ենթարկել[2]: Դրա հետևանքով Հերի ամիրայության տիրույթները մեծապես կրճատվեցին:

Վասպուրականի իշխանության բաժնում ցույց ենք տվել, որ Վասպուրականի արևելյան գավառները՝ միավորված Հերի ամիրայի իշխանության ներքո, Հայոց թագավորության հիմնադրման ժամանակ այլևս Վասպուրականի իշխանության մաս չէին, այլ ուղղակիորեն ենթարկվում էին Հայոց թագավորին:

Այդ են ցույց տալիս Անանուն Զրուցագրի և Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումները: Ատրպատականի Ափշին ամիրան, տեսնելով Սմբատ արքայի մտերմությունը Բյուզանդիայի կայսր Լևոնի հետ, արշավում է Հայաստան: Նրան 30 հզ. զորքով ընդառաջ է գնում Սմբատ արքան: «Գնայր ընդ առաջ նորա մինչև ի գաւառն Ռոտոկայ մերձ յԱտրպատական»[3]: Այսինքն՝ այստեղ սահմանագիծը նույնն էր, ինչ մարզպանական ու ոստիկանական շրջանում՝ Հեր և Զարևանդ գավառները (Ռոտոկ կամ Ռոստակ) մտնում էր Հայոց թագավորության մեջ: Անանուն Զրուցագիրը հաղորդում է, որ Հերի ամիրաները ենթարկվում էին Սմբատ Ա-ին և կատարում նրա հրամանները[4]:

5.8. Ծաղկոտնի ամիրայություն: Արաբական տիրապետության շրջանում Ծաղկոտնում ստեղծված արաբական ամիրայության մասին սկզբնաղբյուրները գրեթե տեղեկություններ չեն պահպանել: Անանուն Զրուցագիրը վկայում է, որ Սմբատ Ա-ն «զԾաղկիոտն գաւառն էրետ Տաճկի մի այլ՝ Ռաճայ անուն»[5]: Հավանական է, որ Ծաղկոտն գավառը, որտեղ, ամենայն հավանականությամբ, թեև ոչ ծանրակշիռ, բայց արաբ տարր էր բնակվում, հանձնվել է արաբ իշխանավորի: Ինչպես տեսանք, այդ ամիրայությունը զբաղեցնում էր Այրարատի Ծաղկոտն գավառի տարածքը՝ Արածանի գետի ակունքների շրջանում:

5.9. Տփղիսի ամիրայություն: Ինչպես իրենց նվաճած այլ երկրներում, այնպես էլ Արմինիա ոստիկանության Երկրորդ Արմինիա վարչա-

---

[1] Անդ, էջ 127, 157:
[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 142:
[3] Անդ, էջ 162:
[4] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 163-169:
[5] Անդ, էջ 161:

կան շրջանում արաբներն ի սկզբանե ձեռնամուխ եղան երկրի մեծագույն քաղաքներում և ամրոցներում կայազորների հաստատմանը:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Երկրորդ Արմինիայի տարբեր քաղաքներում արաբները կայազորներ ունեին: Տփղիսում արաբներ բնակեցվեցին դեռևս VIII դ. սկզբին, որոնք քաղաքում կառուցեցին իրենց մզկիթները: «Քարթլիի մատյան»-ը հաղորդում է, որ արաբները, գրավելով Տփղիսը, այն վերաբնակեցրին իրենց ցեղակիցներով՝ վերածելով մահմեդական քաղաքի[1]: Հետագայում Տփղիսում տեղի արաբները ստեղծեցին իրենց ամիրայությունը[2]:

Տփղիսի ամիրայությունը VIII դ. և IX դ. առաջին կեսին զբաղեցնում էր բավական ընդարձակ տարածքներ: Տփղիսի ամիրայության գերիշխանության տակ էր գտնվում Ծանարքը՝ Ալանաց դռնով: Չնայած, որ ծանարները հաճախ էին փորձում թոթափել արաբական լուծը, Խալիֆայությունը կարողանում էր կրկին իրեն ենթարկել նրանց[3]: Այսպես, Աբու Ջաֆար ալ-Մանսուր խալիֆայի օրոք (754-775), երբ ծանարներն ապստամբեցին Խալիֆայության դեմ, Յազիդ իբն Ուսայդ ոստիկանը (Արմինիայի ոստիկան է եղել երեք անգամ՝ 752-754, 759-769, 775-780 թթ.) կրկին Խալիֆայությանը ենթարկեց նրանց երկիրը, վերանվաճեց Ալանաց դուռը և այնտեղ բնակեցրեց Խալիֆայության դիվանում գրանցված զինվորների[4]:

Հայտնի է, որ արաբական ամիրայություն էր ստեղծվել նաև Ռուսթավում[5], որը մտնում էր Տփղիսի ամիրայության մեջ: Տփղիսի ամիրայության մաս էր կազմում նաև Գարդաբանը[6]: Մասուդին հաղորդում է. «Աբխազներն ու խազարները[7] տուրք էին վճարում Տաֆլիսի սահմանային շրջանի իշխանին՝ Տաֆլիսի գրավումից և այնտեղ մուսուլմանների հաստատումից սկսած մինչև Մուտավաքքիլի օրերը[8]: Այնտեղ մի մարդ կար Իսհակ իբն Իսմայիլ անունով[9], որն իր հետ եղած մուսուլմանների միջոցով իրեն էր ենթարկել շրջապատի ժողովուրդներին: Եվ նրանք ենթարկվում էին նրան ու տուրք վճարում: Այնտեղի բոլոր ժո-

---

[1] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 28:

[2] Տե՛ս **À. Áîãäàíîâà**, նշվ. աշխ., էջ 179:

[3] Անդ, էջ 180:

[4] Տե՛ս بلاذري, I, էջ 246:

[5] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 148:

[6] Տե՛ս **Գ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 72:

[7] Իմա՛ ջուրզաններ կամ վիրք:

[8] Մուտավաքքիլն իշխել է 846-861 թթ.:

[9] Իսհակ իբն Իսմայիլը Տփղիսի ամիրան էր IX դ.կեսերին: Թովմա Արծրունին նրա կոչում է «քաղաքապետն Սահակ» (տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 272):

ղովուրդները ենթարկվում էին նրան մինչև [այն ժամանակ], երբ Մուտավաքքիլն ուղարկեց [Բուղային], որը եկավ Տաֆլիսի սահմանային շրջանը: Նա պաշարեց Տաֆլիսը, մինչև որ [կարողացավ] գրավել զենքով և մահապատժի ենթարկեց Իսհակ իբն Իսմայիլին, որը տիրում էր ամբողջ շրջակայքին: ...Ես կարծում եմ, որ նա (Իսհակ իբն Իսմայիլը) Օմայանների տոհմին պատկանող Կուրայշ[1] էր կամ միացել էր այդ [ցեղին]: Այդ ժամանակից մինչև օրս Տաֆլիսի սահմանային շրջանում մուսուլմաններից այլևս չեն վախենում, և շրջակա թագավորություններն այլևս նրանց չեն ենթարկվում: Եվ բաժանվեցին Տաֆլիսից շատ գյուղեր, ու փակվեցին իսլամի երկրներից Տաֆլիսի սահմանային շրջան մտնող ճանապարհները[2], [քանի որ] դրանք անցնում էին անհավատների հողերով, իսկ սահմանային շրջանը շրջապատված է դրանցով: Սակայն, նրա բնակիչները ուժեղ և քաջ են, չնայած շրջապատված են հիշյալ ցեղերով»[3]: Այս հաղորդումը ցույց է տալիս, որ Իսհակից հետո Տփղիսի ամիրայությունն ամփոփվել էր Տփղիս քաղաքով և շրջակայքով: Այն IX դ. կեսերին ընդգրկում էր Գարդաբանը, Կուխեթի հարավային մերձկուրյան հատվածը և Պարուար գավառը՝ Տփղիսից մինչև Կուր գետ՝ վերջինիս աջափնյակում[4]:

Իսհակից հետո Տփղիսի հաջորդ ամիրան՝ Մուհամմադը, արդեն պատկանում էր Շայբանիների տանը[5]:

Բուղայի արշավանքից հետո Ծանարաց Գրիգոլ քորեպիսկոպոսին հաջողվեց իր ենթակայության ներքո առնել Գարդաբանը, որ դրանից հետո մաս էր կազմում, ինչպես տեսանք, Ծանարաց քորեպիսկոպոսության: Մասուդիի վերոհիշյալ հաղորդումից երևում է, որ Տփղիսի ամիրայությունից բաժանվեցին նաև նրա մյուս տիրույթները: Այդ ամենի հետևանքով Տփղիսի ամիրայության տարածքը խիստ կրճատվեց, Տփղիսի ամիրաները վերածվեցին հասարակ ավատատերերի, իսկ ամիրայությունը՝ քաղաք-պետության[6]:

Տփղիսի ամիրայությունը Շայբանիների գլխավորությամբ գոյատևեց բավական երկար՝ մինչև XII դ. սկիզբ[7]:

---

[1] Արաբական ցեղ է, որին պատկանում էին Մուհամմադն ու Ալին (տե՛ս Kuraysh, W. Montgomery Watt, EOI, CD-ROM, V:434a):

[2] Արաբական տիրապետության շրջանում Տփղիսը ճանապարհներով կապված էր Պարտավի և Դվինի հետ (տե՛ս al-Istakhri, էջ 193, al-Moqaddasi, էջ 382):

[3] مسعودي, I, էջ 203-204:

[4] Տե՛ս **Մ. Լորդկիպանիդզե**, նշվ. աշխ., էջ 339-340:

[5] Անդ, էջ 348:

[6] Տե՛ս **Գ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 72:

[7] Տե՛ս **À. Áîãîâåðàäçå**, նշվ. աշխ., էջ 233:

Հայկական սկզբնաղբյուրների տեղեկությունները, որոնց մենք արդեն անդրադարձել ենք, ցույց են տալիս, որ Տփղիսի ամիրայությունը մտնում էր Հայոց Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի թագավորների տերության կազմի մեջ[1]: Դատելով մեր քննությունից՝ Հայ Բագրատունիների տիրապետությունն այսրկովկասյան երկրներում հաստատվել է IX դ. 80-ական թվականներին՝ հայ-աբխազական 881 և 888 թթ. բախումների արդյունքում հայկական կողմի հաղթանակներից հետո, որոնց, ինչպես տեսանք, որպես Աշոտ Բագրատունու հպատակ, մասնակցում էր նաև Տփղիսի ամիրան:

5.10. Գանձակի ամիրայություն: Ըստ Մովսես Դասխուրանցու՝ 842 թ. Խազարաց Փատգոս խաքանը ներխուժեց Հայոց Արևելից կողմեր, սակայն անհաջողության մատնվեց, որից հետո արշավեց նրա որդին, ավերեց երկիրն ու անցավ գնաց Բաղդադ: Ստանալով խալիֆայի հովանավորությունը՝ նա վերադարձավ և 846 թ. Շակաշեն գավառում կառուցեց Գանձակ քաղաքը. «Եւ յետ այսորիկ արշաւանս առնէր յաշխարհն Սիւնեաց և գերի վարեալ զԲաղացն սահմանս՝ գայ իջանէ յԱղահէջ գաւառ՝ յաւան մի՝ Արքուգետ կոչեցեալ»[2]: Այսպիսով՝ Փատգոսի որդին, որ հաստատվել էր Շակաշեն գավառում, պայքար սկսեց, դատելով նրա ասպատակած գավառներից, թե՛ Եսայի Աբու Մուսեի, թե՛ Սահլ Սմբատյանի ժառանգների և թե՛ Սյունիքի իշխանների դեմ, սակայն պարտություն կրեց[3]: «Շիրվանի և ալ-Բաբի պատմության»՝ 859 թ. վերաբերող մի հիշատակության մեջ նշվում է, որ Արմինիայի ոստիկան Մուհամմադ իբն Խալիդն է (857-862) կառուցել Գանձակ քաղաքը[4]: Ըստ այդ պատմության՝ քաղաքը Գանձակ է կոչվել՝ նրա տեղում գտնված գանձի պատճառով (գանձարան իմաստով)[5]: Խալիֆան նրանից պահանջեց գտնված գանձը, իսկ քաղաքը հանձնեց նրան՝ որպես տիրույթ[6]: Կարծում ենք, որ առավել հավանական է երկրորդ հիշատակությունը, քանի որ խիստ կասկածելի է, որ խազարների խաքանի որդին, որը ներխուժել էր Արաբական խալիֆայության տարածքը, խալիֆայից իրավունք ստանար Հայաստանում քաղաք կառուցելու: Ըստ որում, ինչպես կարծում է Ն. Ադոնցը, խոսքը ոչ թե քաղաքի կառուցման, այլ վերակառուցման մասին է, որից հետո այստեղ արաբներ են վերաբնա-

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 142, 164, **Անանուն Զրուցագիր**, էջ 159:
[2] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 331:
[3] Անդ, էջ 331-332:
[4] Տե՛ս Â. Mèí îðñêèé, նշվ. աշխ., էջ 46:
[5] Անդ, էջ 46-47:
[6] Անդ:

կեցվել[1]: Այդուհետ Գանձակում հաստատված օտար տարրը աստիճանաբար սկսեց ինքնուրույնություն ձեռք բերել:

Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո, ինչպես հաղորդում է Հովհաննես Դրասխանակերտցին, Աշոտ Ա-ն իր տերությանն է կցում Ուտիքը՝ այնտեղ նշանակելով արքունի պաշտոնյայի[2]: Այդ են ցույց տալիս նաև արաբ հեղինակների տեղեկությունները, ըստ որոնց, ինչպես տեսանք, Սմբատ Ա-ի տերության կազմում ընդգրկված էր նաև Պարտավը:

Ամփոփելով վերոասացյալը՝ կարող ենք նշել, որ Հայ Բագրատունիների տերության կազմում գոյություն ունեին մի քանի ամիրայություններ, որոնք գտնվում էին Հայոց թագավորի գերիշխանության ներքո: Արաբական տիրապետության շրջանում նրանք տիրում էին ընդարձակ տարածքների, սակայն խնդրո առարկա ժամանակաշրջանում նրանց տիրույթներն Աշոտ Ա-ի և, հատկապես, Սմբատ Ա-ի վարած քաղաքականության արդյունքում խիստ կրճատվել էին: Չնայած դրան, որոշ ամիրայություններ շարունակեցին գոյատևել:

---

[1] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 445:
[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 142:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ, ՔԱՂԱՔԱԳՅՈՒՂԵՐԸ, ԲԵՐԴԵՐԸ, ՎԱՆՔԵՐԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

6.1. Հայ Բագրատունիների տերության քաղաքները և քաղաքագյուղերը: Հայ Բագրատունիների տերության ձևավորման և հզորացման շրջանում զարգացում են ապրում նախկինում հայտնի քաղաքները և առաջանում են նորերը: Ինչպես հաղորդում է Ասողիկը՝ Հայոց թագավորության վերականգնումից հետո «ագարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ»[1]: IX-X դդ. Հայաստանում առաջացել էր շուրջ 30 մեծ ու փոքր քաղաք և մոտ 20 գյուղաքաղաք[2]: Վերջիններս հիմնականում զարգանում էին առևտրական ճանապարհների վրա: Բազմաթիվ քաղաքներ առաջանում են այն ճանապարհների վրա, որոնք, երկարատև ընդմիջումից հետո, վերստին ակտիվացել էին: Որոշ քաղաքներ հանդիսանում էին երկու կամ ավելի առևտրական ճանապարհների հանգուցակետ: Պետք է նշել, սակայն, որ Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանը կարելի է բնորոշել որպես քաղաքների առաջացման սկզբնական շրջան: Հայտնի է, որ արաբական տիրապետության շրջանում քաղաքների ձևավորման գործընթացը դադարել էր, իսկ գոյություն ունեցող քաղաքները հետընթաց էին ապրել[3]: Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո ավանները և մեծ բնակավայրերը վերածվում են քաղաքագյուղերի, և սկսվում է մեծ քաղաքների ձևավորման գործընթացը: Այդ իսկ պատճառով խնդրո առարկա շրջանում գերակշռում են քաղաքագյուղերը:

Ստորև կանդրադառնանք Հայ Բագրատունիների տերության այն քաղաքներին և քաղաքագյուղերին, որոնք կարևորություն ունեին տերության կյանքում և խնդրո առարկա շրջանում հաճախ են հի-

---

[1] Տե՛ս **Ասողիկ**, էջ 161:

[2] Տե՛ս **Բ. Առաքելյան**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հ. I, էջ 123-124:

[3] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 89-90:

շատակվում սկզբնաղբյուրներում:

Հայաստանի քաղաքները և քաղաքագյուղերը: Խոսելով Հայաստանի քաղաքների մասին՝ Ն. Մառն այն կարծիքն է հայտնում, որ միջնադարում հայկական քաղաքը բաղկացած էր 3 մասից՝ միջնաբերդ, շահաստան և բաց քաղաք: Միջնաբերդում ապրում էին թագավորը, նրա ընտանիքի անդամներն ու արքունիքը, ինչպես նաև արքունի կայազորը, շահաստանը բուն քաղաքն էր, որտեղ գտնվում էին մայր եկեղեցին, կենտրոնական շուկան, արհեստանոցները, խանութները, կրպակները, հյուրանոցները, քարվանսարաները և պահեստները, իսկ բաց քաղաքում բնակություն էին հաստատում գյուղացիները և երկրագործության բնագավառում գործող արհեստավորները[1]:

Հայ Բագրատունիների արքունի տիրույթներ:

Դվին: Հայոց հինավուրց մայրաքաղաք Դվինն արաբական տիրապետության շրջանում վարչական և տնտեսական տեսակետից Արմինիայի գլխավոր քաղաքներից մեկն էր և, միաժամանակ, նաև Արմինիայի ոստիկանի նստավայրը: Երբ, թերևս, 747-750 և 774-775 թթ. ապստամբությունների պատճառով, Արմինիայի ոստիկանները որպես նստավայր ընտրեցին Պարտավը[2], այն չկորցրեց իր նշանակությունը և շարունակեց մնալ որպես ոստիկանի երկու նստավայրերից մեկը: Ալ-Իսթախրին վկայում է, որ, «ինչ վերաբերում է Դաբիլին (իմա՛ Դվին-Ա.Ե.), ապա այն որպես քաղաք ավելի մեծ է Արդաբիլից: ...այնտեղ գտնվում է ամիրի (իմա՛ ոստիկանի-Ա.Ե.) պալատը, այնպես, ինչպես Առանի ամիրի պալատը Բարդաայում և Ադարբայջանի ամիրի պալատն Արդաբիլում»[3]: Այս շրջանում Դվինն առևտրական ճանապարհներով կապված էր ինչպես Արմինիայի մյուս խոշոր առևտրական կենտրոնների, այնպես էլ Խալիֆայության տարբեր երկրամասերի հետ[4]:

IX դ. սկզբին Դվինը գտնվում էր թե՛ արաբների և թե՛ Բագրատունիների ուշադրության կենտրոնում: Դվինում հայ բնակչությունը մեծամասնություն էր կազմում, բայց իշխող դիրք ունեին արաբները[5]: Չնայած դրան, Դվին քաղաքն իր շրջակայքով համարվում էր Բագրատունի-

---

[1] Տե՛ս **Н. Марр.,** Ани. Ер., 1939, էջ 53-60, 90-101 և այլն 248c: Տե՛ս նաև **Ս. Հակոբյան, Ն. Յա.** Մառը և միջնադարյան հայկական քաղաքի ուսումնասիրության պրոբլեմը,- ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1949, թիվ 7, էջ 17-50:

[2] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 166: Պատմիչը հաղորդում է, որ Սուլեյման ոստիկանը (788-790) նստում էր Պարտավում:

[3] Տե՛ս **al-Istakhri,** էջ 188:

[4] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122:

[5] Տե՛ս **al-Istakhri**, էջ 188:

ների տիրույթ[1], չնայած քաղաքում արաբական կայազոր կար: «Շիրվանի և ալ-Բաբի պատմության»՝ 844 թ. վերաբերվող մի հիշատակության մեջ նշված է, որ Դվինը մտնում էր Հայաստանի տիրակալ, Աշոտ որդի Սմբատի տիրույթների մեջ[2]: Խոսքը Բագրատունիների Շիրակի ճյուղի ներկայացուցիչ, Հայոց սպարապետ Սմբատի մասին է, որի տիրույթների մեջ, փաստորեն, մտնում էր Դվինը:

878 թ., ինչպես տեսանք, Դվինի արաբ բնակչությունն ամբողջությամբ ենթարկեցվեց Աշոտ Բագրատունուն: Հասկանալի է, որ Դվինի հարակից շրջանները, որոնք գտնվում էին Դվինի արաբների գերիշխանության ներքո, կցվեցին Բագրատունիների տիրույթներին: Այդ է վկայում Հովհաննես Դրասխանակերտցին՝ պատմելով, որ Սմբատ Ա-ի օրոք ապստամբած Մահմետ և Ումայի եղբայրները սոսկ «գլխաւոր ոստիկանք և հրամանատարք քաղաքին» էին[3]: Այսինքն՝ Դվինի արաբների իշխանությունը տարածվում էր միայն քաղաքի և, թերևս, մերձակա շրջանների վրա: Սմբատ Ա-ն ճնշեց ապստամբությունը և Դվինը կցեց իր տիրույթներին[4]:

Ալ-Իսթախրին վկայում է, որ Դվինը «Հայաստանի մայրաքաղաքն է»[5]: Հովհաննես Դրասխանակերտցին, չնայած նշում է, որ Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի թագավորանիստները համապատասխանաբար Բագարանն ու Երազգավորսն էին, սակայն, միևնույն ժամանակ, Դվինը հիշատակում է որպես մայրաքաղաք[6]: Հայ-բյուզանդական առևտրական պայմանագրի կնքումից հետո, 893 թ., տեղի ունեցավ Դվինի մեծ երկրաշարժը, որի հետևանքով քաղաքն ավերվեց և բազմահազար մարդիկ մահացան[7]: Սակայն, Դվինը շուտով վերականգնվել է: Խնդրո առարկա շրջանում քաղաքի տարբեր դարպասներից դուրս էին գալիս մի քանի առևտրական ճանապարհներ: Այդ դարպասներից ալ-Մուկադդասին հիշատակում է հատկապես Բաբ Անին և Բաբ Տիֆլիսը[8]: Խնդիրն այն է, որ Անիի դարպասով մեծ առևտրական ճանապարհն ընթանում էր դեպի Բյուզանդիա, իսկ Տփղիսի դարպասով՝ դեպի Տփղիս, Ալանաց դուռ և

---

[1] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 343:
[2] Տե՛ս В. Минорский, նշվ. աշխ., էջ 45:
[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 164:
[4] Անդ, էջ 162-164:
[5] **Al-Istakhri**, էջ 188:
[6] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 162:
[7] Անդ, էջ 164-166: Ըստ Թովմա Արծրունու՝ մահացած և տուժած մարդկանց թիվն առավել քան 70 հզ էր (տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 358):
[8] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 377:

Հյուսիսային Կովկաս, ինչպես նաև դեպի Կոտայիս (Քութայիս) և այնտեղից՝ դեպի Սև ծովի ափերը:

Դվինն Հայոց տերության խոշորագույն առևտրական կենտրոններից էր: Դվինում պատրաստված բրդե, մետաքսե և փետրե գործվածքները, հագուստներն ու որդան կարմիր ներկը արտահանվում էին Խալիֆայության տարբեր երկրամասեր և այնտեղ մեծ հռչակ էին վայելում[1]:

Բագարան: Բագարանն Աշոտ Ա-ի օրոք հանդիսանում էր Հայ Բագրատունիների տերության մայրաքաղաքը[2]: Հնում Երվանդունիների թագավորության կրոնական կենտրոններից մեկն էր[3]: Հովհաննես Դրասխանակերտցին VI դ. վերջի և VII դ. սկզբի իրադարձությունների հետ կապված Բագարանը հիշատակում է որպես գյուղ[4]: Արդեն Աշոտ Ա-ի մահվան (890 թ.) հետ կապված պատմիչն այն հիշատակում է որպես ավան[5], իսկ քիչ անց՝ 901 թ. հետո, որպես քաղաքագյուղ[6]:

Բագարանում էր գտնվում Բագրատունիների տոհմական գերեզմանատունը, որտեղ թաղվել են Աշոտ Ա-ն[7], նրա որդի Շապուհը[8], Սմբատ Ա-ի որդի Մուշեղը[9] և այլք: Հայ Բագրատունիների տերության ձևավորման շրջանում եղել է սպարապետների տիրույթ[10]:

Բագարանը գտնվում էր Ախուրյան գետի ստորին հոսանքի աջ կողմում՝ Երասխ-Ախուրյան ջրկիցի մերձակայքում: Այժմ նույն տեղում գտնվող գյուղը կոչվում է Բաքրան[11]:

Երազգավորս: Հինավուրց բնակավայր էր, որի անվան առաջացումը երբեմն կապվում է Երվանդունիների տոհմական Երվազ անվան հետ[12]: Հետագայում կոչվում էր նաև Շիրակավան: Սեբեոսը VII դ. առաջին կեսին Շիրակավանը հիշատակում է որպես գյուղ[13], իսկ Հովհաննես Դրասխանակերտցին արդեն Բուղայի արշավանքի ժամանակ՝ որպես

---

[1] Տե՛ս **al-Istakhri**, էջ 188, **al-Moqaddasi**, էջ 380, **Ibn al-Fakih**, էջ 297, **Ibn Haukal**, էջ 342-343 և այլն:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 146:

[3] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 42:

[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 74:

[5] Անդ, էջ 146:

[6] Անդ, էջ 196:

[7] Անդ, էջ 146:

[8] Անդ, էջ 196:

[9] Անդ, էջ 228, **Ասողիկ**, էջ 165:

[10] Տե՛ս **Բ. Առաքելյան**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հ. I, էջ 85:

[11] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 42:

[12] Անդ, էջ 74:

[13] Տե՛ս **Սեբեոս**, էջ 108:

քաղաքագյուղ[1]: Այդուհետ հանդես է եկել որպես քաղաքագյուղ[2]: Այն հետագայում չի վերածվել մեծ քաղաքի և, ամենայն հավանականությամբ, դրա գլխավոր պատճառներն էին քիչ հեռվում Անի քաղաքի արագ զարգացումը և մայրաքաղաքի տեղափոխությունը Երազգավորսից Կարս (մինչև 961 թ.)[3]:

Երազգավորսը Հայ Բագրատունիների մայրաքաղաքն էր Սմբատ Ա-ի և Աշոտ Բ-ի օրոք[4]: Այն գտնվում էր Ախուրյան գետի միջին հոսանքի աջ ափին՝ Անիից հյուսիս (ներկայիս Բաշ-Շորագյալ գյուղի տեղում)[5]:

Նախճավան: Արաբները Նախճավանում կայազոր էին հաստատել դեռևս VII դ. սկզբից[6]: Այդ ժամանակ այն հիշատակվում է որպես դաստակերտ կամ քաղաք[7]: Հետագայում, դատելով սկզբնաղբյուրների վկայություններից՝ Նախճավանի արաբները հիմնադրեցին սեփական ամիրայությունը: Բուղայի արշավանքի ժամանակ Նախճավանի Աբրահամ (Իբրահիմ) անունով ամիրան Սմբատ սպարապետից լուր ստացավ Վասպուրականի զորքերի հարձակման մասին, ճակատամարտ տվեց նրանց, բայց պարտություն կրեց[8]: Հայ Բագրատունիների տերության շրջանում, ինչպես տեսանք, այն պատկանում էր արքունիքին, որը, հետապնդելով քաղաքական շահեր, այն երբեմն հանձնում էր Սյունյաց, իսկ երբեմն էլ՝ Արծրունյաց իշխաններին: IX դ. սկսած հիշատակվում է որպես քաղաք[9]:

Վաղարշապատ: Դատելով Անանուն Զրուցագրի մի տեղեկությունից՝ Վաղարշապատը մտնում էր Բագրատունիների տիրույթների մեջ: Ըստ պատմիչի՝ այդ քաղաքը գրավվել էր Սմբատ Ա-ի կողմից Դվինի հետ միասին[10]: Գտնվում էր Դվինից դեպի հյուսիս ընթացող առևտրական ճանապարհի վրա: Վերջինիս ակտիվացումից հետո բարգավաճեց նաև քաղաքը: Սմբատ Ա-ի թագավորության վերջին տարիների դեպքերի հետ կապված Վաղարշապատը հիշատակվում է որպես քաղաք[11]:

Վաղարշակերտ (Ալաշկերտ): Բագրևանդ գավառում գտնվող այս քաղաքը Հայաստանի հնագույն բնակավայրերից էր և հիմնադրվել է

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 130:
[2] Անդ, էջ 186, 200, 210, 220 և այլն:
[3] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Պատմական Հայաստանի քաղաքները, էջ 118:
[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 186, 200, 211:
[5] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 74:
[6] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 24:
[7] Անդ, էջ 7, 11, 24:
[8] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 304:
[9] Անդ, էջ 372, 382-384, **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 212 և այլն:
[10] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 159:
[11] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 464:

II դ. վերջին՝ Վաղարշ թագավորի կողմից: Մինչև 439 թ. պատկանում էր կաթողիկոսներին, իսկ Սահակ Պարթևի մահից հետո, նրանց պատկանող մյուս տիրույթների հետ միասին, Վաղարշակերտն անցավ Մամիկոնյաններին: IX դ. սկսած մտնում էր Բագրատունիների տիրույթների մեջ: VII դ., երբ Ներսես Տայեցի Շինող կաթողիկոսն այստեղ կառուցեց Սբ. Աստվածածին եկեղեցին՝ այն դարձավ Բագրևանդի ու Արշարունիքի եպիսկոպոսանիստը[1]:

Խնդրո առարկա շրջանում հատկապես հիշատակվում է քաղաքի բերդը: Թագավոր դառնալուց հետո այն գրավելու փորձ կատարեց Գագիկ Արծրունին, սակայն երկարատև պաշարումը որևէ արդյունք չտվեց[2]: Այն հետագայում գրավվեց Ատրպատականի ամիրա Յուսուֆի կողմից[3]:

Վաղարշավան: Գտնվում էր Բասեն գավառում՝ Երասխի և նրա ձախակողմյան վտակ Մուրցի միախառնման վայրի մերձակայքում[4]: Հավանական է համարվում սկզբնաղբյուրներում հիշատակվող «մեծ աւան Բասենոյն»-ի և Վաղարշավանի նույնությունը[5]: Վաղարշավանը հատկապես աճում է Հայ Բագրատունիների թագավորության շրջանում: Այն գտնվում էր Դվինից Տրապիզոն ընթացող մայրուղու վրա և հիշատակվում որպես «մեծ դաստակերտ»[6]:

Բերկրի: Գտնվում էր Բզնունյաց ծովի հյուսիսարևելյան ծայրին: Այնտեղ հաստատվել էր արաբական ութմանիկ ցեղը, որն իրեն էր ենթարկել նաև Բերկրու շրջակայքը: Ութմանիկները ենթարկվում էին Աշոտ Ա-ին և Սմբատ Ա-ին: Ամյուկի ամիրայությունը 907 թ. վերացվեց Գագիկ Արծրունու կողմից, որից հետո նրանց տիրույթների հարավային մասն անցավ Արծրունիներին, իսկ Բերկրին՝ շրջակայքով՝ կցվեց արքունի տիրույթներին: Այն VIII դ. դեռևս բերդ էր, իսկ IX դ. հանդես է գալիս որպես քաղաք[7]: X դ. պարսիկ անանուն հեղինակը Բերկրին հիշատակում է որպես փոքր քաղաք, որը մարդաշատ էր ու հարուստ և որտեղ բազմաթիվ վաճառականներ կային[8]:

---

[1] Տե՛ս **Ս. Հայկունի**, Բագրևանդ: Զրաբաշխ գավառ, մասն Ա, Վաղարշապատ, 1894, էջ 16, 52: **Թ. Հակոբյան**, Պատմական Հայաստանի քաղաքները, էջ 27-29:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 232:

[3] Տե՛ս **Ասողիկ**, էջ 165:

[4] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 46:

[5] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Պատմական Հայաստանի քաղաքները, էջ 230-231:

[6] Անդ:

[7] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 306:

[8] Տե՛ս **Hudud al-Alam**, էջ 143: Տե՛ս նաև Հ. Փափազյան, Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսա-

Արճեշ: Գտնվում էր Բզնունյաց ծովի հյուսիսարևելյան ափին: Արճեշում հաստատվել էին արաբական կայսիկ ցեղի ներկայացուցիչները: Անանուն Զրուցագիրը տեղեկացնում է, որ Սմբատ Ա-ն իրեն էր ենթարկել Արճեշի արաբներին և քաղաքը հանձնել Դարբանդից իր մոտ եկած մի արաբի: Ըստ պատմիչի՝ այդ շրջանում Արճեշն արդեն հանդես էր գալիս որպես քաղաք[1]: Այդ իրողությունը մեծապես կապված էր Արճեշի՝ Հերից Ամիդ ընթացող մայրուղու վրա գտնվելով: X դ. այն հիշատակվում է որպես փոքրիկ, սակայն վաճառաշահ քաղաք[2]:

Արծկե: Գտնվում էր Բզնունյաց ծովի հյուսիսային ափին՝ Հերից Ամիդ ընթացող առևտրական մայրուղու Արճեշ-Խլաթ գծամասում: Արծկեում արաբական տիրապետության շրջանում հաստատվել էին արաբ կայսիկների գաղութը: Քաղաքը IX դ. 90-ական թթ. սկզբին իրեն էր ենթարկել Սմբատ Ա-ն:

Խլաթ: Գտնվում էր Բզնունյաց ծովի հյուսիսարևմտյան ափին: Այն որպես քաղաք հիշատակվում է VIII դ. վերջին[3]: Որպես քաղաք հիշատակվում է նաև Թովմա Արծրունու կողմից[4]: Ինչպես տեսանք, այն գրավվել էր Սմբատ Ա-ի կողմից և կցվել նրա տիրույթներին: X դ. այն վաճառաշահ քաղաք էր[5]: Յակուտը հաղորդում է, որ այն ամուր պարիսպներով շրջապատված մեծ քաղաք էր: Այնտեղ ամեն տեսակ բարիքներ կային, աճում էին տարբեր մրգեր[6]: Ալ-Մուկադդասին հիշատակում է Խլաթի գեղեցիկ ու փարթամ այգիները: Ըստ պատմիչի՝ քաղաքը բացի պարսպից, ուներ նաև հողե ամրություններ[7]: Ըստ «Մղոնաչափք»-ի՝ Խլաթով էր անցնում Դվին-Դամասկոս-Երուսաղեմ առևտրական ճանապարհը[8]: Հայտնի էր նաև համանուն բերդը[9]:

Արտահան: Ըստ վրացական աղբյուրի՝ կառուցվել է Հայկի եղբայր Քարթլոսի որդի Զավախոսի կողմից և նախապես կոչվել Քաջաց

կան հարաբերությունների մասին (10-րդ դար),-ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1953, թիվ 5, էջ 78:

[1] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 161:

[2] Տե՛ս **Hudud al-Alam**, էջ 143:

[3] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 145-146:

[4] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 200, 248:

[5] Տե՛ս **Hudud al-Alam**, էջ 143:

[6] Տե՛ս **Jacut**, II, էջ 457-458:

[7] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 377:

[8] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, էջ 381: Տե՛ս նաև **Գ. Պետրոսյան**, «Մղոնաչափք» և «Աստղաբաշխական երկրաչափութիւն» աշխատությունների հարցի շուրջը,-«ՊԲՀ», 1972, թիվ 4, էջ 200:

[9] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 161, 175:

քաղաք[1]: Խնդրո առարկա շրջանում հայկական աղբյուրներում հիշատակվում է միայն համանուն գավառը:

Դմանիս: Որպես քաղաք սկսել է ձևավորվել IX դ. վերջին՝ Դվինից Տփղիս ընթացող առևտրական ճանապարհի վրա: Խնդրո առարկա շրջանում, ինչպես տեսանք, մտնում էր Հայ Բագրատունիների արքունի տիրույթների մեջ: Վրացական աղբյուրում հիշատակվում է որպես «դղեակ Հայոց»[2]:

Երևան: Հովհաննես Դրասխանակերտցին Հայոց և Վրաց իշխան Գրիգոր Մամիկոնյանի իշխանության շրջանին (662-685) վերաբերող մի հիշատակության մեջ Հայաստանի հնագույն բնակավայրերից Երևանը հիշատակում է որպես քաղաքագյուղ[3]: Սևանի Սբ. Առաքելոց վանքի գմբեթի վրա Լ. Մելիքսեթ-Բեկը հայտնաբերել է 874 թ. մի արձանագրություն, որտեղ հիշատակված է Երևանը[4]: Երևանը հիշատակված է նաև Ստեփաննոս Օրբելյանի երկում՝ ինչպես Սբ. Առաքելոց վանքի կառուցման ժամանակ, այնպես էլ նորակառույց Մաքենացվոց Սբ. Աստվածածին եկեղեցուն կատարված նվիրատվությունների ժամանակ (901 թ.): Մասնավորապես, եկեղեցուն նվիրաբերվել էին ագարակներ ու այգիներ Գառնիում և Երևանում[5]: Ինչպես դիպուկ նկատել է Թ. Հակոբյանը, Երևանը հիշատակված է ոչ թե գյուղերի շարքում, այլ քաղաքագյուղեր Գառնիի և Եղեգիսի հետ, որը ցույց է տալիս, որ այն խնդրո առարկա շրջանում եղել է քաղաքագյուղ[6]:

Անի: Որպես ամրոց հիշատակվում է դեռևս V դ.[7], իսկ որպես քաղաք սկսել է ձևավորվել, թերևս, IX դ. վերջին ու, հատկապես, X դ.[8]: Այն Շիրակ գավառի հետ միասին ձեռք էր բերվել Աշոտ Մսակերի կողմից և վերածվել Բագրատունիների տիրույթի: Սմբատ Ա-ի օրոք այն հաճախ հիշատկվում է որպես բերդ[9]: Ամենայն հավանականությամբ, խնդրո առարկա շրջանում, կապված առևտրի զարգացման հետ, Անիի բերդի

---

[1] Տե՛ս «Ջուանշէրի պատմչի համառօտ պատմութիւն Վրաց», Վենետիկ, 1884, էջ 11, 23:

[2] Անդ, էջ 121:

[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 94:

[4] Տե՛ս Меликсет-Беков Л., Новооткрытая надпись на Севане от 874 г.,-"Памяти академика Н. Я. Марра (1864-1934)", М. Л., 1938, էջ 409-415, **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Երևանի հիշատակությունը Սևանի 874 թ. արձանագրության մեջ,- ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1940, թիվ 4-5, էջ 117-118:

[5] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 173-174, 179-181:

[6] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Երևանը VII-IX դարերում,-«ՊԲՀ», 1968, թիվ 3, էջ 22:

[7] Տե՛ս **Ղազար Փարպեցի**, էջ 292:

[8] Տե՛ս **Բ. Առաքելյան**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հ. I, էջ 75:

[9] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 190, 204, 210:

շուրջը սկսել էր քաղաքի ձևավորումը: Ստեփաննոս Օրբելյանը, կապված X դ. սկզբին կառուցված Մաքենացվոց Սբ. Աստվածածին եկեղեցու նավակատիքի հետ, հաղորդում է, որ նրան նվիրաբերվել էին 5 կրպակ Անիում[1]: Այն X դ. կեսերին այնքան աճեց, որ շուտով՝ 961 թ., դարձավ Հայ Բագրատունիների թագավորության մայրաքաղաք[2]:

Կարս: Սկզբնապես հայտնի էր որպես ամրոց՝ հանդիսանալով Վանանդի իշխանության կենտրոնը: Այն Աշոտ Ա-ի եղբայր Աբասի տիրույթն էր[3]: Աբասից սկսած մինչև համանուն թագավորության հիմնումը, Կարսը եղել է Հայոց սպարապետների նստավայրը[4]: Դվին-Տրապիզոն ճանապարհի աշխուժացումից հետո քաղաքն աստիճանաբար աճեց և շուտով վերածվեց Բագրատունյաց թագավորության կարևոր առևտրական կենտրոնի: Այն որոշ ժամանակով (928-961) հանդիսանում էր Բագրատունյաց մայրաքաղաք[5]:

Արդեն Սմբատ Ա-ի գահակալության սկզբում, դատելով Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններից, Կարսը սկսել էր ձևավորվել որպես քաղաք: Պատմելով այն մասին, թե ինչպես է Աշոտ Ա-ի եղբայր Աբասը փորձ կատարում չենթարկվել Սմբատ Ա-ին, պատմիչը հաղորդում է, որ «այնուհետև Սմբատայ զօր մեծ գումարտակ արարեալ՝ ասպատակ սփռէր ի վերայ աշխարհակոյտ շինիցն Աբասայ շուրջ զամրոցաւն»[6]: Անկասկած, խոսքը միջնաբերդի շուրջ տարածվող արվարձանների մասին է: Կարսի բերդի շուրջը քաղաքի ձևավորումը մեծապես կապված էր այն իրողության հետ, որ այն սկսել էր կարևոր դեր խաղալ տարանցիկ առևտրի մեջ՝ առևտրական ճանապարհներով կապված լինելով Անիի, Արծնի, Արտանուջի և Տփղիսի հետ: Սմբատ Ա-ի օրոք, ինչպես հաղորդում է Հովհաննես Դրասխանակերտցին, Կարսի միջնաբերդում էր պահվում արքունի գանձերի մի մասը[7]:

Արծն: Գտնվում էր Կարնո քաղաքից ոչ հեռու: Ըստ XI դ. բյուզանդական պատմիչ Հովհաննես Սկիլիցեսի՝ Արծնը մեծ քաղաք էր, որն առևտրի համար ուներ հարմար դիրք: Այնտեղ առևտուր էին անում Հնդկաստանից, Պարսկաստանից և այլ երկրներից բերված ապրանք-

---

[1] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 179-180:
[2] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Զ, էջ 153:
[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 146-148:
[4] Տե՛ս **Հ. Еремян**, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, էջ 5:
[5] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10:
[6] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 148:
[7] Անդ, էջ 182:

ներով[1]: Ինչպես ճիշտ կերպով նշում է Բ. Առաքելյանը, չնայած Արծնը մինչև XI դ. չի հիշատակվում, այդ բազմամարդ և վաճառաշահ քաղաքը միանգամից առաջանալ չէր կարող: Այն պետք է գոյանար և ծաղկեր հայ-բյուզանդական առևտրական կապերի վերականգնման շրջանում և հատկապես աճեր X դ. ընթացքում[2]: Այսինքն, հավանական է, որ խնդրո առարկա շրջանում սկսել էր քաղաքի ձևավորման գործընթացը, որը մեծապես կապված էր 893 թ. հայ-բյուզանդական առևտրական պայմանագրի կնքման և Դվին-Տրապիզոն ճանապարհի վերագործարկման հետ:

Արուճ: Սբ. Գրիգոր եկեղեցու շինարարության հետ կապված (VII դ.) հիշատակվում է որպես ավան[3] կամ դաստակերտ[4]: Այդ ժամանակ այն Հայոց և Վրաց իշխան Գրիգոր Մամիկոնյանի (662-685) իշխանանիստն էր[5]: Այնուհետև զարգացում է ապրել և X դ. սկզբին հանդես եկել որպես քաղաքագյուղ[6]:

Մրեն: VII դ. այստեղ կառուցված եկեղեցու մասին պատմելիս Հովհաննես Դրասխանակերտցին Մրենն անվանում է քաղաքագյուղ[7]: Ըստ Բ. Առաքելյանի ճշգրիտ դիտարկման՝ X դ. հեղինակ Հովհաննես Դրասխանակերտցին, Մրենն անվանելով քաղաքագյուղ, ելնում է իր ժամանակի իրողությունից[8]: Ինչպես ցույց են տալիս Մրենի արձանագրությունները՝ այն Բագրատունիներին պատկանող բնակավայր էր՝ շրջապատված ընդարձակ այգիներով[9]:

Տեկոր: IX-X դդ. պատկանում էր Բագրատունիներին: Թեև խնդրո առարկա շրջանում Տեկորի մասին տեղեկություններ գրեթե չեն պահպանվել, սակայն Հայ Բագրատունիների շրջանին վերաբերող մի ձեռագրում հիշատակված է որպես քաղաքագյուղ[10]:

---

[1] Տե՛ս **Հովհաննես Սկիլիցես,** էջ 159-160:

[2] Տե՛ս **Բ. Առաքելյան**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, էջ 111:

[3] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 15:

[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 94:

[5] Տե՛ս **Բ. Առաքելյան**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հ. I, էջ 86:

[6] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 198:

[7] Անդ, էջ 82:

[8] Տե՛ս **Բ. Առաքելյան**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, էջ 84:

[9] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, Ս. Ղազար, 1881, էջ 138-141: Տե՛ս նաև **Բ. Առաքելյան**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, էջ 84:

[10] Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 180

Կողբ: Հայ Բագրատունիների տերության շրջանում հանդես է գալիս որպես քաղաքագյուղ, որը պատկանում էր Սմբատ Ա-ի եղբորորդի Աշոտին, որն այստեղ նաև եկեղեցի է կառուցել[1]: Հովհաննես Դրասխանակերտցու մի հաղորդման մեջ, որը վերաբերում է Աշոտ Բ-ի թագավորության տարիներին, Կողբը հիշատակվում է որպես «մեծ դաստակերտն Կողբ»[2]:

Գառնի: Թեև Գառնին որպես ավան հանդես էր գալիս դեռևս VII դ. առաջին կեսին[3], սակայն աճեց և քաղաքագյուղի վերածվեց Հայ Բագրատունիների տերության շրջանում[4]: Այս բնակավայրը, թերևս, շրջապատված էր ընդարձակ այգիներով ու բազմաթիվ ագարակներով: Այդ է ցույց տալիս այն իրողությունը, որ Գրիգոր Սուփան Բ-ն Մաքենացվոց Սբ. Աստվածածին եկեղեցու նավակատիքի ժամանակ նվիրաբերել է ագարակներ ու այգիներ Գառնիում[5]:

Քասաղ: Հիշատակվում է VII դ. կեսերին՝ կապված Հաբիբ Իբն Մասլամայի 655 թ. արշավանքի հետ[6]: Սակայն, այն շատ ավելի հին բնակավայր է, որի վկայությունը տեղի IV դ. եկեղեցին է[7]:

Քասաղ ավանը գտնվում էր Այրարատի Նիգ գավառում և հանդիսանում Գնթունիների իշխանության կենտրոնը[8]: Նույնական է ներկայիս Ապարանին[9]:

Իշխան: Հայտնի էր նրանով, որ այստեղ էր ծնվել Հայոց կաթողիկոս Ներսես Գ-ն, ինչպես նաև վերջինիս կողմից կառուցված վանքով[10]: Իշխանը Տայքի Մամիկոնյանների իշխանանիստն էր, որի պատճառով էլ ստացել էր իր անվանումը[11]: Սեբեոսն այն որպես գյուղ է հիշատակում[12]: Խնդրո առարկա շրջանում գտնվում էր Հայ Բագրատունիների տիրույթ Տայքի և Կղարջքի կուրապաղատության սահմանին՝ Տայքում,

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 196-198:
[2] Անդ, էջ 294:
[3] Տե՛ս **Սեբեոս**, էջ 84:
[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 112, 338, **Ասողիկ**, էջ 106, 111 և այլն:
[5] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ էջ 173-174, 179-181:
[6] Տե՛ս بلاذري, I, էջ 239:
[7] Այս եկեղեցու կառուցման ոճի և մի շարք այլ խնդիրների մասին տե՛ս **Գ. Գրիգորյան**, Հայկական քառանիստ կոթողների թվագրման խնդիրը և Քասաղի խոյակը,-«ՊԲՀ», 2006, թիվ 3, էջ 236-244: Տե՛ս նաև **Н. Токарский**, Архитектура Армении IV-XIV веков, Ер., 1961, էջ 84-87:
[8] Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 336-337:
[9] Անդ:
[10] Տե՛ս **Георгий Мерчуле**, գլ. XXVI:
[11] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 54:
[12] Տե՛ս **Սեբեոս**, էջ 166:

որի հռչակավոր վանքում հաստատվել էր քաղկեդոնական Սաբան վանականը: Այժմ էլ կոչվում է Իշխան[1]:

Վասպուրականի իշխանություն: XI դ. (1021 թ.), երբ Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունին իր թագավորությունը զիջեց Բյուզանդիային և գաղթեց Սեբաստիա, նա կայսրությանը հանձնեց 8 քաղաք[2]: Սակայն, խնդրո առարկա շրջանում, երբ տեղի էր ունենում քաղաքների ձևավորման գործընթացը, Վասպուրականի իշխանության մեջ քաղաքներից և քաղաքային բնակավայրերից հայտնի էին Վանը, Ոստանը, Հադամակերտը, Արտամետը, ինչպես նաև Հերի ամիրայությունից նվաճված Զարեհավանը:

Վան: Այս հինավուրց քաղաքը Հայ Բագրատունիների տերության շրջանում Վասպուրականի մեծագույն քաղաքն էր: Ինչպես տեսանք, Վասպուրականի Արծրունի իշխանների կողմից հայրական ժառանգությունը բաժանելու ժամանակ Վանը միշտ մնում էր գահերեց իշխանի տիրույթների մեջ: Անանուն Զրուցագիրը՝ ելնելով այն իրողությունից, որ Վանը Վասպուրականի ամենամեծ և կարևոր քաղաքն էր, այն համարում է Արծրունյաց իշխանության մայրաքաղաք[3]:

Ոստան: Ոստանը գտնվում էր Բզնունյաց ծովի հարավային ափին՝ Աղթամար կղզու դիմաց: Հայ Բագրատունիների տերության շրջանում հանդիսանում էր Արծրունիների իշխանության կարևոր կենտրոններից մեկը՝ հանդես գալով որպես ավան կամ քաղաք[4]: Իբն Հաուկալն այն հիշատակում է որպես Վասպուրականի երկու մեծագույն քաղաքներից մեկը՝ Վանի հետ միասին[5]:

Հադամակերտ: Այս ավանն Արծրունիների ոստանն էր[6], որը խնդրո առարկա շրջանում, երբ Վասպուրականի իշխանության կենտրոնը Վան քաղաքն էր, իր նշանակությունը չէր կորցրել: Այստեղ էր գտնվում Արծրունիների տոհմական հանգստարանը: Ըստ Թովմա Արծրունու՝ Հայ Բագրատունիների տերության կազմավորման և ամրապնդման շրջանում այստեղ, մասնավորապես, թաղվել էին Վասպուրականի Աշոտ Արծրունի իշխանը 874 թ. և Դերենիկի որդի Աշոտ իշխանը՝ 905 թ.[7]: Թովմա Արծրունին IX դ. երկրորդ կեսին և դրանից հետո Հադամա-

---

[1] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 54:
[2] Տե՛ս Սամվել Անեցի, էջ 104:
[3] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 169, 175, 177 և այլն:
[4] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 427, 450-452 և այլն:
[5] **Ibn Haukal**, էջ 348:
[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 184, 396 և այլն:
[7] Անդ, էջ 338:

կերտը հիշատակում է որպես քաղաք[1]: Հայտնի էր նաև Հադամակերտի բերդը[2]:

Արտամետ: Հիշատակվում է իբրև ավան, գյուղաքաղաք, քաղաք: Բուղայի արշավանքի նկարագրության մեջ այն որպես ավան է հիշատակում Թովմա Արծրունին[3]: Գտնվում էր Բզնունյաց ծովի հարավարևելյան ափին, այժմյան համանուն գյուղի տեղում: Արտամետը մտնում էր Վասպուրական աշխարհի Տոսպ գավառի մեջ, մինչև VIII դ. վերջերը պատկանում էր Ռշտունիներին, իսկ դրանից հետո՝ անցնում Արծրունիներին: Այն զարգացում է ապրում Արծրունիների թագավորության օրոք՝ X-XI դդ.՝ բնակավայրից վերածվելով քաղաքի[4]:

Զարեհավան: Գտնվում էր Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհում: Մտնում էր Արծրունիների տիրույթների մեջ: 905 թ. բաժանումով, ինչպես տեսանք, Զարեհավանը մաս կազմեց Գուրգեն Արծրունու տիրույթների: Հայտնի էր քաղաքի միջնաբերդը, որը ժամանակին գրավել էր Վասպուրականի Դերենիկ իշխանը Հերի ամիրայությունից: Նրա օրոք էլ Զարեհավանի բերդը վերածվել էր Հերի ամիրայության դեմ Վասպուրականի իշխանության կարևոր ամրության:

Մոկաց իշխանություն.

Մոկս: Այս բերդավանը Մոկաց իշխանության կենտրոնն էր: Ինչպես տեսանք, այն բանից հետո, երբ Մոկաց իշխանության հյուսիսային և հարավային գավառները միացվեցին Գագիկ Արծրունու տիրույթներին, իշխանության տարածքը սահմանափակվեց Մոկսի շրջակա լեռնաշխարհով: Վերջինս անմատույց լեռնային երկրամաս էր, որտեղ գրեթե չկային բանուկ առևտրական ճանապարհներ, որի հետևանքով մեծ քաղաքներ գրեթե չկային:

Հայոց Արևելից կողմերի իշխանություններ.

Պարտավ: Ալ-Մուկադդասին Պարտավը մեծության, գեղեցկության և հարստության պատճառով անվանում է «Հայաստանի Բաղդադ»[5]: Իսկ ալ-Իսթախրին Պարտավի մասին հաղորդում է, որ Իրաքում և Խորասանում Ռեյից և Սպահանից հետո չկա ավելի նշանակալից քաղաք, ավելի ծաղկուն և ավելի գեղեցիկ, քան Պարտավն է[6]: Արաբ հեղինակները հաղորդում են, որ Պարտավում արտադրվող մետաքսե հագուստ-

---

[1] Անդ, էջ 320, 396 և այլն:
[2] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 155:
[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 206:
[4] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Պատմական Հայաստանի քաղաքները, էջ 74-75:
[5] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 375:
[6] **Al-Istakhri**, էջ 182:

ներն ու գործվածքներն արտահանվում էին Պարսկաստան և Խուզիստան[1]: Ալ-Իսթախրին Պարտավի շուկայի մասին պատմում է, որ այն քառանկյուն տեսք ուներ, և նրա կողմերից յուրաքանչյուրի երկարությունը մեկ փարսախ էր (մոտ 6կմ): Ամեն կիրակի այնտեղ ժողովուրդ էր հավաքվում, գալիս էին վաճառականներ տարբեր երկրներից, նույնիսկ Իրաքից: Շուկան գտնվում էր Պարտավի արվարձանում և կոչվում էր «ալ-Քուրաքքի»՝ շաբաթվա օրվա (կիրակի) անունից[2]:

Պարտավն առևտրական ճանապարհներով կապված էր Դվինի, Տփղիսի, Դարբանդի, ինչպես նաև Խալիֆայության տարբեր երկրամասերի հետ:

Գանձակ: Ինչպես տեսանք, ըստ Մովսես Դասխուրանցու՝ կառուցվել է 846 թ., իսկ ըստ «Շիրվանի և ալ-Բաբի պատմության»՝ 859 թ.: Ըստ Ն. Ադոնցի՝ այդ ժամանակ քաղաքը ոչ թե կառուցվել, այլ վերակառուցվել է[3]: Յակուտը տեղեկացնում է, որ Գանձակն Առանի ամենամեծ քաղաքն էր[4]: Զարգանում էր Պարտավ-Տփղիս ճանապարհի վրա:

Շամքոր: Բալազուրին և Իբն ալ-Ֆակիհը հաղորդում են, որ Շամքորը հին քաղաք էր, որը նվաճել էր Սալման իբն Ռաբիան: Այն բնակեցված ու ծաղկուն վիճակում էր, երբ Սավուրդացիները (անկասկած, Սևորդիներ) ավերեցին այն: Ըստ արաբ հեղինակների՝ հետագայում այն վերակառուցվեց Բուղայի կողմից, որն այնտեղ բնակեցրեց մահմեդականություն ընդունել ցանկացող խազարների, ինչպես նաև Պարտավի վաճառականների մի մասին[5]: Քաղաքը գտնվում էր Պարտավ-Տփղիս ճանապարհի վրա:

Բայլական: Բայլական քաղաքը զարգանում էր Արտավետից (Արդաբիլ) Վարդանակերտով Պարտավ ընթացող առևտրական ճանապարհի վրա: Այն, ինչպես տեսանք, պատկանում էր Եսայի Աբու Մուսե իշխանին՝ մաս կազմելով Քթիշի կամ Գոռոզի իշխանության:

Հաթերք: Արաբական աղբյուրներում հիշատակվում է Մատրիս ձևով: Հ. Մանանդյանը Մատրիս անվան առաջացումը բացատրում է արաբերեն տառերի շփոթությամբ: Իրականում պետք է կարդալ Հաթրիս (իմա՛ Հաթերից)[6]: Վերջինիս մասին Յակուտ ալ-Համավին հաղորդում է, որ այն փոքր քաղաք էր Առանում (իմա՛ Հայոց Արևելից կողմեր)[7]:

---

[1] Անդ, էջ 183-184, **al-Moqaddasi**, էջ 380:
[2] Տե՛ս **al-Istakhri**, էջ 183-184:
[3] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 445:
[4] Տե՛ս **Jacut**, II, էջ 132:
[5] Տե՛ս بلاذري, I, էջ 240, **Ibn al-Fakih**, էջ 293:
[6] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 199:
[7] Տե՛ս **Jacut**, IV, էջ 412:

Գտնվում էր Դվին-Պարտավ ճանապարհի հարևանությամբ:

Սյունյաց իշխանություններ: Սյունիքում, որը գերազանցապես լեռնային երկրամաս էր, մեծ քաղաքներ գրեթե չկային: Այդ իսկ պատճառով, սկզբնաղբյուրները, անդրադառնալով Սյունյաց թագավորության վանքերին, բերդերին ու բնակավայրերին, վերջիններիցս հիշատակում են միայն գյուղերը[1]: Սակայն, Սյունիքում ձևավորվել էին ոչ մեծ քաղաքներ և քաղաքագյուղեր, որոնցից հայտնի էին Կապանը, Կոթը, Եղեգիսը և Սիսականը:

Կապան: Որպես քաղաք հանդես է եկել X դ. առաջին կեսին[2]: Ամենայն հավանականությամբ, մինչ այդ եղել է բերդ: Խնդրո առարկա շրջանում, դատելով Ստեփաննոս Օրբելյանի մի հաղորդումից, արդեն ընթացքի մեջ էր քաղաքի ձևավորման գործընթացը: Պատմիչը սկզբում ներկայացնում է, որ Ջագիկ իշխանը IX դ. վերջին տիրում էր Կապան քաղաքին, իսկ այնուհետև՝ նկարագրելով 911 թ. Վահանա վանքին նվիրաբերված կալվածքների սահմանները, պատմիչն ի մասնավորի նշում է, որ դրանք հասնում էին մինչև քաղաքի (իմա՛ Կապան քաղաք) պարիսպները[3]:

Գտնվում էր Սյունիքի Ջորք գավառում:

Կոթ: Գեղարքունյաց իշխանների կենտրոնն էր[4]: Խնդրո առարկա շրջանում հիշատակվում է որպես քաղաքագյուղ[5]: Գտնվում էր Պարտավ-Դվին ճանապարհի վրա:

Եղեգիս: Եղել է Սյունյաց իշխանների նստավայրը[6]: X դ. սկզբին ավերվել է Ատրպատականի ամիրա Յուսուֆի զորքերի կողմից: Ստեփաննոս Օրբելյանը հաղորդում է, որ երբ, Յուսուֆի 909 թ. արշավանքից հետո, Սյունյաց իշխանները վերադառնում էին իրենց նստավայրը, այն գտան ավերված ու թալանված[7]: Ըստ պատմիչի՝ շատ չանցած վերականգնվել է[8]:

Սիսական (Սիսաջան): Իբն Հաուկալը Սիսականի (Սիսաջան) մասին հաղորդում է, թե այն հաճելի, միջին մեծության քաղաք է[9]: Իսկ Յա-

---

[1] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 334, **Վարդան վարդապետ**, էջ 140-141: Տե՛ս նաև **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը, էջ 72-74:

[2] Տե՛ս **Բ. Առաքելյան**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հ. I, էջ 90, **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը, էջ 121-123:

[3] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 239:

[4] Անդ, էջ 176-177:

[5] Անդ, էջ 177, 180: Տե՛ս նաև **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 215:

[6] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 146:

[7] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 193:

[8] Անդ, էջ 199:

[9] **Ibn Haukal**, էջ 350:

կուտ ալ-Համավին հաղորդում է, որ Սիսաջանը քաղաք էր Դվինից 16 փարսախ հեռավորության վրա, որը գրավեց Հաբիբ իբն Մասլաման Հայաստանի նվաճման ժամանակ[1]: Գտնվում էր Նախճավանից Դվին և Դվինից Պարտավ ընթացող ճանապարհների հատման վայրի մերձակայքում:

Տարոնի իշխանություն.

Մուշ: Մուշը Բագրատունիների հզորացման և տարածման շրջանում հանդիսանում էր Տարոնի Բագրատունիների նստավայրը: Հետագայում, երբ ստեղծվեց Հայ Բագրատունիների տերությունը, քաղաքը հանդիսանում էր Տարոնի իշխանության կենտրոնը:

Թովմա Արծրունին այն հիշատակում է որպես քաղաք արդեն Բագարատ Բագրատունու օրոք: Պատմիչն այն կոչում է նաև Տարոնի քաղաք[2]:

Արշամաշատ (Շիմշաթ): IX դ. կեսերին պատկանում էր Հայոց իշխան Բագարատ Բագրատունուն: Ինչպես տեսանք, գտնվելով արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների շրջանի հարևանությամբ, կարևոր դեր ուներ թե՛ Տարոնի իշխանության և թե՛ արաբների համար: Հայտնի էր համանուն բերդը: Գտնվում էր Արածանի գետի ափին՝ Անձիտի մոտակայքում՝ ներկայիս Շիամուշ գյուղի հարևանությամբ[3]:

Արաբական ամիրայություններ.

Կարնո քաղաք: Կարնո քաղաքը, կապված Դվինից Բյուզանդական կայսրություն ընթացող առևտրական ճանապարհի փակվելու հետ, մեծապես կորցրել էր իր նախկին առևտրական նշանակությունը և վերածվել սահմանային կարևոր ամրոցի: Հայ-բյուզանդական առևտրական պայմանագրի կնքումից հետո, թեև դեպի Տրապիզոն ընթացող խոշոր առևտրական մայրուղին այն շրջանցում էր, սակայն, գտնվելով դրա հարևանությամբ, քաղաքը որոշ առաջընթաց ունեցավ: Հայտնի է, որ Կարնո քաղաքում պատրաստվող գորգերը արտահանվում էին տարբեր երկրներ և մեծ համբավ ու պահանջարկ ունեին[4]:

Մանազկերտ: Չնայած IX դ. Մանազկերտը Թովմա Արծրունու կողմից ներկայացվում է որպես քաղաք[5], Մշո Սուրբ Աղբերիկ վանքի կոնդակում Մանազկերտը 908 թ. դրությամբ հիշատակվում է որպես գյու-

---

[1] Տե՛ս **Jacut**, III, էջ 216:
[2] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 188:
[3] Տե՛ս **Մ. Յովհաննէսեան,** Հայաստանի բերդերը, Վենետիկ-Ս. Ղազար, 1970, էջ 81:
[4] Տե՛ս **Jacut**, IV, էջ 20:
[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 348:

ղաքաղաք[1]: Ըստ Յակուտի՝ Մանազկերտը հռչակավոր քաղաք էր[2]: Ալ-Մուկադդասին հաղորդում է, որ այն ամրությունների հզոր համակարգ ունեցող քաղաք էր, որը հարուստ էր պտղատու այգիներով[3]: Դեռևս արաբական տիրապետության շրջանում այնտեղ հաստատվել էր արաբական կայսիկ ցեղի գաղութը, որն այնուհետև տիրել էր նաև Ապահունիք գավառի զգալի մասին: Նրանք երբեմն հանդես էին գալիս Հայոց տերության դեմ, սակայն Հայոց թագավորը կարողանում էր վերջիններիս կրկին իրեն ենթարկել:

Բաղեշ: Արաբական տիրապետության թուլացման և տապալման շրջանում Բաղեշ քաղաքը զարգացում ապրեց: Յակուտը հաղորդում է, որ Բաղեշը հարուստ էր մրգառատ այգիներով: Արաբ աշխարհագետը հիացմունքով է խոսում հատկապես Բաղեշի խնձորի մասին, որը շատ առատ էր ու էժան և արտահանվում էր շատ երկրներ[4]: Բաղեշով էր անցնում նաև Արքունի պողոտան[5]:

Արզն: Հերից եկող առևտրական մեծ ճանապարհը, ամենայն հավանականությամբ, Մայաֆարիկին էր ընթանում Արզնով: Յակուտն հաղորդում է, որ այն մեծ քաղաք էր ու ամուր բերդ ուներ[6]:

Հեր: Չնայած Հերում հաստատվել էր արաբական ամիրայություն, Աշոտ Ա-ն իր իշխանությանն էր ենթարկել այն[7]: Ըստ Յակուտի՝ Հերը բարեբեր և մրգառատ այգիներով հարուստ քաղաք էր, ուր արտադրվում էին կերպասներ ու արտահանվում տարբեր երկրներ[8]: Խնդրո առարկա շրջանում հայկական սկզբնաղբյուրներում ամենուր հիշատակվում է որպես քաղաք:

Սալամաս: Գագիկ Արծրունու իշխանության շրջանում Սալամասը մաս էր կազմում Արծրունիների իշխանության[9]: Ալ-Մուկադդասին այն հիշատակում է որպես գեղեցիկ քաղաք, որն ուներ քարե պարիսպ և հողե ամրությունների համակարգ[10]:

Մարանդ: Ալ-Մուկադդասին, որը X դ. պատմիչ է և քաջածանոթ Հայոց թագավորության ընդգրկած տարածքներին, Մարանդը հիշատա-

---

[1] Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 182-183:
[2] Տե՛ս **Jacut**, IV, էջ 648:
[3] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 376:
[4] Տե՛ս **Jacut**, I, էջ 526:
[5] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 188-195:
[6] Տե՛ս **Jacut**, I, էջ 205-206:
[7] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10:
[8] Տե՛ս **Jacut**, II, էջ 502:
[9] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 436:
[10] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 377:

կում է Հայաստանի քաղաքների թվում[1]: Անանուն Զրուցագիրը հաղորդում է, որ Մարանդի ամիրայությունը՝ համանուն քաղաքով, Դերենիկ իշխանի օրոք միացվել էր Հերի ամիրայությանը[2]:

Արևելից մեծ իշխանության քաղաքները և քաղաքային բնակավայրերը.

Շաքե: Շաքեն Հայ Բագրատունիների տերության նշանավոր առևտրական կենտրոններից մեկն էր և Արևելից մեծ իշխանության կենտրոնը: Այնտեղ, ըստ Յակուտի՝ մշակվում ու Խալիֆայության տարբեր երկրամասեր էին արտահանվում կաշի և կաշվից պատրաստված տարբեր իրեր[3]: Գտնվում էր Հեր-Դվին-Տփղիս-Դարբանդ ճանապարհի վրա:

Կապաղակ (Կաբալա): Համապատասխանում է հին Աղվանից թագավորության Կապաղակ մայրաքաղաքին և նույնական է ներկայիս Կաբալա գյուղին (Չուխուր Կաբալա), որը գտնվում է Նիժ (Նիջ) գյուղի մոտակայքում[4]: Հայ Բագրատունիների տերության շրջանում այն Աղվանից թագավորության կարևոր քաղաքներից մեկն էր:

Խոռնաբուջ: Վրացական աղբյուրների տեղեկությունների համաձայն՝ Կամբեճանի գլխավոր քաղաքներից մեկն էր և կոչվում էր Կամբեճանի քաղաք[5]: Ըստ վրացական ավանդության՝ հանդիսանում էր Վախթանգ Գորգասալի կողմից նշանակված եպիսկոպոսներից մեկի նստավայրը[6]: Ըստ Վախուշտ Բագրատիոնի՝ երբ Ատրներսեհ Բագրատունու եղբորորդիները նվաճեցին Հերեթը, նրանք այնտեղ իշխաններ նշանակեցին, որոնցից էին Վեժինի (Լժակ) և Խոռնաբուջի իշխանները[7]: Գտնվում էր Ալազան գետի միջին հոսանքի աջ կողմում:

Տկետբա: Ըստ Վախուշտ Բագրատիոնի՝ այն սահմանային քաղաք էր Հերեթի և Կախեթի միջև: Գտնվում էր Թելավ քաղաքի մոտակայքում՝ մաս կազմելով Աղվանից թագավորության[8]:

Գըվգավ: Հիշատակված է «Աշխարհացոյց»-ում. «վայրքն անապատ մինչև ցԿուր գետ, յորոյ յելից կողմանէ Գըւգաւ քաղաք, առ Աղուան գե-

---

[1] Անդ, էջ 51, 373:

[2] Տե՛ս **Անանուն Զրուցագիր**, էջ 159:

[3] Տե՛ս **Jacut**, III, էջ 310:

[4] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 58:

[5] Տե՛ս **Сумбат Давитис-дзе,** էջ 27, **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 126, **Джуаншер Джуаншериани**, Жизнь Вахтанга Горгасала, перевод, введение и примечания Г. Цулая, Тб., 1986, էջ 198-199:

[6] Տե՛ս **Джуаншер Джуаншериани**, էջ 198-199:

[7] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 125-126:

[8] Անդ, էջ 125: Տե՛ս նաև **Ì. Ëîðäêèïàíèäçå**, նշվ. աշխ., էջ 273:

տով»[1]: Ըստ Ս. Երեմյանի՝ գտնվում էր Ալազան գետի գետաբերանի մոտ[2]:

Գիշ: Ներկայումս էլ գոյություն ունի և կոչվում է Քիշ: Գտնվում է Շաքե քաղաքից հյուսիս՝ Կովկասյան լեռների լանջին: Այստեղ էր գտնվում համանուն նշանավոր վանքը:

Գավազ (Գավազն): Հիշատակվում է վրացական աղբյուրներում որպես ավան[3]: Գավազը նույնական է ներկայիս Ախալսոպել բնակավայրին Ալազան գետի ձախ ափին՝ Ղվարել գյուղից հարավ-արևելք[4]: Հայ Բագրատունիների տերության շրջանում մտնում էր Աղվանից թագավորության մեջ՝ գտնվելով Ծանարաց քորեպիսկոպոսության սահմանին: 915 թ. Ծանարացի Կվիրիկե քորեպիսկոպոսը և Աբխազաց թագավոր Կոստանդինը ներխուժեցին Աղվանից թագավորություն Թելավի կողմից: Նրանք պաշարեցին Ալազան գետի վերին հոսանքում գտնվող Վեժին (Վժան) բերդը: Այնուհետև այստեղ եկավ Աղվանից թագավոր Ատրներսեհը և նրանց հետ հաշտություն կնքեց՝ Կվիրիկեին զիջելով Օրչոբ բերդը, իսկ Կոստանդինին՝ Գավազ ավանը[5]:

Խորանթա (Հերեթ): Ըստ Վախուշտ Բագրատիոնի՝ կառուցվել է առասպելական էրոսի կողմից՝ երկու Ալազան գետերի (իմա՛ Իոր և Ալազան գետերը) ջրկիցի մոտակայքում: Սկզբնապես կոչվել է Հերեթ, իսկ հետագայում վերանվանվել Խորանթա: Դատելով պատմիչի տեղեկություններից՝ պետք է գտնվեր Ալազան և Իոր գետերի միջև՝ ջրկիցի մոտակայքում[6]: Նրա մոտակայքում՝ Ալազան գետի մյուս ափին, գտնվում էր Գըվգավ քաղաքը:

Արեշ (Արիշ): Այս ավանը մտնում էր Աղվանից թագավորության կազմի մեջ՝ գտնվելով վերջինիս արևմտյան մասում: 915 թ. Աղվանից թագավոր Ատրներսեհն այն Գավազի հետ միասին զիջեց Աբխազաց Կոստանդին թագավորին[7]:

Գաղգաղ: Այս ավանը գտնվում էր Աղվանից թագավորության արևմտյան ծայրին՝ Թելավ քաղաքի մոտակայքում[8]: Նույնական է ներկայիս Գուլգուլա գյուղին:

Վիրքի քաղաքները: Խնդրո առարկա շրջանում Վիրքում քաղաք-

---

[1] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 29:
[2] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 47:
[3] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 29-30, **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 126:
[4] Տե՛ս **Գ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 79, ծ. 103:
[5] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 127, "Матиане Картлиса", էջ 33:
[6] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 125:
[7] Անդ, էջ 127, "Матиане Картлиса", էջ 33:
[8] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 125-126:

ներ կամ նշանակալից բնակավայրեր գրեթե չեն հիշատակվում: Առավել հաճախ հիշատակվում են Տփղիս և Ռուսթավ քաղաքները, իսկ Վիրքի հնագույն մայրաքաղաք Մծխեթան, ինչպես վկայում է վրաց պատմիչը, պարսկական տիրապետության շրջանից սկսած, հետընթաց էր ապրում[1]:

Տփղիս: Արաբ հեղինակներն Տփղիսը դասում են Հայոց տերության մեծագույն քաղաքների շարքը, որը մեծությամբ և նշանակությամբ զիջում էր միայն Դվինին և Պարտավին[2]: Նրանք հիշատակում են հատկապես Տփղիսի բնական տաք ջրով գործող բաղնիքները[3]:

Տփղիսում արաբներ բնակեցվեցին դեռևս VIII դ. սկզբին, որոնք քաղաքում կառուցեցին իրենց մզկիթները: «Քարթլիի մատյան»-ը հաղորդում է, որ արաբները, գրավելով Տփղիսը, այն վերաբնակեցրին իրենց ցեղակիցներով՝ վերածելով մահմեդական քաղաքի[4]: Հետագայում Տփղիսում տեղի արաբները ստեղծեցին իրենց ամիրայությունը[5]:

Ռուսթավ: Պարտավ-Տփղիս առևտրական ճանապարհի հարևանությամբ աճում ու զարգանում էր Ռուսթավ քաղաքը, որտեղ VIII դ. հաստատվել էր արաբական գաղութ[6]: Հայ Բագրատունիների տերության շրջանում այն, ինչպես տեսանք, մաս էր կազմում Տփղիսի ամիրայության:

Կղարջքի կուրապաղատության քաղաքային բնակավայրերը.

Արտանուջ: Հանդիսանում էր Կղարջքի Բագրատունիների իշխանանիստը: Կարևոր առևտրական կենտրոն էր, որտեղից առևտրական ճանապարհները շարժվում էին Բյուզանդիա, Հայաստան և Աբխազաց թագավորություն: Դավթի որդի Սմբատը հաղորդում է, որ քաղաքը կառուցվել է Աշոտ կուրապաղատի կողմից[7]: Ըստ Կոստանդին Ծիրանածնի՝ «Արտանուջ ամրոցը շատ անառիկ է. նա մեծ քաղաքների նման ունի նաև մեծ արվարձան: Տրապիզոնի, Իբերիայի, Աբազգիայի, Հայաստանի բոլոր շրջաններից այստեղ են գալիս առևտրականներ: Նա այդ առևտրից հսկայական կոմերկիոն (իմա՛ շահույթ-Ա.Ե.) է ստանում»[8]:

---

[1] Տե՛ս Сумбат Давитис-дзе, էջ 29:
[2] Տե՛ս al-Istakhri, էջ 187:
[3] Տե՛ս Jacut, I, էջ 857, Al-Istakhri, էջ 186-187 և այլն:
[4] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 28:
[5] Տե՛ս À. Áîãâåðäàçå, նշվ. աշխ., էջ 179:
[6] Տե՛ս " Î ÷åðêè èñò îðèè Ãðóçèè", ò. II, էջ 341:
[7] Տե՛ս Сумбат Давитис-дзе, էջ 31-32:
[8] Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 19-20: Տե՛ս նաև Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Ер., 1954, էջ 216:

Սամցխեի քաղաքային բնակավայրերը.

Զանավ: Այս ավանը Սամցխեի Գեորգի Չորչանեցի իշխանի նստավայրն էր, որտեղ գտնվում էր Զանավի հայտնի վանքը՝ կառուցված Ամասպի (Համազասպ) և Քուրդիի (Քուրդիկ) կողմից[1]: Գտնվում էր Կուր գետի՝ Մոսքական լեռներից սկիզբ առնող վտակի ակունքների շրջանում:

Չորչան: Սամցխեի Գեորգի Չորչանեցի իշխանի հայրենի ավանն էր: Գտնվում է Զանավից քիչ հարավ:

Ծանարաց քորեպիսկոպոսության քաղաքները և քաղաքային բնակավայրերը.

Թելավ: Թելավը XI դարում դարձավ Կախեթի թագավորության մայրաքաղաքը: Մինչ այդ քաղաքը՝ գտնվելով Տփղիսից Շաքեով Հարավային Դաղստան ընթացող առևտրական ճանապարհի վրա, անընդհատ ընդարձակվում և զարգանում էր[2]:

Բոդոջ: Տփղիս-Ալանաց դուռ ճանապարհահատվածում էր գտնվում Բոդոջ ավանը: Երբ Ծանարաց քորեպիսկոպոսությունում 881 թ. իշխանության եկավ Փադլա Արևմանելին (881-893), քորեպիսկոպոսության կենտրոնը Բոճորմայից տեղափոխվեց Բոդոջ[3]: Վերջինս գտնվում էր Կամբեճ գետի վերին հոսանքի աջ ափին՝ ճանապարհի հարևանությամբ: Ատրպատականի Յուսուֆ ամիրայի արշավանքների շրջանում հիշատակվում է նաև քաղաքի միջնաբերդը[4]:

6.2. Հայ Բագրատունիների տերության բերդերը և ամրությունները: Հայ Բագրատունիների տերությունը հարուստ էր բերդերով և ամրություններով:

Քննության առնելով Հայոց տերության բերդերի և ամրությունների տեղաբաշխվածությունը և խնդրո առարկա շրջանում նրանց խաղացած դերը՝ հնարավոր ենք համարում դրանք պայմանականորեն բաժանել երկու խմբի: Առաջինը սահմանային ամրություններն էին, որոնք իրենցից ներկայացնում էին որոշակի պաշտպանական համակարգեր: Այդպիսիք էին՝ Աբխազաց թագավորության սահմանին գտնվող ամրությունները, Հյուսիսային սահմանային ամրությունները, Տայքի, Վասպուրականի, Սյունիքի և Հայոց Արևելից կողմերի բերդերը:

Հայ Բագրատունիների տերության արևմտյան հատվածը սահմանային ամրություններով հարուստ չէր: Պատճառն այն էր, որ դեռևս գո-

---

[1] Տե՛ս Василий Зарзмели, գլ. VI, XVII:
[2] Տե՛ս Ì. Ëîðàêèàíèäçå, նշվ. աշխ., էջ 258-259:
[3] Տե՛ս Г. Мкртумян, նշվ. աշխ., էջ 89-90:
[4] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 32:

յատևում էր արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների շրջանը, որը պատնեշում էր Հայոց տերությունն արևմուտքից: Այդ շրջանի հարևանությամբ էր գտնվում Կարնո քաղաքը: Վերջինս, կապված Դվինից Բյուզանդական կայսրություն գնացող առևտրական ճանապարհի փակվելու հետ, մեծապես կորցրել էր իր նախկին առևտրական նշանակությունը և վերածվել սահմանային ամրոցի:

Ամրությունների հաջորդ խումբը կազմում էին տերության ներքին շրջաններում գտնվող բերդերն ու ամրությունները:

Ստորև հիմնականում կանդրադառնանք Հայ Բագրատունիների տերության այն բերդերին և ամրություններին, որոնք տերության համար կարևորություն էին ներկայացնում և խնդրո առարկա շրջանում հաճախ են հիշատակվում սկզբնաղբյուրներում:

Հյուսիսային սահմանային ամրություններ: Ըստ արաբ հեղինակների՝ Արմինիա ոստիկանության հյուսիսային սահմանը կազմում էր սահմանային ամրությունների մի գոտի, որը ձգվում էր Ալանաց դռնից (Դարիալի կիրճ) մինչև Դարբանդ: Իբն ալ-Ֆակիհը, պատմելով այդ սահմանային ամրությունների գոտու մասին, նշում է, որ այն բաղկացած է 360 ամրոցներից[1]: Իբն Խորդադբեհը սահմանային գոտում կառուցված ամրություններն անվանում է ալ-Աբվաբ (դռներ): Այս դռները կառուցված էին Կովկասյան լեռների կիրճերի ելքերի մոտ, և նրանց թիվը հասնում էր 360-ի: Դրանցից էին Բաբ ալ-Աբվաբը (Դարբանդ) և Բաբ Ալանը (Ալանաց դուռ)[2]:

Դատելով Արևելից մեծ իշխանության և Ծանարաց քորեպիսկոպոսության վերաբերյալ մեր հետազոտությունից՝ արաբա-խազարական սահմանային ամրությունների գոտու արևմտյան հատվածը մտնում էր Հայ Բագրատունիների տերության մեջ, որտեղ հայտնի էր Ալանաց դուռը: Վերջինս հանդիսանում էր այդ շրջանի կարևորագույն բերդը:

Ալանաց դուռ: Հյուսիսային ամրությունների շրջանի կարևորագույն ամրոցն էր, որը հսկում էր Կովկասյան լեռնաշղթայով անցնող ճանապարհը: Գտնվել է Թերեք գետի ձախ ափին՝ բարձր լեռան վրա[3]: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ Սմբատ Ա արքան ընդլայնեց իր տերության սահմանները «մինչև ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս և զԾանարս մինչև ցԴուռն Ալանաց»[4]: Ալանաց դուռը կարևոր նշանակություն ուներ Հայ Բագրատունիների տերության

---

[1] Տե՛ս **Ibn al-Fakih**, էջ 286-287:
[2] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 123-124:
[3] Տե՛ս **П. Закария**, Древние крепости Грузии, Тб., 1969, էջ 19:
[4] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 164:

համար, քանի որ այդտեղով էր անցնում ռազմավարական և առևտրական մեծ նշանակություն ունեցող ճանապարհը, որով արաբական տիրապետության շրջանում հաճախ հյուսիսային ցեղերը արշավում էին Այսրկովկաս: Հայ Բագրատունիները՝ տիրելով ամրոցին, վերահսկողություն էին սահմանել ճանապարհի վրա, որի պատճառով, 888 թ. հայ-աբխազական բախման ժամանակ աբխազներին օգնության եկած ալանները, ինչպես տեսանք, Այսրկովկաս մտան Աբխազաց թագավորության տարածքով:

Աբխազաց թագավորության սահմանին և դրա հարևանությամբ գտնվող ամրություններ: Թեև Աբխազաց թագավորությունը գտնվում էր Հայ Բագրատունիների տերության գերիշխանության ներքո, սակայն հանդիսանում էր վտանգավոր հարևան: Այդ են ցույց տալիս այն իրողությունները, որ Աբխազաց թագավորներն Այսրկովկասում գերիշխանության համար հաճախ մրցակցության մեջ էին մտնում հայ Բագրատունիների հետ: Ուստի Աբխազաց թագավորության հետ սահմանն անհրաժեշտ էր ամրացված պահել: Արաբական սկզբնաղբյուրներն Աբխազաց թագավորության սահմանին հիշատակում են Բաբ Ֆիրուզ Կուբադ (Ֆիրուզ Կուբադի դուռ) և Բաբ Սամսախի (Սամցխեի դուռ) բերդերը:

Բաբ Ֆիրուզ Կուբադ: Հայտնի է, որ «դուռ/դրունք» կոչվում էին լեռնանցքները և նրանց հսկողության համար կառուցված բերդերը: Բաբ Ֆիրուզ Կուբադի վերաբերյալ տեղեկություն է պահպանել Իբն Խորդադբեհը: Արաբ աշխարհագետը, խոսելով պարսից Խոսրով Անուշիրվան թագավորի քաղաքաշինական գործունեության մասին, տեղեկացնում է, թե նա «Ջուրզան երկրում կառուցեց...իր դղյակն ու այն անվանեց Բաբ Ֆիրուզ Կուբադ»[1]: Ըստ Յակուտի՝ Բաբ Ֆիրուզ Կուբադը Վիրքի սահմանային բերդերից էր[2]:

Սամցխեի բերդ (Բաբ Սամսախի): Գտնվում էր Աբխազաց թագավորության հետ սահմանին Սամցխեի կողմից, թերևս, Մոսքական լեռների շրջանում: Դատելով անվանումից՝ այն գտնվում էր հիշյալ լեռնաշղթայի լեռնանցքներից մեկում: Ամենայն հավանականությամբ, նույնական էր Օձրխե բերդին, որը Սամցխեին մենգրելների կողմից տրվող անվանաձևն է[3]: Բերդը, ըստ ավանդության, կառուցվել է Հայոց Արտաշես թագավորի զորավար Սմբատ Բյուրատյանի կողմից Ղադո լեռան

---

[1] **Ibn Khordadbeh**, էջ 123:
[2] Տե՛ս **Jacut**, I, էջ 220:
[3] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 32, **Вахушти Багратиони**, էջ 187-188: Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 79:

(Մոսքական լեռների շրջանում) լանջին[1]

«Քարթլիի մատյան»-ի և Վախուշտ Բագրատիոնի տեղեկությունների համաձայն՝ բերդը վերակառուցվել է IX դ. կեսերին Կղարջքի Բագրատունիներից Գուառամի կողմից:

Ձվարիսցխե (Ցիխիս Ձվար): Մոսքական լեռների լեռնանցքում գտնվող այս բերդը ևս վերակառուցվել էր Գուառամ Բագրատունու կողմից[2]:

Լոմսիանքա: Կառուցվել էր Գուառամ Բագրատունու կողմից[3]: Փորձ է կատարվել Լոմսիանքան նույնացնելու ներկայիս Ախալցխե քաղաքի բերդի հետ[4], որը քիչ հավանական է:

Ուփլիսցխե: Աբխազաց թագավորության սահմանից ոչ հեռու գտնվում էր կարևորագույն նշանակություն ունեցող Ուփլիսցխե բերդը: IX դ. կեսերին այն պատկանում էր Կղարջքի կուրապաղատ Բագարատին (826-876)[5]: Այդ ամրոցի կարևորությունը նաև այն էր, որ դրա մերձակայքով էր անցնում Աբխազաց թագավորություն ընթացող ճանապարհը: Ուստի և զարմանալի չէ, որ 906 թ. հայ-աբխազական բախման կիզակետը հանդիսացավ հենց Ուփլիսցխեն: Երբ այդ բերդին տիրեց Աբխազաց թագավորը, Սմբատ Ա-ն արշավանքի դուրս եկավ և ետ նվաճեց այն՝ գերի վերցնելով Աբխազաց թագավորին:

Սուրամ: Կարևոր էր նաև Սուրամի բերդի նշանակությունը, որը գտնվում էր Աբխազաց թագավորության սահմանին՝ Վիրքից Աբխազաց թագավորություն ընթացող ճանապարհի վրա:

Կվել: Գտնվում էր Ջավախքում: Մ. Հովհաննեսյանն այն սխալմամբ տեղադրում է Տաշիրքում՝ Օձունի հարևանությամբ[6]: Հիշատակվում է Ասողիկի կողմից՝ կապված Ատրպատականի Յուսուֆ ամիրայի 909 թ. արշավանքի հետ: Չկարողանալով պատշաճ դիմադրություն կազմակերպել՝ Սմբատ Ա-ն հեռանում է Աբխազաց թագավորություն, իսկ նրան հետապնդող Յուսուֆը պաշարում է Կվել բերդն ու գրավում[7]: Այդ դեպքերը գրեթե նույնությամբ հիշատակում է նաև «Քարթլիի մատյան»-ը[8]:

Թմբկաբերդ (Թմոգվ բերդ): Գտնվում էր Ջավախքում՝ Սամցխեից

---

[1] Տե՛ս **Լեոնտիոս Ռուիսեցի (Լեոնտի Մրովելի)**,-**L. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 157:

[2] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 32:

[3] Անդ:

[4] Տե՛ս "Очерки истории Грузии", т. II, էջ 232:

[5] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 29:

[6] Տե՛ս **Մ. Յովհաննէսեան,** Հայաստանի բերդերը, էջ 584:

[7] Տե՛ս **Ասողիկ**, էջ 164:

[8] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 33:

հարավ, Կուր գետի ձախ ափին: Վրացական աղբյուրներում խնդրո առարկա շրջանում կոչվում էր Թմոգվ բերդ[1]: Ըստ «Քարթլիի մատյան»-ի՝ Ատրպատականի Յուսուֆ ամիրան Կվելի բերդը գրավելուց առաջ պաշարել էր բերդը, սակայն գրավել չէր կարողացել[2]:

Տայքի բերդեր: Ինչպես արաբական տիրապետության շրջանում, այնպես էլ Հայ Բագրատունիների տերության օրոք Տայքը հանդիսանում էր ամրոցներով հարուստ երկրամաս: Այստեղ արաբական տիրապետության շրջանում հաճախ ապաստանում էին արաբների դեմ ապստամբող հայ իշխանները, իսկ Հայ Բագրատունիների տերության շրջանում՝ Ատրպատականի Ափշին և Յուսուֆ ամիրաների դեմ պայքար մղող Սմբատ Ա-ն: Ինչպես հաղորդում է Ղևոնդը, 747-750 թթ. ապստամբության ժամանակ հայ նախարարներից շատերը հեռացան և ամրացան Տայքի բերդերում՝ հույս ունենալով կապ հաստատել Պոնտոսի կողմերում գտնվող բյուզանդական զորքից[3]: Հովհաննես Դրասխանակերտցին պատմում է, որ Սմբատ Ա-ի կողմից Ատրներսեհ Բագրատունու թագադրությունից հետո Ափշինը ներխուժեց Հայաստան, Սմբատ Ա-ն «անկանէր ի կողմանս ամրոցացն Տայոց»[4]: Վերջիններիցս դեռևս հնուց հայտնի էին Էրախանի, Թուխարք և Տայոց քար բերդերը[5]:

Էրախանի: Տայքում Մամիկոնյանների գլխավոր բերդն էր[6], որը գտնվում էր Տայքի և Կղարջքի սահմանի մոտակայքում՝ Ճորոխ գետի աջ ափին: Ներկայումս նրա տեղում գտնվող գյուղը կոչվում է Իրխան կամ Իրկնիս[7]: Խնդրո առարկա շրջանում չի հիշատակվում:

Թուխարք: Գտնվում էր Տայքի և Կղարջքի սահմանին, հավանաբար, Տայքի ճակք գավառում: Անառիկ բերդ էր, որ հայտնի էր հատկապես արաբական տիրապետության շրջանում, երբ այնտեղ էին ամրանում արաբների դեմ հանդես եկող կամ նրանց հալածանքներից խուսափող հայ նախարարները: Ըստ Ղևոնդի, երբ VIII դ. սկզբին Հայոց իշխան Սմբատ Բագրատունու գլխավորությամբ որոշ հայ նախարարներ՝ խուսափելով արաբների հետապնդումներից, հեռանում էին Բյուզանդիա, նրանք սկզբում ամրանում են Տայքի Թուխարք բերդում[8]:

---

[1] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 78:
[2] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 33:
[3] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 122-123:
[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 188:
[5] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 249-250:
[6] Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 200:
[7] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 53:
[8] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 26:

Ներկայումս Թուխարք բերդի տարածքում գտնվող գյուղը կոչվում է Խերես[1]:

Տայոց քար: Ըստ Ս. Երեմյանի՝ պետք է լիներ Տայքի հին կենտրոնը: Գտնվում էր Տայքի Ճակք գավառում և սկզբում պատկանում էր Մամիկոնյաններին, իսկ այնուհետև՝ Բագրատունիներին: Ներկայումս նրա տեղում գտնվող գյուղը կոչվում է Տավուսքյար[2]:

Կամախ (Կաղամախ, Կալմախ): Ըստ Վարդան վարդապետի՝ կառուցել էր Աշոտ Մսակերը Տայքում[3]: Վրացական աղբյուրներում կոչվում է Կալմախ: Վախուշտ Բագրատիոնին տեղեկացնում է, որ այն կառուցել են Հայաստանի Բագրատունիները, որոնք ցանկացել են տիրել նաև Կղարջքին, բայց հաջողության չեն հասել[4]: Ըստ Դավթի որդի Սմբատի՝ IX դ. վերջին Կալմախ ամրոցին տիրում էր Գուրգեն Բագրատունին, որը 888 թ. հայ-աբխազական բախման ժամանակ հանդես էր եկել Աշոտ Ա-ի կողմում: Սմբատ Ա-ի օրոք նա հեռացավ Կալմախից և բնակություն հաստատեց Շավշքում[5]:

Ուղթիս բերդ: Գտնվում էր Ճորոխ գետի ափին: Կառուցվել է Բագրատունիների օրոք՝ X-XI դդ.[6]: Ամենայն հավանականությամբ, Տայքի կարևոր բերդերից էր, որի հետևանքով Ստեփաննոս Օրբելյանը քաղաքի շրջակայքը կոչում է նրա անունից[7]:

Հարավային ամրություններ: XI դ. (1021 թ.), երբ Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունին տեղափոխվեց Սեբաստիա, նա Բյուզանդիային հանձնեց 72 բերդ[8]: Բերդերի այս մեծ թիվը պայմանավորված էր այն իրողությամբ, որ Վասպուրականի իշխանությունը (908 թ.՝ թագավորություն), գտնվում էր Հայաստանի հարավային հատվածում և սահմանակցում մի կողմից Հերի և Ատրպատականի ամիրայություններին, իսկ մյուս կողմից՝ Ամիդի ամիրայության հետ: Անկասկած, այդ բերդերը գոյություն ունեին նաև խնդրո առարկա շրջանում, երբ, վերոհիշյալ իրողությունների պայմաններում Վասպուրականի իշխանության արևելյան և հարավային սահմաններին ձևավորվել էին ամրությունների գոտիներ:

---

[1] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 53:
[2] Անդ, էջ 84:
[3] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 83: Տե՛ս Մուրադյան Պ., Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը, էջ 246:
[4] Տե՛ս **Вахушти Багратиони**, էջ 186:
[5] Տե՛ս **Сумбат Давитис-дзе**, էջ 34:
[6] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Պատմական Հայաստանի քաղաքները, էջ 253-255:
[7] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 299-300:
[8] Տե՛ս **Սամվել Անեցի**, էջ 104:

Դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ հարավում ամրությունների շրջանի մեջ էին մտնում Ձլմար ու Սրինգ բերդերը՝ Փոքր Աղբակ գավառում, Ագարակի և Ճահուկ բերդերը՝ Ճահուկ գավառում, Ձռել (Ձռայլ) բերդը՝ Ջերմաձորում և Ալկի բերդը՝ Կորդիք Վերին գավառում: Նշված բերդերն Արծրունիների համար մեծ կարևորություն են ձեռք բերում Բուղայի արշավանքների և հետագա ժամանակաշրջանում: Երբ ապօրինաբար Վասպուրականի իշխան դարձավ Վասակը, Գուրգեն Արծրունին «ելեալ փութանակի եկն եհաս յաշխարհս Վասպուրական: Եւ այն ինչ ընդ մտանելն՝ երագապէս հասեալ ի վերայ ամրոցացն Ձղմար և Սրինգ կոչեցեալ՝ յինքն գրաւէ զամրոցսն. և կալեալ զՎասակ՝ յինքն գրաւեաց զզօրավարութիւնն բոլոր Վասպուրական տէրութեանս»[1]:

Ըստ Թովմա Արծրունու՝ Փոքր Աղբակից արևելք գտնվող Որսիրանք գավառը նույնպես IX դ. մտնում էին Արծրունիների իշխանության մեջ: Այնտեղ ևս կային անառիկ բերդեր: Արյան լճի ճակատամարտի նախօրեին Գուրգեն Արծունու գլխավորությամբ այստեղ են ապաստանում Վասպուրականի մեծամեծերն ու փախստական բնակչությունը և պարտության մատնում թշնամուն[2]:

Թովմա Արծրունու տեղեկություններից երևում է, որ վերոհիշյալ բերդերն Ատրպատականի Յուսուֆ ամիրայի դեմ պայքարի ընթացքում կարևոր պաշտպանական նշանակություն են ձեռք բերում Արծրունիների համար: Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումները ևս ցույց են տալիս, որ Կորդվաց լեռների շրջանում և Մոկքում գտնվող ամրությունները կարևոր պաշտպանական նշանակություն ունեին Արծրունիների համար[3]:

Հողց: Հարավային ամրությունների շրջանի արևմտյան մասում կարևորագույն նշանակություն ուներ Հողցի բերդը: Այն գտվում էր Մոկքի և Աղձնիքի սահմանագլխին՝ հսկելով Թուխ գետի կիրճով Ռշտունիք ընթացող ճանապարհի վրա: Վերջին տեսակետը բխում է Թովմա Արծրունու և Անանուն Զրուցագրի հաղորդումներից: Թովմա Արծրունին տեղեկացնում է, որ Բուղայի արշավանքների շրջանում Ժիրաք զորավարը «քանզի ընդարձակ էր պահն Հողցայ՝ փութանակի եկն եհաս ...ի գաւառն Ռշտունեաց»[4]: Ըստ Անանուն Զրուցագրի՝ պարտություն կրելով Ամիդի ամիրայից՝ Սմբատ Ա-ն և նրա զորքը «ճանա-

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 306:
[2] Անդ, էջ 224-232:
[3] Անդ, էջ 272:
[4] Անդ, էջ 202:

պարի արարին ընդ Թխայջուրն՝ եկին հատան ի յամրոցն Խողցայ և մազապուրծ եկեալ հասան ի գաւառն Ըռըշտունեաց»[1]:

Արծրունիները ամրություններ էին ստեղծում նաև Հերի ամիրայության սահմանին: Ինչպես հաղորդում է Անանուն Զրուցագիրը՝ Դերենիկ Արծրունին «դիմեաց և գնաց ի Զարևանդ և շինեաց քաղաք ամուր և պարսպեաց զքաղաքն և շինեաց իւր բերդն, որ Մողոքարն ասեն, և զամուրն Միջայ. և զամենայն գաւարն Դաշտայ Աւարին շինեաց մինչև ի ծովն Աղի: Եւ էհար զտուն Պարսից և շինեաց ի գլուխ դաշտին Հերայ զՀողաբլուրն»[2]: Պատմիչի հաղորդումը ցույց է տալիս, որ Արծրունի իշխանը Հերի ամիրայությունից գրավել է Զարևանդ գավառը, Հերի մի մասը, իսկ այնուհետև իր տիրույթներն ընդարձակել է մինչև Աղի կամ Կապուտան ծովի ափերը՝ կառուցելով բերդեր: Այնուհետև, ըստ պատմիչի, Դերենիկը գրավել է նաև Զարեհաբերդն ու Սալամասը[3]:

Հերի ամիրայության սահմանին գտնվող ամրությունների շինարարությունն ավարտին հասցրեց Գագիկ Արծրունին: Ըստ Թովմա Արծրունու՝ Կարմիր կամ Կոտոր գետի ափին՝ Մառական ավանի մոտ, նա կառուցեց բերդ՝ փակելով Հերի ամիրայության կողմից շարժվող ասպատակող զորքերի ճանապարհը[4]:

Ամրոցներով հարուստ էին նաև Արծրունիների իշխանության ներքին շրջանները: Հայտնի էին Կանգավար, Սևան, Նկան, Ամյուկ, Բերկրի, Երիկավ և Մակու ամրոցները:

Կանգավար: Անձևացյաց իշխանության կենտրոն Կանգավար բերդը հայտնի էր իր անառիկությամբ: Ինչպես տեսանք, երբ Արծրունիների գահերեց ճյուղի ներկայացուցիչները ռազմական գործողություններ ձեռնարկեցին Գուրգեն Ապուպելճի դեմ, նրանք երկար ժամանակ պաշարված պահեցին բերդը, սակայն այդպես էլ գրավել չկարողացան: Ներկայումս բերդի տեղում գտնվող գյուղը կոչվում է Կենգևեր (Կանգովա)[5]:

Ամյուկ: Այս բերդում արաբական տիրապետության շրջանում հաստատվել էին ութմանիկները: Այն գրեթե անառիկ էր, որի պատճառով Արծրունիներին ոչ մի կերպ չէր հաջողվում գրավել այն: Վերջապես, Գագիկ Արծրունին մոտ 907 թ. կարողացավ ութմանիկներից խլել Ամյուկ

---

[1] **Անանուն Զրուցագիր**, էջ 175:
[2] Անդ, էջ 131:
[3] Անդ, էջ 157:
[4] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 392:
[5] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 58: Տե՛ս **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 177:

բերդը և վերացնել նրանց: Սմբատ Ա-ի զորքերն անմիջապես արշավեցին դեպի Ամյուկ և գրավեցին այն, բայց քանի որ ութմանիկներն այլևս գոյություն չունեին, Սմբատ Ա-ն նպատակահարմար գտավ այն վաճառել Գագիկին[1]:

Երիկավ: Գտնվում էր Բերկրու մոտակայքում: Այն, ինչպես տեսանք, կայսիկները խլել էին ութմանիկներից, իսկ Սմբատ Ա-ն ետ էր գրավել և վերադարձրել ութմանիկներին:

Մակու: Գտնվում էր Վասպուրական աշխարհի Արտազ գավառում: Մակուի բերդը հիշատակում են Սեբեոսը, Ղևոնդը, Թովմա Արծրունին և այլ պատմիչներ: Ենթադրվում է, որ այն հիմնադրվել է VII-VIII դարերում[2]: Մակվի բերդը թագավոր հռչակվելուց հետո գրավել էր Գագիկ Արծրունին[3]:

Սյունիքի բերդեր: Դեռևս հնուց Սյունիքը հայտնի էր որպես անառիկ աշխարհ, որտեղ գոյություն ունեին տասնյակ բերդեր: XI դ. միայն Սյունյաց թագավորության կազմում (նրա մեջ չէին մտնում Սյունիքի՝ Գեղամա ծովի շրջակա գավառները, Վայոց ձորը, Ճահուկն ու Երնջակը)[4], սկզբնաղբյուրները հիշատակում են 43 բերդ[5]: Անկասկած, որ դրանց մեծագույն մասը գոյություն ուներ նաև խնդրո առարկա շրջանում: Հայ Բագրատունիների տերության շրջանում հատկապես հայտնի էին Երնջակ, Շաղատ, Որոտն և Բաղա բերդերը:

Երնջակ: Սյունիքում՝ Ատրպատականի ամիրայության սահմանից ոչ հեռու գտնվում էր անառիկ Երնջակ բերդը: Այն մտնում էր արքունի տիրույթների մեջ և ուներ հզոր պաշտպանական համակարգ: Երբ Յուսուֆը գերեց Սմբատ Ա-ին, նա Երնջակ բերդը գրավելու համար, որտեղ ամրացել էին շատ իշխաններ, պահանջեց գերված Սմբատ Ա-ից, որ վերջինս հրամայի բերդի պաշտպաններին անձնատուր լինել, բայց Հայոց թագավորը հրաժարվեց: Բերդը երկար ժամանակ պաշտպանվում էր[6]: Ներկայումս բերդի ավերակները կոչվում են Ալինջա-կալա[7]:

Շաղատ: 821 թ. արաբ Սևադան ասպատակում է Սյունիքը և «ամրանայ ի բերդատեղի աւանին Շաղատու, որ է ի գաւառին Ծղկաց»[8]: Այ-

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 438:
[2] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Պատմական Հայաստանի քաղաքները, էջ 184-185:
[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 444:
[4] Տե՛ս նաև **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը, էջ 57-72:
[5] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 334, **Վարդան վարդապետ**, էջ 140-141: Տե՛ս նաև **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը, էջ 72-74:
[6] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 190-191, **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 238:
[7] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 51:
[8] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 326:

սինքն, Շաղատի բերդն համանուն ավանի միջնաբերդն էր:

Բաղաբերդ: Հայտնի էր հնուց՝ որպես ամուր բերդ[1]: Գտնվում էր Սյունիքի Ձորք գավառում՝ Գեղի և Ողջի գետերի ջրկիցի մերձակայքում[2]: Նրա դերը Սյունյաց իշխանության համար հատկապես բարձրացավ հետագա շրջանում:

Որոտն: Հայտնի էր դեռևս V դարից[3]: Գտնվում էր Ծղուկ գավառում՝ Որոտան գետի աջ ափին գտնվող լեռան վրա[4]: Խնդրո առարկա շրջանում թեև չի հիշատակվում, սակայն, անկասկած, կարևոր նշանակություն ունեցող բերդ էր:

Հայոց Արևելից կողմերի բերդեր: Ամրություններով հարուստ էին Հայոց Արևելից կողմերը: Խնդրո առարկա ժամանակաշրջանում աղբյուրներում հաճախ հիշատակվում են Քթիշ, Գոռոզ, Խաչեն, Շիկաքար, Հավախաղաց (Հավքախաղաց), Գարդման և մի քանի այլ բերդեր:

Արցախի երկու կարևոր նշանակություն ունեցող բերդերը՝ Քթիշն ու Գոռոզը, գտնվում էին Հայ Բագրատունիների տերության հարավային սահմանին:

Քթիշ (Գտիչ): Ըստ Թովմա Արծրունու՝ Բուղայի զորքը հատկապես հզոր դիմադրության հանդիպեց Արցախում, որտեղ Քթիշ բերդում ամրացած Եսայի Աբու Մուսեն հերոսական կռիվներ մղեց Բուղայի զորամասերի դեմ[5]: Անառիկ ամրոց էր, որը թշնամիներին գրավել չէր հաջողվում: Արաբական աղբյուրները, ինչպես տեսանք, լեռը, որի վրա գտնվում էր բերդը, կոչում են Եսայի Աբու Մուսեի լեռ: Քթիշ բերդը գտնվում էր ներկայիս Տող և Տումի գյուղերի միջև վեր խոյացող անտառապատ լեռան գագաթին[6]:

Գոռոզ: Մովսես Դասխուրանցին 830 թ. վերաբերող մի հաղորդման մեջ պատմում է, որ «Եւ դարձեալ ամպստամբքն ի Բաբանայ դիմադարձ պատերազմաւ ամրացան ի բերդն Գորոզու և կալեալ զգաւառսն զամս ԺԲ, որք են զայսոքիկ՝ Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մխանք և Տրի գաւառ:...Եւ Յիսայի անուանեալն Աբու Մուսէ՝ այր խաղաղութեան...ընդբռնեալ զնոյն գաւառսն՝ իշխանացաւ ամենայնի»[7]: Գոռոզ բերդը նույնական է ներկայիս Մեծ Թաղլար

---

[1] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 28-37: Տե՛ս նաև **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 116:
[2] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը, էջ 112-118:
[3] Տե՛ս Եղիշե, էջ 138:
[4] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը, էջ 141: Տե՛ս նաև նույնի՝ Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 194-195:
[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 278, 290:
[6] Տե՛ս **Բարխուդարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 56:
[7] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 327:

գյուղից հարավ տարածվող լեռնաբազուկի շրջանում պահպանված բերդատեղիին[1]:

Խաչեն: Համանուն իշխանության կենտրոնն էր և պատկանում էր Սահլ Սմբատյանին ու նրա սերունդներին: Ինչպես տեսանք, այն Խաչենի իշխանների նստավայրն էր: Գտնվում էր Արցախի Մեծիրանք գավառում:

Շիկաքար: Գտնվում էր Արցախի Մեծիրանք գավառում և պատկանում էր Սահլ Սմբատյանին: 821 թ. Պարտավի արաբներն ավարի առան Ամարասի շրջակայքը, շատերին գերի վերցրեցին ու ամրացան Շիկաքարում: Սահլ Սմբատյանը հարձակվեց նրանց վրա, ջախջախեց, գրավեց բերդն ու ազատեց գերիներին[2]:

Հանդաբերդ: Կառուցվել էր Սահլ Սմբատյանի որդի Ատրներսեհի կողմից[3]: Գտնվում էր Արցախի Վայկունիք գավառում:

Հավախաղաց (Հավքախաղաց): Կառուցվել է Խաչենի Ատրներսեհ իշխանի որդի Գրիգորի կողմից[4]: Դատելով Մովսես Դասխուրանցու տեղեկություններից, ինչպես տեսանք, այս ամրոցի կառուցումը Խաչենի իշխանության համար ուներ սահմանային կարևոր նշանակություն՝ Պարտավում բնակվող արաբների դեմ: Կառուցելով ամրոցը և ամրապնդելով սահմանը՝ Գրիգորն այնուհետև կարողացավ գրավել դրանից դեպի արևելք ընկած Ուտիքի որոշ շրջաններ: Գտնվում էր Արցախի Հարճլանք գավառում:

Գարդման: Հանդիսանում էր Առանշահիկների Գարդմանի ճյուղի կենտրոնը: Արաբական աղբյուներում հիշատակվում է որպես ալ-Զարդաման բերդ[5]: Ավերակները մինչև այժմ էլ պահպանվել են Շամքոր գետի վերին հոսանքի շրջանում[6]:

Տավուշ (Տուս): Սևորդյաց իշխանության կենտրոնն էր[7]: Գտնվում էր Տավուշ գետի միջին հոսանքի շրջանում: Հիշատակվում է որպես Ուտիքի կարևոր բերդերից մեկը[8]:

---

[1] Տե՛ս **Ս. Բարխուդարյան**, նշվ. աշխ., էջ 57:
[2] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 326:
[3] Անդ, էջ 340:
[4] Անդ, էջ 340-341:
[5] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 123: Տե՛ս البلاذري, I, էջ 239:
[6] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը IX-XI դարերում, քարտեզ (Եր., 1987), նույնի՝ Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ: Տե՛ս նաև **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ: Տե՛ս նաև Ghazarian M., նշվ. աշխ., էջ 77:
[7] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 130:
[8] Անդ, էջ 322:

Հայ Բագրատունիների տերության ներքին շրջաններում գտնվող բերդեր: Ամրություններով հարուստ էին նաև Հայ Բագրատունիների տերության ներքին շրջանները:

Արտագերս: Կառուցվել է Արշակ Բ թագավորի օրոք[1]: Հայաստանի ամենաամուր բերդերից մեկն էր, որը IV դ. 13 ամիս շարունակ պաշարվել էր պարսից զորքի կողմից, սակայն մնացել էր անառիկ[2]: VIII դ. Արշարունիքի մի հատվածը՝ Արտագերս բերդով, պատկանում էր 774-775 թթ. ապստամբության առաջնորդ Մուշեղ Մամիկոնյանին[3]: Ապստամբության պարտությունից և Մամիկոնյանների թուլացումից հետո անցել էր Բագրատունիներին: Հայ Բագրատունիների տերության շրջանում չի հիշատակվում, որի պատճառով այն երբեմն փորձում են նույնացնել Սմբատ Ա-ի օրոք հիշատակվող Կապույտ բերդի հետ[4], որը սխալ է: Վարդան վարդապետի «Աշխարհացոյց»-ում նշված է.«Եւ բերդն Կապուտ, որ կոչի Արտագերէից»[5]: Սակայն, այդ հաղորդմանը հազիվ թե կարելի է վստահել, քանի որ Եղիշեն առանձին-առանձին հիշատակում է թե՛ Արտագերս և թե՛ Կապույտ բերդերը[6]:

Կապույտ բերդ: Հայ Բագրատունիների տերության շրջանում հայկական և վրացական աղբյուրներում հիշատակվում է Կապույտ բերդը, որտեղ ապաստանում է Սմբատ Ա-ն Յուսուֆի դեմ պատերազմներում[7]: Գտնվում էր Արշարունիք գավառում՝ Երասխ գետի ձորում, ներկայիս Կաղզվան քաղաքի մոտ[8]: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ անառիկ ամրոց էր: Պատմելով այն մասին, թե ինչպես է Սմբատ Ա-ն նահանջում Յուսուֆի զորքերից, պատմիչը տեղեկացնում է.«Այնուհետև երթեալ յամրոցս քարանձաւին ի Կապուտայ, որ ի ձորն Երասխայ...վասն զի անառիկ իսկ էր նա ի մարդկանէ:»[9]:

Դարյունից բերդ: Բերդը VI դարից պատկանում էր Բագրատունիներին և հանդիսանում նրանց կենտրոնը: Բագրատունիների

---

[1] Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 202:
[2] Անդ, էջ 262:
[3] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 139:
[4] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 43: Այդ մասին մանրամասնորեն տե՛ս **Մ. Յովհաննէսեան,** Հայաստանի բերդերը, էջ 672-676:
[5] Տե՛ս «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», քննական հրատ. Հ. Պէրպէրեանի՝ համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Բարիզ, 1960, էջ 25:
[6] Տե՛ս **Եղիշե**, էջ 136-138. «Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդիցն և աւանաց...առնուին զանմատոյց ամուրսն...զԳառնին, զԱրտագերս,...և զԿապոյտն»:
[7] Տե՛ս **Ասողիկ**, էջ 165, “Матиане Картлиса”, էջ 32 և այլն:
[8] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 123:
[9] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 236:

տիրույթների ընդարձակման պայմաններում նրանք իրենց կենտրոնը տեղափոխեցին Արշարունիք, որի հետևանքով Դարյունից բերդը նրանց համար կորցրեց իր նշանակությունը: Սմբատ Ա-ի օրոք այն դեռ պատկանում էր Բագրատունիներին, սակայն վերջինիս սպանությունից հետո Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունին (908-943) կարողացավ Կոգովիտ գավառը՝ Դարյունից բերդով կցել իր տիրույթներին[1]:

Դարյունից բերդը (Դարեւնից կամ Դարիւնից բերդ[2]) գտնվում էր Հին Բայազետ քաղաքի հարևանությամբ, որտեղ մինչև այսօր էլ պահպանվել են բերդի պարիսպները[3]:

Արծափ բերդ: Անառիկ բերդ էր, որը գտնվում էր Դարյունից բերդից դեպի հյուսիս: Արաբական աղբյուրներում այն հիշատակվում է Կալա ալ-Ասաբիատ ձևով[4]: Արծափ բերդը հաճախ հիշատակվում է արաբական արշավանքների շրջանում[5]: Հայ Բագրատունիների տերության շրջանում Արծափ բերդի վերաբերյալ գրեթե տեղեկություններ չեն պահպանվել:

Հունարակերտ: Գտնվում էր Աղստև գետի ձախ ափին՝ գետաբերանի մոտակայքում և նույնական էր հայկական և վրացական աղբյուրներում հիշատակվող Խունանին[6]: Հայ Բագրատունիների տերության շրջանում Հունարակերտը մտնում էր Հայ Բագրատունիների արքունի տիրույթների մեջ:

Ողական բերդ: Տարոնի հայտնի բերդերից էր, որը IV-VIII դդ. պատկանում էր Մամիկոնյաններին: Ըստ Փավստոս Բուզանդի՝ գտնվում էր «ի վերայ գետոյն Եփրատայ (իմա՛ Արածանի)»[7]: Ավերակները պահպանվել են ներկայիս Ախկան գյուղում[8]: Եղիշեն այն, անառիկության պատճառով, անվանում է «զանկասկածելի Ողականն»[9]: Արաբական տիրապետության շրջանում, ըստ Ասողիկի՝ այստեղ ամրացել էին հայ

---

[1] **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 444:

[2] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 18, 119 և այլն, **Ասողիկ**, էջ 131:

[3] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 49:

[4] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 381: Կալա ալ-Ասաբիատ անվանումն արաբները, ամենայն հավանականությամբ, վերցրել են հայերի շրջանում տարածված «ամրոցն Արծափաց» ձևից, որն «Արծափ»-ի սեռական հոլովն է (տե՛ս **Ղևոնդ**, էջ 11, **Անանուն Զրուցագիր**, էջ 95: Այդ մասին մանրամասնորեն տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հեր (Խուայյ)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհն ըստ արաբ աշխարհագետ ալ-Մուկադդասիի, էջ 152):

[5] Տե՛ս **Սեբեոս**, էջ 138, 145 և այլն:

[6] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 97-100:

[7] Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 292: Տե՛ս նաև **Մ. Յովհաննէսեան,** Հայաստանի բերդերը, էջ 176:

[8] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 74:

[9] Տե՛ս Եղիշե, էջ 138:

ապստամբները: Բերդը մեկ տարի պաշարվել էր արաբական զորքի կողմից, սակայն մնացել անառիկ[1]: Մամիկոնյանների թուլացումից հետո անցել էր Բագրատունիներին: Ողականը դրանից հետո այլևս չի հիշատակվում[2]:

Եղանց բերդ: Եղանց (Եղնուտ կամ Ուլնուտ) բերդը[3] գտնվում էր Արշամունիք գավառի հարավային հատվածում: Ելնելով նրա կարևորությունից՝ Տարոնի իշխանները, ինչպես տեսանք, ամեն ջանք գործադրեցին՝ այն սեփական իշխանության մեջ պահելու համար:

Սևուկ բերդակ: Տուրուբերանի կարևոր բերդերից էր: Պատմիչների կողմից հիշատակվում է Սև քար կամ Սևուկ բերդակ անուններով[4]: Ըստ Ասողիկի՝ գտնվում էր Մարդաղիում[5] և կարևոր նշանակություն էր ձեռք բերել X դ. երկրորդ կեսին, որի պատճառով կարող ենք կարծել, որ գոյություն ուներ նաև խնդրո առարկա շրջանում:

Հավճիչ: Գտնվում էր Մուրց գետի միջին հոսանքի աջափնյակում[6]: Արիստակես Լաստիվերցին Հավճիչ ամրոցը հիշատակում է Աղորիում[7] (իմա՛ Աղորնիք): Վերևում տեսանք, որ Աղորին նույնական է Տուրուբերանի Մարդաղի գավառին: Մ. Հովհաննեսյանը, որն համոզված էր, որ Հավճիչ բերդը գտնվել է Տայքում, փորձ է կատարել Աղորնին խմբագրել Ազորդի (որը սխալ է), իսկ վերջինս Տայքի գավառներից էր[8]: Սմբատ Ա-ն, ինչպես տեսանք, արաբներից խլեց Աղորնիքը՝ Հավճիչ բերդով, որով կայսիկների ամիրայությունը կտրվեց Կարինի ամիրայությունից:

Ավնիկ և Խնունիս բերդեր: Արաբական տիրապետության շրջանում մտնում էին կայսիկների ամիրայության մեջ[9]: Սմբատ Ա-ի օրոք Ավնիկ ամրոցը, ամենայն հավանականությամբ, միացվել էր արքունի տիրույթներին, քանի որ, ինչպես տեսանք, նրա ողջ շրջակայքը մաս էր կազմում այդ տիրույթների: Ըստ երևույթին, տեղի արաբական ամիրայությունը ենթարկվել էր Սմբատ Ա-ին և պահպանել իր գոյությունը, քանի որ, հա-

---

[1] Տե՛ս **Ասողիկ**, էջ 133:

[2] Տե՛ս **Մ. Յովհաննէսեան,** Հայաստանի բերդերը, էջ 179:

[3] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 9-10: Բերդը Եղանց և Եղնուտ անուններով հիշատակված է Հովհան Մամիկոնյանի երկում. «Եղանց բերդն, զոր դեռ Եղնուտն կոչեն» (տե՛ս Յովհան Մամիկոնեան, էջ 25):

[4] Տե՛ս **Մ. Յովհաննէսեան,** Հայաստանի բերդերը, էջ 194:

[5] Տե՛ս **Ասողիկ**, էջ 192:

[6] Տե՛ս «Բագրատունյաց տերությունը Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների օրոք»,- «Հայաստանի պատմության ատլաս», Ա մաս, էջ 62-63:

[7] Տե՛ս **Արիստակես Լաստիվերտցի**, էջ 62, 63 և այլն:

[8] Տե՛ս **Մ. Յովհաննէսեան,** Հայաստանի բերդերը, էջ 623:

[9] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 216-223:

մածայն Կոստանդին Ծիրանածնի, Սմբատ Ա-ից հետո էլ, իր օրերում, Ավնիկում արաբ ամիրա կար[1]: Ինչ վերաբերում է Խնունիս բերդին, ապա այն, դատելով մեր քննությունից, մնացել էր Կայսիկների ամիրայության մեջ:

Համամաշեն (Համշեն): Ինչպես տեսանք, համանուն իշխանության կենտրոնն էր և նույնական էր ներկայիս Համշեն-կալեին կամ Կալեին: Հնում կոչվում էր Տամբուր, որը 628 թ. ավերվել էր, սակայն VIII դ. վերջին վերականգնվել Համամ Ամատունի իշխանի կողմից և վերանվանվել Համամաշեն[2]:

Արտաշեն: Համշենի իշխանության կարևոր բերդերից էր, որը կառուցվել էր IX դ. վերջին կամ X դ. սկզբին: Ինչպես տեսանք, վերջինս հիշատակվում է համշենահայերի շրջանում պահպանված ավանդության մեջ: Ինչպես տեսանք, նույնական էր ներկայումս Վարոշ-կալե կոչվող բերդին:

Սամշուլդե: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ այն մեծ ամրոց էր, որն ամբողջ շրջակայքով իր տիրույթներին էր կցել Սմբատ Ա-ն՝ կառավարիչներ նշանակելով Գնթունի տոհմից Վասակ և Աշոտ իշխաններին[3]: Գտնվում էր Տաշիրք գավառում[4], Դմանիս քաղաքից հյուսիս: Ըստ ավանդության՝ կոչվել է նաև Որբեթ[5]:

Սակուրեթ (Ասկուրեթ): Գտնվում էր Սամշուլդեից հյուսիս-արևելք: Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու մի տեղեկությունից՝ մտնում էր Հայ Բագրատունիների արքունի տիրույթների մեջ[6]: Մ. Հովհաննեսյանը, հիմնվելով Հովհաննես Դրասխանակերտցու այն հաղորդման վրա, որ Սամշուլդեի և շրջակայքի վրա Սմբատ Ա-ի կողմից իշխաններ էին նշանակվել երկու Գնթունի եղբայրները՝ Վասակն ու Աշոտը, այն կարծիքն է հայտնում, որ, հավանաբար, Վասակը նստում էր Սամշուլդեում, իսկ Աշոտը՝ Սակուրեթում[7]:

Կլդեկար(ն): Ըստ «Քարթլիի մատյանի»՝ կառուցվել էր մոտ 876 թ.՝ Թռեղք գավառին տիրած Լիպարիտ Բաղվաշ իշխանի կողմից և դարձել Բաղվաշների իշխանական տան կենտրոնը[8]: Կառուցվել է խիստ բարե-

---

[1] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 17:

[2] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Համամաշեն-Համշենի հիմնադրման ժամանակի շուրջ,- «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», Ե., 2009, էջ 218-228:

[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 296:

[4] Տե՛ս **Ասողիկ**, էջ 256, 279:

[5] Տե՛ս «Ջուանշէրի պատմչի համառօտ պատմութիւն Վրաց», Վենետիկ, 1884, էջ 11:

[6] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 296:

[7] Տե՛ս **Մ. Յովհաննէսեան,** Հայաստանի բերդերը, էջ 580:

[8] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 31:

նպաստ վայրում, որը գերիշխում է տեղանքի վրա[1]:

Կալա իբն Քանդաման (Գարդաբանի բերդ): Գտնվում էր Ծանարաց քորեպիսկոպոսության կազմում՝ Գարդաբան երկրամասում[2]: Գարդաբանի ամենակարևոր բերդն էր, որը հսկողություն էր սահմանում Պարտավ-Տփղիս ճանապարհի վրա:

Բոճորմա: Հանդիսանում էր Ծանարաց քորեպիսկոպոսության կենտրոնը մինչև 881 թ.: Գտնվում էր Կամբեճ (Իոր) գետի վերին հոսանքի աջ ափին: Հայ Բագրատունիների տերության շրջանում հիշատակվում է որպես բերդ[3]:

Ուջարմա: Այս հինավուրց բերդը գտնվում էր Բոճորմայից հարավ՝ Կամբեճ գետի աջ ափին[4]: Պարիսպներն ավերվել են Ատրպատականի Յուսուֆ ամիրայի արշավանքի ժամանակ՝ X դ. սկզբին[5]: Հին բերդ էր, որը Ծանարաց քորեպիսկոպոսության ստեղծումից հետո հանդիսացել է նրա կենտրոնը, սակայն շուտով իր տեղը զիջել է Բոճորմային, որից հետո որպես կենտրոն հանդես է եկել Թիանեթը (Բոդոջ պալատ)[6]:

Վժան (Վեժին): Գտնվում էր Աղվանքում՝ Ծանարաց քորեպիսկոպոսության սահմանի մոտ: 915 թ. բերդը պաշարվել էր Ծանարաց քորեպիսկոպոսության և Աբխազաց թագավորության զորքերի կողմից, սակայն մնացել էր անառիկ[7]:

Օրչոբ: Գտնվում էր Աղվանից թագավորության կազմում՝ Ծանարաց քորեպիսկոպոսության սահմանի մոտ: 915 թ. Աղվանից թագավոր Ատրներսեհը այն զիջել էր Ծանարաց Կվիրիկե քորեպիսկոպոսին[8]:

6.3. Հայ Բագրատունիների տերության վանքերն ու եկեղեցիները: Հայ Բագրատունիների տերությունը հարուստ էր վանքերով և եկեղեցիներով: Հայտնի է, որ արաբական տիրապետության շրջանում արաբները հալածանքների էին ենթարկում Հայոց և Վրաց եկեղեցիները: Այդ պայմաններում հին վանքերից և եկեղեցիներից շատերը թեև գոյատևում էին, սակայն նորերը գրեթե չէին հիմնադրվում:

Հայ Բագրատունիների տերության ստեղծումով նրա կազմում գտնվող երկրները ներքին գործերում ինքնուրույնություն ձեռք բերեցին: Քաղաքների զարգացմանը զուգընթաց սկսում են զարգանալ

---

[1] Տե՛ս **Պ. Закария**, Древние крепости Грузии, էջ 16:
[2] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Զ, էջ 175:
[3] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 32-33:
[4] Տե՛ս **Պ. Закария**, Древние крепости Грузии, էջ 14:
[5] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 32-33:
[6] Տե՛ս "Очерки истории Грузии", т. II, էջ 258:
[7] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 127, "Матиане Картлиса", էջ 33:
[8] Տե՛ս **Âàõóøòè Áàãðàòèîíè**, էջ 127, "Матиане Картлиса", էջ 33:

հնուց գոյություն ունեցող վանքերն ու եկեղեցիները և, միևնույն ժամանակ, կառուցվում են բազմաթիվ նորերը: Պատմիչները գովեստով են խոսում իշխանների եկեղեցաշինական գործունեության մասին:

Եկեղեցական շինարարությամբ, որը Հայ Բագրատունիների տերության կազմավորման և հզորացման շրջանում մեծ թափ էր ստացել, հատկապես աչքի էին ընկնում Հայ Բագրատունիների արքունի տիրույթները, Վասպուրականի, Սյունիքի և Հայոց Արևելից կողմերի իշխանությունները, ինչպես նաև Կղարջքի կուրապաղատությունն ու Սամցխեն:

Չնայած Հայաստանում և Հայ Բագրատունիների տերություն մեջ մտնող երկրներում հնուց ի վեր գոյություն ունեին հարյուրավոր վանքեր ու եկեղեցիներ, ստորև կանդրադառնանք Հայ Բագրատունիների տերության հատկապես այն վանքերին և եկեղեցիներին, որոնք տերության հետ կապված զարգացումներում կարևորություն ունեին և հաճախ են հիշատակվում սկզբնաղբյուրներում: Բացի այդ, կխոսենք նաև այն եկեղեցիների մասին, որոնք պատկանում են հայ դասական ճարտարապետության շրջանին (IV-VI դդ.)[1]: Վերջիններս իրենց ճարտարապետական հորինվածքով կարևոր տեղ են զբաղեցնում հայկական ճարտարապետության պատմության մեջ և զգալի ազդեցություն են թողել այսրկովկասյան երկրների եկեղեցական ճարտարապետության զարգացման վրա: Բացի բազիլիկ եկեղեցիներից, որոնք տիրապետող էին հայ դասական ճարտարապետության շրջանում, արդեն V դ. Հայաստանում ի հայտ են գալիս կենտրոնագմբեթ տաճարներ, ինչպիսիք էին Վաղարշապատի Մայր Տաճարն ու Տեկորի եկեղեցին, որոնք հետագա դարերում գմբեթավոր եկեղեցիների զարգացման և տարածման առումով հսկայական դեր ունեցան[2]:

Պետք է նշել, որ հայկական եկեղեցական ճարտարապետությունն արդեն VII դ. առաջնակարգ դեր ուներ ամբողջ քրիստոնյա Արևելքում[3]: Հայտնի է, որ մինչև VII դ. սկիզբը Հայոց և Վրաց եկեղեցիները միասնական էին, ուստի բնական է, որ նաև եկեղեցական ճարտարապետու-

---

[1] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Հայ ճարտարապետության պատմության պարբերացման հարցի շուրջ,-«ՊԲՀ», 1971, թիվ 3, էջ 87, 90-92:

[2] Տե՛ս **А. Казарян,** Архитектура стран Закавказья VII в.: формирование и развитие традиции, автореферат диссертации на соискание ученой степени доктора искусствоведения, М., 2007, էջ 19:

[3] Անդ, էջ 4:

թյունը պետք է միասնական լիներ[1]: Հայ և վրաց իրականության մեջ այս բնագավառում տարբերությունները սկսում են հստակորեն ի հայտ գալ X-XI դդ.[2]: Մինչև այդ Հայաստանի և այսրկովկասյան երկրների ճարտարապետության ընդհանուր ձևերի և լուծումների առումով գլխավոր կենտրոններն էին Արարատյան դաշտը, Արագածոտնը, Շիրակը, Գուգարքն ու Վիրքը[3]:

Հայաստանի վանքերն ու եկեղեցիները.

Հայ Բագրատունիների արքունի տիրույթներ:

Վաղարշապատի (Էջմիածնի) Մայր Տաճար: Կառուցվել է Գրիգոր Լուսավորիչի կողմից: Կառուցումն ավարտվել է 303 թ.: Տարբեր ժամանակներում կոչվել է «Վաղարշապատի կաթողիկե» կամ «Կաթողիկե»[4], ինչպես նաև Սբ. Էջմիածին[5]:

484 թ. Հայոց հայրապետական աթոռը տեղափոխվեց Դվին, սակայն Էջմիածնի Մայր Տաճարն իր նշանակությունը չկորցրեց: Ըստ Ղազար Փարպեցու՝ տաճարը հիմնովին վերանորոգել է Հայոց մարզպան Վահան Մամիկոնյանը[6]: Այդ ժամանակ Մայր Տաճարը ստացավ այն տեսքը, որն ունի մինչև այսօր: Ըստ Սեբեոսի՝ Տաճարի փայտե ծածկը քարե ծածկով փոխարինվել է Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի (616-628) օրոք, ինչպես նաև վերանորոգվել է տաճարի պատերից մեկը[7]:

Թեև խնդրո առարկա շրջանում Հայոց կաթողիկոսի նստավայրը չէր, սակայն Հայոց հոգևոր կյանքում ուներ խիստ կարևոր նշանակություն:

Դվինի Մայր Եկեղեցի: Կառուցվել էր դեռևս V դ. և կոչվել Սբ. Գրիգորի անունով: VI դ. այրվել է[8], բայց շուտով վերականգնվել: Սեբեոսն այն հիշատակում է Մորիկ կայսեր օրոք (582-602), երբ Մովսես Բ Եղվարդցի կաթողիկոսը (574-604) հրաժարվեց կատարել կայսեր պահանջը՝ ընդունելու քաղկեդոնական դավանանքը, և կայսեր կողմից նրան

---

[1] Անդ, էջ 6: Տե՛ս նաև **Ց. Акопян**, Стелы Армении, и Грузии. к вопросу о культурной общности в раннехристианский период,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 2010, թիվ 1-2, էջ 403-418:

[2] Տե՛ս **А. Казарян**, նշվ. աշխ., էջ 6: Պետք է նշել, որ վարցական գրականության մեջ VII դ. երկրորդ կեսից մինչև X դ. կեսերն ընկած ժամանակահատվածը համարվում է այսպես կոչված «անցումնային փուլ» վրացական ճարտարապետության զարգացման մեջ (տե՛ս В. Баридзе, Грузинская архитектура переходного периода,-Международный симпозиум по грузинскому искусству, сб. докладов., Тб., 1989, էջ 85-86):

[3] Տե՛ս **А. Казарян**, նշվ. աշխ., էջ 18:

[4] Տե՛ս **Ղազար Փարպեցի**, էջ 26, 380, **Սեբեոս**, էջ 121 և այլն:

[5] Տե՛ս «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», էջ 14:

[6] Տե՛ս **Ղազար Փարպեցի**, էջ 380:

[7] Տե՛ս **Սեբեոս**, էջ 121:

[8] Անդ, էջ 68:

հակաթոռ կաթողիկոս նշանակվեց Հովհան Բագարանցին (600-616)[1]: Այդ ժամանակ, ըստ պատմիչի՝ Սբ. Գրիգոր եկեղեցու ողջ սպասքը տեղափոխվեց Կարնո քաղաք[2]: Ինչ վերաբերում է Սեբեոսի այն հիշատակությանը, թե Դվինի Սբ. Գրիգոր եկեղեցին կառուցվել է Հայոց կաթողիկոս Աբրահամ Ռշտունու օրոք (607-616)[3], ամենայն հավանականությամբ, 608 թ., ապա կարծում ենք, որ խոսքը եկեղեցու վերանորոգման մասին է: Ըստ որում՝ այդ գործն ավարտվել է արդեն Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի օրոք[4]:

Դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ արաբական տիրապետության շրջանում Հայոց կաթողիկոսների հիմնական նստավայրը Դվինն էր: Սակայն, նրանք այս կամ այն պատճառով երբեմն հեռանում էին այնտեղից, իսկ արաբները նրանց վերստին վերադարձնում էին Դվին: Այսպես, արաբների հարստահարությունների պատճառով Դվինից հեռացած Դավիթ կաթողիկոսից (728-741) հետո Արմինիայի ոստիկանը Սիոն կաթողիկոսին (767-775) տեղափոխեց Դվին[5]: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Դվինի 863 թ. երկրաշարժից կաթողիկոսանիստը չէր տուժել[6], սակայն ավերվել էր 893 թ. երկրաշարժից[7]: Դրանից հետո Հայոց կաթողիկոսները տեղափոխվեցին սկզբում Վասպուրական (Ձորո վանք), իսկ այնուհետև Վաղարշապատ[8]:

Հովհաննավանք: Համանուն վանական համալիրի ամենահին տաճարն է: Ավանդությունը Հովհաննավանքի կառուցումը վերագրում է Գրիգոր Լուսավորիչին: Պատմագրության մեջ առաջին հիշատակությունները պատկանում են VII դ. սկզբին[9]: Հիշատակվում է նաև Ուխտանեսի կողմից[10]: Ճարտարապետական ձևերի և լուծումների քննությունը ցույց է տալիս, որ այն կառուցվել է IV-V դդ.[11]: Հայ դասական

---

[1] Այդ մասին մանրամասնորեն տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հայոց եկեղեցին և քաղկեդոնականությունը VII դարում,-ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», 2008, էջ 289-290:

[2] Տե՛ս **Սեբեոս**, էջ 91:

[3] Անդ, էջ 100:

[4] Անդ, էջ 112:

[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 110:

[6] Անդ, էջ 136:

[7] Անդ, էջ 164:

[8] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 358:

[9] Տե՛ս «Գիրք թղթոց», մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 111, 151, 172:

[10] Տե՛ս **Ուխտանես**, էջ 64:

[11] Տե՛ս **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Եր., 1942, էջ 131, Տե՛ս **Գ. Հովսեփյան**, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Գ, Նյու-Յորք, 1944, էջ 20:

ճարտարապետության շրջանի այս արժեքավոր հուշարձանը գտնվում է Արագածոտն գավառում:

Տեկորի Սբ. Սարգիս եկեղեցի: Հայաստանի հնագույն տաճարներից է, որը կառուցվել է V դ.[1]: Կարծիք կա, որ այն նախկինում եկել է հեթանոսական տաճար, որը հիմնովին վերակառուցվել է V դ.[2]: Ղ. Ալիշանը կարծում է, որ, հավանաբար, այն Հայաստանի ամենահին եկեղեցիներից է[3]: Եկեղեցու կառուցման արձանագրության մեջ որպես կառուցող հիշատակված է Սահակ Կամսարականը՝ Արշավիր Արշարունի Կամսարականի որդին, որը գործել է Վահան Մամիկոնյանի օրոք և Հովհան Մանդակունու կաթողիկոսության տարիներին (478-490)[4]:

Տեկորի եկեղեցին V դ. եզակի կենտրոնագմբեթ եկեղեցիներից է, որոնք մեծ դեր խաղացին գմբեթավոր եկեղեցիների զարգացման և տարածման առումով[5]:

Ավանի եկեղեցի: Կառուցվել է VI դ. երկրորդ կեսին՝ նախքան 590 թ.[6]: Հովհաննես Դրասխանակերտցին այն անվանում է «զպայծառակերտ քաւարան սուրբ»[7]: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն կառուցել է Հովհան Բագարանցին՝ նախքան կաթողիկոս դառնալը[8]:

Ավանի եկեղեցին ճարտարապետական ոճով յուրահատուկ տեղ է գրավում: Այն՝ ավանդական բազիլիկային շինությունների միջավայրում հանդես գալով որպես ճարտարապետական նորույթ, սակայն, որոշ նմանություններ ունի Վաղարշապատի Մայր Տաճարի հորինվածքին[9]: Նրա կառուցմամբ հայկական ճարտարապետության մեջ սկիզբ դրվեց նոր ոճի, որը շուտով տարածվեց Հայաստանում և մուտք գործեց Վիրք՝ դառնալով նախատիպ բազմաթիվ եկեղեցիների համար: Այդ ոճի

---

[1] Տե՛ս **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. 1, էջ 188:

[2] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Տեկորի տաճարի V դարի հայերեն արձանագրությունը և մեսրոպյան այբուբենի առաջին տառաձևերը,-«ՊԲՀ», 1962, թիվ 2, էջ 39-40: Տե՛ս նաև **Н. Токарский**, Архитектура Армении IV-XIV веков, Ер., 1961, էջ 82-83:

[3] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շիրակ, էջ 131-133:

[4] Տե՛ս **Ղազար Փարպեցի**, էջ 392: Տե՛ս նաև **Ղաֆադարյան Կ.**, Տեկորի տաճարի V դարի հայերեն արձանագրությունը և մեսրոպյան այբուբենի առաջին տառաձևերը, էջ 45-46:

[5] Տե՛ս **А. Казарян**, նշվ. աշխ., էջ 19:

[6] Մանրամասնորեն տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Պատմահնագիտական դիտողություններ Ավանի տաճարի վերաբերյալ,-«ՊԲՀ», 1968, թիվ 3, էջ 76:

[7] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 74: Տե՛ս նաև **Սեբեոս**, էջ 112:

[8] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Պատմահնագիտական դիտողություններ Ավանի տաճարի վերաբերյալ, էջ 89-90:

[9] Տե՛ս **А. Казарян**, նշվ. աշխ., էջ 19:

նշանավոր օրինակները Հայաստանում Վաղարշապատի Սբ. Հռիփսիմե և Վիրքում Մծխեթայի Ջվար (Սբ. Խաչ) եկեղեցիներն են[1]: Ավանի և Վաղարշապատի Սբ. Հռիփսիմեի եկեղեցիներն ընդհանրապես դարձան ուղղորդիչներ Հայաստանում և Այսրկովկասում գմբեթավոր եկեղեցիների շինարարության զարգացման համար[2]:

Պտղնիի եկեղեցի: Կոտայք գավառում գտնվող այս եկեղեցին հայկական ճարտարապետության այն կոթողներից է, որոնք ճարտարապետական լուծումների առումով հանդիսացել են նախատիպ հետագայում կառուցված շատ եկեղեցիների համար[3]: Ուսումնասիրողների կողմից եկեղեցու կառուցումը երբեմն թվագրվել է VI-VII դդ.[4]: Սակայն, եկեղեցին, դատելով VI-VII դդ. սահմանագլխին հայ եկեղեցաշինության մեջ նկատվող մի շարք օրինաչափություններից, կառուցվել է VII դ. առաջին տասնամյակներին[5]: Ըստ եկեղեցու պատին պահպանված արձանագրության՝ կառուցվել է Մանվել (Մանուեղ) Ամատունու հանձնարարությամբ[6]:

Վաղարշապատի Սբ. Գրիգոր եկեղեցի (Զվարթնոց): Կառուցվել է VII դ., հավանաբար, 652 թ.[7], Հայոց կաթողիկոս Ներսես Գ-ի կողմից: Ըստ Սեբեոսի՝ Ներսես Գ-ն «շինեաց անդ և եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն...: Եւ շինեաց զեկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանալեաւք, արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացն»[8]: Ներսես Գ-ն եկեղեցու կառուցումն ավարտին է հասցրել արդեն Թեոդորոս Ռշտունու մահից հետո, երբ հնարավորություն ստացավ վերադառնալու Վաղարշապատ[9]: Ասողիկը այն կոչում է «Սուրբ Գրիգոր հրաշապայծառ եկեղեցի»[10]: Դվինի 893 թ. երկրաշարժից հետո, երբ այստեղ հաստատվեց Հայոց կաթողիկոսը, կարճ ժամանակով հանդիսացել է կաթողիկոսանիստ[11]: Սակայն, արդեն Ափշինի 897 թ. արշա-

---

[1] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Պատմահնագիտական դիտողություններ Ավանի տաճարի վերաբերյալ, էջ 76-90, **Н. Токарский**, Архитектура Армении IV-XIV веков, էջ 132, Казарян А., նշվ. աշխ., էջ 20-21:

[2] Տե՛ս **А. Казарян**, նշվ. աշխ., էջ 23:

[3] Տե՛ս **Н. Токарский**, Архитектура Армении IV-XIV веков, էջ 105-107:

[4] Տե՛ս **Գ. Հովսեփյան,** Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Գ, էջ 29, **Н. Токарский,** Архитектура древней Армении, էջ X և այլն:

[5] Տե՛ս **Ս. Մնացականյան,** Պտղնիի տաճարը,-«ՊԲՀ», 1961, թիվ 3-4, էջ 219-220:

[6] Անդ, էջ 232-234:

[7] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 136:

[8] Տե՛ս **Սեբեոս**, էջ 147:

[9] Անդ, էջ 175:

[10] Տե՛ս **Ասողիկ**, էջ 88-89:

[11] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 358:

վանքի ժամանակ Հայոց կաթողիկոսը նստում էր Վասպուրականում[1]:

Զվարթնոցի տաճարի ճարտարապետական հորինվածքը լուրջ հետք թողեց Հայաստանի և այսրկովկասյան երկրների եկեղեցական ճարտարապետության մեջ, որի արդյունքում այդ երկրներում կառուցվեցին մի շարք զվարթնոցատիպ տաճարներ, որոնցից հայտնի են Տայքի Իշխան ավանի, Բանակ գյուղի, Անի մայրաքաղաքի և ներկայիս Զաքաթալայի շրջանի Լեկիտ գյուղի տաճարները[2]:

Վաղարշապատի Սբ. Հռիփսիմե եկեղեցի: Սբ. Հռիփսիմե եկեղեցին հիմնադրվել է 618 թ.՝ Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի կողմից: Ըստ Սեբեոսի՝ եկեղեցու տեղում մատուռ կար՝ կառուցված Սահակ Պարթևի օրոք, որը Կոմիտաս կաթողիկոսի հրամանով քանդվեց: Մատուռի տեղում կառուցվեց հոյակապ եկեղեցի[3], որը կանգուն է մինչև այսօր: Այս եկեղեցու ճարտարապետական նախատիպը, ինչպես տեսանք, եկել է Ավանի եկեղեցին: Նմանատիպ մեկ այլ եկեղեցի մի փոքր ուշ կառուցվեց նաև Վիրքում (Մծխեթայի Զվար եկեղեցին): Բացի ակնհայտ նմանությունից, համընկնում են նույնիսկ Վաղարշապատի Սբ. Հռիփսիմե և Մծխեթայի Զվար եկեղեցիների չափսերը[4]:

Վաղարշապատի Սբ. Գայանե եկեղեցի: Սբ. Գայանե եկեղեցին կառուցվել է Հայոց կաթողիկոս Եզրի օրոք (630-641) մոտ 630 թ.: Եկեղեցու տեղում գտնվել է համանուն մատուռը[5]:

Թալինի Սբ. Աստվածածին եկեղեցի: Կամսարականների կողմից հիմնադրված միակ եկեղեցին է, որ գտնվում է Արագածոտն գավառում: Կառուցման ժամանակի մասին միասնական կարծիք գոյություն չունի: Ամենայն հավանականությամբ, Մրենի տաճարի ժամանակակից (VII դ. առաջին կես) եկեղեցի է[6]: Հայկական ճարտարապետության արժեքավոր հուշարձաններից է, որի շինարարական արձանագրությունը կարևոր է Կամսարականներին վերաբերող որոշ հարցերի լուսաբանման համար[7]:

Բագավանի եկեղեցի: Հայաստանի հնագույն եկեղեցիներից մեկն

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 184:

[2] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Զվարթնոց (դիտողություններ),-«ՊԲՀ», 1959, թիվ 4, էջ 174, **Н. Токарский**, Архитектура Армении IV-XIV веков, էջ 132, С. Мнацаканян, Звартноц. памятник армянского зодчества VII века, М., 1971, էջ 59-61:

[3] Տե՛ս **Սեբեոս**, էջ 121: Տե՛ս նաև **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 76-78:

[4] Տե՛ս **Ա. Казарян**, նշվ. աշխ., էջ 33:

[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 82:

[6] Տե՛ս **Ա. Մանուչարյան,** Մրենի և Թալինի տաճարների շինարարական արձանագրությունները,-«ՊԲՀ», 1966, թիվ 1, էջ 251:

[7] Անդ, էջ 247-252:

էր, որը, ըստ Մխիթար Այրիվանեցու՝ կառուցվել է ապագա Հայոց կաթողիկոս Ներսես Գ-ի օրոք[1]: Դա տեղի է ունեցել, ըստ եկեղեցու հիմնադրման արձանագրության՝ 639 թ.[2]: Եկեղեցին, ինչպես նկարագրում է Հովհաննես Դրասխանակերտցին, շատ հարուստ էր ու գրավում էր արաբների ուշադրությունը: Այն թալանվել էր արաբների կողմից Եգիտ ոստիկանի օրոք (Յազիդ իբն Ուսայդ աս-Սուլամի (752-54 թթ., 759-69 թթ., 775-780 թթ.)[3]:

Եկեղեցին հայտնի է եղել երկու անուններով՝ սկզբնապես Սբ. Հովհաննես[4], իսկ այնուհետև, թերևս VII դ. կեսերից, Սբ. Գրիգոր[5]:

Արուճի Սբ. Գրիգոր եկեղեցի: Կառուցվել է 667 թ. Հայոց և Վրաց իշխան Գրիգոր Մամիկոնյանի (662-685) կողմից: Ըստ Ղևոնդի՝ «շինեաց նա (իմա-Գրիգոր Մամիկոնյան-Ա.Ե.) տուն աղօթից ի գաւառն Արագածոտին ի յաւանն Արուճ, տաճար փառաց անուան տեառն գեղեցիկ վայելչութեամբ, զարդարեալ ի յիշատակ անուան իւրոյ»[6]: Հովհաննես Դրասխանակերտցին այն անվանում է «չքնաղագեղ եկեղեցի» և «երկնային իմն ճեմարան...ի վերայ երկրի»[7]: Ասողիկն այն կաթողիկե է անվանում[8]: Արուճի Սբ. Գրիգոր եկեղեցին միջնադարյան Հայաստանի ամենամեծ եկեղեցիներից մեկն էր: Թեև խնդրո առարկա շրջանում չի հիշատակվում, սակայն, ամենայն հավանականությամբ, կարևոր դեր է խաղացել, քանի որ Արուճը, որը եկեղեցու շինարարության ժամանակ ավան էր, զարգացում էր ապրել և Հայ Բագրատունիների տերության շրջանում վերածվել քաղաքագյուղի[9]:

Արամոնսի վանք: VIII դ. որոշ ժամանակով հանդիսացել է կաթողիկոսանիստ: Հովհաննես Օձնեցուն (717-728) փոխարինած Դավիթ կա-

---

[1] Տե՛ս **Մխիթար Այրիվանեցի,** էջ 60: Տե՛ս նաև **Ս. Մնացականյան**, Բագավանի տաճարի շինարարական արձանագրության վերծանման հարցի շուրջը,-«ՊԲՀ», 1964, թիվ 2, էջ 224:

[2] Տե՛ս **И. Орбели,** Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII в.,-"Христянский Восток", т. II, вып. I, СПб., 1913, էջ 113-122:

[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 110-112:

[4] Եկեղեցու՝ սկզբնապես Սբ. Հովհաննես Մկրտիչի անունով կոչվելու օգտին է խոսում այն իրողությունը, որ Տրդատ Գ-ի և Գրիգոր Լուսավորչի հաստատած կարգով Բագավանում ամեն տարի նշվում էր Հովհաննես Մկրտիչի հիշատակի տոնը (տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 184):

[5] Տե՛ս **И. Орбели**, Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII в., էջ 105, **Ս. Մնացականյան,** Բագավանի տաճարի շինարարական արձանագրության վերծանման հարցի շուրջը, էջ 217:

[6] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 15:

[7] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 94:

[8] Տե՛ս **Ասողիկ**, էջ 99:

[9] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 198:

թողիկոսի (728-741) մասին Հովհաննես Դրասխանակերտցին պատմում է, թե «վասն զի ի բնակչաց հեթանոսաց ի Դվին քաղաքի յոյժ տաղտկացեալ լինէր այրն Աստուծոյ Դաւիթ, այլ և բազում չար ոճիրք զնա նեղեցին. ապա տագնապեալ և արտաքս ի միջոյ նոցա...շինէ եկեղեցի ի գեօղն Արամոնս»[1]: Արամոնք գյուղը Հայոց կաթողիկոսների սեփականությունն էր: Գտնվում էր Կոտայքում:

Մրենի կաթողիկե եկեղեցի: Միջնադարյան Հայաստանի այս հռչակավոր եկեղեցին[2] կառուցվել է VII դ. Հայոց իշխան Դավիթ Սահառունու օրոք, Բյուզանդիայի Հերակլ կայսեր գահակալության շրջանում: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ «ի հրամանէ նորուն (իմա՛ Դավիթ Սահառունու-Ա.Ե.) շինէր իսկ եկեղեցին գեղեցկայարմար, որ ի քաղաքագեղն Մրեն»[3]: Թեև սկզբնաղբյուրներում հիմնադիր է համարվում Դավիթ Սահառունին[4], պահպանված արձանագրությունները ցույց են տալիս, որ կառուցումը սկսվել է 623 թ. Ներսես Կամսարականի կողմից, երբ Հայաստանի կուրապաղատն էր Դավիթ Սահառունի իշխանը: Կառուցումն ավարտվել է 640 թ.[5]:

Խնդրո առարկա շրջանում թեև չի հիշատակվում, սակայն, անկասկած, կարևոր դեր ուներ Հայ Բագրատունիների տերության հոգևոր կյանքում, քանի որ Մրեն բնակավայրն աճում էր և Հովհաննես Դրասխանակերտցու օրոք վերածվել քաղաքագյուղի[6]:

Բանակ վանք[7]: Հինավուրց այս վանքը, որը հիմնադրվել է VII դ., վերակառուցվել է Կղարջքի թագավոր Ատրներսեհի օրոք՝ Սմբատ Ա-ի կողմից նրան թագադրելուց (899 թ.) անմիջապես հետո[8]: Կարծում ենք,

---

[1] Անդ, էջ 108:

[2] Տե՛ս **Մ. Տեր-Մովսիսյան,** Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիներ, Վաղարշապատ, 1911, էջ 105:

[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 82:

[4] Անդ: Տե՛ս նաև **Կիրակոս Գանձակեցի**, էջ 53: **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, էջ 297, **Н. Токарский**, Архитектура Армении IV-XIV веков, էջ 97:

[5] Տե՛ս **Ս. Մնացականյան**, Ե՞րբ է կառուցվել Մրենի տաճարը,-«ՊԲՀ», 1969, թիվ 3, էջ 149-164:

[6] Տե՛ս **Բ. Առաքելյան**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, էջ 84:

[7] Տայքի այս և մնացյալ հայկական ճարտարապետական հուշարձանների մասին մանրամասն տե՛ս **Н. Токарский**, Архитектура древней Армении (Е., 1946), **Տ. Մարության,** Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք (Եր., 1978), նույնի՝ Հայ դասական ճարտարապետության ակունքներում (Հայաստանի և Վրաստանի վաղ միջնադարյան հուշարձաններ), (Եր., 2003): Տե՛ս նաև **Н. Северов**, Памятники грузинского зодчества, архитектурные альбомы, М., 1947.

[8] Տե՛ս **Сумбат Давитис-дзе**, էջ 33: Տե՛ս նաև **А. Казарян**, Храм Банак (Бана): новое исследование.-"Архитектурное наследство", вып. 48, М., 2007, էջ 4–22:

որ այդ տեղի է ունեցել X դ. սկզբին՝ երբ Տայքի հյուսիսային որոշ շրջաններ, ինչպես տեսանք, կարճ ժամանակով մտնում էին Ատրներսեհ Բագրատունու տիրույթների մեջ: Այդուհետ հանդես է եկել որպես եպիսկոպոսանիստ[1]:

Իշխանի վանք: Կառուցվել է ապագա Հայոց կաթողիկոս Ներսես Գ Տայեցու (641-661) կողմից՝ նրա հայրենի Իշխան գյուղում[2]: Ըստ Գեորգի Մերչուլի՝ այն վերանորոգվել է Գրիգոր Խանձթեցու հետ եղած վանականներից նրա մորաքրոջ որդի Սավվայի (Սաբան) կողմից[3]: Վերջին տեղեկության հետ կապված պետք է նշել, որ Գրիգոր Խանձթեցու գործունեությունը՝ դատելով նրա հիմնադրած կամ վերանորոգած վանքերի ու եկեղեցիների աշխարհագրությունից, հիմնականում կենտրոնացած էր Խանձթա վանքի շրջակա տարածքներում, մինչդեռ Իշխանի վանքը գտնվում էր Տայքի և Կղարջքի սահմանին՝ Տայքում:

Իշխանի լքված վանքը Գրիգոր Խանձթեցին և Սաբանը տեսել էին 826 թ.՝ Կոստանդնուպոլսից վերադառնալիս: Սաբանը ցանկացավ անմիջապես անցնել վանքի վերականգնման աշխատանքներին, սակայն Գրիգոր Խանձթեցին առաջարկեց նախ գնալ Կղարջք՝ Խանձթա վանք[4]: Կղարջքում նրանց հայտնի դարձավ Աշոտ իշխանի մահվան մասին, և երկու հոգևորականները ցավակցություն հայտնեցին Աշոտի որդիներին, որից հետո Սաբանը մեկնեց Իշխան[5]:

Գրիգոր Խանձթեցուն շուտով հետաքրքրեց, թե ինչ վիճակում է Սաբանը: Վերջինիս մասին նա պատմեց Կղարջքի Բագրատ (Բագարատ) կուրապաղատին, որը մարդ ուղարկեց՝ Սաբանին հրավիրելու իր մոտ: Վերջինս հրաժարվեց գալ, և կուրապաղատը նոր նամակ ուղարկեց՝ կցելով նաև Գրիգոր Խանձթեցու նամակը: Այս անգամ Սաբանը եկավ՝ հատկապես դրդված Գրիգոր Խանձթեցու նամակից[6]:

Երբ կուրապաղատն ընդունեց Սաբանին, ապա հարցրեց, թե ինչու նա հրաժարվեց ներկայանալ իր հրավերով: Սաբանը պատասխանեց, որ ծառայում է միայն Քրիստոսին և այժմ էլ եկել է միայն Գրիգոր Խանձթեցու կանչով: Մեր կարծիքով, պատճառն այն էր, որ Տայքը Հայ

---

[1] Տե՛ս Сумбат Давитис-дзе, էջ 33:

[2] Տե՛ս Георгий Мерчуле, գլ. XXVI: Н. Токарский, Архитектура Армении IV-XIV веков, էջ 128-132:

[3] Անդ, գլ. V: Ն. Տոկարսկին կարծում է, որ Սաբանը Իշխանի վանքը ոչ թե վերակառուցել, այլ բերել է այն վիճակի, որ հնարավոր լինի այնտեղ պատարագ մատուցել (տե՛ս Н. Токарский, Архитектура древней Армении, էջ 132):

[4] Տե՛ս Георгий Мерчуле, գլ. XIV:

[5] Անդ, գլ. XIV:

[6] Անդ, գլ. XXVI:

Բագրատունիների տիրույթն էր, ուստիև Իշխանի վանքում հաստատված Սաբանը ենթարկվում էր Հայ Բագրատունիներին, սակայն, լինելով քաղկեդոնական՝ ընդունում էր Գրիգոր Խանձթեցու հոգևոր իշխանությունը: Այդ դեպքից հետո Բագարատ կուրապաղատը Գրիգորի և Սաբանի հետ այցելեց Իշխան: Հետագայում Սաբանը դարձավ Իշխանի եպիսկոպոս[1]:

Աշունք (Օշկ) վանք: Գտնվում էր Տայքի Ազորդաց Փոր գավառում: Ըստ Վարդան վարդապետի՝ «Սահակ Մռուտն կոչեցեալ, որ եպիսկոպոս էր Տայոց ի յԱշունքն, և հալածեալ անտի վասն հաւատոց (իմա՛ դավանանքի-Ա.Ե.), եկն ի Հայս առ Աշոտ (իմա՛ Աշոտ իշխանաց իշխան-Ա.Ե.)»[2]: Դա տեղի էր ունեցել 876 թ. առաջ: Պետք է եզրակացնել, որ այդ ժամանակ Տայքում քաղկեդոնականներն այնքան էին զորեղացել, որ դավանանքի պատճառով այնտեղից հալածել էին Աշունքի եպիսկոպոսին: Թերևս այդ ժամանակներից էլ սկսվել էր Աշունքի վանքի քաղկեդոնականացման գործընթացը: Ամենայն հավանականությամբ, Հայ Բագրատունիների հզորացման շրջանում այդ գործընթացը դադարել էր: Սմբատ Ա-ի օրոք Տայքից դուրս էր մղվել Կղարջքի Բագրատունիների ճյուղին պատկանող Գուրգենը՝ հաստատվելով Շավշքում, և քաղկեդոնականները Տայքում անկարող էին զգալի գործունեություն ծավալել: Բացի այդ, ինչպես տեսանք, Սմբատ Ա-ն պատժիչ արշավանք էր իրականացրել դեպի Կղարջք, քանի որ տեղի Ատրներսեհ Բագրատունի թագավորը մասնակցել էր Հայոց թագավորի դեմ դավադրությանը: Այդուհետ, մինչև Սմբատ Ա-ի մահը, քաղկեդոնականները Տայքում ակտիվություն չէին ցուցաբերում: X դ. կեսերին միայն այստեղ Բագրատունիները սկսում են լայն եկեղեցաշինական աշխատանքներ իրականացնել[3]:

Երազգավորսի Սբ. Փրկիչ եկեղեցի: Կառուցվել է Հովհաննես Դրասխանակերտցի (898-929) կաթողիկոսի գահակալության առաջին տարում[4]: Այստեղ է Հայոց թագավոր օծվել Սմբատ Ա-ն[5]: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ Բուղայի արշավանքների շրջանում Երազգավորսում գումարվում է եպիսկոպոսների ժողով, որտեղ կաթողիկոս է ընտրվում Զաքարիան (855-876)[6]: Կարծում ենք, որ այնտեղ

---

[1] Անդ, գլ. XXVI:
[2] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 91:
[3] Տե՛ս **Сумбат Давитис-дзе**, էջ 33 և այդուհետ:
[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 186:
[5] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 92:
[6] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 130:

նախապես վանք է եղել, որտեղ էլ գումարվել է ժողովը: 898-899 թթ. Սբ. Փրկիչ եկեղեցու շինարարությունն ավարտվում է և կատարվում է նավակատիքը[1]:

Բագարանի եկեղեցի: Կառուցվել է մոտ 901թ.՝ Սմբատ Ա-ի եղբորորդի, Հայոց սպարապետ Աշոտի կողմից: Գտնվում էր քաղաքի՝ Ախուրյան գետին հարող հատվածում: Կառուցումից անմիջապես հետո կատարվել է եկեղեցու նավակատիքը[2]:

Կողբի եկեղեցի: Կառուցվել է մոտ 901-902 թթ.՝ Սմբատ Ա-ի եղբորորդի, Հայոց սպարապետ Աշոտի կողմից[3]:

Սյունյաց իշխանություններ: XI դ. միայն Սյունյաց թագավորության կազմում, որից դուրս էին մնացել Սյունիքի՝ Գեղամա ծովի շրջակա գավառները, Վայոց ձորը, Ճահուկն ու Երնջակը, սկզբնաղբյուրները հիշատակում են 48 վանք[4]: Կարելի է բխեցնել, որ դրանց մեծագույն մասը գոյություն ուներ նաև խնդրո առարկա շրջանում:

Սիսավանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Հայ դասական ճարտարապետության այն եզակի կոթողներից է, որոնք մեզ են հասել կանգուն վիճակում: Չնայած ըստ Ստեփաննոս Օրբելյանի՝ եկեղեցին կառուցվել է նախքան Հայոց թվականությունը («յառաջ քան զհայ թուականն», այսինքն՝ մինչև 551 թ.)[5], կառուցման ժամանակի մասին միասնական կարծիք գոյություն չունի: Ընդհանուր առմամբ, եկեղեցու կառուցումը թվագրվում է VI-VII դդ.[6]: Ս. Մնացականյանը, մանրամասն քննություն առնելով եկեղեցու ճարտարապետական հորինվածքը, արձանագրությունները և պատկերաքանդակները՝ կառուցման ժամանակը համարում է VII դ. 80-90-ական թվականները[7]: Գտնվում է ներկայիս Սիսիան քաղաքում:

Մաքենացվոց կամ Մաքենյաց վանք: Գեղարքունիքի ամենահայտնի և ամենախոշոր կալվածատեր վանքն էր[8]: Այրվել էր Բաբեկի կողմից[9], բայց հետագայում վերականգնվել: Այնուհետև տեղի վանականների մի մասը հեռացել էր Շիրակ, իսկ նրանցից Սողոմոնը դարձել Հա-

---

[1] Անդ, էջ 186:
[2] Անդ, էջ 196:
[3] Անդ, էջ 196-198:
[4] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 334, **Վարդան վարդապետ**, էջ 140-141: Տե՛ս նաև **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը, էջ 72-74:
[5] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 338:
[6] Տե՛ս **Ս. Մնացականյան**, Սիսավանի տաճարը,-«ՊԲՀ», 1965, թիվ 4, էջ 221:
[7] Անդ, էջ 221-230:
[8] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 179-183:
[9] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 326-327:

յոց կաթողիկոս (791-792)[1]: Մաքենացվոց վանքը Հայոց կաթողիկոսների կալվածքն էր: Հովհաննես կաթողիկոսը (833-855) Գեղարքունիքի կաթողիկոսական կալվածքներում շրջագայելիս վախճանվում է և թաղվում վանքի գերեզմանոցում[2]: Գրիգոր Սուփան Բ-ն վանքի տարածքում կառուցում է եկեղեցի՝ Սբ. Աստվածածին անունով՝ նվիրաբերելով գյուղեր, ագարակներ և այգիներ Գառնիում, Երևանում և այլ վայրերում[3]: Գտնվում էր Սողք գավառում:

Սբ. Աստվածածին և Սբ. Առաքելոց վանքեր: Գտնվում էին Գեղամա ծովի կղզում: Կառուցվել են Մաշտոց եպիսկոպոսի նախաձեռնությամբ 871-874 թթ.: Կառուցմանն աջակցել էր Վասակ Գաբուռ իշխանի տիկինը՝ Աշոտ Ա-ի դուստր Մարիամ իշխանուհին: Եկեղեցիներն ընդարձակ տիրույթներ ունեին ցամաքում[4]:

Շողագա (Շողվագա) Սբ. Պետրոս եկեղեցի: Կառուցվել է Մարիամ իշխանուհու նախաձեռնությամբ և կոչվել Պետրոս առաքյալի անունով: Գեղարքունյաց տիկինը նաև ընդարձակ տիրույթներ է նվիրել եկեղեցուն[5]: Ավերակները պահպանվել են Սևանա լճի հարավային ափին՝ Ջորագյուղի հարևանությամբ:

Կոթ գյուղաքաղաքի Սբ. Աստվածածին վանք (Կոթավանք): Կառուցվել է Գրիգոր Սուփան Բ-ի կողմից, իսկ այնուհետև պարսպապատվել[6]: Շուտով տեղի է ունեցել նավակատիքը, որի ժամանակ վանքին նվիրաբերվել են գյուղեր, իսկ քահանաների համար նշանակվել է աշխատավարձ[7]:

Վանեվանաց Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Կառուցվել է Գեղարքունիքի Վասակ Գաբուռ իշխանի տիկին Մարիամի նախաձեռնությամբ և Սմբատ Ա-ի եղբայր Շապուհի աջակցությամբ 903 թ.՝ հինավուրց Վանեվանաց վանքի տարածքում[8]: Շապուհ Բագրատունու հրամանով տեղադրվել է նաև կառուցման արձանագրությունը[9]: Եկեղեցուն նվիրաբերվել են նաև գյուղեր, սահմանվել է եկամուտ[10]: Ըստ Ստեփաննոս Օրբելյանի՝ այստեղ է թաղ-

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 112-114:
[2] Անդ, էջ 128:
[3] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 178-181:
[4] Անդ, էջ 173-174:
[5] Անդ, էջ 174-175:
[6] Անդ, էջ 176:
[7] Անդ, էջ 176-177:
[8] Անդ, էջ 182:
[9] Անդ:
[10] Անդ:

ված Սմբատ Ա թագավորը[1]:

Տաթևի մայր տաճար: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ IX դ. վերջին և X դ. սկզբին Սյունյաց իշխանները լայն եկեղեցաշինական գործունեություն էին ծավալել[2]: Այդ գործունեության մասին առավել մանրամասն է խոսում Ստեփաննոս Օրբելյանը: Պատմիչը՝ խոսելով Սյունյաց իշխանների եկեղեցաշինության մասին, ի մասնավորի անդրադառնում է Տաթևի վանքի մայր տաճարի շինարարությանը, որը սկսվել էր 895 թ. և ավարտվել 11 տարում: Այսինքն՝ շինարարությունն ավարտվել է 905 թ.: Դրանից հետո տեղի ունեցավ Տաթևի վանքի մայր տաճարի նավակատիքը, որին Սմբատ Ա-ի գլխավորությամբ հրավիրվել էին հայոց մեծամեծերը: Նրանք գյուղեր և հողեր ընծայեցին տաճարին: Ընդհանուր առմամբ, վանքը որպես պարգև ստանում է 14 գյուղ, մեկ ավան, մեկ բերդ և երկու այլ վանք: Այնուհետև, ըստ պատմիչի՝ արդեն 906 թ., կազմվեցին ընծաների վավերագիրը[3]:

Վասպուրականի իշխանություն:

Չորս վանք: Ըստ ավանդության՝ վանքի տեղում եղել է Գրիգոր Լուսավորչի կողմից կառուցված Սբ. Հռիփսիմյանց վկայարանը[4]: Վերանորոգվել է Ներսես Գ կաթողիկոսի օրոք: Կարճ ժամանակով հանդիսացել է Հայոց Գևորգ կաթողիկոսի (877-897) աթոռանիստը նրա գահակալության վերջում: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ նա թաղվել է վանքի գերեզմանատանը[5]: Գտնվում էր Վասպուրականի Տոսպ գավառում, Վան քաղաքից ոչ հեռու:

Վարագա Սբ. Նշան և Սբ. Խաչ եկեղեցիներ: Ըստ ավանդության՝ Սբ. Նշան եկեղեցին կառուցվել է Ներսես Գ-ի օրոք, երբ այնտեղ հայտնաբերվեց Հռիփսիմյանց կույսերի կողմից ամփոփված՝ Հիսուս Քրիստոսի խաչափայտի մի մասունքը[6]: Հետագայում Վարագա լեռան շրջանում կառուցվեց նաև Սբ. Խաչ եկեղեցին, որ ութմանիկները Բուղայի արշավանքների շրջանում հարկատու էին դարձրել[7]: Թովմա Արծրունին, պատմելով գերությունից վերադարձած Աշոտ Արծրունու գործունեության մասին, հաղորդում է, թե նա կարողացավ ութմանիկներից

---

[1] Անդ, էջ 182-183:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 202: Տե՛ս նաև **А. Якобсон,** Очерк истории зодчества Армении V-XVII веков, М.-Л., 1950, էջ 152-156:

[3] Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 226:

[4] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 104:

[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 184:

[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 394:

[7] Անդ, էջ 306, 332-334:

ազատագրել Վարագա լեռան շրջակայքը[1]: Վարագա եկեղեցիները նույնպես ազատագրվեցին և դրանից հետո հանդիսանում էին Արծրունիների իշխանության կարևոր հոգևոր կենտրոն:

Աղթամարի Սբ. Խաչ վանք: Վասպուրականի Դերենիկ իշխանի մահից հետո, երբ նա թաղվեց Աղթամարի Սբ. Խաչ վանքում, նրա որդիները վանքին ընդարձակ կալվածքներ նվիրեցին, որոնք հիմնականում գտնվում էին Ռշտունիք գավառում[2]: Վանքի և, ընդհանրապես կղզու կառուցապատումը շարունակվեց հետագայում և իր ավարտին հասավ Գագիկ Արծրունու թագավորության տարիներին[3]:

Ոստանի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցի: Թովմա Արծրունին, պատմելով Վասպուրականի Գագիկ իշխանի գործունեության մասին, ի մասնավորի հաղորդում է, որ նա շինարարական լայն աշխատանքներ իրականացրեց Ոստանում՝ վերակառուցելով նրա ավերված միջնաբերդն ու արաբական տիրապետության շրջանում քանդված Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցին[4]:

Ոստանի Սբ. Պետրոս եկեղեցի: Ըստ Արծրունյաց պատմիչի՝ կառուցելով եկեղեցին «վեյելչապէս պայծառութեամբ», Գագիկ Արծրունին սկզբում այն ցանկանում էր անվանակոչել Սբ. Փրկիչ, սակայն, հետո միտքը փոխեց և կոչեց Սբ. Պետրոսի անունով[5]:

Աղբակի Սբ. Խաչ վանք: Գտնվում էր Արծրունիների ոստան Հադամակերտ ավանում, որտեղ գտնվում էր Վասպուրականի Արծրունի իշխանների տոհմական հանգստարանը: Ըստ Թովմա Արծրունու՝ Հայ Բագրատունիների տերության կազմավորման և ամրապնդման շրջանում այստեղ, մասնավորապես, թաղվել էին Վասպուրականի Աշոտ Արծրունի իշխանը 874 թ. և Դերենիկի որդի Աշոտ իշխանը՝ 905 թ.[6]:

Վանա բերդի Սբ. Գևորգ և Սբ. Սիոն եկեղեցիներ: Ըստ Թովմա Արծրունու՝ երկու եկեղեցիներն էլ կառուցվել են Վասպուրականի Գագիկ իշխանի կողմից Վանա բերդում: Սբ. Սիոն եկեղեցու քարը Վասպուրականի իշխանի պատվերով բերվել է Մանազկերտից: Եկեղեցու խորանի աջ կողմում նա կառուցեց մեկ այլ եկեղեցի՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի խաչելիության վայրի՝ Գողգոթայի, իսկ ձախ կողմում՝ ևս մեկ եկեղեցի՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի հարության[7]:

---

[1] Անդ, էջ 332-334:
[2] Անդ, էջ 356:
[3] Անդ, էջ 452-454:
[4] Անդ, էջ 390:
[5] Անդ, էջ 394:
[6] Անդ, էջ 338, 384:
[7] Անդ, էջ 390:

Հադամակերտի եկեղեցի: Կառուցվել է X դ. սկզբին՝ Վասպուրականի Գագիկ իշխանի եղբոր՝ Գուրգենի կողմից: Վերջինս եկեղեցու քարը բերել է տվել Մանազկերտից՝ Բզնունյաց ծովով[1]:

Տարոնի իշխանություն:

Մշո Սբ. Կարապետ (Գլակա, Իննակնյան) վանք: Սկզբնաղբյուրները Տարոնի խնդրո առարկա շրջանի վանքերի և եկեղեցիների մասին գրեթե տեղեկություններ չեն պահպանել: Խնդիրն այն է, որ, գտնվելով արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտու հարևանությամբ, ինչպես նաև որոշ ժամանակ գրավված լինելով Շայբանիների ամիրայության կողմից, Տարոնի իշխանները երկրամասի հոգևոր կյանքի զարգացման համար գրեթե ժամանակ չէին ունենում:

Մշո Սբ. Կարապետ հինավուրց վանքը, թեև խնդրո առարկա շրջանում պատմիչների կողմից չի հիշատակվում, սակայն շարունակել է կարևոր դեր խաղալ Բագրատունիների հզորացման շրջանում:

Մշո Սբ. Փրկիչ եկեղեցի: Կառուցվել է Բագարատ Բագրատունու կողմից[2]: Թովմա Արծրունու տեղեկության համաձայն՝ այն «բարձրաբերձ» եկեղեցի էր, որի վրա ծախսվել էր 300հզ դահեկան[3]: Այստեղ էր ապաստանել խութեցիների վրեժխնդրությունից փախուստի դիմած արաբ զորավար Յուսուֆը[4]:

Վանդիրի (Մշո Սբ. Աղբերիկ) վանք: Տարոնի իշխանության վանքերից մեկն էր, որը հայտնի էր դարձել այնտեղ պահվող կենարար խաչով: Այն, ըստ ավանդության՝ օրհնվել էր Հիսուս Քրիստոսի եղբայր Հակոբի կողմից (մեկ այլ ավանդության համաձայն՝ իր մեջ կրում էր փրկչական խաչի մի մասունքը)[5]: Ստեփանոս և Ներսես Մեծոփեցիների անունով մեզ հասած ձեռագրում Վանդիրի վանքի մասին նշված է.«Տեառն եղբօր սուրբ նշանն, որ կայր ի Վանդիրն, զոր բերեալ էր սուրբ առաքեալն Թադէոս, որ էր ի կենաց փայտէն»[6]: Վարդան վարդապետի «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է, որ «Վանդիրն սուրբ Աղբերիկն է ի տեառնեղբօրէն Յակոբայ ի գաւառին Խութայ»[7]: Ամենայն հավանականությամբ,

---

[1] Անդ, էջ 396:

[2] Անդ, էջ 190:

[3] Անդ:

[4] Անդ:

[5] Տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս,** Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 182-186:

[6] Տե՛ս Լ. Խաչիկյան, Հայ պատմագրության անհայտ էջերից,-«ՊԲՀ», 1972, թիվ 4, էջ 240 (231-247):

[7] Տե՛ս «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», էջ 20: **Վարդան վարդապետ**ի «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ նշված է.«Վանդիրն սուրբ Աղբերիկն է, ուր կայ օծեալ խաչն ի տեառնեղբօրմէն Յակոբայ ի գաւառին Խութայ, եւ անդ է սուրբ բեւեռն Քրիստոսի ներկեալ արեամբն Քրիստոսի» (անդ, էջ 42-43):

հենց Հակոբի կողմից խաչի օրհնության պատմության շնորհիվ էլ հետագայում Վանդիր վանքը սկսեց կոչվել Սբ. Աղբերիկ (Սբ. Աղբայրիկ): Այդ խաչի միջոցով, ըստ վերոհիշյալ ավանդության՝ Սմբատ Ա-ի օրոք վերակենդանացվել էր մի պատանի: Վանքին IX դ. նվիրատվություններ էր կատարել Սմբատ Մամիկոնյան իշխանը (չորս կրպակ և ձիթահանք)[1]: Վանքում էր գտնվում Սասունի իշխանների հանգստարանը: 908 թ. Սմբատ Ա-ն վավերացրեց Սմբատ Մամիկոնյանի նվիրատվությունը, ապա անձամբ ընծաներ մատուցեց և ընդարձակ տարածքներ նվիրաբերեց վանքին[2]:

Հայոց Արևելից կողմերի իշխանություններ:

Գիսի եկեղեցի: Ըստ ավանդության՝ այս այս եկեղեցին կառուցել է Թադևոս առաքյալի աշակերտ Եղիշեն[3]: Մովսես Դասխուրանցին հաղորդում է, թե «յայսմ տեղւոջ եղև սկիզբն արևելեայցս եկեղեցեացս մայրաքաղաքաց»[4] կամ «մայր եկեղեցեացն արևելեայց»[5]: Վերակառուցվել է V դ.[6]: Մեսրոպ Մաշտոցն այստեղ էր թաղել սուրբ խաչի մասունքը, որը հայտնաբերվել ու տեղափոխվել էր Գլխո վանք[7]: Գտնվում էր Ուտի Առանձնակ գավառում:

Ամարասի վանք: Ամարասի վանքը գտնվում էր Արցախի Մյուս Հաբանդ գավառում, որի՝ վանքին հարակից հատվածը կոչվում էր Ամարաս[8]: Այն կառուցվել էր IV դ.՝ Գրիգոր Լուսավորչի կողմից[9]: Խնդրո առարկա շրջանում եպիսկոպոսանիստ եկեղեցի էր[10]:

Սբ. Եղիշե առաքյալի վանք (Զրվշտիկ): Դեռևս IV դ. Թադևոս առաքյալի աշակերտ Եղիշեի մասունքներն ամփոփվել էին Արցախի Մեծ Կվանք գավառում՝ մի ուխտատեղիում, որը Մովսես Դասխուրանցու օրերում արդեն կոչվում էր Զրվշտիկ: Վանքը կառուցվել է V դ.՝ Վաչագան Բարեպաշտի կողմից[11]: Կարևոր դեր ուներ հայոց Արևելից կողմերի հոգևոր կյանքում:

Մեծիրանից Սբ. Հակոբի վանք: Խաչենի իշխանության կարևոր վանքերից մեկն էր: Վանքում պահպանվել են մի քանի արձանագրու-

---

[1] Տե՛ս Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, էջ 182-183:
[2] Անդ, էջ 183-186:
[3] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 10, 275:
[4] Անդ, էջ 10:
[5] Անդ, էջ 274-275:
[6] Անդ, էջ 95-97:
[7] Անդ, էջ 201-208, 214, 344:
[8] Անդ, էջ 327:
[9] Անդ, էջ 35:
[10] Անդ, էջ 294, 300, 328, 344 և այլն:
[11] Անդ, էջ 12:

թյուններ, որոնք վերաբերում են Խաչենի իշխանության խնդրո առարկա շրջանի գործող անձանց[1]:

Գտչա վանք: Գոռոզի իշխանության կարևոր վանքերից էր, որի գերեզմանատանը պահպանված արձանագրությունները կարևոր տեղեկություններ են պահպանել Եսայի Աբու Մուսե իշխանի և նրա սերունդների մասին[2]:

Դադոյի վանք (Դադիվանք): Մովսես Դասխուրանցին այն հիշատակում է Խորաձորում[3]: Ամենայն հավանականությամբ, Խորաձոր էր կոչվում Տրտու գետի միջին հոսանքի հովիտը, որտեղ գտնվում է Դադիվանքը: I դ. քրիստոնեության քարոզիչ, նահատակ Դադի գերեզմանի վրա կառուցվել է եկեղեցի, որի շուրջ հետագայում կազմավորվել է վանքը, որի պահպանված շինություններից ամենավաղը կառուցվել է XII դ.[4]:

Կատարո վանք: Գտնվում էր Դիզափայտ լեռների շրջանում՝ հանդիսանալով Հայոց Արևելից կողմերի կարևոր հոգևոր կենտրոններից մեկը: Կառուցվել է Աղվանից Վաչագան թագավորի օրոք, երբ այստեղ հայտնաբերվել էին սրբերի մասունքներ[5]:

Կաղանկատվաց վանք: Հիշատակվում է Մովսես Դասխուրանցու կողմից Հայոց Արևելից կողմերի այն վանքերի թվում, որոնց նույնանուն վանքեր կային նաև Երուսաղեմում[6]:

Գլխո վանք: Գտնվում էր Արցախի Մեծ Կվանք գավառում: Հայոց Արևելից կողմերի նշանավոր հոգևոր կենտրոններից էր[7]: Հայոց Արևելից կողմերի Վարազ Տրդատ իշխանը Հայոց և Վրաց իշխան Գրիգոր Մամիկոնյանի (662-685) մոտ ուղարկեց Իսրայել եպիսկոպոսին՝ խնդրելու Գրիգոր Լուսավորչի աճյունից մի մասնիկ: Խնդիրն այն է, որ այդ ժամանակ Դարանաղյաց գավառի Թորդան ավանից Վաղարշապատ էր տեղափոխվել Գրիգոր Լուսավորիչի աճյունը: Իսրայելը ստանում է Գրիգոր Լուսավորչի ծնոտի մի մասը, որը բերվում և հանդիսավորությամբ ամփոփվում է Գլխո վանքում[8]: Հայտնի էր նաև այստեղ պահվող սուրբ

---

[1] Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա, էջ 509:

[2] Տե՛ս **Ս. Բարխուդարյան**, Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում, էջ 55-58:

[3] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 340:

[4] Տե՛ս **Միքայել Ասորի,** էջ 43: Դադիվանքի շինությունների կառուցման ժամանակագրության մասին մանրամասնորեն տե՛ս **Ս. Այվազյան**, Դադիվանքի հոգևոր շինությունների կառուցման ժամանակագրական հաջորդականությունը,-«ՊԲՀ», թիվ 3, էջ 199-218:

[5] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 119, 300:

[6] Անդ, էջ 285:

[7] Անդ, էջ 208, 212, 218 և այլն:

[8] Անդ, էջ 235-237:

խաչի մասունքը[1]:

Բերդո վանք: Գտնվում էր Շամքոր քաղաքում: Այստեղ երբեմն գումարվում էին Հայոց Արևելից կողմերի եկեղեցականների ժողովներ[2]:

Պարտավի Սբ. Գրիգոր եկեղեցի: Կոչվում է նաև Պարտավի մեծ եկեղեցի[3]: VIII դ. սկզբին, երբ Հայոց Արևելից կողմերում փորձ կատարվեց ներմուծելու քաղկեդոնական դավանանքը, Հայոց կաթողիկոս Եղիան մեկնեց Պարտավ քաղաք, եկեղեցում ատյան գումարեց ու հրամայեց իր մոտ բերել քաղկեդոնական դավանանքի կողմնակիցներին, որոնք նրա հրամանով պատժվեցին[4]:

Պարտավի Սբ. Աստվածածին վանք: Հիշատակվում է Մովսես Դասխուրանցու կողմից Հայոց Արևելից կողմերի այն վանքերի թվում, որոնց համանուն վանքեր կային նաև Երուսաղեմում[5]:

Նորավանք: Կառուցվել է Սահլ Սմբատյանի որդի Ատրներսեհի կնոջ՝ Սպրամի կողմից IX դ. կեսերին[6]: Գտնվում էր Սոդք գավառում, որը, ինչպես տեսանք, մտնում էր Սահլ Սմբատյանի տիրույթների մեջ:

Համշենի իշխանության վանքերն ու եկեղեցիները:

Եղնովիտի վանք: Համշենի իշխանության կարևոր վանքերից էր, որտեղ, ըստ ավանդության, պահվում էին սուրբ Վարդանանց նշխարները[7]: Ներկայումս վանքը գոյություն չունի, սակայն նրա շրջակայքը շարունակում է կոչվել Եղնովիտ (թուրք. էլևիտ):

Խաչիվանք: Գտնվում էր Եղնովիտից ոչ հեռու: Ինչպես տեսանք, սկզբնապես կոչվում էր Խաչիկ վանք, հետո՝ Խաչեքարո վանք, ապա՝ Խաչեքար-Քաջքար, ներկայումս Խաչիվանիկ:

Արևելից մեծ իշխանության վանքերն ու եկեղեցիները:

Սկզբնաղբյուրները քիչ տեղեկություններ են պահպանել Աղվանքի եկեղեցիների և, մասնավորապես, խնդրո առարկա շրջանում կառուցված եկեղեցիների մասին: Այդպիսի տեղեկություններ կան հատկապես սկսած այն ժամանակներից, երբ տարածվեց քաղկեդոնականությունը:

Պետք է նշել, սակայն, որ Մովսես Դասխուրանցու տեղեկությունների համաձայն՝ Հայոց Արևելից կողմերի եկեղեցու կազմում գոյություն

---

[1] Անդ, էջ 208:
[2] Անդ, էջ 314:
[3] Անդ, էջ 319:
[4] Անդ, էջ 296-297: Տե՛ս նաև **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 102:
[5] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 285:
[6] Անդ, էջ 340:
[7] Տե՛ս **Հ. Տաշեան**, Տայք, դրացիք և Խոտորջուր,-«Հանդէս ամսօրեայ», 1972, թիվ 1-3, էջ 23-29:

ունեին Շաքեի և Կապաղակի եպիսկոպոսությունները[1]:

Աղվանքում հնուց հայտնի էին որոշ վանքեր և, հատկապես, Գիշի և Դավիթ Գարեջա վանքը:

Գիշի վանք: Գտնվել է Գիշ ավանում, որը ներկայումս էլ գոյություն ունի և կոչվում է Քիշ: Գտնվում է Շաքի քաղաքից հյուսիս[2]:

Դավիթ Գարեջա վանք: Կառուցվել է VI դ.: Հայ Բագրատունիների տերության կազմավորման շրջանում, Ծանարաց քորեպիսկոպոսությունում գործունեություն ծավալելուց հետո, այստեղ հաստատվել էր Իլարիոն Վրացի վանականը (մահ. 882 թ.)[3]: Մինչև Դինար թագուհին, ինչպես վերևում անդրադարձանք, Աղվանքի եկեղեցին միաբնակ էր: Միաբնակ էր նաև Դավիթ Գարեջա վանքը, ուր այցելում էին ու նվիրատվություններ կատարում Հայոց Արևելից կողմերի իշխանական տների ներկայացուցիչները[4]:

Վիրքի վանքերն ու եկեղեցիները: Խնդրո առարկա շրջանում Վիրքում լայն եկեղեցաշինական գործունեություն չի իրականացվել: Պատճառն այն էր, որ այն մասամբ գտնվում էր արաբների ձեռքում (Տփղիսի ամիրայություն): Սակայն շարունակում էին գործել նախկինից հայտնի որոշ եկեղեցիներ:

Տփղիսի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցի: Ըստ վրացական աղբյուրների՝ կառուցվել է Վրաց թագավոր Վախթանգ Գորգասալի որդի Դաչի կամ Դաչէ Ուջարմեցու (մոտ 522-534) կողմից, որը Տփղիսն իր մայրաքաղաքն է դարձրել[5]: Տփղիսի հնագույն եկեղեցին է, որը հետագայում կոչվեց Անչիսխատ (բառացի՝ Անչայի սրբապատկեր): Խնդիրն այն է, որ Անչայի եկեղեցուց այստեղ է տեղափոխվել Հիսուս Քրիստոսի անձեռագործ պատկերը (Սբ. դաստառակ)[6]: Ծառայել է իբրև վանատուն[7]:

Մծխեթայի Ջվար եկեղեցի: Կառուցումը սկսվել է VII դ. սկզբին՝ Վրաց իշխան Ստեփանոսի օրոք, երբ տեղի էին ունենում պարսկա-

---

[1] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 122, 213, 341-346:

[2] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 48:

[3] Տե՛ս "Житие и деяния Илариона Грузина", перевод с древнегрузинского, введение, примечания Г. Цулая, М., 1998, էջ 55:

[4] Տե՛ս **Պ. Մուրադյան,** Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը, էջ 84-86:

[5] Տե՛ս **Джуаншер Джуаншериани**, էջ 204-205: Տե՛ս նաև Պ. Մուրադյան, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, ուսումնասիրություն և աղբյուրներ, Էջմիածին, 2009, էջ 226-227:

[6] Անդ, էջ 227:

[7] Անդ, էջ 13: Տե՛ս նաև **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Հին Թբիլիսիի և հայ-վրացական կուլտուրական կապերի պատմությունից,-«ՊԲՀ», 1958, թիվ 3, էջ 152:

բյուզանդական պատերազմները[1]: Ըստ Դավթի որդի Սմբատի՝ 629 թ. դրությամբ եկեղեցու կառուցումը դեռ չէր ավարտվել: Այն շարունակվեց Ստեփանոսի որդի Ատրներսեհի և վերջինիս որդի Ստեփանոսի իշխանության շրջանում: Կառուցման ժամանակ լուր հասավ արաբների կողմից Բաղդադի գրավման մասին[2]: Խոսքն, ամենայն հավանականությամբ, 637 թ. մասին է, երբ արաբների կողմից գրավվեց Իրաքը: Ուստի՝ Ձվար եկեղեցու կառուցումը 630-ական թթ. դեռևս ընթացքի մեջ էր: Ինչպես ճշգրտել է Պ. Մուրադյանը, շինարարական աշխատանքները շարունակվել են մինչև 642 թ.: Դրանց մասնակցել են հայ վարպետներ՝ Թոդոսակի գլխավորությամբ[3]: Այն հանդիսանում էր Վրաց կաթողիկոսի աթոռանիստը:

Մծխեթայի Ձվար եկեղեցին կառուցվել է Հայաստանում արդեն կառուցված նմանատիպ եկեղեցիների՝ Ավանի և Վաղարշապատի Սբ. Հռիփսիմե եկեղեցիների օրինակով: Բացի այն, որ այն նման է Սբ. Հռիփսիմե եկեղեցուն, համընկնում են նաև երկու եկեղեցիների չափսերը[4]:

Տփղիսի Սբ. Սիոն եկեղեցի: Ինչպես ճշգրտել է Պ. Մուրադյանը, Սբ. Սիոն եկեղեցին հիմնադրվել է 626 թ. հետո[5]: Այդ է ցույց տալիս Դավթի որդի Սմբատի հաղորդումը, ըստ որի՝ եկեղեցու կառուցումը սկսվել է VII դ. սկզբին և ավարտվել 629 թ.՝ պարսկա-բյուզանդական հաշտության պայմանագրի կնքման տարում[6]: Եկեղեցին գործում էր նաև արաբական տիրապետության շրջանում:

Ատենի Սբ. Սիոն եկեղեցի: Կառուցվել է VII դ.: Պահպանվել են հայերեն արձանագրություններ և հայ ճարտարապետի անունը[7]: Ամենայն հավանականությամբ, հենց այստեղ են 906 թ. հաշտվել Հայոց Սմբատ Ա և Աբխազաց Կոստանդին Գ թագավորները՝ այդ իրադարձությունը հավերժացնելով հանդիսավոր խմբանկարով[8]: Գտնվում էր Գորի քաղաքից հարավ:

---

[1] Տե՛ս **Сумбат Давитис-дзе**, էջ 27-28:

[2] Անդ, էջ 30-31:

[3] Տե՛ս **Պ. Мурадян**, Армянская надпись храма Джвари,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1968, թիվ 2, էջ 55-80:

[4] Տե՛ս **Ա. Казарян**, նշվ. աշխ., էջ 33:

[5] Տե՛ս **Պ. Մուրադյան,** Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, էջ 13-14: Տե՛ս նաև **Պ. Мурадян**, Армянская надпись храма Джвари, էջ 66-68:

[6] Տե՛ս **Сумбат Давитис-дзе**, էջ 29-30:

[7] Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, VII դարու հայերեն արձանագրությունները Վրաստանում (Ատենի Սիոն),- ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1945, թիվ 5, էջ 3-6:

[8] Տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունի թագավորների (Աշոտ I, Սմբատ I, Աշոտ I) բյուզանդական թագը, էջ 176:

Վիրքում հնուց հայտնի էին այլ վանքեր ու եկեղեցիներ: Սակայն խնդրո առարկա շրջանում բուն Վիրքում գտնվող եկեղեցիները գրեթե չեն հիշատակվում: Այդ առումով, սկզբնաղբյուրների ուշադրության կենտրոնում էր Կղարջքի կուրապաղատությունը, որտեղ IX դ. տեղի ունեցող իրադարձությունները մեծ կարևորություն ունեին և նույն դարի վերջին (899 թ.) հանգեցնելու էին Կղարջքի (Վրաց կոչված) թագավորության հիմնադրմանը:

Կղարջքի կուրապաղատության վանքերն ու եկեղեցիները: Աշոտ կուրապաղատի իշխանության շրջանից (VIII դ. վերջ-826) սկսած լայն ծավալներ է ընդունում եկեղեցաշինությունը Կղարջքի կուրապաղատությունում, որի սկզբնավորողն այնուհետև Կղարջքի կուրապաղատության հոգևոր առաջնորդի դերը ստանձնած Գրիգոր Խանձթեցին էր (759-861): Այդ մասին մանրամասն տեղեկություններ են պահպանվել Գեորգի Մերչուլի կողմից X դ. կեսերին գրի առնված «Գրիգոր Խնձթեցու վարք»-ում: Դատելով Գեորգի Մերչուլի հաղորդումներից՝ Գրիգոր Խանձթեցու կողմից Կղարջքի կուրապաղատությունում կառուցվել կամ վերակառուցվել են տասնյակ եկեղեցիներ[1]: Այն պահին, երբ Գրիգոր Խանձթեցին եկավ Կղարջք, այստեղ բացի Օպիզայից որևէ այլ գործող եկեղեցի չկար: Նա սկզբում կարողացավ Խանձթայում միայն փայտե եկեղեցի կառուցել[2]:

Խանձթա վանքի շինարարության ժամանակ Կղարջքում իշխում էր Աշոտ կուրապաղատը[3]: Իր իշխաններից մեկի միջոցով Աշոտը իմացավ Գրիգոր Խանձթեցու մասին[4]: Կուրապաղատն իր մոտ հրավիրեց նրան և նվիրեց բարեբեր վայրեր, այդ թվում՝ Շատբերդի շրջանը[5]: Այդ ժամանակներից, երբ Կղարջքի կուրապաղատը սկսեց հովանավորել Գրիգոր Խանձթեցու կողմից սկսված եկեղեցաշինությունը, վերջինս ամբողջ Կղարջքում լայն ծավալներ ընդունեց[6]: Դատելով Գրիգոր Խանձթեցու հիմնած վանքերի և եկեղեցիների աշխարհագրությունից՝ այն ընդգրկում էր միայն Կղարջքը: Այդ իսկ պատճառով նրան ուզում էին կարգել զուտ Կղարջքի վանքերի և եկեղեցիների (Խանձթա, Շատբերդ, Միջնաձոր և այլն) հոգևոր առաջնորդ: Վիճակն այդպիսին էր նաև Բագարատ կուրապաղատի որդու՝ Դավիթի օրոք, երբ կառուցվեց Խանձ-

---

[1] Տե՛ս Георгий Мерчуле, գլ. V, IX:
[2] Անդ, գլ. VII:
[3] Անդ, գլ. IX:
[4] Անդ, գլ. X:
[5] Անդ, գլ. XI:
[6] Անդ, գլ. X:

թայի քարե եկեղեցին[1]: Բացի այդ, Աբխազաց թագավորին նկարագրելով Կղարջքի վանքերն ու եկեղեցիները՝ Գրիգոր Խանձթեցին մասնավորապես պատմում է, որ դրանք մի կողմից սահմանակցում են Աբխազաց թագավորությանը Ղադո լեռներով, իսկ մյուս կողմից շրջապատված են Շավշքի մեծ գետերով: Ընդհանրապես, Գեորգի Մերչուլի հիշատակած անվանումը՝ «Կղարջքի մենաստաններ», արդեն իսկ խոսում է այն բանի օգտին, որ դրանք բոլորը գտնվում էին Կղարջքում[2]:

Գրիգոր Խանձթեցու և նրա մերձավորների կողմից կառուցված կամ վերակառուցված վանքերի թվում բացառություն էր կազմում միայն Իշխանի վանքը, որը գտնվում էր Տայքում: Ըստ Գեորգի Մերչուլի՝ այն վերակառուցել է Գրիգոր Խանձթեցու շրջապատի հոգևորականներից Սաբանի կողմից[3]:

Պետք է նշել, որ այդ նույն շրջանում քաղկեդոնական եկեղեցու կողմից Հայոց իշխան Աշոտ Մսակերին քաղկեդոնական դավանանքի հետևորդ դարձնելու փորձ էր կատարվել: Նրա միջոցով հնարավոր էր լինելու քաղկեդոնականությունը տարածել ողջ Հայաստանում: Դատելով Մխիթար Այրիվանեցու և Վարդան վարդապետի տեղեկություններից, քաղկեդոնականներն իրենց նպատակների մեջ որոշ հաջողության հասել էին, սակայն Միջագետքից ժամանած մի միաբնակ վանական դավանաբանական վեճում հաղթում է քաղկեդոնական հոգևորականին: Դրանից հետո Աշոտ Մսակերը ավելի է հաստատվում Հայոց եկեղեցու դավանանքի մեջ ու երկրից վտարում քաղկեդոնական հոգևորականին[4]:

Խանձթա վանք: Կառուցվել է IX դ. սկզբին՝ Գրիգոր Խանձթեցու կողմից[5]: Գրիգոր Խանձթեցու նստավայրն էր և Կղարջքի կուրապաղատության գլխավոր հոգևոր կենտրոնը: Վանքի կառուցումից հետո, Կղարջքի Անչայի վանքի շրջանում գտնվող գյուղերի բնակիչները հարձակվում են վանքի և նրա հարակից գյուղերի վրա՝ թալանելու և ավերելու նպատակով[6]: Թեև փորձ է կատարվել այդ իրադարձությունը վերագրելու միջավատատիրական հարաբերությունների սրմանը[7], սակայն վերոհիշյալ փաստը, մեր կարծիքով, ցույց է տալիս, որ Կղարջքի որոշ շրջաններում, այդ թվում՝ Անչայի վանքի շրջակայքում, չէին ընդու-

---

[1] Անդ, գլ. XXVIII:
[2] Անդ, գլ. XXII:
[3] Անդ, գլ. V:
[4] Տե՛ս **Մխիթար Այրիվանեցի**, էջ 53, **Վարդան վարդապետ**, էջ 84:
[5] Տե՛ս **Георгий Мерчуле,** գլ. VII, XXVIII:
[6] Անդ, գլ. LXVIII-LXX:
[7] Տե՛ս "Очерки истории Грузии", т. II, էջ 244-245:

նում Գրիգոր Խանձթեցու հոգևոր իշխանությունը: Ուստի, այն բանից հետո, երբ Գրիգոր Խանձթեցին ցանկացել է այնտեղ տարածել սեփական հոգևոր իշխանությունը, ստացել է նման հակահարված:

Օպիզայի Սբ. Հովհաննես Մկրտիչի վանք: VIII դ. վերջին այստեղ որոշ ժամանակ ապրել է Գրիգոր Խանձթեցին: Այն պահին, երբ Գրիգոր Խանձթեցին եկավ Կղարջք, այստեղ բացի Օպիզայից որևէ այլ գործող վանք չկար[1]:

Դատելով «Սերապիոն Զարզմեցու վարք»-ում պահպանված մի տեղեկությունից, Օպիզայի վանքը IX դ. կեսերին հանդիսանում էր Կղարջքի հոգևոր կենտրոններից մեկը[2]: Ըստ «Քարթլիի մատյան»-ի՝ այն վերակառուցվել է նաև Կղարջքի Բագրատունիներից Գուառամի օրոք: Վերջինս հետագայում թաղվել է վանքի գերեզմանատանը[3]:

Պետք է նշել, որ՝ Դատելով Գեորգի Մերչուլի հաղորդումներից՝ Գրիգոր Խանձթեցին սկզբնապես իրավասու էր համարվում միայն այն վանքերի և եկեղեցիների նկատմամբ, որոնք կառուցվել կամ վերակառուցվել էին իր հովվապետության օրոք: Այսպես, նա Օպիզայի վանքն ու նրա քահանային համարում էր իրեն ոչ ենթակա[4]: Այդ իրողությունը, թերևս, բխում էր նրանից, որ Գուառամ Բագրատունին հաշվի չէր նստում Կղարջքի հոգևորականների հետ[5]:

Միջնաձորի վանք: Դատելով այն իրողությունից, որ Կղարջքում Գրիգոր Խանձթեցու հաստատվելու շրջանում այնտեղ, բացի Օպիզայից, այլ գործող վանք չկար, իսկ հետագայում Միջնաձորի վանքը հանդես է գալիս որպես կուրապաղատության կարևոր վանքերից մեկը[6], կարծում ենք, որ այն, ի թիվս Խանձթա վանքի շրջակա հին վանքերի և եկեղեցիների, վերակառուցվել է IX դ. սկզբին՝ Գրիգոր Խանձթեցու կողմից:

Շատբերդի վանք: Վերակառուցվել է Գրիգոր Խանձթեցու կողմից և դարձել նրա հոգևոր իշխանության երկու կարևոր վանքերից մեկը՝ Խանձթայից հետո: Շատբերդի շրջանը Գրիգոր Խանձթեցուն էր նվիրել դեռևս Աշոտ կուրապաղատը[7]: Հետագայում, երբ սկսվեց վանքի վերակառուցումը, Գրիգոր Խանձթեցին խնդրեց կուրապաղատ Բագարատին, որպեսզի նա օգնի շինարարությանը: Ի պատասխան, կուրապա-

---

[1] Տե՛ս **Георгий Мерчуле,** գլ. VII:
[2] Տե՛ս **Василий Зарзмели**, գլ. XV:
[3] Տե՛ս "Матиане Картлиса", էջ 32:
[4] Տե՛ս **Георгий Мерчуле**, գլ. XXXIV:
[5] Անդ, գլ. XLII:
[6] Անդ, գլ. XXVII, XXVIII, XXXI և այլն:
[7] Անդ, գլ. XI:

ղատը կալվածքներ նվիրեց վանքին[1]: Վերջինիս մեծ նվիրատվություններ կատարեցին նաև Կղարջքի մյուս իշխանները[2]:

Անչայի վանք: Ինչպես տեսանք, Անչայի վանքի շրջակայքի բնակիչները թշնամաբար ընդունեցին Գրիգոր Խանձթեցուն և նույնիսկ հարձակում գործեցին Խանձթա վանքի վրա: Գեորգի Մերչուլի մի հաղորդումից պարզվում է, որ Անչայի վանքն իր թեմով հատուկ կարգավիճակ ուներ վրաց եկեղեցու համակարգում: Այդ հատուկ կարգավիճակը հովանավորվում էր Տփղիսի Սահակ ամիրայի կողմից՝ ընդդեմ Խանձթա վանքի հոգևոր իշխանության: Եղավ մի պահ, երբ Տփղիսի ամիրա Սահակի օգնությամբ Անչայի եպիսկոպոս դարձավ ոմն Ցկիր, որը հավաքեց Անչայի ժողովրդին և ուղարկեց քանդելու Խանձթա վանքը: Այն անհաջողության մատնվեց միայն Ցկիրի մահվան պատճառով[3]:

Արտանուջի Սբ. Պետրոս-Պողոս եկեղեցի: Կառուցվել է IX դ. սկզբին՝ Կղարջքի Աշոտ կուրապաղատի կողմից՝ Արտանուջի բերդի վերականգնումից անմիջապես հետո: Եկեղեցում նա կառուցեց նաև սեփական դամբարանը: Գտնվում էր Արտանուջի բերդում[4]: Ըստ Վախուշտ Բագրատիոնի՝ այս եկեղեցում է սպանվել Աշոտ կուրապաղատը[5]:

Սամցխեի վանքերն ու եկեղեցիները: Կղարջքում ծավալված եկեղեցաշինական աշխատանքներից հետո Կղարջքի հոգևորականները սկսում են իրենց հոգևոր իշխանությունը տարածել հարևան Սամցխեում: Այնտեղ հատուկ այդ նպատակով ուղարկվեց Սերապիոն Զարզմեցին, որը լայն գործունեություն ծավալեց: Այդ մասին մանրամասն տեղեկություններ են պահպանվել Վասիլ Զարզմեցու կողմից գրի առնված «Սերապիոն Զարզմեցու վարք»-ում: «Վարք»-ում մանրամասն տեղեկություններ կան նրա կողմից Սամցխեում վանքերի հիմնադրման մասին, որն իրականացվել է 860-ական թթ.[6]: Ընդհանուր առմամբ, պետք է ընդգծել, որ Սերապիոն Զարզմեցին Սամցխեում իրականաց-

---

[1] Անդ, գլ. XXV:
[2] Անդ, գլ. XXVII:
[3] Անդ, գլ. LXVIII-LXX:
[4] Տե՛ս Сумбат Давитис-дзе, էջ 31:
[5] Âàõóøòè Áàãðàòèîíè, էջ 187: «Քարթլիի մատյան»-ի հաղորդած տեղեկության համաձայն՝ Աշոտ կուրապաղատը սպանվել է Գարդաբանի եկեղեցում (տե՛ս "Матиане Картлиса", էջ 29): Պետք է նշել, որ վրաց պատմաբանների կողմից ընդունված է հենց վերջին տեղեկությունը, որի հիման վրա նրանք փորձում են ցույց տալ, թե Աշոտ կուրապաղատը տիրել է նաև Գարդաբանին (տե՛ս "Очерки истории Грузии", т. II, էջ 308-309): Սակայն, դատելով Դավթի որդի Սմբատի տեղեկություններից՝ Աշոտ կուրապաղատը սպանվել է Շավշքի եկեղեցիներից մեկում, երբ զինվորներ հավաքագրելու նպատակով մեկնել էր այնտեղ (տե՛ս Сумбат Давитис-дзе, էջ 31-32):
[6] Տե՛ս М. Лордкипанидзе, նշվ. աշխ., էջ 316-317:

րեց այն, ինչ Կղարջքում Գրիգոր Խանձթեցին:

Դատելով Վասիլ Զարզմեցու տեղեկություններից՝ Սամցխեի տարբեր վայրերում Կղարջքի հոգևորականներին վատ էին ընդունում և վտարում էին իրենց երկրամասերից: Երբ նրանք նոր էին միայն մտել Սամցխե և կառուցել առաջին վանքը, տեղի իշխանը չցանկացավ նրանց տեսնել իր տիրույթներում և արտաքսեց[1]: Այնուհետև այդպիսի դեպքերը կրկնվեցին: Սակայն Սերապիոն Զարզմեցին համառորեն ի կատար ածեց իրեն տրված հանձնարարությունը:

Հասնելով Սամցխե՝ Սերապիոն Զարզմեցին և մյուս հոգևորականներն անմիջապես սկսեցին կառուցել վանքեր: Առաջին վանքը կառուցվեց Սամցխեի հարավում[2]:

Այդտեղից նրանք շարժվեցին հյուսիս և հասան Գեորգի Չորչանեցի իշխանի տիրույթներին: Իշխանը նրանց ընդունեց գրկաբաց և գործունեության ազատություն տվեց: Նրա տիրույթներում Սերապիոնը որոշեց կառուցել հերթական վանքը, որը և տեղի ունեցավ[3]:

Զարզմայի վանք: Շարժվելով Գոդերձական լեռնանցքի շրջանով դեպի հյուսիս՝ Կղարջքի հոգևորականները շուտով հասան մի պղտոր ջրով լճակի: Լճակի շրջանը նրանց կողմից անվանվեց Զարզմա՝ բնակիչների շրջանում այդ վայրի նկատմամբ ունեցած սարսափի պատճառով: Այնտեղ էլ որոշեցին կառուցել այդ կողմերի գլխավոր վանքը: Զարզմայի վանքը դարձավ Սամցխեի այդ հատվածի հոգևոր կենտրոնը[4]: Գտնվում էր Չորչան բնակավայրից հարավ:

Ղվելի վանք: Կղարջքի հոգևորականների կողմից Ղվելի վանքը կառուցվեց Զարզմայի հիմնադրումից մի փոքր անց[5]:

Զանավի վանք: Ինչպես տեսանք, կառուցվել էր Համազասպի և Քուրդիկի կողմից, որոնք, հավանական է, Մամիկոնյանների տոհմից են եղել: Ամենայն հավանականությամբ, հանդիսանում էր Գեորգի Չորչանեցու իշխանության գլխավոր վանքը, որտեղ գտնվում էր տեղի իշխանների հանգստարանը[6]:

Ածղուր (Ածղվեր) վանք: Սամցխեի եպիսկոպոսանիստ վանքն էր, որը, դատելով վերոհիշյալից, խնդրո առարկա շրջանում դուրս էր Կղարջքի հոգևոր իշխանությունից և ավելին՝ երբեմն հակադրվում էր

---

[1] Տե՛ս Василий Зарзмели, գլ. V:
[2] Անդ:
[3] Անդ, գլ. VI-VII:
[4] Անդ, գլ. VIII-XIII:
[5] Անդ, գլ. XVI:
[6] Անդ, գլ. XVII:

նրան: Դատելով Գեորգի Մերչուլի հաղորդումներից՝ կարևոր նշանակություն ուներ Սամցխեի հոգևորականների կարծիքը նույնիսկ Վրաց կաթողիկոսի ընտրության հարցում[1]: Մյուս կողմից, Սամցխեի հոգևորականները չէին ընդունում նաև Գրիգոր Խանձթեցու իշխանությունը: Երբ քննարկվում էր Վիրքի կաթողիկոս դարձած Արսենի խնդիրը, Կղարջքի Բագրատունիներից Գուառամն ու Բագարատը դժգոհ էին նրա՝ կաթողիկոս դառնալու փաստից: Միևնույն ժամանակ, դրան կողմ էր Գրիգոր Խանձթեցին[2]:

Ծանարաց քորեպիսկոպոսության վանքերն ու եկեղեցիները: Սկզբնաղբյուրներում տեղեկությունների սղության պատճառով հնարավոր չէ խոսել այստեղ խնդրո առարկա շրջանում կառուցվող վանքերի մասին: Հնուց ի վեր հայտնի էին Ալավերդիի, Գարդաբանի և որոշ այլ վանքեր:

Ալավերդիի (Սբ. Գեորգիի) վանք: Գտնվում է Թելավ քաղաքի մոտ: Հիմնադրվել է VI դ. և հանդիսացել Կախեթի կարևոր վանքերից մեկը, որտեղ Աղվանից թագավորության դեմ 915 թ. արշավանքի ժամանակ ուխտագնացության մեկնեցին Աբխազաց թագավորն ու Ծանարաց քորեպիսկոպոսը[3]:

Գարդաբանի եկեղեցի: Հիշատակվում է՝ կապված Կղարջքի Աշոտ կուրապաղատի սպանության հետ[4]: Ինչպես տեսանք, փորձ է կատարվել վերջին տեղեկության հիման վրա պնդել, թե իբր Գարդաբանը մտնում էր Աշոտ կուրապաղատի տիրույթների մեջ, սակայն վրացական մյուս սկզբնաղբյուրների տեղեկություններից երևում է, որ իրականում Աշոտ կուրապաղատը սպանվել է Կղարջքում:

Ամփոփելով Հայ Բագրատունիների տերության քաղաքների, նշանակալից բնակավայրերի, բերդերի, վանքերի և եկեղեցիների վերաբերյալ քննությունը, կարող ենք նշել, որ IX դ. վերջին և X դ. սկզբին նպաստավոր պայմաններ էին ստեղծվել Հայոց տերության մեջ մտնող երկրներում առևտրի զարգացման համար, որի հետևանքով առևտրական ճանապարհների վրա կամ դրանց հարևանությամբ ձևավորվում են

---

[1] Տե՛ս Георгий Мерчуле, գլ. XLII:
[2] Անդ:
[3] Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 33:
[4] Անդ, էջ 29:

մեծ թվով քաղաքներ, իսկ հին քաղաքներից շատերը ծաղկում են ապրում: Միևնույն ժամանակ, ունենալով վտանգավոր հարևաններ, Հայ Բագրատունիների տերության տարբեր հատվածներում ձևավորվում են ամրությունների համակարգեր՝ անառիկ բերդերով: Զարգացում է ապրում նաև եկեղեցաշինությունը: Հնուց ի վեր գոյություն ունեցող վանքերի և եկեղեցիների զարգացմանը զուգընթաց հիմնադրվում են բազմաթիվ նոր վանքեր ու եկեղեցիներ:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանը և այսրկովկասյան երկրներն առևտրական հարաբերություններ էին պահպանում Խալիֆայության տարբեր երկրների հետ, իսկ Արմինիայից դեպի հյուսիս և արևմուտք տանող առևտրական ճանապարհները դադարել էին գործել:

Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո դեպի հյուսիս և արևմուտք տանող առևտրական ճանապարհները բացվեցին: 893 թ. Սմբատ Ա-ն առևտրական պայմանագիր կնքեց Բյուզանդիայի հետ, որից հետո ակտիվացավ Հայ Բագրատունիների տերության առևտրական կյանքը, և երկիրը տնտեսական վերելք ապրեց[1]:

IX դ. երկրորդ կեսից Հայաստանը Մերձավոր Արևելքում կատարվող միջազգային առևտրի մեջ սկսում է կարևոր դեր խաղալ: Միմյանց դեմ անընդհատ պատերազմող Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի միջև Հայաստանը զբաղեցնում էր չեզոք դիրք՝ այդ իսկ պատճառով միջազգային առևտրի համար դառնալով կարևոր տարանցիկ երկիր[2]: Միջազգային առևտրի կարևոր ճանապարհներից մի քանիսն անցնում էին Հայ Բագրատունիների տերության միջով, որը նպաստում էր տերության քաղաքների զարգացմանը:

Բացի Հայաստանն ու այսրկովկասյան երկրները Բյուզանդիային և Հյուսիսային Կովկասին կապող առևտրական ճանապարհներից, դեռևս արաբական տիրապետության շրջանից շարունակում էին գործել վերոհիշյալ երկրները Խալիֆայության տարբեր երկրամասերի հետ կապող, ինչպես նաև այդ երկրների տարբեր կենտրոնները միմյանց միացնող Դվին-Պարտավ, Վարդանակերտ-Պարտավ, Պարտավ-Տփղիս, Պարտավ-Դարբանդ, Դվին-Մարանդ և Հեր-Դարբանդ ճանապարհները[3], որոնք շարունակեցին գործել նաև Հայաստանի քաղաքական անկա-

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 160-162:
[2] Տե՛ս **Я. Манандян**, О торговле и городах Армении..., էջ 201-203:
[3] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122, **al-Moqaddasi**, էջ 392:

խության վերականգնումից հետո:

7.1.Դվին-Պարտավ ճանապարհը: Այս ճանապարհի երկարությունը, ըստ Իբն Խորդադբեհի՝ կազմում էր 7 անցում (մոտ 200-280կմ): Ըստ ալ-Իսթախրիի՝ Դվինից մինչև Սիսաջան կոչվող կայարան հեռավորությունը կազմում էր 16 փարսախ[1], Սիսաջանից Քիլ-Քույ՝ նույնքան, վերջինից մինչև Դաումիս (Դավմիս)՝ նույնքան, Դավմիսից Մատրիս՝ 12 փարսախ, Մատրիսից Կալկաթուս՝ 13 փարսախ և Կալկաթուսից մինչև Պարտավ՝ 9 փարսախ[2]: Ալ-Մուկադդասին հաղորդում է, թե Քիլաքունիից մինչև Դավմիս հեռավորությունը կազմում էր 2 անցում[3], Դավմիսից մինչև Մատրիս՝ 2 անցում (60-80կմ), Մատրիսից մինչև Կալկաթուս՝ 2 անցում, Կալկաթուսից մինչև Պարտավ 1 անցում (30-40կմ)[4]:

Ըստ ալ-Իսթախրիի՝ Դվին-Պարտավ ճանապարհի բոլոր կայարանները գտնվում էին Սմբատ Ա-ի թագավորության մեջ[5]: Նույնը հաստատում է Իբն Հաուկալը[6]:

Դվին-Պարտավ ճանապարհի մանրակրկիտ ուսումնասիրությամբ զբաղվել են մի շարք հետազոտողներ: Հատկապես պետք է նշել Հ. Մանանդյանին, որը մի ծավալուն ուսումնասիրություն է նվիրել այս խնդրին[7]:

Սիսաջան: Սիսաջան կայարանի տեղադրության հարցում բազմաթիվ տեսակետներ են հայտնվել, սակայն դրանք միմյանց չեն համընկնում: Ն. Կարաուլովը Սիսաջանը տեղադրում էր Բաշ-Նորաշենից ոչ

---

[1] Մեկ փարսախը հավասար է 5752,8 մետրի: Հեռավորությունների չափման միավորների մասին տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Զ, Եր., 1985, էջ 185:

[2] Տե՛ս **al-Istakhri**, էջ 193: Պետք է նշել, որ արաբ աշխարհագետների բերած հեռավորություններին այնքան էլ չի կարելի վստահել, քանի որ արաբները ճանապարհների երկարությունները չափում էին մեկ օրում կենդանու անցած ճանապարհով: Դաշտավայրային շրջաններում նրանք ճանապարհն անցնում էին շատ ավելի կարճ ժամանակում, քան լեռնային շրջաններում, ինչի պատճառով լեռնային պայմաններում ճանապարհը նրանց թվում էր շատ ավելի երկար, քան կար իրականում (տե՛ս **Í. Êàðàóëîâ**, նշվ. աշխ., թիվ 29, էջ 68, ծանոթ. 68): Վերոհիշյալի ապացույցներին բազմիցս կհանդիպենք մեր հետագա քննության ընթացքում: Սակայն, դաշտավայրային շրջաններով անցնող ճանապարհների վերաբերյալ արաբ հեղինակների բերած հեռավորություններին կարելի է վստահել:

[3] Մեկ անցումը նույն է, ինչ որ մեկ օրվա ճանապարհը: Այն հավասար էր 5-7 փարսախի (30-40կմ): Տե՛ս **Í. Êàðàóëîâ,** նշվ. աշխ., թիվ 29, էջ 59, ծանոթ. 21:

[4] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 381-382:

[5] Տե՛ս **al-Istakhri**, էջ 194:

[6] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 350:

[7] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Եր., 1936, էջ 175-204:

հեռու գտնվող Կիսաջան վայրում[1]: Հ. Մանանդյանը՝ ընդունելով Սիսաջանի տեղադրությունը Կիսաջանի տեղում, կատարել է այն վերապահումը, թե անգամ դրա ընդունելի չլինելու դեպքում Սիսաջանը պետք է գտնվեր Շարուրից Վայոց ձոր տանող ճանապարհահատվածում, իսկ որ առավել հավանական է՝ Բաշ-Նորաշենից Արփա ընթացող գծամասում: Ըստ Հ. Մանանդյանի՝ Սիսաջան կայարանն իր անունը ստացել էր համապատասխան երկրամասի՝ Սիսականի (Սյունիք) անվանումից[2]:

Թ. Հակոբյանը նույնպես կայարանի անվանումը կապում է Սյունիք աշխարհի անվան հետ, և այն տեղադրում է Արենի գյուղի տեղում[3]:

Սիսաջան կայարանի կարաուլովյան տեղադրությունը Կիսաջան վայրում խոչընդոտների է հանդիպում: Նախ արաբ հեղինակների հիշատակած հեռավորություններին ճանապարհի Շարուրի դաշտ-Դվին հատվածում կարելի է վստահել հարթ տեղանքի պատճառով, իսկ այդ դեպքում առաջ է գալիս հեռավորությունների անհամապատասխանություն. Կիսաջանից մինչև Դվին 70-75կմ է, իսկ, ըստ ալ-Իսթախրիի՝ Սիսաջան-Դվին հեռավորությունը 16 փարսախ էր (մոտ 93կմ): Մյուս կարևոր առարկությունն այն է, որ Սիսաջանը չեն հիշում հայկական սկզբնաղբյուրները: Հ. Մանանդյանի պես ենթադրել, թե Սիսաջանը սոսկ քարավանատուն է եղել, ճիշտ չէ, քանի որ արաբ հեղինակներն այն քաղաք են համարում: Իբն Հաուկալը Սիսաջանի մասին հաղորդում է, թե այն հաճելի, միջին մեծության քաղաք է[4]: Իսկ Յակուտ ալ-Համավին հաղորդում է, որ Սիսաջանը մի քաղաք էր Դվինից 16 փարսախ հեռավորության վրա, որը գրավեց Հաբիբ իբն Մասլաման Հայաստանի նվաճման ժամանակ[5]:

Բ. Հարությունյանն ընդգծում է, որ, ըստ արաբ հեղինակների, Դվինից մինչև Սիսաջան հեռավորությունը պետք է կազմեր շուրջ 92կմ, իսկ Կիսաջանից ու Արենիից մինչև Դվին հեռավորությունը դրան չի համապատասխանում: Վայոց ձորում տեղանքն ուսումնասիրելիս նա եկել է այն եզրակացության, որ Սիսաջան կայարանը պետք է տեղադրել հինավուրց Վայս բերդի շրջակայքում: Վայս բերդի ավերակները ներկայումս կոչվում են Վեյսալի ղալասի և գտնվում են Տանձիկ գյուղի մոտակայքում: Բալազուրին Հաբիբ իբն Մասլամայի արշավանքի ժա-

---

[1] Տե՛ս "Êàðòà Êàâêàçñêîãî êðàÿ, Àðìåíèè è Àçåðáàéäæàíà, ñîñòàâëåííàÿ Êàðàóëîâûì íà îñíîâàíèè ñâåäåíèé àðàáñêèõ ãåîãðàôîâ",-Ñ Ì Î Ì Ï Ê, âûï. 38, էջ 128:

[2] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 194-195:

[3] Մանրամասնորեն տե՛ս **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը, էջ 90-96:

[4] **Ibn Haukal**, էջ 350:

[5] Տե՛ս **Jacut**, III, էջ 216:

մանակ Սյունիքում հիշում է միայն Վայս բերդի նվաճման մասին, հետևաբար Յակուտ ալ-Համավիի տեղեկությունը, թե Հաբիբ իբն Մասլաման գրավեց Սայսաջանը Հայաստանի արշավանքի ժամանակ, վերաբերում է, ամենայն հավանականությամբ, վերոհիշյալ բերդին: Ապա Բ. Հարությունյանը նույնպես գալիս է այն հետևությանը, որ կայարանի Սիսաջան անվանումն առաջ է եկել նահանգի անունից: Վերջիվերջո, այս տեղադրության օգտին է խոսում այն փաստը, որ Դվինից մինչև Վայս բերդի շրջակայքը շուրջ 90-92կմ է[1]:

Ա. Ղարագյոզյանը տեղազննության ժամանակ Բ. Հարությունյանի նշած տեղում, այսինքն՝ Տանձիկ գյուղի մոտակայքում, ուր պետք է գտնվեր Վեյսալի դալասին, որևէ ավերակ չի գտել[2]: Անդրադառնալով Սիսաջան քաղաքի տեղադրությանը՝ ուսումնասիրողը նշում է, որ հնագույն միակ քաղաքն այդ շրջանում գտնվում է Շարուրի դաշտում, Վայոց ձորի մուտքի մոտ, Նորաշեն գյուղի մերձակայքում[3]: Այն Ա. Այվազյանի կողմից նույնացվել է հինավուրց Արբային[4]: Սակայն, Ա. Ղարագյոզյանը վստահ է, որ այդ ավերակ բերդաքաղաքը ոչ թե Արբան է, այլ Մարակերտը (Մարավանը)[5]: Նա կարծում է նաև, թե արաբ հեղինակների Սիսաջանը հենց Սյունիքի մերձակայքում՝ Շարուրի դաշտում կառուցված Մարակերտն է: Դվինի և Մարակերտի միջև հեռավորությունն ուղիղ գծով կազմում է 75կմ, որը, ըստ ուսումնասիրողի՝ կարող է համապատասխանել արաբ հեղինակների հիշատակած 16 փարսախ հեռավորությանը (մոտ 93կմ)[6]: Կարծում ենք, որ տարածքի տեղազննության հիման վրա կատարած այս տեղադրությունն ավելի հավանական է:

Հավանաբար, ճանապարհը Երասխի հովտից, որտեղ՝ Հայաստանի և Նախիջևանի Հանրապետությունների սահմանի մոտ, պահպանվել են քարավանատան ավերակներ[7], դեպի Սիսաջան ընթանում էր Արփա գետի ափով: Ճանապարհը Սիսաջանից Գեղարքունի կայարան էր գնում, դատելով լեռնային տեղանքից, Սելիմի (Սուլեմա) լեռնանցքով և Արգի-

---

[1] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Դվին-Պարտավ ճանապարհի Sīsajān-Gēlakūnī գծամասը,- «ՊԲՀ», 1968, թիվ 1, էջ 217-218:

[2] Տե՛ս **Ա. Ղարագյոզյան,** Սիսաջան և Նակորզան քաղաքների տեղադրությունը,- «Լրաբեր (հաս. գիտ.)», 2001, թիվ 1, էջ 136, ծանոթ. 12:

[3] Տե՛ս **Ա. Այվազյան,** Նախճավանի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Եր., 1978, էջ 63:

[4] Անդ, էջ 63-64:

[5] Տե՛ս **Ա. Ղարագյոզյան**, նշվ. աշխ., էջ 139:

[6] Անդ:

[7] Տե՛ս "Âàæíåéøèå èñò îðèêî-àðõèòåêòóðíûå ïàìÿòíèêè äðåâíîñòè è ñðåäíåâåêîâüÿ", êàðòà,-"Àòëàñ Àçåðáàéäæàíñêîé ÑÑÐ", Áàêó- Ì îñêâà,1963, էջ 206-207:

ճի գետի ափով, որի ապացույցն են հին քարավանատների ավերակները Աղքենդում ու նրանից հյուսիս՝ Սելիմի լեռնանցքում[1]:

Քիլ-Քույ: Հ. Մանանդյանը ճիշտ է համարում Հ. Մարկվարտին, ով, ինչ-որ «անհայտ» աղբյուրի վրա հենվելով, Քիլ Քույը սրբագրել է Gēla-kūnī-ի (Գելաքունի-Գեղարքունի)[2]: Այդ անհայտ աղբյուրը, մեր կարծիքով, ալ-Մուկադդասին է, որը պահպանել է այդ անվան «كيلكوني» (Քիլաքունի) տարբերակը[3]: Այս կայարանն իր անվանումը ստացել է, թերևս, համապատասխան գավառի անունից, որը գտնվում էր Սոդք գավառի հարևանությամբ[4]: Արգիճի գետի գետաբերանի աջ կողմում գտնվում էր Կոթ գյուղաքաղաքը[5], որտեղից ճանապարհի մի ճյուղը, ըստ «Մղոնաչափք»-ի, Դվին էր գնում Բերդկունքով[6], իսկ մյուս ճյուղն էլ թեքվում էր հարավ և Դվին հասնում Սիսաջան կայարանով: Ուստի և հավանական է, որ հենց այստեղ՝ ճամփաբաժանի վրա, գտնվեր Գեղարքունիք կայարանը:

Դավմիս: Այս անվանումը Հ. Մանանդյանը պարզաբանում է այս անգամ արդեն արաբերենի «ذ» (զ)-«د» (դ) և «م» (մ)-«ط» (թ) շփոթով, ուստի և հարկ է Դավմիսը (دوميس) սրբագրել Զավթիսի կամ Զաութիսի (ذوطيس), որն էլ կհամապատասխանի հայկական Սոդք անվանը (գրաբարում՝ Սաւդք, սեռ. Սաւդից)[7]: Ճանապարհի այս կայարանի անվանումը նախորդի նման Հ. Մանանդյանը կապում է համապատասխան գավառի անվան հետ: Ուսումնասիրողն այն կարծիքին է, թե կայարանը պետք է գտնվեր ոչ թե Սեբեոսի հիշատակած «Սաւդայ քաղաքագեւղ»-ում[8], այլ հարակից հատուկ կարավանավայրում[9]:

Մատրիս: Այն, ըստ ալ-Իսթախրիի՝ պետք է գտնվեր Կալկաթուս-Կաղկատույքից 13 փարսախ (մոտ 75կմ) հեռավորության վրա: Հ. Մանանդյանն այս կայարանի տեղադրության հարցը լուծել է Մատրիսը (متريس) սրբագրելով Հատրիսի (هتريس), ինչը հավանական է՝ կապված արաբերեն «م» (մ) և «ه» (h) տառերի հաճախակի շփոթությունների հետ[10]:

---

[1] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 163-165:
[2] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 196:
[3] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 382:
[4] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 196:
[5] Անդ, էջ 197, քարտեզ:
[6] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, էջ 381:
[7] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 196-199:
[8] Տե՛ս **Սեբեոս**, էջ 88:
[9] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 199:
[10] Անդ, էջ 199:

Այսպիսի սրբագրումից հետո Հատրիսը կհամապատասխանի հայկական Հաթերք (սեռ. Հաթերից) տեղանվանը[1]: Հ. Մանանդյանը կարծում է, թե այդ անվանումը վերաբերում է գավառին, որտեղ, հատուկ կարավանավայրում, գտնվել է կայարանը[2]: Մեր կարծիքով, Հաթերից գավառի հիշյալ «փոքր քաղաք»-ը հենց գավառի անունով պետք է կոչվեր Հաթերից ավան: Ըստ երևույթին, այն համապատասխանում է հինավուրց Հաթերք գյուղին: Սակայն, հարկ է նշել, որ կայարանը պետք է գտնվելիս լիներ ոչ թե Հաթերք գյուղում, այլ դրանից դեպի հարավ՝ ճանապարհի վրա՝ Տրտու գետի ափին:

Կալկաթուս: Կալկաթուսը, ըստ Մարկվարտի և Հ. Մանանդյանի՝ համապատասխանում է Հայոց Արևելից կողմերի պատմիչ Մովսես Դասխուրանցուն վերագրվող Կաղանկատույք գյուղին[3]: Մ. Բարխուդարյանցը, որը մանրամասնորեն տվել է Արցախ աշխարհի տեղագրությունը, Կաղանկատույքը տեղադրում է Դյուտական գյուղի հարևանությամբ գտնվող ավերակների տեղում՝ Թալիշ և Մատաղիս գյուղերի միջև[4]: Կաղանկատույքի այդ տեղադրությունն իր աշխատանքում որպես հիմք է ընդունել Հ. Մանանդյանը[5]:

Կաղանկատույքի այդ տեղադրությունը քննություն չի բռնում, քանի որ, գտնվելով Դյուտական գյուղի հարևանությամբ, հիշյալ ավերակները մտնում էին Արցախի մեջ[6], իսկ Կաղանկատույքը գտնվում էր Ուտիքի Ուտի Առանձնակ գավառում՝ վերջինիս և Արցախի միջև սահմանին մոտ՝ Տրտու գետի ափին[7]: Այդ պատճառով ուսումնասիրողներն այժմ Կաղանկատույքը տեղադրում են Ուտիքում՝ ներկայիս Միր-Բաշիր քաղաքի տեղում կամ դրա մերձակայքում (նախկին Թարթառ կայարանը)[8], որը Դյուտականի հարևանությամբ գտնվող ավերակներից մոտ 15կմ հեռավորության վրա է: Միր-Բաշիրը գտնվում է Պարտավից մոտ 25կմ հեռավորության վրա, որը չի համապատասխանում Պարտավի և Կալկաթուսի միջև արաբ հեղինակների նշած հեռավորությանը (մոտ 50կմ): Մինչդեռ, դատելով դաշտային տեղանքից, արաբ հեղինակների սխալն

---

[1] Անդ, էջ 200:
[2] Անդ:
[3] Անդ, էջ 200-201:
[4] Տե՛ս **Մ. Բարխուտարեանց,** Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 31:
[5] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 201:
[6] Տե՛ս **Ø. Ì êðò÷ÿí,** Èñòîðèêî-àðõèòåêòóðíûå ïàìÿòíèêè Íàãîðíîãî Êàðàáàõà, Åð.,1988, էջ 58-59:
[7] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 132-133,137:
[8] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, **Ս. Երեմյան**, Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ և այլն:

այս դեպքում էական չպետք է լինի: Ուստի և կասկածելի է Կալկաթուսի նույնացումը Կաղանկատույքին: Դրա ապացույցն է նաև այն, որ Կաղանկատույքն արաբերենին համապատասխանեցնելու դեպքում դառնալու էր ոչ թե Կալկաթուս, այլ Կալանկաթուս: Հենց դա էլ նկատել է Հ. Մանանդյանը՝ փորձելով Հ. Մարկվարտի օրինակով Կալկաթուսը սրբագրել Կալ[ան]կաթուսի[1]: Արաբ և ոչ մի հեղինակ չի պահպանել Կալանկաթուս անվանումը, իսկ Կալկաթուսը նրանք հիշատակում են՝ կապված բացառապես Պարտավ-Դվին ճանապարհի հիշատակության հետ: Ամենայն հավանականությամբ, բացի Կաղանկատույքից, կար նաև Կաղկատույք (Կալկաթուս) անունով մի բնակավայր: Կարծում ենք, որ Դյուտականի հարևանությամբ գտնվող ավերակների տեղում տեղորոշվում է ոչ թե Կաղանկատույքը, այլ Կաղկատույքը, որը, ի տարբերություն Կաղանկատույքի, գտնվում էր Արցախում: Խնդիրն այն է, որ Կաղանկատույք անվանումը մինչև հիմա էլ պահպանվել է Դյուտական գյուղի շրջակայքի բնակիչների մեջ, որոնք ցույց են տալիս հիշյալ ավերակ գյուղը որպես Մովսես Դասխուրանցու ծննդավայր[2]: Քանի որ այդ ավերակների տեղում բացառվում էր Կաղանկատույքի գտնվելը, ապա կարծում ենք, որ այդտեղ գտնվել է Կաղկատույք գյուղը, որը հարյուրամյակների ընթացքում շրջակայքի բնակչության մեջ անվան նմանության պատճառով աստիճանաբար սկսել է ընկալվել որպես Մովսես Դասխուրանցու ծննդավայր Կաղանկատույք: Այդտեղից մինչև Պարտավ մոտ 40կմ հեռավորությունն ավելի մոտ է արաբ հեղինակների հիշատակած հեռավորությանը:

Այսպիսով՝ ճանապարհը Դվինից Երասխ գետի ափամերձ շրջաններով ընթանում էր հարավ, հասնում Մարակերտ-Սիսաջան, որտեղից, Արփա գետի ափով, Սելիմի լեռնանցքով և Արգիճի գետի հովտով դուրս էր գալիս Գեղամա ծովի հարավային ափը և այնտեղից՝ ներկայիս ավտոճանապարհի ուղեգծով, շարժվում էր դեպի Սոդքի լեռնանցք: Անցնելով լեռնանցքը՝ ճանապարհը սկզբում Լև (Լևոնագետ), իսկ այնուհետև Տրտու գետերի հովիտներով շարժվելով՝ հասնում էր Պարտավ:

Փաստորեն, այս ճանապարհը կապում էր Հայոց տերության երկու մեծագույն քաղաքները: Պետք է նշել, որ, ըստ «Մղոնաչափք»-ի՝ ճանապարհը Պարտավից շարժվում էր դեպի Կասպից ծովի ափերը[3]:

7.2. Դվին-Կոստանդնուպոլիս ճանապարհը: Հայտնի է, որ Սմբատ Ա-ն իր թագավորության առաջին տարիներին առևտրական պայմանա-

---

[1] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 201:
[2] Տե՛ս **Ø. Ì êðò÷ÿí**, նշվ. աշխ., էջ 58:
[3] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Զ, էջ 182-183:

գիր կնքեց Բյուզանդիայի կայսրության հետ[1], որից հետո ակտիվացան հայ-բյուզանդական առևտրական հարաբերությունները: Սկսեց գործել Դվինից Տրապիզոնով Բյուզանդական կայսրություն ընթացող ճանապարհը: Ըստ ալ-Մուկադդասիի՝ Դվինի ամենամեծ դարպասներից մեկը կոչվում էր Բաբ Անի[2]: Պատճառն այն էր, որ Անիի դարպասով մեծ առևտրական ճանապարհն ընթանում էր դեպի Բյուզանդիա:

Դվին-Կոստանդնուպոլիս ճանապարհը Դվինից մինչև Բասեն ուներ երկու ուղեգիծ: Առաջին ուղեգիծը գլխավորն էր, որի վրա զարգանում էին մի քանի քաղաքներ՝ Անին, Կարսը, Արծնը և այլն: Պետք է նշել նաև, որ Աշոտ Ա-ի մայրաքաղաք Բագարանը և Սմբատ Ա-ի մայրաքաղաք Երազգավորսը ուղղակիորեն կապված էին Դվին-Տրապիզոն ճանապարհին Անիով:

Ճանապարհը Դվինից շարժվում էր հյուսիսարևմտյան ուղղությամբ, Անիով անցնում Կարս և շարժվելով արևմուտք՝ հասնում էր Վաղարշավան, իսկ այնուհետև՝ Արծն: Այնտեղից դեպի արևմուտք ճանապարհը մուտք էր գործում Բյուզանդիա, Խաղտոյառիճով հասնում Բաբերդ, որտեղից ճյուղ էր տալիս՝ դեպի հյուսիս՝ Զիգանայով ընթանալով Տրապիզոն[3]: Գլխավոր ուղեգիծը Բաբերդից ուղղակիորեն ընթանում էր Կոստանդնուպոլիս: Ինչպես տեսանք, Տրապիզոնը հայ վաճառականների համար Բյուզանդական կայսրության տարբեր շրջաններում կատարվող առևտրում ուներ կարևոր նշանակություն:

Ճանապարհի երկրորդ ուղեգիծը Դվինից մինչև Բասեն ընթանում էր Բագավանով: Ճանապարհի այդ հատվածը համապատասխանում էր հայոց հինավուրց Արքունի պողոտայի կամ Արտաշատ-Տիգրանակերտ մայրուղու Արտաշատ-Բագավան գծամասին[4]:

Արքունի պողոտայի, ինչպես նաև Դվին-Սատաղ ճանապարհի քննությունը մանրամասնորեն կատարել է Հ. Մանանդյանը[5]:

Ինչպես ցույց է տալիս Ղևոնդի մի վկայությունը, Արքունի պողոտան գործում էր նաև VII դ.[6]: Ամենայն հավանականությամբ, այն անցնում էր Երասխ գետն Արտաշատի կամ Տափերի (Տափերական) կամրջով: Համաձայն Հ. Մանանդյանի տեղադրությունների՝ Արտաշատի և Բագավանի միջև՝ Արքունի պողոտայի վրա, գտնվում էին Փառա-

---

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 160-162:
[2] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 377:
[3] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 85-114: Տե՛ս նաև **Ս. Երեմյան**, Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ:
[4] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 140:
[5] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 85-114:
[6] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 140:

խոտ, Ցոլակերտ և Արուճ բնակավայրերը[1]:

Դատելով Ղևոնդի հաղորդումից՝ Բագավանից հետո Արքունի պողոտան անցնում էր Բագրևանդ գավառում գտնվող Արծնի գյուղով: Պատմիչը, խոսելով այն մասին, թե ինչպես են արաբական զորքերն Ամր զորավարի գլխավորությամբ Ձորա պահակով մտնում Հայաստան և գալիս Խլաթ, պատմում է, որ ապա «նոյնժամայն շունչ կլեալք՝ դարձեալ յարձակէին, ուշ եդեալ ելանել յառաջին պողոտայն արքունի ընդ գավառն Ապահունիս: Հասանէին ի գաւառն Բագրևանդ ի գիւղն Արծնի»[2]: Այստեղ արաբական զորքերը բանակ են դնում «առ եզերբ գետոյն (իմա՛ Արածանի-Ա.Ե.) որ ընդ նա (իմա՛ Արծնի գյուղը-Ա.Ե.) անցանէ»[3]: Դեպի Արծնի են գալիս նաև Կարնո քաղաքը պաշարած Մուշեղ Մամիկոնյանի գնդերը, գալիս են Բասենով ու հասնում Բագրևանդ: Այստեղ հայկական գնդերը անցնում են Արածանին ու հարձակվում արաբների վրա[4]: Փաստորեն, ճանապարհը Բագավանից Արածանու ափով շարժվում էր դեպի արևմուտք ու հասնում Արծնի գյուղը:

Արքունի պողոտան, փաստորեն, դուրս գալով Դվինից, երկու ճյուղ էր տալիս Արծնի գյուղում: Մեկը շարժվում էր դեպի Արճեշ, իսկ մյուսը, ըստ «Մղոնաչափք»-ի՝ Կարին[5]: Համաձայն Պևտինգերյան քարտեզի՝ ճանապարհը երկփեղկվում էր Բագավան հանգուցային կայարանից՝ Բագրևանդում[6]: Դատելով հիշյալ ուղղություններից, որոնցով հայոց և արաբական զորքերը եկան ու հանդիպեցին Արծնի գյուղի մոտ և Պևտինգերյան քարտեզի վերոհիշյալ հիշատակությունից, Արծնին գտնվում էր Բագավանի հարևանությամբ՝ Արածանու ափին[7]:

Ճանապարհն այնուհետև Ալաշկերտի դաշտով և Արամանա կոչված գյուղով շարժվելով՝ հատում էր Հայկական պարից արևմուտք գտնվող Ձրաբաշխ լեռները Բագրևանդ գետի վերին հոսանքից դեպի արևմուտք և Բասենում միանում Դվին-Տրապիզոն ճանապարհին[8]: Վերջինիս օգ-

---

[1] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 22-25: Տե՛ս նաև **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[2] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 147-148:

[3] Անդ, էջ 148:

[4] Անդ:

[5] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, էջ 381:

[6] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 46:

[7] Հետաքրքիր է այն, որ Հ. Մանանդյանն իր աշխատությանը կից «Bagauna-Artaxata ուղեգիծը» քարտեզում ճանապարհը երկփեղկել է ոչ թե Բագավանում, ինչպես նշում է Պևտինգերյան քարտեզը, այլ նրանից դեպի արևմուտք՝ այնտեղ, ուր պետք է գտնվեր Արծնին (տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 47, տե՛ս նաև **Ղ. Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 525):

[8] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 48-62:

տին է խոսում նաև Ղևոնդի կողմից Արծնիի ճակատամարտի նախօրեին տեղի ունեցող իրադարձությունների նկարագրությունը: Կարնո քաղաքը պաշարած Մուշեղ Մամիկոնյանի գնդերն արաբներին ընդառաջ դեպի Արծնի են գալիս Բասենով ու հասնում Բագրևանդ[1]: Դվին-Տրապիզոն ուղեգծով ճանապարհն հասնում էր մինչև Խաղտոյառիճ, որտեղից ճանապարհը երկփեղկվում էր հյուսիս-արևմուտք՝ դեպի Տրապիզոն, և արևմուտք՝ դեպի Երզնկա-Սատաղ-Կողոնիա-Կոստանդնուպոլիս[2]:

Այս ճանապարհը հիշատակվում է նաև «Մղոնաչափք»-ում՝ հետևյալ կայարաններով. Դվին-Կարին (հետագայում ճանապարհն ընթանում էր արդեն Արծն քաղաքով)-հայ-բյուզանդական սահմանային շրջան-Կողոնիա-Նեոկեսարիա-Ամասիա-Կոստանդնուպոլիս[3]:

Նշենք նաև, որ Կարսից Դվին-Տրապիզոն ճանապարհը ճյուղ էր տալիս դեպի Արտանուջ, իսկ այնտեղից էլ՝ ընթանում դեպի Սև ծովի ափերը: Ըստ Թ. Հակոբյանի՝ Արտանուջից ճանապարհը շարժվում էր Սև ծովի ափերն ու հասնում Խուփթա, որտեղից էլ մի ճյուղով ընթանում էր դեպի Տրապիզոն և դեպի Փույթ, իսկ մյուսով՝ դեպի Սեբաստուպոլիս[4]:

7.3. Դվին-Սեբաստուպոլիս (Սուխում) ճանապարհը: Այս ճանապարհի մանրամասն քննությամբ զբաղվել է Հ. Մանանդյանը՝ կատարելով նրա կայարանների տեղադրություններն ու ճշտելով երթուղին: Այն Դվինից շարժվում էր Աշտարակով և Ապարանով, Գանլիջա գյուղով, որտեղ գտնվում է Մարմաշենի վանքը, հետո Փարվանա լճից դեպի հարավ-արևմուտք ընթանալով՝ հասնում էր Ախալքալաքից հարավ գտնվող Խոսպիա բնակավայրին: Այնուհետև ճանապարհը Ախալցխայից դեպի հարավ հատում էր Կուր գետը և շարժվում Աբասթուման: Այստեղից ճանապարհը անցնում էր հյուսիս և ներկայիս իմերեթական ուղիով շարժվում դեպի Փույթ, որտեղից էլ՝ Սև ծովի ափով դեպի Սեբաստուպոլիս[5]:

Դվին-Սեբաստուպոլիս ճանապարհը Հայ Բագրատունիների տերությունը կապում էր Աբխազաց թագավորության և Հյուսիսային Կովկասի հետ:

7.4. Դվին-Տփղիս-Հյուսիսային Կովկաս ճանապարհը: Արաբական

---

[1] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 147-148:
[2] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 62-82:
[3] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Ձ, էջ 182-183:
[4] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 279:
[5] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 117-135:

տիրապետության շրջանում իր նախկին առևտրական նշանակությունը կորցրել ու ռազմական կարևորություն էր ստացել Արմինիա ոստիկանության հյուսիսային սահմանային ամրությունների գոտում գտնվող Ալանաց դռնով (Դարիալի կիրճ) անցնող ճանապարհը: Այդ իրողությունը կապված էր խազարների դեմ արշավանքներում արաբների կողմից դրա հաճախակի օգտագործման[1], ինչպես նաև խազարների ներխուժումների դեմ Ալանաց դռան մեծ պաշտպանական նշանակության հետ[2]:

Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո Ալանաց դռնով անցնող ճանապարհը վերստին առևտրական կարևոր նշանակություն ձեռք բերեց, որի հետևանքով կարևորություն ստացավ նաև Դվին-Տփղիս ճանապարհը: «Մղոնաչափք»-ի Դվին-Տփղիս ճանապարհը, համեմատելով Սասանյանների տիրապետության շրջանում (համաձայն Պևտինգերյան քարտեզի) նույն ուղղությամբ գործող ճանապարհի հետ, երասխ գետի ափամերձ շրջանով բարձրանում էր դեպի հյուսիս ու, այնուհետև, անցնում Հրազդան գետի արևելակողմով ընդհուպ մինչև նրա ակունքի շրջանը, որից հետո, շարժվելով հյուսիս, անցնում էր Սևանի լեռնանցքով: Ճանապարհը այստեղից դեպի Տփղիս, ամենայն հավանականությամբ, ընթանում էր ներկայիս Դիլիջանով և Աղստևի ձախ ափով դուրս էր գալիս Կուր գետի ափը[3], որտեղ միանում էր Պարտավ-Տփղիս ճանապարհին Հունարակերտ կայարանում, որը գտնվում էր Աղստևի գետաբերանի ձախ ափին: Հունարակերտից ճանապարհը Տփղիս էր շարժվում Պարտավ-Տփղիս ճանապարհի երթուղով՝ Կալա իբն Քանդաման (Գարդաբանում) կայարանով:

Դվին-Տփղիս ճանապարհը Տփղիսից ընթանում էր դեպի Ալանաց դուռ, որտեղից էլ անցնում էր Հյուսիսային Կովկաս:

Դվին-Տփղիս ճանապարհը Տփղիսից մեկ այլ ուղեգծով՝ Մծխեթայով, Ուփլիսցխեով և Սուրամով ընթանում էր դեպի Կոտայիս (Քութայիս)[4], որտեղից անցնում էր Սև ծովի ափերը:

Մեկ այլ ճանապարհ մի կողմից Տփղիս և մյուս կողմից Ուփլիսցխեով Քութայիս էր հասնում Դվին-Սամշուլդե ուղեգծով:

Թովմա Արծրունու մի հաղորդման համաձայն՝ Տփղիսի ամիրա Սա-

---

[1] Տե՛ս بلاذري, I, էջ, 244, 246:

[2] Տե՛ս Jacut, I, էջ 350-352: Տե՛ս նաև مسعودي, I, էջ 194:

[3] Տե՛ս **Ñ. Âðåìÿí,** Òîðãîâûå ïóòè Çàêàâêàçüÿ â ýïîõó Ñàñàíèäîâ ïî Tabula Peutingeriana,-"Âåñò íèê äðåâíåé èñò îðèè", M., 1939, N 1, էջ 81-85:

[4] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, h. Զ, էջ 182-183:

հակը «ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ»[1]: Այսինքն՝ Տփղիսի դարպասներից մեկով ընթացող ճանապարհը տանում էր Սամշուլդե:

7.5. Դվին-Բաղեշ-Միջագետք-Ասորիք ճանապարհը: Դվինից Բաղեշ ընթացող ճանապարհը նույնական էր հայոց Արքունի պողոտային:

Արքունի պողոտայի քննությունը մանրամասնորեն կատարել է Հ. Մանանդյանը[2]: Բ. Հարությունյանը, կապված Տիգրանակերտի տեղադրության հետ, անդրադարձել է Հայոց մայրուղու՝ Տարոնի դաշտ-Տիգրանակերտ հատվածին[3]:

Արքունի պողոտան Արտաշատից շարժվում էր դեպի Բագավան: Ինչպես տեսանք, այն անցնում էր Երասխ գետն Արտաշատի կամ Տափերի (Տափերական) կամրջով և Բագավան հասնում Փառախոտ, Ցոլակերտ և Արուճ բնակավայրերով[4]: Բագավանից հետո Արքունի պողոտան անցնում էր Բագրևանդ գավառում գտնվող Արծնի գյուղով: Արքունի պողոտան Արծնիում երկու ճյուղ էր տալիս: Մեկը շարժվում էր Արճեշ, իսկ մյուսը՝ դեպի Կարին: Արքունի պողոտայի հիմնական ուղեգիծը Արծնիից այն կողմ ընթանում էր Ապահունիքով, Հարքով ու Տարոնով: Համաձայն Հ. Մանանդյանի քննության, Հայոց մայրուղին Արծնիից հետո շարժվում էր Արածանի գետի ձախ ափով, հասնում Դիդեմ բնակավայրին, այնտեղից էլ՝ Ապահունիքում գտնվող Ծումբ և Եղեգական բնակավայրերով հասնում էր Մանազկերտ:

Ճանապարհն այնուհետև անցնում էր Հարք, որտեղից, շարժվելով հարավարևմտյան ուղղությամբ, անցնում էր ներկայիս Բոստաքենդով (Բաստավան)[5]:

Բոստաքենդից հետո ճանապարհն անցնում էր Մուշ քաղաքով:

Արքունի պողոտան Մուշից շարժվում էր Տարոնի դաշտում գտնվող Խասգյուղով և Չուխուր-Նորշենով[6]: Այնուհետև այն, անցնելով Չորա

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 272:

[2] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 85-114:

[3] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 175-198:

[4] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 22-25: Տե՛ս նաև **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[5] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 91-112: Տե՛ս ցարական բանակային շտաբի տասվերստանոց քարտեզի թիվ 81 պլանշետը: Տե՛ս նաև **Ս. Երեմյան**, Վասպուրականի թագավորությունը (908-1021 թթ.), քարտեզ,-«ՀՍՀ», հ. 11, Եր., 1985, էջ 320:

[6] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 194-195:

պահակ լեռնանցքով և Բաղեշով, շարժվում էր Տիգրանակերտ:

Այս մայրուղին, ըստ «Մղոնաչափք»-ի՝ Հայաստանը կապում էր Դամասկոսի, Երուսաղեմի և Մերձավոր Արևելքի մյուս կարևոր առևտրական կենտրոնների հետ[1]:

7.6. Դվին-Մարանդ ճանապարհը: Այս ճանապարհի մասին Իբն Խորդադբեհը հաղորդում է, որ Դվինից մինչև Նախճավան 20 փարսախ է, Նախճավանից մինչև ալ-Վադի (իմա՛ գետահովիտ-Ա.Ե.)՝ 10 փարսախ, և նույնքան էլ՝ վերջինիցս մինչև ալ-Վադի[2]: Ավելի ուշ շրջանի արաբ աշխարհագետներից այս ճանապարհը հիշատակում է ալ-Մուկադդասին: Ըստ արաբ աշխարհագետի՝ Դվինից մինչև Նախճավան և վերջինիցս մինչև Մարանդ համապատասխանաբար 2-ական անցում հեռավորություն է: Նա Մարանդից Նախճավան ճանապարհը համարում է դժվարին[3]:

Դվինից Մարանդ ճանապարհի կայարանների տեղադրությունները հայտնի են, իսկ ինչ վերաբերում է երթուղուն, ապա այն Դվինից Նախճավան էր շարժվում Երասխի հովտով: Ճանապարհը Մարանդի կողմից Երասխի հովիտ էր գալիս Մարանդ-Ջուլֆա ուղեգծով, որի երկարությունը մոտավորապես համապատասխանում է Իբն Խորդադբեհի հիշատակած ալ-Վադիից (Երասխի հովիտը) Մարանդ 10 փարսախ (մոտ 58կմ) հեռավորությանը: Հենց այս երթուղին է հիշատակում Ղևոնդը՝ պատմելով, որ արաբական մի զորախումբ, գերեվարելով Գողթն գավառի և Նախճավանի ժողովրդին, անցկացնում է «...ընդ գետն Երասխ ընդ հունն Ջուղայոյ»[4]:

Դվին-Մարանդ ճանապարհի Մարանդ-Երասխ գետի հովիտ ճանապարհահատվածը (մոտ 60-65կմ), դատելով լեռնային տեղանքից, ճանապարհորդներից խլելու էր երկու օր: Ինչպես տեսանք, ալ-Մուկադդասին Նախճավանից Մարանդ հեռավորությունը նշում է 2 անցում: Նախճավանից մինչև Մարանդ մոտ 110կմ է, իսկ այդ հեռավորությունը հաղթահարել երկու անցումով (այսինքն՝ երկու օրում) հնարավոր չէ, քանի որ մեկ օրում հնարավոր է անցնել առավելագույնը 30-40կմ: Այսինքն՝ Նախճավան-Մարանդ ճանապարհի երկարությունը 3 անցումից պակաս լինել չէր կարող: Հավանական ենք համարում, որ ալ-Մուկադդասիի նշած 2 անցումն իրականում վերաբերում էր Երասխ գետի հովիտ-Մարանդ ճանապարհահատվածին: Այդ պարագայում, կայարանը

---

[1] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 381:
[2] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122:
[3] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 381-382:
[4] **Ղևոնդ**, էջ 7:

Երասխի հովտի և Մարանդի միջև գտնվելու էր, ամենայն հավանականությամբ, Կիամքի լեռից դեպի արևմուտք գտնվող լեռնանցքի հարևանությամբ:

Գալով Նախճավանից մինչև ալ-Վադի հեռավորությանը՝ պետք է նշել, որ Իբն Խորդադբեհի հիշատակած 10 փարսախ հեռավորությունը (մոտ 58կմ) իրականությանը չի համապատասխանում, քանի որ այն հավասար է մոտ 42կմ-ի, այսինքն՝ մեկ անցումի: Ուստի և կարծում ենք, որ Նախճավան-Մարանդ ճանապարհահատվածի երկարությունը կազմում էր 3 անցում:

Ճիշտ չէ ալ-Մուկադդասիի վերոգրյալ հիշատակության մեջ Դվինից Նախճավան 2 անցում (60-80կմ) հեռավորության նշումը, մանավանդ, եթե հաշվի առնենք արաբ հեղինակի մեկ այլ հիշատակությունը, թե նույն հեռավորությունը 4 անցում էր (120-160կմ)[1]: Ինչ վերաբերում է Դվինից Նախճավան Իբն Խորդադբեհի հիշատակած 20 փարսախ հեռավորությանը (116կմ), ապա այն համապատասխանում է իրականությանը:

Այս ճանապարհը Հայոց տերությունը կապում էր մի կողմից Ատրպատականի Գանձակի, իսկ մյուս կողմից՝ Թավրիզի հետ: Այդ քաղաքներից ճանապարհները տանում էին Պարսկաստան, Պարսից ծոցի առափնյա երկրներ, Խորասան ու Միջին Ասիա[2]:

Պետք է նշել, որ Դվին-Մարանդ ճանապարհն Արփա գետի ստորին հոսանքում միանում էր Դվին-Պարտավ ճանապարհին:

Այս ճանապարհը Նախճավանում ճյուղ էր տալիս: Այն հատում էր Երասխ գետը և Մարաղա ընթանում Հեր-Սալամաս-Ուրմիո ուղեգծով[3]: Ամենայն հավանականությամբ, Ուրմիոյից իջնելով հարավ՝ ճանապարհը ընթանանում էր Կապուտան ծովի հարավային ափերով և հասնում Մարաղա: Վերջինիցս այն կողմ ճանապարհը շարժվում էր հարավ և հասնում Պարսկաստանի խորքերը[4]:

7.7. Վարդանակերտ (Վարսան)-Պարտավ ճանապարհը: Այս ճանապարհն Իբն Խորդադբեհը ներկայացնում է հետևյալ ձևով. «Վարսանից մինչև Դարման 3 փարսախ է, ապա մինչև Բայլական՝ 9 փարսախ, հետո մինչև Բարդաա 14 փարսախ է»[5]: Կուդաման, որի հայրն անձամբ ծանոթ

---

[1] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 381-382:
[2] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Զ, էջ 182-183:
[3] Տե՛ս **al-Istakhri**, էջ 194:
[4] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը IX-X դդ., քարտեզ:
[5] **Ibn Khordadbeh**, էջ 122:

է եղել Իբն Խորդադբեհին[1], և որն, անկասկած, ծանոթ էր վերջինիս աշխարհագրական երկին, Վարդանակերտ-Պարտավ ճանապարհը հիշատակում է այս տեսքով. «Վարսանից մինչև Կումամ 3 փարսախ է, ապա մինչև Բայլական՝ 7 փարսախ, հետո մինչև Բարդաա՝ 3 փարսախ է»[2]: Ալ-Իսթախրին հաղորդում է. «Բարդաայից մինչև Յունան 7 փարսախ է և Յունանից մինչև Բայլական՝ 7 փարսախ, Բայլականից Վարսան 7 փարսախ է»[3]: Նույնատիպ տեղեկություն է հաղորդում Իբն Հաուկալը[4], իսկ ալ-Մուկադդասին Պարտավ-Յունան-Բայլական-Վարսան ճանապարհի կայարանների միջև հեռավորությունները նշում է մեկական անցում[5]: Արտավետ-Վարդանակերտ-Պարտավ ճանապարհը հիշատակվում է նաև «Մղոնաչափք»-ում՝ կապված Նախճավանից Կասպից ծովի ափերը գնացող ճանապարհի հետ: Այդ ճանապարհը Նախճավանից անցնում էր Արտավետ, այնտեղից՝ Վարդանակերտ, ապա անցնում Պարտավ ու գնում Կասպից ծովի ափերը[6]:

Վարդանակերտ-Պարտավ ճանապարհը, գալով Խորասանից, հասնում էր Ատրպատական՝ Արդաբիլ (հայկական աղբյուրներում՝ Արտավետ), որտեղից էլ Բարզանդ ու Բալխաբ կայարաններով շարժվում էր Վարսան[7]: Վերջինը գտնվում էր Ատրպատականի ամիրայության և Հայոց տերության սահմանին[8]:

Վարսան: Համապատասխանում է Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի Վարդանակերտ գավառի համանուն կենտրոնին: Այն նույնական է Երասխ գետի ափին՝ նրա մեջ Կարա-սու գետի թափվելու տեղից դեպի հյուսիս-արևելք գտնվող Ալտան բերդի ավերակներն[9]: Այսպիսի տեղադրությունը հաստատվում է նաև արաբ հեղինակների հիշատակած հեռավորությունների համապատասխանությամբ: Այսպես՝ Արտավետից Ալտան եկող ճանապարհի երկարությունը կազմում է շուրջ 170-180կմ, իսկ ալ-Իսթախրիի հիշատակությամբ՝ 29 փարսախ կամ մոտ 170կմ[10]: Նմանապես, Ալտանի ավերակներից մինչև Բայլական շուրջ 40կմ հեռավորությունը համապատասխանում է արաբ հեղինակի նշած

---

[1] Տե՛ս Í. Êàðàóëîâ, նշվ. աշխ., թիվ 32, էջ 23:
[2] Kudama, էջ 213:
[3] Al-Istakhri, էջ 192:
[4] Տե՛ս Ibn Haukal, էջ 349:
[5] Տե՛ս al-Moqaddasi, էջ 381:
[6] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, էջ 381:
[7] Տե՛ս al-Istakhri, էջ 192:
[8] Տե՛ս Ibn Khordadbeh, էջ 121:
[9] Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 83:
[10] Տե՛ս al-Istakhri, էջ 192:

Վարսան-Բայլական 7 փարսախ հեռավորությանը (շուրջ 41կմ)[1]:

Դարման: Վարդանակերտ-Պարտավ ճանապարհահատվածը Վարդանակերտ-Դարման-Բայլական-Պարտավ երթուղով հիշատակում են միայն Իբն Խորդադբեհն ու Կուդաման: Ճիշտ է, Կուդաման Դարմանի (درمان) փոխարեն պահպանել է Կումամ (قومام) անվանումը, սակայն, քանի որ նա ծանոթ է եղել Իբն Խորդադբեհի երկին, մենք կարծում ենք, որ Կումամը Դարմանի աղավաղումը պետք է լինի: Բացի այդ, խոսուն ապացույց է նաև այն, որ Կուդաման Կումամի հեռավորությունը Վարսանից նշում է երեք փարսախ, այնքան, որքան, ըստ Իբն Խորդադբեհի՝ պետք է լիներ Դարմանի հեռավորությունը Վարսանից: Արաբ հեղինակների երկերի թարգման Ն. Կարաուլովն այն կարծիքին է, թե Կումամը Յունանի աղավաղումն է[2]: Այսինքն, ըստ նրա՝ Կուդաման մյուս հեղինակների հիշատակած Յունան կայարանը, որը գտնվում էր Բայլական-Պարտավ ճանապարհահատվածի վրա, շփոթել և տեղադրել է Վարդանակերտ-Բայլական ճանապարհահատվածում: Նա կարծում է, որ Դարմանը նույնպես Յունանի աղավաղումն է[3]: Կարևոր է ընդգծել, որ Իբն Խորդադբեհին անծանոթ չէ ավելի ուշ շրջանի հեղինակների հիշատակած մյուս ուղեգիծը[4]: Ուստի և կարծում ենք, որ բացի հիմնական Վարդանակերտ-Բայլական-Յունան-Պարտավ ճանապարհահատվածից, գոյություն ուներ ևս մեկը՝ Դարմանով: Վերջինս, ըստ Իբն Խորդադբեհի՝ գտնվում էր Վարսանից 3 փարսախ (մոտ 17կմ) հեռավորության վրա: Դարմանի տեղադրության որևէ տարբերակ տալը շատ դժվար է, քանի որ սա դրա միակ հիշատակությունն է: Ն. Կարաուլովը, որը թե՛ Դարմանը և թե՛ Կումամը համարում էր Յունանի աղավաղումները, այն տեղադրել է ներկայիս Դեյրան գյուղի տեղում[5]: Դեյրանը գտնվում էր նախկին Աղդամ քաղաքից շուրջ 20կմ դեպի արևելք[6]: Յունանի նման տեղադրությունը, ինչպես կտեսնենք, ընդունելի տարբերակ է, իսկ ինչ վերաբերում է Դարմանին, ապա փորձենք տեղադրել այն: Ադրբեջանա-իրանական սահմանին, Երասխ գետից հարավ, կար Դարանյան կոչվող մի հենակետ, իսկ վերջինիս հարևանությամբ, դեպի արևելք, գտնվում էր

---

[1] Տե՛ս Ցարական բանակային շտաբի տասվերստանոց քարտեզի թիվ 118 պլանշետը:

[2] Տե՛ս Í. Êàðàóëîâ, նշվ. աշխ., թիվ 32, էջ 34, ծանոթ. 2:

[3] Անդ, էջ 26, ծանոթ. d:

[4] Kudama, էջ 213, ծանոթ. t. «Վարսանից մինչև Բայլական 7 փարսախ է, ապա մինչև Յունան՝ 3 (7) փարսախ և մինչև Բարդաա՝ 3 (7) փարսախ»:

[5] Տե՛ս Í. Êàðàóëîâ, նշվ. աշխ., թիվ 29, էջ 67, ծանոթ. 59:

[6] Տե՛ս Ցարական բանակային շտաբի տասվերստանոց քարտեզի թիվ 118 պլանշետը:

համանուն բերդը[1]: Կարծում ենք, որ Դարման անունը սերտորեն կապված է Դարան անվան հետ: Եթե ճիշտ է մեր ենթադրությունը, և Դարան-Դարման անվանումը վերաբերում էր Երասխից հարավ ընկած շրջանին, ապա Վարդանակերտից 3 փարսախ (մոտ 17կմ) հեռավորության վրա գտնվող Դարման կայարանը, ամենայն հավանականությամբ, պետք է նույնպես գտնվեր Երասխից հարավ: Մեր կարծիքով, ճանապարհը Վարդանակերտից շեղվելու էր դեպի հյուսիս-արևելք, շարժվելու էր Երասխի ափով մոտ 17կմ, հասնելու էր Վարդանակերտից համարյա նույնքան հեռավորության վրա գտնվող ոլորանը, որի շրջանում, ամենայն հավանականությամբ, գտնվում էր Դարման կոչվող կայարանն ու, այնուհետև, մուտք էր գործելու Հայոց տերություն: Այս երթուղով Վարդանակերտ-Բայլական ճանապարհահատվածի երկարությունը կազմում էր 12 փարսախ (շուրջ 70կմ), ի տարբերություն Վարդանակերտից ուղղակիորեն դեպի Բայլական անցնող երթուղու, որի երկարությունը 7 փարսախ էր (շուրջ 41կմ):

Բայլական: ճանապարհի մի ուղեգիծը Վարդանակերտի, իսկ մյուսը՝ Դարմանի մոտ, անցնում էր Երասխը և շարժվում Բայլական: Վերջինը գտնվել է այժմ Օրեն-կալա կոչվող ավերակների տեղում[2]: Բայլականի և Պարտավի միջև հեռավորությունը կազմում էր 14 փարսախ (մոտ 81կմ): Այս հեռավորությունը համապատասխանում է ալ-Իսթախրիի և Իբն Հաուկալի տեղեկություններին, ըստ որոնց՝ Բայլականից Յունանով Պարտավ ընթացող ճանապարհահատվածի երկարությունը 14 փարսախ էր: Ուստի և կարծում ենք, որ Իբն Խորդադբեհի հիշատակած Բայլական-Պարտավ 14 փարսախ երկարությամբ ճանապարհահատվածը համապատասխանում է մյուս հեղինակների Բայլական-Յունան-Պարտավ ճանապարհահատվածին, միայն հանվանե բացակայում է Յունանը:

Յունան: Այս կայարանի մասին Յակուտը հաղորդում է, թե այն մի վայր էր Պարտավի և Բայլականի միջև՝ վերջիններիցս 7-ական փարսախ հեռավորության վրա[3]: Այն, ըստ Իբն Հաուկալի՝ գյուղ էր[4]: Սակայն, արաբ աշխարհագետների երկերում այն հազվադեպ է հիշվում և, այն էլ, միայն կապված Վարդանակերտ-Պարտավ ճանապարհահատվածի հիշատակության հետ: Յունանն ալ-Իսթախրիի երկի Բեռլինյան տարբե-

---

[1] Անդ:

[2] Տե՛ս **Ê. Òðàáàõ**, նշվ. աշխ., էջ 265-266: Տե՛ս Áîëüøàÿ Ñîâåòñêàÿ Ýíöèêëîïåäèÿ, ò. 18, Ì .,1974, էջ 505:

[3] Տե՛ս **Jacut**, IV, էջ 1044:

[4] Տե՛ս **Ibn Haukal**, 349:

ракում ունի Ումման (ومان), Գոտանյանում՝ Տումման և Տուբան (تومان և توبان)[1], իսկ Իբն Հաուկալի երկում՝ Մուվյան գյուղ (قرية مويان)[2] տարբերակները, որոնք բարդացնում են Յունանի տեղադրությունը: Սակայն, Յունանը պետք է գտնվելիս լիներ Պարտավից ու Բայլականից հավասարաչափ՝ 7-ական փարսախ (մոտ 41կմ) հեռավորության վրա, ինչն էլ նախատեսում է Յունանի տեղադրությունը Բայլականից Պարտավ կեսճանապարհին: Փաստորեն, մեծ հավանականություն ունի Յունանի տեղադրությունն նախկին Աղդամ քաղաքի մոտերքում[3]: Հավանական է Ն. Կարաուլովի տեղադրությունը Դեյրան գյուղի տեղում՝ կապված Օրենկալայից այստեղով դեպի Պարտավ անցնող բարեկարգ ճանապարհի առկայության հետ[4]:

Յունանից հետո ճանապարհը շարժվում էր Պարտավ, որի ավերակները գտնվում են ներկայիս Բարդա քաղաքի մոտ[5]:

Այսպիսով՝ ճանապարհն Արտավետից դեպի հյուսիս-արևմուտք անցնում էր Կասպիական դռներով ու Բարզանդ գետի ափով շարժվելով դեպի հյուսիս՝ հասնում էր ճանապարհի Բարզանդ կայարանը, որից հետո, արևելքից շրջանցելով ներկայիս Խորուզլու-դաղ լեռնաշղթան, իջնում էր Երասխի հովիտ՝ Վարդանակերտ[6]: Վարդանակերտից ճանապարհը մուտք էր գործում Հայոց տերություն և հասնում Պարտավ:

7.8. Պարտավ-Տփղիս ճանապարհը: Ըստ Իբն Խորդադբեհի՝ այս ճանապարհի երկարությունը 10 անցում էր (մոտ 300-400կմ): Ալ-Իսթախրին այս ճանապարհը ներկայացնում է հետևյալ տեսքով. «...Բարդաայից մինչև Ջանզա քաղաք 9 փարսախ է և Ջանզայից մինչև Շամքուր՝ 10 փարսախ, Շամքուրից մինչև Խունան քաղաք 21 փարսախ է և Խունանից մինչև Կալա իբն Քանդաման՝ 10 փարսախ, Կալայից մինչև Տիֆլիս 12 փարսախ է»[7]: Ալ-Մուկադդասին հաղորդում է, թե Պարտավից մինչև Գանձակ մեկ անցում է, Գանձակից Շամքոր՝ նույնքան, այնտեղից մինչև Խունան երեք անցում է, Խունանից մինչև Կալա իբն Քանդաման՝ մեկ անցում, իսկ վերջի-

---

[1] Տե՛ս **al-Istakhri**, էջ 192, ծանոթ. c:

[2] Տե՛ս **Ibn Haukal**, 349:

[3] Տե՛ս **Թ. Հակոբյան** և ուրիշներ, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Եր., 1991, էջ 464:

[4] Տե՛ս Ցարական բանակային շտաբի տասվերստանոց քարտեզի թիվ 118 պլանշետը:

[5] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 236:

[6] Տե՛ս Ցարական բանակային շտաբի տասվերստանոց քարտեզի թիվ 118 պլանշետը:

[7] **Al-Istakhri**, էջ 193:

նիցս մինչև Տփղիս՝ երկու անցում[1]:

Սկզբից ևեթ պետք է նշել, որ այս ճանապարհի կայարանների միջև ալ-Իսթախրիի նշած հեռավորությունները մեծավ մասամբ իրականությանը չեն համապատասխանում, չնայած, որ հարթ տեղանքի պատճառով թվում է, թե սխալներ չպետք է լինեին: Չնայած, որ Պարտավից Գանձակ (Զանզա) հեռավորությունը շուրջ երեք անգամ ավելի է Գանձակից Շամքոր (Շամքուր) ճանապարհահատվածի երկարությունից, առաջին հեռավորությունն արաբ աշխարհագետը ներկայացնում է երկրորդից պակաս:

Գանձակ: Գանձակը՝ ներկայիս Գյանջան[2], գտնվում է Պարտավից մոտ 85կմ հեռավորության վրա: Այսինքն՝ ալ-Իսթախրիի նշած 9 փարսախ հեռավորությունը (մոտ 52կմ) Պարտավի և Գանձակի միջև չի համապատասխանում իրականությանը: Իրականությանն ավելի մոտ է Յակուտի հաղորդած տեղեկությունը, ըստ որի՝ այդ հեռավորությունը հավասար էր 16 փարսախի (մոտ 93կմ)[3]:

Շամքոր: Ավերակները գտնվում են Շամքոր գետի ձախ ափին՝ երկաթուղու երկու կողմերում[4]: Շամքորը գտնվում էր Գանձակից մոտ 35կմ հեռավորության վրա, ինչը չի համապատասխանում ալ-Իսթախրիի հիշատակած 10 փարսախ (մոտ 58կմ) հեռավորությանը: Ավելի ճիշտ է ալ-Մուկադդասիի նշած 1 անցում հեռավորությունը, որը, ինչպես նշվեց, կազմում էր 5-7 փարսախ (մոտ 30-40կմ): Հաշվի առնելով այն իրողությունը, որ Իբն Խորդադբեհն իր «Գիրք ճանապարհների և թագավորությունների [մասին]» աշխատությունը գրել է մոտ 846-847 թթ.[5], այնտեղ Պարտավ-Տփղիս ճանապարհի վրա Գանձակ և Շամքոր քաղաքների հիշատակության բացակայությունը մենք բացատրում ենք այն իրողությամբ, որ Շամքորը դրանից առաջ ավերվել էր և վերականգնվել միայն Բուղայի արշավանքների շրջանում, իսկ Գանձակը կառուցվել է 840-ական թթ. երկրորդ կեսին, ավելի ճիշտ 846 թ.[6]:

Հունարակերտ (Խունան): Մենք արդեն ցույց ենք տվել, որ Հունարակերտը նույնական էր Խունանին[7] և տեղադրվում է Աղստև գետի

---

[1] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 382:
[2] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 237:
[3] Տե՛ս **Jacut**, II, էջ 132:
[4] Տե՛ս **Մ. Բարխուտարեանց**, Արցախ, Բաքու, 1895, էջ 55-56:
[5] Տե՛ս **Í. Êàðàóëîâ**, նշվ. աշխ., թիվ 32, էջ 2:
[6] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 331:
[7] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 63: Նման տեսակետ է արտահայտում նաև Մարկվարտը: Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Զ, Եր., 1985, էջ 175: Տե՛ս նաև **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Գ, Եր., 1977, էջ 104:

ձախ ափին՝ գետաբերանի շրջանում[1]:

Կալա իբն Քանդաման: Այս կայարանը, որը, ըստ ալ-Իսթախրիի՝ գտնվում էր Հունարակերտից 10 փարսախ (մոտ 58կմ) և Տփղիսից 12 փարսախ (մոտ 70կմ) հեռավորության վրա, Ս. Երեմյանը տեղադրում է ներկայիս վրացական Գարդաբան քաղաքի տեղում, իսկ Հ. Մարկվարտը՝ Կուր և Խրամ գետերի ջրկիցի մոտ, Կըզ-կալա բերդի ավերակների տեղում, հին վրացական Գարդաբան երկրամասում[2]: Այսինքն՝ երկու ուսումնասիրողներն էլ այդ անվանումը կապում են վրացական Գարդաբան անվան հետ: Մենք ընդունում ենք Քանդաման անվան կապը Գարդաբանի հետ, ինչի օգտին է խոսում այդ անվանումների արաբերեն գրելաձևերի նմանությունը (كندمان-كردبان): Նմանապես, Հ. Մարկվարտի տեղադրության օգտին են խոսում Խրամ գետի վրա հին կամուրջների հետքերը և իջևանատները[3]: Այստեղով էր անցնում մեծ և բարեկարգ ուղին դեպի Տփղիս, որը ճանապարհորդներին կարծել էր տալիս, թե «աստէն անցեալ կարեն մտանել ուղղակի ի լայնատարած դաշտն... Աղուանից...և գուցէ աստի էր ճանապարհն դէպ յալանս...»[4]:

Այս տեղադրության դեպքում Կալա իբն Քանդամանը գտնվելու էր Հունարակերտից շուրջ 35կմ հեռավորության վրա: Նման պարագայում իրականությանն ավելի մոտ է ալ-Մուկադդասիի նշած 1 անցում (5-7 փարսախ կամ մոտ 30-40կմ) հեռավորությունը:

Այնուհետև, ճանապարհը, ամենայն հավանականությամբ, Ռուսթավ քաղաքով շարժվում էր Տփղիս:

7.9. Պարտավ-Դարբանդ ճանապարհը: Ըստ Իբն Խորդադբեհի՝ Պարտավ-Բաբ ալ-Աբվաբ (Դարբանդ) ճանապարհի երկարությունը 15 անցում էր (մոտ 450-600կմ): Այն ըստ կայարանների հիշատակում է ալ-Իսթախրին. «...Բարդաայից մինչև Բարզանջ 18 փարսախ է և Բարզանջից Կուրի ծանծաղուտով մինչև Շամախիա՝ 14 փարսախ, Շամախիայից մինչև Շարվան 3 օրվա ճանապարհ է և Շարվանից մինչև Աբխազ՝ 2 օրվա ճանապարհ, Աբխազից մինչև Ջիսր Սամուր 12 փարսախ է և Ջիսր Սամուրից մինչև Բաբ ալ-Աբվաբ՝ 20 փարսախ»[5]: Ալ-Մուկադդասին հաղորդում է, որ Պարտավից Բարզանջ հեռավորությունը կազմում էր մեկ անցում, այնտեղից մինչև Շամախի՝ երկու անցում, վերջինիցս մինչև

---

[1] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 97-100:

[2] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Զ, էջ 175:

[3] Տե՛ս **Ս. Ջալալյանց**, նշվ.աշխ., էջ 77:

[4] Անդ:

[5] **Al-Istakhri**, էջ192:

Շիրվան՝ երեք անցում, Շիրվանից մինչև Աբխազ՝ երկու անցում, Աբխազից մինչև Ջիսր Սամուր՝ նույնքան, այնտեղից մինչև Դարբանդ՝ երեք անցում[1]:

Բարզանջ (Բարդիջ): Հնուց ի վեր Պարտավից դեպի Շամախի գոյություն ունեին երկու մեծ ճանապարհներ: Մեկը համապատասխանում է ներկայիս Եվլախով ընթացող ավտոճանապարհին, իսկ մյուսն՝ արաբ հեղինակների հիշատակած ճանապարհն է, որը Պարտավից իջնում էր դեպի հարավ՝ Բարզանջ: Որ վերջինը գտնվում էր Պարտավից Կուր գետի հոսանքով դեպի ներքև, ապացուցում են արաբ աշխարհագետների հիշատակությունները: Յակուտը, օրինակ՝ խոսելով Կուր գետի մասին, հաղորդում է, որ այն անցնում էր Տփղիս քաղաքի կողքով, ապա անցնում Խունան բերդի մոտակայքով, այնտեղից հոսում Պարտավի դռան մոտով, հասնում Բարզանջ և միախառնվում Երասխի հետ[2]: Նախ, անդրադառնալով Պարտավից Բարզանջ հեռավորությանը՝ նշենք, որ արաբ աշխարհագետներն այն հիշատակում են տարբեր կերպ. Իբն Հաուկալն, օրինակ՝ հետևելով ալ-Իսթախրիին, մեջ է բերում 18 փարսախ հեռավորությունը[3], ալ-Մուկադդասին, ինչպես տեսանք, նշում է 1 անցում, Յակուտ ալ-Համավին մի դեպքում այն հավասարեցնում է 13 փարսախի[4], իսկ մեկ այլ դեպքում, հենվելով ալ-Իսթախրիի վրա՝ 18 փարսախի[5]:

Պարտավ-Բարզանջ հեռավորության վերաբերյալ հիշատակությունների այսպիսի բազմազանության պարագայում Բարզանջի տեղադրության խնդիրը բավական բարդանում է: Բացի այդ, արաբ հեղինակները Բարզանջի հարևանությամբ հիշատակում են նաև Բարդիջ քաղաքը: Ըստ Յակուտի՝ այդ երկու քաղաքները պետք է գտնվեին Պարտավից դեպի հարավ-արևելք, դրանից համապատասխանաբար 13 և 14 փարսախ հեռավորությունների վրա՝ Կուր գետի ափին[6]: Այսինքն՝ Բարզանջն ու Բարդիջը միմյանցից 1 փարսախի (մոտ 6կմ) հեռավորության վրա էին գտնվում: Ս. Երեմյանը Բարզանջը տեղադրում է ներկայիս Ջարդոբ քաղաքի մոտ գտնվող գետանցի մերձակայքում[7], իսկ Վ. Մինորսկին առաջարկում է Բարզանջը նույնացնել Բարդիջին, իսկ վերջինը փնտրել Պարտավից ոչ թե 18 փարսախ, այլ սոսկ 1 ան-

---

[1] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 381:
[2] Տե՛ս **Jacut**, IV, էջ 259:
[3] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 350:
[4] Տե՛ս **Jacut**, I, էջ 562:
[5] Անդ, III, էջ 317:
[6] Տե՛ս **Jacut**, I, էջ 556, 562:
[7] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ:

ցում (5-7 փարսախ) հեռավորության վրա՝ հիմնվելով ալ-Մուկադդասիի հիշատակության վրա: Վերջապես, նա Բարդիջը տեղադրում է Պարտավից 34կմ դեպի հարավ-արևելք՝ ներկայիս Քյորփի Քենդ բնակավայրի դիմաց՝ Կուր գետի աջ ափին[1]:

Չնայած, որ ճիշտ է Հ. Մինորսկու կողմից Բարզանջի նույնացումը Բարդիջին, ինչպես կտեսնենք, հիշյալ տեղադրություններից և ոչ մեկը քննություն չի բռնում: Արաբ հեղինակների աշխատությունների ուսումնասիրությունը տալիս է մի կարևոր արդյունք. նրանցից յուրաքանչյուրը հիշատակում է այդ երկու քաղաքներից միայն մեկը[2], իսկ Յակուտը, որը տեղեկություններ է քաղել իրենից առաջ եղած բոլոր հեղինակներից, նշում է թե՛ մեկը, թե՛ մյուսը: Այնպես որ, ամենայն հավանականությամբ, այս երկու անվանումները վերաբերում են նույն քաղաքին: Դրա օգտին է խոսում այդ անվանումների արաբերեն գրելաձևերի նմանությունը (برزنج-برديج): Կարծում ենք, որ Բարզանջը Բարդիջի աղավաղումն է, քանի որ հավանական է Բարդիջ անվանման նույնացումը հայկական Բերդիկ անվանը[3]: Բարդիջը, ըստ Յակուտի՝ գտնվում էր Ատրպատականի ամիրայության սահմանագլխին Հայաստանի կողմից, որտեղից մինչև Պարտավ 14 փարսախ էր[4]: Այս հիշատակության մեջ կարևորն այն է, որ, հիշատակելով Պարտավից Բարդիջ հեռավորությունը, Յակուտը, փաստորեն, ակնարկում է այդ երկու քաղաքների միջև ճանապարհի գոյության մասին, ինչի հիշատակությունը մյուս արաբ հեղինակները չեն պահպանել: Այս ճանապարհի առկայությունը Բարզանջ-Բարդիջ նույնացման կարևոր կռվաններից մեկն է: Բացի այդ՝ արաբ հեղինակի հիշատակությունը, թե Բարդիջը գտնվում էր Ատրպատականի ոստիկանության սահմանին, գալիս է հերքելու վերոբերյալ բոլոր տեղադրությունները: Մասուդիի վկայությունը հաստատում է այդ իրողությունը: Կուր գետի մասին պատմելիս նա հաղորդում է, թե վերջինը հոսում է Պարտավից 3 փարսախ հեռավորության վրա, ապա անցնում է Բարդիջի (արաբ աշխարհագետի երկում՝ Բարդաջ) կողքով, որը Պարտավի (Առան) շրջաններից մեկն է, որից հետո՝ միախառնվում է Երաս-

---

[1] Տե՛ս Hudud al-Alam, էջ 403:

[2] Ինչ վերաբերում է ալ-Իսթախրիին, որը հիշատակում է 2 քաղաքները, ապա պետք է նշել, որ դրա պատճառը, թերևս, տեքստային թերությունն է և, ամենայն հավանականությամբ, ի սկզբանե տեքստում առկա է եղել միայն մեկ անվանում (տե՛ս al-Istakhri, էջ 187, ծանոթ. c):

[3] Տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ, կազմեց Հ. Նալբանդյան, Եր., 1965, էջ 35:

[4] Տե՛ս Jacut, I, էջ 556:

խի հետ[1]: Իսկ Իբն Ռուստեհը, խոսելով Երասխ գետի մասին, վկայում է, թե այն «հոսում է Վարսանի մոտով դեպի Բարդիջ քաղաքը, իսկ նրանից այն կողմ միախառնվում է Կուրի հետ»[2]:

Ըստ վերոհիշյալ հաղորդումների՝ Բարդիջը պետք է գտնվելիս լիներ Կուրի և Երասխի միջև, անմիջապես մոտ այն տեղին, ուր երկու գետերը միախառնվում են: Այդ է ցույց տալիս նաև Բալազուրիի այն հիշատակությունը, որտեղ հեղինակը, նկարագրելով Սալման իբն Ռաբիայի կողմից Հայոց Արևելից կողմանց գավառների նվաճումը, պատմում է, որ նա գալիս, հասնում է Կուրի և Երասխի ջրկիցի շրջանը, որտեղ Բարդիջի մոտակայքում նա անցնում է Կուրը[3]: Կուր և Երասխ գետերի միջև՝ դրանց ջրկիցի մոտակայքում, կար մի բնակավայրի ավերակ[4], որը, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է Բարդիջ քաղաքին, իսկ քաղաքում կամ նրա մերձակայքում գտնվել է կայարանը[5]: Բարդիջից այն կողմ ճանապարհն անցնում էր Կուր գետը և մուտք գործում Շիրվանշահերի թագավորություն:

Շամախի: Բարդիջի մոտ՝ Կուրի վրա, կար մի կամուրջ, որի վրայով ճանապարհը շարժվում էր Շամախի[6]: Բարդիջ-Շամախի ճանապարհահատվածի երկարության վերաբերյալ արաբ աշխարհագետների հաղորդումները համընկնում են: Իբն Հաուկալը ևս այս հեռավորությունը նշում է 14 փարսախ (շուրջ 81կմ)[7], իսկ ալ-Մուկադդասին՝ 2 անցում, որը հավասար էր 14 փարսախի: Ինչպես վերը նշվեց, հեռավորության նույն չափը նշում է Յակուտը: Ավելորդ չէ նշելը, որ այս հեռավորությունը համապատասխանում է Բարդիջի վերոհիշյալ տեղադրության և հին Շամախու, որը գտնվում էր ներկայիս Շամախի քաղաքից 1,5կմ դեպի հյուսիս արևմուտք[8], միջև հեռավորությանը (մոտ 80կմ):

Շապորան: Շամախուց հետո ալ-Իսթախրիի հիշատակած հաջորդ կայարանը Շիրվանն էր, որը գտնվում էր ներկայիս Շիրվան գյուղի տեղում՝ Շաբրան-չայի ձախ ափին[9]: Նրանից դեպի հյուսիս-արևմուտք՝

---

[1] Տե՛ս مسعودي, I, էջ 205-206:
[2] **Ibn Rosteh**, էջ 89:
[3] Տե՛ս بلاذري, I, էջ 240:
[4] Տե՛ս **Ս. Ջալալյանց**, նշվ.աշխ., էջ 364:
[5] Տե՛ս The map of Adharbaydjan,-Encyclopaedia of Islam, I:189b.
[6] Տե՛ս **Jacut**, I, էջ 562:
[7] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 350:
[8] Տե՛ս **Ñ. Àøóðáàéëè,** Ãîñóäàðñòâî Øèðâàíøàõîâ, Áàêó, 1983, էջ 39-40:
[9] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 74: Տե՛ս նաև գրքին կից «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» քարտեզը:

նույն գետի աջ ափին, գտնվում էր Շապորանը (այժմ՝ Շաբրան գյուղ)[1]: Պետք է նշել, որ Յակուտը Շիրվանի փոխարեն այս ճանապարհի վրա հիշատակում է Շապորանը[2]: Ուսումնասիրողներից Ս. Երեմյանը ճանապարհի երթուղին տանում է միաժամանակ և՛ Շիրվանով, և՛ Շապորանով[3], ինչն ընդունելի տարբերակ է՝ կապված այդ երկու քաղաքների՝ միմյանց բավական մոտ գտնվելու փաստի հետ: Ըստ երևույթին, ճիշտը Շապորան տարբերակն է, քանի որ նույնիսկ ավելի ուշ՝ XVIII դարում, Ղուբայից Շամախի գնացող ճանապարհն անցնում էր հենց Շապորանով[4]:

Գալով Շամախուց Շապորան հեռավորությանը՝ պետք է նշել, որ այս հարցում արաբ աշխարհագետների հաղորդումները համընկնում են. կրկնելով ալ-Իսթախրիին՝ Իբն Հաուկալը նշում է, որ Շիրվանը (պետք է լինի Շապորան) գտնվում էր Շամախուց 3 օրվա ճանապարհ հեռավորության վրա, նույն հեռավորությանը նշում են նաև արաբ հեղինակներ ալ-Մուկադդասին և Յակուտը[5]: Այստեղ հարկ է հիշել, որ արաբները ճանապարհների երկարությունները չափում էին մեկ օրում կենդանու անցած ճանապարհով և, այդ է պատճառը, որ լեռնային շրջաններում ճանապարհը նրանց թվում էր ավելի երկար, քան կար իրականում: Այս պատճառաբանությամբ էլ արդարանում է Շամախուց Շապորան արաբ աշխարհագետների հիշատակած մեծ հեռավորությունը:

Շամախուց Շապորան գնում էր մեկ հիմնական ճանապարհ, որն, անցնելով Կովկասյան լեռները, ճյուղավորվում էր: Այն Շամախուց սկզբում շարժվում էր դեպի արևելք՝ Ղուրտ-Բուլաղ, այնտեղից շարժվելով հյուսիս՝ անցնում էր Յախար-Բախար կոչվող լեռնանցքով ու հասնում Ալթաղաչ գյուղը[6]: Ալթաղաչից ճանապարհը բաժանվում էր երկու մասի. մի ճյուղն Աթա-չայ գետի ափով շարժվում էր դեպի հյուսիս-արևելք, միանում ներկայիս երկաթուղու ճանապարհին և նրա երթուղով հասնում Շապորան, իսկ մյուսը՝ հաղթահարելով Կարատիքենդի լեռները, ընթանում էր Վերին Ղուշչի գյուղի արևե-

---

[1] Անդ, էջ 73: Տե՛ս նաև ցարական բանակային շտաբի հինգվերստանոց քարտեզի È. 7. պլանշետը:

[2] Տե՛ս **Jacut**, III, էջ 317:

[3] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ, նույնի՝ Մարզպանական Հայաստանը և հարևան երկրները 387-628 թթ., քարտեզ, Եր., 1980:

[4] Տե՛ս **Ô. Ñèìîíîâè÷**, Î ïèñàíèå þæíîãî Äàãåñòàíà (1796),-«Èñòîðèÿ, ãåîãðàôèÿ è ýòíîãðàôèÿ Äàãåñòàíà 18-19 ââ.», àðõèâíûå ìàòåðèàëû, Ì., 1958, էջ 154-155:

[5] Տե՛ս **Jacut**, III, էջ 317:

[6] Տե՛ս «Èñòîðèÿ, ãåîãðàôèÿ è ýòíîãðàôèÿ Äàãåñòàíà 18-19 ââ.», էջ 154:

լակողմով, ապա, անցնելով Գելգենի-չայ գետը, շարժվում էր դեպի հյուսիս ու մտնում Շապորան[1]:

Աբխազ: Ճանապարհը, ինչպես ցույց ենք տվել, Շապորանից Աբխազ էր շարժվում ոչ թե ներկայիս երկաթուղու, այլ ավտոճանապարհի երթուղով, քանի որ այն չէր անցնում Մազքթաց աշխարհով, որը զբաղեցնում էր Շապորանից հյուսիս ընկած ծովափնյա շրջանները, այլ Աբխազով, որը, փաստորեն, գտնվում էր Մազքթաց աշխարհից արևմուտք: Շապորանից Դարբանդ գլխավոր ճանապարհն անցնում էր ներկայիս Ղուբա քաղաքով կամ վերջինիս մոտակայքով, հասնում Խուդաթ գյուղը, որտեղից ճյուղավորվում էր դեպի Կուլարի կամուրջ և դեպի Խազրա գյուղ: Գլխավոր ճանապարհի առավել ընդունելի երթուղին Ղուբայից Խուդաթով դեպի Կուլարի կամուրջ ընթացող ավելի կարճ և մատչելի ճյուղն է[2]: Այնուհետև ճանապարհը շարժվում էր հյուսիս և Դարբանդով մուտք գործում Խազարական թագավորություն:

Աբխազ կայարանի տեղադրությունը բարդանում է՝ կապված արաբ հեղինակների հիշատակած սխալ հեռավորությունների հետ: Այսպես. ալ-Իսթախրին, ինչպես տեսանք, Շիրվանից (պետք է լինի Շապորան) Աբխազ հեռավորությունը նշում է 2 օրվա ճանապարհ (մոտ 60-80կմ), իսկ Աբխազից Ջիսր Սամուր հեռավորությունը՝ 12 փարսախ (մոտ 70կմ), ինչն իրականությանը համապատասխանել չի կարող, իսկ ալ-Մուկադդասին այդ հեռավորությունները նշում է հավասարաչափ՝ 2-ական անցում (60-80կմ)[3]: Ըստ էության, չնայած նշված հեռավորությունների ակնհայտ սխալին[4], ուսումնասիրողներին հարկ է եղել Աբխազ կայարանը տեղադրել այնպիսի վայրում, որը, եթե չէր էլ համապատասխանի վերոհիշյալ հեռավորություններին, ապա գոնե կգտնվեր Շապորանից և Ջիսր Սամուրից մոտավորապես հավասար հեռավորությունների վրա: Այդ պատճառով, Աբխազ կայարանը տեղադրվել է Ղուբա քաղաքում կամ նրա մերձակայքում, այսինքն՝ այնպիսի տեղում, որը գտնվում էր Շապորանից Սամուր գետ ճանապարհահատվածի միջնամասում: Ըստ այսմ, պետք է ընդունել, որ ամենահավանականը, իսկապես, կայարանի՝ ներկայիս Ղուբա քաղաքի տեղում կամ մերձա-

---

[1] Անդ, էջ 155:

[2] Տե՛ս ցարական բանակային շտաբի հինգվերստանոց քարտեզի Ç.7. պլանշետը: Տե՛ս նաև **Ա. Եղիազարյան**, Արաբական աղբյուրների Աբխազ թագավորությունը, էջ 224:

[3] Տե՛ս **al-Moqaddasi,** էջ 381:

[4] Սխալն ակնհայտ է այն պատճառով, որ Աբխազ կայարանի որևէ տեղադրության դեպքում նախորդ և հաջորդ կայարաններից նրա հեռավորությունն այդ չափերով անհնար է (տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական աղբյուրների Աբխազ թագավորությունը, էջ 225):

կայքում տեղադրությունն է: Սակայն, ավելի կոնկրետացնելով տեղադրությունը, նշենք, որ կայարանը, ամենայն հավանականությամբ, հնում գտնվում էր քաղաքից (կամ նախկինում նրա տեղում գտնվող բնակավայրից) դուրս՝ անմիջապես ճանապարհի հարևանությամբ: Ավելի ուշ շրջանում, երբ Ղուբա քաղաքն ընդարձակվեց, ճանապարհն արդեն անցնում էր քաղաքի միջով: Համենայն դեպս, նույնիսկ XVIII դ. վերջին դեռևս ճանապարհն ընթանում էր քաղաքի մերձակայքով[1]:

Ջիսր Սամուր (Սամուր գետի կամուրջ): Արաբ աշխարհագետների երկերի թարգման Ն. Կարաուլովը Ջիսր Սամուրը նույնացնում է Սամուր գետի ամբարտակի հետ, որի տեղում այժմ պատնեշ է, որտեղով անցնում է երկաթուղին[2]: Իսկ Ս. Երեմյանը Ջիսր Սամուրը նույնացնում է Մազքթաց թագավորության Չող մայրաքաղաքին[3]: Սակայն, այդ նույնացումների հետ համաձայն չենք, քանի որ, ըստ Շապորանից Դարբանդ ճանապարհի՝ մեր ընդունած հավանական ուղեգծի, Ջիսր Սամուրը պետք է համապատասխաներ Կուլարի կամրջին[4]: Անցնելով կամուրջը՝ ճանապարհը շարժվում էր Դարբանդ, որտեղից էլ անցնում էր Խազարական թագավորություն:

Այսպիսով՝ ճանապարհը Կուր գետի աջ ափով իջնում էր հարավ՝ մինչև Կուր-երասխյան ջրկիցը, անցնում գետն ու շարժվում Շամախի: Այստեղից ընթանալով արևելք՝ ճանապարհը Յախար-Բախար լեռնանցքով անցնում էր Կովկասյան լեռները, հասնում Ալթքաղաչ, այնուհետև՝ հաղթահարում Կարատիքենդյան լեռներն ու, ընթանալով Վերին Ղուշչի գյուղի արևելակողմով, շարժվում Շապորան: Շապորանից ներկայիս ավտոճանապարհի երթուղով ընթանալով դեպի հյուսիս՝ ուղիղ Ղուբա քաղաքի արևելակողմով հասնում էր Կուլարի կամրջին, անցնում այն ու շարժվում Դարբանդ: Այնտեղից ճանապարհը շարժվում էր դեպի խազարական Սամանդար մայրաքաղաքը[5]:

7.10. Հեր-Դարբանդ ճանապարհը: Այս ճանապարհի[6] մասին ալ-Մուկադդասին հաղորդում է. «Խուայյից մինչև Կալա Յունիս 6 անցում է,

---

[1] Տե՛ս **Ô. Ñèì î í îâè÷,** Î ïèñàíèå þæíîãî Äàãåñòàíà (1796),-«Èñòîðèÿ, ãåîãðàôèÿ è ýòíîãðàôèÿ Äàãåñòàíà 18-19 ââ.», էջ 154:

[2] Տե՛ս **Í. Êàðàóëîâ**, նշվ. աշխ., թիվ 38, էջ 125, և "Àòëàñ ÑÑÑÐ", "Êàâêàç", êàðòà, Ì., 1985, ñ. 42.

[3] Տե՛ս **Ս. Երեմյան**, «Աշխարհացույցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ, էջ 273, ծանոթ. 118:

[4] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական աղբյուրների Աբխազ թագավորությունը, էջ 224:

[5] Տե՛ս **al-Istakhri**, էջ 227:

[6] Ըստ ալ-Քուֆիի՝ Մարվան իբն Մուհամմադը հենց այս ճանապարհով էր 732/733 թ. արշավել Խազարական թագավորություն (տե՛ս al-Kufi, VIII, էջ 75):

ապա մինչև Կարիա ալ-Ասաբիատ՝ 1 անցում, այդտեղից մինչև..., ապա մինչև Տիֆլիս՝ 1 անցում է, հետո մինչև Թաբլա, այնտեղից էլ՝ Շաքքի, ապա մինչև Լաքզան՝ 2 անցում է, և մինչև Բաբ [ալ-Աբվաբ]՝ 3 անցում»[1]: Ալ-Մուկադդասիի երկի հիշյալ հատվածն ամբողջությամբ չի պահպանվել, և նկարագրության մեջ բացակայում են Կարիա ալ-Ասաբիատից մինչև Տփղիս ճանապարհահատվածում գտնվող կայարանների անվանումները:

Դարյունից բերդ (Կալա Յունիս): Այս կայարանը, ըստ ալ-Մուկադդասիի՝ պետք է գտնվեր Հերից 6 անցում, այսինքն՝ մոտավորապես 30-42 փարսախ (մոտ 175-245կմ) հեռավորության վրա[2]: Ճանապարհի երկարությունը չափազանցված է[3]: Անհրաժեշտ է ավելացնել, որ կայարանը պետք է գտնվելիս լիներ ոչ թե Դարյունից բերդում, այլ դրա մերձակայքում՝ անմիջապես ճանապարհի հարևանությամբ[4]:

Արծափ (Արծափաց) գյուղ (Կարիա ալ-Ասաբիատ): Վերջինը, ըստ արաբ հեղինակի՝ գտնվում էր Կալա Յունիսից 1 անցում հեռավորության վրա (մոտ 30-40կմ): Կարծում ենք, որ այդ կայարանը հաստատապես պետք է գտնվելիս լիներ մինչև Հայկական պար լեռնաշղթան ընկած շրջանում:

Սեբեոսի մի արժեքավոր հիշատակությունն օգնում է ճշտել այս ճանապարհի երթուղին Դարյունից բերդից հյուսիս: Նկարագրելով արաբների 647 թ. արշավանքը՝ պատմիչն ի մասնավորի հաղորդում է. «...եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեացան յերիս:...Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գնդին...եկին ժողովեցան ի Հէրևան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ: Եկին ի յՈրդսպու, և ոչ նմա ինչ կարացին առնել: Գնացին անտի և բանակեցան յԱրծափս...: Արդ՝ իջին ընդ այն արք ի վայր ի բերդէն երթալ խնդրել ի բերդէն Դարաւնից զաւր յաւգնականութիւն իւրեանց»[5]:

Արծափ բերդը գտնվում էր Դարյունից բերդից մոտ 17կմ հեռավորության վրա[6], ինչը հիմք էր տալիս նրա պաշտպաններին՝ օգնություն

---

[1] **Al-Moqaddasi**, էջ 392:

[2] Անդ, էջ 381:

[3] Հերի (Խոյ) և Դարյունից բերդի միջև հեռավորությունը հավասար է մոտ 155կմ-ի:

[4] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հեր (Խուայյ)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհն ըստ արաբ աշխարհագետ ալ-Մուկադդասիի, էջ 150-151: Հեր-Դարյունից բերդ ճանապարհը գործում է նաև այսօր՝ ընթանալով Կոտորի (Վասպուրականի) լեռնաշղթայի արևելակողմով՝ Խոյ-Էվօղլու-Մերգեն (Մարգիան)-Մակու-Դողու-Բայազիդ գծով:

[5] **Սեբեոս**, էջ 145:

[6] Տե՛ս Äîðîæíàÿ êàðòà Êàâêàçñêîãî êðàÿ, ñîñòàâëåíà è ëèòîãðàôèðîâàíà â âîåííî-òåïîãðàôè÷åñêîì îòäåëå Êàâêàçñêîãî âîåííîãî îêðóãà, 20 âåðñò â äþéìå, Òèôëèñ, 1870.

կանչելու այնտեղից: Ելնելով վերոհիշյալից՝ ենթադրում ենք, որ ալ-Ասաբիատ անվանումը նույնական է Արծափ անվանը, որը Ղևոնդն ու Անանուն Զրուցագիրը հիշատակում են «Արծափաց» ձևով[1]: Ինչ վերաբերում է «կարիա» բառին, ապա այն «կալա» (բերդ) բառի աղավաղված տարբերակը կարող է լինի: Այդպիսի աղավաղումը, ի դեպ, առկա է նաև Կալա Յունիսի դեպքում (Կարիա Յունիս)[2]: Սակայն, «կարիա» բառը (قرية) արաբերենից թարգմանաբար նշանակում է «գյուղ», «ավան», ինչը, թերևս, առավել հավանական տարբերակ է: Հասկանալի է, որ ճանապարհն անցնելու էր բերդի մերձակայքով, իսկ մերձակայքում գտնվող գյուղը պարզապես կոչվելու էր «գեւղն Արծափաց», որը մասամբ արաբերեն թարգմանվելու դեպքում, ինչպես կտեսնենք, դառնալու էր «Կարիա ալ-Արսաբատ»:

Արծափ բերդի հարևանությամբ գտնվող նույնանուն գյուղը, որտեղ տեղակայված էր կայարանը, դատելով մեր կողմից Կարիա ալ-Ասաբիատի հետ նրա նույնացումից և Սեբեոսի ևս մեկ կարևոր հիշատակությունից, երկու ճանապարհների հանգուցակետ էր: Պատմիչը, նկարագրելով արաբների 641 թ. արշավանքը, հաղորդում է, որ նրանք Զորա պահակ լեռնանցքով ներխուժեցին Տուրուբերան, գրավեցին Բզնունիքն ու Աղիովիտը և «ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Գոգովիտ՝ թափեցան յԱյրարատ»[3]:

Արաբական զորքի՝ Որդսպուից գալն ու Արծափ բերդը պաշարելը ցույց է տալիս, որ Որդսպուն ճանապարհով կապված էր Արծափի հետ: Բացի այդ, «ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Գոգովիտ» արտահայտությունը նախատեսում է Որդսպուի տեղադրությունն այդ ճանապարհի վրա մինչև Կոգովիտ գավառ հասնելը, Կոտոր լեռնաշղթայի արևմտակողմում, այսինքն՝ Վասպուրականում[4]: Դատելով վերոհիշյալ եր-

---

[1] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 11, **Անանուն Զրուցագիր**, էջ 95:

[2] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 376: Պետք է նշել, որ «Կարիա Յունիս» ձևը կարող է աղավաղում չլինել, այլ իրենից ներկայացնել «Դարիւնից/Դարեւնից ավան» անվան արաբերեն թարգմանությունը: Դարիւնից ավանը նույնական է ներկայիս Հասան-ղալային (տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 49):

[3] **Սեբեոս**, էջ 138:

[4] Հ. Մանանդյանը Պլատինգերյան քարտեզի Artaxata-Godbi-Paresaca ճանապարհի Կատիսպի (Catispi) կայարանը նույնացնում է Որդսպուին և, հենվելով Ս. Երեմյանի վրա, այն տեղադրում ներկայիս Տապարիզ բնակավայրի մերձակայքում՝ Կարաքենդից դեպի հարավ-արևելք (տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 147-149, 246, տե՛ս նաև Êàðòà Êàâêàçñêîãî êðàÿ ñ ïîêàçàíèåì ãóñòîòû àðìÿíñêîãî íàñåëåíèÿ, èçäàíèå Áàêèíñêîãî Àðìÿíñêîãî êóëüòóðíîãî ñîþçà, Áàêó, 1908): Ճիշտ է, այդ դեպքում Որդսպուն կհայտնվի Կոգովտի տարածքում, սակայն, Սեբեոսի հաղորդման տրամաբանությունը, ինչպես նաև մեր քննությունը, թույլ են տալիս նաև այդ տեղադրությունը:

կու փաստերից, Որդսպուից հետո ճանապարհի հաջորդ կայարանն Արծափն էր Կոգովիտում, որից այն կողմ ճանապարհն անցնելու էր Հայկական պարը: Այս ճանապարհն անցնում էր Բզնունյաց ծովի հյուսիսային ափերով ու Կոտոր լեռնաշղթայի արևմտակողմով, իսկ Հերից Դարյունից բերդի մերձակայքով դեպի Արծափ բերդ շարժվող ճանապարհն ընթանում էր Կոտոր լեռնաշղթայի արևելակողմով: Փաստորեն, Կոտոր լեռնաշղթայի երկու կողմերով դեպի հյուսիս ընթացող ճանապարհները միանում էին Արծափ բերդի մոտակայքում:

Կրկին անդրադառնալով Արծափաց գյուղ-Կարիա ալ-Ասաբիատ նույնացմանը՝ նշենք, որ Ղևոնդի և Անանուն Զրուցագրի հիշատակած «Արծափաց» անվանաձևը, ամենայն հավանականությամբ, գործածական էր միջնադարում: Արաբերենում «ծ» տառի բացակայության պայմաններում արաբ աշխարհագետներն օգտագործում էին «ս» (س կամ ص) տառը, ինչպես, օրինակ՝ Սամանդու-Ծամնդավ[1] և Սանարիա-Ծանարիա[2] դեպքերում, իսկ «ց» տառի բացակայության պայմաններում արաբերենում օգտագործվում է «տ» (ت) տառը: Կարծում ենք, որ արաբերենում «զգեւղն Արծափաց» բառակապակցությունը, հաշվի առնելով վերոհիշյալ պարզաբանումները, մասամբ թարգմանվելու հետևանքով հնչելու էր «Կարիա ալ-Արսաբատ», որը հետագայում աղավաղվել ու վեր է ածվել «Կարիա ալ-Ասաբիատ»-ի[3]:

Փաստորեն, ճանապարհը գալիս էր Դարյունից բերդի կողմից և անցնում Արծափաց բերդի մերձակայքում գտնվող նույնանուն գյուղով: Պետք է նշել, որ Կարիա ալ-Ասաբիատի հեռավորությունը Կալա Յունիս կայարանից, որը մեկ անցում (մոտ 30-40կմ) պետք է կազմեր, չի համապատասխանում Դարյունից բերդից մինչև Արծափ բերդ ընկած հեռավորությանը, ինչը, թերևս, պետք է բացատրել լեռնային տեղանքով:

Այսպիսով՝ հարավ-արևելքից և հարավ-արևմուտքից եկող ճանապարհները միանում էին Արծափաց գյուղում:

Ինչպես տեսանք, ալ-Մուկադդասիի տեքստը թերի է, որի պատճառով բացակայում են Կարիա ալ-Ասաբիատ-Տփղիս ճանապարհահատվածում գտնվող կայարանների անունները: Հաշվի առնելով այն, որ պարսկական տիրապետության շրջանում, համաձայն «Մղոնաչափք»-ի՝ գործում էր Դվին-Տփղիս ճանապարհը[4], պետք է կարծել, որ գործ

---

[1] Տե՛ս **Jacut**, III, էջ 144:

[2] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122:

[3] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հեր (Խուայյ)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհն ըստ արաբ աշխարհագետ ալ-Մուկադդասիի, էջ 152:

[4] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, էջ 381:

ունենք հենց այդ ճանապարհի հետ: Ուստի և կարծում ենք, որ ճանապարհն Արծափից հետո անցնում էր Հայկական պար լեռնաշղթան Չինգիլի լեռնանցքով ու Օրկովի կիրճով[1], այնուհետև, թեքվում էր դեպի արևելք և իջնում Երասխ գետի հովիտն Արտաշատի կամրջի մոտ: Այն, հավանաբար, անցնում էր Երասխը Արտաշատի կամ Տափերի (Տափերական) կամրջով ու շարժվում դեպի Դվին[2]: Դվինից ճանապարհը Հունարակերտով Տփղիս էր շարժվում Պարտավ-Տփղիս ճանապարհի երթուղով՝ Կալա իբն Քանդաման կայարանով:

Թելավ (Թաբլա): Մեծ կարևորություն է ներկայացնում ալ-Մուկադդասիի հիշատակած ճանապարհի ուղղությունը նաև Տփղիսից այն կողմ, որի հիշատակությունը ևս մյուս արաբ հեղինակների մոտ բացակայում է: Ինչպես արդեն ցույց է տրվել, Թաբլան նույնական է Թելավին[3]: Տփղիսից հետո ճանապարհը անցնում էր Թելավ, որտեղից էլ Շաքի:

Թելավից հետո ճանապարհն անցնում էր Շաքե, որից այն կողմ, ըստ ալ-Մուկադդասիի՝ ճանապարհը անցնում էր Լաքզան, իսկ նրանց միջև հեռավորությունը 2 անցում էր (10-14 փարսախ կամ 60-80կմ):

Լաքզան: Լաքզանը ոչ թե ինչ-որ կոնկրետ կայարան էր, այլ համապատասխան երկրի անվանումը, որը, թերևս, նույնական էր արաբական աղբյուրներում հաճախ հիշատակվող ալ-Լաքզ երկրին: Մենք արդեն ցույց ենք տվել, որ ալ-Լաքզ անվանումը արաբ հեղինակները երբեմն տալիս էին Դաղստանի բոլոր լեռնականներին և, երբեմն, այդ լեռականներից ոմանց: Մեր կարծիքով, այստեղ ալ-Մուկադդասին Լաքզան անվան տակ նկատի ունի ոչ թե հատկապես ինչ-որ մի ցեղի, այլ Հարավային Դաղստանը[4]:

Ճանապարհը Շաքեից ճյուղ տալով դեպի Կապաղակ՝ իր հիմնական ուղեգծով անցնում էր Կովկասյան լեռներն ու մուտք գործում Հարավային Դաղստան: Ամենայն հավանականությամբ, ճանապարհը Շաքե քաղաքի մոտ հաղթահարում էր Կովկասյան լեռները Օղուբ-Քիշխնով բնակավայրերի գծով և դուրս գալիս Ախտի-չայի հովիտը[5]: Այս

---

[1] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 17:

[2] Տե՛ս **Սեբեոս**, էջ 138:

[3] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հեր (Խուայյ)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհն ըստ արաբ աշխարհագետ ալ-Մուկադդասիի, էջ 155:

[4] Անդ, էջ 156-157:

[5] Տե՛ս ցարական բանակային շտաբի հինգվերստանոց քարտեզի թիվ Ç. 7. և Æ. 6. պլանշետները: Անանուն լեռնանցքով անցնող այդ ճանապարհը հիշատակում է Մ. Բարխուդարյանցը (տե՛ս Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1895, էջ 114-115):

ճանապարհի վերաբերյալ հիշատակություն ունի արաբ պատմիչ ալ-Քուֆին: Նա պատմում է, որ Մուհամմադ իբն Մրվանը 732/733 թ. դեպի Խազարական թագավորություն կատարած արշավանքի ժամանակ կարճ ուղի է ընտրել ու Շաքեի մերձակայքով անցնող ճանապարհով է հաղթահարել Կովկասյան լեռներն ու ներխուժել Սարիր[1]:

Ալ-Լաքզ-Դարբանդ ճանապարհահատվածը կարող էր երկու հնարավոր երթուղի ունենալ: Առաջինը՝ սկզբում Ախտի-չայ, իսկ հետո Սամուր գետերի ափերով շարժվում է դեպի արևելք ու միանում Դարբանդ շարժվող մեծ ուղուն, որը նույնական է արաբ հեղինակների հիշատակած Պարտավ-Դարբանդ ճանապարհին: Երկրորդ երթուղին միանում է այդ ճանապարհին՝ շարժվելով Ախտի-չայ և Կուրախ-չայ գետերի ափերով: Գերադասելի է առաջին ուղեգիծը՝ կապված առավել մատչելի ճանապարհի առկայության հետ: Ալ-Լաքզից (Լաքզան) մինչև Դարբանդ հեռավորությունը, ըստ ալ-Մուկադդասիի՝ կազմում էր 3 անցում (15-21 փարսախ կամ մոտ 85-120կմ): Կարծում ենք, որ ճանապարհը, ընթանալով Ախտի-չայ և Սամուր գետերի ափերով՝ պետք է միանար Պարտավ-Դարբանդ ճանապարհին Սամուր գետի կամրջի՝ Ջիսր Սամուրի մոտակայքում (Կուլարի կամուրջ), իսկ հետո շարժվեր դեպի Դարբանդ[2]:

Այսպիսով, Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից և 893 թ. հայ-բյուզանդական առևտրական պայմանագրի կնքումից հետո սկսում են գործել Հայաստանից և այսրկովկասյան երկրներից դեպի հյուսիս և արևմուտք շարժվող առևտրական ճանապարհները:

7.11. Հարավային մայրուղին: Մայրուղին գալիս էր Պարսկաստանից, հասնում Հեր և ճյուղ տալով դեպի Սալամաս և Որմի (Ուրմիո)՝ ընթանում էր դեպի Վան, Բերկրի, Արճեշ, որտեղ ճյուղ էր տալիս դեպի Մանազկերտ, և Արծկեով, Խլաթով, Բաղեշով, Արզնով շարժվում դեպի Ամիդ[3]: Այս ճանապարհը հիշատակում է նաև ալ-Իսթախրին. «Արդաբիլից Ամիդ ճանապարհ. Արդաբիլից մինչև Մարաղա 40 փարսախ է և Մարաղայից մինչև Դախարրական...՝ 2 անցում, այնտեղից մինչև Ուրմիա...2 անցում է և Ուրմիայից մինչև Սալամաս՝ 2 անցում, Սալամասից մինչև Խուայյ 7 փարսախ է և Խուայյից մինչև Բերքրի՝ 30 փարսախ, Բերքրիից մինչև Արջիշ մեկ օր է և Արջիշից մինչև Խիլաթ՝ 3 օր, Խիլաթից մինչև Բաղլիս 1 օր է և Բաղլիսից մինչև

---

[1] Տե՛ս al-Kufi, VIII, էջ 75:

[2] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հեր (Խուայյ)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհն ըստ արաբ աշխարհագետ ալ-Մուկադդասիի, էջ 157:

[3] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 235:

Մայյաֆարիկին և Ամիդ՝ 2 օր»[1]:

«Մղոնաչափք»-ում պահպանված տվյալներից երևում է, որ այս ճանապարհին միանում էր Դվինից եկող ուղին, որը Խլաթով անցնում էր հարավ և ընթանում դեպի Դամասկոս և Երուսաղեմ[2]: Ամենայն հավանականությամբ, Դվինից ճանապարհը գալիս էր Տափերական կամրջով, Արծափով, անցնում Գառնիձորի լեռնանցքը և Որդսպուով հասնում Բերկրի՝ միանալով Հարավային մայրուղուն:

7.12. Հայ Բագրատունիների տերության առևտրական կապերի հիմնական ուղղությունները: Ընդհանրապես, յուրաքանչյուր երկրի առևտրական կապերի որոշման համար մեծ նշանակություն ունեն հայտնաբերված դրամական գանձերի ընձեռող տվյալները:

IX դ. Հայաստանը և այսրկովկասյան երկրներն առևտրական կապերի մեջ էին Իրաքի, Ասորիքի, Ջազիրայի, Ջաբալի, Ֆարսի ու Սաջիստանի (Սագաստան) քաղաքների, Աֆրիկայի հյուսիսային շրջանների և նույնիսկ Իսպանիայի ու Միջին Ասիայի երկրների հետ[3]: Պետք է նշել, սակայն, որ այդ դրամները կարող էին Հայաստան և այսրկովկասյան երկրներ ներթափանցել ինչպես ուղղակի առևտրի միջոցով, այնպես էլ միջնորդավորված ձևով: Առևտուրը IX դ. ծավալվում էր Խալիֆայության ողջ տարածքում և Հայաստան ու Այսրկովկաս բերում արծաթ դրամներ Բաղդադից, Բասրայից, Քուֆայից, Վասիտից, Մուհամմադիայից (Ռեյ) և Սպահանից (Իսբահան)[4]: Դրամական գանձերը պարզորոշ ցույց են տալիս Հայաստանի այսրկովկասյան երկրների առևտրական կապերը հատկապես Իրաքի ու Պարսկաստանի հետ: IX դ. Հայաստանում Այսրկովկասում գտնված դրամները գերազանցապես հատված են արաբական (Իրաք, Ասորիք, Ջազիրա) և իրանական (Ջաբալ, Ֆարս, Խուզիստան, Խորասան) քաղաքներում[5]: IX դ. երկրորդ կեսից սկսած ընդգծվում էին Հայաստանի և այսրկովկասյան երկրների առևտրական կապերը Իրաքի, Ասորիքի, Ջազիրայի, Ջաբալի, Ֆարսի, Խուզիստանի և Խորասանի հետ[6]: Այդ իրավիճակը շարունակվեց նաև Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո:

Հայաստանից և այսրկովկասյան երկրներից դեպի հյուսիս և դեպի արևմուտք ընթացող առևտրական ճանապարհների գործունեության

---

[1] Տե՛ս **al-Istakhri**, էջ 194:

[2] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Զ, էջ 183:

[3] Տե՛ս **Խ. Մուշեղյան**, Արևելյան դրամների գանձերը և Հայաստանի տնտեսական կապերի հիմնական ուղղությունները VIII-X դարերում,-«ՊԲՀ», 1978, թիվ 3, էջ 222:

[4] Անդ, էջ 224:

[5] Անդ, էջ 225:

[6] Անդ:

վերականգնման հետ կապված IX-X դդ., ինչպես վկայում են դրամական գանձերի հետազոտության տվյալները, Հայ Բագրատունիների տերությունը առևտրական հարաբերություններ ուներ ինչպես կենտրոնական Ռուսաստանի, այնպես էլ մերձբալթյան երկրների և եվրոպական պետությունների, օրինակ՝ Ֆինլանդիայի, Շվեդիայի, Լեհաստանի, Գոտլանդ կղզու, Դանիայի և Գերմանիայի հետ: Վերոհիշյալ երկրներում հայտնաբերված դրամական գանձերը պարունակում են Հայ Բագրատունիների տերության տարբեր շրջանների դրամահատարաններում հատված դրամներ:

Առևտուրը Եվրոպայի հետ ընթանում էր հիմնականում երեք ուղղություններով: Առաջին ուղղությունը սկսվում էր Իրաքից, Միջագետքից ու Ասորիքից և Հայ Բագրատունիների տերության վրայով դուրս էր գալիս Վոլգա գետի ավազանը: Այստեղ ճանապարհը բաժանվում էր երկու ճյուղի, որոնցից մեկն ընթանում էր դեպի մերձբալթյան երկրներ և Գոտլանդ կղզու վրայով հասնում սկանդինավյան երկրներ, իսկ երկրորդը թեքվում էր դեպի արևմուտք և մուտք գործում ռուսական և եվրոպական շուկաներ:

Երկրորդ ուղղությունը գալով Պարսկաստանից՝ Դարբանդով մուտք էր գործում Հյուսիսային Կովկաս, Վոլգայի ավազանով անցնում դեպի Դոն գետի ավազանը, այնտեղից՝ մերձդնեպրյան շրջանը և շարժվում հյուսիս:

Երրորդ ուղղությունը Պարսկաստանի հարավային շրջաններից գալով՝ Հայաստանի վրայով շարժվում էր դեպի Փոքր Ասիա, որտեղից մի ուղղությամբ ընթանում էր դեպի Կոստանդնուպոլիս, իսկ այնտեղից՝ Եվրոպա, իսկ երկրորդ ուղղությամբ՝ Սև ծովով հասնում էր Դնեպրի ավազանն ու միանում վերոհիշյալ երկու ուղղություններին:

Հայ Բագրատունիների տերության մեջ հատված դրամները վերոհիշյալ երկրներում կարող էին հայտնվել ինչպես միջնորդավորված ձևով, այնպես էլ ուղղակի, քանի որ հայ վաճառականները նախկինում էլ օգտագործում էին դեպի հյուսիս տանող առևտրական ճանապարհները[1]:

[1] Անդ, էջ 231-233:

ՎԵՐՋԱԲԱՆ

Արաբական տիրապետության դեմ հայոց 774-775 թթ. ապստամբությունն իր կնիքը թողեց ինչպես Հայաստանի, այնպես էլ այսրկովկասյան երկրների քաղաքական ճակատագրի վրա: Դրանից հետո սկսվեց Բագրատունիների հզորացման և նրանց գլխավորությամբ Հայաստանի քաղաքական անկախության վերականգնման գործընթացը:

Բագրատունիները մեծավ մասամբ 774-775 թթ. ապստամբությանը մասնակցություն չէին ունեցել: Դրան Մամիկոնյանների գլխավորությամբ մասնակցել էին միայն Բագրատունիների որոշ ներկայացուցիչներ, որոնք ապստամբության պարտությունից հետո ստիպված հեռացել էին իրենց տիրույթներից ու հաստատվել Գուգարքի արևմտյան Կղարջք գավառում՝ հիմնելով Բագրատունիների ավագ ճյուղից կախյալ սեփական իշխանությունը:

Հայոց իշխան Աշոտ Մսակերը (802-826) օգտվեց ստեղծված իրավիճակից, տիրացավ Հայաստանի քաղաքական թատերաբեմից հեռացած Մամիկոնյանների և այլ նախարարական տների տիրույթներին, դրանով իսկ մեծապես բարձրացնելով Բագրատունիների հզորությունն ու հեղինակությունը:

IX դ. սկզբներին Արաբական խալիֆայությունն աստիճանաբար թուլանում էր, որը նպաստում էր Բագրատունիների հետագա հզորացմանը: Հայոց իշխան Բագարատ Բագրատունին (826-851) խալիֆայից ստացավ Հայոց և Վրաց իշխանաց իշխանի պաշտոնը և սկսեց հավակնել նույնիսկ Արմինիայի ոստիկանի լիազորություններին: Այդ իրողությունը սրեց հարաբերությունները Բագարատի և ոստիկանի միջև, որի պատճառով արաբները Բագարատին գերեվարեցին: Դա պատճառ դարձավ, որ նրա հպատակներն ապստամբեն և կոտորեն արաբական զորքն ու սպանեն ոստիկանին: Թուրքական մեծաթիվ վարձկան զորքի միջոցով որոշ ժամանակով հզորացած Խալիֆայությունը ճնշեց ապստամբությունը, սակայն Բագարատի սկսած գործը շարունակեց IX դ. և, ընդհանրապես, ամբողջ հայ միջնադարի ամենաշնորհալի և տաղանդավոր քաղաքական գործիչներից մեկը՝ Աշոտ Բագրատունին: Նա իր շրջահայաց քաղաքականությամբ կարողացավ Խալիֆայությունից ստանալ ինչպես Արմինիայի իշխանաց իշխանի պաշտոնը (862 թ.),

այնպես էլ կարճ ժամանակ անց՝ Արմինիայի ոստիկանի լիազորությունները:

Այդ ժամանակ Բագրատունիները Հայաստանի և, ընդհանրապես, Արմինիայի խոշորագույն հողատերերն էին: Մարդկային, տնտեսական և տարածքային խոշոր ռեսուրսների տիրապետող Բագրատունիները մեծ կարևորություն ձեռք բերեցին Խալիֆայության համար, քանի որ ձևականորեն շարունակում էին ընդունել արաբների գերիշխանությունը: Բացի այդ, Խալիֆայությունը տարածաշրջանում կարիք ուներ հավատարիմ և հզոր ուժի: Աշոտին իշխանաց իշխան նշանակելն ու ոստիկանի լիազորություններով օժտելը ցույց է տալիս, որ Արմինիայում սեփական իշխանությունը պահպանելու համար արաբներն իրենց հույսը դնում էին Բագրատունիների վրա: Այդ իրողությունը խելամտորեն օգտագործեց Աշոտ Բագրատունին: Նա 885 թ. խալիֆայից թագ ստացավ՝ հռչակվելով Հայոց և Վրաց թագավոր, իսկ այնուհետև, Հայաստանի մեծ մասից բացի, իր գերիշխանության տակ առավ Վիրքը, Կղարջքի կուրապաղատությունը, Ծանարաց քորեպիսկոպոսությունը, Աղվանքը և Ալանաց դռան հարևանությամբ բնակվող ցեղերին: Հայոց բանակի կայազորը հաստատվեց Ալանաց դռանը՝ իր հսկողության տակ առնելով հյուսիսկովկասյան ցեղերի՝ այսրկովկասյան երկրներ և Հայաստան արշավանքների երթուղու վրա գտնվող այդ կարևոր լեռնանցքը: Հայոց թագավորի գերիշխանությունն ընդունեց նաև Աբխազաց թագավորը:

Հայ Բագրատունիների տերությունն արևմուտքում տարածվում էր մինչև Սև ծովի ափերը, հյուսիսում՝ հասնում Կովկասյան լեռնաշղթայի ջրբաժանին, հարավում՝ տարածվում մինչև Կորդվաց լեռների հարավային լեռնաբազուկները, իսկ արևելքում՝ ընդգրկում Ճիղբերի երկիրը:

Հայոց թագավորությունը նշանակալից դեր և ազդեցություն ուներ միջազգային հարաբերություններում, որը զգալի չափով հիմնված էր նաև նրա ունեցած տնտեսական և ռազմական հզորության վրա:

Աշոտ Ա-ն տերության ներսում իրականացրեց մի շարք անհրաժեշտ վարչական փոփոխություններ, քանի որ արաբների ստեղծած Արմինիա ոստիկանության ներքին վարչական շրջաններն արհեստածին միավորներ էին՝ ընդգրկելով բազմաթիվ և տարաբնույթ ժողովուրդներ և ցեղեր: Հայաստանը թուլացնելու նպատակով Մեծ Հայքի Գուգարք աշխարհը դեռևս Սասանյանների օրոք մտցվել էր Վրաց մարզպանության մեջ: Նույն նպատակով Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհները կցվել էին Աղվանից մարզպանությանը: Արաբները համանման մտայնությամբ գրեթե նույնությամբ պահպանեցին գոյություն ունեցող վարչական բա-

ժանումը, որի հետևանքով Վրաց մարզպանության տարածքը մտցվեց Երկրորդ Արմինիա, վարչական շրջանի մեջ իսկ Աղվանից մարզպանության տարածքը՝ Առաջին Արմինիայի: Արաբական տիրապետության փաստական վերացումով այդ երկու վարչական շրջանների միավորիչ ուժն այլևս գոյություն չուներ, որի պատճառով Աշոտ Ա-ն զորք մտցրեց նաև Գուգարք, Արցախ և Ուտիք: Աշոտ Ա-ն Գուգարքի մեծ մասը և Ուտիքի հյուսիսային հատվածը վերածեց արքունի տիրույթների:

Բազմելով Հայոց գահին՝ Սմբատ Ա-ն, բացի Աշոտ Ա-ից ժառանգած երկրներից ու իշխանություններից, կարողացավ տիրել նաև այլ երկրամասերի:

Հայ Բագրատունիների տերությունը բաղկացած էր երեք հիմնական մասերից: Առաջինը բուն հայկական իշխանություններն էին, երկրորդը՝ այսրկովկասյան թագավորություններն ու իշխանությունները, իսկ երրորդը՝ Հայաստանում և այսրկովկասյան երկրներում հաստատված արաբական ամիրայությունները:

Ընդարձակ էին Բագրատունիների տիրույթները, որոնք ընդգրկում էին Այրարատը, Տայքը, ինչպես նաև Մոկքի, Տուրուբերանի, Վասպուրականի, Գուգարքի, Ուտիքի և Սյունիքի մի շարք գավառներ:

Հայաստանում աստիճանաբար հզորանում էին Վասպուրականի, Սյունյաց (Բուն Սյունյաց, Գեղարքունյաց և Վայոց ձորի), Տարոնի (Տարոն և Սասուն), Հայոց Արևելից կողմերի (Քթիշի կամ Գոռոզի, Խաչենի, Սևորդյաց, Գարդմանի և Փառիսոսի) իշխանությունները:

Վիրքում, որը նվաճվել էր Աշոտ Ա-ի կողմից, իշխանները գործում էին միմյանցից առանձին ու ինքնիշխան՝ ենթարկվելով միայն Հայոց թագավորին: Ծանարքում և Կախեթում ձևավորվել էր Ծանարաց քորեպիսկոպոսությունը, որի կազմի մեջ էր մտնում նաև Գարդաբանը: Կղարջքում ստեղծվել էր Բագրատունիների կրտսեր ճյուղի իշխանությունը, իսկ Աղվանքում իշխում էր Աշոտ Ա-ի նշանակած Արևելից մեծ իշխանը:

Սմբատ Ա-ի կողմից IX դ. վերջին թագադրվեցին Արևելից (Աղվանից) մեծ իշխան Համամը և Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհը: Այդ իրողությունը, լինելով զուտ զարգացած ավատատիրությանը բնորոշ գործընթացների արտահայտություն, փոփոխություններ չմտցրեց նրանց և Հայոց թագավորի՝ որպես հպատակների և տիրակալի հարաբերություններում:

Հայ Բագրատունիների տերության կազմում գոյություն ունեին մի քանի արաբական ամիրայություններ, որոնցից առավել նշանակալից էին կայսիկների, ութմանիկների, Դվինի, Պարտավի և Տփղիսի ամիրա-

յությունները: Խնդրո առարկա շրջանում Սմբատ Ա-ի կողմից վերացվեցին Խլաթի և Արճեշի ամիրայությունները:

Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո սկսում են գործել Հայաստանից դեպի Բյուզանդիա և դեպի Հյուսիսային Կովկաս ընթացող առևտրական ճանապարհները, որի հետևանքով Հայոց թագավորության տնտեսական կյանքը աշխուժանում է:

Հայոց տերությունով անցնող միջազգային տարանցիկ առևտրական ճանապարհների աշխուժացման արդյունքում ծաղկում ապրեցին բազմաթիվ հին քաղաքներ, շատ բնակավայրեր աճեցին ու վերածվեցին քաղաքների: Տերության մեծագույն քաղաքը Դվինն էր, որին հետևում էին Պարտավը և Տփղիսը:

Հայ Բագրատունիների տերությունը սահմանակցում էր վտանգավոր հարևանների հետ, որի պատճառով ձևավորվել էին ամրությունների համակարգեր տերության տարբեր հատվածներում: Մասնավորապես, կարևոր նշանակություն ունեին Ալանաց դուռն ու հարակից ամրությունները, Աբխազաց թագավորության սահմանին և դրա հարևանությամբ գտնվող բերդերը, ինչպես նաև Վասպուրականի, Հայոց Արևելից կողմերի, Սյունիքի և Արևելից մեծ իշխանության տարածքում գտնվող ամրությունները: Կարևոր նշանակության բազմաթիվ բերդեր կային նաև Հայ Բագրատունիների տերության ներքին շրջաններում:

IX դ. և X դ. սկզբին ծաղկում է ապրում նաև եկեղեցաշինությունը: Հնուց ի վեր գոյություն ունեցող վանքերի և եկեղեցիների զարգացմանը զուգահեռ ստեղծվում են բազմաթիվ նոր վանքեր և եկեղեցիներ: Եկեղեցաշինությունը հատկապես մեծ ծավալներ էր ընդունել Հայ Բագրատունիների արքունի տիրույթներում, Վասպուրականում, Սյունիքում, Հայոց Արևելից կողմանց իշխանություններում, Կղարջքի կուրապաղատությունում ու Սամցխեում:

Հայ Բագրատունիների տերությունը զգալի փոփոխություններ կրեց Սմբատ Ա-ի որդու և հաջորդի՝ Աշոտ Բ-ի օրոք: Վերջինս Հայոց թագավորությունից վտարեց արաբական զորքը, բայց «գտանէ զծառայս հօր իւրոյ թագաւորեալ»: Սակայն, այդ «ծառաներ»-ը ճիշտ համարեցին ենթարկվել Հայոց թագավորի իշխանությանը, որը հռչակվեց «շահնշահ» կամ «արքայից արքա»[1]:

Սմբատ Ա-ի մահվանից հետո Կղարջքի Բագրատունիները զգալիորեն անկախամիտ էին դարձել, որ իրեն զգացնել տվեց արդեն կարճ ժամանակ անց, իսկ Աղվանքի թագավոր Համամի ընդարձակ թագավո-

[1] Տե՛ս **Ասողիկ**, էջ 169-170:

ության հետքն անգամ չէր մնացել: Զարգացած ավատատիրության հայտնի գործընթացների հետևանքով Կուր գետի ձախափնյակում ձևավորվեցին մի քանի իշխանություններ: Նման գործընթացները սկսել էին գլուխ բարձրացնել նաև Հայաստանում, մինչդեռ Վիրքում՝ Կղարջքի Բագրատունիների դրոշի ներքո, տեղի էր ունենում բոլորովին հակառակ գործընթացը:

Փաստորեն, Սմբատ Ա-ից հետո լիովին փոփոխվեց Հայ Բագրատունիների տերության վարչաքաղաքական համակարգը: Այն իր բնույթով և բովանդակությամբ տարբերվում էր Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի տերությունից:

ДЕРЖАВА АРМЯНСКИХ БАГРАТИДОВ
(ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

Резюме

После восстания армян против арабского владычества 774-775гг. началось усиление Багратидов. Князь Армении Ашот Багратид (804-826гг.) смог присоединить к своим владениям земли сошедших с политической арены Армении родов Мамиконянов и Камсараканов, тем самым став самым крупным феодалом не только в Армении, но и во всем Наместничестве Арминия Арабского Халифата. Таким образом, в период господства Арабского Халифата Багратиды, которые еще в середине VII века владели только гаваром Коговит и частю гавара Багреванд в области Айрарат Великой Армении, постепенно усилили свои позиции и начали владеть обширными территориальными, экономическими и человеческими ресурсами.

В первой половине IX века Халифат постепенно ослаб. Этим воспользовались Багратиды, представитель которых - Багарат, (826-851гг.) добился статуса князя князей Армении и Грузии.

Усиление Багратидов было временно приостановлено большим походом полководца Халифата Буги в середине IX века. Но процесс восстановления политической независимости Армении, начатый Багаратом, продолжил Ашот Багратид - самый яркий политический деятель Армении и Закавказья второй половины IX века. Сначала он сумел получить статус князя князей Арминии (862 г), а потом и эмира Арминии. Ашот распространил свое господство на Закавказские страны-Грузию, Кларджское курапалатство, Кахетское княжество и Алуанк (Албания). Но, интересы Багратидов столкнулись с интересами Абхазского царства, и, в результате армяно-абхазских войн 881 и 888 годов, господство Ашота Багратуни признал и Абхазский царь. В 885 году Ашот Багратуни получил от Халифа царскую корону и был провозглащен “царем Армении и Грузии”. В армянских источниках Ашот I именуется как «Великий».

В процессе образования державы Багратидов особенную значи-

мость имели княжества Васпуракана, Сюника, Таронских Багратидов, Армянских Восточных краев, которые и после создания Державы Багратидов продолжали играть существенную роль в политической жизни страны.

В период царствования сына Ашота Смбата I, по прозвищу «Вседержитель», держава Багратидов продолжала усиливаться. Армянские войска кроме прочих владений Ашота I подчинили также Армянское княжество Амшен.

В начале X века владения Багратидов охватывали следующие земли Великой Армении: Айрарат, Тайк, из области Гугарк Великой Армении гавары Артаан, Джавахк, Куишапор, Болнопор, Цобопор, Колбопор, Дзоропор и Таширк, из Туруберана - гавары Мардали, Харк, Кори, Бзнуник, Алиовит и восточная часть Апахуника, из Васпуракана - гавары Нахиджеван, Голтн, Гарни и Арберани, из Утика - гавары Алуэ и Парисос а из Сюника - гавары Гелакуник, Ернджак и Аревик. Таким образом, границы Державы Багратидов охватывали большую часть Великой Армении, Абхазию, Грузию, Кларджское курапалатство, Кахетию, Албанию (Великое Восточное княжество) и территории племен западной части Главного Кавказского хребта.

Князь Албании Амам в 894г. получил царскую корону от Смбата I и был провозглашен «царем Албании». Также Кларджский курапалат Атрнерсэ в 899г. от Армянского царя получил корону и был провозглашен «царем Грузии», хотя собственно Грузией он еще не владел.

В 906 году Абхазский царь Константин III выступил против Смбата I, но был разбит. Армянская армия заняла Абхазское царство. Царь Абхазии был вынужден вновь признать господство Багратидов.

В состав Державы Багратидов входили несколько эмиратств. Значимыми из них были эмиратства Двина, Партава, Апахуника, Беркри, Карина, Гера (Хойа), Нахиджевана, Гандзака и Тбилиси. Существовали также мелкие эмиратства Хлата, Арцке и Арджеша.

После восстановления политической независимости Армении были созданы все необходимые условия для развития городов. В период державы Армянских Багратидов в одной только Армении было образовано около 30-и городов и больших поселений. То же самое наблюдается и в вассальных царствах и княжествах. Одновременно развиваются также древние города.

Исследуемый период также примечателен строительством мно-

жества церквей как в самой Армении, так и в Кларджском курапалатстве и Самцхе. В то же самое время развиваются церкви больее ранней постройки.

В территории державы Армянских Багратидов существовали сотни крепостей, многие из которых находились на границах державы-образовывая тем самым зоны пограничных укреплений. Десятки крепостей находились во внутренних территориях державы.

Держава Армянских Багратидов была связана с другими странами Халифата путями, ведущими из Двина, Партава и Тифлиса. Эти дороги связывали Арминию со странами Ближнего востока и через эти страны с Северной Африкой, со странами Персидского залива, с Хорасаном и со Средней Азией.

После восстановления политической независимости Армении и заключения торгового договора с Византией (893 год) открываются дороги, ведущие в Византию, а также дорога через Дарялское ущелье, ведущяя в Северный Кавказ. Держава Багратидов была связана с Византией, с северным Кавказом, Приволжием, Центральной Россией, Балтией и со странами Скандинавия, Восточной и Центральной Европы.

THE POWER OF ARMENIAN BAGRATUNIES
(HISTORICO-GEOGRAPHICAL STUDY)

Summary

The strengthening of the power of Armenian Bagratunies began in 774-775, after the revolt of the Armenians against the Arabian domination. The prince of Armenia Ashot Bagratuni (790-826) could attach to his possession the lands of Mamikonyans and Kamsarakans princedoms which were descended from the political arena of Armenia, thereby becoming the largest feudal lord not only in Armenia, but also in all Viceroyalty of Arminia of the Arabian Caliphate. Thus, at the time of the Arabian domination Bagratunies, who owned only the area of Kogovit and part of the Bagrevand area in the region of Airarat of the Great Armenia in the middle of VII century, gradually strengthened their positions and started to own extensive territorial, economic and human resources.

Because of the weakening of the Caliphate in the first half of the IX century Bagarat (826-851) the representative of Bagratunies managed to get the status of the prince of princes of Armenia and Georgia.

Strengthening of Bagratunies was temporarily stopped during the big campaign of Caliphate's commander Bugha in the middle of the IX century. However, the process of restoration of Arminia's political independence started by Bagarat was continued by Ashot Bagratuni - the brightest politician of Armenia and Transcaucasia of the second half of IX century. At first he received the status of the prince of princes of Arminia (862), and afterwards - the authorizations of the emir of Arminia. Ashot extended his domination to the Transcaucasian countries of Georgia, Kurapalacity of Kgharjk, Kakhet's princedom and Aghuank (Albania). Because the interests of Bagratunies coincided with the interests of the Abkhazian kingdom, as a result of the Armenian-Abkhazian wars of 881 and 888, the domination of Ashot Bagratuni was also recognized by the Abkhazian king. In 885 Ashot Bagratuni received the kingly crown from the Caliph and was proclaimed as "the king of Armenia and Georgia". In

the Armenian sources Ashot I is known as "The Great".

The princedoms of Vaspurakan, Siunik, Bagratunies of Taron and the Armenian East edges were of special importance not only at the stage of formation of the Armenian Bagratunies Power but also after the establishment of the Power, playing an essential role in its political life.

In reign of Smbat I, the son of Ashot, named "Almighty", the Power of Bagratuni continued to amplify. The Armenian armies, along the other possessions of Ashot I, have also subordinated the Armenian princedom of Amshen.

In the beginning of the X century Bagratunies possessed the following lands of the Great Armenia: regions of Airarat and Taik, areas of Artahan, Dzhavakhk, Kuishapor, Boghnopor, Tsobopor, Koghbopor, Dzoropor and Tashirk from the region of Gugark, areas of Mardaghi, Hark, Kori, Bznunik, Aghiovit and east part of Apahunik from the region of Turuberan, areas of Nakhidzhevan, Goghtn, Garni and Arberani from region of Vaspurakana, areas of Aghueh and Parisos from the region of Utik and areas of Geghakunik, Erndzhak and Arevik from the region of Siunik. Thus, the Power of Bagratunies covered the most part of the Great Armenia, Abkhazia, Kurapalacity of Kgharjk, Georgia, Kakhet's princedom, Albania (The Great Eastern princedom) and territories of tribes of the western part of the Main Caucasian ridge.

In 894 Prince of Albania Hamam received a crown from Smbat I and was proclaimed as a “King of Albania”. Also in 899, kurapalat of Kgharjk Atrnerseh received a crown from the Armenian king and was proclaimed as "the king of Georgia”, although he had not owned Georgia yet.

In 906 the Abkhazian king Konstantin III opposed Smbat I, but was defeated. The Armenian army occupied the Abkhazian kingdom. The Abkhazian king was compelled to again recognize the domination of Bagratunies.

The Power of Bagratunies included several Arab emirates. The most significant among them were the emirates of Dvin, Partav, Apahunik, Berkri, Karin, Her (Khoy), Nakhidzhevan, Gandzak and Tbilisi. There were also small emirates of Khlat, Artske and Ardzhesh.

After restoration of the political independence of Armenia all necessary conditions for the development of cities were established. During the Power of Armenian Bagratunies about 30 cities and several big settlements were established only in the territory of Armenia. The same development can be seen in vassal kingdoms and princedoms.

During the same period ancient cities were also developing.

The period of this study is also remarkable by building of many churches both in Armenia and in the princedoms of Kgharjk and Samtskhe. During the same period churches being constructed earlier were also developing.

There were hundreds of fortresses in the territory of the Power of Armenian Bagratunies, many of which were on the Power borders, by this establishing boundary zones. Dozens of fortresses were in internal territories of the Power.

The Power of Armenian Bagratunies was connected with the other countries of the Caliphate by the roads from Dvin, Partav and Tbilisi. Through those roads the Power of Armenian Bagratunies was also connected with the countries of the Middle East and through the Middle East with the countries of North Africa, Persian Gulf, Khorasan and Central Asia.

After restoration of political independence of Armenia and the conclusion of the trading contract with Byzantium (893) roads leading to Byzantium and the road leading to the North Caucasus through the gorge of Darial were activated, The Power of Armenian Bagratunies was connected with Byzantium, Northern Caucasus, coastal lands of Volga river, the Central Russia, Baltian lands and countries of Scandinavia, East and Central Europe.

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

-Ա-

Աբազգիա, տե՛ս Աբխազք
Աբաս Բագրատունի (Աշոտ Ա-ի եղբայր, Հայոց սպարապետ), 34, 87, 89, 233, 265
Աբաս թագավոր, 223
Աբասթուման, 329
Աբդ ալ-Ազիզ իբն Հատամ, 231
Աբդ ալ-Ալլահ իբն Ահմադ, 201
Աբդլա, 42
Աբեղյանք, 91
Աբխազ (թագավորություն), 26
Աբխազ (կայարան), 339, 340, 344
Աբխազաց թագավորություն, տե՛ս Աբխազք
Աբխազք, 22, 27, 37, 38, 41, 43, 44, 46, 48, 55, 56, 69, 73, 74, 87, 115, 119, 206, 209, 215, 217, 218, 220, 222, 223, 226, 228, 229, 247, 275, 276, 277, 279, 280, 292, 314, 318, 329, 356
Աբրահամ Ռշտունի կաթողիկոս, 295
Աբու Աբդ ալ-Մալիք, 182
Աբու ալ-Վարդ Կայսիկ, 89, 110, 111, 233, 240
Աբու Մուսա լեռ, 156
Աբու Ջաֆար ալ-Մանսուր, 198, 199, 253
Աբու Սաիդ, տե՛ս Աբուսեթ
Աբու Քարիմ Սուլամի, 246
Աբուխոսրո, 180,
Աբուսեթ (արաբ զորավար), 32, 93, 95
Ագար, տե՛ս Էգր
Ագարակի բերդ, 135, 283
Ադարբայջան, տե՛ս Ատրպատական
Ադ-Դինավարի, 154, 155
Ադղներ, 229
Ադոնց Ն., 20, 29, 41, 62, 65, 72, 82, 83, 91, 103, 113, 115, 128, 159, 179, 184, 185, 187, 191, 203, 204, 205, 207, 208, 214, 216, 255, 270
Ադրբեջան, 22, 26, 176
Ազնվաց ձոր, 97, 100
Ազնվաց ձոր գետ, 175
Ազորդ, տե՛ս Ազորդաց փոր
Ազորդաց փոր, 290, 302
Աթա-չայ, 343
Աթինա, 168
Ահմադ (Ամիդի Ամիրա), 101, 102, 217
Ալազան գետ, 179, 201, 222, 274, 275
Ալազանի հարթավայր, 210
Ալանաց դուռ, 40, 46, 48, 52, 190, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 206, 207, 208, 209, 219, 221, 222, 228, 253, 259, 277, 278, 330, 354, 356
Ալանք, 247, 279
Ալաշկերտ, 51
Ալաշկերտի դաշտ, 328
Ալավերդիի վանք, 318
Ալ-Բադդայն, 155
Ալբանիա, տե՛ս Աղվանք
Ալթըաղաչ, 343, 345
Ալթը-Փարմաղ-դաղ, 168, 173,
Ալի Արմանի, 32
Ալինջա-կալա, 285
Ալիշան Ղ., 169, 172, 296
Ալ-Իսթախրի, 14, 54, 161, 231, 236, 237, 238, 258, 259, 269, 270, 321, 322, 334, 336, 337, 338, 339, 340,

342, 343, 344, 350
Ալ-Լաքզ, 349, 350
Ալկի, 283
Ալ-Մամուն, 201
Ալ-Մուկադդասի, 15, 137, 141, 231, 236, 263, 269, 273, 321, 324, 327, 332, 333, 334, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 348, 349, 350
Ալ-Զարդաման, տե՛ս Գարդման
Ալ-Վադի, 332, 333
Ալտան, 334
Ալ-Քուֆի, 15, 350
Ախալսոպել, 275
Ախալցխա, 224, 280, 329
Ախալքալաք, 329
Ախկան, 289
Ախտի-չայ, 349, 350
Ախուրյան գետ, 260, 261, 303
Ածղուր վանք, 224, 317
Ակե, 133
Ահմադ իբն Յազիդ, 248
Աղահեճք, 149, 151, 153, 154, 255
Աղանդ-ռոտ, 133
Աղավնո գետ, 151, 162,
Աղբաբա լեռ, 175
Աղբակ գավառ, 131, 132, 139
Աղբակի Սբ. Խաչ վանք, 306
Աղդամ, 153, 162, 335, 337
Աղզի, 135
Աղթամար, 268
Աղթամարի Սբ. Խաչ, 306
Աղի ծով, տե՛ս Կապուտան ծով
Աղիովիտ, 85, 109, 111, 130, 244, 347
Աղձնիք, 26, 57, 58, 93, 95, 96, 97, 100, 102, 103, 105, 106, 283
Աղորի, տե՛ս Աղորնիք
Աղորնիք, 51, 107, 108, 129, 239, 241, 242, 248, 290
Աղստև գետ, 81, 127, 162, 163, 289, 330, 338
Աղվան գետ, 274
Աղվանից աշխարհ, տե՛ս Աղվանք
Աղվանից թագավորություն, տե՛ս Աղվանք
Աղվանք, 9, 12, 13, 21, 22, 25, 27, 28, 30, 31, 35, 36, 39, 46, 47, 53, 55, 58, 61, 62, 63, 64, 73, 74, 102, 117, 143, 154, 158, 159, 160, 176, 177, 178, 179, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 195, 196, 197, 274, 275, 292, 309, 311, 317, 339, 354, 355, 356
Աղուէ, 127, 130, 153, 163, 213, 222, 230
Աղքենդ, 324
Աճառյան Հ., 63
Աճարա, տե՛ս Էգր
Ամասիա, 329
Ամատունիներ, 88, 89, 113, 170
Ամարաս, 150, 151, 286, 287, 308
Ամարասի վանք, 151, 308
Ամիդ, 66, 73, 80, 93, 263, 282, 283, 350, 351
Ամիր-Ահմատ, 36, 147
Ամիր իբն Իսմայիլ ալ-Հարիսի, 200,
Ամյուկ, 50, 59, 60, 109, 110, 125, 129, 135, 244, 245, 246, 262, 284, 285
Ամորի, 31
Ամր, 239, 328
Այլի, 132, 135,
Այսրկովկաս, 7, 8, 9, 11, 13, 14, 15, 17, 22, 25, 27, 28, 30, 34, 35, 36, 37, 38, 40, 41, 42, 43, 46, 48, 74, 80, 176, 182, 203, 204, 206, 229, 279, 294, 297, 298, 320, 350, 351, 354, 355
Այսրկովկասյան թագավորություն, 36
Այվազյան Ա., 323
Այրարատ, 26, 81, 82, 83, 85, 88, 89, 90, 91, 92, 100, 129, 138, 252, 267, 347, 355
Անանիա Շիրակացի, 12

Անանիա Մոկացի կաթողիկոս, 158, 159, 188, 191, 204
Անանուն, 10, 59, 77, 79, 89, 128, 135, 245
Անանուն Զրուցագիր (կարծեցյալ Շապուհ Բագրատունի), 10, 31, 48, 49, 50, 51, 52, 53, 56, 57, 77, 85, 86, 87, 88, 103, 104, 105, 106, 107, 108, 110, 119, 124, 125, 126, 128, 129, 131, 133, 136, 137, 148, 149, 160, 164, 197, 237, 240, 241, 243, 245, 248, 249, 251, 252, 261, 263, 268, 274, 283, 284, 347, 348
Անդյան Կոյսու գետ, 26, 210, 222, 237
Անի, 86, 177, 259, 261, 264, 265, 298, 327
Անկյուրա, 31
Անձախիձոր, տե՛ս Անձահից ձոր
Անձահից ձոր, 132, 133, 135
Անձիտ, 98, 106, 272
Անձևացիք, 57, 96, 101, 128, 134, 137, 138, 139, 142, 143, 284
Անչայի վանք, 311, 314, 316
Անչաբաձե Զ., 39, 219
Անչիսխատ, տե՛ս Տփղիսի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցի
Անփայտ Բասեն, 87
Աշաղի Հեմշին, տե՛ս Ստորին Համշեն
Աշոտ Ա (Մեծ), 7, 19, 30, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 51, 52, 53, 61, 63, 64, 72, 73, 75, 76, 77, 79, 80, 83, 86, 87, 90, 92, 110, 111, 115, 122, 123, 129, 132, 137, 141, 145, 146, 147, 161, 166, 178, 191, 196, 203, 204, 205, 206, 207, 216, 217, 219, 220, 226-227, 232, 233, 234, 236, 240, 242, 250, 255, 256, 259, 260, 262, 265, 273, 282, 302, 304, 327, 353, 354, 355, 357
Աշոտ (Մոկաց իշխան), 57
Աշոտ (Սյունյաց իշխան), 60, 148, 149
Աշոտ Արծրունի (Դերենիկ Արծրունու հայր), 31, 59, 131, 137, 268, 305, 306
Աշոտ Արծրունի (Դերենիկ Արծրունու որդի), 50, 66, 132, 133, 135, 142, 160, 244, 268, 306
Աշոտ Բ, 67, 70, 71, 73, 86, 261, 267, 356
Աշոտ Բագրատունի (Աշոտ կուրապաղատի որդի), 38
Աշոտ Բագրատունի (Բագարատ Բագրատունու որդի), 101, 103
Աշոտ Բագրատունի (Գրիգոր Տարոնացու որդի), 104
Աշոտ Բագրատունի (Մոկաց իշխան), 129
Աշոտ Բագրատունի (Սմբատ Ա-ի եղբորորդի), 70, 267, 303
Աշոտ Բագրատունի (Սմբատ Ա-ի որդի), տե՛ս Աշոտ Բ
Աշոտ Գնթունի, 91, 291
Աշոտ Կույր Բագրատունի (Հայոց իշխան), 118, 179, 180, 181, 182, 187, 239, 274
Աշոտ կուրապաղատ (Կղարջքի Բագրատունի իշխան), 37, 38, 44, 65, 86, 112, 114, 115, 116, 118, 120, 121, 122, 188, 200, 202, 203, 205, 212, 214, 215, 216, 218, 223, 276, 301, 313, 315, 316, 318
Աշոտ Մսակեր Բագրատունի, 28, 29, 57, 80, 81, 82, 84, 85, 86, 87, 88, 92, 109, 112, 114, 115, 118, 121, 122, 124, 128, 129, 214, 215, 220, 234, 244, 259, 264, 282, 314, 353
Աշորնիք, տե՛ս Արշարունիք
Աշոցք, 29, 55, 81, 86, 114, 115, 122
Աշտարակ, 329
Աշունք վանք, 302

Ապահունիք, 51, 100, 108, 111, 130, 142, 239, 241, 242, 243, 273, 328, 331
Ապարան, 267, 329
Ապլմախրա, 102
Ապլվարդ, տե՛ս Աբու ալ-Վարդ Կայսիկ
Ապոգանեմ, տե՛ս Գագիկ Բագրատունի
Ապոսևատա, 243
Ապուհեճր, 51, 110, 125, 240, 245
Ապուշամբ, 57, 148
Ապուջափրի բերդ, 134
Ապուսակր Վահունի, 246
Առան, 22, 144, 156, 161, 179, 192, 195, 196, 231, 236, 258, 270, 341
Առանձնակ, 129
Առանշահիկներ, 150, 153, 155, 156, 157, 159, 178, 183, 184, 185, 186, 189, 191, 193, 196, 287
Առաջին Արմինիա, 25, 143, 144, 213, 355
Առան-ռոտ, 157, 162
Առաքել (իշխանություն), 173
Առաքելյան Բ., 18, 76, 266
Առբերանի, 51, 53, 109, 110, 111, 125, 126, 130, 133, 245
Առնոոտն, 133, 135
Առվենից ձոր, 129, 135, 142
Ասիսփորի, տե՛ս Արսեաց փոր
Ասկուրեթ, տե՛ս Սակուրեթ
Ասողիկ, 11, 27, 30, 41, 47, 62, 69, 70, 73, 78, 221, 257, 280, 289, 290, 297, 299
Ասորեստան, 236
Ասորիք, 27, 52, 93, 108, 110, 241, 242, 243, 247, 331, 351, 352
Ասորոց Միջագետք, 102, 110, 241
Ասպակունյաց ձոր, 100, 105, 106
Ասպինձա, 44
Աս-Սիավուրդիա, 164
Ավանի եկեղեցի, 296, 297, 298, 312
Ավարայր, 174
Ավարի դաշտ, 251, 284
Ավարյան Կոյսու գետ, 26, 197
Ավնիկ, 290, 291
Ատենի Սբ. Սիոն եկեղեցի, 61, 312
Ատոմ Արծրունի (Գուրգեն Ապուպել-ճի որդի), 139, 142
Ատրներսեհ (Աբխազաց թագավոր, Իովանեի որդի), 44
Ատրներսեհ (Աբխազաց Իովանե թագավորի որդի), 37
Ատրներսեհ (Աղվանից թագավոր), 158, 159, 160, 181, 182, 186, 187, 188, 189, 190, 191, 194, 208, 209, 275, 292
Ատրներսեհ (Հերեթի իշխան), 180, 181, 182
Ատրներսեհ (Վրաց իշխան), 312
Ատրներսեհ Առանշահիկ (Խաչենի իշխան), 152, 153, 154, 156, 157, 159, 160, 163, 191, 192, 193, 194, 196, 287, 310
Ատրներսեհ Բագրատունի (Աշոտ կուրապաղատի որդի), 38, 44, 115, 122
Ատրներսեհ Բագրատունի (Աշոտ կուրապաղատի հայր), 112, 113, 118, 120, 121, 214, 215, 223
Ատրներսեհ Բագրատունի (Կղարջքի կուրապաղատ, հետագայում՝ թագավոր), 34, 38, 39, 44, 45, 46, 55, 56, 61, 62, 65, 67, 68, 69, 70, 71, 73, 91, 112, 114, 116, 119, 120, 122, 190, 206, 213, 216, 217, 223, 227, 281, 300, 301, 302, 355
Ատրներսեհ Կույր, տե՛ս Աշոտ Կույր Բագրատունի
Ատրպատական, 26, 54, 59, 61, 62, 67, 71, 73, 76, 77, 78, 80, 82, 120, 123, 126, 136, 137, 141, 143, 147, 156, 177, 198, 207, 217, 231, 234, 235, 237, 238, 240, 242, 246, 249, 250, 251, 252, 258, 262, 271, 277, 280, 281, 282, 283, 284, 285, 292,

333, 334, 341, 346
Արաբական խալիֆայություն, 7, 19, 28, 29, 30, 31, 34, 35, 42, 46, 53, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 89, 104, 161, 171, 178, 198, 201, 217, 226, 232, 241, 253, 260, 270, 274, 320, 353, 354
Արաբիա, 163
Արագածոտն, 81, 88, 89, 294, 296, 298, 299
Արագվ գետ, 201, 209, 220, 222
Արած, 90
Արածանի գետ, 85, 98, 107, 175, 252, 272, 289, 328, 331
Արամանա, 328
Արամոնս, 231, 300,
Արամոնսի վանք, 299
Արարատյան դաշտ, 294
Արգաստովիտ, 129, 142
Արգիճի գետ, 323-324, 326
Արգվեթ, 227, 229
Արգվեթի լեռնաշղթա, տե՛ս Լիխի լեռնաշղթա
Արդաբիլ, տե՛ս Արտավետ
Արեգունի լեռնաշղթա, 162
Արենի, 322
Արեշ, 275
Արզն, 81, 94, 95, 96, 97, 100, 101, 137, 139, 175, 273, 350
Արիստակես Լաստիվերցի, 12, 107, 290
Արծափ, 289, 346, 347, 348, 349, 351
Արծկե, 109, 110, 241, 243, 263, 350
Արծն, 265, 266, 327, 329
Արծրունիներ, 10, 20, 21, 31, 36, 50, 55, 62, 79, 82, 91, 96, 100, 102, 125, 128, 129, 131, 132, 133, 135, 138, 139, 140, 141, 142, 147, 190, 239, 244, 245, 246, 249, 251, 252, 261, 262, 268, 269, 273, 283, 284, 306
Արձնի, 29, 84, 238, 328, 329, 331
Արղնիի լեռներ, 98, 175
Արճեշ, 51, 53, 100, 109, 110, 111, 238, 239, 240, 241, 243, 263, 328, 331, 350, 356
Արճիշակովիտ, 133
Արմանիակուս, 247
Արմինիա (Արաբական խալիֆայության վարչական միավոր), 25, 26, 27, 30, 31, 32, 37, 39, 47, 53, 73, 75, 76, 78, 89, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 100, 102, 111, 112, 118, 129, 132, 136, 137, 140, 143, 144, 171, 197, 198, 199, 201, 202, 203, 206, 213, 214, 218, 219, 220, 226, 228, 231, 232, 233, 236, 246, 247, 248, 250, 252, 253, 255, 258, 278, 295, 320, 330, 353, 354
Արշակ Բ, 288
Արշակունիներ, 34, 35, 71, 81, 82, 87, 90
Արշամաշատ, տե՛ս Շիմշաթ
Արշամունիք, 99, 100, 105, 106, 290
Արշավիր Արշարունի, 296
Արշարունիք, 29, 55, 81, 82, 84, 85, 92, 262, 288, 288
Արչիլ, 179, 180, 181, 182, 187
Արսեաց փոր, 113, 120, 121, 174, 214
Արսեն Սափարացի, 188, 224, 318
Արսիանի լեռնաշղթա, 220
Արտա, 168, 169, 172
Արտագերս, 84, 288
Արտազ, 88, 133, 285
Արտահան, 39, 45, 46, 87, 115, 116, 122, 123, 129, 215, 220, 263
Արտամետ, 268, 269
Արտանուջ, 114, 116, 211, 265, 276, 316, 329
Արտանուջի Սբ. Պետրոս-Պողոս եկեղեցի, 316
Արտաշատ, 327, 331
Արտաշատի կամուրջ, 327, 331, 349, 351

Արտաշեն, 165, 167, 169, 170, 172, 173, 174, 291
Արտաշեն Բագրատունի, 165, 166
Արտաշես Ա, 279
Արտաշեսյան, 133, 139
Արտավազդ Մամիկոնյան, 225, 226
Արտավանյան, 134, 140, 251
Արտավետ, 161, 231, 232, 258, 270, 334, 337, 350
Արցախ, 11, 25, 144, 150, 151, 153, 155, 156, 236, 286, 287, 308, 309, 325, 326, 354, 355
Արցախի լեռներ, 162
Արուճ (ավան), 266
Արուճ (կայարան), 328, 331
Արուճի Սբ. Գրիգոր եկեղեցի, 299
Արփա (Արբա), 322, 323
Արփա գետ, 323, 326, 333
Արքայից գավառ, 129, 142
Արքուգետ, 154, 255
Արքունի պողոտա, 108, 242, 273, 327, 328, 331
Արևելից մեծ իշխանություն, 176, 196, 197, 278, 310, 355, 356
Արևելք, 43, 57, 58, 71, 111, 293
Արևիք, 51, 126, 130, 149
Արևմանելիներ, 40, 203, 205, 206, 207
«Արևմտյան Ադրբեջան», 176
Ափշիլք, 222, 229
Ափշին (Ատրպատականի ամիրա), 54, 62, 64, 65, 66, 67, 68, 69, 71, 76, 77, 119, 123, 133, 135, 141, 217, 234, 235, 252, 281, 297
Ափշին (արաբ զորավար), 153
Աֆրիկա, 651

-Բ-

Բաբադաղ, 197
Բաբ ալ-Աբվաբ, տե՛ս Դարբանդ
Բաբ Ալլան, տե՛ս Ալանաց դուռ
Բաբ Անի, 327
Բաբ Սամսախի, տե՛ս Սամցխեի դուռ
Բաբ Ֆիրուզ Կուբադ, տե՛ս Ֆիրուզ Կուբադի դուռ
Բաբան, տե՛ս Բաբեկ
Բաբաք, տե՛ս Բաբեկ
Բաբելոն, 78
Բաբեկ, 29-30, 31, 32, 150, 153, 155, 156, 178, 192, 196, 286, 303
Բաբերդ, 327
Բաբկեն Սյունի (Վասակ Իշխանիկի որդի), 145, 147
Բագան, 134, 140, 251
Բագավան, 83, 327, 328, 331
Բագավանի եկեղեցի (Սբ. Հովհաննես, Սբ. Գրիգոր), 298
Բագարան, 85, 259, 260, 327
Բագարանի եկեղեցի, 303
Բագրատ (Աբխազաց թագավորի եղբորորդի), 44
Բագրատ (Վրաց թագավոր), 181
Բագարատ Բագրատունի (Գրիգոր Տարոնացու որդի), 104
Բագարատ Բագրատունի (Կղարջքի կուրապաղատ), 38, 112, 115, 116, 121, 122, 202, 212, 217, 218, 223, 224, 225, 280, 301, 302, 313, 315
Բագարատ Բագրատունի (Հայոց իշխան), 29, 30, 31, 32, 72, 92, 94, 95, 96, 97, 99, 100, 103, 129, 193, 272, 307, 353
Բագրատունիներ (Կղարջքի կամ Վրաց), 13, 18, 20, 34, 36, 38, 39, 54, 65, 86, 113, 114, 115, 116, 118, 119, 122, 123, 186, 189, 194, 205, 206, 210, 212, 213, 214, 216, 217, 220, 223, 225, 234, 276, 280, 302, 315, 318, 353, 355, 357
Բագրատունիներ (Հայոց), 7, 8, 9, 10, 11, 13, 17, 18, 19, 20, 21, 22, 25, 28, 29, 31, 32, 33, 35, 36, 38, 39, 42, 43, 47, 54, 61, 73, 75, 77,

79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 94, 109, 111, 112, 113, 114, 116, 119, 120, 121, 122, 123, 124, 126, 127, 128, 129, 131, 138, 141, 145, 146, 147, 163, 165, 166, 173, 174, 177, 184, 186, 187, 191, 203, 204, 205, 207, 214, 216, 217, 219, 220, 223, 229, 232, 235, 238, 248, 255, 257, 258, 259, 260, 261, 262, 264, 265, 266, 267, 274, 279, 282, 288, 289, 290, 293, 294, 302, 307, 353, 354, 355
Բագրատունիներ (Շիրակի), տե՛ս Բագրատունիներ (Հայոց)
Բագրատունիներ (Տարոնի), 21, 29, 32, 33, 92, 100, 101, 102, 184, 185, 272
Բագրևանդ, 81, 83, 85, 92, 111, 261, 262, 328, 329, 331
Բագրևանդ գետ, 328
Բադդ ամրոց, 155
Բազկան, 26
Բալազուրի, 15, 31, 97, 99, 165, 199, 231, 241, 246, 322, 342
Բալահովիտ, 97, 98, 99, 100, 106, 107
Բալխաբ, 334
Բալովիտ, 173
Բակատար, 44
Բաղաբերդ, 285, 286
Բաղականացիներ, 150
Բաղանիք Արքունական, 151, 152
Բաղդադ, 154, 236, 255, 269, 312, 351
Բաղեշ, 81, 94, 95, 96, 97, 273, 331, 332, 350
Բաղվաշներ, 291
Բաղք, 51, 144, 146, 148, 149, 154, 255
Բայլական, 25, 52, 152, 161, 270, 333, 334, 335, 336, 337
Բանակ, 298
Բանակ վանք, 300
Բաշ Հեմշին, տե՛ս Վերին Համշեն
Բաշ Հեմշին գետ, 169, 173
Բաշ Նորաշեն, 321, 322
Բաշ Շորագյալ, 261
Բաջունայս, տե՛ս Ապահունիք
Բառիղովիտ, 133,
Բասեն, 51, 87, 88, 91, 108, 239, 241, 242, 248, 262, 327, 328, 329
Բասրա, 351
Բարանդուզ-չայ, 175
Բարբարոսի տուն, 104
Բարդաա, տե՛ս Պարտավ
Բարդիջ, տե՛ս Բարզանջ
Բարզանդ, 334, 337
Բարզանդ գետ, 337
Բարզանջ, 339, 340, 341, 342
Բարթիկյան Հ., 19, 43, 68, 74, 75
Բարխուդարյանց Մ., 325
Բարխուդարյան Ս., 21, 63, 159, 160, 188,
Բարձր Հայք, 26, 93, 97, 98, 99, 100, 175
Բարսիլք, 221
Բաքր ցեղախումբ, 93
Բաքրան, 260,
Բաքու, 177
Բեռլին, 336
Բերդիկ, 341
Բերդկունք, 324
Բերդո վանք, 310
Բերդուջ գետ, 203
Բերկրի, 51, 53, 110, 111, 125, 126, 240, 242, 243, 244, 245, 262, 284, 285, 347, 350, 351
Բերծոր, 150, 151, 153, 162, 286
Բզիբ գետ, 229
Բզնունիք, 99, 111, 130, 239, 269, 347
Բզնունյաց ծով, 140, 239, 242, 244, 262, 263, 268, 307, 348
Բժշկյան Մ., 169
Բիթլիս, տե՛ս Բաղեշ

Բյուզանդական կայսրություն, տե՛ս Բյուզանդիա
Բյուզանդիա, 19, 20, 33, 35, 39, 42, 43, 45, 49, 54, 55, 65, 73, 74, 75, 80, 83, 88, 89, 93, 96, 99, 102, 103, 104, 106, 107, 118, 129, 141, 142, 143, 149, 155, 165, 166, 167, 171, 205, 213, 214, 217, 228, 234, 240, 246, 247, 248, 249, 252, 259, 268, 272, 276, 278, 282, 300, 320, 327, 356
Բյույուք-դերե, տես Ֆիրթինա գետ
Բոգվերաձե Ա., 22
Բոգունիք, 133
Բոդոջ, 203, 205, 277, 292
Բողնոփոր, 124, 129
Բողոսի լեռնաշղթա, 210
Բոճորմա, 203, 205, 207, 277, 292
Բոստաքենդ (Բաստավան), 331
Բրոսսե Մ., 23, 65, 117
Բուժունիք, 134, 139, 142
Բուխք, 221
Բուղա, 32, 34, 86, 91, 92, 95, 96, 100, 101, 128, 145, 146, 152, 156, 157, 164, 178, 198, 202, 203, 218, 219, 239, 244, 249, 254, 260, 261, 269, 270, 283, 286, 302
Բուն Մարդաստան, տե՛ս Տրպատունիք
Բունիաթով Զ., 22, 63, 154, 155, 156, 176, 177, 182, 184
Բուտակ, 250

-Գ-

Գաբեղյաններ, 57
Գաբեղյանք, 91, 92
Գաբիթյան, 134, 140, 251
Գաբրիել Դոնաուրի, 40, 41, 201, 203, 206
Գաբուլոց, 203, 204, 205, 206
Գագիկ (Դիզակի թագավոր), 157, 158, 159, 160
Գագիկ (Դավիթ Անհողինի որդի), 204
Գագիկ Ա, 221, 235
Գագիկ Ապումրվան, 66, 102, 103, 132, 133, 135, 142
Գագիկ Արծրունի (Վասպուրականի թագավոր), 50, 59, 60, 61, 69, 70, 71, 79, 82, 106, 109, 110, 124, 125, 128, 129, 131, 132, 133, 135, 136, 140, 142, 245, 246, 250, 251, 262, 269, 273, 284, 285, 289, 306, 307
Գագիկ Բագրատունի (Տարոնի իշխան), 57, 58, 104, 105, 106, 107
Գազնակ, 250
Գազրիկյան գավառ, 134, 140, 251
Գազրիկյաններ, 57
Գանլիջա, 329
Գաղգաղ, 179, 180, 181, 197, 275
Գայլ գետ, 107
Գայլատու լիճ, 85
Գանձակ (Ուտիքի), 154, 162, 255, 256, 270, 337, 338
Գանձակ (Ատրպատականի), 333
Գառնի, 41, 264, 267, 304
Գառնիձորի լեռնանցք, 351
Գավազ, 202, 275
Գավրեք, 98
Գարդաբան, 40, 41, 200, 203, 204, 206, 207, 220, 253, 254, 292, 330, 339, 355
Գարդաբան (քաղաք), 209, 339
Գարդաբանի եկեղեցի, 318
Գարդաբանյան հարստություն, 40, 41
Գարդման, 127, 128, 146, 153, 157, 163, 165, 286, 287, 355
Գելգենի-չայ, 344
Գեղամա գավառ, 152, 153, 285
Գեղամա ծով, 128, 144, 149, 303, 304, 326
Գեղա(ր)քունի կայարան (Քիլա-

քունի, Քիլ-Քույ), 321, 323, 324
Գեղարքունիք, 34, 55, 144, 145, 146, 147, 148, 149, 271, 303, 304, 355
Գեղի գետ, 286
Գեորգի (Ածղուրի վանահայր), 224
Գեորգի Մերչուլ, 13, 118, 121, 211, 215, 301, 313, 314, 315, 316, 318
Գեորգի Չորչանեցի, 224, 225, 226, 277, 317
Գերմանիա, 352
Գզեղխ, 93, 97, 100, 106
Գըվգավ, 274, 275
Գիշ (Քիշ), 275, 311
Գիշի վանք, 311
Գիորգի Ա, 37, 44, 219
Գիսի եկեղեցի, 308
Գլխո վանք, 308, 309
Գյոկ-չայ գետ, 47, 197
Գնթունիներ, 57, 81, 90, 91, 267, 291
Գնուն Գուգարաց, 124
Գնունիներ, 57, 109, 124, 244
Գոբրոն, 12,
Գոգշեն, 56, 86, 87, 122, 123, 129, 220
Գոգովիտ, տե՛ս Կոգովիտ
Գոդերձական լեռնանցք, 317
Գողգոթա, 306
Գողթն, 125, 126, 130, 134, 141, 149, 235, 249, 250, 332
Գոմբորի լեռնաշղթա, 209
Գոռամ, 49, 57
Գոռոզ, 57, 150, 158, 160, 161, 162, 163, 270, 286, 309, 355
Գոտլանդ կղզի, 352
Գորի, 49, 52, 56, 312
Գտիչ, տե՛ս Քթիշ
Գտչա վանք, 157, 309
Գրեն Ա., 18, 34, 36, 43, 54
Գրիգոլ, 200, 201, 203, 218, 254
Գրիգոր (Համշենի իշխան), 165, 166, 173
Գրիգոր (Մոկաց իշխան), 142
Գրիգոր Առանշահիկ (Խաչենի իշխան), 152, 153, 157, 158, 159, 160, 163, 191, 192, 193, 194, 287
Գրիգոր Բագրատունի (Տարոնի իշխան), 57, 58, 102, 103, 104, 105, 106
Գրիգոր Դերենիկ Արծրունի, տե՛ս Դերենիկ Արծրունի
Գրիգոր Լուսավորիչ, 294, 295, 305, 308, 309
Գրիգոր Խանձթեցի, 13, 118, 121, 211, 212, 215, 225, 301, 302, 313, 314, 315, 316, 317, 318
Գրիգոր Մամիկոնյան (Դավիթ Մամիկոնյանի եղբայր), 187
Գրիգոր Մամիկոնյան (Հայոց և Վրաց իշխան), 27, 28, 30, 264, 266, 299, 309
Գրիգոր Մամիկոնյան (Քուրդիկ Մամիկոնյանի որդի), 83, 92
Գրիգոր Սյունի, 144
Գրիգոր Սուփան (Սյունյաց իշխան), 36, 144, 145
Գրիգոր Սուփան Բ, 146, 147, 148, 267, 304
Գրիգորյան Գ., 21, 103
Գուառամ Բագրատունի (Կղարջքի իշխան), 34, 37, 38, 39, 44, 86, 112, 115, 122, 123, 189, 203, 205, 212, 223, 224, 225, 226, 280, 315, 318
Գուգարք, 26, 36, 38, 44, 45, 46, 48, 53, 54, 55, 86, 87, 111, 114, 117, 119, 122, 123, 124, 127, 129, 165, 171, 186, 197, 199, 207, 213, 214, 216, 217, 223, 227, 278, 294, 353, 354, 355
Գուդամակարի լեռնաշղթա, 209
Գուդիսի լեռնաշղթա, 209
Գուլգուլ, տե՛ս Գաղգաղ
Գուկան, 133, 139
Գուրգեն, տե՛ս Կվիրիկե

Գուրգեն (Արևելից իշխան), 204
Գուրգեն (Վրաց իշխանաց իշխան), 181, 188, 189
Գուրգեն (Տարոնի իշխան), 66, 101, 103
Գուրգեն Ապուպելճ (Արծրունի իշխան), 34, 95, 101, 128, 133, 136, 137, 138, 139, 142, 284
Գուրգեն Արծրունի, 50, 56, 57, 58, 124, 125, 132, 133, 134, 135, 136, 138-139, 140, 250, 269, 283, 307
Գուրգեն Բագրատունի (Կղարջքի իշխաններից), 34, 38, 44, 45, 282, 302
Գուրիա, տե՛ս Վուրի աշխարհ
Գուրջաան, 210
Գևորգ կաթողիկոս, 35, 62, 66, 305

-Դ-

Դաբիլ, տե՛ս Դվին
Դադ, 309
Դադոյի վանք (Դադիվանք), 309
Դալի լեռ, 161, 162
Դախարական, 350
Դաղստան, 208, 349
Դամասկոս, 230, 236, 263, 332, 351
Դանիա, 352
Դաչի (Վաչե), 201, 203
Դաչի Ուջարմեցի, 311
Դաջանք, 198, 222
Դառնի, 85, 124, 125, 130, 133, 136
Դավիթ (Կեչուտի եկեղեցու խաչ-քարի հիմնադիր), 147
Դավիթ (Տարոնի իշխան), 66, 101
Դավիթ Անհողին, 204, 207, 221
Դավիթ Բագրատունի (Արքայիկ, Տարոնի իշխան), 101, 103
Դավիթ Գարեջա վանք, 311
Դավիթ Գարեջեցի, 188
Դավիթ կաթողիկոս, 230, 295, 299, 300
Դավիթ կուրապաղատ (Բագարատ կուրապաղատի որդի), 38, 61, 112, 122, 206, 216, 217, 313, 318
Դավիթ կուրապաղատ (Դավիթ Գ, Տայքի կուրապաղատ), 49, 165, 166, 211
Դավիթ Մամիկոնյան, 187
Դավիթ Սահառունի, 300
Դատոս (Աբխազաց թագավոր), 49, 56
Դարան, 335, 336
Դարանաղի, 98, 309
Դարբանդ, 26, 27, 47, 51, 53, 110, 111, 197, 198, 240, 241, 263, 270, 274, 278, 320, 339, 340, 344, 345, 346, 350, 352
Դարբինյան-Մելիքյան Մ., 49
Դարիալի կիրճ, 26, 199, 278, 330
Դարման, 333, 335, 336
Դարյունից բերդ (Դարյունք), 81, 82, 84, 288, 289, 345, 346, 348
Դաումիս (Զաութիս), 321, 324
Դեգիք, 98
Դեմիր-դաղ լեռ, 169
Դեյրան, 335, 337
Դերենիկ Արծրունի, 33, 34, 36, 50, 101, 102-103, 131, 132, 133, 137, 138, 141, 142, 147, 245, 251, 252, 268, 269, 274, 284, 306
Դերջան, 98, 99, 175
Դիար Բաքր, 93, 94, 101, 140, 243
Դիդեմ, 331
Դիդոյք, 26, 207, 210, 222
Դիզակ, 150, 159
Դիզափայտ լեռներ, 309
Դիլիջան, 162, 330
Դինար, 181, 188, 189, 190, 311
Դիվիչի, 26
Դմանիս, 264, 291
Դյուտական, 325, 326
Դնեպր գետ, 352
Դողս, 64, 66, 71, 77
Դոն գետ, 352
Դոնաուրի, 201

Դվալի լեռնաշղթա, 220
Դվալք, 198, 222
Դվին, 48, 51, 64, 66, 67, 88, 89, 90, 101, 108, 111, 125, 132, 143, 149, 167, 230, 231, 232, 233, 234, 235, 237, 240, 249, 250, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 270, 271, 272, 274, 276, 278, 294, 295, 297, 300, 320, 321, 322, 323, 324, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 348, 349, 351, 355, 356
Դվինի Մայր եկեղեցի, 294, 295
Դվինի Սբ. Գրիգոր եկեղեցի, տե՛ս Դվինի Մայր եկեղեցի
Դվինդաշտ, 55, 90
Դվալք, 218
Դևդատ, 235

-Ե-

Եգերացվոց աշխարհ, տե՛ս Աբխազք
Եգր, 222
Եգիպտոս, 75
Եզր կաթողիկոս, 298
Ելի, տե՛ս Այլի
Եկեղյաց գավառ, 98, 99, 100, 106
Եղանց բերդ, 99, 104, 105, 106, 242, 290
Եղեգական, 331
Եղեգիս, 264, 271
Եղիա կաթողիկոս, 310
Եղիշե, 11, 288, 289
Եղիշե առաքյալ, 308
Եղնովիտ, 170, 173
Եղնովիտի վանք, 310
Եռանշահիկներ, տե՛ս Առանշահիկներ
Եսայի (Գոռոզի իշխան), 159, 160, 163
Եսայի Աբու Մուսե, 150, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 159, 160, 161, 162, 255, 270, 286, 309
Եվլախ, 340
Եվրոպա, 352
Երազգավորս, 42, 66, 86, 259, 260, 261, 302, 327
Երազգավորսի Սբ. Փրկիչ եկեղեցի, 302, 303
Երասխ գետ, 26, 58, 85, 126, 132, 149, 152, 155, 156, 161, 162, 174, 186, 195, 260, 262, 288, 323, 326, 327, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 340, 341-342, 345, 349
Երեմյան Ս., 17, 39, 45, 65, 86, 140, 199, 275, 282, 339, 340, 343, 345
Երզնկա, 329
Երիկավ ամրոց, 110, 242, 245, 284, 285
Երխեթք, 93, 97, 100, 106
Երկրորդ Արմինիա, 26, 81, 111, 113, 114, 118, 197, 213, 214, 226, 252, 253, 355
Երնջակ (բերդ), 51, 126, 149, 249, 285
Երնջակ (գավառ), 126, 130, 285, 303
Երվազ, 260
Երվանդունիներ, 260
Երվանդունիք, 134, 139, 142
Երրորդ Արմինիա, 26, 111, 113, 132, 136, 140
Երուսաղեմ, 263, 309, 310, 332, 351
Երևան, 264, 304
Երևարք, 100, 129, 135
Եփրատ գետ, 99, 175, 246, 289

-Զ-

Զանավ, 225, 277,
Զանավի վանք, 277, 317
Զարդոբ, 174, 197, 340
Զարեհաբերդ, 252, 284
Զարեհավան, 132, 133, 134, 268, 269
Զարզմա, 317

Զարզմայի վանք, 224, 317
Զարմիհր Առանշահիկ, 183, 184,
Զարմիհրական տոհմ, 178, 182, 183, 184,
Զարևանդ, 132, 133, 141, 174, 250, 251, 252, 284
Զաքաթալա, 298
Զաքարիա կաթողիկոս, 302
Զիգանա, 327
Զիդրո, 250,
Զիլ-կալե, 169, 170, 172
Զռայլ, 135, 283
Զռել, տե՛ս Զռայլ
Զվարթնոցի տաճար, տե՛ս Վաղարշապատի Սբ. Գրիգոր եկեղեցի
Զուրարիկներ, 96

-Է-

Էգր, 115, 118, 214, 215, 217
Էլևիտ, տե՛ս Եղնովիտ
Էջմիածին, 294
Էրախանի, 281
Էրզրում, 177
Էրոս, 179

-Ը-

Ընծայից ձոր, տե՛ս Անձահից ձոր
Ըռնա, 133, 134

-Թ-

Թաբարի, 15, 95, 155
Թաբլա, տե՛ս Թելավ
Թադևոս առաքյալ, 307, 308
Թալինի Սբ. Աստվածածին եկեղեցի, 298
Թալիշ, 325
Թամսիվան, 171
Թավասպարք (Թաբասարան), 26
Թավրիզ, 333
Թելավ, 179, 196, 210, 274, 275, 277, 318, 346, 349
Թեոդոս Բ (Աբխազաց թագավոր), 49, 218,
Թեոդորոս Ռշտունի, 27, 28, 30, 99, 188, 297
Թեոդորոս Վստամ Արևմանյան, 204
Թեոփանես Խոստովանող, 14
Թեոփանեսի Շարունակող, 14
Թերեք գետ, 199, 278
Թեքֆուր լեռ, 172
Թիանեթ, 203, 292
Թիֆլիսի գավառ, 117
Թխաջուր, տես Թուխ գետ
Թմբկաբերդ, 280, 281
Թմոգվ բերդ, տե՛ս Թմբկաբերդ
Թոդոսակ, 312
Թոռլաքյան Բ., 170
Թոռնավան գավառ, 132, 133
Թոռնիկ Բագրատունի (Ապոգանեմի որդի), 104
Թոռնիկ Բագրատունի (Բագարատ Բագրատունու որդի), 103
Թովմա Արծրունի, 10, 34, 35, 36, 43, 46, 57, 59, 66, 82, 83, 91, 94, 95, 101, 102, 103, 124, 125, 128, 133, 134, 135, 136, 138, 141, 142, 148, 152, 156, 178, 185, 186, 192, 193, 198, 238, 244, 249, 263, 268, 269, 272, 283, 284, 285, 286, 306, 307, 330
Թորգոմյան ազգ, 43
Թորդան, 309
Թռեղք, 38, 115, 122, 123, 206, 227, 291
Թրաբի, 132
Թուլումջյան Ա., 170, 171
Թուխ գետ, 283, 284
Թուխարք, 281, 282
Թուղխ, 58, 102, 148, 242
Թումանով Կ., 19, 65, 184, 228
Թուշք, 207, 210

-Ժ-

Ժիրաք, 283

-Ի-

Իբերիա, 276
Իբն ալ-Ասիր, 15, 93-94, 95, 192, 198
Իբն ալ-Ֆակիհ, 15, 161, 238, 270, 278
Իբն Խորդադբեհ, 15, 78, 97, 278, 321, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339
Իբն Հաուկալ, 14, 54, 158, 182, 204, 231, 237, 268, 271, 321, 322, 334, 336, 337, 340, 342, 343
Իբն Մասկավայ, 94, 95
Իբն Ռուստեհ, 15, 342
Իբրահիմ (Նախճավանի ամիրա), 141, 249, 261
Իլարիոն Վրացի, 13, 311
Ինգուր գետ, տե՛ս Վիշապ գետ
Ինճիճյան Ղ., 17, 169
Իշայր, 129
Իշխան, 267, 268, 298, 301
Իշխանակ, 158, 181, 182, 188, 189, 190, 191
Իշխանի վանք, 121, 215, 301, 302, 314
Իշոց, 129
Իովանե (Աբխազաց թագավոր), 37, 38, 40, 44
Իոր գետ, 179, 201, 210, 218, 222, 275, 277, 292
Իսա իբն աշ-Շայխ, 41
Իսբահան, տե՛ս Սպահան
Իսհակ իբն Իսմայիլ (Սահակ), 203, 204, 218, 253, 254, 316, 330-331
Իսհակ իբն Կունդաջիկ, 41
Իսմայիլ իբն Շուայբ, 201, 202
Իսպանիա, 351
Իսրայել եպիսկոպոս, 309
Իրաք, 236, 269, 270, 312, 351, 352
Իրխան (Իրկնիս), 281

-Լ-

Լազիկա, 229
Լազիստան, 168
Լամիս, 52
Լաքզան, 346, 349
Լեկ, 135
Լեկիտ, 298
Լեկք, 26
Լեհաստան, 352
Լեո, 18, 149
Լեոնտի Մրովելի, 13
Լիխի լեռնաշղթա, 27, 220, 227, 228
Լիպարիտ Բաղվաշ, 38, 123, 206, 227, 228, 291
Լմբա փոր, 132
Լոմսիանթա, 44, 223, 280
Լորան Ժ., 18
Լորդկիպանիձե Մ., 22, 185, 215
Լփինք (Լիբան, Լիրան), 26, 47, 58
Լև գետ (Լևոնագետ), 326
Լևոն (Աբխազաց թագավոր), 228
Լևոն (Բյուզանդիայի կայսր), 141, 252
Լևոն Սարկավագ, 14

-Խ-

Խաբուր գետ, 175
Խազարական թագավորություն, 344, 345, 350
Խազարներ, 26, 221, 255, 330
Խազրա, 344
Խալա, 169,
Խալա գետ, 168, 173
Խալիդ իբն Յազիդ աշ-Շայբանի, 201, 248,
Խալիֆայություն, տե՛ս Արաբական խալիֆայություն
Խաղտիք, 89, 174
Խաղտոյառիճ, 327, 329
Խայզան, 26
Խանձթա վանք, 301, 313, 314, 316

Խաչեն, 149, 150, 153, 154, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 165, 185, 196, 287, 308, 309, 355
Խաչենի բերդ, 152, 286, 287
Խաչեքար լեռ, 169
Խաչեքար վանք, տե՛ս Խաչիվանք
Խաչիկ վանք, տե՛ս Խաչիվանք
Խաչիկյան Լ., 89, 165
Խաչիվանիկ, տե՛ս Խաչիվանք
Խաչիվանք, 170, 310
Խաչլու լիճ, 108
Խասգյուղ, 331
Խարբերդ, 98
Խերես, 282
Խլաթ, 51, 99, 100, 106, 108, 109, 110, 238, 239, 240, 241, 243, 263, 328, 350, 351, 356
Խլաթա ծով, տե՛ս Բզնունյաց ծով
Խնով, 349
Խնունիս, 239, 290, 291
Խոզաթ գետ, 98, 107, 175
Խոնելիա Ռ., 44,
Խոռնաբուջ, 274
Խոսպիա, 329
Խոսրով (Պարսից արքա), 143, 181, 188, 279
Խորաձոր, 309
Խորանթա, 179, 275
Խորասան, 236, 269, 333, 334, 351
Խորձյան, 98, 99, 100, 106
Խորուզլու-դաղ, 337
Խրամ, 230
Խրամ գետ, 164, 339
Խուայյ, տե՛ս Հեր
Խուդաթ, 344
Խուզիստան, 270
Խութ, 93, 100, 105, 106, 307
Խույթ, տե՛ս Խութ
Խունան, տե՛ս Հունարակերտ
Խուփթա, 329
Խևսուրք, 207, 208, 209, 218, 222

-Ծ-

Ծալկա, 227
Ծաղկոտն, 51, 53, 55, 83, 84, 85, 240, 252
Ծամնդավ, 348
Ծանարաց քորեպիսկոպոսություն, տե՛ս Ծանարք
Ծանարք, 9, 20, 22, 26, 40, 41, 48, 55, 58, 73, 158, 176, 181, 182, 194, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 213, 214, 218, 219, 222, 237, 253, 254, 275, 277, 278, 292, 311, 318, 348, 354, 355
Ծըխոյք, 198, 222
Ծղուկ, 144, 146, 148, 285, 286
Ծոբոփոր, 124, 129
Ծոփք, 26, 93, 97, 98, 99, 100, 106
Ծոփք Շահունի, 98
Ծումբ, 331

-Կ-

Կաբալա (Չուխուր Կաբալա), 274
Կալա ալ-Ասաբիատ, տե՛ս Արծափ
Կալա իբն Քանդաման, 210, 292, 330, 337, 339, 349
Կալա Յունիս, տե՛ս Դարյունից բերդ
Կալե-քյոյ, 170
Կալիկալա, տե՛ս Կարնո քաղաք
Կալկաթուս (Կաղկատույք), 321, 324, 325, 326
Կախեթ, 26, 117, 199, 200, 204, 208, 209, 213, 214, 274, 277, 318, 355
Կախեթի իշխանություն, տե՛ս Ծանարք
Կախեթի լեռնաշղթա, 209
Կաղանկատվաց վանք, 309
Կաղանկատույք, 325, 326
Կաղզվան, 288
Կամախ (Կաղամախ, Կալմախ), 282

Կամախ (քաղաք), 93, 97, 98, 99, 175, 246
Կամբեճ գետ, տե՛ս Իոր գետ
Կամբեճան, 179, 185, 186, 188, 193, 194, 195, 196, 208, 210, 274
Կամսարականներ, 28, 29, 81, 84, 85, 89, 114, 298
Կայան, 131
Կայսիկներ, 53, 55, 84, 88, 91, 107, 108, 109, 110, 111, 148, 238, 239, 240, 241, 242, 243, 245, 246, 248, 249, 263, 273, 285, 291, 355
Կանգավար ամրոց, 136, 137, 284
Կանգարք, 56, 87, 123, 124, 129, 220,
Կապաղակ, 58, 182, 194, 196, 197, 274, 311, 349
Կապան, 271
Կապկոհ, տե՛ս Կովկասյան լեռներ
Կապույտ բերդ, 288
Կապուտան ծով, 174, 251, 284, 333
Կասպիական դռներ, 337
Կասպից ծով, 26, 47, 326, 334
Կասրե, տե՛ս Խոսրով
Կավակերտ, 144
Կատարո վանք, 309
Կատրանիդե, 41
Կարա-սու, 334
Կարատիքենդի լեռներ, 343, 345
Կարաուլով Ն., 164, 321, 335, 337, 345
Կարիա ալ-Ասաբիատ, տե՛ս Արծափ
Կարին, 98, 100, 107, 108, 239, 242, 246, 248, 290, 328, 329, 331
Կարկառ գետ, 162
Կարնո քաղաք, 48, 54, 97, 98, 237, 246, 247, 248, 265, 272, 278, 295, 328, 329
Կարս, 87, 177, 240, 261, 265, 327, 329
Կեթիկ, 97, 100
Կենգևեր (Կանգուվա), 284
Կեչուտ, 147
Կերան, 52
Կեցան գետ, 175
Կըզ-կալա, 339
Կիամքի լեռ, 333
Կիլիկիա, 93
Կիպերտ, 169
Կիսաջան, 322
Կիրակոս Գանձակեցի, 12
Կլդեկար(ն), 227, 291
Կղարջք, 9, 13, 23, 34, 35, 37, 38, 48, 54, 55, 56, 61, 65, 67, 71, 73, 86, 112, 113, 114, 115, 116, 118, 119, 120, 121, 122, 123, 167, 186, 187, 190, 200, 202, 203, 205, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 223, 224, 225, 227, 267, 276, 280, 281, 282, 293, 300, 301, 302, 313, 314, 315, 316, 317, 318, 353, 354, 355, 356
Կղարջքի կուրապաղատություն, տե՛ս Կղարջք
Կյուրիկյաններ, 204, 207
Կոգովիտ, 55, 81, 82, 85, 138, 289, 347, 348
Կոդոր գետ, 229
Կոթ, 271, 304, 324
Կոթավանք, տե՛ս Կոթի Սբ. Աստվածածին վանք
Կոթի Սբ. Աստվածածին վանք, 304
Կոխ Կ., 168, 169, 172, 174
Կող, 56, 113, 114, 116, 119, 171
Կողբ, 85, 267
Կողբի եկեղեցի, 303
Կողբոփոր, 55, 124, 129
Կողթ, 153
Կողոնիա, 329
Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոս, 294, 295, 298
Կոստանդին Բ, 247
Կոստանդին Գ (Աբխազաց թագավոր), 45, 46, 50, 55, 56, 57, 58, 60, 61, 71, 87, 120, 122, 181, 209, 275, 312

Կոստանդին Ծիրանածին, 13, 101, 103, 104, 105, 107, 108, 109-110, 125, 129, 141, 142, 143, 149, 164, 165, 240, 241, 242, 243, 276, 291
Կոստանդին Կոպրոնիմոս, 246
Կոստանդնուպոլիս, 104, 301, 326, 327, 329, 352
Կոստաս Բ, 99
Կովկաս, 34, 179
Կովկասայինք, 221
Կովկասյան Ալբանիա, տե՛ս Աղվանք
Կովկասյան թագավորություն, 36, 43, 176
Կովկասյան լեռներ, 27, 35, 36, 43, 46, 48, 55, 190, 195, 196, 197, 199, 208, 209, 210, 221, 222, 228, 229, 275, 278, 343, 345, 349, 350, 354
Կովսական, 144
Կոտայք, 90, 146, 297, 300
Կոտոր, 131, 132, 142
Կոտոր (Կարմիր) գետ, 140, 251, 284
Կոտոր լեռնաշղթա, 347, 348
Կորդիք, 132, 139
Կորդիք Վերին, 283
Կորդվաց լեռներ, 175, 283, 354
Կորդուք, տե՛ս Կորճայք
Կորի, տե՛ս Կորո ձոր
Կորիկե, տե՛ս Կվիրիկե
Կորճայք, 26, 57, 132, 133, 134, 139, 142
Կորճեից աշխարհ, տե՛ս Պարսկա-հայք
Կորնբերդ, 52
Կորո ձոր, 108, 130, 239, 242, 243
Կորո ձոր գետ, 108
Կոփա (Կապույտ) լեռներ, 175
Կվել, 280, 281
Կվիրիկե Ա, 181, 203, 204, 205, 207, 208, 275, 292
Կվիրիկե Բ, 204, 205
Կվիրիկե Գ, 204
Կրերիք, 135
Կրիմսկի Ա., 63, 157, 193
Կրճունիս, 133
Կուդամա, 15, 161, 237, 333, 335
Կուզնեցով Ի., 170
Կուլարի կամուրջ, 344, 345, 350
Կուխեթ, 220, 254
Կուղանովիտ, 133
Կումամ, 334, 335
Կուր գետ, 25-26, 39, 44, 47, 48, 58, 116, 127, 152, 153, 154, 157, 162, 163, 164, 174, 176, 186, 193, 194, 195, 196, 197, 209, 220, 221, 224, 237, 254, 277, 281, 329, 330, 339, 340, 341, 342, 345, 357
Կուրախ-չայ, 350
Կուրայշ ցեղ, 254

-Հ-

Հաբանդ (Սյունիքի գավառ), 144, 146, 148, 151
Հաբանդ (Արցախի գավառ), տե՛ս Մյուս Հաբանդ
Հաբիբ իբն Մասլամա, 143, 197, 246, 247, 267, 272, 322, 323
Հադամակերտ, 132, 268, 269, 306
Հադամակերտի եկեղեցի, 307
Հազկերտ, 72
Հաթերք, 270, 325
Հակոբ (Հիսուս Քրիստոսի եղբայր), 307, 308
Հակոբյան Ա., 63, 64, 185
Հակոբյան Թ., 264, 322, 329
Համազասպ (Ամասպ), 225, 226, 277, 317
Համազասպ Արծրունի, 131
Համազասպ Մամիկոնյան, 143
Համակար, 57
Համամ (Աղվանից թագավոր), 61, 62, 63, 64, 65, 67, 68, 69, 70, 71, 154, 159, 160, 178, 182, 185, 186,

187, 189, 190, 191, 192, 193, 196, 355, 356
Համամ Ամատունի, 89, 167, 171, 291
Համամաշեն, տե՛ս Համշեն
Համշեն, 55, 131, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 175, 291, 310
Համշենի բերդ, 167, 169, 171, 172, 291
Համշենի մեծ գետ, 165, 172, 173, 174
Հայաստան (Հայք), 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 17, 18, 19, 20, 22, 25, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 39, 41, 42, 43, 45, 46, 47, 48, 50, 51, 52, 53, 54, 57, 58, 59, 60, 61, 62, 64, 66, 67, 70, 71, 73, 76, 77, 79, 80, 81, 82, 89, 92, 94, 96, 99, 100, 101, 102, 109, 111, 114, 115, 116, 117, 121, 124, 131, 132, 137, 140, 141, 143, 144, 145, 147, 148, 155, 161, 177, 178, 182, 190, 191, 192, 193, 196, 202, 207, 212, 213, 220, 221, 226, 227, 230, 231, 233, 235, 236, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 252, 255, 256, 257, 258, 259, 261, 264, 266, 272, 273, 274, 276, 277, 278, 281, 292, 293, 294, 296, 297, 298, 299, 300, 302, 309, 312, 314, 320, 322, 323, 328, 330, 331, 332, 334, 335, 341, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357
Հայաստանի Հանրապետություն, 22, 176, 323
Հայկ Նահապետ, 152, 263
Հայկազյան ազգ, 178
Հայկական պար, 328, 346, 348, 349
Հայկական Տավրոս, 97
Հայկունի Ս., 168, 169
Հայոց Արևելից կողմեր, 21, 25, 131, 144, 149, 150, 151, 152, 153, 154, 156, 157, 159, 160, 161, 162, 163, 174, 178, 186, 191, 193, 194, 195, 196, 204, 230, 236, 237, 255, 269, 270, 277, 286, 293, 308, 309, 311, 325, 342, 355, 356
Հայոց թագավորություն, տե՛ս Հայաստան
Հայոց (Սոմխիթի) ձոր, 188,
Հայոց ձոր (գավառ), 134, 139
Հայոց մարզպանություն, 111
Հանդաբերդ, 152, 287
Հաշտյանք, 98, 99, 100, 106
Հավախաղաց, 152, 157, 193, 286, 287
Հավճիչ, 107, 239, 248, 290
Հավնունիներ, 91
Հավնունիք, 91, 239, 242, 248
Հարավային Դաղստան, 277, 349
Հարճլանք, 151, 152, 153, 287
Հարությունաջուր գետ, 162
Հարությունյան Բ., 17, 138, 140, 195, 197, 322, 323, 331
Հարությունյան Հ., 18, 76
Հարուն ալ-Ռաշիդ, 78, 83, 238, 244, 248
Հարք, 51, 99, 100, 106, 107, 108, 109, 129, 239, 241, 242, 243, 331
Հեմշին, 167, 168, 169, 171, 172
Հեմշին-կալեսի, տե՛ս Համշենի բերդ
Հեմշինի լեռներ, 167
Հեր, 50, 111, 132, 133, 137, 140, 141, 142, 174, 240, 245, 250, 251, 252, 263, 268, 269, 273, 274, 282, 284, 320, 333, 345, 346, 348, 350
Հերևան, 346
Հերակլ, 300
Հերեթ, 179, 180, 181, 182, 185, 188, 189, 193, 194, 195, 196, 208, 274
Հին Բայազետ, 289
Հիսե, որդի Շեխի, 41, 101
Հիսն Ջիադ, տե՛ս Խարբերդ
Հիսուս Քրիստոս, 121, 216, 301, 305, 306, 307, 311

Հմայակ (Փառիսոսի իշխան), 57, 128, 164
Հմայակ Մամիկոնյան, 174
Հյուսիսային Կովկաս, 201, 260, 320, 329, 330, 352, 356
Հյուսիսային Միջագետք, 27, 73, 246
Հյուսիսային փոխարքայություն, 89
Հնդկաստան, 265
Հողաբլուր, 251, 284
Հողց, 283, 284
Հորմի, 250
Հովհան, որդի Կվաբուլի, 201
Հովհան Բագարանցի կաթողիկոս, 295, 296
Հովհան Մամիկոնյան, 11, 170
Հովհան Մայրավանեցի, 188
Հովհան Մանդակունի կաթողիկոս, 296
Հովհաննավանք, 295
Հովհաննես (Աղվանից իշխան), 154, 178, 191, 192, 193, 194, 196
Հովհաննես Բագրատունի, 185
Հովհաննես Դրասխանակերտցի, 9, 32, 37, 41, 43, 45, 46, 50, 54, 55, 56, 57, 61, 62, 64, 65, 66, 68, 69, 70, 76, 78, 82, 83, 86, 90, 91, 102, 119, 120, 123, 127, 141, 144-145, 146, 157, 164, 165, 167, 187, 190, 191, 194, 199, 207, 230, 232, 233, 235, 236, 237, 251, 252, 256, 259, 260, 264, 265, 266, 267, 278, 281, 283, 288, 291, 295, 296, 299, 300, 302, 305
Հովհաննես կաթողիկոս, 304
Հովհաննես Սկիլիցես, 14, 265
Հովհաննես Օձնեցի, 230, 299
Հովհաննեսյան Մ., 280, 290, 291
Հովսեփ Գենեսիոս, 14
Հռիփսիմյանց կույսեր, 305
Հրազդան գետ, 330
Հունարակերտ, 48, 124, 127, 162, 195, 237, 289, 330, 338, 339, 340, 349
Հունգարներ, 164

-Ձ-

Ձագիկ, 271
Ձագիկյաններ, 144
Ձախար, 229
Ձայլցեղ, 56
Ձյունականներ, 57
Ձորա պահակ, 328, 331-332, 347
Ձորագետ, 127, 163
Ձորագյուղ, 304
Ձորո վանք, 295, 305
Ձորոփոր, 124, 129
Ձորք, 271, 286

-Ղ-

Ղադո լեռներ, 215, 279, 314
Ղազար Փարպեցի, 11, 294
Ղազբեկ, 199
Ղարաբաղի բարձրավանդակ, 161, 162
Ղարագյոզյան Ա., 323
Ղարադաղ, 140
Ղվարել, 275
Ղվելի վանք, 317
Ղվիրիլա գետ, 227
Ղուբա, 343, 344, 345
Ղուրտ-Բուլաղ, 343
Ղևոնդ, 11, 28, 84, 89, 113, 114, 170, 171, 226, 231, 236, 239, 247, 248, 249, 250, 281, 285, 299, 327, 328, 329, 332, 347, 348

-Ճ-

Ճակատք, 55, 85
Ճակք, 281, 282
Ճահուկ (Կորճայքի գավառ), 133, 135, 139, 283
Ճահուկ (Սյունիքի գավառ), 144, 146, 148, 149, 285, 303

Ճահուկ, 283
Ճավճավածե Ի., 117
Ճիղբք (Ճողբաց իշխանություն), 53, 57, 58, 176, 196, 197, 354
Ճորա պահակ, տե՛ս Դարբանդ
Ճորոխ գետ, 89, 113, 171, 174, 175, 228, 281, 282
Ճորոխի լեռնաշղթա, 175
Ճվաշ գավառ, 131, 133,

-Մ-

Մազազ, 90
Մազքուբք, 26, 344, 345
Մաքևոսյան Ռ., 20, 42, 79
Մահմետ (Դվինի ամիրա), 90, 233, 259
Մահմետ (Մուհամմադ իբն Մրվան), 230, 350
Մալաթիա, 93, 98
Մակու, 284, 285
Մամեդովա Ֆ., 22, 177
Մամիկոնյաններ, 28, 81, 83, 84, 89, 92, 112, 114, 116, 117, 120, 225, 228, 238, 262, 267, 281, 282, 288, 289, 290, 353
Մայաֆարիկին, 273, 351
Մանազկերտ, 100, 109, 110, 111, 125, 126, 239, 240, 241, 242, 243, 249, 272, 273, 306, 307, 331, 350
Մանաճի տուն, 31
Մանանաղի, 99, 100, 107
Մանանդյան Հ., 18, 72, 321, 322, 324, 325, 326, 327, 329, 331
Մանգլեաց փոր, 123, 124, 129
Մանվել Ամատունի, 297
Մաշտոց (Հայոց կաթողիկոս), 66, 304
Մառ Ն., 23, 210, 258
Մառական, 284
Մասլամա իբն Աբդ ալ-Մալիք, 198, 241
Մասյացոտն, 90
Մասրիկի դաշտ, 162
Մասուդի, 15, 47, 155, 158, 164, 182, 194, 199, 208, 218, 227, 253, 254, 341
Մատաղիս, 325
Մատթեոս Ուռհայեցի, 12
Մատրիս (Հատրիս), 270, 321, 324, 325
Մարակերտ (Մարավան), 323, 326
Մարաղա, 333, 350
Մարանդ, 134, 136, 140, 141, 251, 273, 274, 320, 332, 333
Մարդաղի, տե՛ս Աղորնիք
Մարդաստան, 133, 137, 138
Մարիամ Արծրունի, 101
Մարիամ Բագրատունի, 146, 304
Մարկվարտ Հ., 18, 38, 65, 82, 103, 115, 128, 187, 214, 324, 326, 339
Մարմաշեն, 329
Մարտիրոս, 165, 166, 173
Մաքենացվոց Սբ. Աստվածածին եկեղեցի, 264, 265, 267, 304
Մաքենացվոց վանք, 303, 304
Մելիքով Ռ., 177
Մեծ Աղբակ գավառ, 132, 133, 134
Մեծ Թաղլար, 286
Մեծ Լիախվ գետ, 209, 222, 228
Մեծ Կվանք, 153, 308, 309
Մեծ Հայք, 11, 16, 25, 27, 93, 98, 111, 142, 150, 171, 174, 185, 213, 223, 238, 240, 246, 247, 269, 334, 354
Մեծ Մազրա, 194
Մեծ Սյունիք, տե՛ս Սյունիք
Մեծ Քիրս լեռ, 162
Մեծիրանք, 151, 152, 153, 157, 192, 287
Մեծիրանից Սբ. Հակոբի վանք, 192, 308
Մեծնունիք, 133
Մեհրուժան Արծրունի, 238
Մեղ գետ (Մեղրագետ), 107
Մեսրոպ Մաշտոց, 308

Մերձավոր Արևելք, 320, 332
Մերձբալթյան երկրներ, 352
Մթիուլեթի լեռնաշղթա, 209
Միհրանյաններ, 152, 182, 183
Միհրական տոհմ, տե՛ս Միհրանյաններ
Մենգրելներ, 279
Մինորսկի Ն., 164, 184, 199, 340
Միշոուդաղ լեռնաշղթա, 174
Միջա (Մոկքի գավառ), 129, 284
Միջա ամրոց, 251
Միջագետք, 93, 108, 242, 314, 331, 352
Միջերկրական ծով, 93
Միջին Ասիա, 333, 351
Միջնաձորի վանք, 313, 315
Միսիմիացիներ, 229
Միր-Բաշիր, 325
Միքայել Ասորի, 15, 178
Մխանք, 150, 286
Մխիթար Այրիվանեցի, 12, 185, 191, 299, 314
Մծխեթա, 276, 330
Մծխեթայի Ջվար եկեղեցի, 297, 298, 311, 312
Մկրտումյան Հ., 22, 199, 200, 208
Մյուս Գայլ գետ, 107
Մյուս Իշայր, 129
Մյուս Հաբանդ, 150, 151, 153, 286, 308
Մնացականյան Ա., 184
Մնացականյան Ս., 303
Մնձուր գետ, 98, 175
Մնձուրի լեռներ, 98, 175
Մշո Սբ. Աղբերիկ վանք, 51, 53, 106, 121, 124, 140, 272, 307, 308
Մշո Սբ. Կարապետ վանք (Գլակա, Իննակնյան), 307
Մշո Սբ. Փրկիչ եկեղեցի, 307
Մոկս բերդավան, 129, 269
Մոկք, 26, 29, 57, 81, 100, 128, 129, 132, 135, 137, 139, 142, 269, 283, 355
Մողոքար, 251, 284
Մոսուլ, 95
Մոսքական լեռներ, 27, 215, 220, 224, 228, 229, 277, 279, 280
Մովսես (Եսայի Աբու Մուսեի որդի), 157, 160
Մովսես (Եսայի Աբու Մուսեի տոհմից), 158, 159, 160
Մովսես Բ Եղվարդցի, 294
Մովսես Դասխուրանցի, 11, 61, 62, 63, 64, 77, 123, 150, 152, 154, 157, 163, 178, 182, 183, 185, 190, 191, 192, 193, 198, 230, 236, 255, 270, 286, 287, 308, 309, 310, 325, 326
Մովսես Խորենացի, 11, 118, 195
Մովսես Կաղանկատվացի, տե՛ս Մովսես Դասխուրանցի
Մորիկ, 294
Մռավի լեռնաշղթա, 162
Մրեն, 266, 300
Մրենի կաթողիկե եկեղեցի, 298, 300
Մուավիա (արաբ զորավար, խալիֆա), 27, 99, 246, 247
Մուավիա (Սահլ Սմբատյանի որդի), 191, 192
Մուզուր, 98, 99, 100, 106
Մութասիմ, 202
Մուկան, 47
Մուկթաֆի, 59
Մուհամմադ իբն Աթաբ, 201
Մուհամմադ իբն Խալիդ աշ-Շայբանի, 89, 202, 218, 233, 254, 255
Մուշ, 272, 331
Մուշեղ (Անձևացյաց իշխան), 137
Մուշեղ (Մոկաց իշխան), 128
Մուշեղ Բագրատունի, 50, 56, 67, 260
Մուշեղ Մամիկոնյան, 29, 84, 238, 288, 328, 329
Մուսա իբն Զուրարա, 94-95, 96
Մուսխելիշվիլի Դ., 22, 117

Մուվյան, 337
Մուտավաքքիլ, 95, 202, 218, 232, 253, 254
Մուրադյան Պ., 211, 312
Մուրց գետ, 107, 262, 290

-Յ-

Յազիդ իբն Ուսայդ, 198, 199, 247, 248, 253, 299
Յախար-Բախար լեռնանցք, 343, 345
Յակուբի, 15, 161, 201, 202, 237, 248
Յակուտ ալ-Համավի, 15, 93, 95, 98, 144, 263, 270, 271-272, 273, 274, 279, 322, 323, 336, 338, 340, 341, 342, 343
Յուզբաշյան Կ., 20, 42, 63, 80
Յունան, 334, 335, 336, 337
Յուսուֆ (արաբ զորավար), 32, 78, 307
Յուսուֆ (Ատրպատականի ամիրա), 58, 59, 60, 61, 62, 64, 69, 70, 71, 73, 76, 79, 82, 126, 148, 207, 235, 250, 262, 271, 277, 280, 281, 283, 285, 288, 292
Յուսուֆ իբն Ռաշիդ աս-Սուլամի, 248

-Ն-

Նալբանդյան Հ., 41
Նախիջևանի Հանրապետություն, 323
Նախճավան, 51, 59, 111, 125, 126, 130, 134, 141, 149, 230, 235, 237, 248, 249, 250, 251, 261, 272, 332, 333, 334
Նախճավանի բերդ, 132
Նասր, 38, 39, 44, 122, 123, 206, 216, 226
Նավհանաց աշխարհ, 56
Նեոկեսարիա, 329
Ներսեհ, տե՛ս Ատրներսեհ Բագրատունի (Կղարջքի կուրապաղատ)
Ներսեհ Կտրիճ, 146, 157, 163
Ներսես Կամսարական, 300
Ներսես Մեծոփեցի, 212, 307
Ներսես Գ Տայեցի կաթողիկոս, 262, 267, 297, 299, 301, 305
Ներքին Համշեն, 167, 169, 171, 172
Նիգ, 90, 91, 267
Նիգալ, 118, 120, 214, 215, 217
Նիժ (Նիջ), 274
Նիկիտ, 35
Նկան, 132, 142, 284
Նորաբերդ, 137
Նորաշեն, 323
Նորավանք, 152, 310
Նուխի, տե՛ս Շաքե

-Շ-

Շաբրան, 343
Շաբրան-չայ, 342
Շակաշեն, 153, 154, 162, 255
Շակիխի, տե՛ս Շաքե
Շաղատ, 285, 286
Շամախի, 58, 197, 339, 340, 342, 343, 345
Շամշուլդե, տե՛ս Սամշուլդե
Շամքոր, 48, 127, 163, 165, 237, 270, 310, 338
Շամքոր գետ, 287, 338
Շամքուր, տե՛ս Շամքոր
Շայբանիներ, 73, 110, 237, 241, 243, 250, 254, 307
Շապորան, 342, 343, 344, 345
Շապուհ Ամատունի, 89, 171
Շապուհ Բագրատունի (Աշոտ Մսակերի եղբայր), 29, 114,
Շապուհ Բագրատունի (Սմբատ Ա-ի եղբայր), 137, 260, 304
Շավշք (Շավշեթ), 115, 118, 120, 214, 215, 217, 282, 302, 314

Շատահ, 106
Շատբերդ, 313
Շատբերդի վանք, 313, 315
Շարուր, 55, 322, 323
Շաքե (Շաքի), 154, 156, 178, 179, 180, 181, 182, 184, 185, 186, 187, 188, 193, 194, 195, 196, 199, 208, 210, 274, 275, 277, 311, 346, 349, 350
Շաքի գյուղ, 155
Շաքիի թագավորություն, 179
Շիամուշ, 272
Շիկաքար, 152, 286, 287
Շիմշաթ, 81, 97, 98, 99, 175, 246, 247, 272
Շիրակ, 29, 81, 85, 86, 92, 111, 114, 259, 264, 294, 303
Շիրակի դաշտավայր, 186
Շիրակավան, տե՛ս Երազգավորս
Շիրվան, 26, 47, 52, 53, 255, 259, 270, 339, 340, 342, 343
Շիրվանշահեր, 47, 197
Շիրվանշահերի թագավորություն, 46, 47, 342
Շնհեր, 146, 148
Շողագա Սբ. Պետրոս եկեղեցի, 304
Շվեդիա, 352
Շուլավեր, 164

-Ո-

Ողական, 289, 290
Ողջի գետ, 286
Ովբեդլա, տե՛ս Ուբայդալլահ
Ոստան, 81, 90, 268, 306
Ոստան Դվնա, 90
Ոստանի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցի, 306
Ոստանի Սբ. Պետրոս եկեղեցի, 306
Որբեթ, 291
Որդսպու, 346, 347, 348, 351
Որմի, տե՛ս Ուրմիո
Որոտան գետ, 286
Որոտն, 285, 286
Որսիրանք, 133, 135, 139, 283

-Չ-

Չաթ, տե՛ս Տափ
Չամչյանց Մ., 17, 65
Չեմլիհեմշին, 167, 170, 171, 172
Չինգիլի լեռնանցք, 349
Չոր (Չող, Ճորա պահակ), 230, 345
Չորմայրի լեռ, 175
Չորչան, 224, 277, 317
Չորրորդ Արմինիա, 26, 93, 94, 100, 247
Չուխուր Նորշեն, 331

-Պ-

Պազկանք, 150, 286
Պալգրև Վ., 168
Պալունիք, 133
Պաղեստին, 102
Պաղնատուն, 98, 99, 100, 106
Պարխարյան լեռներ, 27, 121, 168, 169, 175, 220
Պարսից ծոց, 333
Պարսկահայք, 26, 132, 133, 134, 135, 136, 139, 140, 142, 174, 250, 269
Պարսկաստան, 111, 164, 213, 265, 270, 333, 350, 351, 352
Պարսպատունիք, 134, 140, 251
Պարսք, տե՛ս Ատրպատական
Պարտավ, 25, 51, 52, 54, 154, 157, 161, 162, 201, 204, 231, 232, 236, 238, 250, 256, 258, 269, 270, 271, 272, 276, 287, 292, 320, 321, 325, 326, 330, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 349, 350, 355, 356
Պարտավի Սբ. Աստվածածին վանք, 310
Պարտավի Սբ. Գրիգոր եկեղեցի, 310

Պարուար, 220, 254
Պելախան, տե՛ս Բայլական
Պեչենեգներ, 164
Պետրոս առաքյալ, 304
Պիանք, 151, 153, 157
Պողոս առաքյալ, 211
Պոնտական լեռներ, 167, 168, 173, 174
Պոնտոս, 281
Պտղնիի եկեղեցի, 297

-Ջ-

Ջաբալ, 351
Ջազիրա, 54, 93, 95, 96, 198, 247, 351
Ջահապ, 29, 84, 238
Ջանաշիա Ս., 116
Ջանզա, տե՛ս Գանձակ
Ջավա, 209
Ջավախիշվիլի Ի., 38, 65, 219
Ջավախոս, 263
Ջավախք, 39, 86, 115, 116, 122, 123, 129, 215, 220, 224, 280
Ջեմիլ, 168
Ջեմիլ գետ, 173
Ջերմ գետ, 97, 175
Ջերմաձոր, 128, 129, 135, 142, 283
Ջիսր Սամուր, 339, 340, 345, 350
Ջիքեր, տե՛ս ադղներ
Ջլմար, 135, 137, 283
Ջվանշեր (Վրաց իշխան), 180, 181
Ջվանշեր, տե՛ս Ջվանշեր Ջվանշերյան
Ջվանշեր Ջվանշերյան, 13
Ջվարիսցխե, 44, 223, 280
Ջրաբաշխ լեռներ, 328
Ջուլֆա, տե՛ս Ջուղա
Ջուղա, 332
Ջուրզան, 226, 279

-Ռ-

Ռազմա-վիրական ճանապարհ, 199
Ռաճա, 51, 85, 240, 252
Ռաճայի լեռնաշղթա, 220
Ռան, տե՛ս Առան
Ռիզե, 168
Ռեյ, 236, 269, 351
Ռիոն գետ, 222, 229
Ռշտունիներ, 269
Ռշտունիք, 132, 133, 134, 283, 284, 306
Ռոմանոս, 51
Ռոտ-Պայակ (Ռոտ-Պացյան), 152
Ռոտոկ, տե՛ս Հեր և Զարևանդ
Ռուի Գոնսալես դե Կլավիխո, 173
Ռում, տե՛ս Բյուզանդիա
Ռուսաստան, 352
Ռուսթավ, 210, 253, 276, 339

-Ս-

Սաբան, 121, 268, 301, 302, 314
Սագաստան (Սաջիստան), 351
Սագարեջո, 210
Սալամաս, 141, 240, 245, 250, 251, 273, 284, 333, 350
Սալման իբն Ռաբիա, 143, 270, 342
Սալմաստ, տե՛ս Սալամաս
Սալնո ձոր, 93, 100, 106
Սակուրեթ, 124, 291
Սահակ (Աշոտ Մսակերի որդի), տե՛ս Սահակ (Մոկաց իշխան)
Սահակ (Գեղարքունիքի իշխան), 144, 145
Սահակ (Հայոց կաթողիկոս), 35,
Սահակ (Մոկաց իշխան), 29, 128
Սահակ Կամսարական, 296
Սահակ-Մլեհ Վանանդեցի, 87
Սահակ Մռուք եպիսկոպոս, 302
Սահակ Պարթև կաթողիկոս, 262, 298
Սահակ Սմբատյան Առանշահիկ, տե՛ս Սահլ Սմբատյան
Սահակ Սևադա, 127, 128, 153, 163, 164, 194

Սահակյաններ, 144
Սահլ Սմբատյան, 150, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 159, 160, 161, 162, 163, 178, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 191, 192, 193, 194, 196, 237, 255, 287, 310
Սամանդար, 247, 345
Սամառա, 192, 203
Սամշուլդե, 91, 124, 221, 291, 330, 331
Սամվել Անեցի, 12
Սամուել Դոնաուրի, 201, 202, 203, 206
Սամուր գետ, 344, 345, 350
Սամցխե, 44, 115, 116, 118, 123, 214, 215, 217, 223, 224, 225, 226, 227, 277, 280, 293, 316, 317, 318, 356
Սամցխեի դուռ, 279
Սանասունք, տե՛ս Սասուն
Սանջակի լեռներ, 107
Սաջյաններ, 78, 177, 240
Սասանյան Պարսկաստան, տե՛ս Պարսկաստան
Սասանյաններ, 81-82, 86, 143, 184, 213, 330, 354
Սասուն, 26, 52, 81, 93, 94, 95, 96, 97, 100, 106, 175, 308
Սավվա, տե՛ս Սաբան
Սատաղ, 327, 329
Սարիր, 350
Սարմատիա, 198, 221
Սաֆվան իբն Մուաթթալ, 246
Սբ. Առաքելոց վանք (Գեղամա ծովի կղզում), 264, 304
Սբ. Աստվածածին վանք (Գեղամա ծովի կղզում), 304
Սբ. Եղիշե առաքյալի վանք (Զրվշտիկ), 308
Սբ. Էջմիածին, 294
Սբ. Հակովբի վանք, տե՛ս Մեծի-րանից Սբ. Հակոբի վանք
Սբ. Հռիփսիմյանց վկայարան, 305
Սբ. Սիոն եկեղեցի, 170, 172
Սեբաստիա, 268, 282
Սեբաստուպոլիս (Սուխում), 222, 329
Սեբեոս, 11, 27, 81, 260, 267, 285, 294, 295, 297, 298, 324, 346, 347
Սելիմի (Սուլեմա) լեռնանցք, 323, 324, 326
Սենեքերիմ (Խաչենի իշխան), 158, 159
Սենեքերիմ Արծրունի, 112, 268, 282
Սենիքերիմ (Գարդաբանի քորեպիս-կոպոս), 204
Սեպհական գունդ, տե՛ս Վաս-պուրական
Սերապիոն Զարզմեցի, 13, 224, 225, 315, 316, 317
Սիմ լեռ, 94, 102
Սիոն կաթողիկոս, 295
Սիսական (Սիսաջան), 271, 272, 321, 322, 323, 324, 326
Սիսական (գավառ), տե՛ս Սիսական-ի-Կոտակ
Սիսական-ի-Կոտակ, 150, 151, 286
Սիսան, տե՛ս Սիսական-ի-Կոտակ
Սիսավանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, 303
Սիսիան, 303
Սիրաջ-Թայր, 29
Սկանդինավյան երկրներ, 352
Սղերդ, 94, 97, 175
Սմբատ (Արևելից իշխան), 57, 58, 197
Սմբատ Ա (Տիեզերակալ), 7, 15, 19, 30, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 82, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 101, 102, 103, 106, 107, 108, 109, 110, 111, 114, 116, 119, 120, 121, 122, 124, 125, 126, 127, 128, 129, 132, 133, 136, 140, 141, 142, 147, 148,

149, 154, 160, 161, 163, 164, 166, 167, 190, 191, 196, 197, 199, 203, 204, 205, 206, 207, 208, 213, 217, 220, 223, 233, 234, 235, 237, 240, 241, 242, 243, 245, 246, 248, 249, 250, 252, 255, 256, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 267, 278, 280, 281, 282, 283, 285, 288, 289, 290, 291, 300, 302, 303, 305, 308, 312, 320, 321, 326, 327, 355, 356, 357
Սմբատ, որդի Դավթի, 13, 44, 61, 118, 214, 276, 282, 312
Սմբատ Բագրատունի (VII դ.), 82
Սմբատ Բագրատունի (Հայոց իշխան, VIII դ.), 281
Սմբատ Բագրատունի (Հայոց սպարապետ), 32, 146, 203, 219, 249, 259, 261
Սմբատ Բագրատունի (Մոկաց իշխան), 128
Սմբատ Բագրատունի (Սմբատ Ա-ի եղբորորդի), 82
Սմբատ Բյուրատյան, 279
Սմբատ Մամիկոնյան, 308
Սմբատ Սյունի, 148
Սյունիներ, 36, 55, 144, 148, 261
Սյունիք, 11, 21, 25, 27, 34, 55, 62, 69, 126, 130, 131, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 151, 152, 153, 154, 155, 156, 174, 194, 235, 249, 255, 271, 277, 285, 286, 293, 303, 305, 322, 323, 355, 356
Սողք, 149, 152, 153, 194, 304, 310, 324, 326
Սողոմոն (Մեծարանց եպիսկոպոս), 192
Սողոմոն Բագրատունի, 103
Սողոմոն կաթողիկոս, 303
Սոմխեթ, 221
Սոփի (Դիզակի թագավոր Գագիկի քույր), 158, 159, 160
Սպահան, 236, 269, 351
Սպեր, 116, 165, 167, 168, 173, 174, 175
Սպրամ, 152, 310
Սվազյան Հ., 21
Սվաններ, 221, 222
Ստեփան Տբեթցի, 12, 55, 82, 85, 90, 148
Ստեփանոս (Վրաց իշխան), 311, 312
Ստեփանոս Կոն, 157, 164
Ստեփանոս Մեծոփեցի, 212, 307
Ստեփանոս Տարոնեցի, տե՛ս Ասողիկ
Ստեփաննոս Օրբելյան, 11, 36, 60, 62, 68, 69, 84-85, 146, 147, 159, 160, 163, 190, 265, 271, 282, 303, 304, 305
Ստորին Համշեն, 167, 169, 171, 172, 173
Ստորին Տայք, 113, 120, 214
Ստրաբոն, 15, 195
Սրինգ, 135, 137, 283
Սուլայմ ցեղ, 238, 246, 247, 248
Սուլեյման, 89, 171, 236
Սուրամ, 280, 330
Սուրենապատ, 250
Սև գետ, 174
Սև ծով, 48, 166, 167, 168, 171, 228, 229, 260, 329, 330, 352, 354
Սև քար բերդ, տե՛ս Սևուկ բերդակ
Սևադա Ջահաֆյան, 238, 285
Սևան, 41, 132, 142, 284, 304
Սևանի լեռնանցք, 330
Սևանի լեռնաշղթա, 162, 163
Սևորդիներ, 127, 157, 164, 165, 270, 287, 355
Սևուկ (Տավուշի իշխան), 165
Սևուկ բերդակ, 290

-Վ-

Վախթանգ Գորգասալ, 13, 274, 311
Վախուշտ Բագրատիոն, 13, 40, 44,

86, 115, 116, 122, 158, 179, 180, 181, 182, 186, 187, 188, 189, 191, 205, 206, 207, 208, 223, 274, 275, 280, 282, 316
Վահան Մամիկոնյան, 294, 296
Վահան Սյունի, 143
Վահանա վանք, 271
Վաղարշ, 262
Վաղարշակ, 195
Վաղարշակերտ (Ալաշկերտ), 261, 262
Վաղարշապատ, 51, 88, 261, 295, 297, 309
Վաղարշապատի Մայր Տաճար, 293, 294, 296
Վաղարշակերտի Սբ. Աստվածածին, 262
Վաղարշապատի Սբ. Գայանե եկեղեցի, 298
Վաղարշապատի Սբ. Գրիգոր եկեղեցի (Զվարթնոց), 297, 298
Վաղարշապատի Սբ. Հռիփսիմե, 297, 298, 312
Վաղարշավան, 51, 262, 327
Վայկունիք, 150, 151, 152, 153, 286, 287
Վայոց ձոր, 51, 55, 57, 144, 145, 146, 147, 148, 149, 285, 303, 322, 355
Վայս, 322, 323
Վան, 33, 131, 268, 305, 350
Վանա բերդ, 142, 306
Վանա բերդի Սբ. Գևորգ եկեղեցի, 306
Վանա Բերդի Սբ. Սիոն եկեղեցի, 306
Վանա լիճ, 108, 109, 111
Վանանդ, 55, 81, 87, 265
Վանանդեցիներ, 81
Վանդիրի վանք, տե՛ս Մշո Սբ. Աղբերիկ վանք
Վանեվանաց Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, 304
Վանեվանաց վանք, 304
Վաշդեան, 170
Վաչագան (Դիզակի իշխան), 158, 159, 160
Վաչագան Բարեպաշտ, 308, 309
Վասակ (Գոռոզի իշխան), 57, 160
Վասակ Արծրունի, 283
Վասակ Բագրատունի, 112, 113, 114, 118, 120-121, 187, 214, 223
Վասակ Գաբուռ (Գեղարքունիքի իշխան), 34, 145, 146, 147, 304
Վասակ Գնթունի, 91, 291
Վասակ Իշխանիկ (Սյունյաց իշխան), 36, 62, 69, 145, 146, 147, 149
Վասակ Սյունի (Սյունյաց մեծ նահապետ), 144, 145
Վասիլ (Բարսեղ, Բյուզանդիայի կայսր), 35, 42, 43, 224
Վասիլ Զարգմեցի, 13, 224, 225, 316, 317
Վասիտ, 351
Վասպուրական, 7, 10, 20, 21, 26, 31, 33, 34, 49, 50, 51, 55, 56, 57, 58, 59, 61, 65, 66, 68, 69, 70, 82, 85, 91, 92, 95, 101, 111, 112, 124, 125, 128, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 147, 174, 235, 238, 245, 249, 250, 251, 252, 261, 268, 269, 277, 282, 283, 285, 289, 293, 295, 297, 305, 306, 307, 346, 347, 355, 356
Վարագա լեռ, 109, 244, 305, 306
Վարագա Սբ. Նշան եկեղեցի, 305
Վարագա Սբ. Խաչ եկեղեցի, 305
Վարազ Տրդատ, 309
Վարաժնունիք (Այրարատի գավառ), 91
Վարաժնունիք (Վասպուրականի գավառ), 134, 140, 251
Վարաժնունիք (Տուրուբերանի գավառ), 239
Վարդ Վանանդեցի, 87

Վարդան Միհրանյան, 182, 183
Վարդան վարդապետ, 11, 35, 36, 38, 43, 70, 84, 92, 112, 114, 118, 200, 214, 216, 238, 282, 288, 302, 307, 314
Վարդանակերտ, 161, 270, 320, 333, 334, 335, 336, 337, 342
Վարդանանք, 82, 174, 310
Վարդանյան Վ., 20, 59, 134, 136, 138
Վարդենիսի լեռնաշղթա, 162
Վարսան, տե՛ս Վարդանակերտ
Վեժին (Վժան), 274, 275, 292
Վեյսալի-ղալեսի, տե՛ս Վայս
Վերին Համշեն, 167, 169, 170, 171, 172, 173
Վերին Ղուշչի, 343, 345
Վերին Միջագետք, տե՛ս Հյուսիսային Միջագետք
Վերին Վայկունիք, տե՛ս Վայկունիք
Վերին Քարթլի, 115
Վերմիշև Խ., 117
Վարոշ, 170, 173, 291
Վերջնբակ լեռ, 168, 170, 175
Վիհրի քաղաք, 134
Վիշապ գետ, 222, 229
Վիրք (Քարթլի), 9, 11, 12, 13, 18, 22, 23, 26, 27, 28, 30, 31, 35, 36, 37, 38, 39, 41, 42, 44, 46, 47, 49, 51, 53, 54, 55, 57, 62, 65, 67, 74, 96, 102, 111, 113, 114, 115, 117, 118, 120, 123, 143, 178, 180, 181, 187, 188, 192, 193, 197, 198, 200, 202, 206, 207, 209, 212, 213, 214, 216, 217, 218, 219, 220, 221, 223, 224, 225, 226, 227, 264, 266, 275, 276, 279, 280, 292, 293, 294, 296, 297, 298, 299, 309, 311, 312, 313, 318, 353, 354, 355, 357
Վոլգա գետ, 352
Վրաստան, տե՛ս Վիրք
Վրաստանի Հանրապետություն, 200
Վրաց դաշտ, 51, 220, 221
Վուրի աշխարհ, 50, 56

-Տ-

Տագրեան, 133
Տաթևի մայր տաճար, 305
Տաթևի վանք, 159, 160, 163
Տակաիշվիլի Ե., 65
Տամբեր, 133, 134, 291
Տամբուր, 167, 170, 171, 173
Տայոց քար, 281, 282
Տայք, 26, 28, 29, 49, 51, 54, 57, 67, 81, 109, 111, 113, 114, 115, 116, 117, 119, 120, 121, 122, 124, 129, 165, 167, 171, 174, 175, 211, 214, 215, 216, 217, 220, 223, 267, 277, 281, 282, 290, 298, 301, 302, 314, 355
Տանձիկ, 322, 323
Տանձուտ, 211
Տաշյան Հ., 168, 169
«Տաո-Կլարջեթ», 116, 117
Տաշիր-Ձորագետ, 205,
Տաշիրք, 55, 81, 115, 122, 129, 221, 280, 291
Տաշրացիներ, 81
Տասուկ, 250
Տավրոսյան լեռներ, 175
Տավուշ, 48, 127, 164, 237
Տավուշ բերդ, 127, 165
Տավուշ գետ, 127, 164, 165, 287
Տավուսքյար, 282
Տատիկ, 97, 100
Տարաբազունդահ, տե՛ս Տրապիզոն
Տարոն, 21, 29, 49, 51, 52, 57, 58, 66, 81, 92, 93, 94, 95, 96, 97, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108, 129, 137, 139, 167, 179, 182, 243, 272, 289, 290, 307, 331, 355
Տափ, 169, 170, 173
Տափերական (Տափերի) կամուրջ,

տե՛ս Արտաշատի կամուրջ
Տաֆլիս, տե՛ս Տփղիս
Տեկոր, 266, 296
Տեկորի Սբ. Սարգիս եկեղեցի, 293, 296
Տեր-Ղևոնդյան Ա., 19, 32, 41, 42, 63, 76, 81, 91, 107, 233, 234, 235, 238, 239, 240, 244, 248
Տիգրանակերտ, 327, 331, 332
Տիգրիս գետ, 96
Տիզբոն, 72
Տիրոց Բագրատունի, 82
Տկետբա, 179, 274
Տող, 286
Տոսպ գավառ, 131, 133, 134, 269, 305
Տոսպռշտունիք, տե՛ս Տոսպ և Ռշտունիք
Տոտոր, տե՛ս Կոտոր
Տրապիզոն, 54, 55, 262, 265, 266, 272, 276, 327, 328, 329
Տռի, 150, 152, 286
Տրպատունիք, 133, 134, 138, 142
Տրտու գետ, 161, 162, 309, 325, 326
Տուման (Տուբան), 337
Տումի, 286
Տուչ Կատակ, 127, 153, 163, 165
Տուս, տե՛ս Տավուշ
Տուրուբերան, 26, 85, 93, 96, 99, 100, 105, 107, 129, 135, 238, 241-242, 290, 347, 355
Տփղիս, 48, 51, 52, 114, 118, 181, 199, 200, 201, 202, 203, 207, 209, 210, 213, 214, 215, 217, 218, 220, 221, 223, 226, 237, 252, 253, 254, 255, 259, 264, 265, 270, 274, 276, 277, 292, 316, 320, 329, 330, 331, 337, 338, 339, 340, 346, 348, 349, 355, 356
Տփղիսի ամիրայություն, 39, 48, 55, 311
Տփղիսի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցի, 311
Տփղիսի Սբ. Սիոն եկեղեցի, 312

-Ց-

Ցարական կայսրություն, 117
Ցիվար-դերե գետ, 168
Ցխավատք, 202
Ցկիր, 316
Ցոլակերտ, 328, 331
Ցուկերման Կ., 63

-ՈՒ-

Ուբայդալլահ, 89
Ութմազյան Հ., 21, 149
Ութմանիկներ, 50, 53, 109, 110, 125, 238, 239, 242, 243, 244, 245, 246, 262, 284, 285, 305, 355
Ուլնուտ, տե՛ս Եղանց բերդ
Ուլուբաբյան Բ., 21, 63, 150, 153, 157, 158, 159, 183, 186, 191, 193, 194
Ուխտանես, 11, 221, 295
Ուղթիս, 282
Ումայի, 90, 233, 259
Ումայր իբն ալ-Հուբաբ Սուլամի, 246
Ուման, 337
Ուջարմա, 207, 292
Ուտի Առանձնակ, 153, 154, 162, 308, 325
Ուտի գավառ, տե՛ս Ուտիք
Ուտիք, 11, 25, 44, 46, 48, 54, 123, 126, 127, 130, 150, 153, 155, 157, 163, 164, 165, 196, 236, 237, 256, 287, 325, 354, 355
Ուրծաձոր, 90
Ուրմիո, 141, 333, 350
Ուրմիո լիճ, տե՛ս Կապուտան ծով
Ուփլիսցխե, 46, 57, 202, 218, 280, 330

-Փ-

Փաղլա Արևմանելի, 40, 41, 158, 201, 203, 204, 205, 206, 277
Փազար գետ, 169, 173,
Փայտակարան (Ատրպատական), 143
Փայտակարան, տե՛ս Տփղիս
Փայտակարան (Մեծ Հայքի աշխարհ), 136, 334
Փառախոտ, 327-328, 331
Փառիսոս, էջ 51, 57, 91, 127, 128, 130, 153, 163, 164, 355
Փառնավազ, 179, 180
Փավստոս Բուզանդ, 11, 289
Փատգոս, 154, 255
Փարիսունք, տե՛ս Փառիսոս
Փարսման, 229
Փարվանա լիճ, 329
Փիլիպպե, 145, 148, 149
Փիրսաղաթ գետ, 58, 197
Փշավյան Արագվ գետ, 218
Փշավք, 218
Փոքր Աղբակ, 133, 134, 139, 283
Փոքր Ասիա, 177, 352
Փոքր Հայք, 27, 93
Փոքր Սյունիք, տե՛ս Արցախ
Փույթ, 329
Փուրքա, 198

-Քաջաց քաղաք, տե՛ս Արտահան

Քաջբերունիներ, 57
Քաջքար գետ, 173
Քաջքար լեռ, 167, 168, 169
Քաջքար վանք, 170
Քաշունիք, 144
Քասաբե, 174
Քասաղ, 267
Քարթլիի լեռնաշղթա, 209
Քարթլոս, 179, 263
Քթիշ, 150, 156, 159, 270, 286, 355
Քիշ, 349
Քիստք, 207
Քյոր-սու դերեսի, տե՛ս Կորո ձոր գետ
Քյորփի Քենդ, 341
Քսան գետ, 200, 201, 202, 209, 218
Քսենոս-դերե, 168
Քվիշափոր, 124, 129
Քրիստոս, տե՛ս Հիսուս Քրիստոս
Քուբայիս (Կոտայիս), 260, 330
Քուստ-ի-Փառնես, տե՛ս Փառիսոս
Քուրդիկ (Քուրդի), 225, 226, 277, 317
Քուրդիկ Մամիկոնյան, 83, 92, 225
Քուֆա, 351

-Օ-

Օձրխե, 44, 223, 279
Օձուն, 280
Օղուտ, 349
Օմայաններ, 254
Օշական, 88-89
Օշկ վանք, տե՛ս Աշունք վանք
Օպիզա, 313
Օպիզայի Սբ. Հովհաննես Մկրտիչի վանք, 121, 211
Օպուտ-դաղ (Օվիտ-դաղ), 168
Օսման, 247
Օրեն-կալա, 336, 337
Օրթա Հեմշին, տե՛ս Ներքին Համշեն
Օրկովի կիրճ, 349
Օրչոբ, 275, 292
Օֆի, 169

-Ֆ-

Ֆարս, 351
Ֆինլանդիա, 352
Ֆիրթինա գետ, 167, 168, 169, 171, 172, 173, 174
Ֆիրուզ Կուբադի դուռ, 279

ԱՐՄԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ (885-908 ԹԹ.)

ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Կազմի վրա պատկերված է Հայոց թագավոր Սմբատ Ա-ն
(Ատենի Սբ. Սիոն եկեղեցի, 906 թ.)

Հրատ. խմբագիր՝ **Մ. Գ. Յավրյան**
Տեխ. խմբագիր՝ **Վ. Ջ. Բդոյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Ա. Խ. Աղուզումցյանի**

Ստորագրված է տպագրության՝ 14.10.2011 թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ: Հրատ. 21.8 մամուլ,
տպագր. 24.8 մամուլ + 6 քարտեզ = պայմ. 23.0 մամուլի:
Պատվեր՝ 57: Տպաքանակ՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն. Երևան, Աբովյան 52

2-57

3-57

4-57

5-57

6-57

7-57

8-57

9-57

10-57

11-57

12-57

13-57

14-57

15-57

16-57

17-57

18-57

19-57

20-57

21-57

22-57

23-57

24-57

25-57

26-57

27-57

28-57

29-57

30-57